ՀԱՅ

ԿԵՆՍԱԳՈՍԿԱՆ
ՀՈՒՇԵՍ
ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՏԵՆԱՇԱՐ

1991
ՀՈՒՆՎԱՐ

ԳՄԴ 63.3 (2Հ)
Դ 479.

Կազմեց, խմբագրեց ԱՐԹՈՒՐ ԱՆԴՐԱՆԻԿՅԱՆԸ

Դ 479 Դրո։ Կենսագրական։ Հուշեր։ Վկայություններ։ [Կազմեց, խմբագրեց Ա. Անդրանիկյանը;/Նկ.՝ Խ. Հակոբյան].— Եր.։ Ազատ խոսք, 1991.— 416 էջ։

«Դրո» ժողովածուն հայ պատմագրության մեջ առաջին փորձն է, որով ընթերցողին է ներկայանում Հայոց Ազատամարտի ռահվիրաներից և պետականության հիմնադիրներից մեկը՝ Դրոն (Դրաստամատ Կանայանը 1884—1956)։

Ժողովածուում պատմական որոշ (տասնամյակներ անընդմեջ կեղծված ու նենգափոխված) խնդիրներ՝ արխիվային նորահայտ վավերագրերի և փաստագրերի օգտագործմամբ դիտարկվել է նորովի։ Հիմնարար կերպով է շոշափվել Դրո-զինվորական գործչի հսկայածավալ և նպատակադիր ազգային գործունեությունը, որը որոշակիորեն, արտացոլված է թե՛ Հ. Գևորգյանի ուսումնասիրության մեջ, և թե՛ «Հավելվածի» բոլոր բաժիններում։

Դ 0503020913
739 (01) 91
ISBN 5-8079-0249-1

© Հ. Մ. Գևորգյան
© «Ազատ խոսք» հրատ., կազմելու համար

ՀԱՄԼԵՏ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԴՐՈՆ

Ես ոչ մէկ ժողովրդի ճանդեպ ատելություն չունեմ, բայց վայ այն ազգին, որ կը համարձակուի վատութիւն անել հայ ժողովրդին, նայելի թուրք, ռուս կամ այլ ազգի, ես զէնք պիտի վերցնեմ նրա դէմ...

ԴՐՈ

...Այսպես էր ասում Դրոն հայրենիքից հեռու, տարագրության տարիներին։ Արդեն տասնամյակներ էին անցել նրա կյանքի փոթորկահույզ օրերից։ Հայոց ազատամարտի անպարտելի ռազմիկը ժողովրդի ու պատմության դատին հանձնելով իր հերոսականությամբ ու մաքառումներով հագեցված կենսագրությունը՝ արդեն կյանքի վերջին տարիներն էր անցկացնում օտար ափերում։

Մեր ժողովրդի անցած շարաբաստիկ 70-ամյա ժամանակահատվածում խորհրդահայ պատմագետներն ու գաղափարախոսներն ահավոր կեղծիքով ու զրպարտանքներով «օծեցին» Հ. Հ. Դաշնակցությանն ու նրա ականավոր գործիչներին։ Բազմաթիվ ստահոդ պատմություններ, նույնիսկ իրականում երբևէ գոյություն չունեցող դեպքեր ու իրադարձություններ հորինելու շնորհիվ խորհրդային իշխանության կողմից գիտական կոչումներ ու «փառքի դափնիներ» վաստակած «գիտնականները» ջանք ու եռանդ չխնայեցին Հ. Հ. Դաշնակցությանն և նրա դրոշով մարտնչող հերոսներին անջրպետելու հարազատ ժողովրդից, որի ազատագրության համար մղած պայքարը եղել է նրանց կյանքի գլխավոր նպատակն ու ուղենիշը։

Խորհրդահայ պատմագետների սրերն առավելապես ուղղված էին Դրոյի վրա, որին վարկաբեկելու և նրա անունը ժողովրդի հոգում մեկընդմիշտ մեռցնելու նպատակով հորինեցին հազար ու մի մտացածին պատմություններ։ Ներկա ուսումնասիրությունը իր նախադեպը չունեցող փորձ է լու-

սաբանելու և արժեքավորելու մայիսի 28-ի մեր անկախ պետականության կերտողներից մեկի՝ Դրոյի կյանքի ու գործունեության առավել ուշագրավ էջերը։

* * *

1884 թ. մայիսի 31-ի գիշերը Սուրմալու գավառի Իգդիր ավանում սարսափելի փոթորիկ էր ու երկրաշարժ։ Բնությունն իր հզոր տարերքով կարծես կանխանշում էր այդ օրը լույս աշխարհ եկած՝ հայոց ազատամարտի և անկախության մեծանուն նվիրյալի՝ Դրոյի (Դրաստամատ Կանայանի) կյանքի ու գործունեության մրրկածուփ ուղին։

Զափազանց անհանգիստ ու ազատատենչ բնությամբ էր օժտված Դրոն՝ Իգդիրի դպրոցի ամենաըմբոստ և աշխույժ աշակերտներից մեկը։ Դպրոցն ու ուսումը, չնայած մտավոր փայլուն ընդունակություններին, չէին գրավում նրան։ Դրոյի տարրերքը զենքն էր ու ձիավարժությունը։

Վերհիշելով նրա մանկությունը՝ Ավ. Ահարոնյանը գրում է. «Ամրան տաք օրերին, Իգդիրի փոշոտ փողոցներով, տարիներ առաջ, ամէն երեկոյ, առանց թամբի և իսպառ մերկ և անսանձ ձիու վրայ՝ մի վեց-եօթ տարեկան ջլուտ ու նիհար մանուկ էր սլանում, նոյնպէս մերկ՝ ինչպէս էր իր երիվարը։ Փոքրիկ Դրօն էր... Դրաստամատը, իսկական անունով։

Օրայ այդ պահին, իր հօր՝ քաջածանոթ Մարտիրոս Կոկոյի ձին ջրելու և զովացնելու համար Իգդիրի մեծ առուն էր առաջնորդում, ինքն էլ լողանում կենդանու հետ, նրա թիկունքին ցատկելով, մերկ սրունքներով նրա կողերին պլլված և ձեռքերով բաշին կախված, սիրում էր արշաւել փողոցներով դէպի շուկայ, շորս կողմից բարձրացած ծիծաղին ու կատակին պատասխանում էր վրանքաց թշնամանքներով ու շարունակում իր Անօրինակ արշաւը, որսկան բազէի պէս՝ ամեհի երիվարի թիկունքին թառած»[1]։

Հայրը՝ Սուրմալու գավառում իր հարստությամբ ու դիրքով հայտնի Մարտիրոս Կանայանը որդուն կանոնավոր կըր-

---

[1] «Ալիք», 1956 թ., 4-ը մայիսի, էջ 41։

թություն տալու նպատակով նրան տանում է Երևան և ընդունել տալիս տեղի ռուսական Գիմնազիան։

Երևանի Գիմնազիայում տիրապետող ուժը ռուսամոլ բարքերն էին։

«Տնօրենն ու նրա կամակատար դաստիարակները,— վերհիշում է Դրոյի դասընկեր Տիգրան Դևոյանը,— ստիպում էին, որ երեխաները փոխեն իրենց ազգանունների վերջավորությունը՝ «եան»-ի տեղ ռուսական «ով»[2]։

Սակայն աշակերտներից շատերը և հատկապես Դրոն հնարավոր միջոցներով պայքարում էին ռուսացման քաղաքականության դեմ։ Ավելին, գիմնազիայում առավել խիզախ պատանիների՝ Դրոյի, Սեդրակ Ջալալյանի, Տիգրան Դևոյանի և այլոց (շուրջ 10 հոգի) նախաձեռնությամբ ստեղծվում է «Բորեաս» խումբը, որի նպատակն է ահաբեկել ցարիզմի բոլոր այն ծառայամիտներին, ովքեր կփորձեին բռնադատել հայերի իրավունքները ու ոտնահարել իրենց ազգային արժանապատվությունը։

19-րդ դարի վերջին Հայաստանի արևմտյան հատվածի ազգային-ազատագրական պայքարի վերածնունդի հետևանքով քաղաքական զարթոնք էր ապրում նաև արևելյան հատվածի հայությունը։ Պատմական տվյալ ժամանակաշրջանի ազգային-ազատագրական շարժման դրոշակակիր Հ. Հ. Դաշնակցությունը հայ ժողովրդի պայքարը կազմակերպելու ու ղեկավարելու նպատակաուղղվածությամբ արդեն բազմաթիվ մարտական կազմակերպություններ էր հիմնել Հայաստանի և նրա սահմանամերձ հայաբնակ շրջաններում։ Երևանում ստեղծված Հ. Հ. Դաշնակցության «Մրգաստան» կենտրոնական կոմիտեն կոչված էր համախմբելու և առաջնորդելու Արարատյան աշխարհի բոլոր այն ուժերին, որոնք ընդունակ էին ու պատրաստակամ իրենց նվիրաբերել «Հայ դատի» դժվարագույն պայքարին։

Զեյթունի, Տարոնի, Սասունի ու Վասպուրականի քաջակորով հայորդիների սխրանքների փառքն ու նրանց ձոնված երգերը տարածվելով թափանցել էին նաև հայոց դպրոցները, մարտական երգերը շունչ ու ոգի էին ներարկել դպրոցականներին։

---

[2] «Հայրենիք» ամս., 1957 թ., № 9, էջ 11։

«Բորեաս» խմբի անդամ Դրոն հետագայում բազմիցս պիտի խոստովանի, որ իր ապագա գործունեությունը մեծապես պայմանավորվել է դեռևս դպրոցական տարիներին քաջահամբավ հայդուկապետեր Նիկոլ Դումանի, Աղբյուր Սերոբի և Անդրանիկի քաջագործությունների մասին լսած պատմություններով։

Երևանի «Մրգաստանի» կենտրոնական կոմիտեի անդամ Գալուստ Ալոյանի տեսադաշտից չեն վրիպում «Բորեաս»-ի համարձակ տղաները, որոնք իրենց վարքով ու գործելակերպով արդեն արժանի վստահություն էին ներշնչում։

«Բորեաս» խմբի անդամ Սեդրակ Ջալալյանը (Ապարանի շրջանի Քասախ գյուղից — Հ. Գ.) վերհիշում է. «Երբ 17—18 տարեկան եղանք, արդեն ունէինք մօսին հրացաններ ու մաուզէր ատրճանակներ, որոնց գործածութիւնն ու նշանառութիւնը հասցուցած էինք կատարելության աստիճանին։

... 1903-04 թուականներուն, երբ մենք արդէն մեզ կը զդայինք հասուն, պատրաստի զինուորներ, ամբողջ Արարատեան Հայաստանը բռնկած էր Երկրին օգնութեան հասնելու մոլեգին մղումով։

... Անշափահասներ ըլլալով, դեռ դաշնակցութեան կողմէ վաւերացուած մարտական խումբ չէինք։ Անհատապէս կը գիմէինք՝ Դաշնակցութիւնը իր անձին մէջ մարմնաւորող, ամենահեղինակաւոր գործիչ Գալուստին՝ խանասորի հերոսներէն, խնդրելով որ մեզ միացնէ մեկնող հայդուկային խումբի մը։ Բայց կը մերժուէինք այն պատճառաբանությամբ, որ դեռ հասուննալու պէտք ունէինք»[3]։

Գալուստ Ալոյանի խոհեմ մերժումները չի ընկճում Դրոյի և իր ընկերների բուռն ձգտումը՝ զինվորագրվելու հենց այն կուսակցությանը, որի դրոշով էին մարտնչում իրենց սիրած հերոսները։

Զանցած մի քանի ամիս «Գալուստը,— շարունակում է Ս. Ջալալյանը,— ընդունեց մեր խումբը Հ. Հ. Դաշնակցության մարտական կազմակերպության մէջ «Բորեաս» խումբ անուան տակ»[4]։

---

[3] Կ. Գէորգեան, «Ամէնուն Տարեգիրքը», 1954 թ., Ա. տարի, էջ 102։
[4] Նույն տեղում։

17 -18 տարեկան հասակում անդամագրվելով դաշնակցությանը Դրոն ձգտում էր դեպի մարտադաշտ՝ համալրելու այն ռազմիկների շարքերը, որոնց առասպելանման գործողությունների արձագանքները բորբոքել էին իր հոգու հայրենանվեր կրակները։

Դեռ Գիմնազիայում ուսանելու տարիներին փափագում էր ընդունվել ռազմական դպրոց՝ հասկանալով, որ կանոնավոր կրթությունը կարող է իրեն օգնել դառնալու իսկական ռազմական գործիչ։

1903 թվականն էր, ցարիզմը հավատարիմ իր հայակործան քաղաքականությանը, հայոց դպրոցները, գրադարանները, թերթերն ու ամսագրերը փակելուց հետո հոչակեց հայ եկեղեցու կալվածքներն ու հարստությունները բռնագրավելու օրենքը։

Մինչ այդ, ոչ հայոց դպրոցների պարբերաբար փակումը, ոչ ռուսական զորքերի կողմից հայ մարտական ջոկատների ջախջախումը և ոչ էլ ցարական աստիճանավորների կողմից հայ գյուղացիների շահագործումն ու հարստահարումը կարծես թե արևելահայության շրջանում չէին սերմանել ռուսական պետականության դեմ ընդվզելու, բորբոքելու ձգտումներ։ Սակայն եկեղեցական կալվածքների բռնագրավման մասին հրովարտակը միանգամից արթնացրեց «բարի ցարի» հավատով նիրհով հայությանը, որը զարմանահրաշ և հզոր կայսրության պատմության ողջ ընթացքում աննախադեպ երևույթ էր։ Ցարիզմի նենգադավ քաղաքականության դեմ հանդգնել, ընդվզել էր մի բուռ ժողովուրդ։

Ահեղ գոտեմարտի դուրս եկած ազատամարտիկների առաջավոր շարքումն էր մինչ այդ գլխավորապես արևմտահայության ազատագրության դրոշով առաջնորդվող Հ. Հ. Դաշնակցությունը։ Դաշնակցության նախաձեռնությամբ ստեղծվում է ժողովրդական շարժումը կազմակերպող ու ղեկավարող «Հայկական ինքնապաշտպանության կենտրոնական կոմիտեն», որի գործուն մասնակցությամբ բողոքի ցույցեր, գործադուլներ կազմակերպվեցին Երևանում, Թիֆլիսում, Կարսում, Բաքվում և այլ քաղաքներում ու բնակավայրերում։ Դաշնակցության վրիժառուների գնդակներին զոհ գնացին

հակահայ գործունեություն ծավալած բազմաթիվ ցարական աստիճանավորներ և ազգադավ հայ կամակատարներ։

Նույն տարվա ամռանը հազարավոր հայերի բազմությունը շարժվելով էջմիածին՝ պահանջում է Ամենայն Հայոց կաթողիկոս Խրիմյան Հայրիկից, որ պատռի ցարի հրամանագիրը։

Հայաստանի տարբեր շրջաններից հավաքված բազմության մուտքը էջմիածին խոչընդոտելու դիտավորությամբ ցարական ոստիկանությունը փորձում է ցրել ցուցարարներին։ Երևանի Ռուսական գիմնազիայի աշակերտների «Բոռեաս» խումբը, որի կազմում էր նաև Դրոն, ի պաշտպանություն ցուցարարների, քարերի կարկուտ է տեղում ոստիկանների վրա և ջախջախում ոստիկանապետ Բալուևի գլուխը։ Այդ ընդհարման ժամանակ պատանի Դրոն ստանում է իր առաջին մարտական մկրտությունը։ Իսկ մի քանի շաբաթ անց նրա անվրեպ հարվածի զոհն է դառնում Սուրմալուի գավառապետ Բոգոսլավսկու կարգադրությունները հավատարմորեն կատարող Թեջերապատ գյուղի գյուղապետ Մարտիրոսը։

Տարիներ անց այդ դեպքի մասին Դրոն Ս. Վրացյանին պատմել է հետևյալը. «Մի երեկոյ, 1953 թ. Հոկտեմբեր 15-ին, երբ, ըստ սովորության, միասին նստած տանը վերյիշումներ էինք անում անցեալից, Դրոն դարձաւ ինձ, թէ,—

— Գիտե՞ս ինչ, այսօր իմ զէնք բանեցնելու յիսնամյակն է։

Եւ իմ պնդումի վրայ պատմեց։ Վերջը ես պատմածը գրի առի.

— «1903 թուի ամառուանից մեծ թափ առաւ զէնքի փոխադրությունը դէպի Տաճկահայաստան։ Գաւառապետ գազան Բոգուսլաւսկին խիստ հետապնդում էր հայ յեղափոխականներին։ Թէջէրապատ գիւղին դաւաճան Գալաւա (գիւղապետ) Մատրիրոսը օգնում էր ոստիկանության։ Որոշուեց խփել և գործը յանձնուեց ինձ, մեր շրջանի յանդուգն ու նուիրուած Դաշնակցական Գէորգանի և ուրիշ մի ընկերոջ հետ միասին։

«Մեր տանը ապրում էր Սաշա Զաբոլոտկո անունով մի սպայ, որի մօտ ես ռուսերէն դասեր էի առնում։ Մեզ մտերիմ մարդ էր։ Նրա մօտ յաճախ հաւաքւում էին իր սպայ

ընկերները և ուրախ ժամանակ էին անցնում։ Այդ երեկոյ էլ, հոկտեմբեր 15-ին հիւրեր եկան։ Սաշան խնդրեց ինձ, ձի նստեմ և երթամ շուկայից ուտելիք բերեմ։ Գնացի։ Նոր էի վերադարձել ուտելիքով, լուր բերին, թէ Գալավան երկու հոգու հետ միասին բաղնիք է գնում։ Շտապով դուրս թռայ և մէկ հարուածով գետին փռեցի՝ պոռալով՝ «Սատկիր, դաւաճան շուն»։ Վրայ հասաւ և Գէորգանը. նա էլ դաշոյնի երկու հարուած տուեց սրիկային։ «Դրանից յետոյ, ես անմիջապէս եկայ տուն։ Սպանները թուղթ էին խաղում։ Նստեցի նրանց մօտ և սկսեցի դիտել խաղը։

«Դրանից յետոյ Դէպքին ականատեսներ լուր էին տուել ոստիկանութեան։ Մէկ էլ ոստիկանութիւնը շրջապատեց մեր տունը, թէ «աւազակ Դրոն մարդ է սպանել, ո՞ւր է»։ Սպայ Սաշան պատասխանեց, թէ Դրոն ամբողջ ժամանակ ինձ հետ էր և հետեւաբար, չէր կարող մարդ սպանել...»[5]։

Գյուղապետի ահաբեկումը նա իրականացնում է այնպիսի արագութեամբ ու հմտութեամբ, որ նրանց տանը հավաքված սպաներից և ոչ մեկի մտքով իսկ չի անցնում կասկածել նրա մեղսագործության վրա։ Օրեր շարունակ ընթացող հարցաքննությունների ժամանակ Դրոյի «անմեղությանը» անվերապահորեն հավատացող սպաները միահամուռ կերպով պաշտպանում են նրան գազազած նահանգապետի հարձակումներից։

«... Հա,— շարունակում է Դրոն,— այս էլ աւելացնեմ. 1916-ի վերջերը, ես Թիֆլիսում հանդիպեցի Սաշային։ Այժմ գնդապետ էր, վիրաւորուած եկել էր ռազմաճակատից բժշկուելու։

— Յիշո՞ւմ ես,— հարցրեց նա,— անպիտան Բոգուսլաւսկին ուզում էր Գալաւայի սպանութիւնը քո վրայ ձգել։

— Գիտե՞ս ինչ, Սաշա,— պատասխանեցի ես,— Բոգուսլաւսկին իրաւունք ունէր, իսկապէս որ Գալաւային ես էի սպանել»։

Գնդապետ Սաշա Զաբոլոտկոն շշմած նայում է Դրոյի երեսին...»[6]։

---

[5] «Դրօ», 1956 թ., Պէյրութ, էջ 6—7։

[6] Նույն տեղում։

Թեջերապատի գյուղապետի ս կանությունն առաջին ահաբեկչական գործն էր Դրոյի մարտական կյանքում։

Վերոհիշյալ մարտական գործողություններից հետո, դպրոցական միջավայրը այլևս չէր կարող բավարարել ռազմի փոթորկահույզ կյանքին ձգտող Դրոյին։ Ռազմական կըրթություն ձեռք բերելու հաստատ վճռականությամբ նա որոշում է թողնել գիմնազիան և ընդունվել ռազմական դպրոց։ Բայց ընդունված օրենքների համաձայն ռազմական հաստատություններ կարող էին ընդունվել միայն դպրոցում բարձր գնահատականներ ունեցող և կարգապահությամբ աչքի ընկած սովորողները։ Իսկ գիմնազիայում Դրոյի և գնահատականները և կարգապահությունը անբավարար էին։ Բայց նա արդեն վճռել էր և այլևս ոչինչ չէր կարող նրան խոչընդոտել իրականացնելու իր վաղեմի երազանքը։

«Անհամարձակ,— գրում Ս. Վրացեանը,— գնում է տեսչի մօտ, թէ՝— Պարոն տեսուչ, ուզում եմ գնալ զինուորական դպրոց, բայց... նիշերս... կարելի՞ է մի բան անել...»

— Սիրելիս,— ուրախանում է տեսուչը,— քո բոլոր երեքները հինգ կը դարձնեմ, վարքիդ զերօն եւս հինգ ու խաչ կանեմ, միայն թէ գնաս.. Կը մաղթեմ քեզ յաջողութիւն, որ զօրավար դառնաս...»[7]։

Գիմնազիայի ամենաբմբոստ ու անհանգիստ աշակերտը՝ Դրոն գերազանցիկության վկայականը գրպանում մեկնում է Պյատիգորսկ և ընդունվում Ախուլգինսկի Գնդի ռազմական ուսումնարանը։

Սակայն հարազատ ժողովրդի դաժան փորձություններով լեցուն կյանքը թույլ չի տալիս նրան ավարտելու զինվորական ուսումնարանը։

1905 թ. փետրվարին Անդրկովկասում բռնկվում են հայ-թուրքական ազգամիջյան ընդհարումները և Դրոն հայտնվում է հայության ինքնապաշտպանությանը զինվորագրված մարտիկների շարքերում։

Առաջնորդվելով «Հայաստանն առանց հայերի» հրեշավոր քաղաքականությամբ՝ ցարիզմը սկսած 19-րդ դարի երկրորդ կեսից հայության նկատմամբ հետևողականորեն, բայց

---

[7] Ս. Վրացեան, «Կեանքի ուղիներով» հ. դ., Պէյրութ, 1965 թ. էջ 126։

նուրբ վարպետությամբ կիրառելով հայաջինջ քաղաքակա-
նություն՝ միաժամանակ աշխատում էր հայ հեղափոխական
կուսակցությունների և ողջ ժողովրդի ուշադրությունը գլխա-
վորապես բևեռել Հայաստանի արևմտյան հատվածի վրա՝
ստեղծելով այն կեղծ պատրանքը, թե իբր հայությունը ճնշ-
վում և հոշոտվում է միայն թուրքական կայսրությունում։
Բայց իրականում ցարական կառավարությունը ամենահի-
վանդագին կերպով արձագանքելով արևմտահայության
ազատագրական պայքարին և մեծապես նպաստելով համիդ-
յան արյունոտ քաղաքականության կենսագործմանը՝ ամեն
կերպ խոչընդոտում էր իրենց արյունակիցներին ջարդերից
պաշտպանելու ոգով համակված հայ մարտական ու զինա-
տար խմբերի, հեղափոխական գործիչների մուտքը Կովկասից
Սրկիր։ Հայաստանի արևմտյան հատվածի ազատագրումը
ցարիզմը դիտում էր արևելահայության ազատագրության
ձգտումների ամենահզոր ազդակներից մեկը և այդ պատ-
ճառով միջոցների մեջ խտրականություն չդնելով, գործադրում
էր ընձեռված հնարավորությունները՝ խեղդելու ազգային-
ազատագրական շարժումները Հայոց աշխարհի և արևմտյան
և արևելյան հատվածներում։ Վիթխարածավալ կայսրությու-
նում բռնկված հեղափոխական շարժումները խեղդելու հա-
մար իշխանություններն օգտագործեցին իրենց հզոր ռազ-
մական ու ոստիկանական ուժերը, իսկ Անդրկովկասում հա-
յակործան ծրագրի իրագործման համար ցարիզմն ուներ
հիանալի միջոց. դա խավարամիտ, պանթուրքիզմի շնչով
թունավորված կովկասյան թուրքերն (ազեր) էին։

Գտնելով իշխանությունների թողտվությունից ու օգ-
նությունից՝ թուրքերը փետրվարի 6-ին արյունալի սպանդի
են վերածում Բաքվի հայկական թաղամասերը։

Ընդհարումների հենց առաջին օրը Դրոն լքում է ռազմա-
կան դպրոցը (ուսումնառության ժամանակաշրջանը միա-
ժամանակ համարվում էր պարտադիր զինվորական ծառա-
յություն) և գալիս Բաքու։ Կռիվների երկրորդ օրն ընդամենը
յոթ մարտիկներով, որոնց միանում է նաև Դրոն, Բաքու է
հասնում Նիկոլ Դումանը և մեծ վարպետությամբ կազմա-
կերպելով տեղի հայության ինքնապաշտպանությունը՝ ար-
ժանի ջարդ տալիս ցարական աստիճանավորների և անձամբ

նահանգապետ գեներալ Նակաշիձեի առաջնորդությամբ հայկական թաղերն ասպատակող թուրք ամբոխին։ Դումանի դխավորած մի խումբ քաջակուն հայորդիների կայծակնային հարվածներից շանթահար՝ Բաքվի թուրք առաջնորդները հաշտության են կոչում մինչ այդ իրենց կողմից «վախկոտ» համարվող հայերին։

Մեկ շաբաթ տևողությամբ ընթացող կռիվներից հետո հաղթական հայ մարտիկները հավաքվում են Բաքվի հայության ինքնապաշտպանության ռազմական շտաբում՝ Մելիքյանի լուսանկարչատանը։ Գալիս է նաև Դումանը։ Պատմում է այդ օրերի դեպքերի մասնակից Թադե Պետրոսյանը. «Մտաւ Դումանը՝ խէշոյի հետ։ Բոլորս ոտքի ելանք եւ սրտատրոփ սպասում էինք Դումանի խօսքին։ Այդ պաղ, համարեա անժպիտ մարդը ուրախ դէմքով եւ կրակոտ աչքերով նայեց բոլորիս եւ ասաց. «Ապրիք, տղերք ջան. Դաշնակցական վրիժառու հայդուկին վայել գործ կատարեցիք։ Իմացած եղէք, որ մեծ դաւը սրանով չվերջացաւ։ Եղէք միշտ եւ ամենուր պատրաստ՝ աւելի մեծ պայքարներու համար...

Եւ Դումանը մօտեցաւ ամէն մէկիս եւ համբուրեց մեր ճակատները։ Երբ մօտեցաւ Դրոյին, գրկեց նրան եւ ասաց.

— Այս արիւնոտ պայքարի մէջ մի նոր գիւտ արի։ Այդ գիւտը Դրաստամատն է։ Սա մեծ ապագա պիտի ունենայ, եթէ արժանավայել միջավայրի մէջ մնայ։ Ապրիս, տղաս, քեզ վրայ մեծ յոյս ունեմ։

Դրօն անհուն ուրախութիւնից լացաւ։ Մեծ ռազմիկի գովքը ամենամեծ վարձատրութիւնն էր Դրօյի համար։

— Պարոն Դուման, պիտի աշխատեմ քո յոյսդ արդարացնել,— եղաւ Դրօյի պատասխանը»[8]։

Ճիշտ է, շնորհիվ հայ մարտիկների հերոսության Բաքվում շիկացած իրավիճակը խաղաղվել էր, բայց դեռ մնում էր շիրագործված ևս մի կարևորագույն խնդիր։ Ընդհարումների առաջին օրը Հ. Հ. Դաշնակցության Բաքվի «Ոսկանպատ» կենտրոնական կոմիտեն մահվան էր դատապարտել հայերի ջարդերի կազմակերպիչ գեներալ Նակաշիձեին և այդ մասին ի լուր ամենքի արդեն հայտարարվել էր։ Իսկ նման պա-

---

[8] «Հայրենիք» ամս., 1956 թ., հոկտեմբեր, էջ 18—19։

բագաններում դաշնակցությունը երբեք չէր դրժել իր դատավճիռը։ Ո՞վ պետք է իրագործեր նահանգապետի ահաբեկումը։ Տեղի կենտրոնական կոմիտեի կարծիքով ահաբեկման իրագործումը պիտի հանձնարարվեր փորձառու և առավել հարուստ հեղափոխական կենսագրություն ունեցող ռազմիկի։ Սակայն Դումանի վճիռն հաստատակամ էր ու անառարկելի։ «Վահանով կամ վահանի վրա» այս էր նրա պատգամն ու հրամանը քսանմյա Դրոյին։ Անսպասելի էր դեռևս մարտական առաջին փորձությունը նոր ստացած Դրոյի համար նման պատասխանատու առաջադրանք ստանալ համբավավոր, խստապահանջ հայդուկապետից։

Դրոն այնքան էլ չի սիրել պատմել իր կատարած գործերի մասին և միշտ ընկերների թախանձանքին պատասխանել է.

«Ախար, ի՞նչ եմ արել, որ պատմեմ դուք գրեք» արտահայտությամբ, սակայն մեկ անգամ տեղի տալով հետաքրքրքրվողների հորդորներին՝ անդրադարձել է Նակաշիձեի սպանության մանրամասներին. «Որոշված ժամին,— պատմել է Դրոն,— ինչ որ հարկաւոր էր հետս վերցած, խեղճ ու կրակ ձեւ տալով ինձ, գնացի եւ կանգնեցի որոշուած տեղը։ Թարսի նման այդ օրը սոսկալի փորցաւ ունէի եւ փորս գալարումների մէջ էր. մտածում էի գնալ մի մօտ տեղ հանգըստանալ ու վերադառնալ, բայց երբ զգում էի որ այդ ժամին նահանգապետը կարող է գալ ու գնալ, յետոյ ինչ անեմ եւ ինչ պատասխան տամ։ Պիտի մնամ, մտածեցի, փորս տրորելով, ոտքերս վեր ու վար շարժելով, ման էի գալիս։ Այդ ժամին ինձանից քիչ հեռու, մի կեռաս ծախող թուրք էր նստած, գնում էի նրա մօտ, մի բան ասում ու վերադառնում էի։ Մէկ էլ տեսայ նահանգապետը կառքի մէջ, շրջապատուած հեծեալ պահակներով գալիս է. պատրաստվեցի, մոտացայ փորիս ցաւը եւ երբ մոտեցան ինձ, նետեցի ձեռքիս ռումբը ճիշտ տեղը։ Ահաւոր պայթումի ձայնից ու իրարանցումի մէջ, նոյն խեղճ ու կրակ ձեւը տալով ինձ, հեռացայ։ Զախ կողմից մի նեղ փողոց կար, մտայ այդ փողոցը, տեսայ որ մի դրան առաջ կանգնած էր յայտնի մանկավարժ Տիգրան Ռաշտամաճեանի կինը, որ Իգդիրից էր եւ ինձ բարեկամ։ Հարցրեց ինձ. «Դրո ջան, այդ ի՞նչ ձայն էր», ասացի

ձայնից մի հարցրու։ Մտայ ներս ապա մի քիչ հոք, անմիջապէս միւս փողոցով, պոտունցի եւ գնացի ահաբեկման տեղը, մտայ հասարակութեան մէջ իմանալու թե ինչ էր կատարուել։ Տեսայ որ հաւաքում էին թէ կառքի կտորները եւ թէ սպանուածների դիակների կտորները եւ այն աւերածութիւնը, որ ռումբը կատարել էր շրջապատում։ Միայն շատ ցաւեցի, որ կեռաս ծախող թուրքն էլ կտոր կտոր էր եղել»[9]։

1905 թ. մայիսի 11-ին, Բաքվի փողոցներից մեկում, օրը ցերեկով, վրիժառու Դրոյի ռումբի անվրեպ հարվածով արժանի դատաստանի արժանացած հայկեր նահանգապետի սպանությունը ցնցող ու սարսափելի տպավորություն է թողնում ողջ Կովկասում։

«Դաշնակցութեան հմայքը,— գրում է Մ. Վարանդյանը,— որ մեծ էր արդէն եկեղեցական գոյքերու համար մղուած կռիւներէն և ահաբեկումներէն ի վեր, խիստ բարձրացաւ Կովկասեան ժողովուրդներու աչքին։ Հայ մարտական կազմակերպութեան անունը կը հոլովէին բոլոր շրջաններում, ոմանք հիացմունքով ու պատկառանքով, ուրիշներ՝ ատելութեամբ ու ատամներու կրճտոցով։ Իր շեշտակի հարուածով եւ յարուցած դղրդիւնով, այդ ահաբեկումը, զոր կարելի է համեմատել Պլէհվի և մեծ իշխան Սերգեյի դէմ կատարուած մեծաշուառաշ ահաբեկումներուն հետ, պիտի մնայ Հ. Յ. Դաշնակցութեան փառաւոր գործերէն մէկը»[10]։

Բաքվի դեպքերը ծավալվող գործողությունների միայն սկիզբն էր։

Շուտով ընդհարումն ավելի մեծ ընդգրկումներով ու ուժգնությամբ տարածվում է Երևանի նահանգ, Արցախ, Զանգեզուր, Գանձա և ընդհուպ մինչև Թիֆլիս։

Նակաշիձեի ահաբեկությունից հետո արդեն անվեհեր ահաբեկչի անուն վաստակած Դրոն գալիս է Երևան։ Սակայն, լուր ստանալով, որ ազգերի մայրաքաղաքում ոստիկանությունը ձերբակալել է իր սիրելի ընկերոջը՝ Մարտիրոս Զարուխյանին, նա անմիջապես վերադառնում է Բաքու։ Նրա ներկայությունը զարմանք է հարուցում «Ոսկանպատկ»

---

[9] «Հայրենիք» օրաթերթ, 1956 թ., ապրիլի 22։

[10] Մ. Վարանդեան, «Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն», հ. 1, էջ 24։

կենտրոնական կոմիտեի անդամներ Աբրահամ Գյուլխանդանյանին և Լևոն Թաղևոսյանին (Պապաշա)։ Իրոք, մեծագույն հանդգնություն էր նրա հայտնվելը, ուր ցարական ոստիկանությունը համառորեն փնտրում էր Նակաշիձեի ահաբեկչին։ Սակայն Դրոն չէր կարող շարհամարհել իրեն սպառնացող վտանգը, երբ ոստիկանությունը մահապատժի սպառնալիքով բանտ էր նետել նահանգապետի սպանության գործում մեղադրվող մարտական զինակցին։ Հանդիպելով Մարտիրոսի քրոջը՝ կարողանում է զաղտնորեն տեսակցություն կազմակերպել և մարտական ընկերոջն օգնելու անհրաժեշտ գործերը կարգավորելուց հետո դարձյալ վերադառնում է Երևան և ներկայանում Երևանի նահանգի ինքնապաշտպանության հրամանատար Նիկոլ Դումանին։ Ցնայած Բաքվի կռիվների ժամանակ Դրոն գործել էր նրա հրամանատարությամբ, բայց իրականում նրան առաջին անգամ էր վիճակվում միայնակ հանդիպել ու առանձին խոսել Դումանի հետ, որի խստապահանջությունն ու զինվորական կարգապահության նկատմամբ դրսևորած արտակարգ խիստ վերաբերմունքը հայտնի էր ամենքին։

«Կուսակցությունը,— ասել է Դումանը Դրոյին,— քո ձեռքով մի մեծ գործ է կատարել, այդ չի նշանակում, թէ դու հակառակ Կենտրոնական Կոմիտէի հրահանգի կարող ես, կամ իրավունք ունիս վերադառնալ այն վայրը, որտեղից քո իսկ ապահովութեան եւ իրեն յայտնի այլ պատճառներով հեռացրել է։ Հայ ազատագրական պայքարը շատ մեծ է, քեալաշէօզութեան վայրկեաններն անխուսափելիօրէն դեռ կը գան, հարկաւոր է տնտեսել ուժերը եւ սպասել յարմար ժամանակի։ Մանաւանդ դու, որ թէ գիմնազիայում ես սովորել, թէ զինուորական դպրոցում, շատ լաւ պէտք է հասկանաս, թէ ինչ բան է կարգապահությունը...

Ես լուռ, զլուխս կախ լսում էի։ Մերթ տաք քրտինք էր գալիս վրաս, մերթ պաղ։ Ոյժ չունէի առարկելու կամ արդարանալու։

Նրա պարզ, բայց կտրուկ եւ ազդող խօսքերը միտում էին գլխումս այլեւ երբեք չմոռացուելու համար»[11]։

---

[11] «ՎԵՄ», 1934 թ., մայիս-հունիս, էջ 14։

Հաջորդ օրը Դումանը դարձյալ կանչում է Դրոյին և առանց նրա կարծիքը հարցնելու նշանակում Կոտայքի շրջանի ինքնապաշտպանության հրամանատար։ Առաջարկը անսպասելի էր և քանի որ ինքը դեռևս չուներ հրամանատարության փորձառություն, փորձում է հրաժարվել։ Բայց Դումանի վճիռները որպես օրենք անբեկանելի էին։ «Նա (Դումանը),— գրում է Դրոն,— դէմքը մի քիչ խոժոռած, սուր հայեացք նետեց վրաս եւ արտասանեց.

— Վաղը առաւօտեան ժամը 9-ին եկէք շտաբ. պատրաստ եղէք մեկնելու Ղըրխըբուլաղ (այժմ Աբովյանի շրջան — Հ. Գ.),— եւ ոսկրուտ ձեռքը պարզելով ինձ՝ աւելացրեց՝ ազատ էք, կարող էք գնալ։

Ինձ ոչինչ չէր մնում, բայց եթէ համակերպվել»[12]։

Լավ դաս էր Դրոյի համար Դումանի՝ նման կտրուկ և խիստ արտահայտման ձևն ու մարտական շոր վերաբերմունքը։

Չնայած Կոտայքի շրջանում ընդհարումները դեռևս չէին բռնկվել, բայց հայկական գյուղերը ցանկացած պահի կարող էին հարձակման ենթարկվել թարաքեամանների (քոչվոր թուրքեր — Հ. Գ.) կողմից։

Դրոն վարպետորեն է կազմակերպում Կոտայք գավառի ինքնապաշտպանությունը։ Թուրք քոչվորներին ոչ մի անգամ չի հաջողվում իրենց ասպատակությունները սփռել այդ գավառի հայկական գյուղերում։

Թշնամուն դիմավորելու համար ամենուրեք կազմ ու պատրաստ էին Դրոյի կազմակերպած մարտախմբերը։

Ահա Դրոյի մասին Կոտայքի ինքնապաշտպանության կազմակերպիչներից մեկի՝ Արամայիս Ազնավուրյանի վկայությունը. «Յիշում եմ,— աւելի քան յիսուն տարի առաջ էր,— Կոտայքի գյուղում նշանակուած էր Շրջանային Կոմիտէի ժողով։ Դեռ ժողովը չսկսած, ներս մտաւ մի բոլորովին երիտասարդ զինուոր՝ հրացանը ձեռքին եւ ինքը ամբողջովին կորած փամփուշտակալների և փոշու մէջ։ Ընդհանուր բարեւ տալով, մօտեցաւ կոմիտէի տեղացի անդամին.

---

[12] Նույն տեղում, էջ 16։

— Որտեղ կարող եմ քիչ հանգստանալ, շատ բեզարած եմ։

— Հէնց էստեղ պառկիր, Դրո ջան, ոչ դու մեզ կը խանգարես, ոչ էլ մենք քեզ։

... Աւանեցի բիձան, Կոտայքի Շրջանային Կոմիտէի ամենատարիքաւոր անդամը, այն որ նոյն տարին սպանուեց դաւաճանութեամբ, նկատեց նորեկ զինուորի հասցէին.

— Ջահել է, բայց արդէն արտակարգ ճարպիկ է ու յաջողակ, նաեւ առիւծի սիրտ ունի։ Դժգոհ է թիկունքային զինուորական աշխատանքներից եւ ուզում է, որ Դումանը նրան ուղարկի այն շրջաններից մէկը, ուր ընդհարումներ կան Թուրքերի հետ։

Առաջին անգամ էի հանդիպում Դրոյին։

Աւանեցի բիձան շատ ճիշտ էր բնորոշել Դրոյին։ Այնուհետեւ Դրոն ամբողջ կեանքի ընթացքում բազմաթիւ ապացոյցներ է տուել, որ գործ կազմակերպելու մէջ վերին աստիճանի «ճարպիկ էր», այսինքն հնարամիտ էր, իսկ վտանգի պահերին «առիւծի սիրտ ունէր», այսինքն քաջ էր հերոսութեան աստիճան»[13]։

Որպես վարձահատոյց Կոտայքի գավառում ցուցաբերած արգասաբեր աշխատանքների՝ Դումանը Դրոյին նշանակում է Դարալագեազի ինքնապաշտպանության հրամանատար։

Այս անգամ արդեն հայտնվելով ռազմադաշտում որպես մարտական ուժերի համանատար՝ նա պետք է հանձներ թերեւս ամենադժվարին քննությունը։

1905—06 թթ. Կովկասում բռնկված ընդհարումներում հայ ժողովրդի մղած պայքարը ազգային միասնականության դրսեւորման և խիզախումների փայլուն օրինակ է։ Ստանձնելով ինքնապաշտպանության ղեկը՝ Հ. Հ. Դաշնակցությունը մարտադաշտ է առաջնորդում մեր ժողովրդի ամենակենսունակ ու մարտնչող ուժերին։ Վտանգված շրջանները պաշտպանելու առաքելությամբ Կովկաս էին եկել կռիվների բովում թրծված բազում համբավավոր ֆիդայիներ։

Երիտասարդ Դրոն իր մարտական կարողություններով

---

[13] «Հայրենիք» օր., 1956 թ., ապրիլի 26։

բուրմափորձ ռազմիկների շրջանում պիտի ապացուցեր, որ ինքն արժանի է նրանց հրամանատարը լինելու և վստահությանն արժանանալու կոչմանը։

Դարալագեազում ինքնապաշտպանության ղեկն ստանձնել էին Տարոնի նշանավոր հայդուկ, Անդրանիկի և Գևորգ Չաուշի զինակից՝ Հաճի Հակոբ Կոտոյանը (Հաճի Կոտո — Հ. Գ.) և Աղբյուր Սերոբի մարտական զինակից Առյուծ Ավագը։ Դարալագեազի կռիվներին նվիրված իր հուշագրությունում Դրոն մեծ ջերմությամբ ու հիացմունքով է նկարագրում ֆիդայիների և հատկապես Առյուծ Ավագի քաջագործությունները[14]։

Դումանը չէր սխալվել իր ընտրության մեջ։ Դարալագեազի կռիվներում Դրոն որպես հրամանատար հրաշալի քննություն է բռնում։ Շուտով նա մարտախմբով անցնում է Լեռնային Նախիջևան, ուր կենտրոնավայր ընտրվելով Նորագյուղ՝ պիտի ղեկավարեր այդ շրջանի ինքնապաշտպանությունը։ Նախիջևանը հայկական այն շրջաններից էր, որն ավելի մեծ չափերով էր վնասվել թուրք ավազակախմբերի հարձակումներից։ Դրոյի խմբի զինվորներից ոմանք հեգնանքով էին վրաբերվում իրենց 21-ամյա հրամանատարին, իսկ տարեց հայդուկներից մեկը՝ Խլաթցի Գալոն նկատի ունենալով նրա երիտասարդ տարիքը, արհամարհանքով ասել է. «— Տղաք, մեր Մոկաց իշխաններ կը ժողովին ու էրկար ֆիքր կընեն, թէ իրենց հարկ որո՞ւ ձեռքով ղրկեն Վանայ Վալիին, որ քրտեր չթալլեն ճամբին։ Շատ ֆիքր կընեն, քիշ կընեն ու կորոշեն փողեր ժամկոչի աղուէսի վիզէն կապել, որ տանի, սաղ-սալամաթ տեղ հասցնէ։ Հիմա մեր պարոն Դուման մեզ կապեր է իդա աղուէսի վիզ (Գալոն նկատի ունի Դրոյին — Հ. Գ.)»[15]։

Սակայն շատ շուտով Խլաթցի Գալոն և մյուս փորձառու ֆիդայիները փոխելով իրենց վերաբերմունքը՝ ջերմ սիրով են կապվում իրենց երիտասարդ հրամանատարին։

Դրոն բուռն գործունեություն է ծավալում Լեռնային Նախիջևանում։ Շրջանի գյուղերում տեղացիների ուժերից կազ-

---

[14] Տե՛ս, «ՀԿԵՄ», 1934 թ., նոյեմբեր-դեկտեմբեր, էջ 1—8։

[15] Նույն տեղում, էջ 9։

մակերպում է մարտական խմբեր և կապեր հաստատում հարևան շրջանների ինքնապաշտպանական ջոկատների հետ։ Նրա ակտիվ գործունեությունը չի վրիպում թուրք հրոսակապետերի ուշադրությունից։

Նորս գյուղը, ուր գտնվում էր Դրոյի ռազմական շտաբը, բացառիկ կարևոր ռազմական նշանակություն ուներ։ Փաստորեն այդ գյուղի միջոցով էր իրականացվում հաղորդակցությունը Զանգեզուրի, Դարալագեազի և Լեռնային Նախիջևանի միջև։

Շուտով, թուրքական մի քանի ցեղախմբերի միավորված ուժերը Լեռնային Նախիջևանի ինքնապաշտպանության կենտրոնը խորտակելու դիտավորությամբ՝ հարձակվում են Նորս գյուղի վրա։

Դրոն վարպետորեն է ղեկավարում գյուղի պաշտպանությունը։ Նրա հրամանատարությամբ գործող ջոկատները ոչ միայն կարողանում են հուսալիորեն չեզոքացնել թշնամու հարձակումները, այլև դիմելով հակագրոհների արժանի ջարդ են տալիս թուրքերին և բռնագրավում նրանցից զգալի քանակությամբ զենք, տավարի և ոչխարի հոտեր։ Այս հաղթանակից հետո նույնիսկ հեգնոտ Մոկացի Գալոն սկսում է անկեղծ համակրանքով վերաբերվել Դրոյին։

Նորսի կռիվներից հետո Դումանի հրամանով Դարալագեազի և Լեռնային Նախիջևանի ինքնապաշտպանության ընդհանուր հրամանատար է նշանակվում Քեռին, իսկ Դրոն դառնում նրա օգնականը։ Առանց փոքր ինչ դժգոհելու նա սիրահոժարությամբ է ընդունում կռիվներ վարելու հսկայական փորձառություն ունեցող Քեռու (Արշակ Գաֆաֆյան) օգնականը լինելու Դումանի որոշումը և մի քանի ամիս մարտնչելով նրա հրամանատարությամբ՝ աչքի է ընկնում բազմաթիվ կռիվներում, որոնցից ամենանշանավորը Սիսիան գյուղի հերոսամարտն էր։

Իր հուշերում անդրադառնալով Քեռու ընկերակցությամբ վարած կռիվներին՝ Դրոն անկեղծ համակրանքով է ներկայացնում բազմափորձ հայդուկի հիրավի հիացմունքի արժանի մարտական քաջագործությունները»[16]։

---

[16] Տե՛ս, «ՎԷՄ» 1935 թ., մայիս, հունիս, էջ 45—55։

Սիսիանի փառավոր հաղթանակից հետո արդեն անվախ խմբապետի անուն վաստակած Դրոն օգտվելով կռիվների ժամանակավոր դադարից, ամուսնանալու նպատակով, մեկնում է Իգդիր։

Նրա սիրած աղջիկը՝ Նվարդը Կանայանների գերդաստանին թշնամաբար տրամադրված Ավագյանների ընտանիքից էր։ Ամիսներ առաջ խոսք անգամ չէր կարող լինել նրանց ամուսնության մասին։ Բայց այդ օրերին խիզախ ահաբեկչի և խմբապետ-հրամանատարի անուն վաստակած Դրոյին իրենց փեսացու ունենալն արդեն մեծ պատիվ էր ցանկացած ընտանիքի, անգամ Ավագյանների համար։

Նրանց ամուսնության վերաբերյալ այսօր պահպանվել են մի շարք հետաքրքրական հուշագրություններ, որոնցում հաստատվող իրողությունը՝ անանձնական կյանքով օժտված և հայրենիքի ազատությանը անմնացորդ նվիրված հայ զինվորի կերպարը բնութագրող պերճախոս վկայություն է։

Արդեն հայ-թուրքական ընդհարումների երկրորդ տարին էր։ Հայաստանի տարբեր շրջաններից բազմաթիվ տագնապալի լուրեր էին հասնում Երևան՝ ինքնապաշտպանության ընդհանուր հրամանատար Նիկոլ Դումանի մարտական շտաբը։ Ռազմական իրադրությունը առավելապես լարված բնույթ էր ստացել Զանգեզուրում։ Շրջանի ինքնապաշտպանությունը ուժեղացնելու համար անհրաժեշտ էին խիզախ ու ձեռնհաս մարտիկներ։ Այդ օրերին Իգդիրի եկեղեցիներից մեկում՝

«... Գավառական քաղաքի մէջ — օգտուելով իր արձակուրդի օրերէն — պիտի ամուսնանար երիտասարդ, յանդուգն և Դումանի կողմէ սիրուած մարտական նոր ղեկավարներէն մէկը։

Գավառական այդ քաղաքը մեծ խրախճանքի մէջ էր։ Խմբապետը տեղի յայտնի ընտանիքէն էր և սիրուած տեղի երիտասարդութենէն։

Պսակը պիտի կատարուէր իրիկունը։ Եկեղեցին լուսաւորուած, տեղացիները տօնական հագուստներով խռնուած էին եկեղեցիի մուտքին մօտ։

Ահա և փեսան կը մտնէ եկեղեցին, իր զինակից ընկերներով շրջապատուած։

Կուգայ նաև հարսը հարանեւորներով։ Արարողությունը կը վերջանայ. հարս ու փեսան դանդաղ կը յառաջանան դէպի ելքը, երբ մարդ մը արագ քայլով կը մօտենայ փեսային և թուղթի կտոր մը կը պարզէ անոր։

Հեռագիր մըն էր (գրուած պայմանական լեզուով). Նիկոլ-Դումանը կը հրամայէր՝ անմիջապես մեկնիլ Զանգեզուր». «քեզի կարիք ունին»...։

Խմբապետ փեսան վայրկեան մը շշմած՝ կարծանանայ. շուրջինները իրար կանցնին, բայց շփոթությունը ակնթարթ մըն էր. խմբապետը անվրդով և դանդաղ շարունակէ իր երթը հարսի քովէն, բայց երբ տուն կը հասնին և ընտանիքի հարազատները բոլորուած էին նորապսակներու շուրջը, նոր փեսան կը մօտենայ իր հօրը՝

— Հայրիկ, հրաման է եկել Դումանէն. պիտի երթամ անմիջապես... կինս քեզի կը յանձնեմ, պիտի պահես ինչպէս քո զաւակը...։

Հայրը, աւանդապահ, ծանրագլուխ իշխանաւոր մը, կը շփոթուի, կարծես շրմբունելով իմաստը տղայի խօսքերուն, ապա կը մրմնջէ.

— Ատաթ չէ, պալէս... մեղք է... վաղը կերթաս։

— Չէ, հայրիկ ջան, չի ըլլի, հրամանը հրաման է, կռիւ է...

— Դէ, տղերք ջան, ձիերը թամբէք,— կը դառնայ նա իր զինակիցներուն։

Ապա արագ կը մօտենայ հօրը և մօրը, ջերմօրեն կը համբուրէ անոնց դողդոջ ձեռքերը, կը շոյէ հարսին գլուխը և դուրս կուգայ...»[17]։

Դրոն իր մարտախմբով մեկնում է Զանգեզուր՝ օգնելու տեղի ինքնապաշտպանության հրամանատար Սեբաստացի Մուրադին։

Զանգեզուրը հայ-թուրքական ընդհարումների ամենադժվարին շրջաններից էր։ Ամիսներ շարունակ բազմաթիվ թուրք հրոսակախմբեր ասպատակում և ավերում էին հայկական գյուղերը։ Մեծանուն սեբաստացի ռազմիկը իր անբաժան զինակիցներ Կայծակ Առաքելի և Ավոյի ընկերակ-

---

17 Կոմս, «Խոնարհ հերոսները» մաս 1, Թեհրան, 1982 թ., էջ 52—53։

ցությամբ Զանգեզուրի քաջարի լեռնականների մարտական ուժերի գլուխն անցած կայծակնային հարվածներ էր հասցրնում լեռնաշխարհի մերթ այս, մերթ այն բնակավայրերի վրա հարձակվող թուրք և նրանց միացած քուրդ ավազակախմբերին։

Դրոյին բախտ վիճակվեց մարտնչել նաև Սեբաստացի Մուրադի հրամանատարությամբ։ Անտարակուսելի է, որ Դրո հրամանատարի ձևավորման դպրոցը 1905—06 թթ. հայ-թուրքական ընդհարումների ռազմաբեմն էր և տվյալ ժամանակահատվածում հայ նշանավոր ռազմական գործիչներ Սեբաստացի Մուրադի, Քեռու, Հաճի Հակոբի և իհարկե նրա իսկ բնորոշմամբ «Իմ մեծ ուսուցիչ Նիկոլ Դուման»-ի ղեկավարությամբ ու ընկերակցությամբ բազմաթիվ կռիվների մասնակցելը։

Մոտ մեկուկես տարի տևողությամբ ընթացող հայ-թուրքական ընդհարումներում Դրոն մարտնչելով Բաքվի, Երևանի, Դարալագեազի, Նախիջևանի և Զանգեզուրի շրջաններում՝ աչքի է ընկնում իր հրամանատարական ընդունակություններով և իսկական ռազմիկին բնորոշ համեստությամբ ու խիզախությամբ։

1905—06 թթ. հայ-թուրքական ընդհարումների ժամանակ հայ ժողովուրդը դաժան, բայց հրաշալի քննություն բռնեց։ Ցարական իշխանությունների կողմից սանձազերծված ազգամիջյան կռիվներում մեր ժողովուրդը միմիայն հերոսական ինքնապաշտպանությամբ նվաճեց ապրելու և հարատևելու իրավունքը և այդ գործում անառարկելիորեն անգնահատելի է Հ. Հ. Դաշնակցության և նրա հայրենաշունչ մարտիկների, այդ թվում և Դրոյի ծառայությունները։

Ավարտվեցին ընդհարումները, բայց նրան վիճակված չէր ապրելու խաղաղ կյանքով։ Մի փոքր «խաղաղ կյանքից» հետո Դրոն Մարտիրոս Զարուխյանի հետ միասին անցնում է Բաքու, տեղի «Ոսկանապատ» Կենտրոնական Կոմիտեի տրամադրության տակ։ Այդ ընթացքում նրանց կյանքում կատարված ամենահիշարժան դեպքը ցարական բանակի գեներալ, Նախիջևանի թուրք Ալիխանով-Ավարսկու ահաբեկումն էր։

Վրաստանի Գուրիայի շրջանի գյուղացիական հուզումները

դաժան միջոցներով խեղդելու պատճառով վրաց հեղափոխականները որոշել էին մահվան դատապարտել մարդակեր գեներալին։ Ալիխանով-Ավարսկին ուղղակիորեն նպաստել էր նաև Նախիջևանի հայերի կոտորածների կազմակերպմանը։

Վրաց հեղափոխականների կողմից գեներալին սպանելու մի քանի անարդյունք փորձերից հետո, դաշնակցությունը վճռում է իր ուժերով իրագործել այդ օրերին արդեն Ալեքսանդրապոլի նահանգապետի գահին բազմած Ալ.-Ավարսկուն։

Հ. Հ. Դաշնակցության Բաքվի «Ոսկանապատ» կենտրոնական կոմիտեի և անձամբ Նիկոլ-Դուման դատավճռով գեներալի ահաբեկման գործը հանձնարարվում է Դրոյին և Մարտիրոսին։

Ստանալով «Ոսկանապատի» զինակիցների օրհնությունը՝ երկու ընկերները անցնում են Դիլիջան, ապա Ղարաքիլիսա, ուր խնձորներով լեցուն ճամպրուկի մեջ տեղավորելով ռումբերն ու ատրճանակները՝ մեկնում են Ալեքսանդրապոլ։

Ալիխանով-Ավարսկու սպանության կապակցությամբ Դրոն Ս. Վրացյանին պատմել է հետևյալը. «... Ալեքսանդրապոլում ունէինք Աւոյի հասցէն՝ բանաստեղծ Աւետիք Իսահակյանի, որ Հ. Յ. Դ. Քարի (Ալեքպոլի) Կենտ. Կոմիտէի անդամ ու ներկայացուցիչ էր։

— Ի՞նչ էք ուզում ինձանից, ինչո՞ւ էք եկել, հարցրեց նա...

Մենք յանձնեցինք նրան կարմիր կնիքով թուղթը, որ հրահանգում էր «ամէն աջակցութիւն ցոյց տալ» մեզ, եւ պատմեցինք Ալեքսանդրապոլ մեր գալու նպատակը։

«Աւոն սարսափահար բացականչեց.

«— Ես ոչինչ չեմ կարող անել, հեռացէք այստեղից, շուտ...

«Մարտիրոսը բարկացած ասաց.

«— Ո՞նց թէ հեռացէք... մենք դաշնակցութեան գործով ենք եկել...

«— Հեռացէք, կորէք, ես դաշնակցական չեմ... գործ չունեմ ձեզ հետ։ Ռադ եղէք։

«Ես Աւոյին ծանօթ էի, գիտէի նրա վախկոտ բնավորությունը։ Կէս-լուրջ, կէս-կատակ ասացի նրան.

«— Ուրեմն, այդպէս, դաշնակցական չես... նշանակում է՝ սխալուել ենք յայտնելով Ձեզ մեր գաղտնիքը... Յեղափոխական օրէնքով պէտք է այժմ սպանենք ձեզ, որպեսզի մեզ չմատնէք...։

«— Կանէք, կանէք, շան տղերք, էդ էլ կանէք,— արտասանեց նա նոյնպէս կէս-լուրջ, կէս-կատակ...։

«Բայց եւ այնպէս մերժեց մեզ օգնել եւ ջանաց համոզել, որ անմիջապէս հեռանանք... Եւ զամբիւղները մեր ձեռքը տալով՝ ճամփու դրեց, դուռը պինդ փակելով մեր յետեւից»[18]։

Զրկվելով Իսահակյանի օգնությունից՝ Դրոն և Մարտիրոսը առանձին-առանձին շրջում են քաղաքում և զգուշորեն տարբեր միջոցներով աշխատում են տեղեկություններ հավաքել։ Նրանց հաջողվում է պարզել, որ Ալիխանովը պատրաստվում է մեկնել Կարս։

«...Կարճ խորհրդակցութեան մէջ,— շարունակում է Դրոն,— որոշւում է անմիջապես ձեռնարկել գործը։ Մարտիրոսը պնդում է, որ ռումբը ինքը նետէ, Նակաշիձեի վրայ Դրօն էր նետել, ուրեմն այժմ առաջնութիւնը իրեն է պատկանում։ Դրօն տեղի է տալիս...

«...Փողոցներում իրարանցում, սուլոց, ոստիկանների թոհ ու բոհ... անցորդները շտապում են հեռանալ կողքի փողոցները։ Զորավարը հպարտ բազմած է կառքում և խուզարկու աչքերով դիտում է շրջապատը։

Մէկ էլ, ատուերի միջից դուրս է թռչում Մարտիրոսը, բացականչում է «ա՛ռ քեզ» ու ռումբը շպրտում Ալիխանովի գլխին։ Ահռելի պայթիւն։ Կառքը եւ կառքի միջինները բզիկ-բզիկ են լինում։

Անդին՝ որոտում է Դրոյի մաուզերը։ Ընդհանուր խուճապի մէջ ահաբեկիչները անհետանում են»[19]։

Ալիխանով-Ավարսկու ահաբեկումն երկու տարի առաջ իրականացված Նակաշիձեի սպանության նմանողությամբ ցնցող տպավորություն է գործում բովանդակ Կովկասում։ Ամենքը կարծում էին, որ գեներալի սպանությունը ի պա-

---

[18] «Ասպարեզ», 1956 թ., նոյեմբերի 30, էջ 1—2։

[19] Նույն տեղում։

տասխան Գուրիայի արյունալի դեպքերի վրայ հեղափոխականների գործն է։

Դրոն օգտվելով տարածված այդ կեղծ լուրերից անարգել անցնում է Բաքու և հաջորդ տարին այնտեղից մեկնում Հայաստան և 1908 թ. ամռանը Երևանում կազմակերպում Երևանի նահանգի ոստիկանապետ, հայ հեղափոխական գործիչների նկատմամբ թշնամանքով տրամադրված Տեր Սահակովի ապանությունը։

Ցարական իշխանությունները դաժան հալածանք են սկսում Հ. Հ. Դաշնակցության գործիչների դեմ։ Մի՞թե ցարիզմը կարող էր մոռացության մատնել Անդրկովկասում իր հայաջինջ քաղաքականության տապալման գլխավոր «մեղսագործներին»։ Ոստիկանության հալածանքներից խուսափելով շատերն անցնում են արտասահման, իսկ Դրոն օգտվելով Թուրքիայում հռչակված «սահմանադրության իրավունքներից, վաճառական Սուրեն Էֆենդի կեղծանունով անցնում է Հին Բայազետ և զբաղվում քարյուղի, շաքարի ու ցորենի առևտրով։

Հին Բայազետում կեղծանունով վաճառականությամբ զբաղվելը նրա համար պարզապես հուսալի միջոց էր իշխանությունների տեսադաշտից թաքցնելու իր իսկական գործունեությունը։

Շնորհիվ իր հնարագիտության և ձեռներեցության, նա կարճ ժամանակահատվածում կարողանում է մեծ հեղինակություն ձեռք բերել առևտրականների և անգամ թուրք պաշտոնյաների ու քուրդ ցեղապետների շրջաններում։

Հին Բայազետում Դրոյի ծավալած գործունեության հաջողությունը իր նամակներից մեկում հաստատում է նաև Ռոստոմը.

«Դրոն Բայազէտ է. մեծ վաճառական է դարձել։ Լաւ գործ է կատարում»[20]։

Սկսած 1908 թվականից, Հ. Հ. Դաշնակցության Երևանի, Թիֆլիսի, Բաքվի կենտրոնական կոմիտեների հեղափոխական գործիչները կապը Երկրի, մասնավորապես, Վասպուրա-

---

[20] Ռոստոմ, 1979 թ., էջ 188։

կանի, Ֆարոնի, Բաղեշի և Շատախի հետ իրականացնում էին նաև Դրոյի միջոցով։

Վաճառական Սուրեն էֆենդին գաղտնի ուղիներով սերտ կապեր է հաստատում Ռոստոմի, Արամի և Իշխանի հետ։

Քարյուղի, շաքարի բեռների միջոցով Դրոն կազմակերպում է զենքի ու զինամթերքի առաքումը Վանի և Լեռնապարի (Շատախի) շրջանների հեղափոխական կոմիտեներին։ Ահա մի հատված խմբապետ Ասլանի (Ասլան Ստեփանյան) հուշերից.

«Սուրէնը նույնինքը Դրօն էր, որ յատուկ գործերով հաստատուել էր Բայազէդում, ծպտուած՝ իբրև նաւթի ու շաքարի առեւտրական, Սուրէն ծածկանունով։

Սուրէնն ամբողջ երեք օր մեզ պահեց իր մօտ, անհրաժեշտ ցուցմունքները տուեց եւ մեր տարած զէնքերը զետեղելով շաքարի հակերի մէջ, իր եօթ ընկերների հետ ճամբու դրեց Վան, ինձ պահելով իր մօտ...

... Եվ մնացի։

... Ինչ քա՜ղցր ու անմօռանալի օրեր էին, Աստուած իմ։ Նրանք միայն լիովին կը հասկանան ինձ, ովքեր բախտ են ունեցել այդ մեծ մարդու մօտ լինել։

... Այդ լայնասիրտ երիտասարդը կարծէք մեծ պահանջ էր զգում, որ ամէն անգամ իր սեղանի շուրջը բոլորեն նվազագոյն տասը հոգի։

— Պարոն Սուրէն, ախր իմ անելիքն ի՞նչ է...

— Գեաղա, ձէնդ կտրիր, գործի՛ ժամանակը որ գայ, գործ կը տամ քեզ։ Պիտի մնաս։ Հալա հանգստացիր։

«Հանգստիս» տասներորդ օրը լրացել էր, երբ Սուրէնն ինձ ուղարկեց Իգդիր ասելով.

— Դէ գնա, հերիք է, հանգստացար, զէնքերն արդէն պատրաստ են Իգդիրից Բայազէդ եւ ապա Վան փոխադրելու համար։

1912 թ. մայիս—1914 թ. մայիս, Սուրէնի մօտ մնացի, Իգդիր-Բայազէդ գծով դէպի Վան կուսակցական զէնք ու ռազմամթերք փոխադրելու գործի մէջ»[21]։

Տվյալ ժամանակահատվածում Դրոյի գործունեությունը

---

[21] «Ալիք» բաց., 1956 թ., մայիս 4, էջ 76—77։

գլխավորապես ուղղված էր Արևմտահայաստանի ինքնապաշտպանության կազմակերպմանը։ Վաճառական Սուրեն Էֆենդու ապրանքների պարկերով Վան տեղափոխվող զենքն ու զինամթերքը ծառայելու էր հենց այդ նպատակին։

Հ. Հ. Դաշնակցությունը նույնիսկ Երիտ. Թուրքերի սահմանադրության հռչակումից հետո երբեք իր գործունեության տեսադաշտից չկորցրեց հայության ինքնապաշտպանությունը կազմակերպելու կարևորագույն խնդիրը։ Այս առումով ուշագրավ է Ռոստոմի 1914 թ.-ի ապրիլի 2-ին թվագրված նամակը՝ հասցեագրված Մ. Վրացյանին.

«...Դուք՝ ամերիկացիներդ ի զուր էք կարծում, թէ մենք խրուել ենք դպրոցական գործի մէջ եւ ինքնապաշտպանութեան համար ոչինչ չենք անում։ Բացարձակ կերպով սխալ է այդ։ Դպրոցը՝ իր հերթին, բայց մեր գլխաւոր մտահոգութիւնը ժողովրդի ֆիզիքական գոյութեան պահպանութիւնն է։ Գիտես՝ ինչ օրեր ենք ապրում։ Պոլսեցիք տարուած են բարենորոգումների յուսով եւ պարլամենտարիզմով։ Երանի հաւատացելոց։ Այդ բոլորը լաւ, բայց մեր յոյսը պէտք է մեր վրայ դնենք։ Ամերիկայի ընկերները թող վստահ լինեն, որ մենք էլ իրենց պէս ենք մտածում եւ եթէ կարող են ինքնապաշտպանութեան գործին օգնել, թող փող չխնայեն։ Դրօն Բայազէդում, Արամը՝ Վանում, Փիլոսը եւ մի քանի ընկերները այդ գործին են լծուած։ Յավալին այն է, որ միջոցները պակաս են. մեր հարուստները գրպանները պինդ փակել են, իսկ աղքատ ժողովուրդը ի՞նչ կարող է անել։ Հայ հարուստը հոգին կը տայ, բայց փող չի տայ. չեն մտածում, որ վաղը թշնամին հոգին էլ կառնէ, փողն էլ»[22]։

Բռնկվում է առաջին համաշխարհային պատերազմն և Դրոն անմիջապես թողնում է Հին Բայազետն ու գալիս Թիֆլիս, ուր այդ օրերին Հայրենիքի ազատագրության բուռն ձգտումներով համակված՝ հավաքվում էին բազում համքավավոր ռազմիկներ։

Գալիք ռուս-թուրքական պատերազմն և համայն Ռուսիայի տիրակալ Նիկոլայ 2-րդի, Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովի «Հայաստանն ազատագրելու» կեղծ խոստում-

---

[22] Ռոստոմ, 1979 թ., էջ 188։

ներն արդեն պարարտ հող էր նախապատրաստել կամավորական շարժման ծավալման համար։

Տարիներ շարունակ թուրքական իշխանությունները հայ ժողովրդի նկատմամբ գործադրած իրենց դժոխային քաղաքականությամբ ատելության և պայքարի այնպիսի շիկացած տրամադրություններ էին սերմանել, որոնք կարող էին ժայթքել առաջին իսկ հնարավորության դեպքում։ Ռուսական իշխանություններն անշուշտ քաջատեղյակ էին հայ-թուրք փոխհարաբերություններին և հայ ժողովրդի հոգեբանությանն ու ձգտումներին։

Պատրաստվելով պատերազմի՝ ցարիզմը հրաշալիորեն օգտագործեց հայության հակաթուրք տրամադրություններն և այն վարպետորեն օգտագործեց ի շահ ռուսական զենքի հաղթանակի։

«Թուրքահպատակ հայերը գերազանց գիտեին տեղանքն և թուրքերեն ու քրդերեն լեզուները։

Ստրատեգիական ու մարտական խնդիրներ լուծելիս հրամանատարական կազմին հայերի առավելություններն առաջին հերթին անհրաժեշտ էր օգտագործել հետախուզության և տեղանքի ուսումնասիրության նպատակներով...»[23]։

Ռուսական հրամանատարության որոշմամբ հայ կամավորական գնդերը պետք է գործեին հիմնականում այն ուղղություններում, որտեղ կենտրոնացված էին ռուսական զորամիավորումները։ Նախատեսվում էր զորքերի հարձակման չորս հիմնական ուղղություններ՝ 1. Սարիղամիշի, 2. Ալաշկերտի, 3. Իգդիր-Մակու-Բայազետ-Վան, 4. Ջուլֆա-Խոյ-Դիլման-Բաշկալա-Վան։

Չորս գլխավոր ուղղություն. և այդ պատճառով թույլատրվեց կազմել կամավորական չորս գունդ, որոնցից յուրաքանչյուրը պիտի գործեր նախատեսված ուղղություններից որևէ մեկում։ Այսպես. առաջին ուղղությունում գործելու էր 4-րդ կամավորական գունդը (հրամանատար Քեռի), երկրորդ ուղղությունում գործելու էր 3-րդ գունդը (հրամանատար Համազասպ), երրորդ ուղղությունում Դրոյի գլխավորած 2-րդ

---

23 Հ. Հ. Կ. Ա. (Հայաստանի Հանրապետության Կենտրոնական արխիվ—Հ. Գ.) ԱՄՆ, Բոստոն, թղթածրար 503, էջ 7։

գունդը և չորրորդ ուղղությունում Անդրանիկի առաջին գունդը։

Դրոյի 2-րդ կամավորական գունդը կազմավորվում է իր ծննդավայր Իգդիրում։ Զորամասն ուներ հետևյալ կազմը. Յապոնի (Հովհաննես Պարոնյան) և Գանձակեցի Զեմլյակի (Հարություն Նարումյան) հրամանատարությամբ գործող երկու կեսհարյուրյակներ և Կաքբեցի Օնեի (Հովհաննես Մելքոնյան), Խոսրով Եղիազարյանի, Մարտիրոս Աբրահամյանի (Բաշգառնեցի խմբապետ Մարտիրոս), Գանձակեցի Դալի Ղազարի և Թիֆլիսեցի Ռիժա Տիգրանի գլխավորած հինգ հետևակային հարյուրյակներ։ Դրոյի օգնականներն էին Գարեգին Նժդեհը, Արմեն Գարոն և դաշնակցական Խեչոն։

Հարյուրյակների բոլոր հրամանատարներն առանց բացառության դաշնակցության երկաթյա կարգապահությամբ կոփված և 1905—06 թթ. հայ-թուրքական ընդհարումներում մարտական հրաշալի դպրոց անցած քաջավարժ զինվորականներ էին։ Իսկ նրանց հրամանատարը չնայած իր երիտասարդ տարիքին արդեն մեծ հեղինակություն էր վայելում հայոց ազատամարտի նշանավոր ռազմագետ-գործիչների շրջանում։ Եվ պատահական չէր, որ հրամանատարական կազմի ընտրությունները կատարելիս, Հայոց Ազգային Բյուրոն 2-րդ կամավորական խմբի հրամանատարությունը անվարան վստահեց 30-ամյա Դրոյին, երբ հայ կամավորների շարքերում կային այնպիսի հարուստ մարտական կենսագրություն ունեցող հայդուկ-ռազմիկներ, ինչպիսիք էին Սեպուհը, Սմբատը, Ավոն, Խեչոն և այլք։

Ժամանակն ապացուցեց այդպիսի ընտրության անսխալականությունը։

Հոկտեմբերի 18-ին սկսվում է ռուս-թուրքական պատերազմը։

Դրոյի գունդը, որը գործելու էր գեներալ Նիկոլաևի զորախմբի կազմում, համաձայն վերին հրամանատարության վաղօրոք մշակված հրահանգի, պիտի անցներ Հայկական պարլեռնաշղթան և հաղթահարելով Թափառեսի բարձունքներում արդեն ամրացված հակառակորդի դիմադրությունը՝ հարձակումը զարգացնել Վանի ուղղությամբ։

Մեծ ոգևորություն էր տիրում կամավորների խմբերում, հայրենիքը թշնամու ճիրաններից վերջնականապես ազատագրելու տենչանքը խանդավառել էր ամենքին։ Սակայն հետագա դեպքերն արագորեն ընթացան շպասված ուղղվածությամբ։

Դրոն արագորեն անցնելով Հայկական պարը՝ հաղթահարում է Թափառեսի բարձունքների արգելքները ու դեռ նոր էր հասցրել դիրքեր գրավել Կալրե-Շամե գյուղում և հանկարծ գեներալ Նիկոլաևից ստանում է նահանջի անսպասելի հրամանը։ Պարզվում է, որ գեներալ Աբացևի (Զափազանց թույլ ռազմագիտական կարողություններով օժտված այդ թրքամետ գեներալը ողջ պատերազմի ընթացքում աչքի է ընկել հատկապես իր հակահայ գործողություններով— Հ. Գ.) զորամասը չկարողանալով դիմադրել Ալաշկերտի, Ղարաքիլիսա գյուղաքաղաքի կողմից թուրքական զորքերի գրոհներին՝ նահանջում է և դրանով իսկ հակառակորդին լուրջ հնարավորություն ընձեռում շրջապատելու գեներալ Նիկոլաևի զորախմբին, որի առաջապահ մարտական միավորը Դրոյի խումբն էր։ Եվ ինչպես հետագայում իրավացիորեն պիտի նշեր 2-րդ կամավորական գնդի 1-ի հեծյալ հրայուրակի հրամանատար՝ Յապոնը.

«Պատերազմը հազիւ սկսած՝մեզ համար պարզւում էր, որ ռուսը որոշած էր հայի գլխին խաղ խաղալ... Հրամանատարներն ու կամավորները, փոխանակ նահանջի, պահանջում էին կոտրել դիմադրութիւնը ու օր առաջ հասնել պայքարող Վանին...»[24]։

Դեպքերի նման զարգացումը զարմանք է հարուցում հայ կամավորներին։ Մի՞թե հայրենիքն ազատագրելու ձգտումներով ոգեկոչված և մարտադաշտում դեռ նոր-նոր ոտք դրած հայ զինվորը կարող էր մտածել նահանջելու մասին։ Մյուս կողմից, կամավորական խումբը բավականին առաջ էր անցել հիմնական զորախմբերից և նահանջի պարագայում կարող էր դյուրությամբ զոհ դառնալ թշնամու մեծաքանակ ուժերի հարձակումներին։ Դրոն վճռում է չկատարել գեներալ Նիկոլաևի հրամանը և ճակատամարտ տալ։ Նա նաև հույս է

---

[24] «Հայրենիք» ամս., 1941 թ., մայիս, էջ 174։

փայփայել, որ իրենց հաջող գործողություններով կարող էին ոգևորել ռուսական զորքերին և փոխել նրանց նահանջելու տրամադրությունները։

Հարյուրյակների հրամանատարների և ողջ մարտախմբերի տրամադրությունը մարտական էր։ Դրոյի ընդամենը 500 զինվորներից բաղկացած խումբն անվարան ընդունում է քանակապես ավելի քան տասնապատիկ գերազանցող ուժեր ունեցող հակառակորդի մարտահրավերը։ Բոլոր հարյուրակների հրամանատարներին խստագույն հրամայվում է ոչ մի քայլ չնահանջել։

«Դրոն,— գրում է 3-րդ հարյուրյակի հրամանատար Մարտիրոսը,— գրում է ինձ, թէ Մակեդոնին ու Արշակին յայտնիր որ դիրքերը ձեռքից չպիտի տան։

Մակեդոնն ինձ պատասխանում է.

«Դրոյին ասացէք, եթէ մենակ էլ մնամ, թշնամին Կարմիր սարը չի տեսնի»։

Իսկ Արշակը պատասխանում է.

«Իմ դիրքերը գրաւող թշնամին դեռ չի ծնուել։

Եւ իսկապէս, երկուսն էլ արդարացրին Դրոյի յոյսերը»[25]։

Թուրք-քրդական զինվորականները վստահ իրենց ուժերի գերակշռությանը, համարձակորեն գրոհում են գյուղի մատույցներում դիրքավորված կամավորական խմբի հարյուրյակների վրա։ Հմտորեն ղեկավարելով մարտը՝ Դրոն հակառակորդի գնդակների հեղեղի տակ շարժվելով մի հարյուրակից մյուսը՝ քաջալերում և սխրանքների է կոչում հայ զինվորներին։ Թշնամին ճանաչելով հայ մարտախմբի հրամանատարին՝ կրակը կենտրոնացնում է նրա վրա.

«Գետնի փոշին,— վերհիշում է Մարտիրոսը,— բարձրացած գնդակների կարկուտից և ձիու սմբակներից, իր մէջ առաւ նրան ձիու հետ միասին, ինձ թւաց, որ այլևս ամեն ինչ վերջացաւ, բայց մի քանի վայրկեանից յետոյ, ձիով ճեղքելով փոշին՝ կրկին երևաց Դրոն, գլուխը դրած ձիու ականջների արանքը քառատրոփ սլանալիս դէպի Կարմիր սարը՝ Մակեդոնի դիրքերը։

Հինգ րոպէից աւելի չմնաց այնտեղ, կրկին շուռ տուեց ձին

---

[25] «Ալիք», 1956 թ., մայիս 4, էջ 73։

և նոյն արագութեամբ, այս անգամ գնաց կանգ առնելու Արշակի տղաների մօտ։

— Դէ, բալաշներս (քաջեր — Հ. Գ.)...

Մի քանի բոպէից յետոյ վերադարձաւ նորից դէպի ինձ և ժպտալով ասաց.

— Տղաներս, քալաշներ են, շատ լաւ են դիմադրում։ Մարտիրո՛ս, թշնամին շա՛տ է, շատ։

Լաւ տրամադրութեան մէջ էր և զոհ բոլորից»[26]։

Թշնամին չկարողանալով կոտրել Կարմիր սարի բարձունքներում դիրքավորված Մակեդոնի և Արշակի հարյուրյակների դիմադրությունը՝ հարձակումը զարգացնում է Կավրեշամե գյուղի ուղղությամբ։ Գյուղի վրա գրոհի նետվող քրդական հեծելախմբերին եթե հաջողվեր հաղթահարել հայ զինվորների դիմադրությունը, ապա ծանր վիճակի մեջ կարող էր հայտնվել ողջ զորագունդը։ Կռվի վճռական պահն էր։ Դրոն թշնամու թիկունքին հարվածելու նպատակով գրոհի է նետում իր քաջությամբ ու հանդգնությամբ հայտնի Դալի Ղազարի, ապա Կարբեցի Օնեի հարյուրյակները։ Կամավորների հուժկու հարվածն անկասելի էր, թշնամու ջախջախված զորախմբերը հետ են շպրտվում գյուղի մատույցներից։

Նույն պատկերն էր տիրում ճակատամարտի մյուս հատվածում, ուր Մարտիրոսի հարյուրյակի, Զեմլյակի և Յապոնի հեծյալների հանդուգն գրոհներից թուրքերին ու քրդերին հաջողվում է ազատվել միայն փախուստով։ Ճակատամարտի ողջ ընթացքում Դրոն անընդհատ կռիվների կիզակետում էր. «Այդպիսի մի խառը ժամանակ,— շարունակում է Մարտիրոսը,— Դրօն կրկին եկավ մեզ մօտ։ Էլ համբերել չկարողացայ ու դառնալով նրան ասացի.

— Դրօ ջան, խնդրում եմ, ցած արի ձիուց և եթէ Մակեդոնի մօտ ես ուզում գնալ, տուր ձիդ ես գնամ...— չթողեց խօսքս վերջացնեմ և ջղայնացած պատասխանեց։

— Ի՞նչ ես մտածում այդպէս խօսելով, Մարտիրոս, կարծում ես թէ դու ինձանից ավելին զոհաբերելու իրաւունք ունես, թէ՞ իմ արիւնը կարմիր է քան քոնը։ Ի՞նչ տարբերութիւն, դու գնաս, թէ ես, գնդակը որ ինձ կպչի, քեզ կխնայի՞։

---

[26] Նույն տեղում։

Պատասխանի չսպասեց, մտաւ ձիու ականջները, ձուլեց նրա հետ և սլացաւ դէպի Կարմիր սարը տղերքի մօտ»[27]։

Ամբողջ օրը ուշադրություն չդարձնելով թշնամու կողմից արձակվող գնդակների կարկուտին, Դրոն «Դե՜ քալաշնե-ըս...» վանկարկելով նետվում է մի հարյուրյակից մյուսը և հայ զինվորները հրամանատարի համարձակությունից ավելի ոգեկոչված՝ ուժեղացնում են հարվածների հզորությունը։

Կավրե-Շամեի կռիվն կարծես թե մոտենում էր ավարտին, երբ Դրոն իր հերթական արշավից վերադառնալով Արշակի դիրքերը՝ տեսնում է Արմեն Գարոյին, Խեչոյին և փորձում մոտենալ նրան։ «Տեսայ պատրաստեց իջնելու ձիուց, սակայն նկատեցի, որ անբնական կերպով թեքւեց թամբի վրայ և պիտի ցած ընկնէր, եթէ Արմէն Գարօն ու Խէչօն չհասնեին։

Դրօյին գրկած, ձիուց ցած բերին և իրարանցում ստեղծեց այնտեղ։

Աչքիս առաջ ամէն ինչ սևացաւ։ Տղաներին մի քանի խօսք ասելուց յետոյ վազէ-վազ հասայ գյուղ։

Արմէն Գարօն տեսնելով վիճակս, մի կողմ քաշեց ինձ ու ասաց.

— Չխօսեցնես Մարտիրոս... դրութիւնը ծանր է։

Դրօն ուշակորույս վիճակում պառկած էր»[28]։

Հենց նույն օրը Կովկասում ռազմաճակատի հրամանատարությունը ստանում է հետևյալ հեռագիրը. «Ամբողջ առաջին օրը միայն մեր ուժերը ունեցել են ծանր կռիվներ, վեց անգամ գերազանցող քրդերի ու թուրքական կանոնավոր զորամասերի դեմ։ Ծանր վիրավորված է Դրօն»[29]։

Դրոյին ուշակորույս վիճակում տեղափոխում են Իգդիր, ապա Թիֆլիսի Արամյան հիվանդանոց։ Կամավորական 2-րդ մարտախմբի հրամանատարությունը ընդունում է Արմեն Գարոն։

Արամյան հիվանդանոցում բուժվելու օրերին Թիֆլիս է ժամանում Ռուսիայի կայսր Նիկոլայ 2-րդը և այցելում զին-

---

27 Նույն տեղում, էջ 74։

28 Նույն տեղում։

29 ՀԽՍՀ., ՊՊԿԱ., ֆ. 127, գ 25 թ. 17։

վորական հիվանդանոցներ։ Թիֆլիսի քաղաքապետ Ալ. Խատիսյանի ուղեկցությամբ ցարը այցելում է նաև Դրոյին։

«...Ես,— գրում է Ալ. Խատիսյանը,— պատմեցի ցարին հայ կամավորների քաջագործությունների մասին, նոյնը հաստատեցին եւ ցարին շրջապատող ռուս զորավարները, եւ ցարը շնորհեց Դրոյին Գէորգեան զինուորական խաչը իր քաջութեան համար»[30]։

Մինչ Դրոն հիվանդանոցի մահճակալին գամված բուժում էր վերքը, Կովկասյան ռազմաճակատում կատարվեցին այնպիսի իրադարձություններ, որոնք մեծապես պայմանավորեցին Արևմտահայաստանի և հայության ողբերգական ճակատագիրը։

Էնվերի գլխավորած թուրքական զորքերը շարժվելով Սարիղամիշ՝ ծանր կացության մեջ են դնում ռուսական զորաբանակին և հետագա հաջողության դեպքում սպառնում ներխուժել Կարս, Ալեքսանդրապոլ ապա նաև Կովկաս։

Սարիղամիշի ճակատում թուրքական զորքերի ժամանակավոր հաջողությունների հետևանքով ռազմաճակատի մյուս հատվածներում տեղաբաշխված ռուսական զորքերը հարկադրաբար թողնում են գրաված դիրքերն ու բռնում նահանջի ուղին։

Հայ կամավորական խմբերը կազմալրվելու նպատակով տեղափոխվում են Թիկունք։

Պատերազմի առաջին երկու ամիսները ցույց տվեցին, որ իզուր էին այն հույսերը, թե իբր ռուսական բանակը ընդունակ է և կարող մի քանի շաբաթների ընթացքում ջախջախել թուրքական զորքերին ու ազատագրել Արևմտահայաստանը։

Թուրքիայի զանազան շրջաններից մազապուրծ եղած հայ գաղթականները սարսափազդու լուրեր էին հաղորդում արևմտահայությանը սպառնացող անխուսափելի ջարդերի մասին։

Դեպքերի զարգացման ողբերգական ընթացքը ցույց տվեց, որ «ազատարար» ռուսական բանակը ոչինչ չձեռնարկեց, իսկ հայ կամավորական խմբերը չկարողացան խոչընդոտել ոչ

---

30 «Հայրենիք» ամս., 1932 թ., հոկտեմբեր, էջ 159։

Արևմտահայաստանն ու Օսմանյան կայսրության մյուս հայաբնակ վայրերը ջարդերի սարսափելի տեսարանների վերածող թուրքերի հրեշավոր գործողությունները։

Անխուսափելի կոտորածներից փրկելու նպատակով հայությունը Արևմտահայաստանի մի քանի շրջաններում դիմել էր ինքնապաշտպանության։ Հայոց Ազգային Բյուրոյի և կամավորական խմբերի առաջ ծառացած օրվա կարևորագույն խնդիրը արևմտահայությանն օր առաջ օգնության հասնելն էր։ Պիտի նշել, որ հայ կամավորական խմբերը գործում էին ռազմաճակատի տարբեր ուղղություններում և նրանցից յուրաքանչյուրը առանձին վերցրած չուներ ռազմական այնպիսի հզորություն, որպեսզի կարողանար միայնակ լուծել կարևորագույն նշանակություն ունեցող մարտական առաջադրանքներ։ Իսկ ժամանակը չէր աշխատում ի նպաստ հայերի։ Տվյալ ժամանակաշրջանում անհրաժեշտ էր միավորել հայկական բոլոր մարտական ուժերը և այն կենտրոնացնել առավել կարևորություն ներկայացնող ուղղությունում, որպիսին համարվում էին Վան-Մուշ, Վան-Բաղեշ ուղղությունները։

Հայ մարտական խմբերը ենթարկվում էին կովկասյան ռազմաճակատի հրամանատարությանը, իսկ առանց նրա համաձայնության խոսք անգամ չէր կարող լինել նրանց միավորելու մասին։ Առաջնորդվելով վերոհիշյալ նկատառումներով Հայոց Ազգային Բյուրոն դիմում է կովկասյան ռազմաճակատի հրամանատարությանը։ Կովկասի փոխարքա Վորոնցով Դաշկովի և կովկասյան ռազմաճակատի հրամանատարության միջնորդությամբ Գերագույն գլխավոր հրամանատարությունը հաստատում է հայկական կամավորական խմբերը միավորելու Ազգային Բյուրոյի կողմից առաջադրված դիմումը։ Կամավորական յուրաքանչյուր խմբի թվակազմը հասցվում է 1000-ի և այժմ արդեն նրանք իրենց հանդերձանքը, զենքն ու զինամթերքը պիտի ստանային ի հաշիվ պետական միջոցների[31]։

Հայ Ազգային Բյուրոյի պահանջով կամավորական 2-րդ

---

[31] Տե՛ս, Հ. Հ. Կ. Ա., թղ. ծր. 503

3-րդ և 4-րդ խմբերը միավորվելով Վարդանի ընդհանուր հրամանատարությամբ կազմում են «Արարատյան ջոկատ» զորագունդը և որպես գեներալ Նիկոլաևի զորամասի առաջապահ միավորում պիտի գործերին Իգդիր-Բեկրի-Կալա-Վան ուղղությամբ։ Անդրանիկի 1-ին կամավորական գունդը Սալմաստի շրջանից նույնպես շարժվելու էր Վան։

Մոտ երկու ամիս բուժվելուց հետո Դրոն 1915 թ. փետրվարի վերջերին վերադառնում է մարտաշարք և վերստին ստանձնում 2-րդ կամավորականի հրամանատարությունը։ Քանաքեռում վերակազմավորվող հայկական գնդերը համալրվում են նոր կամավորներով։ 2-րդ կամավորականի հրամանատար Դրոյի օգնական է նշանակվում Գարեգին Նժդեհը, իսկ նույն խմբի 2-րդ վաշտի հրամանատարությունը ստանձնում է Ղազար Քոչարյանը (Քաշալ Ղազո կամ Մեծ Ղազար — Հ. Գ.)։

Ապրիլի 15-ին գունդը թողնում է Երևանն և անցնելով Էջմիածին՝ ստանում է Հայոց Հայրապետի օրհնությունը, ապա շարժվում Իգդիր։

Ղազար Քոչարյանի վկայությամբ. «Իգդիր էինք, երբ ստացուեցաւ Վանի Արամի մէկ գրութիւնը, որով անմիջական օգնութիւնը կը խնդրէր մեզմէ»[32]։

Հապաղելու ժամանակ այլևս չկար։ Արամի գրությունն ստանալու պես Արարատյան զորախումբը, որի կազմում էր Դրոյի 2-րդ կամավորականը, անմիջապես ճանապարհ է ընկնում դեպի Վան։

Սարսափելի տեսարաններ են բացվում կամավորների առաջ։ Դրոյի խումբն անցնելով Աբաղայի դաշտավայրով՝ ողջ ճանապարհին հանդիպում է հայկական լքված, ավերակ գյուղերի և մորթոտված բազում դիակների։ Մինչև Բերկրի-Կալա բնակավայրին հասնելը այդ ամբողջ ամայացած տարածքում հանդիպում էին թուրքական և քրդական միայն փոքրաքանակ զինված խմբեր, որոնք զոհ էին դառնում սարսափազդու տեսարաններից վրեժխնդրությամբ համակված հայ զինվորներին։

Ապրիլի 26-ին Դրոյի զորախումբը մոտենում է թշնամու

---

[32] «Հայրենիք» ամս., 1934 թ., օգոստոս, էջ 135։

կողմից ամրացված Բերկրի-Կալա քաղաքին։ Տեղացող առատ ձյունը խոչընդոտում է կամավորների արագ տեղաշարժերին, իսկ թուրքերը նահանջելիս քանդել էին մոտակայքով անցնող գետի միակ կամուրջը։ Հարկավոր էր արագորեն հաղթահարել արգելքներն և ժամ առաջ գրավել թշնամու պաշտպանության որջը։ Դրոն առաջնորդելով հեծելախումբն անվարան մտնում է սառցակալած գետն ու հաղթահարելով այն, առաջապահ զորավաշտով նետվում հակառակորդի դիրքերի վրա։ Քիչ անց կռվի դաշտ հասած իր մյուս զորավաշտերի համագործակցությամբ գրավում է Բերկրի-Կալա քաղաքը և շպաստելով գեներալ Նիկոլայի զորագնդերին՝ արշավում Վան տանող ճանապարհի թշնամու հաջորդ արգելապատնեշի՝ Շեխկարե գյուղի վրա։ Նրա զորախմբի հարևանությամբ դեպի Վան էին արշավում նաև Համազասպի և Քեռու գլխավորած զորախմբերը։

Անկասկած հայ կամավորները ավելի վաղ կարող էին մտնել Վան, եթե չլիներ ռուսական հրամանատարության շինծու արգելքները։

Բերկրի-Կալեում թուրքերի դիմադրությունն արագորեն խորտակելուց հետո, երբ Դրոն նույն ուժգնությամբ պատրաստվում էր առաջ շարժվել, ստանում է գեներալ Նիկոլաևի հարձակումը դադարեցնելու մասին հրամանը։

Ավելի քան կարմանալի էր նման որոշումը։ Իսկ Վանից այդ օրերին ստացվող տագնապալի լուրերը թելադրում էին, որ անհրաժեշտ էր կատարել ճիշտ հակառակը։

Հապաղելը կարող էր ճակատագրական նշանակություն ունենալ։ Թուրք հրամանատարությունը կարող էր օգտվել ռուսական զորքերի պասիվությունից ու դանդաղկոտությունից և մեծ ուժեր նետելով Վան՝ ընկճել քաղաքի հերոսամարտիկների դիմադրությունը։ Անդրադառնալով այդ օրերի դեպքերին՝ 2-րդ կամավորական գնդի 1-ին վաշտի հրամանատար Բաշգառնեցի Մարիտրոսն իր հուշերում գրում է. «...Դրոն դիմեց զորավարին եւ խնդրեց թոյլ տալ առաջ շարժուելու, որպէսզի Վանի ժողովուրդը ի զուր չկոտորուին։ Զօրավարը մերժեց։

Դրոն ի մի հաւաքեց իր զօրամասի խմբապետներին եւ յայտնեց, թէ Զերնոզուբովի եւ Անդրանիկի բանակը չի կա-

ղողանում առաջանալ Դիլմանում տեղի ունեցող ուժեղ կռուի պատճառով, որով եւ մեզ էլ հրամայւում է շառաջանալ, թէ մեր շառաջանալու դէպքում Վանի մեր ազգակիցները կարող են կոտրուել, թէ մեր այստեղ մնալը այսքան զինուած ուժով կը լինի դաւաճանութիւն ու կը ծանրանայ մեր խղճի վրայ։ Առաջարկեց զօրամասը հանձնել Նժդեհին, իսկ ինքը որոշած է 150 փորձուած տղաներով գաղտնի ճանապարհով մտնել Վան, որով հնարաւորութիւն պիտի տրուէր Վանին մի առ ժամանակ էլ դիմանալ։ Հակառակ պարագային, եթէ այդ իրեն չյաջողուէր, գոնէ հանգիստ սրտով կը մեռնէինք մեր ժողովրդի հետ միասին։

Բոլորս տուինք մեր համաձայնութիւնը եւ պատրաստուեցինք գիշերը մեկնել...»[33]։

Բարեբախտաբար ռուսական հրամանատարությունը առաջնորդվելով ինչ-ինչ նկատառումներով փոխում է իր նախկին որոշումը և զորքերը վերսկսում են հարձակումը։

Նույն օրը Դրոյի զորագունդը գրավում է Շեխկարե գյուղը, իսկ հաջորդ օրը Ջանիկ գյուղը և արագորեն մոտենում Վանին։

Վանեցիների հերոսական ինքնապաշտպանության ու հայ կամավորական զորախմբերի հարձակումների հարկադրանքով թուրքական հրամանատարությունը ճարահատյալ վերացնում է քաղաքի պաշարումը։ Հերոսամարտի զինվորները ոգևորված թուրքական բանակի փախուստից՝ գրոհում են քաղաքի թուրքական թաղամասերի վրա և կրակ տալիս այն։ Վանից ոչ հեռու գտնվող հայ կամավորները պարզորեն տեսնելով քաղաքից բարձրացող կրակներն ու ծուխը և կարծելով թե թուրքերն են այրել հայկական թաղամասերը՝ ավելի են արագացնում առաջխաղացումը։ Այրվող քաղաքի տեսարանից խոցված Համազասպը (ծնունդով Վանեցի — Հ. Գ.) հեռագրում է Վանին ավելի մոտ գտնվող Դրոյին. «Հասի՛ր, հարազատ քաղաքս այրվում է...»։ Իսկ իրականում այրվում էին թուրքական թաղամասերը։

Մայիսի 2-ի առավոտյան Դրոյի զորախմբի առաջապահ ջոկատը Դաշնակցական խեշոյի և Դալի Ղազարի գլխավորու-

---

[33] Նույն տեղում, էջ 73։

թյամբ սլարշավ մտնում է քաղաք։ Մի քանի ժամ չանցած քաղաք է մտնում 2-րդ կամավորական զորագնդի մյուս վաշտերը։ Հայ կամավորական խմբերից Դրոյի զորամասը առաջինն է մտնում Վան և արժանանում քաղաքի բնակչության ջերմ ընդունելության։

Վանի հերոսամարտերի ղեկավարներից Հայկ Կոսոյանը վերհիշելով իրենց համար այդ երջանիկ պահը՝ ջերմությամբ գրում է. «Քաղաքամիջի բոլոր զինուած ընկերներով առաջացանք մինչեւ Սւանուց գետը դիմաւորութեան, ուր հասաւ Դրոյի հեռեւակ եւ ձիաւոր բանակը եւ շրջապատեց մեզ։ Ողջոյնի եւ բարի գալուստի խօսք ուղղելով անոնց, ուռա գոռացինք։

Դրօն կարճ եւ ազդու ճառով մը պատասխանեց մեզ, հրամայելով ձիաւոր խմբին հրացանային հինգ համազարկերով ողջունել յաղթող Վանեցուն։ Փոխադարձեցինք մաուզերի տաս կրակով։ Այս պահուն բերդէն մէր թնդանօթաձիգը սկսեց թնդանօթի յիսուն ողջոյններ համատարած դղրդիւնով մը.

Հրանօթներու որոտընդոստ ողջոյններու մէջ՝ երգի եւ փառքի գնացքով մտանք քաղաք»[34]։

Երկու օր անց քաղաք են մտնում Համազասպի և Քեռու 3-րդ, 4-րդ մարտագնդերը ու դեներալ Նիկալաևի զորագընդերը, իսկ ավելի ուշ Վան է հասնում նաև Անդրանիկի զորամասը։

Վանի ազատագրման կապակցությամբ կովկասյան ռազմաճակատի հրամանատարությունը Հայոց կաթողիկոսին հղում է հետևյալ շնորհավորական հեռագիրը. «Ամբողջ սրտէ շնորհակալութիւն կը յայտնեմ Ձեզի՝ էջմիածնի տաճարին մէջ Ամենաբարձրեալին ուղղուած Ձեր ջերմ աղոթքներուն համար այն անմոռանալի օրը, երբ իմ ղեկավարութեանը յանձնուած յաղթական զօրքերու եւ քաջարի հայ կամաւորներու կողմէ Վանը ազատուեցաւ քրիստոնէութեան պատմական թշնամիէն, եւ հայ ժողովուրդը՝ իր դարաւոր բռնակալէն»[35]։

---

[34] «Հայրենիք» ամս., 1929 թ., ապրիլ, էջ 119։

[35] Նույն տեղում, 1927 թ., սեպտեմբեր, էջ 76։

Քրիստոնեության անունից խոսող, կեղծ ջերմությամբ համեմված հեռագրի հեղինակը մի քանի օր անց առանց վարանելու և մոռացության մատնելով Քրիստոսին, անձամբ պիտի ստորագրի Վանի մահվան դատավճիռը՝ ռուսական զորքերի կողմից քաղաքն ու Արևմտահայաստանի մյուս շրջանները թողնելու հրամանը։

Վանում գտնվելու հենց առաջին օրը Դրոն շտապում է տեսակցելու ու սփոփելու թուրքերի կողմից դավադրաբար սպանված Իշխանի ընտանիքին։ Հին Բայազետում վաճառականությամբ զբաղվելու տարիներին նա սերտ բարեկամություն էր հաստատել Վանի գործիշների և հատկապես Լեռնապարի մարտական ուժերի կազմակերպիչ ու առաջնորդ Իշխանի հետ։

Դրոյի և Իշխանի կնոջ՝ Սիրանուշի հանդիպման ականատես Արամ Տապաղյանը վերհիշելով այդ հուզիչ տեսարանը՝ գրում է.

«1915 մայիս 3-ին Վանի հերոսամարտի յաղթանակի առաջին առաւօտն էր։ Նահատակ Իշխանի սգաւոր այրին՝ հօրեղբօրս աղջկա Սիրանուշին քովն էի, երբ յանկարծ սենեակին դռան վրա երեւցաւ շերքէզի տարազով, թուխ դէմքով, հազիւ 30 տարեկան երիտասարդ մը։ Ձեռները դէպի Սիրանուշը երկարելով՝ ըսաւ մորմոքած ձայնով.

— Ա՜խ, իմ անբախտ քոյրս։

Սիրանուշը լալագին, խօսքը եկուրին ուղղելով, հարցուց.

— Ո՞ւր է Սուրէն էֆենտի (Դրոյի ծածկանունը Հին Բայազետում ապրած տարիներին — Հ. Գ.), ո՛ւր է քո սիրելի ընկերդ, իմ աննման Իշխանը...

... Տխուր եւ ճնշիչ մթնոլորտը մեղմացնելու համար՝ Սուրէն էֆենտին սկսաւ պատմել, թէ ի՞նչպես իր զօրախումբը հասած էր Վան...»[36]։

Դրոյի անմիջական նախաձեռնությամբ հայ զինվորները Հիրճ գյուղում հայտնաբերում են Իշխանի և նրա զինակիցների մարմինները և տեղափոխելով Վան՝ ամփոփում քաղաքի գերեզմանատանը։

---

[36] «Հայրենիք» ամս., 1967 թ., մայիս, էջ 2։

Դրոյի կյանքի ու գործունեության մասին պահպանված փաստերի, հուշագրությունների և կարծիքների ուսումնասիրությունն անառարկելիորեն հավաստում են ոչ միայն նրա քաջության ու զորավարական տաղանդի իրողությունը։ Հայ ազատամարտի նշանավոր գործիչների համաստեղության մեջ նա եզակիներից էր նաև իր անբասիր ընկերասիրությամբ և հասարակ զինվորի նկատմամբ դրսևորած ուշադրությամբ ու հոգատարությամբ։ Ահա իր զոհված զինվորներից մեկի ընտանիքի նկատմամբ նրա ցուցաբերած վերաբերմունքի մի փոքրիկ վկայություն.

Նորին գերազանցութեան փոխ թեմակալին հայոց

«Ներկայացնելով Ձերդ Գերազանցութեան էրզրումցի (Շարուր-Դարալագեազի գավառ — Հ. Գ.) Յարութիւն Սայադեանի խնդիրը, պատիվ ունիմ յայտնելու, որ անցեալ 1914 թ. Նոյեմբերի 1-ին Տաճկաստանի Կիւրէ-Շաւէ գիւղի կուռմ սպանուեց նրա որդի՝ Ալեքսան Հարութիւնեան Սայադեանը։ Նրա 6 հոգուց բաղկացած ընտանիքը և ծերունի հայրը մնացել են զուրկ նիւթական միջոցից։

Խնդրում եմ Ձեր գերազանցութիւնից, եթէ հնարաւոր կլինի, Ձեր միջնորդութեամբ այդ ընտանիքին ցոյց տուէր նիւթական որևէ աջակցութիւն, որով հանդուցեալի որդիներին և ծերունի հորը գոնէ որոշ չափով մխիթարութեան պատճառ կլինէնք, ոգևորելով նրա ընտանիքին»[37]։ 3 մարտի 1915 թ.

Իսկ Դրոյի միջնորդություններն ու դիմումներն, որպես կանոն, երբեք ապարդյուն չէին անցնում։

Նրան բնութագրող մի հատկանշական կողմ ևս։ Դրոն, գործարարության և մարդկանց հետ լեզու գտնելու զարմանալի շնորհներով էր օժտված։ Որպես օրենք նրա ղեկավարած զորամասերը իրենց զինվածությամբ, նյութական ապահովվածությամբ և կարգապահությամբ միշտ լավագույնն են եղել։ Նույնիսկ բարձրաստիճան զինվորականները սիրով էին համաձայնել ծառայելու նրա հրամանատարությամբ գործող զորամասերում։ Գուցե և նրա հաջողությունների գաղտնիքը պայմանավորված էր նաև վերոհիշյալ գործոններով։

---

[37] ՀԽՍՀ., ՊՊԿԱ. ֆ. 121, ց 2 գ 25 թ 17։

Վասպուրականի ազատագրումը դեռևս միայն սկիզբն էր այն գործի, որին իրավամբ կոչված էին ծառայելու հայ կամավորները։ Առջևում էին թուրք իշխանությունների յաթաղանի մյուս զոհերը՝ Շատախը, Մոկը, Բաղեշը, Տարոնը, Սասունը և Արևմտահայաստանի մյուս շրջանները։

Վանի հաղթական մուտքից մի քանի օր անց Դրոյի խումբը դարձյալ կռիվների հորձանուտում էր։ Այս անգամ խումբը զարգացնելով հարձակումը, պիտի օգնության հասներ Շատախի և Մոկսի նույնպես ինքնապաշտպանության դիմած հայությանը։ Շատախցիների ինքնապաշտպանությունը 1915 թ. ինքնապաշտպանական մարտերի ամենահերոսական և ուսանելի, բայց դեռևս ըստ արժանվույն չուսումնասիրված էջերից մեկն է։ Չնայած թուրք իշխանությունների նենգադավությանը զոհ էր գնացել ինքնապաշտպանության ոգին ու կազմակերպիչը՝ Լեռնապարի Իշխանը, սակայն ազատատենչ շատախցիները հավատարիմ մնալով իրենց հերոսական անցյալին և Իշխանի ներդրած մարտական ավանդին՝ ավելի քան մեկ ու կես ամիս անկոտրում համառությամբ պաշտպանեցին իրենց կյանքն ու ազգային արժանապատվությունը։

Շատախի պաշտպաններին օգնության հասնելը կապված էր լուրջ դժվարությունների հետ։ Շատախ տանող ուղին անցնում էր քրդերով խիտ բնակեցված Գորան դաշտավայրով։ Թուրքական հրամանատարությունը քրդական յուրաքանչյուր գյուղ վերածել էր ամուր պաշտպանական հանգույցների։ Բացի դրանից, Հիրճ գյուղից դեպի Գորանի դաշտ տանող միակ ճանապարհը շրջափակված էր կիրճերով, որի թաքստոցներում դիրքավորվել էին թուրք զինվորներն ու քրդական զինյալ խմբերը։

Հարձակումը զարգացնելու կամավորների միակ հնարավորությունը թշնամու ամրությունները շրջանցելն էր։ Պահեստում թողնելով Յապոնի, Զեմլյակի և Խոսրովի հեծյալ ջոկատները՝ Դրոն հրամայում է Ղազար Քոչարյանի վաշտին շրջանցել թշնամու ամրություններն ու հարվածել թիկունքին։

Ռազմախաղը ավարտվում է գերազանց վերջաբանով, թուրք-քուրդ խմբերը ընկնելով խաչաձև կրակի տակ՝ դիմում են փախուստի։ Գորանի դաշտ տանող ուղին բաց էր։ Դրոյի

զինվորները հողմի նման ներխուժելով դաշտ՝ մեկը մյուսի հետևից գրավում են քրդական գյուղերը և մոտենում դեպի Շատախ տանող ամենաուժեղ արգելապատնեշին՝ Սղվուտ գյուղին։ Հաղթական կռիվներից հետո բարձր մարտական տրամադրությամբ համակված հայ զինվորները հաշված ժամերի ընթացքում ընկճում են հակառակորդի դիմադրությունն և մտնում հայկական Սետկին գյուղը։ Թուրքական զորքերը, որոնք արդեն 45-րդ օրն էր, ինչ պաշարել էին Շատախը, հայ կամավորների լուրն առնելուն պես թողնում են մարտադաշտը։

Թուրքական զորքերի փախուստի և հայ կամավորների հայտնվելու լուրերը անմիջապես տարածվում են նրանց գալստյանը սրտատրոփ սպասող ինքնապաշտպանության մարտիկների շարքերում։

Պատմում է Շատախի ինքնապաշտպանության հրամանատարներից՝ Տիգրան Բաղդասարյանը. «Լևոնը (Լևոն Շաղոյանը նույնպես ինքնապաշտպանության հրամանատարներից է — Հ. Գ.) կը գրէ. «Դրօն 1000 հոգով Սեւտիկին է։ Երեկոյեան աշխատիր ամէն գնով հոս լինել. խորհրդակցելու համար Ծառնույի վրայ կատարուելիք վաղուան արշաւանքի մասին...

...Երկու ձի կը պատրաստեն անմիջապէս եւ Սեւտիկինցի Յակոբի հետ կը շտապեմ հասնել Սեւտիկին։ Մութ էր արդէն, երբ կը հասնիմ գիւղը։ Աչքի կը զարնեն մեր կամաւորների վրաններն իրենց պլպլուան ճրագներով։

Կը մտնեմ սէրտրոջ սենեակը, եւ ահա կը հանդիպիմ Դրօյին շրջապատուած իր վաշտապետներով՝ Նժդեհը, Մեսրոպը, Նապոնը, Մարտիրոսը, եւ այլն։ Կը համբուրինք, կը սկսինք զրոյց անել։ Կը պատմեն ինձ իրենց կռիւների եւ ապագայի մասին։ Ես էլ իմ հերթին՝ մեր կռիւների մասին։

— Այդպէս, ուրեմն Ծառնույի արշաւանքը թողնենք ուրիշ անգամուան, այնպէս չէ՞, էֆենտի,— հեգնելով կը վերջացնէ Դրօն։

— Այո, պ. հրամանատար,— կը պատասխանեմ,— բայց երեւի ուրիշ Ծառնոցներ կ'ունենանք»[38]։

---

[38] «Հայրենիք» ամս., 1931 թ., հոկտեմբեր, էջ 138—139։

1915 թ. մայիսի 12-ին 2-րդ կամավորական մարտախմբի գլուխն անցած Դրոն հաղթականորեն մուտք է գործում Շատախ գավառի ինքնապաշտպանության կենտրոն՝ թաղ գյուղը։

«Կ'անցնի,— շարունակում է Տիգրան Բաղդասարյանը,— Հայկական բանակը եւ նրան կը հետեւի Շատախի պզտիկ բանակը իր յաղթանակի երգն երգելով... Կը մտնենք վերջապէս թաղը։ Պատուհաններից, կտուրներից, կանայք եւ աղջիկներ ծաղիկներ կը սփռեն կամաւորների անցած ճանապարհով։ Ուրախ զուարթ կ'անցնի բանակը եւ կը հասատուի «Ամբրի Իգին», Տիգրիսի եզերքին։

Այդ օրը շատախցին հանգիստ ու խաղաղ քնեց»[39]։

Վանից մինչև Շատախի գյուղերը ձգվող տարածքը ամբողջովին մաքրված էր թուրքերից ու քրդերից։ Կռիվների ընթացքում կամավորները բռնագրավում են մեծ քանակությամբ ռազմավար, հազարավոր ոչխարներ և բաժանում Շատախի և Սևտիկնի հայ բնակիչներին։

Գավառի ազատագրումը դեռևս տեղի բնակչության ապահովության վերջնական երաշխիքը չէր։ Թուրք հրամանատարությունը վերախմբավորելով հայ զինախմբերի հարվածներից ցաք ու ցրիվ եղած զինական ուժերը՝ սպառնում էր հարավային շրջաններից վերստին հարձակվել Շատախի վրա։ Անհրաժեշտ էր կայուն հիմքերի վրա դնել գավառի ինքնապաշտպանությունը։ Շատախի շրջանների ներքին կյանքը կարգավորելու, ինքնապաշտպանությունը կազմակերպելու նպատակով՝ Դրոյի նախաձեռնությամբ ինքնապաշտպանական մարտերի հրամանատարներ Սամվել Պետրոսյանի և Տիգրան Բաղդասարյանի ղեկավարությամբ կազմվում է գավառի կառավարություն և ոստիկանություն, որոնք անմիջականորեն պիտի ենթարկվեին Արամ Մանուկյանի գլխավորած Վանի նահանգապետությանը։

Շատախի գրավումից մեկ շաբաթ անց Դրոն արշավում է Մոկաց աշխարհ, ուր տեղի հայությունը կենտրոնանալով

---

39 Նույն տեղում։

մի քանի բնակավայրերում՝ օրհասական կռիվ էր մղում թուրք-քուրդ հրոսակախմբերի դեմ։

Քանի որ Մոկսի հայ բնակչության ինքնապաշտպանական մարտերը ընթանում էին մի քանի հանգույցներում, ապա այդ պատճառով Դրոն մասնատելով իր զորախմբի ուժերը՝ հարձակումը զարգացնում է երեք հիմնական ուղղություններով։ Համաձայն նրա հրամանի Դալի Ղազարի, Յապոնի, Տիգրանի հարյուրյակներն ու Մարտիրոսի վաշտը Նժդեհի հրամանատարությամբ արշավում են Մոկս, Մակվեցի Մեսրոպի վաշտը՝ Սոքան, իսկ ինքը զորամասերի մնացած ջոկատների գլուխն անցած շարժվում Սպակերտ։ Հունիսի սկզբներին հաղթահարելով թշնամու դիմադրությունը, Նժդեհը գրավում է Մոկսը, Մեսրոպը՝ դ;վարին կռիվներից հետո Սոքանը, իսկ Դրոն ջախջախելով Սպակերտը պաշարող թուրքական զորաջոկատներին՝ ազատագրում է գյուղը և այնտեղ համախմբված ավելի քան չորս հազար հայերի տեղափոխում Մոկս։ Հաջողությամբ էին զարգանում նաև կամավորական մյուս խմբերի հարձակումները։ Քեռին և Համազասպը միացյալ ուժերով գրավում են Ոստանը։

Հայ կամավորական զինավաշտերն ազատագրելով Վանա լճի հարավային շրջանները, մոտենում են ընդհուպ Ռշտունյաց գավառի Սորբ և Դատվան փոքրիկ քաղաքին, որոնց գրավումով փաստորեն բացվելու էին Տարոն, Սասուն և Բաղեշ տանող ուղիները։ Հայկական բոլոր չորս կամավորական խմբերը այսուհետև մտնելու էին գեներալ Տրուխինի գլխավորած ռազմական խմբավորման կազմում։

Դրոն Մոկսի պաշտպանությունը հանձնարարելով Նժդեհին՝ իր զորամասի հիմնական ուժերով տեղափոխում է Ախթամար, ապա՝ Սուրբ Հակոբ։

Տարոն տանող ճանապարհի առաջին խոշընդոտը Սորբն էր։ Թուրք հրամանատարությունը հասցրել էր զգալի ուժեր կենտրոնացնել Սորբում և այն վերածել պաշտպանության ամուր հենակետի։ Սորբի մոտակայքում գտնվող բարձունքները հակառակորդի կողմից նույնպես ամրացվել էին։

Հունիսի վերջերին հայկական չորս մարտախմբերը միահամուռ ուժերով գրոհում են Սորբը։

Առաջին օրվա մարտերը չափազանց ծանր էին ընթանում։ Բլրալանջերին ամրացված թուրք զինվորները թնդանոթներից և գնդացիրներից տեղացող կրակով խափանում էին հայ զինվորների գրոհները։ Երեկոյան մարտադաշտ հասցրած թնդանոթներով մշակելով հակառակորդի դիրքերը՝ հայ զինվորները նետվում են գրոհի։ Դրոյի զորախումբն առաջին կամավորականի Արտաշես Սուշյանի գլխավորած վաշտի համագործակցությամբ ճեղքում է բարձունքներում ամրացած թշնամու դիմադրությունը և հասնում լճափ, որի ափերի երկայնքով հաջողությամբ հարձակվում էին Անդրանիկի զորախմբի մյուս վաշտերը։

Հակառակորդի դիմադրությունը խորտակում են նաև Համազասպի և Քեռու զինվորները։ Արդեն հաջորդ օրը կորելով հակառակորդի համառ պաշտպանությունը՝ հայ կամավորները գրավում են Սորբը։ Իսկ թշնամու ջախջախված զորքերի մնացորդները նահանջում են Դատվան։

Ռուսական չորրորդ զորախմբի հրամանատար գեներալ Տրուխինը հիացած հայ կամավորների մարտական գործողություններով՝ նշում է. «... Անդրանիկի և Դրոյի խումբերուն յաղթական յարձակումը հակառակորդի ձախ թեւին դէմ։ Համազասպի խումբին յարձակողականը խիստ դժուարին պայմաններու մէջ, առանց հրետանիի աջակցութեան, ձիւնապատ լեռներով։ Թշնամիի յամառ հետապնդումը այդ խումբին կողմէ...»[40]։

Հայ զինավաշտերին հրաշալի հնարավորություն է ընձեռվում կրնկակոխ հետապնդել նահանջող հակառակորդին և արագորեն գրավել նաև Դատվանը։ Եթե մարտական գործողություններն արագ ընթացք ունենային, ապա Տարոն մըտնելու խնդիրը զգալիորեն կհեշտանար։ Սորբի կռվում պարտություն կրած թուրք համանատարությունը դժվար թե կարողանար հասցնել ամուր պաշտպանություն կազմակերպել։ Սակայն ճակատի հրամանատար գեներալ Տրուխինը ոչ մի փաստարկներով չարդարացված պատճառաբանությամբ և կարծես կանխամտածված դիտավորությամբ խոչընդոտում է հայ զինվորների հարձակումը և դրանով իսկ թուրքերին

---

[40] «Հայրենիք» ամս., 1927 թ., սեպտեմբեր, էջ 77։

հնարավորություն շնորհում ամրապնդվելու Դատվանում։ Եվ միայն հուլիսի 4-ին, Սորբի գրավումից երեք օր անց հայ կամավորները հրաման են ստանում դրոհելու Դատվանը։ Ռուսական հրամանատարության բարեհաճությամբ շահած ժամանակահատվածում թուրքերին հաջողվում է համալրել զորքերի մարտաշարքերը և Դատվանը վերածել անմատչելի ամրոցի։ Այս անգամ արդեն հայ կամավորական մարտախմբերի հրամանատարներին էին ենթարկվում նաև ռուսական մի քանի զորավաշտեր։

Դատվանի մատույցներում ընթացող մարտերի առաջին օրը, չնայած գործադրած մեծագույն ջանքերին, հայ զինվորներին չի հաջողվում թուրքերին դուրս շպրտել իրենց անմատչելի դիրքերից։ Հաջորդ օրն առավոտյան գեներալ Տրուխինը վերջապես մարտադաշտ է դուրս բերում հեծելազորային գունդն ու հրանոթների մարտկոցը։ Մի քանի ժամ շարունակ ընթանում էր միայն հրանոթային մենամարտը, իսկ երեկոյան կողմ. «Ամբողջ ճակատը յարձակման էր դիմել։

Դրօն առաջանում էր կենտրոնով ու գրավում թշնամու կարեւոր դիրքերը, որոնք իշխում էին թշնամու Դատւանի դիրքերի վրայ։ Իսկ Անդրանիկի զորամասը Դրօյի ձիաւորներով վերցրեց Դատւանի դիրքերը»[41]։

Թուրքերի հզոր կրակակետերը հաղթահարելով, հարձակումը հաջողությամբ էին զարգացնում Համաղասպն ու Քեռին։ Անձնուրաց էին գործում Դրոյի վաշտերն ու հարյուրյակների հրամանատարներ Մարտիրոսը, Մեծ Ղազարը, Կարբեցի Օնեն, Զեմլյակը, Յապոնը, Դալի Ղազարն ու մյուսները։ Այլևս անկարող լինելով դիմադրել տարբեր ուղղություններից տեղացող ուժգին հարվածներին՝ հակառակորդը ստիպված տեղի է տալիս և սկսում կանոնավոր մարտաշարքերով նահանջել։ Թուրքերի կանոնավոր նահանջը փախուստի վերածելու նպատակով հայ հեծելախմբերը Դաշնակցական խեշոյի գլխավորությամբ սրընթաց գրոհ են ձեռնարկում և քշում նրանց մինչև Գրգուռ։ Սակայն թուրքերն այս անգամ մարտադաշտ են դուրս բերում Գրգուռի մոտակայքում թաքնված ուժերն ու գնդացրային կրակահերթերով դիմավորում հայ

---

41 «Հայրենիք» ամս., 1937 թ., հունվար, էջ 76։

հեծելազորայիններին։ Թշնամու գնդացիրների համազարկերից զոհվում է Հայոց Ազատամարտի արժանավոր զինվոր Գաշնակցական Խեչոն։ Ջերկնչելով կարկտի ուժգնությամբ տեղացող գնդակներից՝ Ջեմլյակն իր ձիավոր հարյուրյակով անկասելի հարվածով հետ է շպրտում թուրքերի հակագրոհը և մարտադաշտից դուրս բերում զոհված հերոսի դիակը։ Մարտը չդադարող ուժգնությամբ շարունակվում է նաև գիշերը։ Գիշերային խավարն անգամ անզոր էր արգելակելու Հայ զինվորների ճակատամարտը հաղթական վախճանի հասցնելու բուռն ձգտումները։ Դրոն ճեղքելով այդ կռիվներում իրենց լավագույն կողմերով դրսևորած թուրքերի զորաշղթան՝ գրավում է քաղաքի նավահանգիստը, իսկ Անդրանիկի զինվորները ներխուժում են քաղաք։

Երկօրյա ճակատամարտը ավարտվում է թուրքական զորքերի դաժան պարտությամբ։

Գեներալ Տուխինը բարձր գնահատելով հայ կամավորների մարտական գործողությունները՝ հեռագրում է հրամանատարությանը. «Երկօրյա ճակատամարտի ատեն իր ղեկավարությանը յանձնված ջոկատի զորքերը դուրս քշեցին թշնամին իր դիրքերէն։ Յաղթությունը գլխաւորաբար արդիւնքը պէտք է նկատել երկու երդով հայ կամաւորներէ բաղկացած մեր հետեւակազօրքի կրակին...»[42]։

Սորբիի և Դատվանի հաղթական մարտերից հետո փոխվում է նաև ռուսական զորքերի տրամադրությունը։ Տրուխինին փոխարինած գեներալ Նազարբեկյանը մարտադաշտ դուրս բերելով իր հրամանատարությամբ գործող զորքերի հիմնական խմբավորումը՝ պարտության է մատնում իրեն դիմակայող թուրքական զորագնդերին և մտնում Տարոն աշխարհի Ախլաթ գավառը։

Դրոյի զորավաշտերը հասնում են մինև Գրգուռի ստորոտում գտնվող Ջրխոր գյուղը, իսկ ապա մեծանուն հայդուկապետ Աղբյուր Սերոբի ծննդավայրը՝ Սողորդ։ Միաժամանակ Գրգուռ և Նեմրութ լեռների ուղղությամբ է առաջանում Անդրանիկի զորամասը, իսկ Բաղեշի՝ Քեռու ու Համազասպի մարտախմբերը։

---

[42] Նույն տեղում, 1927 թ., սեպտեմբեր, էջ 77։

Գավրե-Շամեի կռվից մինչև Բերկրի, Վան և ապա Շատախի, Մոկսի, Սորբի ու Դատվանի ազատագրման մարտերում փայլուն քննություն բռնեց հայ կամավորական գնդերի ամենաերիտասարդ հրամանատարը՝ 30-ամյա Դրոն։ Անցած բոլոր մարտերում նրա ղեկավարած գունդը մշտապես կրակների կիզակետում էր և մեծամասամբ ամենաառաջավոր գծում։ Դրոն քաջությամբ և հիրավի իր ռազմագիտական տաղանդով իսկական ռազմիկի կենդանի օրինակ էր։

Բնութագրելով Դրոյի մարտական շնորհները՝ բժիշկ Եր. Աթանեսյանը գրում է. «Ականատես եմ եղել Սորբից մինչև Դատուան ու Գրգուռ կամավորական չորս գունդերի մղած ճակատամարտերին։ Ես տեսայ և խոր յուզումով տեսայ, թէ ի՞նչպէս Սորբի յաղթանակից յետոյ Անդրանիկը բաղեղի պէս փաթաթեց Դրոյին, համբուրեց նրան ու իր վաղեմի ընկերոջ, աննման հայդուկին՝ Քեռին ուղղելով խոսքը, ասաց.

— Ասլան է Տերոն, Ասլան։

Անդրանիկը Տերո էր արտասանում Դրոյի անունը։ Բայց այդ հնչունի մէջ մէկտեղված էին հիացում, խանդաղատանք, բերկրանք և հպարտանք»[43]։

Թվում էր, թե այլևս ոչ մի ուժ չէր կարող խոչընդոտել ռուսական զորագնդերի և հայ կամավորների հաղթական պոռթկումը։ Ջենքերի համազարկերի արձագանքներն արդեն հասնում էին Տարոնի և Սասունի լեռների ամրություններին և իրենց բազուկների ուժին ապավինած տասնյակ հազարավոր հայերի, որոնք ամեն օր և ամեն ժամ սպասում էին «ազատարար» ռուսական զորքերի և հայ կամավորական խմբերի օգնությանը։ Դրոն ճակատի հրամանատարությունից և հայ կամավորական գնդերի հրամանատարներից վճռականորեն պահանջում էր առանց ժամանակ կորցնելու, թեկուզև միայն հայ զինագնդերի միացյալ ուժերով արշավել Տարոն ու Սասուն, ուր ժողովուրդը օգնության սպասումներով դեռևս համառորեն դիմադրում էր թշնամուն։

Սիմոն Վրացյանը, որն այդ օրերին Նիկոլ Աղբալյանի ընկերակցությամբ որպես Ազգային Բյուրոյի ներկայացուցիչ

---

[43] «Ալիք» բաց., 1956 թ, մայիս 4, էջ 18։

դանվում էր ռազմաճակատում, անդրադառնալով Մուշ և Սասուն արշավելու Դրոյի ներկայացրած համարձակ և տվյալ պարագայում ամենաանհրաժեշտ առաջարկությանը՝ գրում է. «Դրոն համոզված էր, որ կամաւորները յաջողութեամբ կը հասնեն Տարօն եւ կ՝ազատեն այստեղի հայութիւնը։ .... Ծրագիրը յանդուգն էր։ Անյաջողութեան դէպքում կարող էին զոհուել կամաւորները, բայց յաջողութեան պարագային կը փրկուէր Տարօնի հայութիւնը, որ դեռ կանգուն էր եւ յուսահատօրեն պաշտպանւում էր թշնամու դէմ։ Մեծ նպատակը կ՝արդարացնէր ամէն զոհողութիւն»[44]։

Դրոյին առավելապես պաշտպանել է կամավորական 4-րդ գնդի հրամանատար Քեռին։ Դժբախտաբար այս կարևորագույն խնդիրը վճռելիս Հայոց Ազգային Բյուրոյի ներկայացուցիչների (Ն. Աղբալյանը և Ս. Վրացյանը ռազմաճակատ էին եկել դեպի Մուշ և Սասուն արշավանքը արագացնելու առաքելությամբ — Հ. Գ.) ու գնդերի հրամանատարների միջև առաջացած տարաձայնությունների հետևանքով չկայացվեց միասնական որոշում և ռուսական զորքերի կանխամտածված նահանջի հետևանքով հայ կամավորները ընդմիշտ զրկվեցին Սասունի լեռներում ապաստանած հայությանը օգնության հասնելու հնարավորությունից։ Ռուսական բարձրաստիճան հրամանատարությունը զորքերի զանգվածային նահանջի անհրաժեշտությունը հիմնավորում էր այն պարզունակ, մտացածին փաստարկումներով, թե իբր Մանազկերտի շրջանում հայտնվել են թուրքական մեծաքանակ զորամիավորումներ, որոնց դեմ առճակատելը հավասարազոր էր կործանման։

Մանազկերտի և Փրխուս գյուղի ուղղություններում թուրքական զորքերի կողմից ձեռք բերված ոչ այնքան նշանակալի հաջողությունները ռուսական հրամանատարությանը կարծես առիթ ընձեռեցին թողնել գրաված տարածքները և բռնել նահանջի ուղին։ Իրենց նահանջը առավելապես արդարացնելու դիտավորությամբ ռուս հրամանատարները նրբորեն տարածել էին հակառակորդի «մեծաքանակ» ուժերի ողորմածությանը հանձնվելու լուրերը։

---

[44] Ս. Վրացեան, «Կեանքի ուղիներով», հ. գ. Պէյրութ, 1965 թ., էջ 172։

Զորքերի նահանջի ծրագիրը մշակելու նպատակով ճակատի համանատար գեներալ Նազարբեկյանը զորամասերի հրամանատարներին հրավիրում է խորհրդակցության և հրամայում թողնել գրաված տարածքները։ Խորհրդակցությանը ներկա է գտնվել նաև Դրոն։

Պատմում է 2-րդ կամավորականի հեծելախմբի հրամանատար Յապոնը. «Երբ ժողովից վերադարձավ, կանչեց ինձ ու ասաց, որ դրությունը բավական լուրջ է, քանի որ տաճիկները գրաւել են Արճեշը ու կտրել նահանջի գիծը։

Ռուսները կարող էին անձնատուր լինել, բայց մենք անձնատուր լինելու մասին մտածել իսկ չէինք կարող։ Հէնց այդտեղ էլ Դրոյի հետ որոշեցինք, որ ռուսական բանակի անձնատուր լինելու դէպքում՝ նրանից բաժանուենք ու թշնամու շղթան ճեղքելով՝ Ալադաղով անցնենք Դիադին։ Այդտեղի բոլոր ճար ու ճամբաներին լաւ ծանօթ էինք»[45]։

Դրոյի մտավախությունը իզուր էր, ռուսական զորքերի նպատակը Հայաստանի հայերից դատարկելն էր և ոչ թե անձնատուր լինելը։

Հուլիսի կեսերին երկու ուղղություններով սկսվեց ռուսական զորքերի նահանջը։ Նահանջի առաջին թևը ձգվում էր Վանա լճի հարավային ափով դեպի Սորբ, Ոստան, Վան և ապա Արճակ-Սարայի գծով դեպի Իրան։ Մյուս թևը նահանջելու էր Ախլաթ, Արճեշ, Բերկրի և Աբաղայի դաշտի միջով դեպի Կովկաս։ Դրոյի գունդը Անդրանիկի զորամասի հետ պիտի նահանջեր երկրորդ ուղղությունով։

Հուլիսի 15-ին սկսվում է ռուսական զորքերի զանգվածային նահանջը։ Դրոյի գունդը նահանջելիս անցնում է քանդված ու ավերակների վերածված Ախլաթով և մոտենում Արճեշին, ուր հարյուրավոր զինված քրդեր պաշարել էին զենքի դիմած տեղի հայ բնակչությանը։ Արագորեն ոչնչացնելով քուրդ հրոսակներին՝ Դրոն իր գնդի պաշտպանությամբ Արճեշի հայությանը հասցնում է Վան։

Նահանջի հրամանը Վանում սարսափելի իրավիճակ էր ստեղծել։ Վարդգես Ահարոնյանը, որն այդ օրերին գտնվում էր Վանում, պատմում է հետևյալը.

---

[45] «Հայրենիք» ամս., 1941 թ., մայիս, էջ 175։

«Վանից քաշուելուն վճռական կերպով դեմ էր Արամը, որ իր տեսակէտը պարզեց մօտաւորապէս հետեւեալ բառերով.

«Մենք մի ամբողջ ամիս դիմադրեցինք թուրք բանակին եւ թուրք ու քուրդ զինուած խուժանին, ունենալով միայն հազիվ հազար կտոր զէնք, որից 400-ը ատրճանակներ էին, մնացածի մի մասը որսորդական հրացաններ եւ միայն հինգ հարիւրի չափ կանոնաւոր կռուի հրացաններ, շատ սահմանափակ քանակութեամբ ռազմամթերք։ Հիմա Վանի պաշտպանութեան համար մենք կարող ենք ունենալ մեր կամաւորական չորս գնդերը...

Վանի եւ Մոկսի ու Շատախի երիտասարդութիւնից կարելի է զինել մէկ կամ երկու հազար հոգի ևս։

... Մինչեւ ռուսների վերադարձը մենք կարող ենք պաշտպանել այս հայութիւնը, մինչ գաղթը կարող է այս ժողովրդի մէջքը կոտրել»[46]։

Արամի տեսակետը պաշտպանում էին առանց բացառութեան կամավորական գնդերի բոլոր հրամանատարներն և Ազգային Բյուրոյի ներկայացուցիչները։

«Ն. Աղբալեանը իր սովորական պատկերալից ու կտրուկ ոճով ձեւակերպեց իր ասելիքը. «Ռուսները գնո՞ւմ են՝ թող գնան, մենք էստեղ ենք. ռուսները կը գան, մենք էլի էստեղ ենք»[47]։

Այո՛, հայերը լի էին վճռականությամբ մինչև վերջ պայքարելու, սակայն ռուսական հրամանատարությունը ուներ իր հաստատուն և ոչ մի ուժով չբեկանվող դատավճիռը։

Ընդամենը 70 օրվա կարճատև կենսագրություն ունեցավ Վանի փոքրիկ հանրապետությունը։ Արամի հմուտ ղեկավարությամբ կառավարվող Վասպուրականի քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքում արդեն ակնառու էին ձեռք բերած առաջին լուրջ նվաճումները։

Վանի հանրապետությունը այն իրական վարչաքաղաքական կառույցն էր, որի հիմքի վրա Հայաստանի պատմական տարածքում կարող էր կյանքի կոչվել Հայկական անկախ

---

[46] Վ. Անառոնեան, «Անդրանիկ», Բոսթըն, 1957 թ., էջ 31—32։

[47] Նույն տեղում։

պետականությունը։ Սակայն Հայկական պետականության հաստատումը ցարիզմի ծրագրերից դուրս էր։

Այժմ արդեն ամբողջ Վասպուրականը տեղահան եղած՝ բռնել էր գաղթի ուղին։

Նժդեհի և Մեսրոպի զինավաշտերի և իրենց մարտական ուժերի պաշտպանությամբ գաղթի ճամփան էին բռնել նաև Մոկսի և Շատախի հայությունը։

Եթե նախորդ կռիվների ընթացքում հայ կամավորները մշտապես գործում էին հարձակման սուր ծայրում, ապա նահանջի դեպքում վերջնամասում ապահովում էին մյուս զորամասերի և գաղթականության նահանջը։

Հայ գաղթականների հսկայական բազմությունը հուլիսի 23-ին հասնում է Բերկրի։ Նույն օրը նահանջողներին անընդհատ հետապնդող թուրքական զորքերն ու քրդական հրոսակախմբերն նույնպես հասնում են Բերկրի և գազանային մոլուցքով նետվում գաղթական բազմության վրա։ Ռուսական զորքերն ու Անդրանիկի զորագունդը բավականին առաջ էին անցել։ Համազասպի և Քեռու զորագնդերն՝ «Արարատյան» զորախմբի հրամանատարության անփույթ ղեկավարման հետևանքով կտրվելով գաղթականության հիմնական զանգվածից, անցել էին Պարսկաստան։

Ճակատագրական պահ էր, Բերկրին կարող էր վերածվել բազմահազարանոց գաղթականության գերեզմանոցի, եթե ամենավճռորոշ պահին թշնամու հետ օրհասական գոտեմարտի բռնված Վասպուրականի, Մոկսի և Շատախի մարտիկներին օգնության չհասներ Դրոյի զորագունդը։

Բերկրի-Կալիեի պաշտպանության կռիվները Դրոյի մարտական կենսագրության ամենանշանակալի էջերից են։

Հուլիսի 23-ին ամենաճակատագրական վայրկյանին հասնելով մարտադաշտ՝ Դրոն, որի զորագնդին միացել էին նաև Նժդեհի և Մեսրոպի վաշտերը, գաղթականության նահանջը ապահովելու նպատակով՝ հրամայում է Մարտիրոսի, Մեծ Դազարի, Յապոնի զորավաշտերին անհապաղ գրավել Բերկրի կիրճը և տեղանքին իշխող բարձունքները։

Հրամանը ճիշտ ժամանակին էր։ Թուրքական զորաբանակն աշխատում էր գրավել դեպի Աբաղայի դաշտը կիր-

ճերով անցնող միակ ուղին և շրջափակելով մի քանի տասնյակ հազարի հասանող գաղթականությանը՝ Բերկրին վերածել արյան ծովի։

Երկու օր շարունակ Վասպուրականի, Մոկսի և Շատաչի զինվորների համագործակցությամբ անպատմելի խիզախություններով տապալելով թուրքական կանոնավոր զորագնդերի և քրդական զինյալ խմբերի իրար հաջորդող գրոհները՝ Դրոն հնարավորություն է ընձեռում գաղթականության մեծ մասին անցնելու Բերկրի կիրճով և փրկվելու անխուսափելի կործանումից։

«Այդ նահանջի ընթացքում,— նշվում է ռազմաճակատից հաղորդվող ամփոփագրերում,— իր մարտական պաշտպանությամբ խումբը (Դրոյի 2-րդ կամավորական գունդը—Հ. Գ.) կարողացավ ապահովել Ալաշկերտի սարահարթում խմբված հսկայական քանակի հայ փախստականների տեղափոխությունը»[48]։

Դժբախտաբար Բերկրի-Կալեի մոտակայքում թուրքերի և քրդերի հարձակումներին զոհ են գնում մեծ քանակությամբ գաղթականներ։ Եթե մինչև Բերկրի կամավորական գնդերի փոխհամագործակցությունը խելացիորեն կազմակերպվեր, ապա հնարավոր էր ապահովել ողջ գաղթականության անկորուստ անցումը Երևանի նահանգ։

Մարտիրոսի և Յապոնի վկայությամբ Բերկրիում գաղթականների մի մասի անիմաստ կորստի ցավից հավասարակշռությունը կորցրած Դրոն խստորեն հանդիմանում է «Արարատյան» զորախմբի հրամանատար Վարդանին, որն այդ օրերին չգտնվելով հրամանատարական պատշաճ բարձունքում՝ կորցրել էր հայ կամավորական զորագնդերի գործողությունները փոխհամաձայնեցնելու ղեկն ու պարտականությունը[49]։

Հուլիսի վերջին Դրոն գաղթականության հետ միասին հասնում է Իգդիր։ Արդեն պատմության գիրկն անցած բա-

---

[48] Հ. Հ. Կ. Ա. թղթ. ծր. 503

[49] «Հայրենիք» ամս., 1937 թ. հունվար, էջ 77 և 1941 թ. մայիս, էջ 175։

զում ճակատամարտերից ու դժվարին ապրումներից հետո՝ նա բնավ տրամադրություն չի ունեցել գոնե փոքր ինչ շունչ առնելու հայրենի միջավայրում։ Դրոյի գլխավոր մտահոգությունը թշնամու ճիրաններում դեռևս մաքառող Տարոնն ու Սասունն էին։ Եվ միայն շաբաթներ անց նրա համառ պահանջներից հետո բարձրաստիճան հրամանատարությունը վերջապես բարեհաճում է համաձայնվել, որ Դրոն հայ կամավորական զինավաշտերից կազմած ուժեղացված զորամասով արշավի Տարոն և Սասուն։

Ռուսական զորաբանակի հրամանատարության որոշումից ոգևշնչված՝ Դրոն մեծ եռանդով պատասխանում է աշավանքի, բայց դժբախտաբար արդեն ուշ էր։ Սասունից ռազմակայան հասած Ռուբեն Տեր Մինասյանն ու Վահան Փափազյանը (Կոմս) գուժում են Տարոնի ու Սասունի հայության բնաջնջման իրողությունը։ Սասունի լեռներում պատսպարված ժողովրդի կողմից օգնության հայցող՝ օրեր առաջ Իգդիր հասած մշեցի Նազարեթ վարժապետը՝ ցնցող լուրի ներգործությունից շանթահար, ասում է. «Ա՜խ, ինչպե՜ս ինծի մտիկ չըրին,— կըսէր այն սրտաշարժ հառաչանքով մը,— եթէ կամաւորական մէկ խումբ ղրկելու ըլլային, այդ շրջանի բոլոր ժողովուրդը կազատուէր, որովհետև, արդէն թիւրք իշխանութիւնը շատ աննշան թիւով զօրք ունէր այնտեղ, և անոնք ալ «հայ ֆիդայի» անունէն սարսափահար պիտի փախչէին։

Գլուխը կախեց կրծքին վրայ. քանի մը րոպէ լուռ մնալէ յետոյ ըսաւ. «Վահան Փափազեանը (Կոմս) իր վերջին նամակով Սասունէն կը գրէր։ Ամէն առաւօտ, երբ արշալոյսը կը շառագունէր Սասունի լեռնակատարէն, աչքներիս այն կողմ յառած օգնութեան կսպասենք։ Ո՞ւր է Անդրանիկը, ո՞ւր է Արամը...»[50]։

Հայրենակիցների կործանման ցավով ու վրեժխնդրությամբ բռնկված Դրոն Զեմլյակի, Յապոնի, Խոսրովի հեծելախմբերի և փոխգնդապետ Կորոլկովի զորամասին գլուխ անցած ներխուժում է Դոմպարք, Զիլանի և Ալադաղի շրջաններն և մոտ մեկ ամիս տևողությամբ ընթացող կռիվներում, առանց խնայելու, կոտորում այդ շրջանների զինված թուրք-քուրդ խըմ-

---

[50] «Ասպարեզ», թիւ 468, էջ 5։

բերին, որոնք ամենավայրագ ձևով էին հաշվեհարդար տեսել հայերի հետ։ Նրանցից բռնագրված երեք տասնյակ հազարի հասնող ոչխարների հոտը քշում էին Երևանի նահանգ և հանձնում արդեն սովի ճանկերում տառապող գաղթականությանը։

Ռուսական զորքերի նահանջը ոչ միայն թուրք իշխանություններին հնարավորություն շնորհեց ջարդերի ալիքը սփռել Տարոնի, Սասունի և հայկական մյուս գավառներում, այլև հուսախաբության և դասալքության տրամադրություններ սերմանեց հայ մարտագնդերի շարքերում։ Բազմաթիվ հայ զինվորներ իրենց հարազատներին որոնելու պատրվակով լքում էին մարտաշարքերն և մեկնում իրենց ծննդավայրերը։

* * *

Հայ ժողովրդի գոյապայքարի բախտորոշ ժամանակահատվածում գերմարդկային ջանքեր էին գործադրում Հայոց Ազգային Բյուրոն, որի ինչպես նաև կամավորական գնդերի հրամանատարության նպատակասլաց աշխատանքի շնորհիվ ոչ միայն հնարավոր եղավ կայունացնել մարտախմբերում սկիզբ առած դասալքությունն ու անկարգապահությունը, այլև Երևանի մեջ կազմել երկու նոր մարտական գնդեր։

Դրոն Երևանում համալրելով նախորդ մարտերում զգալի կորուստներ կրած 2-րդ կամավորական գունդը՝ նույն տարվա նոյեմբերին իր զորավաշտերի գլուխն անցած ուղևորվում է Իգդիր։

Նոյեմբերի վերջերին ռուսական զորքերը վերսկսելով հարձակումը՝ հաստատվում են Արճեշ-Պոնտոս բնագծերում։ Թուրքական հրամանատարությունը՝ մի շարք կռիվներում կորցնելով մեծ քանակությամբ մարտական ուժեր և տեխնիկա՝ ավելի է ակտիվացնում քրդական հրոսակախմբերի գործողությունները։ Քուրդ հեծելախմբերի անակնկալ և պարբերաբար շարունակվող հարձակումները վտանգավոր կացություն են ստեղծում ռազմաճակատի թիկունքում։ Դեկտեմբերի վերջերին քրդերի գործած ավերածությունների հետևանքով խափանվում են ռուսական տարբեր զորամիավորումների միջև հաղորդակցության ուղիները։ Ռազմաճակատի թիկունքը մաքրելու և հաղորդակցության ուղիները վե-

բականգնելու նպատակով ռուսական բանակի հրամանատարության կարգադրությամբ հայկական 1-ին և 2-րդ զորագնդերից կազմվում է երկու արշավախումբ։

Դրոյի զինագունդը, որի կազմում էին նաև կոզակական մեկ հետևակ և հեծյալ վաշտեր, ջախջախելով Պոնտոսից մինչև Արճե ընկած շրջաններում գործող քրդական զինված խմբերին՝ հունվարի սկզբներին Աղի-Գյադուկ լեռնանցքի մոտակայքում միանում է Անդրանիկի զորամասին։ Ձմռան խստաշունչ պայմաններում հայկական 1-ին և 2-րդ զինագնդերը հրաշալիորեն կատարեցին մարտական առաջադրանքը։ Շնորհիվ հայ կամավորների անբասիր մարտական գործողությունների, վերականգնվեցին հաղորդակցության ուղիները ռուսական զորամասերի միջև և բավարար հնարավորություն ստեղծվեց հետագա ռազմական գործողությունների ծավալման համար։

1916 թ. սկզբներին Կովկասյան հրամանատարությունը ձեռնարկում է վճռական և խոշոր մարտական գործողություններ ռազմաճակատի մի շարք ուղղություններում։ Գլխավոր՝ Կարին, Մուշ և Բաղեշ ուղղություններում կենտրոնանում են հայ կամավորական գնդերը։

Դրոյի զորագունդը, որը հանդիսանում էր գեներալ Աբացևի զորամասի առաջապահ ջոկատը, գործելու էր Խնուս-Մուշ ուղղությամբ։ 1916 թ. ձմռանը իրականացվող ռազմական գործողությունները Արևմտահայաստանի ազատագրման ձգտումներով ռազմադաշտ մեկնող կամավորական գնդերի 3-րդ արշավանքն էր։

Ինչպես նախորդ երկու արշավանքներում, այս անգամ էլ Դրոյի հետ էին զինագնդի 1-ին և 2-րդ հեծյալ զորավաշտերի հրամանատարներ Զեմլյակն ու Յապոնը, 1-ին, 2-րդ, 3-րդ հետևակային վաշտերի հրամանատարներ Դալի Ղազարը, Բաշգառնեցի Մարտիրոսն ու Մեծ Ղազարը (Ղազար Քոչարյան)։

Հունվարի 6-ին 2-րդ գունդը Մանազկերտի մոտ գետանցում է Եփրատը և ուղղություն վերցնում Խնուս։ Մինչև Խնուս հասնելը, զորագունդը ռուսական զորամասերի համագործակցությամբ Ղարաքեորփի գյուղի մոտակայքում հաղ-

թահարում է թուրքերի դիմադրությունը և նույն ամսի 12-ին մտնում խնուս։

1916 թ. փետրվարի սկզբներին ռուսական զորքերի կողմից իրականացվող հարձակողական գործողությունները պսակվում են հաջողությամբ։

Արդեն նույն ամսի 5-ին գրավվում է Մուշը և ինչպես նախորդ բոլոր մարտերում՝ քաղաք մտնողներից առաջինը Դրոյի գլխավորած 2-րդ կամավորական գունդն էր։ Երկու օր անց Դրոն բարձրանում է Սասուն, ապա շարժվում սուրբ Աստաքելոց վանքը։

Վերջապես Դրոն Տարոնում էր ու Սասունում, այն ֆիդայիների հայրենիքում, որոնց մասին ժողովրդի մեջ տարածված առասպելանման պատմություններն ազատության պայքարին զինվորագրվելու ձգտումներ էին սերմանել նաև իր հոգում։ Բայց պատանեկության տարիներին նրա երազած հայոց ըմբոստ լեռնաշխարհի հերոսներն այլևս չկային։

Սոսկալի պատկեր էր տիրում հայոց հինավուրց հողում, Տարոնի ողջ բնակավայրերը թուրքերն ու քրդերը հասցրել էին քանդել ու վերածել մոխրակույտերի։ Այժմ նրա զորագնդի մարտիկներին մնում էր հավաքել լեռների ծերպերում, թաքստոցներում պատսպարված և հրաշքով փրկված հայերին։

Փետրվարի 24-ին Բաղեշի շրջանից դեպի Մշո դաշտ է շարժվում Անդրանիկի 1-ին կամավորական գունդը։ Հայկական Նորշեն գյուղում Անդրանիկը հանդիպում է Դրոյի հրամանով Մուշից Բաղեշ տանող ճանապարհը պաշտպանող Դալի Ղազարի զինավաշտին։ Վարդգես Ահարոնյանի, (այդ օրերին ծառայում էր Անդրանիկի մոտ — Հ. Գ.) վկայությամբ Անդրանիկին հիացրել է Դրոյի զինվորների կարգապահությունն ու մարտական կեցվածքը։ Դալի Ղազարի վաշտի զինվորների խրոխտ տեսքից զգացված Անդրանիկը. «... վրդովված նետեց մեր գնդի զինուորների երեսին.

— Դո՛ւք ալ զինուոր էք, ասոնք ալ...»[51]։

Մուշի գրավումից հետո 2-րդ կամավորական զորագնդի հրամանատարությունը ընդունում է գնդապետ Եգոր Տեր

---

[51] Վ. Ահարոնեան, «Անդրանիկ», Բոսթըն, 1956 թ., էջ 115։

Ալեքիքյանը, իսկ Դրոն հիվանդության պատճառով տեղափոխվում թիկունք։

Նրա բացակայության ժամանակ գունդը մասնակցում է Տարոնի և Սասունի շրջաններն թուրքերից և քրդերից մաքրելու կռիվներին, իսկ ապա տեղափոխվում Բաղեշի ճակատ։

Կլիմայական բարդ պայմաններում Բաղեշը գրավելու նպատակով ձեռնարկված մարտական գործողությունները ավարտվում են շափազանց բարեհաջող վերջաբանով։ Մարտի 3-ին թուրքական զորքերը լքում են Բաղեշը։ Այդ կռվում 2-րդ կամավորականը համագործակցելով գլխավոր տեղամասում հարձակվող Անդրանիկին՝ զգալի ավանդ է ներդնում Բաղեշի և նրա շրջակա բնակավայրերի ազատագրման գործում, իսկ Դալի Ղազարի գլխավորած 1-ին վաշտը քաղաք ներխուժող զինվորների առաջին շարքերում էր։

Բաղեշի գրավումից հետո Դրոյի գունդը դարձյալ վերադառնում է Մուշ։

Ապրիլի 3-ին զորամաս է վերադառնում արդեն ապաքինված Դրոն և վերստին ստանձնելով գնդի հրամանատարությունը՝ հաջորդ օրն իսկ իր զորավաշտերին առաջնորդում է մարտի։ Նա արդեն գիտեր, որ Կովկասյան ռազմաճակատի գլխավոր հրամանատար մեծ իշխան Նիկոլայ Նիկոլաևիչը որոշել էր ցրել հայ զինագնդերը։ 2-րդ կամավորականի վաշտապետերը Դրոյից տեղեկանալով այդ մասին՝ հրաժարվում են մասնակցել արդեն ընթացող ճակատամարտին, սակայն. «... Դրոն առաջարկեց այս անգամ էլ մասնակցել վերջին կռուին եւ պատուով մնաս բարեւ ասել»[52]։

- Եվ վերջին անգամ Արևմտահայաստանի հողում Դրոն իր կամավորներին առաջնորդում է գրոհի Կազմագեադուկ բնակավայրում կուտակված թուրքական ջոկատների վրա։ Կամավորների առաջին հարվածն անկասելի էր, թուրքական զորախումբը մեծ կորուստներով սկսում է նահանջել։ Սակայն, մարտադաշտ են հասնում թուրքական նոր գումարտակներ և նահանջող զինաջոկատների հետ հարձակվում հայ զինավաշտերի վրա։ Թշնամու արձակած գնդակներից վիրավորվում է 2-րդ վաշտի հրամանատար Բաշգառնեցի Մարտիրոսը,

---

[52] «Հայրենիք» ամս. 1934 թ., հունվար, էջ 82։

սպանվում է հայ զորագնդի կազմում գործող ռուսական վաշտի հրամանատար Իվանովը։ Ռուս զինվորները իրենց հրամանատարի սպանվելու տեսարանից հուսալքված՝ դիմում են փախուստի։ Մարտիրոսի վիրավորվելու պատճառով հրամանատարությունը կորցրած, 2-րդ վաշտի հայ զինվորները տեղի տալով թուրքերի գրոհներին՝ հետևում են ռուսների օրինակին։ Զարմանալի և նախադեպը չունեցող երևույթ էր։ Դրոյի զինվորներն առանց հրամանի երբեք չէին նահանջել. «Դրոն վրայ էր հասել։ Յետ նահանջող կամաւորները, տեսնելով իրենց սիրելի հրամանատարին, կանգ էին առել։

Դրոն խառնիճաղանջ զօրքին կարգի էր բերել, յարձակուել թշնամու վրայ, վերականգնել դրութիւնը, յետ վերցրել ռուսների թողած գնդացիները, կարգով նահանջել ու ամրացել էր նախկին դիրքերում՝ Զանգոկի բարձունքներում»[53]։

Ահա այս կռվից հետո Դրոն իր զինագնդի հրամանատարությունը հանձնում է գնդապետ Սամարձևին և իր մի խումբ մարտական զինակիցների հետ ուղևորվում Երևան։

1916 թ. ռուսական զորքերի կողմից Արևմտահայաստանի գրեթե ողջ տարածքը գրավելուց հետո, Կովկասի նոր փոխարքա Նիկոլայ Նիկոլաևիչի օրոք ցարիզմի քաղաքական բառապաշարից ընդմիշտ անհետացավ «Հայաստանի ինքնավարություն» հասկացությունը։ Ռուսական կայսրությունը հասել էր իր նպատակին. «Հայաստանն մնացել էր առանց հայերի» և դատարկված Հայաստանը, համաձայն նույն թվականին Անտանտայի տերությունների միջև կնքված գաղտնի համաձայնագրի, պիտի վերածվեր կոզակական բնակավայրերի։ Հայկական ինքնավար նահանգների փոխարեն ստեղծվելու էին Եփրատյան ու Տիգրիսյան կոզակություններ։ Լուծարքվեցին մինչ այդ գլխավորապես ռուսական զենքի հաղթանակներին ծառայած հայ կամավորական զինագնդերը, որոնք այժմ ռուս իշխանություններին այլևս պետք չէին։

Ցարիզմի քաղաքականությունից խորապես հիասթափված Դրոն թողնում է զինվորական ծառայությունը և տրվելով գառը վշտերին՝ թափառում Թիֆլիսում, Երևանում, Իգդիրում և այլ վայրերում։ Նա երբեք չհամաձայնվեց կրելու

---

53 Նույն տեղում։

իրեն բազմիցս առաջարկված ռուսական սպայի ուսադիրներն և մտնել բանակային ծառայության մեջ։

Շուտով Դրոն հայտնվում է կապալառուի պաշտոնով և ստանձնում Կաղզվան-Կողբ զինվորական ճանապարհի շինարարության վարձակալման իրավունքը։

Դրո մարդը զարմանալի առեղծվածային երևույթ էր։ Հազվագյուտ են դեպքերը, երբ նա որևէ գործ ձեռնարկեր և հաջողության չհասներ։ Իր համար բոլորովին այս նոր դերում դարձյալ դրսևորվում է նրա խորը կազմակերպչական ընդունակությունները։

Փետրվարյան հեղափոխությունից հետո իրավիճակը Կովկասի քաղաքական կյանքում և ռազմաճակատում կտրուկ կերպով փոխվում է։ Դրոն շտապում է Թիֆլիս և հայտնվում ծավալվող դեպքերի կիզակետում։

Ցարիզմի տապալման և արևմտյան ճակատում Գերմանական ու ավստրոհունգարական բանակների կողմից ռուսական զորքերի պարտությունների արձագանքները թափանցելով կովկասյան ռազմաճակատ՝ հայրենիք վերադառնալու ցանկությամբ համակված ռուս զինվորների շրջանում ավելի խորացրին արմատավորված դասալքումների տրամադրությունները։ Ռուսական զորաբանակներում նախկին մարտունակության և ռազմական կարգապահության փոխարեն արդեն նկատվում էին բարոյալքության ու ռազմաճակատը կազմալուծելու բացահայտ նշաններ։ Տվյալ ժամանակահատվածում դեպքերի նման կտրուկ շրջադարձը դժվարին կացություն էր ստեղծել նաև ռուսական հրամանատարության համար և ստեղծված ծանր մթնոլորտը անհրաժեշտաբար թելադրում էր դիմել վճռական միջոցների։ Ռազմաճակատի մերկացումը փաստորեն իրական հնարավորություն էր ընձեռում թուրքերին համալրելով բանակի մարտական կազմը՝ վերատին գավթելու ոչ միայն Արևմտահայաստանը, այլև Անդրկովկասը և օգտվելով ռուսական զորքերի բացակայությունից, առանց մեծ ջանքերի, իրականացնելու պանթուրքիզմի ծրագիրը, այն է՝ գրավել Բաքուն և դուրս գալ Հյուսիսային Կովկաս, ապա մինչև Բաշկիրիա, Թաթարիա ու միջին Ասիա։ Ռազմաճակատը կայունացնելու համար անհրաժեշտ էին միմիայն կարգապահ ռազմական միավորում-

ներ, իսկ այդպիսին կարող էին լինել հայկական մարտական ուժերը, որոնք շահագրգռված էին պաշտպանելու Արևմտահայաստանն ու Անդրկովկասը։

Կերենսկու ժամանակավոր կառավարությունը համոզված էր, որ ռուսական զորքերի նվաճած տարածքները թուրքական զորքերի հարձակումներից կարելի էր ապահովել միայն ազգային զորամասերի ուժերով։ Ելնելով վերոհիշյալ նախադրյալներից՝ ժամանակավոր կառավարության թույլտվությամբ Կովկասյան ռազմաճակատի հրամանատարությանը արտոնվեց կազմավորել ազգային զորամիավորումներ, որոնց թվում նաև հայկական երկու զորամասեր։ 1-ին՝ 6.000 թվակազմով բանակային կորպուսը նախատեսված էր կազմավորել ի հաշիվ արևմտյան ռազմաճակատում մարտնչող ավելի քան 250000 հայ զինվորների և հայկական կամավորական խմբերի։ 2-րդ զորամիավորումը՝ Անդրանիկի գլխավորությամբ բացառապես արևմտահայերից կազմված աշխարհազորային դիվիզիան էր 30000 թվակազմով։

Դժբախտաբար հոկտեմբերյան հեղաշրջումից հետո հայկական զորամիավորումների կազմավորման գործը կործանվեց։ Համաձայն Հայոց Ազգային խորհրդի և ժամանակավոր կառավարության միջև կայացած համաձայնության, Արևմտյան ռազմաճակատից Կովկաս ժամանող 50000 հայ զինվորները Ռուսաստանում բռնկված քաղաքացիական կռիվների, ճանապարհների շրջափակման պատճառներով չկարողացան տեղ հասնել։

Հայրենիք վերադարձող հայ զինվորների մեծ մասը քաղաքական կռիվների օրերին կարմիր բանակի հայազգի հրամանատարների կոչով համալրելով նրանց իսկ գլխավորած զորամասերը՝ Ռուսաստանի անծայրածիր տափաստաններում մարտնչում էին հանուն խորհրդային իշխանության հաղթանակի։ Իսկ նույն ժամանակամիջոցում Արարատյան աշխարհում խմբված հայության հիմնական զանգվածը օրհասական պայքար էր մղում իր գոյությունը պահպանելու համար։

Կարմիր հոկտեմբերի շնորհիվ տապալվեց նաև հայկական ազգային զորամիավորումներ ստեղծելու իրական հնարավորությունները։ Կովկասյան ռազմաճակատի հրամանա-

տար գեներալ Լեբեդինսկու համաձայնությամբ այդ ճգնաժամային օրերին հայ ժողովրդի գոյապայքարը առաջնորդող միակ փաստական ուժը՝ Հայոց Ազգային Խորհուրդը կարողացավ կազմել միայն մեկ 16000—18000-անոց բանակային կորպուսը։

Գեներալ Նազարբեկյանի գլխավորած ազգային զորամասի մեջ էին մտնում Աբելյանի 1-ին, Սիլիկյան 2-րդ և Անդրանիկի 3-րդ աշխարհազորային դիվիզիաները ու գնդապետ Ղորղանյանի գլխավորած հեծյալ բրիգադը։

Հայկական նորաստեղծ զորամիավորման միջուկն էին կազմում հայ կամավորական գնդերի և ինքնապաշտպանական մարտերի փորձառու զինվորները։ Հայոց Ազգային Խորհրդի և Կովկասյան ռազմաճակատի հրամանատարության փոխհամաձայնությամբ բանակային կորպուսի զինվորական կոմիսարի պաշտոնը վստահվեց Դրոյին։ Ցարական նահանգապետի ահաբեկիչը, հայ-թուրքական ընդհարումներում կոտայքի, Ագուլիսի, Նախիջևանի, Զանգեզուրի ինքնապաշտպանական մարտերի ամենաերիտասարդ խմբապետն և ապա կամավորական շարժման ընթացքում զորահրամանատարական փայլուն կարողություններ դրսևորած 33-ամյա Դրոն գեներալ Նազարբեկյանից հետո փաստորեն երկրորդ դեմքն էր հայկական նորաստեղծ զորամիավորումում։

1917 թ. դեկտեմբերին Կովկասյան ռազմաճակատ իրականում արդեն գոյություն չուներ։ Բոլշևիկների քարոզչությունը և խորհուրդների հռչակած հող և խաղաղություն կարգախոսները իրենց կախարդիչ զորությամբ բարոյալքելով ռուսական բանակը՝ հող նախապատրաստեցին ճակատի վերջնական քայքայման ու կազմալուծման համար։

«Տարերային ուժի,— գրում է Երևանի զինվորական խորհրդի գործադիր կոմիտեի անդամ Արշալույս Ազնավուրյանը,— հեղեղի պէս տեղի ունեցաւ այդ տեղատվությունը՝ ճակատից դէպի Ռուսաստան։

...Դէպի տուն շտապող ռուսական զօրամասերը իրենց ճամբին խորտակում էին ամեն ինչ։ Խորթ չէր նրանց հոգուն նաեւ թալանն ու կրակը։ Երեւանում խանութները կողոպտելու նպատակով հրդեհ առաջ բերին խանութների շրջանում,

որպէսզի քաղաքացիներին շփոթի մատնեն ու լաւապէս հասնին իրենց սև նպատակին»[54]։

Եվ այս ամենին ականատեսն էին ջարդերի սարսափները տեսած և ռազմաճակատի մերկացման հետևանքով դարձյալ մտալուտ կոտորածների սարսափով ապրող հայությունը։

Սև ծովից մինչև Պարսկաստան ձգվող հսկայածավալ ռազմաճակատը, ուր նախկինում կենտրոնացված էր ռուսական 300000-անոց զորամիավորումներ, այժմ պաշտպանելու էին Վանում, Խնուսում, Ալաշկերտում, Էրզրումում, Կարինում, Երզնկայում ու Բաբերդում տեղաբաշխված հայկական փոքրաքանակ գնդերը և թիկունքում դեռևս նոր-նոր ձևավորվող բանակային կորպուսը։

Թուրքերն օգտվելով հոկտեմբերի շնորհած պարգևից՝ մեծ եռանդով ձեռնամուխ եղան ոչ միայն իրենց զորամասերը վերախմբավորելու ու համալրելու, այլև օգտագործում էին բոլոր հնարավոր միջոցները խանգարելու ռազմաճակատը հայ մարտական ուժերով կայունացնելու Հայոց Ազգային խորհրդի ձեռնարկումները։

«Ինչ որ մութ ձեռք,— նշում էր այդ օրերին Հորիզոնը,— պատերազմի ու խռովության սերմեր է փորձում ցանել հայ ու թուրք ժողովուրդների մէջ...»[55]։

Իրականում ոչ մի մութ ձեռք գոյություն չուներ։ Ռուսական հեղափոխությունները թարմ լիցք էին հաղորդել Անդրկովկասում և հատկապես Արևելահայաստանի տարածքում բնակվող մահմեդականության ավազակային ու թալանչիական գործողություններին։ Թուրքական զինվորական հրամանատարության կողմից Կովկաս գործուղված սպաների ու գործակալների հրահրմամբ համաթուրանական գաղափարներով վարակված կովկասյան թուրքերը ռազմաճակատի թիկունքը խարխլելու և հայկական զորամիավորումների կազմավորումը խոչընդոտելու դիտավորությամբ՝ պարբերաբար հարձակումներ էին գործում հայոց գյուղերի ու հաղորդակցության կարևորագույն հանգույցների, մինչև անգամ ճակատ մեկնող հայ զինջոկատների վրա, ստեղծելով կատարյալ

---

[54] «Արամը», 1969 թ., էջ 93։

[55] «Հորիզոն», 1918 թ., մայիսի 19։

քառասային և անկառավարելի իրավիճակ։ Ռազմաճակատի թիկունքում գործելու համար Թուրք հրամանատարությունը ակտիվացնում է նաև քրդական հրոսակախմբերի գործողությունները։

«Օգտվելով,— նշում է «Հորիզոնը,— ժամանակավոր կառավարության թուլությունից եւ պրովակացիոն մութ ուժերի դրդումից, Սուրմալուից ու Հայոց Ձորից մինչև Սամախաթուն քրդական աւազակաբարոյ, մինչեւ առամները զինուած հրոսակախմբերը յարձակւում են խաղաղ բնակչության վրա, կողոպտում են, վիրաւորում ու սպանում։ Չեն քաշւում անգամ զինուորների ու պարենատար զօրամասերի վրայ էլ յարձակւելուց»[56]։

Նախադեպը չունեցող օրհասական ժամանակաշրջանում ժողովրդի ֆիզիկական գոյությունը հնարավոր էր ապահովել միմիայն ազգի կենսունակ, առողջ ուժերի համախմբման և թշնամու ոտնձգություններին անխորտակ հարվածներով պատասխանելու միջոցով։

Անդրադառնալով այդ օրերի իրադարձությանը՝ Դրոն վերհիշում է. «Մի կողմից մեր դրան առջեւ կանգնած էր դարաւոր թշնամին՝ Թուրքը իր բանակներով, միւս կողմից թաթարների հետ մեր ներքին կռիւները կլանում էին հայ ժողովրդի գրեթէ ամբողջ ուժը. սով էր մեր երկում և համաճարակի հիւանդութիւնները սպառնում էին զանազան շրջաններին։ Ռուս բանակը հեռանում էր խուճապահար եւ արտաքին օգնության ոչ մի յոյս էր մնում։

Ի՞նչ անել, ինչպէ՞ս փրկել ժողովրդի գոյությունը, ի՞նչ միջոցով դուրս գալ այս ծանր անելից։

Շուարումի, լքումի եւ յուսահատության այս խեղդող մթնոլորտի մէջ է որ հայ ժողովրդի մարտական մէծ կուսակցությունը՝ Հ. Յ. Դաշնակցությունը տուեց վճռական որոշումը եւ տէր կանգնեց հայության ճակատագրին։ Նա կռուից դուրս ուրիշ միջոց չգտաւ մեր ժողովուրդը փրկելու»[57]։

Դրությունն առանձնապես ծանր էր Երևանի նահանգում։

---

[56] Նույն տեղում, հուլիսի 8։

[57] «Հայաստանի հանրապետության 60-ամեակը, 1918—1978 թթ.», էջ 5։

Անհրաժեշտ էին կարող, ձեռներեց ու մեծ հնդինակությամբ օժտված մարդիկ՝ քառասային կացությունը շտկելու և թիկունքում ծավալվող աշխատանքները կարգավորելու համար։ Հայոց Ազգային խորհրդի որոշմամբ 1917 թ. դեկտեմբերին Երևան է գալիս Արամ Մանուկյանը և իրեն հատուկ մեծագույն եռանդով ձեռնամուխ լինում Արարատյան աշխարհի ծայրահեղ լարված ու խառնաշփոթ իրավիճակի կարգավորման խնդիրների լուծմամբ։ Արամը Երևանում ստեղծում է Ազգային խորհրդի իրավունքով մի մարմին՝ Հատուկ Կոմիտե, որի ձեռքում է կենտրոնանում ողջ նահանգի քաղաքական, տնտեսական և ռազմական իշխանությունը։

Հայ ժողովրդի համար ճակատագրական նշանակություն ունեցող ժամանակում Երևան է գալիս նաև հայկական զորքերի վինվորական կոմիսար Դրոն։

Երևանի նահանգում կացությունը ծայրագույնի էր հասցրել նաև այն հանգամանքը, որ մի քանի հարյուր հազարների հասնող գաղթականության զգալի մասը խմբվել էր Արարատյան նահանգում։ Անհրաժեշտ էր թուրք-քուրդ ավազակախմբերի անընդմեջ հարձակումներից պաշտպանել և կերակրել արդեն սովամահության գիրկն ընկած գաղթականությանը։

Այդ օրերին գաղթականների հոծ բազմության հետ էջմիածնի, Աշտարակի շրջաններն է հասնում Կարո Սասունին և ապա գալով Երևան՝ ներկայանում Հատուկ Կոմիտեի անդամներին։

«Հոն էր,—վերհիշում է Կարո Սասունին,— Արամը, իբրեւ լիազոր, հոն էր Դրոն, իբրեւ զինական ուժերու հրամանատար։ Կարճ էր իմ զեկուցումը։

— Տեղահան ժողովուրդը, բաց երկնքին տակ, զօրամասեր եւ ժողովրդական բանակ, առանց կայանի, ու ամէն օր կռիւ՝ շրջապատի թաթարներուն հետ։

Կարկուտ տեղաց իմ գլխուն, զեկուցումը երբ վերջացրի։ Սահակ Թորոսեան եւ քանի մը այլ ընկերներ, որոնք Ազգային խորհրդի անդամ էին, իմ վրայ յարձակեցան բուռն քննադատութեամբ.

— Այս ի՞նչ կողոպուտ ու թալան, այս ի՞նչ մարդասպա-

նութիւն է, մենք ընկերավարականներ ենք, այս արարքներուն վերջ պիտի տրուի։

Զարմացած կը նայէի Ազգային խորհուրդի անդամներուն զայրացած դէմքին։

— Բայց, ընկերնե՛ր, էջմիածնի եւ Աշտարակի շրջաններուն մէջ մեր զինուորներէն յիսունէ աւելի զոհեր խլած են թաթարները, իսկ Թալինի ապստամբները 19 սասունցիներ արիւնը թափած են անոր պարիսպներուն տակ։

Մտիկ ընողի դէմք չունէին իմ ունկնդիրները։ Ես ալ զայրացած էի։ Նայեցայ Արամին։

Արամ և Դրօն ոտքի ելան...

— Դուք հանդարտօրէն գացէք, եւ ձեր գործը շարունակեցէք։ Կարեւորութիւն մի տաք ըսածներուն։ Կացութիւնը չեն ըմբռներ։

Արամի և Դրօյի հաւաստիքները զիս հանդարտեցուցին»[58]։

Արամն ու Դրոն կացությունը ճիշտ էին ըմբռնել։ Հատկապես Դրոն, որն այդ օրերին նաև Երևանի նահանգի զինական ուժերի հրամանատարն էր, գերազանց էր ըմբռնել, որ Հայաստանի տարածքում թուրքերի զանգվածային զինված ելույթներն արմատախիլ անելու և ռազմաճակատի թիկունքը ամրապնդելու միակ երաշխիքը զենքն է ու մարտունակ զորամասերի առկայությունը։ Երևանում կանոնավոր զորամիավորումներ դեռևս գոյություն չունեին։ Իսկ այդպիսի զորամիավորումների կազմավորման համար անհրաժեշտ էր վերին հրամանատարության թույլտվությունը։

1918 թ. հունվարի 26-ին Հայոց Ազգային խորհուրդը Կովկասյան ռազմաճակատի գլխավոր շտաբին դիմում է հետևյալ խնդրանքով. «Բանակի կոմիսար Դրօյի զինվորական միավորումների կազմավորման համար խնդրում ենք հրամայել Սկեքսանդրապոլից պարտիզանական զորամաս տեղափոխել 10-րդ հեծեալ հարյուրեակը»[59]։

Կովկասյան ռազմաճակատի հրամանատարությունը մինչև իրեն յուրահատուկ դանդաղկոտությամբ կհասցներ պատրաս-

---

[58] «Արամը», 1969 թ., էջ 536—537։

[59] ՀԽՍՀ., ՊՊԿԱ. ֆ 121, ց 2, գ 119, թ 15։

տել հրամանների նախագծերը, Դրոն կարճ ժամանակահատվածում հասցնում է կազմավորել առանձին հատուկ նշանակության բրիգադը։ Նոր զորամիավորման միջուկն էր նրա մարտական զինակիցներ Բաշգառնեցի Մարտիրոսի և Խոսրով Եղիազարյանի հրամանատարությամբ գործող 2-րդ կամավորական գնդի նախկին զինվորներից բաղկացած երկու հարյուրյակները, ինչպես նաև գնդապետ Զալինյանի հեծյալ գունդը, պարուշիկ Փիրումյանի, գնդապետ Կորոլկովի զինջոկատները և գնդապետ Պերեկրեստովի գլխավորած պարտիզանական 3-րդ հետևակային գունդը։

Այդ ժամանակ Դրոյի գործունեության ոլորտը ընդգրկում էր ռազմաճակատում և թիկունքում ծավալվող մարտական գործողությունների կարևորագույն ու հրատապ լուծում պահանջող խնդիրները։ Նախ, որպես Երևանյան զորախմբի հրամանատար, Դրոն Երևանի նահանգում և Արևելահայաստանի մյուս շրջաններում պիտի իրականացներ թուրք զինված խմբերի զանգվածային ելույթների շտապ «խաղաղեցումը» և ապա որպես հայկական բանակային կորպուսի զինվորական կոմիսար նրա անմիջական պարտականությունների մեջ էին մտնում նոր զորամիավորումների կազմավորման և հայկական ողջ զինված ուժերի մարտական խնդիրների մշակման, ինչպես նաև ղեկավարման հետ կապված աշխատանքները։ Պարտականությունների բերումով նա հարկադրված լինում էր ոչ միայն ռազմաճակատում և կռիվների թատերաբեմի վերածված շրջաններում, այլև Թիֆլիսում, ուր Հայոց Ազգային Խորհուրդն ու հայկական բանակային կորպուսի հրամանատարությունն այդ օրերին քննարկում էին ողջ ռազմաճակատին վերաբերվող խնդիրները։ Որպես օրենք, ռազմաճակատի հետ կապված ցանկացած հարցի քննարկման ժամանակ Դրոն իր դատողությունները շարադրում էր առանց երկմտելու, ռազմական իրավիճակը խորությամբ ըմբռնող իրատես ռազմագետի տրամաբանությամբ ու համարձակությամբ։

Ինչպես արդեն նշվել է, 1917 թ. դեկտեմբերին կովկասյան ռազմաճակատ փաստորեն գոյություն չուներ։ Հաջորդ տարվա փետրվարի 9-ին Կարինի զորախմբավորման հրամանատար գեներալ Օդոշելիձեն կովկասյան ռազմաճակատի

գլխավոր հրամանատարությանը ուղղված հեռագրում նշում է. «Վեհիբ փաշան բոլորովին որոշակի յայտարարեց, որ պատերազմի իրաւունքով մեր գրաւած թուրքական վայրերում մուտքման բնակչութիւնը պահպանելու նպատակով ինքը առաջ կը շարժուի մինչեւ ռուս զօրքերի հանդիպելը, որպիսի զօրքեր նա չի համարում հայկական զօրամասերը։ Այս նկատմամբ խնդրում եմ շուտափույթ կարգադրէք անյապաղ էրզրում (Կարին) ուղարկել ռուսական կորպուսի գէթ մի քանի բատալիոններ, իբրեւ յառաջապահ զօրքեր, որը թերեւ թուրքերին հարկադրէ էրզրումի վրայ չշարժուելու։ Առանց այս միջոցի, այսինքն՝ եթէ էրզրումը գրաւուած մնաց բացառապէս հայկական զօրամասերով՝ թուրքերն անխուսափելիորեն կը գրաւեն էրզրումը»[60]։

Իզուր էր գեներալի պահանջը, կովկասյան ճակատում այլևս ռուսական ոչ մի ռազմական ուժ գոյություն չուներ և այդ իրողությանը քաջատեղյակ, թուրք հրամանատարությունը աշխատում էր դիվանագիտական փակուղիների առաջ կանգնեցնել կովկասյան հրամանատարությանը՝ արդարացնելու թուրքական զորքերի սպասվելիք հարձակումը։ Եվ դժվար չէր հասկանալ, որ թուրքերը օգտվելով ռազմաճակատի մերկացումից, կխախտեին 1917 թ. դեկտեմբերին Երզնկայում ռուս հրամանատարության հետ կնքված զինադադարը և շատ շուտով կդիմեին ակտիվ մարտական գործողությունների։

Բաբերդից Երզնկա և մինչև Բաղեշ ու Վան ձգվող հսկայածավալ ռազմաճակատում հայ փոքրաթիվ նորաստեղծ գնդերին վիճակված էր դիմագրավելու թեև մի շարք ճակատամարտերում պարտված, բայց դեռևս զգալի հզորությամբ օժտված և հայ զորագնդերից անհամեմատ բազմաքանակ թուրքական զորամիավորումներին։ Հարց է ծագում, կարո՞ղ էին արդյոք հայոց փոքրաքանակ ուժերը պաշտպանել մի քանի հարյուր կիլոմետրերի հասնող ռազմաճակատը։ Ահա այն կարևորագույն հարցը, որն այդ օրերին Ավ. Ահարոնյանի նախագահությամբ քննարկվում էր Հայոց Ազգային խորհրդում, որի աշխատանքներին մասնակցում էին հայկական զորամիավորումների բարձրաստիճան հրամանատարները։

---

60 «Հորիզոն», 1918 թ., № 33։

Ելնելով ռազմաճակատում տիրող իրական կացությունից և մարտական ուժերի հնարավորությունից, Դրոն հավատարիմ համոզմունքները համարձակորեն արտահայտելո իր սկզբունքայնությանը, շատերի համար անսպասելի՝ առաջարկում է փոքրացնել, կրճատել ռազմաճակատը և եղած ուժերը կենտրոնացնելով ավելի փոքր հատվածում՝ ստեղծել պաշտպանության հզոր հանգույց։ Չնայած սահմանամերձ մի քանի կետերում արդեն գործում էին հայ երկրապահ զորագնդերը, սակայն ապրիլյան եղեռնից հետո Արևմտահայաստանը մեծամասամբ ամայացել էր, և բացառությամբ Վանից, հայկական մյուս գավառներում մահմեդականությունը արդեն բնակչության մեծամասնություն էր կազմում։ Թիկունքը ռազմաճակատից բաժանող տարածքում վխտում էին թուրքական հրամանատարության գործակալների կողմից առաջնորդվող բազմաթիվ թուրք-քուրդ և չերքեզ զինյալ խմբեր։ Իսկ ռազմաճակատի պաշտպանունակությունը ամրապնդելու համար անհրաժեշտ էր թիկունքի հետ կայուն փոխկապակցվածություն, զինվորական համալրումների, զենքի, ռազմամթերքի ու պարենի մատակարարումների անխափան ապահովում։ Տվյալ պարագայում այդ ամենի իրականացումն անտեսելի դժվարություններին առջև էր կանգնեցրել Հայոց Ազգային խորհրդին և հայկական զորաքանակի հրամանատարությանը։

Անդրադառնալով ռազմաճակատի խնդիրներին քննարկմանը նվիրված Ազգային խորհրդի կողմից գումարված խորհրդաժողովում Դրոյի պաշտպանած տեսակետի լուսաբանմանը՝ Ս. Վրացյանը գրում է. «Դրօն խօսք առաւ եւ այդ օրերի համար «սարսափելի» խօսքեր ասաց.

— Ձեր այդ առաջարկները բոլորն էլ փորձված են (մինչ Դրոյի խոսք առնելը բոլոր ելույթ ունեցողները՝ Անդրանիկը, Ռուբենը, Խաչատուր Կարճիկյանը, Ստ. Մամիկոնյանը և այլք արտահայտվել էին նոր զորակոչ հայտարարելու ու բանակը օգնական ուժերի համալրելու միջոցով ռազմաճակատի առկա տարածքը պահպանելու օգտին — Հ. Գ.)։ Անօգուտ է դրանց վրայ յոյս դնել։ Իրողութիւնը այն է, որ ռուս զօրքերը հեռանում են ճակատից եւ մենք անզօր ենք նրանց պահելու։ Փաստը այն է, որ մենք ի վիճակի չենք, բաւարար զօրք չունինք նրանց լքած բոլոր դիրքերը գրաւելու։

Որոշ ժամանակ էլ եթէ այդպէս շարունակուի, ռազմաճակատը պիտի մերկանայ, եւ թշնամին առանց դիմադրութեան առաջ պիտի շարժուի։ Հետեւաբար, ի՞նչ պէտք է անել։

Եւ պատից կախուած զինուորական քարտէզի առաջ անցնելով՝ շարունակեց.

— Տեսնո՞ւմ էք այս տարածութիւնը, ահա Վանը, այս Բիթլիսն է, այս Մուշը, այս Երզնկան... Այս ամբողջ տարածութիւնը մե՛նք պէտք է պաշտպանենք, մե՛նք Հայերս մի բուռ ուժերով։ Հնարաւո՞ր բան է։

— Հնարաւոր է,— լսուեց մի ձայն։

— Ո՛չ, հնարաւոր չէ։

— Ապա, ուրեմն, ի՞նչ անել,— շարունակեց Դրօն։— Պէտք է կարճացնել ռազմաճակատը։ Վան-Երզնկա դիծը չենք կարող պաշտպանել, գուցէ կարողանանք...

Սենեակում լսուեցին վրդովուած բացականչութիւններ։ Անդրանիկը բեղերն էր կրծոտում։

— Մի վրդովուէք, ձայնը բարձրացրեց Դրօն, հաշիւը պարզ է, եթէ չենք ուզում ամբողջը կորցնել, պահենք գոնէ մէկ մասը։

Ու սկսեց զօրամասերի անուններ յիշել, վայրերի տարածութիւնները ներկայացնել, մեր ուժերը համրել։

— Հաշիւը պարզ է. միայն մեր ուժերով չենք կարող Վան-Երզնկա-Տրապիզոն գիծը պաշտպանել։ Դա աբսուրդ է։ Պետք է քաշենք մեր ուժերը Բայազէդ-Բասէն գծի վրայ.. Պէտք է Վանի, Մուշի, Էրզրումի, Երզնկայի շրջանների բոլոր պահեստները ոչնչացնենք... Պէտք է մեր ուժերը, պաշտպանութեան բոլոր միջոցները կենտրոնացնենք կարճ սահմանագծի վրայ, այլապէս...

— Այլապէս ի՞նչ,— լսուեց մի խեղդուկ ձայն։

— Այլապէս, Թրքահայաստանը կորցնելուց յետոյ. ռուսահայաստանն էլ կը կորցնենք...»[61]։

Տվյալ ժամանակում նրա տեսակետը դեռ հոգեբանական, բարոյական առումով դժվար ընդունելի էր և գուցե թե ճիշտ չէր հնչում։ Իրոք, դժվար էր համակերպվել Արևմտահայաստանը թողնելու մտքին, բայց խրատական կացութիւնն

---

61 Ս. Վրացեան, «Կեանքի ուղիներով» Հ. գ., էջ 179—180։

խորը իմացության ու գնահատման և սթափ ու առողջ բանականության տեսանկյունից՝ Դրոյի առաջարկը ճիշտ էր, ինչը և ապացուցեց ժամանակը։

Ազգային խորհուրդը որոշում է պահել առկա ռազմաճակատը և հայկական բանակային կորպուսի 3-րդ դիվիզիայի հրամանատար Անդրանիկին, որն ի դեպ Երզնկայից մինչև Վան և Բիթլիս ձգվող ռազմաճակատը պահպանելու ամենաջերմեռանդ կողմնակիցն էր, նշանակում է Կարինի երկրապահ ճակատի հրամանատար, այն համոզմամբ, որ նշանավոր հայդուկապետը իր հեղինակությամբ և ռազմական կարողությամբ կկարողանա ոգեկոչելով զորքին ու ժողովրդին՝ պաշտպանել ռազմա-ստրատեգիական վճռական նշանակություն ունեցող Էրզրումի բերդաքաղաքը։

1918 թ. փետրվարին, թուրքերը՝ խախտելով Երզնկայի զինադադարը, անցնում են հարձակման։ Կատարվում է այն, ինչ կանխատեսում էր Դրոն։ Ջնայած հերոսական դիմադրությանը՝ հայկական փոքրաքանակ ուժերը չկարողանալով կայուն դիմադրություն ցույց տալ թուրքական զորքերին, թողնում են Բաբերտը, Երզնկան, Վանը, Բաղեշը և վերջապես Արևմտահայաստանի ամենակարևոր հենակետը՝ Էրզրումի հզոր բերդաքաղաքը։ Արևմտահայաստան տանող ուղիները արդեն բաց էին։

Վերոհիշյալ Ս. Վրացյանի վկայությամբ «Տարիներ անց Բէյրութից վերջին անգամ Ամերիկա մեկնելիս՝ Դրոն, կրկին ու կրկին անգամներ, մանրամասնորեն յիշեց այդ միջադէպը։ Նա համոզված էր, որ եթէ այն ժամանակ իր առաջարկը ընդունէր, շատ դժբախտություններ տեղի չէին ունենայ»[62]։

Էրզրումի անկումից հետո թուրքական զորքերը՝ կրնկաձկոխ հետապնդելով նահանջող հայկական զորագնդերին, մոտենում են Սարիղամիշին։ Ահավոր սպառնալիք էր կախվել Հայաստանի մնացած փոքրիկ տարածքում հավաքված հայության վերջին բեկորների վրա։

Ռազմաճակատում վատթարագույն ուղղվածությամբ զարգացող մարտական գործողություններին զուգընթաց՝

---

62 Նույն տեղում, էջ 181։

թիկունքում շարունակաբար կրկնվող թուրք զինված խմբերի ելույթներն իրենց բնակավայրերին էին գամել զենքի ընդունակ հայերին, որոնք Արևելահայաստանի տարածքում ծայր առած զինված բախումների ճնշման տակ առավելապես մտահոգված էին իրենց գյուղերի և ընտանիքների ապահովության պահպանմամբ։ Թուրք հրամանատարության նախաձեռնությամբ արյունակիցների միջոցով Հայաստանի շրջաններում ստեղծված քաոսային կացությունն իր սև գործն կատարեց։ Ռազմաճակատից իրենց ընտանիքների ճակատագրով տագնապած բազմաթիվ հայ զինվորներ լքում էին զորամասերը և վերադառնում հարազատ վայրերը։ Հայ զիրագնդերում ծնունդ առած զանգվածային դասալքումներն ու տիրապետող անկազմակերպ վիճակը կարող էին ամենաողբերգական հետևանքներն ունենալ։

Հեռավոր Ամերիկայում հրատարակվող Հ. Հ. Դաշնակցության «Ասպարեզ» օրաթերթը այդ օրերին դիմելով տեղի հայությանը գրում է. «Մօտ երկու միլիոն հայութիւնը, 300 հազար հայերու բեկորները, որոնք իրենց յոյսը դրած էին ռուս յեղափոխական ժամանակաւոր կառավարութեան վրայ, այսօր վտանգի սպառնալիքի ներքև կը գտնուին։

Կովկասեան ռազմաճակատի անխնամ վիճակը թիւրքերու հակայարձակման հաւանականութիւնը, քիւրտերու մշտական թալանն ու սպանութիւնները, տեղական թաթարներու հապճեպ զինուելն ու վրացիների երկդիմի քաղաքականութիւնը վտանգի նոր դուռ բաց կանեն հայութեան համար։

Մինակ ենք մեր անզօրութեան մէջ և մեր թշուառութեան հետ, շրջապատուած ենք մեզ շրջող և մեզ հետ մրցակցող տարրերով, որոնք ամէն առիթ չեն փախցնի՝ հարուածելու մեզ»[63]։

Երևանի նահանգում Արամի համագործակցությամբ Դրոն անպատմելի ջանքեր էր գործադրում ռազմաճակատը կայունացնելու, զինական ջոկատներ կազմակերպելու և ժողովրդի ու հուսալքության տենդով բռնկված հայ զինվորների մարտական ոգին բարձրացնելու ուղղությամբ։ Հայկական զորաբանակի զինվորական կոմիսարը երբեմն հարկադրված էր

---

[63] «Ասպարեզ», 1918 թ., թիվ 488, էջ 2։

լինել ռազմաճակատի ամենաառաջավոր բնագծերում։ Իր աշխատություններում Դրոյի կյանքին ու գործունեությանը բազմաթիվ էջեր նվիրած Ս. Վրացյանը, որը 1918 թ. գարնան սկզբներին որպես Ազգային խորհրդի ներկայացուցիչ գտնվում էր Սարիղամիշում, այդ ուղղության զորահրամանատար գեներալ Արեշյանի զինվորական շտաբում, պատմում է.

«...Մի օր էլ ըմբոստացաւ եւ մերժեց ճակատ երթալ Սարիղամիշում գտնուող 101-րդ ձիաւոր հարիւրեակը։ Արեշեանի բոլոր ջանքերը կարգի բերելու՝ անցան անօգուտ...

Զօր. Արեշեանը սիրտը բռնած՝ շարշարուում էր ցաւից ու անկարողութիւնից՝ շարշարելով նաեւ մեզ։ Նստած մոայլ՝ ելք էինք որոնում անել եւ անտանելի կացութիւնից։ Եթէ այս դրութիւնը շարունակուէր, կարճ ժամանակամիջոցում ռազմաճակատը փուլ կը գար, եւ թշնամին անարգել կը յառաջանար դէպի Կարս եւ Ալեքսանդրապոլ։

Մէկ էլ հրա՛շք։ ...Վագներեան հերոսի պէս՝ ներս մտաւ Դրօն։ Ո՞րտեղից որտեղ եւ ի՞նչ օրհասական վայրկեանին։ Կարծես լոյս բերեց հետը։ Նոյն իսկ Արեշեանի դէմքը պայծառացաւ։ Դրօն բանակի կոմիսարն էր։

...Դրօն յայտնեց, թէ եկել է Երեւանից զէնք ու ռազմամթերք հաթայթելու Արարատեան Դաշտի զօրամասերի համար։ Կարսից ստացել եւ ուղարկել է որոշ քանակութեան փամփուշտ եւ հրացաններ ու գնդացիրներ։ Հիմա ուզում է Սարիղամիշի պահեստներից զէնք ու փամփուշտ ուղարկել Երեւան։

Բոլոր պահեստները, իբրեւ պարէտի, իմ տրամադրութեան տակ էին։ Ես, ի հարկէ, առաջարկեցի ինչ որ հնարաւոր է փոխադրել։ Արեշեանը անմիջապէս հավանութիւն տուեց.

— Տարէք ինչ որ ուզում եք եւ ինչքան որ ուզում եք։ Միայն թէ, սիրելի պարոն Դրօ, մնացէք մի քանի օր օգնելու մէզ։

Դրօն շտապում էր վերադառնալ Երեւանի նահանգը, ուր արիւնահեղ քաղաքացիական կռիւներ էին տեղի ունենում եւ ուր ինքը շրջանի հրամանատար էր։ Միայն ստիպողական հարկադրանքի տակ անձամբ եկել էր զէնք ու զինամթերք տանելու։ Բայց զօր. Արեշեանի եւ մեր խնդրանքը այնքան

բուն էր, որ ստիպուած եղաւ տեղի տալ։ Իր զինուորական բացառիկ բնազդով նա արագ կերպով ըմբռնել էր կացութեան ահաւոր լրջութիւնը եւ անմիջական դարմանումի անհրաժեշտութիւնը։

Առաջին հերթին անհրաժեշտ էր վերջ տալ 101-րդ հարիւրեակի ըմբոստութեան, որ բարոյալքում ու կազմալուծում էր բանակը։ Մարդիկ զինուած՝ նստել էին զօրանոցում եւ մերժում էին ենթարկուել հրամանատարութեան՝ ցուցական կերպով։

Իբրեւ բանակի կոմիսար, Դրօն արագ կերպով պատրաստեց զինուորական ոյժ եւ հրամայեց, որ ըմբոստները դուրս գան զօրանոցից։ ... Դրօն մի կարճ ճառով դիմեց նրանց հայրենասիրութեան՝ յորդորելով, որ մեկնին ռազմաճակատ հայրենիքի պաշտպանութեան համար։ Աջ ու ձախից լսուեցին տրտնջացներ, մերժումի բացականչութիւններ։ Դրօն մի պահ լուռ դիտեց եւ, յանկարծ, վագրի ոստիւնով ատրճանակը ուղղեց հարիւրեակին ու գոչեց.

— Հանդա՛ր։

Անակնկալի եկած զինուորները արագ կատարեցին հրամանը։

— Տասը քա՛յլ առա՛ջ,— պոռաց Դրօն։

Առանց վարանումի զինուորները առաջ անցան տասը քայլ։

— Հրացանները դնել գետին,— հրամայեց Դրօն։

Մի պահ տատանումից յետոյ, ամէնքը հրացանները վայր դրին։

— Սուրերը դնել գետին, նորից հրամայեց Դրօն։

Զինուորները սուրերն էլ դրին վար։

— Տասը քայլ յե՛տ, գոչեց Դրօն։

Հարիւրեակը մէկ մարդու պէս քաշուեց յետ, նախկին տեղը։

Դրօյի կարգադրութեամբ եկան, արագ կերպով հաւաքեցին ու տարին հրացաններն ու սուրերը։ Ապա Դրօն պահանջեց, որ անմիջապէս յանձնեն ըմբոստութեան պարագլուխներին։ Առանց դժուարութեան յանձնեցին երեք հոգի։

Հարիւրեակը զղջում ու հնազանդութիւն յայտնեց։ Լուրը

կայկածի արագութեամբ հասաւ ռազմաճակատի զօրամասերին եւ ցնցող տպաւորութիւն գործեց նրանց վրայ»[64]։

Դրոյի մասին Ս. Վրացյանի վերոհիշյալ պատմությունը հաստատում է նաև Վահան Փափազյանը.

«Նկատելի էր յուսալքում զինուորների շարքերուն մէջ...։

...Ոդիի և կորովի անկում նահանջող զօրամասերու մէջ։ Արէշեանը անճրկած էր և յուսահատած։ Ոչ մէկ հաւատք ունէր մեր զինուորներուն վրայ. կրաւորական դիրք բռնած էր և Սարըղամիշէն նահանջի կողմնակից։ Դասալքութեան դէպքեր նկատուեցան։ Նոյն իսկ ճակատ ղրկուելիք վաշտերէն մէկը մերժեց տեղէն շարժուիլ — ապստամբած էին։ Ճիշտ այդ օրերուն Դրօն հոն եկաւ, որ իր սովորական վճռականութեամբ գործի ձեռնարկեց — յանցաւոր վաշտը զինաթափ ըրաւ։ Տեղի վրայ գտնուող Ազգային խորհրդի անդամներու, Դրօյի և Արէշովի հետ որոշեցին Վրացեանի նախագահութեամբ արտակարգ զինուրական դատարան կազմել և պատժել այդպիսիները»[65]։

Մի քանի օր անցկացնելով Սարիղամիշում՝ Դրոն մեկնում է ճակատի առաջավոր գիծը և վճռում անձամբ մարտի առաջնորդել հայ զինագնդերին։ Սակայն, թիկունքում զինված բախումների հետևանքով առաջացած տագնապալի ու անկառավարելի իրավիճակի թելադրանքով, ստիպված վերադառնում է Երևան։

Երևանի ողջ նահանգը վերածվել էր թուրք զինված ջոկատների ռազմական գործողությունների թատերաբեմի։ Խռովությունները մոտենում էին Երևանին։ Մայրաքաղաքի մոտակայքում գտնվող Զանգիբասարի շրջանը (ներկայիս Մասիսի շրջան — Հ. Գ.) վերածվել էր թուրք զինախմբերի յուրօրինակ ռազմակայանի։ Հունվարի 29-ին Երևանի Հատուկ Կոմիտեն ստանում է հետևյալ տագնապալի հեռագիրը.

«Ուլուխանլու-Նախիջևան երկաթուղային հատուածին վրայ կացութիւնը այն աստիճան սպառնական է, որ եթէ անմիջապես զրահապատ կառախումբ մը չի ղրկուի՝ հաղորդակցութիւնները երկար ատենուայ համար պիտի դադրին։

---

64 «Ասպարեզ», 1956 թ., ապրիլ 3, էջ 3—4։

65 Վ. Փափազեան, «Իմ յուշերը» Պէյրութ, 1952 թ., էջ 468։

Արաքսի եւ Գարապուրունի կայարաններուն միջեւ գտնուող Մասթարայի կայարանին վրայ քիւրտերը երկրորդ անգամ ըլլալով յարձակում գործած են։ Յարձակումը եւ է մղուած։ Պաշտօնեաները պահակազօրքի եւ զէնքի առաքումը կը խնդրեն»[66]։

Այս հեռագրից մի քանի օր անց թուրքերը գրաւում են Ուլուխանլու կայարանը և անվարան կոտորում մոտեցող գնացքների վագոններում գտնվող հայերին։ Կայարանի գրաւումով փաստորեն կտրվում է Ալեքսանդրապոլ-Երևան երկաթուղային ուղին։ Չնայած Արամի, Դրոյի և թուրք պատասխանատու գործիչների միջև կայացած վիճելի հարցերը խաղաղ ճանապարհով լուծելու համաձայնությանը, իրավիճակը մնում էր շատ բարդ։ Նույն օրերին թուրքերը պաշարում են Կողբը և շրջափակում Իգդիր-Երևան ճանապարհը՝ դրանով իսկ ողջ Սուրմալուի գավառը կտրում Արարատյան դաշտից։

Նույնիսկ քրդական ավազակախմբերը՝ շուզենալով ձեռքից բաց թողնել հայ գյուղերը թալանելու ու կողոպտելու պատեհ հնարավորությունը, անցնում էին Արաքսը և հարձակվում հայկական գյուղերի վրա։

Այդ օրերին Անդրկովկասյան կոմիսարիատն ու Հայոց Ազգային Խորհուրդը պարբերաբար Հայաստանի տարբեր շրջաններից ստանում էին բազմաթիվ բողոք-հեռագրեր, որոնցում հայ բնակչությունը ցասումով հայտնում էր թուրք զինված խմբերի և զորքերի միջև տեղի ունեցած բախումների և հայկական բնակավայրերում ու հաղորդակցության հանգույցներում թուրքերի կողմից գործած վայրագությունների մասին[67]։

Ռազմաճակատի բախտը, հետևաբար և հայ ժողովրդի գոյության խնդիրը մեծապես կախված էր նաև թիկունքում՝ Արարատյան աշխարհում ծավալվող իրադարձությունների հետագա ընթացքից։

Հայաստանից Թիֆլիս առաքվող բազմաթիվ բողոք-հեռագ-

---

[66] «Հայրենիք» օր., 1918 թ., հուլիսի 13։

[67] Տե՛ս Ս. Վրացեան, «Հայաստանի Հանրապետութիւն», Թէհրան, 1982 թ., էջ 124—131։

գրերի և հայ-թուրք բախումների արձագանքների հարկադրանքով Անդրկովկասյան Կոմիսարիատը տեղում ընդհարումների պատճառները ուսումնասիրելու նպատակով բարեհաճում է «հաշտարար դատավորների ու քննիչների» հանձնախումբ ուղարկել Երևան։

Ճակատագրի ինչպիսի դառը հեգնանք՝ պատմությունը կրկնվում է... Ճիշտ 13 տարի առաջ իր իսկ թելադրանքով կովկասյան թուրքերի կողմից արևելահայության նկատմամբ գործադրած բռնությունների ու սպանությունների հետևանքով Կովկասում բռնկված հայ-թուրքական ընդհարումները տեղերում «ուսումնասիրելու և խաղաղացնելու» նպատակով Անդրկովկասյան փոխարքայության իշխանությունները մեկը մյուսի հետևից Երևանի նահանգ էին գործուղում կեղծ, մտացածին հանձնախմբեր ու «հաշտարար դատավորներ»։

1918 թ. հայ-թուրքական ընդհարումների նկատմամբ իր դրսևորած վերաբերմունքով Անդրկովկասի կառավարությունը կարծես ժառանգելով Վորոնցով-Դաշկովի փոխարքայության «բարի» ավանդույթները՝ նույնպես «քննիչների» և «հաշտեցնողների» հանձնախմբեր է առաքում Երևանի նահանգ։

Ռազմաճակատում տիրող անմխիթար իրավիճակը հրամայաբար պահանջում էր անհապաղ բացել թուրք զինված խմբերի կողմից շրջափակված հաղորդակցության ուղիները և թիկունքում կազմավորվող զորամիավորումները հասցնել մարտադաշտ՝ համալրելու թուրքական բանակի հետ գոտեմարտի բռնված հայկական զորագնդերը։ Կովկասյան կառավարության հրահանգով ստեղծված պատվիրակությունը արդեն Երևանում էր։

«Ահա այսպիսի հանգամանքներում, երբ ոչ միայն ազատ հաղորդակցություն չի կայ երկաթուղիներով, այլև փակված է եթերեակը գիշերի միջև — ա՛յս դրության մէջ հայկական զօրքերի կոմիսար Դրօն յայտարարեց, որ բոլոր ռազմագիտական ճանապարհները փակված են հայկական զօրամասերի առջև։ Նա վճռական ու յամառ կերպով պահանջում էր, որ իրեն ցոյց տրուի որեւէ ճանապարհ, թէկուզ շատ վատ ու անյարմար, թէկուզ ամենաանանցանելի մի ճանապարհ։ Այդ պահանջին նրան պատասխանեց, որ ռազմագիտական

բոլոր ճանապարհները փակված են ռազմաճակատ գնացող հայ զօրամասերի առջև։ Մահմեդականների ներկայացուցիչները շառարկեցին»[68]։

«Հաշտարարների» գործունեությունից պարզորեն ակնառու էր, որ նա կոչված չէ բացելու թուրք զինախմբերի կողմից երկաթուղային և մյուս հաղորդակցության ուղիների շրջափակումը։ Թուրքական կողմի ղեկավարությունը նույնպես անզիջողական ու թշնամական կեցվածք էր որդեգրել։

Եվ մինչ «հաշտարարների» հանձնախումբը տեղերում զբաղվում էր ընդհարումների պատճառների ուսումնասիրությամբ՝ թուրք զինախմբերի ելույթներն ավելի ու ավելի էին ծավալվում Ղամարլուի (Արտաշատ), Դավալուի (Արարատ) և Նախիջևանի, Շարուր-Դարալագազի և այլ շրջաններում։

Այլևս հապաղելու և թուրքերի հետ անիմաստ բանակցություններ վարելու ժամանակ չկար։ Ելքը միակն էր։

«Երևանի զինուորական կոմիսար Դրոն պահանջեց գծի ապահովությունը կովկասեան Սէյմի հաշտարար ներկայացուցիչներից, եւ սպառնաց մերժման դէպքում զէնքով բաց անել այդ»[69]։

Կրկնակի անգամ թուրքերի հետ բանակցելու անհաջող փորձից հետո, փետրվարի 22-ին, Դրոն՝ Ուլուխանլուում կենտրոնացած թուրքական զորախմբերի դիրքերին թնդանոթային կարկուտ տեղալուց հետո, հակառակորդի ուժերի վրա գրոհի է նետում 3-րդ պարտիզանական և 4-րդ գնդերը։ Տվյալ պարագայում զենքի ուժով Ուլուխանլու կայարանը գրավելը՝ միակ միջոցն էր վերականգնելու կարևորագույն նշանակություն ունեցող Երևան-Ալեքսանդրապոլ երկաթուղին։

Հարձակումից մի քանի ժամ չանցած թուրքերը ի նշան հնազանդության պարզում են սպիտակ դրոշը։ Եվ նույն օրն ի նշան Ուլուխանլուի հաղթանակի, Դրոն Հայոց Ազգային խորհրդին է հղում հետևյալ հեռագիրը. «Զօրամասը գնում է Ղամարլու, միանալու համար Ղամարլուի զօրամասին եւ բանալու Դաւալուում 4-րդ գնդի մէկ գումարտակի ճանապարհը։ Մէկ օրվայ հրացանաձգութիւնից յետոյ Աղհամզա-

---

68 Նույն տեղում, էջ 134։

69 «Հայրենիք» օր., 1918 թ., հոկտեմբերի 15։

լում, ուղարկված հայ-թրքական պատվիրակությունը, որ թուրքերը յետ քաշեն ու չխանգարեն զորքին առաջ անցնելու, արդիւնք չուեց։ Թուրքերը օգնութեան հասած քրդերի հետ դիմեցին յարձակման՝ կամենալով ջարդել մեր զօրամասը եւ գրաւել Հրեւանին։ Թուրքերը ունէին ձեռքի ռումբեր։ Այն ժամանակ մենք որոշեցինք վերջ տալ այդ ամենին եւ օգնութիւն հասցրինք գնդ. Դոլուխանյանին՝ հրամայելով յարձակուել ու գրաւել Ալուխանլուն, որ եւ կատարուեց։ Ալուխանլուն գրաւած է, շրջանը մաքրուած։ Մեր զոհերն են՝ 9 սպանուած, 32 վիրաւոր, որոնցից երկուսը՝ սպայ։

Թուրք պատգամաւորները մեղադրում են իւրայիններին, որի համար կան փաստեր, եւ խնդրում են հաշտութիւն։ Մեր դրած պայմաններն են. բանալ ճանապարհները, չկտրել հեռագրական թելերը եւ հրացանի չբռնել գնացքները»[70]։

Քանի որ թուրքերի զինված ելույթները միաժամանակ բռնկվում էին տարբեր վայրերում, ուստի Դրոն ստիպված էր գործելու մեծ արագությամբ ու վճռականությամբ։ Նրա առաջնորդությամբ հայ զինվորները արշավում են Շարուր-Նախիջևան, ապա Սուրմալու, Ղամարլու, Դավալու և այլուր։

Ինչպես և նախորդ բոլոր մարտերում, հայ-թուրքական ընդհարումների ժամանակ հրամանատարական վարպետությամբ ու քաջությամբ իրենց բարձունքում էին հեծելախմբերի հրամանատարներ Բաշգառնեցի Մարտիրոսն ու Դավալուի կռվում զոհված Խոսրով Եղիազարյանը։ Դրոյի հրամանատարությամբ գործող զորախմբի կազմում հրաշալի մարտական քննություն բռնեց Խոսրով Եղիազարյանին փոխարինած Կուռո Թարխանյանը։ Իսկ հայկական զորաբանակի զինվորական կոմիսարը և այդ օրերին նաև երևյան զորախմբի հրամանատարը մարտնչում էր պատնեկան ավյունով՝ մշտապես իր զինվորների կողքին ու կռիվների ամենադժվարին տեղամասերում։ Մի փոքրիկ վկայություն հեծյալ հարյուրյակի հրամանատար Մարտիրոսի հուշերից։ Փետրվարի կեսերին Դրոն իր զորախմբի գլուխն անցած մաքրում է Ղամարլուի, Դավալուի շրջաններն և հետապնդելով հայկական գյուղերն անընդմեջ ասպատակող Շարուրի, Վեդիբա-

---

Ս. Վրացեան, «Հայաստանի Հանրապետութիւն», էջ 127—128։

սարի, Բաշքենդի թուրքերին՝ հասնում է Արաքսի ու Հրազդանի խառնարանը։

«Քիւրտերը, գիշերուան ժամը 8-ին հասնելով Արաքսի ափը, թիկունքից յարձակւում են զումարտակի ու ժողովրդի վրայ, որ Արաքսը դեռ անցած չի լինում։ Խուճապ է առաջ գալիս զօրքի ու ժողովրդի մէջ, որ քիչ է մնում իրեն գցի Արաքսը։

Դրօն, տեսնելով այդ դրութիւնը, մաուզեր ատրճանակը հանած, առաջանում է դէպի քրտերը։

... Դրօյի քայլը ոգեւորում է շատերին. եւ ահա հակայարձակմամբ յետ են շպրտվում քրտերը...»[71]։

Հայկական զորախմբերի վճռական գործողությունների շնորհիվ կտրուկ կերպով փոխվում է օրեր առաջ Հայոց Ազգային խորհրդի, Արամի և Դրոյի խաղաղության կոչերն ու առաջարկությունները արհամարհող թուրքերի զինված ելույթների կազմակերպիչների դիրքորոշումը։ Անդրկովկասյան Սեյմը (Անդրկովկասի բարձրագույն օրենսդիր մրամինը՝ պառլամենտ — Հ. Գ.) արդեն այս անգամ հեղեղվում է հայ զինվորների հարվածներից սարսափի մատնված թուրք առաջնորդների կողմից ուղարկված բողոք-հեռագրերով։

Սեյմի մի շարք անդամներ և հատկապես մահմեդական պատգամավորները մեղադրանքների շարան են տեղում հայերի հասցեին։

«Նրանք իրար յետեւից բարձրանում էին ամբիոն եւ արտասանում ցասումով լի, կրքոտ ճառեր՝ ուղղված հայերի ու դաշնակցութեան դէմ։ Ամբողջ պատասխանատվությունը նրանց կարծիքով, ընկնում էր հայերի վրա, որոնք բռնի միջոցներով ձգտում էին ստեղծել «հայկական հողամաս»։ Հայկական զօրամասերը չեն ենթարկվում կենտրոնական իշխանության (նկատի ունեն Կովկասյան Սեյմը ու կոմիսարիատը — Հ. Գ.) եւ փոխանակ ռազմաճակատ մեկնելու՝ կռւում են խաղաղ ազգաբնակչության դէմ։ Երեւանի դէպքերի հեղինակները Դրօն, գնդ. Փիրումեանն ու մի շարք ուրիշ հայ զինուորականներն ու գործիչներն են։ Անհիմն է այն ամբաս-

---

[71] «Հայրենիք» ամս., 1934 թ., փետրվար, էջ 113։

տանությունը, թէ մահմեդականները փակում են ճանապարհը հայ զօրամասերի առջեւ եւ այլն եւ այլն»[72]։

Ահա կովկասյան իշխանությունների և նրա կողմից ընդհարումների պատճառներն ու ուղղվածությունը տեղերում ուսումնասիրելու նպատակով Հայաստան ուղարկված «հաշտարարների» հանձնաժողովի աշխատանքների արդյունքի մի պերճախոս վկայություն։

Երևանի Հատուկ Կոմիտեի անդամ Արշալույս Աստվածատրյանը՝ Արամին նվիրված հուշերում անդրադառնալով այդ օրերին Հայաստանում ծայր առած ընդհարումների վերլուծությանը՝ գրում է. «Թուրք հակապետական ու հակահայկական շարժումները ստացել էին տարերային բնույթ։ Յարձակում էին թուրքերն ու քրդերը, պաշտպանում հայ զօրամասերն ու ինքնապաշտպանության խմբերը։

Այս վերջինները կազմակերպուել էին Դրոյի նախաձեռնությամբ՝ յատկապէս ժողովրդի ինքնապաշտպանության համար՝ հնարաւորության սահմաններում չեզոքացնելու նպատակով զօրքի միջամտությունը, զօրքի, որի միակ նպատակը ռազմաճակատ մեկնելն էր»[73]։

Թուրք զինված զանգվածների ելույթներին զուգընթաց երկրում աննախադեպ չափերի էր հասել գողության և ավազակությունների դեպքերը։ Հայաստանում տիրող դժվարին կացությունը լիցքավորել էր ազգային խնդիրների ըմբռնողությունից և հայրենասիրական տարրական զգացմունքներից զուրկ բարոյալքված որոշ հայ տարրերի, որոնք իրենց խառնակչությամբ ու թալանչիական գործողություններով ապակայունացնում էին առանց այն էլ անմխիթար քաղաքական և տնտեսական իրավիճակը։ Անկարգությունների ալիքը տարածվել էր նաև Երևանում, և տեղի Հատուկ Կոմիտեից զգալի ջանքեր էր պահանջվում զբաղվելու նաև այդ կարգի դժվարությունների հաղթահարմամբ։

Դրոն երբեմն ստիպված էր լինում զբաղվել հասարակական կարգ ու կանոնի ապահովության խնդիրներով։

Վերոհիշյալ Արշալույս Աստվածատրյանը՝ անդրադառ-

---

72 Ս. Վրացեան, «Հայաստանի հանրապետութիւն», էջ 135։

73 «Արամը», Թէհրան, 1969 թ., էջ 101։

նալով նմանօրինակ դեպքերին Դրոյի մասնակցությանը, գրում է.

«Մի օր, երբ Ազգային խորհրդի շենքում, Յատուկ Կոմիտեի նախագահության սենեակում Մ. Մոսինեանի հետ աշխատում էինք, դրսից, Աստաֆեան փողոցից լսուեցին աղմուկ-աղաղակներ, ձայները գնալով աւելի սաստկացան: Արամը բացակայ էր: Աշխատանքը ընդհատեցի եւ դուրս եկայ պատշգամբը, հասկանալու համար աղմուկի պատճառը: Ինչ որ ջղայնացած իրարանցում կար փողոցում, ուր ահագին ամբոխ էր հավաքուել. ոմանք աշխատում էին խառնակիչներին-աղմըկարարներին ի կարգ հրաւիրել, բայց անյաջող: Նրանց ելույթներն աւելի սպառնական կերպարանք էին առնում, երբ՝ որտեղից-որտեղ երեւաց Դրօն եւ անմիջապէս մտաւ ամբոխի մէջ. կարծես երկնքից ուրուր իջաւ հաւերի մէջ. աղմկարարները ծակ ու ծուկ քաշուեցին, ամբոխը ցրուեց, եւ փողոցն ստացաւ իր խաղաղ, բնական տեսքը:

Մի փոքրիկ, բստ ինքնեան աննշան դէպք, որ սակայն բնորոշ վկայութիւն է Դրօյի նկարագրի մասին: Ամէն տեղ, ամէն ժամանակ վտանգի (մեծ թե փոքր) պահերին նա երեւան էր հանում զինվորական իր բացառիկ պատկութիւնները,— մի հայացքից ըմբռնել կացութիւնը եւ անմիջապէս անցնել գործի՝ միայն հերոսին յատուկ վստահութեամբ դէպի գործի յաջող վախճանը»[74]:

Խորագետ քաղաքական գործիչ, տաղանդաւոր կազմակերպիչ Արամ Մանուկյանի և մարտական երկաթյա կարգապահությամբ օժտված աննկուն հրամանատար Դրոյի համագործակցությունը Արարատյան աշխարհում տվեց իր արգասաբեր պտուղները: Նրանց, ինչպես նաև Երևանի Հատուկ Կոմիտեի մյուս անդամների ջանքերով հնարավոր եղավ լուծել թերևս ամենահրատապ խնդիրը. մարել Հայաստանի տարածքում բռնկված թուրք զինախմբերի զանգվածային ելույթները և ապահովել թիկունքը ռազմաճակատին միացնող ուղիների անխափան աշխատանքը: Բացի վերոհիշյալից, Երևանի Հատուկ Կոմիտեն Հայաստանում տիրող ճգնաժամային պայմաններում կարողացավ կազմավորել նոր

---

[74] «Հայրենիք», օր., 1956 թ., ապրիլի 27:

զորամիավորումներ, որոնք անգնահատելի ծառայություն ունեցան հայության գոյապայքարի մարտերում։ Այս գործում նույնպես անժխտելի է Դրոյի ներդրած զգալի վաստակը։

Չնայած թիկունքում ձեռք բերած հաջողություններին՝ ռազմաճակատում ծավալվող գործողությունները գնալով ավելի ու ավելի սպառնալի կերպարանք էին ստանում։

Ապրիլի 12-ին Կովկասյան կառավարության նախագահ Ջիենկելին և ռազմական նախարար գեներալ Օդոշելիձեն առանց Հայոց Ազգային Խորհրդին և կառավարության հայ նախարարների գիտության հրամայում են հայկական զորքերի հրամանատար գեներալ Նազարբեկյանին (նա անմիջականորեն ենթարկվում էր Կովկասյան կառավարությանը և ռազմական նախարարությանը — Հ. Գ.) թուրքերին հանձնել Կարսի հզոր բերդաքաղաքը։

Կատարվում է ամենասարսափելին. «...Կարսի բերդը,— նշում է ռազմական նախարարությանը հասցեագրված հեռագրում հայկական բանակային կորպուսի շտաբի պետ գեներալ Վիլիսկին,— անտարակույս, յետ կը մղէր թիւրքերին. այսօր էլ դեռ բերդը շատ լաւ պաշտպանւում էր. մինչեւ որ ստացւեց վարչապետ Ջիենկելիի եւ զօր. Օդոշելիձէի կարգադրութիւնը, որ բանագնացներ ուղարկւեն՝ ճշտելու համար բերդի դատարկման պայմանները։ Այս բանը բերդապետին յայտնելուց յետոյ՝ կռիւը դադարեց։ Զօրքերը՝ ենթարկւելով հրամանի՝ հեռացան Աղաջ-Աղբաբա-Հարամ Վարդան առաջաւոր դիրքերից։

Այսպիսով, Ջիենկելիի կարգադրությունը կոտրեց հայկական բանակի դիմադրական թափը եւ պատճառ դարձաւ սարսափելի աղէտի»[75]։

Թուրքական հրամանատարության նպատակը միայն Կարսը չէր։ Խախտելով Կովկասյան կառավարության հետ կնքված ապրիլյան զինադադարը՝ թուրքերը անսպասելիորեն վերսկսում են հարձակումը և մայիսի 15-ին գրավում Ալեքսանդրապոլը և շարժվում Ղարաքիլիսա, Սուրմալու, Սարդարապատ-Երևան, Բաշ-Ապարան-Երևան ուղղություններ-

---

[75] Ս. Վրացեան, «Հայաստանի Հանրապետութիւն», էջ 110։

րով։ Ահավոր սպառնալիք էր կախվել փոքրիկ հողակտորի վրա խմբված հայության վերջին բեկորների գոյության վրա։

Մինչև 1918 թ. մայիսյան կռիվները Դրոն հայկական զորքերի ռազմական կոմիսարն էր, իսկ երբ արդեն թուրքական զորագնդերը Կարսի և Ալեքսանդրապոլի գրավումից հետո արդեն սպառնում էին Երևանին, նա ռազմաճակատի ամենապատասխանատու ուղղությունում մարտնչելու վճռականությամբ՝ ներկայանում է Արարատյան դաշտավայրում գործող հայկական զորքերի հրամանատար գեներալ Սիլիկեանին, և. «Ես,— պատմում է Դրոն,— գնացի Սիլիկեանի մօտ եւ յայտարարեցի, որ այլեւս հայկական բանակի կոմիսար չեմ եւ ինձ դրի Սիլիկեանի տրամադրութեան տակ»[76]։ Ստանալով Սիլիկյանի համաձայնությունը՝ Դրոն մեկնում է Սուրմալուի շրջան և Դանիել Բեկ-Փիրումյանից ստանձնում այդ ուղղությունում գործող հայկական զորախմբի հրամանատարությունը։

Ինչպես և նախորդ մարտերում, այս անգամ դարձյալ նրա հետ էին Մարտիրոսի, Մակեդոնի, Կուռո Թարխանյանի գլխավորած հեծելավաշտերը, ինչպես նաև Սակելյարի գումարտակն ու գնդապետ Չարփչյանի հրամանատարությամբ գործող Վանի գունդը։

Սուրմալուն անընդմեջ ենթարկվում էր թուրքական զորքերի կատաղի հարձակումներին։ Թուրքերը ձգտում էին արագորեն հաղթահարել Սուրմալուի պաշտպանների դիմադրությունը և գետանցելով Արաքսը՝ հարձակումը զարգացնել դեպի Երևան։

Դրոն՝ անխորտակ պաշտպանությամբ, իսկ երբեմն էլ ակտիվ հակահարձակումներով ջախջախելով հակառակորդի գրոհները, ձախողում է Արարատյան դաշտը թափանցելու թուրք հրամանատարության ձեռնարկումները։

«Դրոյի հետ, Իգդիր ճակատում կռուում էինք տաճիկների դէմ։ Մի օր, Արաքս գետի ձախ ափում, նստած ճաշում էինք մի քանի բարձրաստիճան զինուորականների հետ, մէկ էլ տեսնենք Արաքսի միւս ափից, մեր զինուորները փախչում են։

---

[76] «Հայրենիք» օր., 1956 թ., ապրիլի 28։

Դրոն անմիջապէս տեղից վեր ցատկեց, մեզ մօտ արագ-ծում էր մի ձի, իրեն գցեց ձիու վրայ եւ քշեց գետի մէջ, անցաւ միւս ափը, կանչելով. «Տղեք ջան, ես ձեզ մատաղ հլնեմ, ո՞ւր էք փախչում, յէտ դարձէք, պարոն Դրոն է»։ Զօրքը շունչ ու հոգի առած, յէտ դարձաւ մի լաւ ջարդ տալով տաճիկներին, բաւականի տեղ յէտ գրաւեց։ Եթէ մենք լինէինք, քարտէզին պիտի դիմէինք։ Հետախուզութիւն կատարէինք, մինչ այն, մեր բանակը կանցնէր Արաքս գետը։ Դրոյի մեծութիւնը դրանում էր եւ հաջողութիւնն էլ նման երեւոյթների մէջ էր»[77]։

Մինչև Ալեքսանդրապոլի անկումը՝ Դրոյի գլխավորած հայ զինագնդերը հուսալիորեն պաշտպանում էին Սուրմալուի ճակատը թուրքերի չդադարող հարձակումներից։

Կարսի ողբերգությունից չանցած մեկ ամիս՝ թուրք հրամանատարությունը խախտելով կովկասյան կառավարության հետ կնքած զինադադարը՝ վերսկսում է հարձակումը և մայիսի 15-ին գրավում Ալեքսանդրապոլը, ապա շարժվում Ղարաքիլիսա, Սարդարապատ-Երևան, Բաշ-Ապարան-Երևան ուղղություններով։ Ջարդերի ահավոր սպառնալիք էր ծառացել Արարատյան աշխարհի փոքրիկ հողակտորի վրա կուտակված հայության վերջին բեկորների վրա։

Գեներալ Նազարբեկյանի շտաբը՝ Կովկասյան բանակի հրամանատարությանը և Հայոց Ազգային Խորհրդին ուղղված զեկուցագրում նշում է.

«Գեներալ Սիլիկովը հաղորդում է. մայիսի 21-ին, մոտավորապես ժամը 17-ին մարտն սկսվեց երևանյան երկաթուղու մոտակայքում գտնվող Սարդարապատի մատույցներում։ Սարդարապատի ջոկատը նահանջում է Ղարս-Կոյունլու, Կերպալու և հայկական Զեյվայի ուղղությամբ։

Կենտրոնացնելով հեծելազորը Մարգարայի մոտակայքում, հայկական զորամասերը Իգդիրի ուղղությունում փակել են Արաքսի գետանցումներն (խոսքը վերաբերվում է Իգդիրի ուղղությունում մարտնչող Դրոյի զորախմբին — Հ. Գ.)։ Հաջորդ օրն առավոտյան ժամը 9-ին ստացվել է հեռագիր Ղարաքիլիսայից, ըստ որի, Ղարաքիլիսան գրաւուած է թուր-

---

77 Նույն տեղում, ապրիլի 24։

քական զորքերի կողմից։ Ստեղծվել է կոպուսը Թիֆլիսից ամբողջովին կտրվելու իրավիճակ։

Գեներալ Նազարբեկովը մեկ անգամ ևս համառորեն պընդում է, որպեսզի կառավարությունը շտապի կնքելու հաշտություն»[78]։

Ռազմաճակատում ստեղծված չափազանց աննպաստ իրադրության պատճառով վտանգավոր կացության մեջ է հայտնվում նաև Սուրմալուի ուղղությունում մարտնչող Դրոյի զորախումբը։ Թուրքական բանակի հետագա առաջխաղացման դեպքում Սուրմալուի ճակատը և տեղի հայ բնակչությունը կարող էին կտրվել Սարդարապատի շրջանում գործող հիմնական ուժերից և հայտնվել շրջապատման մեջ։ Առաջնորդվելով տիրող ռազմական իրավիճակի թելադրանքով՝ Դրոն զորքերի պաշտպանությամբ կազմակերպում է գավառի հայ բնակչության տեղափոխությունը և այրելով Մարդարայի կամուրջը, դեռանցում է Արաքսն ու կանոնավոր զորաշարքերով, անկորուստ նահանջում Արարատյան դաշտ, ուր Արամ Մանուկյանի գլխավորած Հատուկ Կոմիտեն գեներալ Սիլիկյանի ռազմական շտաբի համագործակցությամբ անպատմելի ջանքեր էր գործադրում՝ ողջ Երևանի նահանգը վերածելու անխորտակ մարտական ամրոցի։

«Դրոն,— վերհիշում է Վահան Աֆրիկյանը,— նկարագրելով այդ վիճակը (նկատի ունի Կարսի և Ալեքսանդրապոլի անկումից հետո երկրում ստեղծված վիճակը — Հ. Գ.) ասում էր.

«Ծանր կռվարի տակ գլուխներս կորցրած, Արամի գրասենյակից դուրս գալով, Արամը, ես եւ Երեւանի յայտնի վաճառական, հասարակական գործիչ Յովհաննէս Մելիքեանը, մտանք զբօսավայր, շարունակելով մեր խորհրդակցութիւնը։ Ես առաջարկեցի հրահանգել սպայակույտին անմիջապէս բանակը ուժեղացնել եւ բաժանել երկու մասի՝ Սարդարապատի եւ Բաշ-Ապարանի։ Այնուհետեւ կտրուկ միջոցների դիմել, թոյլ չտալ Երեւանի ազգաբնակչութիւնը տեղից շարժուելու, անգամ շարժուողին դնդակահարելու որոշումով,

---

[78] Հ. Հ. Կ. Ա. № 503, պահեստ 14, գրքակ 6, էջ 19։

որպէսզի կռուող զինուորը զգայ, որ Երեւանը կանգուն է եւ իրեն նահանջելու տեղ չկայ»[79]։

Նա ճիշտ էր ըմբռնել պահի լրջությունը։ Երևանի հանձնումը կարող էր կործանարար ազդեցություն գործել զինվորների մարտական, բարոյա-հոգեբանական տրամադրությունների և դեպքերի հետագա զարգացման վրա։ Խորագետ զորապետի լրջախոհությամբ գնահատելով Հայաստանում ստեղծված ռազմական իրավիճակը՝ Դրոն պնդում է, որ անհրաժեշտ է առանց Երևանը հանձնելու վճռական ճակատամարտ տալ Արարատյան դաշտավայրը ներխուժած թուրքական զորաբանակին։ Նույն տեսակետը պաշտպանում է նաև Արամ Մանուկյանը։

Երևան-Սարդարապատ ուղղությունում գործող Հայկական զորքերի հրամանատարությունը (հրամանատար գեներալ Սիլիկյան) որոշ տատանումներից հետո վճռում է պահել Երևանն ու ճակատամարտ սկսել Սարդարապատում։

Այդ որոշումը իրականացնելու վճռականությամբ Դրոն Սիլիկյանի հետ էջմիածնից մեկնում է Երևան՝ հանդիպելու Արամին.

«— Մենք որոշել ենք, կռիւ պիտի տանք Երեւանի փողոցների մէջ եւ մէր դիակները պիտի թափենք Երեւանի մէջ, յայտնում է Դրօն։

— Ես էլ ձեզ խօսք եմ տալիս, որ էջմիածնում կը մնամ, միւս կողմից աւելացնում է զօրավար Սիլիկեանը»[80]։

Վիճակն արդեն գցված էր, Արամը վաղօրոք լի էր վճռահաստատակամությամբ ի օգուտ ճակատամարտի։ Սակայն, Երևանին սպառնում էր ոչ միայն Սարդարապատի ուղղությամբ հարձակվող թուրքական բանակը։ Հայկական բանակային կորպուսի 1-ին դիվիզիայի (հրամանատար գեներալ Արեշյան) Ալեքսանդրապոլից Ղարաքիլիսա նահանջելը թուրքական զորքերի հրամանատարությանը հնարավորություն է ընձեռում 3-րդ դիվիզիայի ուժերով գրավել Համամլու (Սպիտակ) կայարանը և ապա հարձակումը զարգացնել Ապարան-Եղվարդ կամ Ապարան-Աշտարակ ուղղությամբ։

---

[79] «Հայրենիք» օր., 1956 թ., ապրիլի 28։

[80] «Հայրենիք» օր., 1956 թ., մայիսի 27։

Մայիսի 23-ին հայկական բանակային կորպուսի հրամանատար գեներալ Նազարբեկյանը ռազմաճակատից հեռագրում է Հայոց Ազգային Խորհրդին.

«... Ստացվել է հաղորդագրություն Բաշ-Ապարանի և Ղարաքիլիսայի ուղղությամբ թուրքական զորքերի մասին։

Գեներալ Սիլիկյանը հաղորդում է Սարդարապատ ուղղությամբ իր հարձակման մասին, որն առայժմ ընթանում է հաջողությամբ»[81]։

Բաշ-Ապարանի ճակատում թուրքերի հայտնվելը կրկնակի սպառնալիք է ստեղծում Երևանի համար։ Մայրաքաղաք տանող հյուսիսային դարպասները բաց էին. Հայկական զորքերի հրամանատարությունը կարողանում է ճիշտ ժամանակին նկատել ու գնահատել Ապարանի ուղղությամբ Երևանին սպառնացող մահացու վտանգի իրողությունը։ Ռազմաճակատի Ապարանյան հատվածի հայ զորագնդերի հրամանատարությունը վստահվում է Դրոյին։

Բաշ-Ապարանի ճակատամարտը բացառիկ տեղ է գրավում Դրոյի մինչ այդ միայն հաղթանակներով հագեցված մարտական հարուստ կենսագրությունում։

Դրոն ոչ այնքան մեծ խանդավառությամբ է ընդունել Բաշ-Ապարանի ճակատը ղեկավարելու որոշումը։ Նա այդ օրերին հայկական զորահրամանատարությանն է ներկայացնում հակառակորդին վերջնականապես ջախջախելու շափազանց համարձակ և բավականին հետաքրքիր մի տարբերակ։

Ելնելով այն նախադրյալից, որ Սարդարապատի ուղղությունում հայկական զորքերը քանակապես և որակով համարյա չէին զիջում հակառակորդին՝ առաջարկում է չմասնատել ճակատում գտնվող զորագնդերը և հզոր, կենտրոնացված հարվածով ջախջախել թուրքական սարդարապատյան խմբավորումը, ապա հիմնական ուժերը տեղափոխել Բաշ-Ապարանի ճակատ և շրջապատել ու պարտության մատնել նաև թուրքական այդ զորախմբերին։ Նրա կարծիքով՝ մինչև Սարդարապատի հատվածում թուրքական զորքերին ջախջախելը, հայ աշխարհազորայիններին և փոքրաթիվ կանոնավոր

---

[81] Հ. Հ. Կ. Ա. № 503, ց. 14, դ. 6, էջ 19—20։

զորաջոկատները ի զորու կլինեին պաշտպանելու Բաշ-Ապարանի ճակատը։ Նրա պնդումը հիմնված էր նաև ռազմաճակատից ստացված այն ոչ ճիշտ տեղեկությունից, ըստ որի Բաշ-Ապարանի ճակատում հարձակվում էին թուրքական միայն երկու գումարտակներ։

Իր մտահղացումը իրականացնելու նպատակով Դրոն առաջարկում է իրեն թողնել Սարդարապատի ուղղությունում։ Սակայն գեներալ Սիլիկյանն արդեն ուներ իր որոշումը։

«...Էստեղ,— պատմում է Դրոն,— մի վէճ ունեցանք Սիլիկեանի հետ։ Ինձ ասում ա, քեզ նշանակում եմ Բաշ-Ապարանի հրամանատար։ Մոիսեյ Պավլովիչ (գեներալ Սիլիկյանի անունն ու հայրանունն է — Հ. Գ.) ուր ուզես կերթամ, մի՛ բաժանիր բանակը։ Թող ամբողջ ուժով յարձակուենք Սարդարապատից գալող բանակի վրայ, լավ ջարդենք։ Ի՞նչ տեղեկութիւն ունենք, մեզ տեղեկացնում են, թէ ընդամէնը երկու թաբուրա (գումարտակ — Հ. Գ.)։ Նրանք հթէ Աշտարակ էլ իջնեն՝ կը ջարդենք»[82]։

Տվյալ պարագայում պատերազմը շարունակելու Դրոյի մտահղացման կենսագործումը մեծագույն համարձակություն և պատասխանատվություն էր պահանջում։ Իրոք, չափազանց վտանգավոր էր Երևանի հյուսիսային դարպասի պաշտպանությունը թողնել միայն տեղի աշխարհազորի և փոքրաթիվ կանոնավոր զինաջոկատների հույսին։ Թուրքական զորքերը օգտվելով իրենց ուժերի գերակշռությունից՝ կարող էին ընկճել Բաշ-Ապարանի պաշտպանների դիմադրությունը և արագորեն մոտենալով Երևանին՝ շրջապատման օղակի մեջ վերցնել Սարդարապատի ճակատում գործող հայկական զորագնդերը։

Համաձայն գեներալ Ղորղանյանի գնահատման.

«...Զօր. Սիլիկեանը, սպառնալով Ալեքսանդրապոլի ուղղութեամբ թուրքերու կոնակին, իր կարգին կարող էր կտրուել Երեւանէն, եթէ Դրօի ջոկատը չհասցնէր կանգնեցնել թշնամիի առաջախաղացումը»[83]։

---

82 Նույն տեղում, մայիսի 27։

83 «Հայրենիք» ամս., 1928 թ., մարտ, էջ 125։

Հաշվի առնելով դեպքերի զարգացման նման հնարավորությունը՝ Սիլիկյանը չի ընդունում Դրոյի առաջարկած տարբերակը և նրան ուղարկում է Բաշ-Ապարանի ճակատը։

Դրոն Բաշ-Ապարան է մեկնում համեմատաբար փոքրաթիվ ուժերով։ Նրա գլխավորած զորամասի ամենահզոր մարտական ուժը՝ պարտիզանական գունդը Սիլիկյանը պահում է Սարդարապատի տեղամասում։ Նրա հրամանատարության տակ մնում են Մարիտորսի, Կուռո Թարխանյանի գլխավորած վաշտերը, Զեմլյակի, գնդապետ Կոզոլկովի, Զալինյանի հեծելազորայինների, ինչպես նաև Սակելյարի գումարտակի մի մասը։ Վերոհիշյալ զորաջոկատների մնացած մասը Բաշ-Ապարանի ճակատ պիտի ժամանեին մի փոքր ավելի ուշ։

Բաշ-Ապարանի ուղղությունում մարտական վճռական գործողություններ ծավալելու համար ուժերը դեռևս անբավարար էին։ Մինչև Դրոյի գալը շրջանի զենքի ընդունակ բնակչության զգալի մասը հանդես բերելով մարտական կամք և վճռականություն՝ արդեն դիմել էր ինքնապաշտպանության։ Արամի հրահանգով շրջանի ինքնապաշտպանությունը կազմակերպելու առաքելությամբ էջմիածնից Բաշ-Ապարանի ճակատը վաղօրոք տեղափոխված Սեդրակ Ջալալյանը Արաեն Տեր-Պողոսյանի համագործակցությամբ գործող մարտախմբի ուժերից կազմել էր մի քանի մարտական ջոկատներ և շպասելով կանոնավոր զորագնդերի ժամանելուն՝ պարզել ինքնապաշտպանության դրոշը։

Մի փոքրիկ, բայց էական պարզաբանում։

Անդրադառնալով Բաշ-Ապարանի ուղղությունում ինքնապաշտպանության կազմակերպման «իրողության» վերլուծությանը Հ. Թուրշյանը իր «Սարդարապատի հերոսամարտը» աշխատությունում գրում է.

«Բաշ-Ապարանի ճակատում, որտեղ ոչ մի կադրային հայ զորք չկար, դիմադրությունն, ինչպես արդեն ասել ենք, սկսել էին Քյուլուջա (Ներկայիս Վարդենիս — Հ. Գ.) գյուղը հավաքված աշխարհազորայինները՝ տեղացիներ կոմունիստ Դավիթ Մելիքսեթյանի և Մաթևոս Հովհաննիսյանի ղեկավարությամբ։ Մայիսի 23-ին իրենց խմբերով նրանց օգնության

Լ. Հասանում Արսեն աղան (Տեր-Պողոսյան) և Սեթոն (Սեդրակ Ջալալյան)»[84]։

Մանրամասնելով Թուրշյանի կողմից Բաշ-Ապարանի ինքնապաշտպանության կազմակերպմանը տրված գնահատականին, բնականոնորեն ծագում են հետևյալ հարցումները, որոնց պատասխանը բացակայում է հիշյալ աշխատությունում։

1. Բացի հեղինակի կամքով կոմունիստ հորջորջված Դավիթ Մելիքսեթյանից և Մաթևոս Հովհաննիսյանից, ովքե՞ր էին իր իսկ կողմից թվարկած Բաշ-Ապարանի ինքնապաշտպանության մյուս կազմակերպիչները։

2. Ի՞նչ միջոցներով և ինչպե՞ս նրանց հաջողվեց մեկ-երկու օրվա ընթացքում գինել և կազմակերպել տեղի աշխարհազորային զինաջոկատներին, որոնք կարողացան մինչև հայկական կանոնավոր զորամասերի ճակատ հասնելը դիմագրավել և կասեցնել թուրքական մի ամբողջական կանոնավոր դիվիզիայի հարձակումները։

Ամենևին չնպատակադրվելով թերագնահատելու Բաշ-Ապարանի ինքնապաշտպանության կազմակերպման գործում ապարանցի աշխարհազորայինների հիրավի հերոսական գործողությունները, այնուամենայնիվ, հարկ է նշել, որ Թուրշյանի վերոհիշյալ պնդումներում ակնհայտ է դեպքերի ու փաստերի միտումնավոր անիրազեկություն և խեղաթյուրում։

Բոլշևիկ-պատմաբանը Բաշ-Ապարանի հերոսամարտի կազմակերպմանը վերագրելով բացառապես ժողովրդական բնույթ, ընթերցողից թաքցնում է, որ իր թվարկածներից Սեթոն (Սեդրակ Ջալալյան) և Արսեն աղան (Սամսոն Տեր-Պողոսյան. խենթի որդին — Հ. Գ.) Հ. Հ. Դաշնակցության անդամներ էին, որոնք իրենց մարտական խբերով այդ ուղղությունում էին գտնվում Երևանի Հատուկ Կոմիտեի, Արարատյան ռազմաճակատի հրամանատարության և անձամբ Արամ Մանուկյանի գիտությամբ ու հրահանգով։

Վկայակոչենք Հ. Թուրշյանի հիշատակածներից մեկի՝

---

[84] Հ. Թուրշյան, «Սարդարապատի հերոսամարտը», 1965 թ., էջ 163 — 164։

Սեթոյի (Սեդրակ Ջալալյանի) հուշագրությունից մի հատված.

«Երբ տաճիկները սկսեցին առաջանալ Ղարսի վրայ և ներսից թուրք ազգաբնակչությունը սպառնական դիրք բռնեց դէպի նորակազմ հայկական կառաւարթիւնը — էջմիածնում, Ազգային խորհուրդը հրաւիրեց ինքնապաշտպանության խորհուրդ Սիլիկեանի նախագահությամբ։ Այդ խորհուրդը ինձ առաջարկեց կազմակերպել կամաւորական մի զօրամաս։ Որոշեց լիազորության սահմանները և հրահանգեց էջմիածնի գաւառի քաղաքացիական հիմնարկությունների ենթարկուել իմ կարգադրություններին ինքնապաշտպանության վերաբերյալ բոլոր հարցերում։ Սիլիկեանի տուած հրահանգների մի մասն էի միայն կատարել, երբ տաճիկները գրաւեցին Ղարսը եւ սպառնում էին Ալեքսանդրապոլին։ Արամը հեռագրեց ինձ, դադարեցնել գործողությունները, որպեսզի տաճիկներին առիթ չը տանք մեր ներքին գործերին խառնուելու։ Միաժամանակ հրահանգեց ուժեղացնել իմ զօրամասը թէ մարդկանցով և թէ ռազմամթերքով։ Ալեքսանդրապոլից ինձ ուղարկեցին 4 գնդացիր և այլ ռազմամթերք եւ հրահանգեցին միշտ պատրաստ սպասել Նազարբէգեանի հրամանին։ Այն ինչ Ալեք-պօլը անսպասելի կերպով պարտվեց և մեզ ոչ մի հրահանգ չը տրուեց։ Այդ ժամանակ ինքնագլուխ մենք դիմադրեցինք Ալեք-պօլից առաջացող տաճիկներին, նոյնիսկ հակառակ Սիլիկեանի կամքին, մինչև որ Արամը որոշեց զօրք ուղարկել Ապարանի սահմանները դիմադրելու համար»[85]։

Քանի որ մինչև Բաշ-Ապարանի տարածքում թուրքական 3-րդ դիվիզիայի հայտնվելը մարտական գործողությունները գլխավորապես ընթանում էին Արարատյան դաշտավայրում՝ գեներալ Սիլիկյանի գլխավորած ռազմական շտաբը և Արամ Մանուկյանը հեռատեսորեն գնահատելով Բաշ-Ապարանի կողմից մայրաքաղաքին սպառնացող իրական վտանգը, այդ ուղղություն են ուղարկում վերոհիշյալ գործիչներին։ Եվ նրանք իրենց մարտական խմբերի աջակցությամբ կարողանում են ի հաշիվ Ապարանի բնակչության, կազմակերպել ինքնապաշտպանական ջոկատներ, որոնք անգնահատելի ծա-

---

[85] Հ. Հ. Կ. Ա., 41—5, էջ 3։

ությունն մատուցեցին Բաշ-Ապարանի ճակատամարտի ողջ ընթացքում։

Սերգեյ Ջալալյանի վկայությամբ՝ Դրոն հասնելով ռազմադաշտ, ի հաշիվ իր զորախմբի համալրում է սակավաթիվ զորավաշտերը և անմիջապես դիմում մարտական գործողությունների[86]։ Անհրաժեշտ էր ժամանակ շահել, մինչև մյուս զորախմբերը տեղ կհասնեին։ Ահա այդ նպատակով՝ Դրոն եղած ուժերով հարձակվում է հակառակորդի վրա և հետ շպրտելով թուրքերին, դրավում է Ապարանը։

Մայիսի 25-ին հայկական բանակային կորպուսի ռազմակայանից Հայոց Ազգային Խորհուրդը ստանում է հետևյալ հեռագիրը.

«Դրոն հարձակվեց և Բաշ-Ապարանի հյուսիսային կողմում ջախջախեց թուրքերին։

Ղոնդախսազ գյուղի մոտակայքում հեծելազորի գրոհի հետևանքով թրատված են 30 ասկյար և մեկ ապա»[87]։

Մայիսի 25-ի հայկական զորախմբերի ձեռնարկած հարձակման հաջողությունը չափազանց կարճատև էր։ Թուրք հրամանատարությունը՝ արագորեն մարտադաշտ նետելով թարմ ուժեր, հուժկու հակագրոհ է ձեռնարկում հայկական զորախմբերի դեմ։

«Առաջին անգամ,— խոստովանում է Դրոն,— մի յարձակում գործեցինք, յաջող, բայց յաջող էլ յետ շպրտեցին մեզ...

Էնպես յետ շպրտեցին, որ Բաշ-Ապարանն էլ ձեռքից առան»[88]։

Առաջին անհաջողությունը լավ դաս էր։ Պարզվում է, որ Բաշ-Ապարանի ուղղությամբ գործում են ոչ թե երկու գումարտակներ, այլ թուրքական 3-րդ դիվիզիայի ողջ ուժերը։

Մայիսի 25-ին թուրքերը զարգացնելով ձեռք բերած հաջողությունը՝ հասնում են մինև Ալիքուշակ և Ջամբլու (Քասախ) գյուղերի մատույցները, ուր նրանց կազմ և պատրաստ սպասում էին Կուռո Թարխանյանի և բաշգառնեցի Մարտիրոսի

---

86 Տե՛ս, Հ. Հ. Կ. Ա. 65—5, էջ 3։

87 Հ. Հ. Կ. Ա. № 503, պ. 14, դ. 6, էջ 20։

88 «Հայրենիք» օր., մայիսի 27։

զորավարները։ Թուրքական զորքերի առաջխաղացման բոլոր փորձերը ձախողվում են։ Դրոյի զորավարներն ապարանցիների աշխարհազորայինների համագործակցությամբ՝ աննկուն պաշտպանությամբ խափանում են թուրքական զորքերի գրոհները։

Հայ զորախմբերի առաջին հարձակումները թեև ձախողվեցին, բայց ձեռք բերվեց ամենակարևորը՝ Դրոն կարողացավ մի փոքր ժամանակ շահել։

Մայիսի 26-ին Բաշ-Ապարանի ճակատն են հասնում գնդապետ Դոլուխանյանի 3-րդ գունդը և Սակելյարի գումարտակի մնացած մասը։ Արդեն Դրոյի տրամադրության տակ էին Սարդարապատի ուղղությամբ գործող նրա զորամասի համարյա ողջ ուժերը։ Վերախմբավորելով տեղ հասած զորաջոկատները՝ Դրոն նույն օրը ուժգին հակահարձակումով թուրքերին հետ է շպրտում Ալիքուշակի մոտերքից և ընդհուպ մոտենում Ապարանին։

1918 թ. մայիսյան կռիվներին ըստ էության հայության մղած գոյամարտի երեք հիմնական (Սարդարապատ, Ղարաքիլիսա, Բաշ-Ապարան) և փոխկապված ուղղություններն էին։ Յուրաքանչյուր ուղղության անհաջողությունը կարող էր ողբերգական ազդեցություն գործել հայ ժողովրդի գոյապայքարի վերջնական արդյունքի վրա։ Այս առումով տվյալ ժամանակահատվածում Բաշ-Ապարանի ճակատամարտը իր պատմական դերով ձեռք է բերում արտակարգ կարևորագույն նշանակություն։

Դրոն հրաշալի էր ըմբռնել իրեն վստահված ճակատի կարևորությունը։ Մայիսի 27-ի հակահարվածը ավելի է ոգեվորում հայ զինվորներին և տեղի բնակչությանը։

Պատմում է Բաշ-Ապարանի ճակատամարտի մասնակից Մխսաք Թորլաքյանը.

«... Անկանոն խումբեր, ոմանք զինեալ, ոմանք կացին ու սուր ձեռքերին, ոմանք ծեր, ոմանք երիտասարդ, իրարու ետեւէ կը մօտենային ու...

— Բարեւ, Դրո ջան, ահա եկանք, հրամայէ։

Եվ Դրոն անհրաժեշտ կարգադրությունները կընէր, բոլորին ծառայությունը ի սպաս դնելու հայրենիքի փրկության գործին։ Պատմական, ճակատագրական օրեր էին. հին Սաս-

բայրը վերակենդանացած էր։ Դարաւոր հայութիւնը յարութիւն էր առած իր մարտական կեցվածքով»[89]։

Թուրքական 3-րդ դիվիզիայի հրամանատարությունը վաղօրոք տիրելով ռազմական առումով կարևոր նշանակություն ունեցող Արագածի մոտակա բարձունքները՝ ծրագրում է օգտագործել տեղանքի բարենպաստ հնարավորությունները և բարձունքներից տեղացող կրակի պաշտպանությամբ թեվանցել ու աջցանի մեջ վերցնելով՝ ջախջախել հայ զինագնդերին։ Ճակատամարտի հաղթական վախճանը պայմանավորված էր ոչ միայն զինվորների խիզախությունից ու մարտունակության հմտությունից, այլև հրամանատարության մարտավարական կարողություններից ու վճռականությունից։

Մի՞թե թուրք հրամանատարությանը կհաջողվեր գերազանցել արդեն բազում մարտերի մասնակցած և միայն հաղթանակի դափնիներ վաստակած Դրոյին։ Բազմակողմանիորեն քննարկելով հակառակորդի հրամանատարության կողմից գործադրվելիք հնարավոր քայլերը, նա մշակում է ճակատամարտը շարունակելու իր տարբերակը։ Քանի որ Արագածի բարձունքները թշնամու կողմից գրաված լինելու պատճառով հայկական զորագնդերը զրկվել էին Արագածի ուղղությամբ հարձակվելու, թևերում տեղաշարժվելու հնարավորությունից, ուստի Դրոն որոշում է հիմնական ուժերը կենտրոնացնել ճակատի կենտրոնում և անապասելի, սրընթաց գրոհով ճեղքել թուրքական զորքերի պաշտպանությունը՝ զրկելով նրանց թևերում ձեռք բերած առավելություններից։

«Ալագեօզում,— պատմում է Դրոն,— ունէի մի բատալիոն (գումարտակ), թողեցի երկու վաշտ։ Էն երկու վաշտն էլ իջացրի։ Բեզերվնի (պահեստային) բատալիոնից էլ երկու վաշտ ուղարկեցի կենտրոն։ Ուրեմն կենտրոնում ունեմ վեց վաշտ»[90]։

Դրոն համարձակորեն մերկացնելով թևերը և նույնիսկ թուլացնելով Արագածի լանջերից հարձակվող թուրքերին դիմադրող միակ գումարտակը՝ յուրաքանչյուր շորս վաշտերից երկուսը տեղափոխում է կենտրոն։ Սակելյարի, Կո-

---

89 Մ. Թորլաքեան, «Օրերուս հետ» Պէյրութ, 1963 թ., էջ 408—409։

90 «Հայրենիք» օր., 1956 թ., մայիսի 29։

բոլկովի ու Ջհանգիր աղայի հեծելազորը առաջավոր գծից դուրս է բերում թիկունք։ Ճակատամարտի նախօրյակին տեղում է հորդ անձրև ու կարկուտ։ Եվ մինչ թուրքերն ծվարած տանջվում էին տեղացող կարկուտի հարվածներից, Դրոն օգտվելով բնության պարգևած դաժան, բայց տվյալ պահին օգտակար շնորհից՝ հետախուզության միջոցով վերջնականապես պարզում է հակառակորդի դիրքերի մանրամասները։

Բացվում է մայիսի 28-ի առավոտը, մի պատմական օր, որն ընդմիշտ պիտի մնա Հայոց պատմության դյուցազնագրքում։

Լուսաբացին Դրոն տալիս է հարձակման հրամանը։ Ճակատամարտի կենտրոնում թուրքերը չդիմանալով հայ զինվորների փոթորկալի կրակին և հուժկու գրոհներին՝ թողնում են դիրքերն ու նահանջում Ապարան։ Թուրք հրամանատարությունը ի պատասխան կենտրոնում հայերի ձեռնարկած հարձակումներին՝ օգտվելով բարձունքներում ունեցած դիրքային առավելություններից, փորձում է հարվածել մեր զորքերի թևերին, ապա թիկունքին։ Սակայն անհերթ էր պորուչիկ Սահակյանի հրամանատարությամբ գործող ընդամենը երկու վաշտերի և ապարանցի աշխարհազորայինների դիմադրությունը։ Բազմաթիվ գրոհներից հետո՝ չկարողանալով ընկճել ռազմաճակատի թևերում մարտնչող հայ զինվորների դիմադրությունը՝ թուրք հրամանատարությունը դիվիզիայի գլխավոր ուժերը նետում է կենտրոն և փորձում հարձակումը զարգացնել այդ ուղղությամբ։ Դրոյի մտահղացումը իրականանում է։ Թուրքերն իրենց ուժերն անառիկ բարձունքներից տեղափոխում են ճակատի կենտրոն, ուր Դրոն նրանցից գաղտնի կենտրոնացրել էր իր զորաջոկատների մեծ մասը։

Ամենավճռական պահն էր։ Անհրաժեշտ էր մի խիզախ թռիչք, անկասելի հարված։ Հրանոթների հզոր կրակի ուղղությամբ Դրոն հարձակման է նետում թիկունքում կենտրոնացված ողջ ուժերը։

Վերհիշելով այդ պատմական պահը՝ Դրոն նշում է.

«Էստեղ էր, որ Կորոլկովն (հեծյալ զինավաշտերի հրամանատար — Հ. Գ.) իր պատմական դերն արեց։ Ասի՝ կավալերիան (հեծելազոր) մեռցնելու եմ ուղարկում։

Եզդիներին էլ ուղարկեցի, Ջհանգիր աղան։

Ամբողջը ատակի (հարձակման) շպրտեցի։

Բայց կավալերիայի պատմության մէջ քիչ ա պատահել, գիտես Վարդգես (Ա. Ահարոնյանի որդին՝ Վարդգես Ահարոնյանը, որը Դրոյից գաղտնի ձայնագրել է Ապարանի և Սուրմալուի կռիվներին նվիրած նրա այս պատմածը — Հ. Գ.) 700 հոգի կավալերիայից 160-ը թափեցին։

Բայց՝ ճղեց։

Ջեմլյակն էլ սպանուեց, ահագին տղաներ սպանուեցին։

Ճղեց, պատռեց ու անցաւ դրանց թիկունքը։

Սակելին (Սակելյարի գումարտակը — Հ. Գ.) էլ շպրտեցինք։

Բայց այդպէս արագ փախուստ ես չէի սպասում թուրքերի կողմից»[91]։

Լեռնալանջերին դիրքավորված թուրքական ջոկատները տեսնելով յուրայինների փախուստը, իրենք ևս լքում են ամրությունները ու նահանջում։ Դրոյի զորքերն արդեն հարձակման են անցնում ճակատի ողջ երկայնքով։ Թուրքական հրամանատարությունը իր զորքերի վերջնական ջախջախումը կանխելու համար մարտադաշտ է նետում պահեստային զորաջոկատներն ու դիրքեր գրավում Տանագիրմազի (Նիգ գյուղը — Հ. Գ.) մոտերքում։ Հարկավոր էր արագորեն զարգացնել հարձակումը և թուրքերին զրկել վերախմբավորվելու ու նոր դիրքերում ամրապնդվելու հնարավորությունից։

«Էստեղ էր,— շարունակում է վերհիշել Դրոն,— որ ասի. «տղերք ջան, յոգնած էք, ջարդուած էք, թշնամու պռչիցը շպիտի կտրուել»[92]։

Չթողնելով ուշքի գալու թուրքերին՝ Դրոն մայիսի 28-ի գիշերը Տանագիրմազի մոտերքում հաղթահարելով հակառակորդի դիմադրությունը գրավում է գյուղը և հաջորդ օրը հասնում մինչև եզդիների Միրաք գյուղը։ Ճակատամարտում վճռական բեկում արդեն կայացվել էր։ Դրոյի գլխավորած զորագնդերի հաղթական գրոհները փլուզեցին թուրքական հրամանատարության Ապարան-Եղվարդ կամ Ապարան-Աշ-

---

91 Նույն տեղում։

92 Նույն տեղում։

տարակ ուղղությամբ Երևանն ու Արարատյան զորախումբը շրջապատման մեջ վերցնելու ռազմական ծրագիրը։

Բաշ-Ապարանի ճակատում հայոց զորքերի հաղթանակի լուրը նույն օրը հասնում է Երևան և ջերմ խանդավառություն առաջ բերում մայրաքաղաքում կուտակված բազմահազար հայության շրջանում։ Ոգեկոչված Բաշ-Ապարանի հաղթությունը ավետող լուրից՝ ժողովուրդը հոծ բազմությամբ շրջափակում է Երևանի Ազգային խորհրդի շենքն ու սրտատրոփ սպասում Սարդարապատի ճակատից սպասվող տեղեկություններին։

«Դրօն,— գրում է Հայոց Ազգային խորհրդի նախագահ Ավետիս Ահարոնյանը,— սեղմել է թշնամուն և հալածում է անխնայօրեն, Սարդարապա՞դը, Սարդարապա՞դը... Ազգային խորհրդի պաշտամբի առջև հազարաւոր ամբոխը հեւում էր անհանգստութիւնից ու անհամբերութիւնից։ Յաղթութեան ձայներ էին շշնջում իրար։ Հաւատա՞լ... յոյսի ու երջանկութեան դողոցք ամէն կողմ։ Ահա Արամը երևաց պատշգամբում շրջապատուած գործակիցներով. հայացքները դարձան նրան։ Հեռագիր կայ ձեռքին, յուզմունքից գունատ է, բայց ժպիտ կայ երեսին։ Այդ մռայլ մարդը ուրախ է իր ձեռքի խորհրդաւոր թերթիկով, որպէս մանուկն իր բռնած թռչնիկով։ Քար լռութիւն։ Բազմութիւնն ասես շնչելուց իսկ դադարել էր, ամբողջ այդ գորշ, եռուն զանգւածը դարձել էր մի հատ աչք և լսողութիւն։ Մովսէսը Սինա լեռից աւելի մեծ պատգամ չէր բերել Իսրաէլին...

«Ժողովո՛ւրդ հայոց, լսեցէք մեր քաջարի հրամանատար զօր. Սիլիկեանի հեռագիրը».—

«Հինգ օրերից ի վեր տևող ճակատամարտը վերջացաւ թշնամու կատարեալ պարտութեամբ»[93]։

Յավոք, խորհրդահայ պատմագիտությունը տասնամյակների ընթացքում ըստ արժանվույն չգնահատելով մայիսյան հերոսամարտերի մասնավորապես Բաշ-Ապարանի ճակատամարտի պատմական նշանակությունն ու իրական արժեքը՝ ժողովրդին անջրպետել էր իր հերոսական ոչ վաղ անցյալի անգնահատելի արժեքների ճշմարիտ իմացությունից։ Որպես

---

[93] «Ալիք» բաց., «Դրօյի յիշատակին», 1956 թ., էջ 49։

խոսուն փաստարկ վկայակոչենք խորդահայ հանրագիտարանում Բաշ-Ապարանի հերոսամարտին նվիրված հետևյալ փոքրիկ հատվածը.

«1918-ին Ապարանի բնակիչները Բաշ-Ապարանի ճակատամարտում զգալի հարված հասցրին թուրք զավթիչներին՝ կասեցնելով Ալեքսանդրապոլից դեպի Երևան շարժվող թուրքական զորքերի առաջընթացը»[94]։ Պատմական իրողությունը կիսաճշմարտանման հայեցակետով արժեքավորելը ոչ մի քննադատության չդիմացող պարզագույն խաբկանք է։ Իրոք, ճակատամարտին մասնակցած աշխարհազորայիններին ներդրումը արժանի է ամենամեծ գնահատականի և գովեստի։ Սակայն, տվյալ պարագայում հարկավոր չէ ունենալ բանական մեծ կարողություն և պատմական դեպքերի իմացության խորը գիտելիքներ, որպեսզի ըմբռնել հետևյալ պարզ ճշմարտությունը. տեղի բնակիչների ուժերից կազմված մի քանի ջոկատները ինչքան էլ հերոսականություն և համարձակություն ցուցաբերեին, այնուամենայնիվ, առանց կանոնավոր զորախմբերի աջակցության ի զորու չէին խոշընդոտել ու ջախջախել թնդանոթներով, գնդացիրներով զինված մի ամբողջ դիվիզիայի հարձակումները։ Ավելին, ձրգտելով նսեմացնել Բաշ-Ապարանի ճակատամարտի պատմական դերը և նրա հրամանատար Դրոյի հիրավի անգնահատելի ծառայությունը՝ ժողովրդի մեջ տարածում էին այն ստահոդ լուրերը. իբր թե Դրոն չի զարգացրել հայոց հաղթական զորքերի ու աշխարհազորի հարձակումները և դրանով իսկ հնարավորություն ընձեռել թուրքերին՝ անվտանգ նահանջել Ղարաքիլիսա և անսպասելիորեն հայտնվելով մարտադաշտում՝ վճռել ճակատամարտի ելքը։

Որպես ապացույց վկայակոչենք Հ. Թուրշյանի «Սարդարապատի հերոսամարտը» և Ծ. Աղայանի «Հոկտեմբերը և հայ ժողովրդի ազատագրական պայքարը» աշխատություններում տեղ գտած հետևյալ պնդումները.

«...Մայիսի 29-ին թուրքերն արդեն գլխովին ջախջախված էին և խուճապահար փախչում էին դեպի Համամլու և Ալեք-

---

[94] Հայկ. Սով. Հանրագիտարան, հ. 1., Երևան, 1974 թ., էջ 503։

սանդրապոլ։ Հայ զորքը հաղթական առաջ է գնում և գրավում՝ Դանագիրմապի խշխող բարձունքները»[95]։

Անկեղծ զգացմունքով նշելով Բաշ-Ապարանի ճակատամարտի հաղթանակը՝ հարգարժան պատմաբանը, այնուամենայնիվ հաջորդ տողերում առանց վարանելու առիթը բաց չի թողնում սևացնելու ու զրպարտելու հաղթական ճակատամարտի դաշնակ հրամանատարին։

«Գրավում է (խոսքը հայոց զորքի մասին է — Հ. Գ.),— շարունակում է Թուրշյանը,— ու կանգ առնում, որովհետև խուճապահար փախչող թուրքերը սպիտակ դրոշ պարզած պարլամենտյոր են ուղարկում Դրոյի մոտ և հայտնում, որ Բաթումում իբր թե զինադադար է կնքվել։ Դրոն ընդունում է տաճիկների առաջարկությունը, դադարեցնում է նրանց հետապնդելը, հնարավորություն ընձեռելով, որ իր դեմ կռվող էսադ փաշայի զորքերն օգնության գնան Ջավիդ փաշային և շարունակեն Ղարաքիլիսայում պարտված հայ բեկորների ջախջախումը Լոռվա ձորում»[96]։

Ջբավարարվելով իր իսկ կողմից հորինված Բաշ-Ապարանի հաղթական ճակատամարտում Դրոյի դերն ու վաստակը նսեմացնող վարկածներով, Թուրշյանը ավելի է խորացնում մտացածին կեղծիքն ու զրպարտությունը.

«...Դրոն Բաշ-Ապարանի ռազմաճակատում, որ հայ ժողովրդի ինքնապաշտպանության կենտրոնն էր դարձել պատերազմական նոր իրադրության մեջ, շուզենալով զրկված լինել միստիկ Ջավրինի և մյուս վարժապետների դափնիներից, զինադադարի ընդունման գործով ասում է, թե երբ թշնամին ընկճված է ու շշմած, իսկ մենք հաղթական ենք, ապա պետք է մարդասիրաբար դադարեցնենք մեր զարկը, որ հակառակորդը հնարավորություն ստանա ուշքի գալու։ Նման ռազմավարության հետևանքով ոչ միայն վերջնական ջախջախման ենթարկվեց Ղարաքիլիսայի հայ զորքը, այլև ապարդյուն անցան Բաշ-Ապարանի և Սարդարապատի այնքան փայլուն հաղթանակները»[97]։

---

95 Հ. Թուրշյան, «Սարդարապատի հերոսամարտը», Երևան, 1956 թ., էջ 165։

96 Նույն տեղում, էջ 165—166։

97 Նույն տեղում, էջ 166—167։

Նույն սցենարով և նույն դիտավորությամբ է առաջնորդվել նաև Ս. Աղայանը, որը հոկտեմբերի լույսի ներքո ներկայացնելով հայ ժողովրդի ազատագրական պայքարը՝ Բաշ-Ապարանի հերոսամարտի հրամանատարին բացառապես ներկայացնում Թուրշյանի կողմից ավելի վաղ վերագրված մեղադրանքները.

«Խուճապի մատնված թուրքերը, ապիտակ դրոշ բարձրացնելով, Բաշ-Ապարանի զորախմբի հրամանատար Դրոյին հայտնում են, որ Բաթումում արդեն զինադադար է կնքվել և առաջարկում են հարձակումը դադարեցնել։ Քաղաքականապես ոչ հեռատես Դրոն իր զինակից դաշնակցականների նման համաձայնում է և դադարեցնում հարձակումը։ Օգտվելով դրանից, էսադ փաշան հնարավորություն ստացավ իր զորքերը շարժել դեպի Ղարաքիլիսա և օգնել Ջավիդ փաշային, որը շարունակում էր հայկական պարտված զորքերի մնացորդների և բնակչության ջարդը»[98]։

Այսպիսի տեսակետները չունեն իրական և ոչ մի հիմք ու բովանդակություն։ Նախ, Ղարաքիլիսայի եռօրյա մարտերն ավարտվել են մայիսի 28-ին և հայկական զորքերն նույն օրն ևեթ թողնելով Ղարաքիլիսան՝ մայիսի 29-ին արդեն գտնվում էին Դիլիջանում։ Դրոյի զորախումբը մայիսի 28-ի գիշերը դեռևս գտնվում էր Ապարանի մոտակայքի Դանագիրամազ (Նիգ) գյուղի մոտերքում։ Եթե նույնիսկ նրա ճանապարհին կանգնած չլիներ անգամ թուրքական գեթ մեկ զինվոր, ապա հայկական զորքը չէր կարող միևնույն ժամանակահատվածում գտնվել Բաշ-Ապարանի ուղղությունում և ճիշտ ժամանակին այնտեղից հասնել ավելի քան 50 կմ հեռավորության վրա գտնվող Ղարաքիլիսա և անմիջապես մտնել մարտադաշտ։

Երկրորդ. ծանոթանալով վերոհիշյալ տեսակետներին դարձյալ բնականոնորեն մի պարզագույն հարց է ծագում, որտեղից, ի՞նչ փաստաթղթից կամ սկզբնաղբյուրից են Թուրշանյանն ու Ս. Աղայանը պարզել, որ «քաղաքականապես ոչ հեռատես Դրոն իր զինակից դաշնակցականների նման

---

98 Ս. Աղայան, «Հոկտեմբերը և հայ ժողովրդի ազատագրական պայքարը» Երևան, 1982 թ., էջ 149։

համաձայնում է և դադարեցնում հարձակումը», որի հետևանքով էսադ փաշային հնարավորություն է ընձեռում «գերձայնային արագությամբ» Բաշ-Ապարանից, նույն օրը՝ մայիսի 29-ին հասնել Ղարաքիլիսա, որտեղ ի դեպ, այլևս հայկական զորքեր չկային, և օգնել Ջավիդ փաշային վերջնականապես ջախջախելու «հայկական պարտված զորքերի մնացորդներին»։ Ավելին, Հ. Թուրշյանը նույնիսկ բառացիորեն մեջբերում է, իբր թե Դրոյի կողմից ասված խոսքերը։ Այդ դեպքում բարեխիղճ պատմաբանը պարտավոր է նշել, ցույց տալ այն փաստաթուղթը, կամ սկզբնաղբյուրը, որտեղից օգտվել է։ Պատասխանը միանշանակ է. այդպիսի փաստաթուղթ և սկզբնաղբյուր գոյություն չունի և երկու հեղինակներն էլ շփոթելով մտացածին պատկերներ հորինելուց՝ առաջնորդվել են միայն մեկ նպատակով. խեղաթյուրել ու վարկաբեկել այն ամենը, ինչ ձեռք էր բերվել Հ. Հ. Դաշնակցության և նրա ականավոր գործիչների ջանքերով։

Երրորդ. դիմենք արխիվային փաստաթղթերի օգնությանը։ Գեներալ Նազարբեկյանի ռազմական շտաբի կողմից Կովկասյան բանակին և Հայոց Ազգային խորհրդին հասցեագրված զեկուցագրերից վկայակոչենք հետևյալ փաստաթուղթը.

Մայիսի 29-ին Բաշ-Ապարանի ջոկատը մոտեցավ Բաշ-Ապարանի բարձունքներին։ Հրանոթային հզոր մենամարտից հետո թուրքերը հետ շպրտվելով Ջինգիլ և Փոլիջա սարերի կողմը՝ ձեռնարկում են ևս մեկ հակահարձակում, բայց նորից հետ են շպրտվում ու նահանջում։

Եվս մեկ կարևոր փաստարկ։ Վկայակոչենք այդ օրերին Բաշ-Ապարանի ուղղությունից ստացված ռազմական երկու ամփոփագրերը։

«Մայիսի 30-ին Բաշ-Ապարանի ուղղությունում հետ շպրտված թուրքերը կանգ են առնում և ամրապնդվում»[99]։

Եվս մեկը.

«Հունիսի 2-ին Բաշ-Ապարանի ուղղությունից ստացվել է

---

[99] Հ. Հ. Կ. Ա., 503, ց. 14, գ. 6, էջ 22։

հեռագիր, ըստ որի թուրքերը ակտիվություն են ցուցաբերել, բայց մեր հրետանու կրակի շնորհիվ հետ են շպրտվել»[100]։

Բաշ-Ապարանի ճակատից հաղորդված վերոհիշյալ ամփոփագրերից դժվար չէ հասկանալ, որ թուրքական զորքերը ոչ թե «Դրոյի թողտվությամբ» աներևակայելի արագությամբ կարողացել են մայիսի 28-ին հայտնվել Ղարաքիլիսայի ճակատում, այլ համաձայն նաև գեներալ Ղորղանյանի հավաստման՝ դիրքեր գրավելով. «...Դիզքեանդ, Գիւզալդարէ, Աղքուլա եւ Մունջուխլի»[101] գյուղերի ուղղությունում, նույնիսկ փորձել են դիմել հարձակողական գործողությունների։

Իրականում Սարդարապատի և Բաշ-Ապարանի ուղղություններում մայիսի 28-ից հետո տեղի ունեցած իրադարձությունների ճշմարիտ գնահատականը դժվար է փնտրել միայն հայ-թուրք փոխհարաբերությունների շրջանակներում։

Մայիսի 26-ին լուծարքի է ենթարկվում Անդրկովկասյան Սեյմը և նույն օրը Վրաստանի Ազգային խորհուրդը ապավինելով Թուրքիայի դաշնակից Գերմանիայի հովանավորությանը՝ Ն. Ժորդանիայի գլխավորությամբ հռչակում է Վրաստանի անկախությունը։ Հաջորդ օրը նույն բովանդակության հռչակագիր է ընդունում նաև ազերի Ազգային խորհուրդը։

Չկար այլևս հայերին, վրացիներին ու ազերիներին գոնե ձևականորեն միավորող Կովկասյան հանրապետությունը։ Հայոց Ազգային խորհրդի առջև ծառացել էր լուծելու հետևյալ խնդիրը. կամ ընդհատել Բաթումիի բանակցությունները, հրաժարվել թուրքերի հետ բանակցելուց և շարունակել պատերազմը, կամ ծանր զիջողությունների գնով հռչակել Հայաստանի անկախությունը։

Անժխտելի փաստ է, որ հաղթական մարտերից ոգեշնչված հայկական զորքերը թե ռազմական, և թե բարոյա-հոգեբանական առումով պատրաստ էին զարգացնել ձեռք բերված հաջողությունը։

Իսկ Արարատյան զորախմբի հրամանատար գեներալ Սիլիկյանն ելնելով ռազմաճակատում տիրող նպաստավոր կացությունից և հայ զինական ուժերի մարտական տրամ-

---

100 Նույն տեղում, էջ 23։

101 «Հայրենիք» ամս., 1928 թ., մարտ, էջ 125—126։

մադրությունից՝ նպատակադրվում է գրավել Կաքան ու Ալեքսանդրապոլը։ Սակայն նույն օրերին Բաթումիում ընթացող բանակցություններում հայ-թուրք պատվիրակությունների միջև հենց մայիսի 28-ին կայացվում է զինադադարի ժամանակավոր համաձայնություն, որի մասին ռազմաճակատի տարբեր հատվածներում մարտնչող հրամանատարներն արդեն հաջորդ իսկ օրը ստանում են գեներալ Նազարբեկյանի հրամանը։

Դրոն հայ և թուրք հրամանատարության միջև կնքված ժամանակավոր զինադադարի մասին տեղեկանում է մայիսի 29-ին։ Ինչպես նա, այնպես էլ Արարատյան ուղղության զորահրամանատարները գեն. Սիլիկյանն ու Սարդարապատի հայկական զորագնդի հրամանատար Դանիել Բեկ-Փիրումյանը, որպես զինվորականներ, պարտավոր էին կատարել գլխավոր հրամանատարության հրամանը։

Պիտի նկատել, որ զինադադարի հրամանն ստանալուց հետո երկուստեք ակտիվ մարտական գործողություններ չեն ծավալվել ոչ միայն Բաշ-Ապարանի, այլև Սարդարապատի ուղղությունում, չնայած մասնակի բախումներ շարունակվել են ընդհուպ մինչև հունիսի կեսերը։

Անժխտելի է նաև այն իրողությունը, որ թուրքական հրամանատարությունը երբեք չէր նպատակադրվի գնալ զինադադարի, եթե չլիներ Սարդարապատի, Բաշ-Ապարանի և Ղարաքիլիսայի ուղղություններում հայոց զորքերի կողմից ստացած ջախջախիչ հարվածները։

Նազարբեկյանի հրամանը խորը հիասթափություն և վրդովմունք է առաջ բերում մայիսյան հաղթանակներից գոտեպնդված հայ զինվորների ու բնակչության շրջաններում։

Վերլուծելով այդ օրերին Երևանում տիրող դրամատիկ իրավիճակը՝ Ս. Վրացյանը գրում է.

«...Ցուսահատությունը անսահման էր. Ազգային խորհուրդը անընդհատ նիստեր էր գումարում, բայց որոշ եզրակացության չէր կարող յանգել. մեծամասնություն չէր կազմում։ Արամը գրեթե չէր մասնակցում այդ նիստերին. նա ամփոփվել էր իր մեջ եւ սպասում էր զօր. Նազարբեկյանին։ Ազգային խորհուրդն ալեկոծւում էր առանց նրան — ոմանք առաջարկում էին հաշտել կացության հետ եւ ընդունել Բաթումի

դաշնագրի պայմանները, ուրիշները — գլխաւորապէս, դաշնակցականները — պահանջում էին չեղեալ համարել զօր. Նազարբէկեանի հեռագիրը հաշտութեան մասին, զօրքերի ընդհանուր հրամանատար նշանակել զօր. Սիլիկեանին և շարունակել պայքարը։

... Ցուցարարները. կանայք ու օրիորդներ — դրօշակները ձեռներին՝ կանգնում էին Ազգային խորհրդի շէնքի առջև եւ ներկայացուցիչների բերանով յայտարարում, թէ իրենց շրջանը ամբողջ ունեցվածքն ու կուռղ ուչերը տրամադրում է Ազգային խորհրդին, միայն թէ թշնամու պայմանները չընդունեն։

Վճիռ տալը անչափ դժուար էր. վտանգը շատ էր մեծ։ Հայկական զօրքերի ընդհանուր քանակը այդ օրերին հասնում էր 30 ոչ լրիւ գումարտակների, մինչդեռ Թուրքիան շարժման մէջ էր դրել 5 դիվիզիա (3-րդ, 5-րդ, 9-րդ, 11-րդ, 36-րդ), այսինքն 50 գումարտակ եւ ի վիճակի էր նորանոր ուժեր հասցնելու։ Հայ զինուորների թիւը 12000-ը չէր անցնում։ Թիւրքերն առաջ էին քաշել 35000 կուռղ։

Ազգ. խորհուրդը չկարողացաւ միակամութիւն երեւան բերել, եւ զօր. Սիլիկեանին մնաց ենթարկուել զօր. Նազարբէկեանի հրամանին։ Պատերազմը վերջացաւ»[102]։

Իրոք, ռազմաճակատում և հատկապես Անդրկովկասյան հանրապետության բարձրագույն մարմիններում ստեղծված շափազանց բարդ և քաոսային իրավիճակը դժվարին երկընտրանքի առջև էր կանգնեցրել Հայոց Ազգային խորհրդին։ Մայիսի 26-ին վրաց և մայիսի 27-ին ազեր կողմից Անդրկովկասյան կառավարության կազմից դուրս գալու և անկախության հռչակագրերի ընդունման քայլերը նոր կացության առջև կանգնեցրեց Հայոց Ազգային խորհրդին։

Մայիսի 29-ին Թիֆլիսում գումարվում է Հ. Հ. Դաշնակցության Արևմտյան և Արևելյան բյուրոների, Ազգային խորհրդի դաշնակցական ներկայացուցիչների, ինչպես նաև Սեյմի հայ պատվիրակների միացյալ խորհրդաժողովը, ուր

---

[102] Ս. Վրացեան, «Հայաստանի Հանրապետութիւն» Պէյրութ, 1956 թ., էջ 144—145։

մեկ անգամ ևս քննարկելով Անդրկովկասում և ռազմաճակատում տիրող քաղաքական ու ռազմական իրավիճակը՝ որոշվում է Հայաստանը հռչակել անկախ հանրապետություն։ Եվ խորհրդաժողովի վճռից հետո միայն Հայոց Ազգային խորհուրդը որոշում է ընդունել հետևյալ հռչակագիրը.

«Անդրկովկասի յայտարարութիւնն քաղաքական ամբողջութեան լուծումով և Վրաստանի ու Ազրբէջանի անկախութեան հռչակումով ստեղծուած նոր դրութեան հանդէպ Հայոց Ազգային խորհուրդը իրեն յայտարարում է հայկական գաւառների գերագոյն և միակ իշխանութիւն։ Որոշ ծանրակշիռ պատճառներով թողնելով մօտիկ օրերում կազմել Հայոց Ազգային կառավարութիւն, Ազգային խորհուրդը ժամանակաւորապէս ստանձնում է կառավարութեան բոլոր ֆունկցիաները հայկական գաւառների քաղաքական և վարչական գեկը վարելու համար»։ 1918 թ. մայիս 30, Թիֆլիս, Հայոց Ազգային խորհուրդ[103]։

Մայիսյան հերոսամարտերը հայ ժողովրդի ազգային ազատագրական պայքարի միասնականության և անպարտողու դրսևորման հիասքանչ օրինակ են, որոնց ծնունդն ու արդյունքն էր Հայաստանի Հանրապետությունը։ Հարյուրամյակներ շարունակ ազգային պետականությունը կորցրած հայությունը անպատմելի արհավիրքների ու հերոսական մաքառումների գնով ձեռք բերեց իր հայրենի փոքրիկ հողակտորում գոյատևելու, ազատ ու անկախ ապրելու իրավունք։

Ահա պատմական այդ իրողության Դրոյի գնահատականը.

«Կատարուեց հրաշքը։ Դաշնակցութիւնը կարողացաւ ի մի հաւաքել եւ գոյապայքարի ճակատ նետել հայութեան բոլոր կենդանի ուժերը։ Հայաստանն ամբողջ, մեծով-պզտիկով, ոտքի կանգնեց եւ պատուով մեռնելու կամ ազատ ապրելու վճիռով կուրծք տուեց թշնամուն։ Որքա՜ն յուզիչ դրուագներ եւ հերոսական դէպքեր կարելի է նկարագրել այն կռիւներից, որոնց արդիւնքը եղաւ մայիսի 28 պատմական թուականը։ Սարդարապատի, Ղարիքիլիսէի եւ Բաշ-Ապարանի ճակատամարտերուն մէջ իր տարած անօրինակաւ յաղ-

---

[103] Հ. Հ. Կ. Ա., թիւ 1/1, տիպ. 6։

թանակներով՝ հայ ժողովուրդը տիրացաւ ազատ եւ անկախ ապրելու անփոխարինելի բարիքին։ Այդ ճակատամարտերն եղան պատճառ, որ տաճիկները հարկադրուեցին դաշինք կնքել հայերի հետ եւ ճանաչել Հայաստանի անկախութիւնը։

Յարգա՜նք հայ ժողովրդին, նրա յեղափոխական մարտիկներին եւ ղեկավարներին, փա՜ռք հայ բանակին եւ նրա անձնուէր զինուորներին ու սպաներին, որոնք գիտցան արհամարհել ամէն դժուարութիւն եւ կամքով խոյացան մահուան դէմ՝ մինչեւ արեան վերջին կաթիլը կռուելու վճռականութեամբ։

Այդ հերոսների կերտած թուականն է մայիսի 28-ը»[104]։

Դրոյի մարտական գործունեութեան այդ ժամանակահատուածին փոքր ինչ իրազեկ մարդը կարող է անվարան հաստատել Սիմոն Վրացյանի հետեւյալ կարծիքը.

«Յիշենք միշտ, որ եթէ այսօր Հայաստանը Հայաստան է իր ազգային կազմով և ազգային պետական կառոյցով, հայութիւնն այդ բանի համար երախտագետ պէտք է լինի առավելապէս Արամին ու Դրոյին և իհարկե, Արարատեան աշխարհի հայ ժողովրդին ու գործիչներին»[105]։

Հունիսի 4-ին հայ և թուրք պատվիրակությունների միջև ստորագրվում է նաև պատերազմը դադարեցնելու մասին համաձայնագիրը։

Հայոց զորքերի հրամանատարությանը այլևս ոչինչ չէր մնում անելու, բացի վերոհիշյալ համաձայնագրի կենսագործումից։

Զինադադարի հրամանն ստանալուց հետո նույնպես անորոշ վիճակում հայտնված Դրոն վերադառնում է Երևան։ Հայկական զորքերի հրամանատարական կազմի շրջանում դարձյալ տիրել է իրարամերժ տեսակետներ պատերազմի հետագա ընթացքի վերաբերյալ։

Գեներալ Սիլիկյանի տեսակետն արդեն հայտնի է։ Սակայն կային նաև այնպիսի ռազմական գործիչներ, որոնք համաձայն էին անգամ Երևանն հանձնելու գնով ձեռք բերել կռիվներ դադարեցնելու համաձայնությունը։ Բաշ-Ապարանի

---

104 «Հայաստանի Հանրապետության 60-ամեակը., 1918—1978», էջ 5։

105 Ս. Վրացեան, «Կեանքի ուղիներով» հ. դ., էջ 182։

փառապանծ հաղթանակի գլխավոր հերոսն այլ ընտրանք չէր կարող ունենալ։ Դրոյին խիստ զայրացրել էր մեծ զոհողությունների ու զիջողությունների գնով թուրքերի հետ հաշտություն կայացնելու քարոզիչների տեսակետը։ Այս կապակցությամբ արդեն բազմիցս հիշատակված Մարտիրոսը պատմում է մի ուշագրավ դրվագ.

«Երեւանում տեղի ունեցած խորհրդակցության մասին լսեցինք, թէ զօրավար Բէդժանբէգովը եւ Դրօն ընդհարուել են։ Զօրավարը յայտնել է, որ եթէ տաճիկները ցանկանան վերցնել Երեւանը, մենք պէտք է տեղի տանք, քանի որ դիմադրել չենք կարող։ Իսկ Դրօն առարկել է ասելով.

«Դու նախ քո կինն ու աղջիկները տար յանձնիր տաճիկներին, ապա քեզ իրաւունք համարիր տաճիկներին յանձնելու հայ գիւղացու կինն ու աղջիկները առանց կռուի»։

Ընդհարումը այն աստիճանի է հասել, որ Դրօն ցանկացել է ատրճանակով խփել զօրավար Բէդժանբէգովին, բայց արգիլել են նրան»[106]։

Ինչպես հունիսի 4-ին կնքված զինադադարին՝ դրությունը ռազմաճակատի տարբեր հատվածներում դեռևս շարունակվում էր մնալ լարված ու անորոշ։ Թուրքերն՝ այս անգամ էլ հավատարիմ գտնվելով զինադադարը խախտելու իրենց հարազատ սկզբունքին, մերթ ընդ մերթ մինչև հունիսի վերջերը վերսկսում էին հարձակումները և Սարդարապատի և թե Բաշ-Ապարանի ուղղություններում։ Հիշյալ ճակատներից այդ օրերին ստացված տեղեկագրերն ակնհայտորեն ապացուցում են, որ թուրքերի համար ծայրաստիճան դժվար էր եղել հաշտվել անգամ ընդամենը 11000 քառակուսի կիլոմետր տարածք ունեցող նորաստեղծ հանրապետության գոյության հետ[107]։

Համաձայն զինադադարի՝ սահմանված գոտիներում տեղաբաշխված հայկական զորամասերը մշտապես գտնվել են լարված, կազմ ու պատրաստ վիճակում։

Ավելին, օգտվելով թուրքական զորքերի մերձությունից ռազմական ու բարոյական աջակցությունից, դարձյալ գլուխ

---

106 Նույն տեղում, էջ 107—198։

107 Տե՛ս, Հ. Հ. Կ. Ա., թիւ 1/1, տիպ 6։

են բարձրացնում Հայաստանի տարածքում բնակվող թուրք զինված զանգվածները։ Զանգիբասարի և Վեդիբասարի շրջանների ողջ տարածքը վերածվում է թուրք հրոսակախմբերի զինված ելույթների ռազմաբեմի։ Ինչպես և ամիսներ առաջ՝ թուրք զանգվածների «խաղաղացնելու» գործը դարձյալ ստանձնում է Զանգիբասարի ռազմաճակատի զորահրամանատարությունը ընդունած Դրոն։

Հուլիսի 10-ին Հայաստանի Հանրապետության կառավարության անդամները վարչապետ Հովհաննես Քաջազնունու գլխավորությամբ ժամանում են Երևան։ Աննախանձելի առաքելություն էր վիճակվել իրականացնելու հանրապետության նորընտիր ղեկավարությանը։ Երկիրը ծայրահեղորեն քայքայված, տասնյակ հազարավոր անապաստան գաղթականներ, սով ու համաճարակ, իսկ մյուս կողմից մայրաքաղաքից ընդամենը մի քանի կիլոմետր հեռավորության վրա կենտրոնացած թուրքական զորքեր և այդ ամենից զատ թուրք հրոսակախմբերի զինված ելույթներ։

Դարձյալ առաջնահերթ խնդիրն է դառնում երկրի քաղաքական իրավիճակի կարգավորման հարցերի լուծումը, առանց որի անհնարին էր որոշակի քայլեր ձեռնարկել նորաստեղծ հանրապետության տնտեսական և սոցիալ-քաղաքական կյանքի կարգավորման ուղղությամբ։ Անհրաժեշտ էր վճռական քայլեր ձեռնարկել արմատախիլ անելու զինված ելույթներն և հանրապետության կառավարությանը հնարավորություն ընձեռել լրջորեն զբաղվելու հայոց պետականության հիմքերի կառուցման ու ամրապնդման խնդիրներով։

Այն օրերին, երբ Երևանում Սարդարապատի և Բաշ-Ապարանի ճակատամարտերի մասնակիցները հանդիսավորությամբ դիմավորում էին Քաջազնունու կառավարության անդամներին, հայոց զորագնդերը Դրոյի գլխավորությամբ գրոհում են Զանգիբասարի և Վեդիբասարի շրջաններում գործող թուրքերի ռազմական հենակետերի վրա։

Դրոյի զորագնդերի հարվածներն ինչպես միշտ անվրեպ էին։ Ջախջախված թուրք զինախմբերը՝ վերջնական կործանումից փրկվելու համար, ստիպված հանձնվում են հաղթողի ողորմածությանը։ Դրոն այս անգամ էլ փայլուն

կերպով է իրականացնում թուրքերին «խաղաղեցնելու» գործողությունները։

Հանրապետության տարածքում թուրք զանգվածների վառած հրդեհը մարելուց հետո Դրոն ստանձնում է հայոց զորքերի Երևանյան զորախմբի հրամանատարությունը։ Այդ նշանակումը պատահական չէր։ Ռազմական առումով Երևանյան զորախմբի հրամանատարի ուսերին տվյալ ժամանակահատվածում դրված էր թերևս ամենածանր և պատասխանատու պարտականությունը։ Ինչպես արդեն նշվել է, թուրքական զորաբանակը գտնվում էր Երևանից ընդամենը մի քանի կիլոմետր հեռավորության վրա և բացառված չէր, որ թուրք հրամանատարությունը ցանկացած պահին խախտեր զինադադարի համաձայնագիրը և զորքերը շարժեր մայրաքաղաքի վրա։ Զինվորների զգոնությունն ու մարտական կուռ պատրաստությունը պատշաճ բարձրության վրա մշտապես պահելու և ավելորդ բախումներից խուսափելու համար, հրամանատարից պահանջվում էր լարված, հաստատակամ աշխատանք ու ծայրաստիճան զգուշություն։

Դրոն պատվով է հանձնում այս քննությունը ևս։ Իզուր չէր, որ նորաստեղծ հանրապետության զինված ուժերի հրամանատարությունը հենց նրան է վստահում այդչափ պատասխանատու գործը։

Շատ ուտով նրան սպասում էր մի նոր փորձություն, ուր նա կրկին անգամ պիտի հաստատեր իր անհաղթ զորահրամանատար լինելը։

1918 թ. դեկտեմբերին բռնկվում է հայ-վրացական ընդհարումները։

Ծանր օրեր էր ապրում նորաստեղծ հանրապետությունը, մի կողմից երկրում տիրող ծանր կացությունը, բազմահազար գաղթականության սովյալ ու թշվառ վիճակը, մյուս կողմից մուսաֆաթիստական Ադրբեջանի դավերն ու Ղարաբաղի, Զանգեզուրի, Նախիջևանի նկատմամբ ունեցած զավթողական հավակնությունները և հանկարծ հողային տարածքների առընչությամբ Վրաստանի հետ բռնկված ընդհարումները։

Անդրկովկասում վարչա-տարածքային հարցը վաղուց էր հասունացել և այն իր լուծումը պիտի գտներ դեռևս մինչ փետրվարյան հեղափոխությունը։

Անդրկովկասյան ժողովուրդների՝ հայերի, վրացիների և ազերիների միջև գոյություն ունեցող հողային, սահմանային վեճերը հիմնականում կապված էին Հայաստանի պատմական գավառների՝ Արցախի, Զանգեզուրի, Ախալքալակի և Բորչալուի, իսկ հայ-վրացական ընդհարումների նախօրերին նաև Լոռի-Փամբակի տարածքների պատկանելության վիճարկման հետ։

Ինչպես հայտնի է, Արցախի և Զանգեզուրի գավառները ցարական կառավարության կողմից մտցվել էին առավելապես մահմեդական հավատքին դավանող բնակչություն ունեցող Ելիզավետպոլի, իսկ Ախալքալակի ու Բորչալուի գավառները Թիֆլիսի նահանգի կազմում։

Հիշյալ գավառներում բնակվում էին 26000 հայեր, 7000 վրացիներ և 3000 այլազգիներ[108]։

Հայ-վրացական խնդիրների առնչությամբ արխիվային փաստաթղթերի ուսումնասիրությունը հստակորեն մատնանշում է, որ վրաց քաղաքական կուսակցությունները մինչև Անդրկովկասում անկախ հանրապետությունների հաստատումը այդ հարցերի լուծման վերաբերյալ պաշտպանել են հետևյալ դիրքորոշումը. «...Սոցիալ-դեմոկրատները(մենշևիկները հայտարարել են. «Ինքնակառավարման տերիտորյալ սահմանները պետք է որոշվեն ըստ այդ շրջաններում մեկ կամ այլ ազգերի բնակչության տոկոսային հարաբերության՝ միաժամանակ հաշվի առնելով նաև այդ ազգերի տնտեսական ու մշակութային պայմանները։ Իսկ երբ սահմանները որոշվեն, ապա այն պետք է հաստատվի այդ շրջաններում բնակվող ժողովուրդների հանրաքվեի միջոցով։

Վրացական ֆեդերալ-սոցիալիստական հեղափոխական կուսակցության կոնֆերանսը վրացական սահմանների առնչությամբ որոշեց. Վրաստանի տարածքը պետք է կազմված լինի հետևյալ շրջաններից, Թիֆլիս, Գորի, Դուշեթ, Թելավ, Սիգնախ, Թիոնեթի, Բորչալու, Ախալցիխե, Ախալքալակ, Քութաիս, Բաթում, Սուխում, եթե այդ շրջաններում անց-

---

108 Տե՛ս, Հ. Յ. Դ. Կ. Ա., (Հայ. Հեղափոխական Դաշնակցության Կենտրոնական արխիվ) ԱՄՆ, Բոստոն, 65/1։

կացված հանարաքվեները պետք է համաձայնություն տան նմանօրինակ որոշմանը»[109]։

Վիճելի տարածքային հարցերը նման ժողովրդավարական սկզբունքով լուծելու հարցում հայ և վրացական քաղաքական հոսանքների միջև այդ ժամանակաշրջանում տիրում էր կատարյալ համաձայնություն և փոխըմբռնում։ Սակայն 1918 թ. մայիսի 26-ի անկախության հռչակագիր ընդունելուց հետո Վրաստանի իշխանության ղեկն ստանձնած նախկինում ժողովրդավարական սկզբունքով առաջնորդվող սոցիալ-դեմոկրատները (մենշևիկներ) կտրուկ կերպով փոխում են տարածքային հարցերին վերաբերվող իրենց իսկ դիրքորոշումը։

1918 թ. հունիսին Վրաստանի հանրապետության ղեկավարներ Ռամաշվիլին ու Ժորդանիան այցելում են Հայոց Ազգային Խորհրդի ներկայացչություն և Ավ. Ահարոնյանին, Հովհ. Քաջազնունուն և Ալ. Խատիսյանին իրենց կառավարության անունից հրավիրում մասնակցելու Ախալքալակի, Բորչալուի շրջաններն ըստ ազգային պատկանելիությամբ բաժանելու նպատակով գումարվող խորհրդակցությանը։ Հայոց Ազգային Խորհրդի հանձնարարությամբ հայ պատգամավորներ Խաչատուր Կարճիկյանը, Ալ. Խատիսյանն ու Ղորղանյանը ներկայանում են Վրաստանի կառավարությանը։

Այստեղ նրանց սպասում էր կատարյալ անակնկալ.

«Իրակլի Ծերեթելին հայտարարում է, որ Վրաստանը պետք է վերցնի Ախալքալակը, Ղազախը, Բորչալուն և Փամբակը»[110]։

Մինչ այդ բոլորովին այլ տեսակետ պաշտպանող Իրակլի Ծերեթելու անսպասելի հայտարարությունը զարմանք ու ցասում է առաջացնում հայ պատգամավորների շրջանում։

«Այս առիթով Խաչատուր Կարճիկյանը հայտարարում է, որ Ծերեթելու հայտարարության մեջ ինքը տեսնում է Հայաստանը Վրաստանի, Ադրբեջանի և Թուրքիայի մեջ բաժանելու հին նախագծի իրագործման գործընթացը։

---

109 Նույն տեղում։

110 Նույն տեղում։

Բողոքը լսելուց հետո Մերեթելին ժամանակ է խնդրում հայկական ներկայացչությունից մտածելու՝ նորից հանդիպելու խոստումով։ Բայց դրա փոխարեն, մի քանի օր անց առանց հայկական կողմի տեղեկության գծվում է Վրացական սահմանները, որի մեջ ներառվում է բոլոր վիճելի շրջանները»[111]։

Վրաստանի կառավարության վերաբերմունքը բավականին հետաքրքիր էր։ Ըստ նրա և Ադրբեջանի կառավարության նպատակադրության Անդրկովկասի ողջ բնակչության ավելի քան 30 %-ը կազմող հայությունը պետք է ամփոփվեր միայն Սևանա լճի ավազանում և Արարատյան դաշտի մի մասում, այսինքն բավարարվեր ընդամենը 11000 կմ² տարածքով, որը կազմում էր Անդրկովկասի միայն 5 %-ը։ Իսկ հայերից մի փոքր պակաս բնակչություն ունեցող Վրաստանը հավակնում էր տիրելու Անդրկովկասի ամբողջ տարածքի 42 %-ին, այսինքն մոտ 8 անգամ ավելի, քան պետք է ունենային հայերը»[112]։

Անդրկովկասի տարածքի մնացած 53 %-ին հավակնում էր տիրել Ադրբեջանը։ Տվյալ ժամանակաշրջանում ի հաշիվ Հայաստանի պատմական գավառների, Անդրկովկասում երկու հզոր՝ Վրացական և Ադրբեջանական տերություններ ստեղծելու հարցում մեր հարևան երկու ժողովուրդների կառավարությունների միջև գոյություն ունեին քաղաքական ու տընտեսական շահերի կատարյալ փոխհամաձայնություն և ներդաշնակություն։

Հայ-ադրբեջանական հակամարտությունը նորույթ չէ։ Հայաստանի Հանրապետության կառավարության համար անակնկալ չէր ադրբեջանական իշխանությունների զավթողական վերաբերմունքը Արցախի և Զանգեզուրի նկատմամբ։ Սակայն բոլորովին այլ էր Վրաստանի պարագան։

Անշուշտ Վրաստանի կառավարության նման ձգտումների և մտադրությունների համար կային որոշակի նախադրյալներ։

---

111 Նույն տեղում։

112 Նույն տեղում։

Նախ, իշխանության ղեկն ստանձնած մինչ այդ ժողովրդավարական քաղաքականությամբ առաջնորդվող վրաց սոցիալ-դեմոկրատներին քաջ հայտնի էր ոչ միայն Հայաստանի, Թուրքիայի և Ադրբեջանի ավանդական հակամարտությունը, այլև մեր երկրի քաղաքական ու տնտեսական կյանքի ծայրահեղորեն խարխլված, անմխիթար իրավիճակը։

2. Վրացական իշխանությունների ինքնավստահ, զավթողական տրամադրությունները մեծապես լիցքավորել էին Թուրքիայի մեծ դաշնակցի՝ Գերմանիայի Թիֆլիսում գտնվող ներկայացուցչությանը, որը վրաց կառավարությանը խոստացել էր տնտեսական և անգամ ռազմական օգնություն հայ-վրացական հնարավոր ընդհարումների ժամանակ։

Վկայակոչենք Թիֆլիսում Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ Ա. Ջամալյանի և Գերմանիայի ներկայացուցիչ Ֆոն Քրեսի միջև կայացած պաշտոնական զրույցից մի ուշագրավ հատված.

«Անդրկովկասում Գերմանական միսիայի ներկայացուցիչ Ֆոն Քրեսը Թիֆլիսում հայտնում է Ջամալյանին, որ հայերն ազատեն «վրացական» տարածքներն առանց արյունահեղության։

Ջամալյանի այն հարցապնդմանը, թե ինչո՞ւ է գերմանական միսիայի ներկայացուցիչը խառնվում վրաց-հայկական գործերին և սատար կանգնում վաղուց ի վեր հայերին պատկանող հողերին հավակնող Վրաստանին, Ֆոն Քրեսը պատասխանել է, որ Գերմանիան գտնվում է Վրաստանի հետ նույն միության մեջ և պարտավորություն է վերցրել պաշտպանել այդ հանրապետության տարածքային շահերը և դա է իրենց միսիայի նպատակը Անդրկովկասում»[113]։

Գերմանիայի զորակցության խոստումներից թևավորված վրաց իշխանությունները քաղաքական և տնտեսական բնագավառում դեռ նոր-նոր ինքնուրույն քայլեր ձեռնարկող Հայաստանի Հանրապետությանը լուրջ մրցակից չէին համարում և այդ պատճառով ձգտում էին ամեն գնով կենսագործել հզոր Վրացական տերություն ստեղծելու պատեհ առիթն ու հնարավորությունները։

---

113 Նույն տեղում։

Ավելին, ըստ վրաց կառավարության սահմանային հարցերն ի օգուտ Վրաստանի լուծումը անհրաժեշտ է, որովհետև. «...հայերի շահն էլ պահանջում է այդ շրջանների Վրաստանի սահմաններում լինելը, որովհետև այդպիսով յանձին Վրաստանի, Կովկասում կը ստեղծի կենսունակ ու հզոր քրիստոնեայ պետութիւն, որը գերմանացիների աջակցութեամբ կը պաշտպանէ եւ հայերին»[114]։

Վիճակն արդեն գցված էր, սահմանային հարցերի վերաբերյալ Վրաց կառավարության այդօրինակ դիրքորոշումը բնականաբար պիտի վերածվեր առճակատման։

Հայ-վրացական հակամարտությունը ավելի է շիկանում, երբ հայկական զորքերը Դրոյի գլխավորությամբ հոկտեմբերի 18-ին մուտք են գործում Լոռը, որը մինչ այդ գրավված էր թուրքական զորքերի կողմից։

Թուրքական զորքերի կողմից բռնագրավված էր նաև Ախլքալակի գավառը, իսկ Բորչալուի շրջանում տնօրինություն էին անում վրացական զորամասերը։

Հարկ է նշել, որ Բորչալուում վրացական զորամասերի հայտնվելը կատարվել է Հայոց և Վրաց Ազգային խորհուրդների փոխհամաձայնությամբ։ 1918 թ. երբ թուրքական զորքերը Ալեքսանդրապոլի գրավումից հետո սպառնում էին հարձակումը զարգացնել դեպի հյուսիս, Հայոց Ազգային խորհուրդը հաշվի առնելով Վրաստանի սահմանների ապահովանության հարցը և ընդառաջելով Ռամիշվիլու և Ժորդանիայի դիմումներին՝ համաձայնվեց, որպեսզի վրացական զորամասերը մուտք գործեին Բորչալուի շրջանը։ Ընդամենը այդ ժամանակ Վրաց Ազգային խորհրդի ներկայացուցիչները հավատացնում էին, որ վրացական զորքերը անմիջապես կպարպեն Բորչալուն, եթե թուրքերը հեռանան Վրաստանի սահմանամերձ շրջաններից։ Սակայն ժամանակը ցույց տվեց, որ վրաց կողմը ոչ միայն չկատարեց իր խոստումը, այլև հիշյալ տարածքների նկատմամբ դրսևորած իր հավակնությամբ պատճառ հանդիսացավ հայ-վրացական ցավալի ընդհարումներին։

---

[114] Ս. Վրացեան, «Հայաստանի Հանրապետութիւն», Թէհրան, 1982 թ., էջ 206։

Հայկական զորագնդի մուտքը Լոռի տեղի ունեցավ ավելի շուտ, քան Գերմանիայի գլխավորած տերությունների միության վերջնական անձնատուր լինելը։

Լոռու տարածքը թուրքական զորքերի կողմից պարպելու իրողությունը Հայաստանի կառավարությանը հայտնի դարձավ դեռևս օգոստոսի 31-ին։ Այդ օրը Օսմանյան արևելյան բանակի հրամանատար Խալիլ փաշան պաշտոնական այցով ժամանել էր Երևան։ Անդրադառնալով Խալիլ փաշայի և Հայաստանի Հանրապետության ղեկավարների հանդիպման մանրամասներին՝ Վրաստանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական հավատարմատարը գրում է.

«Օգոստոսի 31-ին առաւօտեան Խալիլ փաշան Ֆոն-Կրէսսի (Թիֆլիսում Գերմանիայի ներկայացուցիչը — Հ. Գ.), բարոն Ֆրանկենշտայնի (Ավստրիայի դիվանագիտական ներկայացուցիչը — Հ. Գ.) և իմ ուղեկցութեամբ մտավ Երեվան։ Ընդունելութիւնը բաւական սրտագին էր։ Կայարան էր եկել ներքին գործերի մինիստր պ. Արամը, որ Խալիլ փաշայի վաղեմի ընկերն է. Խալիլ փաշան վազելով ընդառաջեց և գրկախառնուեց պ. Արամի հետ։ Դրանից յետոյ Խալիլ փաշան ընդունեց պատուաւոր պահակախմբի պարադը և ապա պատուաւոր հեծելազօրի ուղեկցութեամբ պ. Արամի հետ միասին գնաց քաղաք։ Միւս հիւրերը հետևեցին նրան»[115]։

Երևանում Խալիլ փաշան հանդիպումներ է ունենում հանրապետության վարչապետ Հովհ. Քաջազնունու, խորհրդարանի նախագահ Ավ. Սահակյանի և այլ պաշտոնատար անձանց հետ։ Բանակցությունների ժամանակ քննարկվող բազմաթիվ խնդիրների շարքում եղել են նաև Ախալքալակի և Լոռի-Փամբակի շրջանները թուրքական զորքերից պարպելու հարցերը։ Նույն օրն ի պատիվ Խալիլ փաշայի հանրապետության կառավարության կողմից տրվում է պաշտոնական ճաշկերույթ.

«Ճաշը իր վախճանին էր մոտենում, երբ Խալիլ փաշան, որ փոքր ինչ գինով էր, խնդրեց բերել Անդրկովկասի քարտեզը և երկար նայելուց ու իր շտաբի գլխաւորի հետ խորհրդակցելուց յետոյ վերկացաւ ու յայտարարեց, թէ այլևս

---

[115] Հ. Հ. Կ. Ա., պ. 12, դ. 5, թղթածրար 65/1, էջ 1։

խօսքերը բաւական են, գործ է հարկաւոր եւ ինքը, իբրեւ կառաւարումն իր հայանպաստ խօսքերի խօստանում է երեք օրուայ ընթացքում իր պատասխանատուութեամբ համաձայնութեան գալով հայոց կառավարութեան հետ, դատարկել Հայաստանի գրաւած մասերը (Փամբակ և Լոռի) ամբողջովին կամ մասամբ։

Այս յայտարարութիւնը գերմանացիներին և աւստրիացիներին սկզբում շփոթութեան մէջ գցեց, սակայն վերջը նրանք էլ ուրախ էին (մի տեսակ շարախնդութեան շեշտ կար այդ ուրախութեան մէջ) և մեզ դրդում էին մինչև անգամ խօսք առնել Խալիլ փաշայից, որ Ալեքսանդրապօլը դատարկի...

Ճաշից յետոյ տեղի ունեցաւ պ. Արամի բնակարանում մեր պաշտօնական խորհրդակցութիւնը։

Առաջին հերթին պ. Քաջազնունին դրեց խորհրդակցութեան առաջ Փամբակն ու Լոռին դատարկելու հարցը։ Երկարթեր ու դէմ խօսակցութիւն տեղի ունեցաւ այս շուրջը, եւ հարցը փոխուեց նրանով, որ Խալիլն երեք օրուայ ընթացքում պէտք է իր կառավարութեանը այդ գաւառները դատարկելու առաջարկն անի և համապատասխան հրաման ստանալուց յետոյ դատարկի»[116]։

Հոկտեմբերի 5-ին Խալիլ փաշան դարձյալ ժամանում է Երևան և հայտնում, որ այս անգամ արդեն ինքը հրաման է ստացել դատարկել Լոռի-Փամբակի շրջանները։ Այս հաղորդումից հետո հայ-թուրք զինվորական շտաբի ներկայացուցիչներն անմիջապես մշակում են հիշյալ շրջաններում թուրքական զորքերին հայ զորամասերով փոխարինելու ծրագիրը, որն էլ իրականացվում է նույն տարվա հոկտեմբերի 18-ին։

Դրոյի գլխավորած զորքերի մուտքը Լոռի՝ Վրացական կառավարության համար հարմար պատրվակ է ծառայում, որպեսզի ողջ Անդրկովկասում և տարբեր մակարդակի հանդիպումներում աղաղակի հայերի ռազմական ներխուժման մասին, չնայած ինքը Բորչալուի գաւառի և հայկական այլ շրջանների գրաւումով արդեն տվել էր նախահարձակ լինելու օրինակը։

Հայաստանի կառավարության կողմից Լոռվա գաւառ

---

116 Նույն տեղում, էջ 3։

զորքեր մտցնելու իրողությունը գնահատելով որպես Վրաստանի շահերի դեմ ուղղված քայլ, վրաց արտաքին գործոց նախարարը հոկտեմբերի 19-ին Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Արշակ Ջամալյանին հանձնում է հետևյալ բողոքագիրը.

«Վրաստանի Հանրապետության կառավարությունը տեղեկացավ, որ Թիֆլիսի նահանգի մէկ մասը՝ քոքէր կայարանից սկսած մինչև սահմանակից կամուրջը, այլե՛ւ Սանահինի մօտի շրջանները, սոյն հոկտեմբերի 18-ին գրաւուել են հայկական կանոնավոր զօրքերի առաջին և չորրորդ հրացանաձիգ գնդերի կողմից։ Վրաց կառավարությունը, որ միշտ պատրաստ է խաղաղ, փոխադարձ համաձայնության միջոցով կարգաւորել սահմանների հարցը բարեկամ Հայաստանի Հանրապետության հետ, իր պարտականությունն է համարում յայտնելու, որ քանի այդպիսի համաձայնություն չի կայացել, հայկական զօրամասի մուտքը Թիֆլիսի նահանգի սահմաններից ներս՝ վրաց կառավարության կողմից կը դիտուի որպէս Հայաստանի կողմից արուած ակներեւ մի թշնամական քայլ Վրաստանի նկատմամբ»[117]։

Հայկական զորամասի մուտքը զուտ հայկական ու հայաբնակ Լոռի զայրույթ ու ցասում է առաջ բերում Հայաստանի հանրապետության հետ սահմանների հարցը «միշտ պատրաստ, խաղաղ, փոխադարձ համաձայնության միջոցով կարգավորող» վրաց կառավարության շրջանում։

Վրաց արտաքին գործոց նախարարի վերոհիշյալ հեռագիրը կրկին ուռճացում է, որ գերմանացիների զինուաջակցությամբ իանդավառված Վրաստանի իշխանությունները լի էին հաստատակամությամբ զավթելու Լոռին, որը Վահան Փափազյանի (Կոմս) բնորոշմամբ. «...Հայաստանի թոքն է. առանց այդ գեղեցիկ և ռազմական կարևորություն ունեցող շրջանի և երկաթուղագծին, անկարելի էր շնչել»[118]։

Հոկտեմբերի 20-ի վրաց զինվորական նախարարի հրամանով Սանահինում գտնվող վրացական զրահագնացքի պետ կապիտան Գոգոաձեն Լոռվա հայկական զորախմբի սահ-

---

117 «Հայրենիք» ամս., 1957 թ., թիւ 2, փետրվար, էջ 2—3։

118 Վ. Փափազեան, «Իմ յուշերը» Պէյրութ, 1952 թ., հ. 2, էջ 496։

մանապահ վաշտի հրամանատարությանն է ներկայացնում հետևյալ վերջնագիրը.

«Հիմնուելով Վրաստանի հանրապետության զինուորական նախարարի թիւ 672 հեռագրի վրայ, յանձնարարում եմ ձեզ 24 ժամուայ ընթացքում տեղեկացնել ձեր կառավարությանը, որ դուք պէտք է հեռանաք ձեր այժմ գրաւած տեղից Շահալի կայարանից այն կողմը։ Սպասում եմ ձեր պատասխանին մինչեւ 22 հոկտ.»[119]։

Հոկտեմբերի 21-ին կապիտան Գոգուաձեն զինվորական նախարարությունից ստանում է մեկ այլ հեռագիր.

«Վաղը, ամսի 22-ին, ժամը 12-ին, երկաթուղով ձեզ մօտ են գալիս նահանգային գումարտակի 250 զինուորներ, դէպի Վորոնցովկա է շարժւում զօր Ցիցիանովի զօրամասը՝ բաղկացած մարտկոցներից եւ հետեւակներից։ Զօր. Ցիցիանովի գալուց յետոյ. նա կընդունի բոլոր զօրքերի հրամանատարությունը։ Ամբողջ Բորչալուի գաւառի մաքրագործման եւ մինչեւ Թիֆլիսի (նկատի ունի Թիֆլիսի նահանգը, որի սահմանների մեջ ցարական իշխանությունների կամքով մտցվել էր նաև հայկական Լոռվա գավառը — Հ. Գ.) սահմանները հասնելու պահանջը անպայման է»[120]։

Վրաց զինվորական նախարարության կողմից ձեռնարկվող քայլերը արդեն ոչ այլ ինչ էին, եթե ոչ պատերազմական գործողություններ ծավալելու բացահայտ մարտահրավեր։

Վրաց կառավարության վերջնագիր ներկայացնող հեռագրերը փոթորկահույզ իրավիճակ են ստանում Հայաստանի խորհրդարանում ու կառավարությունում։ Հոկտեմբերի 22-ի Հայաստանի խորհրդարանի նիստում վարչապետ Հովհ. Քաջազնունին հայտարարում է.

«Մեր հողի մի մասը, Լոռի-Փամբակի շրջանում, գրաւուած էր թուրքական զօրքերով։ Մեր կառավարությունը մի քանի անգամ բողոքներ ներկայացրեց թուրքաց կառավարության, ինչպէս նաեւ գերմանական եւ աւստրիական միներներին եւ միշտ պատասխան ստացաւ, որ գրաւումը ժամանակաւոր է։ Հոկտ. 5-ին Խալիլ փաշան Երեւանում

---

119 «Հայրենիք» ամս., 1957, թիւ 2, փետրվար, էջ 8։

120 Նույն տեղում։

յայտնեց մեզ, որ հրաման է ստացուել դատարկել վերոհիշեալ երկրամասերը։ Անմիջապէս մեր եւ թրքական շտաբները գծեցին այդ գործողութեան ծրագիրը, որը սկսուեց հոկտ. 18-ին եւ, առանց որեւէ միջադէպի, շարունակուեց մինչեւ հոկտ. 18-ը, երբ գիշերուայ ժամը 12-ին հեռագիր ստացուեց Դրօյից այն մասին, որ «վրացիները վերջնագիր են ներկայացրել՝ դատարկելու համար մեր ստացած շրջանը մինչեւ Շահալի՝ ու շարժուել Կոբէրի վրայով»։ Նա խնդրում է կարգադրութիւն անել։ Մեր կառավարութիւնը որոշեց չընդունել վերջնագիրը, չյանձնել Շահալի կայարանը եւ զինուած ուժի դիմելու պարագային՝ ցոյց տալ դիմադրութիւն»[121]։

Ինչպէս հանրապետության ծանր կացությանը, այնուհանդերձ, Հայաստանի խորհրդարանն ու կառավարությունը չէին կարող ընդունել վրաց կառավարության վերջնագիրը, որը միանշանակորեն կհանգեցներ ոչ միայն Ջավախք աշխարհի, այլև Լոռի-Փամբակ գավառների կորստյանը։

Հայոց խորհրդարանի որոշման համաձայն վարչապետ Հովհ. Քաջազնունին ի պատասխան վերջնագրի Ա. Ջամալյանի միջոցով վրաց կառավարությանն է հղում հետևյալ հեռագիրը.

«Հայաստանի խորհուրդը լսելով Վրացական հա. 4303 դիմումի և Շահալին պարպելու վերջնագիր-պահանջագրի մասին իմ հաղորդումը, որոշել է. հավանություն տալ կառավարության գործողություններին և առաջարկեց հետագայում էլ հետևել ընդունված ուղղությանը։

2. Պարտավորեցնել կառավարությանը ամեն ջանք գործադրել կոնֆլիկտը խաղաղ ճանապարհով լուծելու համար՝ հուսալով, որ Վրաստանը ձեռնպահ կմնա հարձակողական գործողություններից և չի անցնի իր զբաղեցրած գիծը։

Խնդրում եմ այդ մասին հաղորդել Վրաստանի կառավարությանը։

Հա. 519 մինչեւ նախագահ Քաջազնունի»[122]։

Սակայն ապարդյուն էր սահմանային խնդիրները խաղաղ ճանապարհով լուծելու Հայաստանի կառավարության գոր-

---

121 Նույն տեղում, էջ 3—4։

122 Հ. Հ. Կ. Ա., ա. 12, դ. 5, թղթ. 65/1, թիւ 6։

ծաղրած ջանքերը։ Վրաստանի կառավարության պահանջը մեկն էր. դուրս բերել հայկական զորագնդերը Լոռվա գավառից և Հայաստանի կառավարությանը հարկադրել ընդունել վիճելի բոլոր տարածքների նկատմամբ Վրաստանի իրավասությունն ու գերիշխանությունը։ Ավելին, վրաց կառավարության որոշումով շրջափակվեց Հայաստանի համար կենսական նշանակություն ունեցող Բաթումի-Ալեքսանդրապոլ երկաթուղին՝ կտրելով մեր երկիրը ԱՄՆ-ից և Անգլիայից ստացվող տնտեսական օգնությունից։ Օգտվելով այն հանգամանքից, որ Թուրքիայի պարտության հետևանքով թուրքական զորքերը հարկադրաբար պարպել էին Ախալքալակի շրջանները՝ վրացական զորամասերը դեկտեմբերի 5-ին գրավում են նաև այդ գավառը։ Գրավված տարածքներում վրաց իշխանությունները զենքի ուժով անլուր տառապանքների ու հարստահարումների էին ենթարկում հայ բնակչությանը։ Իսկ Լոռվա մի շարք գյուղերը վրաց զինվորականության զրահագնացքների հրանոթներից ու գնդացիրներից տեղացող կրակով ոմբակոծելն ու քանդելը դարձել էր պարբերաբար կրկնվող սովորական երևույթ։

Ախալքալակի, Բորչալուի և Լոռի-Փամբակի շրջաններում վրաց զինվորները մահվան սպառնալիքով հարկադրում էին հայ բնակչությանը կեղծ վկայություններ տալ՝ իբր թե իրենք հոժարակամ համաձայն են միանալ Վրաստանին և ոչ թե Հայաստանին։

Այդ օրերին Հայաստանի Հանրապետության կառավարության անունով բազմաթիվ հեռագրեր էին ստացվում հիշյալ շրջանների հայ բնակիչներից, որոնցում նրանք իրենց զայրույթն ու բողոքն էին արտահայտում վրաց զինվորների գործադրած վայրագությունների կապակցությամբ։

Վկայակոչենք Ուզունլար գյուղից ուղարկված հեռագիրը.

Հայաստանի զինվորական նախարարին

«Հաղորդում ենք, որ դեկտեմբերի 8-ին վրացական զորքերը փորձել են զենքի ուժով գրավել Ուզունլար գյուղը։

Երկու օր Ուզունլարը գտնվել է հրանոթային կրակի տակ։ Վրացիները սպառնում են ոչնչացնել ուզունլարցիների 1000

տնները։ Խնդրում են օգնության հասնել զոհվող հարազատ ժողովրդին»[123]։

Դեկտեմբերի 12-ին Հայաստանի կառավարության վարչապետ Հովհ. Քաջազնունին վերջին անգամն է դիմում Վրաստանի կառավարությանը.

«Վրաստանի կողմից բռնությամբ զավթած Բորչալուի գավառում վրացական զորքի գործողությունները այդ շրջանում ստեղծել են այնպիսի իրավիճակ, որն այլևս հնարավոր չէ հանդուրժել։ Միայն այդ շրջանից վրացական զորքի դուրս բերումը կարող է կանխել հետագա արյունահեղությունը և հաստատել ամուր բարեկամական հարաբերություններ Հայաստանի և Վրաստանի միջև։ Այդ նպատակով Հայաստանի կառավարությունը պատիվ ունի Վրաստանի կառավարությանը առաջարկելու անհապաղ դուրս բերել վրացական զորքերը Բորչալու գավառի հայկական մասից։ Հրաժարվելու կամ հապաղելու դեպքում Հայաստանի կառավարությունը իր քաղաքացիների ապահովությունը վրացական զորքերի բռնություններից պաշտպանելու նպատակով հարկադրված կլինի ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ»[124]։

Ե՛վ Հայաստանի, և՛ Վրաստանի կառավարությունները վիճելի տարածքների նկատմամբ ունեին իրենց հաստատուն ու միանգամայն հակադիր դիրքորոշումը, որը դիվանագիտական փակուղիներ էր ստեղծում հարցը խաղաղ միջոցներով լուծելու ճանապարհին։

Մնում էր միայն մեկ միջոց՝ դիմել զենքի։

Այժմ արդեն վճռորոշ խոսքը պատկանում էր հայ զորաբանակին և նրա հրամանատար Դրոյին։

Դեկտեմբերի 13-ին Դրոն ստանում է Լոռի-Փամբակը վրացական զորքերից մաքրելու հանրապետության կառավարության հրամանը։ Հայկական զորամասի հարձակումը նախատեսվում էր գարգացնել Վորոնցովկա-Պրիվոլն-Օփրեթ-Այրում ուղղությամբ։ Դրոյի երեք զորաշարքերով գործող զորամասերի հրամանատարներն էին՝ աջ թևում Բաշ-Սպարանի ճակատամարտի հերոսներից զնդապետ Կորոլկովի

---

[123] Հ. Հ. Կ. Ա., 65/1, թիվ 13։

[124] Նույն տեղում, թիվ 14։

գլխավորած 6-րդ գունդը, կենտրոնում՝ փոխգնդապետ Նեստերովսկու 4-րդ գունդը, ձախ թևում՝ գնդապետ Տեր Նիկողոսյանի 5-րդ գունդը և գնդապետ Միրմանյանի ղեկավարությամբ գործող պահեստային վաշտերը։ Հայկական զորամասի կազմում էին ընդամենը 28 հետևակ վաշտեր, 26 գնդացիր, 7 լեռնային թնդանոթներ, և 4 ձիավոր հարյուրյակներ[125]։

Պետք է նկատել, որ Դիլիջան-Լոռի զորամասի մարտական հնարավորությունները բավականին համեստ էին։ Նույն ճակատում գործող վրացական զորաբանակը մարտակազմով, զինվածությամբ և մանավանդ հանդերձանքով, ռազմամթերքի ու սնդամթերքի ապահովվածությամբ զգալիորեն գերազանցում էր կիսասովյալ և վատ հանդերձավորված հայկական զորամասերին։ Վրացական զորքերի կազմում գործում էին նաև թնդանոթներով ու գնդացիրներով հագեցված 3 զրահագնացքներ, որոնք պատերազմի տվյալ ժամանակաշրջանում ռազմական հզոր ուժ էին հանդիսանում։

Հայկական զորաբանակի զինվորական կազմը առանց բացառության ուներ ոչ միայն կռիվների հարուստ փորձ, այլև մարտական ոգի և հրաշալի ֆիզիկական կոփվածք։ Իսկ Վահան Փափազյանի (Կոմս) բնորոշմամբ. «Դրոյի զորագունդը պատերազմներու մէջ թրծուած ուժ մըն էր, իսկ հրամանատարը՝ կորովի, վճռական և յանդուգնի մէկը»[126]։

Դեկտեմբերի 13-ին Դրոն իր զորաբանակին տալիս է հարձակումն սկսելու առաջին հրամանը։

Կռիվների առաջին օրվա արդյունքները հրաշալի էին։ Փոխգնդապետ Նեստերովսկու հրամանատարությամբ գործող զորագունդը հաջողությամբ գրավում է Սանահին, իսկ գնդապետ Տեր-Նիկողոսյանը Վորոնցովկա և Պրիվոլնե բնակավայրերը։ Հայկական զորագնդերը միայն առաջին օրվա մարտերում գերեվարում են տասնյակ զինվորների և զգալի քանակության զենք ու զինամթերք։

Այրումի ուղղությամբ, ուր մարտնչում էր գնդապետ Կորոլկովի զորամասը, հայ զինվորները հաղթահարելով 3

---

125 «Հայրենիք» ամս., 1957 թ., թիւ 2, փետրվար, էջ 10։

126 Վ. Փափազեան, «Իմ յուշերը», հ. 2, Պէյրութ, 1952 թ., էջ 496։

զրահագնացքների ու վրացական զինվաշտերի համար դիմադրությունը՝ գիշերային գրոհով գրավում են Լալվարը և հասնում մինչև Ախտովկա և Հաղպատ։ Զարգացնելով հարձակումը՝ Կորոլկովի զորամասը հայ կամավորների համագործակցությամբ պայթեցնում են զրահագնացքներից մեկը և հաջորդ օրը գրավում Այրում կայարանը։ Ռազմաճակատի մյուս հատվածներում նույնպիսի հաջողությամբ էին ընթանում նաև հայկական մյուս զորագնդերի հարձակումները։

Դեկտեմբերի 15-ին հայկական զորամասերին հաջողվում է գրավել Ալլահվերդին և դուրս գալ Բոլնիս-Խաչեն։ Վրացական զորքերի հրամանատար գեներալ Ծուլուկիձեն Դրոյի զորաբանակի սրընթաց հաղթարշավը կանգնեցնելու նպատակով մարտադաշտ է նետում Թիֆլիսից ժամանած նոր մարտական ուժեր։

Սակայն, դեկտեմբերի 17-ին հայկական զորագնդերը լուռեցի կամավորների ակտիվ աջակցությամբ անկասելի հարվածով խորտակում են վրացական զորքերի կատաղի դիմադրությունը և Ախլաթի կայարանում բռնագրավում հակառակորդի մնացած 2 զրահագնացքներն ու մեծ քանակությամբ ռազմամթերք։

«Մերոնց» խիզախ գրոհով ջարդուփշուր եղան 5-րդ և 6-րդ վրացական գնդերը եւ գվարդիայի սահմանապահ գումարտակները»[127]։

Վրացական ճակատի հրամանատար գեներալ Ծուլուկիձեն հետևելով իր ջախջախված զորքերին՝ փախչում է Սադախլու և Դրոյին որպես ռազմավար թողնում իր սալոն-վագոնը։ Վրացական զորքերը պարտություն կրելով ռազմաճակատի բոլոր 3 ուղղություններում՝ նահանջում և կենտրոնանում են Սադախլու կայարանի շրջանում։ Դրոն փայլուն կերպով է իրագործում Լոռի-Փամբակը վրացական զորքերից մաքրելու հանրապետության կառավարության առաջադրանքը։ Նյութական թույլ ապահովածության մեջ գտնվող հայկական զորագնդերը նրա հրամանատարությամբ հաղթահարելով ձմռան բուքն ու ձյունը և հակառակորդի համառ դիմադրությունը մաքրում են Լոռի-Փամբակի ողջ տարածքը վրացական զոր-

---

[127] Նույն տեղում, էջ 9։

քերից և հասնում մինչև Սադախլու կայարանը։ Իսկ հայկական զորագնդերից մեկին դեկտեմբերի 17-ին հաջողվում է գրավել նաև Բոլնիս-Խաչենը։

Հայկական զորաբանակի սրընթաց առաջխաղացումը տագնապալի իրավիճակ է ստեղծում ողջ Վրաստանում և նրա մայրաքաղաք Թիֆլիսում։ Վրաց կառավարությունը տենդագին միջոցներ է ձեռնարկում կայունացնելու Դրոյի հարվածներից խարխլված ռազմաճակատն ու կասեցնելու հայկական զորաբանակի առաջխաղացումը։ Վրաստանի զինվորական նախարարությունը ռազմաճակատը ուժեղացնելու նպատակով զորահավաքի է կոչում վրաց ողջ մարտական ուժերը։

Դեկտեմբերի 18-ին հրանոթային մարտկոցներով և 1000 զինվորների գլուխն անցած վերջին՝ 4-րդ զրահագնացքի ուղեկցությամբ Սադախլու է ժամանում Վրաստանի զինվորական նախարարը։ Վրացական ճակատի հրամանատար գեներալ Ծուլուկիձեն կենտրոնացնելով ողջ ուժերը՝ պատրաստվում է վճռական ճակատամարտի։

Հարկ է նշել, որ նախորդ մարտերում հայկական զորագնդերը նույնպես զգալի կորուստներ էին կրել։ Ի տարբերություն վրաց զորաբանակի, որոնք անընդհատ համալրվում էին ի հաշիվ թիկունքային զորամասերի, հայկական զորագնդերն այդ օրերին չէին ստանում և ոչ մի համալրում։

Չյան պատճառով ճանապարհների փակվածությունը չափազանց դժվարացնում էր զորքին պարեն և ռազմամթերք մատակարարելու գործը։ Ձմռան խստաշունչ պայմաններում կոիվների հնոցում անընդհատ մարտնչող թերանված հայ զինվորների մոտ արդեն նկատելի էր հոգնածությունն ու գերլարվածությունը։ Չնայած անասելի դժվարություններին, այնուհանդերձ, հայ զինվորների մարտական կորովն ու հաղթելու ձգտումը դեռևս բավականին բարձր էր։ Դրոն լի էր պատերազմը հաղթական վախճանի հասցնելու վճռականությամբ։ Նրա կամքին ու վճռականությանը անգամ չէր կարող խոչընդոտել նաև այն իրողությունը, որ վրաց հրամանատարությունը կարողացել էր ռազմական խոշոր միավորումներ կենտրոնացնել Սադախլուի շրջանը և ի օգուտ իրենց փոխել ուժերի հարաբերակցությունը։ Չերկնչելով վրացական ռազմական ուժերի բացահայտ գերակշռությու-

նեց՝ Դրոն, այնուամենայնիվ, վճռում է իր հրամանատարության ներքո գտնվող զինագնդերով հարձակվել ու ջախջախել գեներալ Մուլուկիձեյի զորքը։

«Գնդ. Տեր-Նիկողոսեանին նա հրամայեց Բոլնիս-Խաչէնից մի գումարտակ առաջ քաշել դէպի արեւելք՝ երկաթուղու կողմը եւ ցուցական շարժումներով օժանդակել Կորոլկովի զօրասիւնին, իսկ Կորոլկովին հրամայեց երկու թնդանօթ եւ 3 վաշտ թողնել Հայրումում եւ մնացած ուժերով, Բարդաձորի եւ Գիւլբէգիի վրայով, անցնելով Դամիա գիւղը, վրացիների թիկունքը՝ ջարդել նրանց՝ լուրջ ուշադրութիւն դարձնել Շուլաւերից Օփրէթ տանող ճանապարհի վրա։ Դեկտ. 19-ին փոխգնդ. Կորոլկովին միացաւ եւ միլիցիոն գունդը 350 զինուորներով ու 2 գնդացիրներով, որին հրամայուեց գրաւել Շուլաւերը»[128]։

Եվ մինչ հայկական զորաբանակի հիմնական խմբավորումները՝ համաձայն Դրոյի հրահանգի ձեռնարկում էին հակառակորդին շրջապատելու ռազմական գործողությունները, 4-րդ գնդի մի քանի հարյուրյակներ փոխտեղակալ Ֆեյերկովսկու և տեղակալ Տեր-Մարտիրոսյանի գլխավորությամբ առանց հրամանատարության գիտության գրոհում և գրավում են Սադախլու կայարանը։ Սակայն հետագա դեպքերն ընթանում են վատթարագույն ուղղվածությամբ։ Սադախլու կայարան է հասնում զրահագնացքը և թնդանոթներից ու գնդացիներից կրակ տեղալով, վրացական զինավաշտերի համագործակցությամբ ջախջախում է Ֆեյերկովսկու և Տեր-Մարտիրոսյանի ջոկատը և գերի վերցնում հրամանատարներին։ Հայկական զինաջոկատի հրամանատարների ինքնագործունեությունը կարող էր բացասաբար անդրադառնալ ճակատամարտի հետագա ընթացքի վրա։ Վրաց հրամանատարությունը ոչ մեծ ջանքերի գնով Սադախլուում կենտրոնացնելով մեծ քանակությամբ մարտական ուժեր՝ զրահագնացքի աջակցությամբ կարող էր արմատական բեկում մտցնել արդեն ընթացող ճակատամարտում։ Անհրաժեշտ էր մասնատել Սադախլուում կենտրոնացած վրացական զորքե-

---

[128] Ս. Վրացեան, «Հայաստանի Հանրապետութիւն», 1982 թ., էջ 222։

րի խմբավորումը և գրկել նրան կենտրոնաձիգ հարված հասցնելու հնարավորությունից։

Ցնայած Սադախլուում հայ զինաջոկատների կրած անհաջողության՝ այնուհանդերձ, անհրաժեշտ էր ձեռքից բաց չթողնել վրացական զորքերին շրջապատելու և ջախջախելու հնարավորությունը, մանավանդ, որ նույն օրը, քաջարի Կուռո Թարխանյանը արդեն հասցրել էր հանդուգն գրոհով գրավել Շուլավերը։ Տվյալ պահին հարկավոր էր գործել արագ, աներկյուղ ու մտածված։

«Շուլաւեր-Սադախլու շրջանում գործող վրաց ուժերի մի մասը մի կողմ քաշելու նպատակով՝ Դրոն հրամայեց գնդ. Տէր-Նիկողոսեանին, դեկտ. 21-ին 1 գումարտակ ու 2 թնդանոթ թողնել Մեծ-Դումանիսում, իսկ մնացած ուժերով շարժել Արախլուի վրա։ Սկսեց տաք կռիւ։ Մերոնք յարձակւում էին անվերջ, վրացիները յուսահատական դիմադրութիւն էին ցոյց տալիս։ Գլխ. Մնացականեանի Շուլաւերի զօրամասը կուի բռնեց Թիֆլիսից նոր հասած վրացական թարմ ուժերի հետ։ Մերոնք քանդեցին Սադախլու-Մամայ երկաթուղագիծը՝ կտրելով վրաց զրահապատի նահանջի ճանապարհը։ Կուռо Թարխանեանը յանդուգն յարձակումներ գործելով Աշաղա-Սարայլի ուղղութեամբ՝ գրաւեց մի թնդանոթ եւ մի գնդացիր»[129]։

Դեկտեմբերի 22-ին Դրոն գրոհի է նետում Ճոճկանի զորախումբը, որը փոխտեղակալ Պետրոսյանի գլխավորությամբ ճեղքում է վրաց զինվորների մարտաշարքերը և ներխուժում Սադախլու։ Փոխտեղակալ Պետրոսյանի զորախմբի հաջողությունը չափազանց կարևոր էր։ Փաստորեն Սադախլուում դիրքավորված վրացական ուժերը մասնատվելով՝ կորցնում են նախկին ուժն ու հզոր հարված հասցնելու հնարավորությունը։ Ճակատամարտը գնալով ավելի է շիկանում։ Գնդապետ Կորոլկովի զինավաշտերը քանդում են երկաթգիծը և զրահագնացքին զրկելով տեղաշարժվելու հնարավորությունից՝ հարձակվում են Սադախլուի մոտակայքում կենտրոնացած վրաց զորախմբի վրա։ Վրաց հրամանատարությունը ստիպված նոր ուժեր կենտրոնացնելով Բոլնիս-Խաչենի մոտակայքում՝ սկսում է անընդմեջ գրոհներ ձեռնարկել Սա-

---

[129] Նույն տեղում, էջ 223։

ֆախլուի շրջանում իրենց զորախմբին շրջափակած հայկական զինավաշտերի վրա։

Դեկտեմբերի 23-ին վերախմբավորելով ուժերը՝ Դրոն վճռական գրոհ է ձեռնարկում վրացական զորամասերի վրա։

Չորս օր տևողությամբ ընթացող կատաղի ճակատամարտն ավարտվում է վրացական զորքերի պարտությամբ։

Գեներալ Մուլուկիձեն դարձյալ դիմում է փախուստի և շնորհիվ շրջակա թուրք բնակիչների օգնության՝ կարողանում է ազատվել անխուսափելի կործանումից։ Իսկ ռազմաճակատի մյուս հատվածներում կռիվները դեռևս շարունակվում էին։ Դեկտեմբերի 24-ին Վրաստանի զինվորական նախարարության հրամանով 1500 զինվորներից կազմված զորագնդի գլուխն անցած ճակատամարտի դաշտն է հասնում ռազմաճակատի նոր հրամանատար, Մուլուկիձեին փոխարինած գեներալ Մազնիևը։

Չնայած կռիվներում ձեռք բերած անժխտելի հաղթանակներին, դեռևս ոչ մի օգնական ուժեր համալրում չստացած հայկական զորաբանակի դրությունը գնալով ավելի ու ավելի էր ծանրանում։ Շրջակայքի թուրք զինյալ խմբերը ակտիվորեն օժանդակելով վրաց զորքերին՝ շարունակաբար հարձակումներ էին գործում հայկական զինաջոկատների վրա։ Թիֆլիսը ռազմաճակատից բաժանող տարածքի փոքրացումը ավելի մեծ հնարավորություն է ընձեռում վրաց հրամանատարությանը՝ ժամանակին և պարբերաբար համարելու իր բանակի մարտաշարքերը։

Զարմանքի ու հիացմունքի էին արժանի հայ զինագնդերն ու նրանց հրամանատարը։ Դեռևս ոչ մի համալրում չստացած ընդամենը 5000 կիսասովյալ զորաբանակը փաստորեն միայնակ մարտնչում էր Վրաստանի հանրապետության ողջ ռազմական ուժերի դեմ և որպես օրենք համարյա բոլոր մարտերն ավարտվում էին հաղթանակով։

Դեկտեմբերի վերջերին վրացական զորքերի նոր հրամանատար գեներալ Մազնիևը համալրելով ու կարգի բերելով նախորդ մարտերում ջախջախված զորագնդերը՝ դիմում է ակտիվ մարտական գործողությունների։

«Զօր. Մազնիևը յետագա յայտարարությունների համա-

ձայն, վրացիները ամբողջ հայկական ճակատի վրա ունէին 8000 կռուողներ»[130]։

Ռազմաճակատի բոլոր հատվածներում հայ զինվորները մարտնչում էին անպատմելի համառությամբ ու խիզախությամբ։ Գեներալ Սանինը օգտվելով իր զորքերի քանակական գերակշռությունից փորձում է չդադարող գրոհներով գերակշռություն ձեռք բերել ռազմաճակատի մերթ այս, մերթ այն հատվածներում, սակայն ամենուրեք հայ զինվորների խիզախ հակահարվածները ձախողում են վրաց զորահրամանատարի ձեռնարկումները։

Դրոն իր մարտական հարուստ կենսագրությունում արդեն բազմիցս ապացուցել էր, որ ճակատամարտերում հաղթելու միակ անհրաժեշտ պայմանը բոլորովին էլ զորքի թվական գերակշռությունը չէ, իսկ մարտերի ընթացքում սոսկ պաշտպանվելը, թեկուզև հաջողությամբ, երբեք նրա դավանանքը չի եղել։ Պատերազմելու նրա տարերքը սրընթաց հարձակումն էր և անսպասելի հարվածելը։

Դեկտեմբերի վերջերին ծավալված կռիվներում հաջողությամբ հետ մղելով վրաց զորքերի հարձակումները՝ նա դարձյալ մտածում էր նոր հարձակում ձեռնարկելու մասին։ Դեկտեմբերի 30-ին նրա համառ պահանջներից հետո վերջապես մարտադաշտ է հասնում երկար սպասված համալրումը՝ ընդամենը 600 զինվոր։ Իհարկե՛, համալրումը այնքան էլ մեծ չէր, բայց տվյալ պարագայում պատերազմելու հարուստ փորձ ունեցող, 600 մարտունակ զինվորների օգնությունը, անտարակույս, կարող էր իր դրական ներգործությունն ունենալ մարտական հետագա իրադարձությունների հաջող զարգացման վրա։ Անհրաժեշտ էր ևս մեկ խիզախ թռիչք, մեկ վճռական հաղթանակ և Վրաստանի մայրաքաղաք տանող մայրուղին բաց կլիներ։

Համալրելով և վերախմբավորելով իր զորագնդերի մարտաշարքերը՝ Դրոն ծրագրում է շրջապատել և ոչնչացնել գեներալ Մազնիևի բանակը։ Մեր զորագնդերի բարոյական ոգին, մարտական կորովն ու հաղթելու ձգտումը դեռևս բավականին բարձր էին։ Հայկական զորքերին իրենց հրանոթների

---

130 Նույն տեղում, էջ 228։

ու գնդացիրների հզոր կրակով գրավեցին նաև վրացիներից բռնագրաված զրահագնացքը։ Դեկտեմբերի 30-ին հայ-վրացական զորքերի միջև սկսվում է վերջին ճակատամարտը։

Դրոյի մտահղացման համաձայն, կենտրոնի հանդիպակաց և թևերից տեղացող շրջանցիկ հարվածներով հայկական զորագնդերը պետք է արագ տեղաշարժերով օղակեին ու ջախջախեին Սադախլուի վրաց զորախմբավորումը, որից հետո արդեն բացվելու էին Թիֆլիս տանող ուղիները։

Սակայն, ինչպես հայտնի է, Սադախլուի մոտակայքում մղվող այդ ճակատամարտը մնում է անավարտ։ Անգլիայի և Ֆրանսիայի դիվանագիտական ներկայացուցիչների միջնորդությամբ Հայաստանի և Վրաստանի կառավարությունները համաձայնվում են դադարեցնել պատերազմը և պարտավորվում սահմանային հարցերը լուծել դիվանագիտական ճանապարհով։

Նկատի ունենալով Դրոյի երկաթյա կամքը, ռազմագետի անբասիր կարողություններն ու նպատակասլացությունը, ինչպես նաև նրա զորաբանակի մարտական փայլուն պատրաստվածությունը, կարգապահությունն ու պատերազմը մինչև հաղթանակը շարունակելու ձգտումները՝ կարելի է անվարան պնդել, որ նա անպայմանորեն կջախջախեր գեներալ Մաղնիևի բանակն ու կգրավեր Վրաստանի մայրաքաղաքը, եթե չլինեին անգլիացիների ու ֆրանսիացիների միջնորդությունները։ Հարց է ծագում, ինչպիսի՞ ճակատագրի կարժանանար Լոռին, եթե Դրոյի զորաբանակին չհաջողվեր գավառը ազատել վրացական զորքերից։ Մեր պատմությունը արդեն տվել է և տալիս է այդ հարցի միանշանակ պատասխանը։ Եթե հայկական զորաբանակին չհաջողվեր Լոռին մաքրել վրաց զորքերից, ապա այն անխուսափելիորեն կարժանանար Արցախի ճակատագրին և նրա նմանողությամբ մինչև օրս կռվածաղիկ կդառնար Հայաստանի և Վրաստանի միջև։

Անտարակուսելիորեն կարելի է պնդել, որ եթե հայկական Լոռին այսօր գտնվում է Հայաստանի կազմում, ապա այդ գործում չափազանց մեծ է Դրոյի և նրա գլխավորած հայ զինվորների, հիրավի, անգնահատելի ծառայությունները։

Ավարտվում է հայ-վրացական պատերազմը։ Բացվում է Բաթում-Օրևան երկաթուղու շրջափակումը, իսկ Լոռվա գա-

վառը հայտարարվում է չեզոք գոտի։ Այս ճանապարհով լուծվում է քրիստոնյա հարևանի հետ ունեցած վիճելի հարցերը։

Վրացական դեպքերից մի փոքր անց Հայաստանի իշխանությունները ձեռնամուխ են լինում լուծելու հանրապետության համար նոր, կենսական նշանակություն ունեցող խնդիրներ, որոնց կենսագործմանը դարձյալ իր գործուն մասնակցությունն է բերում ռազմադաշտից նոր-նոր դուրս եկած և դեռևս կռիվների ծանրությունը չթոթափած Դրոն։

Առաջին աշխարհամարտի ավարտական փուլում հոկտեմբերի 30-ին կնքված Մուդրոսի զինադադարի համաձայն, պարտված Թուրքիան պարտավոր էր իր զորքերը դուրս բերել նաև Կարսի, Սարիղամիշի, Օլթի, Կաղզվանի և այլ շրջաններից։

Հայաստանի Հանրապետության առաջնահերթ և կարևորագույն խնդիրն իր սահմանների ընդարձակման հարցն էր, առանց որի իրագործման անհնարին էր փոքրիկ լեռնաշխարհում ապահովել, առավել ևս զարգացնել, տեղի բնակչության և հարյուր հազարավոր գաղթականության ֆիզիկական գոյությունն ու կենսամակարդակը։ Հայաստանի կառավարության բազմաթիվ և համառ պահանջներից հետո Անդրկովկասի անգլիական գլխավոր հրամանատարությունը 1919 թ. ապրիլին վերջապես համաձայնվում է թուրքական զորքերի կողմից պարպած հայկական տարածքները հանձնել հանրապետության տնօրինությանը։ Նույն ամսին հայկական զորքերը անգլիացիների համագործակցությամբ գրավում են Կարսը, Արդահանը, Մերդենեկը, Սարիղամիշը, Օլթին ու Կաղզվանը։ Սակայն դրանով դեռևս չի սահմանափակվում հանրապետության տարածքների ընդարձակման գործընթացը։ Տվյալ ժամանակահատվածում առավել դժվարին խնդիրը թերևս Շարուր-Նախիջևանի հնազանդեցման ու վերամիավորման հարցն էր։ Հիշյալ շրջանների թուրք բնակչությունը հրաժարվում է ենթարկվել հանրապետության իշխանությանը և բազմիցս իր անհնազանդությունն արտահայտել էր զինված ելույթներով։

Ճիշտ գնահատելով Շարուր-Նախիջևանը Հայաստանին վերամիավորելու անհրաժեշտությունն և տեղի շատ լավ զին-

ված թուրք բնակչության թշնամական տրամադրությունները՝ հանրապետության կառավարությունը այդ շրջաններն «խաղաղացնելու» մարտական գործողությունների ղեկավարումը վստահում է Դրոյին։ Նրան մինչ այդ «բախտ վիճակվել էր» 1905—06 թթ. և 1918 թ. հայ-թուրքական ընդհարումներում սուր խաչաձևելու այդ շրջանների թուրք առաջնորդների և նրանց գլխավորած հրոսակախմբերի հետ։

Մայիսի սկզբներին Շարուր-Նախիջևանի զորախմբի հրամանատար Դրոն մեծ եռանդով անցնում է գործի և արդեն նույն ամսի 12-ին այդ գավառների թուրք բնակչությանը հնազանդության երդում է տալիս Հայաստանի կառավարությանը։

Ապրիլ-մայիս ամիսներին մեր զորքերին հաջողվում է հանրապետությանը վերամիավորել թուրքական զորքերի կողմից պարպած գրեթե ողջ հայկական տարածքները, ուր կառավարության որոշումով բնակություն են հաստատում տասնյակ հազարավոր արևմտահայ գաղթականներ։

Դրոն Հայաստանի կառավարության որոշումով նշանակվում է ռազմական նախարար գեներալ Արարատյանի օգնականը և միաժամանակ ստանձնում Երևանի զորախմբերի զորահրամանատարի պաշտոնը։ Այս նշանակումները պատահական չէին։ Նախ, բացառված չէր, որ Երևանի սահմանամերձ Զանգիբասարի (Մասիսի շրջ.), Ղամարլու (Արտաշատ), Դավալուի (Արարատ), Շարուր-Նախիջևանի շրջանների թուրք բնակչությունը կարող էր որևէ հարմար պահի դարձյալ դիմել զենված ելույթների։

Երկրորդ, երկրի ծայրահեղորեն քայքայված, անկայուն կացությունը պարարտ հող էր նախապատրաստել զանազան մարդկանց ու խմբերի ի հայտ գալուն, որոնք իրենց հակապետական ու քայքայիչ գործողություններով ապակայունացնում էին հանրապետության առանց այն էլ անմխիթար քաղաքական ու տնտեսական իրավիճակը։ Անհրաժեշտ էր ուժեղ ձեռք, որպեսզի սանձեր թուրք բնակչության հնարավոր ելույթները և կարողանար կայուն քաղաքական իրավիճակ հաստատեր մայրաքաղաքում ու նրա մերձակա շրջաններում։

Դրոն իր ծողովրդականությամբ, լայնամասշտաբ տաղանդով և նվիրվածությամբ տվյալ ժամանակահատվածի

հայ նշանավոր այն եզակի գործիչներից էր, որոնք կարող էին մեծագույն պատասխանատվությամբ կենսագործել այդ դժվարին գործը։

Արամ Մանուկյանի կառավարման ապա նաև հանրապետության ստեղծման առաջին տարիներին, Հայաստանի տարածքում հայտնվել էին ինքնակոչ «խմբապետ-մաուզերիստներ», որոնք խմբերի գլուխն անցած, զենքի սպառնալիքով թալանում ու կեղեքում էին հայ գյուղացիներին և քաղաքի ունևորներին։

Խորհրդահայ պատմագիտությունը չխորշելով մեր ժողովրդի անցյալի հերոսական էջերը կեղծելու բարոյազուրկ ու շարամիտ սկզբունքներից՝ հայության ազգային-ազատագրական պայքարի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կյանքում տեղ գտած բոլոր բացասական երևույթները անպայմանորեն վերագրում էր Հ. Հ. Դաշնակցությանը և այդ հողի վրա վարկաբեկում ու խեղաթյուրում բազում հայրենանվեր գործիչների պայծառ անունները։ Անդրադառնալով վերոհիշյալ «խմբապետ-մաուզերիստների» հիրավի անվայելուչ, ազգադավ արարքների լուսաբանմանը՝ խորհրդահայ մասնագետները հայության շրջանում տարիներ շարունակ տարածում էին այդ ամենի մեղքն ու պատասխանատվությունը դաշնակցական գործիչների և հատկապես Դրոյի վրա բարդելու մտացածին հորինվածքները։ Իսկ իրականում պատմական տվյալ ժամանակաշրջանի ուսումնասիրությունը ապացուցում է ճիշտ հակառակը։ Հենց Դրոյի և նրա հրամանատարությամբ գործող մարտական ջոկատների ջանքերով հնարավոր դարձավ Հայաստանի Հանրապետությունում արմատախիլ անել բոլոր տեսակի «հայրենասեր» խմբապետների և մաուզերիստների խմբերին։ Գլխավորապես հենց Դրոյի հաստատակամության և անկաշառ վարվեցողության շնորհիվ է Հայաստանի կառավարությանը հաջողվում կայունացնելու հանրապետության քաղաքական իրավիճակը, որով հնարավորություն է ընձեռվում կառավարությանը զբաղվելու տնտեսական ու սոցիալ-քաղաքական առավել կարևորագույն նշանակություն ունեցող խնդիրների լուծմամբ։

Դրոյի՝ «մաուզերիզմի» հիմնագրի մասին ուշագրավ դա-

տողություններ է ամփոփված գնդապետ Եգոր Տեր-Ավետիքյանի հուշագրությունում։

«..Դրոյին «մեղադրում» են, որ նա եղաւ «Մաուզերիզմի» հիմնադիրը...»։

«...Ես էլ եմ Դրոյի ընկերն ու երկրպագուն, յատարարում ու հաստատում եմ, որ Դրոն էր, որ կավկասահայութեան, խոր մրափի մէջ ընկած շրջանում, «Մաուզերիզմ»-ը հիմնադրեց։ Ահա թէ ինչպէս եղաւ այդ, ինչո՞ւ Դրոն «Մաուզերիստ» դարձաւ։

Զեղ բոլորիդ էլ՝ զէնք չսիրող, զէնքի արժէքը ժխտողներիդ յայտնի է, որ մեր դժբախտութիւնը, մեր կորուստները, մեր ամենաարժէքաւոր մասսայի — հայ գիւղացիութեան վախկոտութեան կամ այլ պատճառների չափի վերագրել, այլ գերազանցօրէն ներքին այն պատճառներին, որոնք են՝ զէնք չսիրելը, զէնքի արժէքը ժխտելը...»։

«...Գոյութեան կռիւը հիմնուած է միայն զէնքի վրայ, այլ ոչ թէ մորալի, շիտակութեան, մարդասիրութեան, արդարութեան սկզբունքների վրայ...»։

«...Ցոյց տուէք, որ Արարչի մի որևէ ստեղծագործութիւն ղրկուած լինի ինքնապաշտպանութեան զէնքից կամ հնարաւորութիւնից եւ այն ժամանակ միայն դատապարտեցէք մեզ, մեր արտայայտած կարծիքի համար, որ գերազանցօրէն Դրոյինն է միևնոյն ժամանակ...»։

...Եւ երբ Հայաստանն ու Դրոն համաձայնեցին իրենց համար էլ մի զէնք գտնել գոյութեան կռիւ համար և մաուզեր ատրճանակն ընդունեցին առաջին հերթին, անիրաւ, զէնք չսիրող, զէնքի արժէքը ժխտող հայն ուրիշ բան չգտաւ եւ միխթարեց իրեն մեզ համար նոր տիտղոս գտնելով՝ «Մաուզերիստներ...»[131]։

Ինչպես արդեն նշվել է, Դրոյի գլխավորած զորախմբերն իրենց զինվածությամբ գրեթե միշտ լավագույնն են եղել։ Կռվում նրա առավել սիրած զենքերից էր նաև մաուզերը, որով նա աշխատել է զինել և իր մարտական ընկերներին։ Այս հարցում նրա գործունեությանը քաջատեղյակ Եգոր Տեր

---

[131] «Ալիք» բաց. Դրոյի յիշատակին», 1956 թ., էջ 85։

Ավետիքյանի դատողությունները ճշմարիտ են ու բավական-նին խոսուն։ Սակայն նրա զինվորների զենքերն, որոնց թվում նաև մաուզերները, գործածվել են միմիայն ի պաշտպանություն հայ ժողովրդի։ Իսկ «մաուզերի» սպառնալիքով ժողովրդի ունեցվածքը հափշտակողների նկատմամբ նա գործադրել է ամենախիստ պատժամիջոցները։

Դումանի երկաթյա խստապահանջության և կարգապահության դպրոցի բովով անցած Դրոն հայ ռազմագետ գործիչների մեջ եղակիներից էր նաև հասարակ զինվորի նկատմամբ դրսևորած իր մարդասիրական ու հոգատար վերաբերմունքով։

Պատահական չէ, որ նրա գործունեության մասին պահպանված հիմնական տեղեկությունները առավելապես հանդիպում է իր զինակիցների ու զինվորների հուշագրություններում։ Վկայակոչենք մի օրինակ։

Հայաստանի կառավարությունը հանրապետության տարբեր շրջանների միջև հաղորդակցության ուղիները ապահովելու նպատակով աշխատում էր ընդարձակել ոչ միայն երկաթուղային գծերը, ավտոմոբիլային ճանապարհներն ու խճուղիները, այլ նաև 1919 թ. կեսերին օգտագործում է Հայաստանի միակ նավարկելի՝ Սևանա լճի հնարավորությունները։ Սևանա լճում առաջին անգամ շոգենավերի գործարկման հանդիսավորության օրը մի քանի պաշտոնատար անձանց ուղեկցությամբ ներկա է լինում հանրապետության վարչապետ Ալ. Խատիսյանը։ Նույն օրը մի խումբ զինվորականների հետ արարողություններին ներկա է լինում նաև Դրոն։

Պատմում է այդ հանդիսություններին Նոր-Բայազետի ներկայացուցիչ Վահան Աֆրիկյանը.

«...Կառավարության կողմից ներկայ եղողները հիրատիրուեցին ճաշկերույթով, որ ղեկավարում էր Խատիսյանը։ Երբ ջերմ խօսքերով առաջարկեց խմել Դրոյի կենացը, նկատեց, որ Դրոն ներկայ չէր, «Ո՞ւր է Դրոն» կանչերի մէջ, տեսանք, որ լճի ափին, մի խումբ զինուորների մէջ կանգնած Դրոն, խմեցնում է զինուորներին եւ կանչել տալիս՝ «Կեցցէ՛ մեր հանրապետութիւնը, մեր կառավարութիւնը»։ Այդ ժա-

մանակ, զօրավար Սիլիկեանը ոտքի կանգնեց ասելով, «Կեցցէ՛ Դրօն, ահա՛ նրա մեծութիւնը»[132]։

Երիտասարդ հանրապետությունը գերմարդկային ջանքեր էր գործադրում երկրի պաշտպանության ամրապնդման ու զարգացման ուղղությամբ։ Արդեն նկատվել էին լուրջ նվաճումներ հանրապետության կյանքի բոլոր բնագավառներում։ Սակայն հարևան տերությունների և հատկապես Ադրբեջանի հետ շարունակվող մշտական բախումներն ու հանրապետության տարածքում բնակվող թուրք բնակչության պարբերաբար կրկնվող ելույթները դժվարին խոչընդոտների առաջ էին կանգնեցնում հանրապետության կառավարությանը։ Դրժվարագույնն ու անլուծելին Ղարաբաղն ու Զանգեզուրն էին, որոնց նկատմամբ Ադրբեջանի իշխանություններն ավելի ուժգնությամբ էին շարունակում դրսևորել իրենց զավթողական ձգտումները։ Այդ հողի վրա Հայաստանի և Ադրբեջանի հակամարտությունը գնալով ավելի էր խորանում ու շիկանում։

Զանգեզուրի լեռնականները կովկասյան թուրքերի և նրանց սատարող արյունակիցների դեմ պայքարելու հրաշալի մարտական դպրոց էին անցել։ 1905—06 թթ. մեր փառապանծ ֆիդայիների գլխավորությամբ, որոնց շարքերում էր նաև Դրոն, զանգեզուրցիները անմոռանալի ջարդ տվեցին թուրքական հրոսակախմբերին։ 1918—19 թթ. Անդրանիկի, ապա գնդապետ Արսեն Շահմազյանի գլխավորությամբ զանգեզուրցիները դարձյալ հերոսական ինքնապաշտպանությամբ ապահովեցին իրենց ազատությունը։

Նոյեմբերի վերջերին Հայաստանի կառավարության հրահանգով Զանգեզուրում ստեղծվում է «Վարիչների խորհուրդ» մարմինը, որի ձեռքում է կենտրոնանում գավառի ողջ իշխանությունը։ Զանգեզուրի զինվորական ուժերի հրամանատարներ են նշանակվում՝ Կապագողթինը՝ Գ. Նժդեհը, իսկ Սիսիանին՝ Պողոս Տեր-Դավթյանը։

Նույն տարվա դեկտեմբերի վերջերին 600 զինվորներով

---

[132] «Հայրենիք» օր., ապրիլի 24։

Գորիս է հասնում Զանգեզուր-Ղարաբաղի մարտական ուժերի ընդհանուր հրամանատար Դրոն։

Հայաստանի տարածքում թուրքական զորքերի առկայությունն, ապա հարևան Վրաստանի հետ զինված բախումները, մի փոքր անց հանրապետության սահմանների ընդարձակման խնդիրները և երկրի ծայր աստիճան քայքայված տնտեսության վերականգնման դժվարությունները խոչընդոտում էին հանրապետության կառավարությանը առավելագույնս զբաղվելու Ղարաբաղի և Զանգեզուրի հարցերով։ 1919 թ. վերջերին Հայաստանի կառավարությունը փոքր-ինչ հնարավորություն է ստանում ուշադրությունը կենտրոնացնելու նաև Ղարաբաղի և Զանգեզուրի վրա։ Ղարաբաղի և Զանգեզուրի խնդիրը վերջնականապես լուծելու նպատակով հանրապետության կառավարությունը Զանգեզուր է ուղարկում Դրոյին, որի հրամանատարության տակ պիտի գործեին այդ շրջանների ողջ զինված ուժերը։

«Դեկտեմբերի 20-ին 1919 թ. Դրոն Երևանից ժամանում է Գորիս էկսպեդիցիոն զորամասով, որի համաձայն Դրոյի յայտարարության գլխավոր նպատակն էր զենքի ուժով վճռելու վերջնականապէս Ղարաբաղի հարցը»[133]։

Դժվար չէր հասկանալ, որ եթե հանրապետության զորքերը մուտք գործեին Ղարաբաղ, ապա բացառված չէր պատերազմական գործողությունների բռնկում, այս անգամ արդեն մյուս հարևան Ադրբեջանի հետ, որի զավթողական մտադրությունները Ղարաբաղի նկատմամբ հայտնի էր։ Իսկ Հայաստանի իրական կացությունը դեռևս հանրապետության կառավարությանը չէր թելադրում այդօրինակ քաղաքականություն կենսագործելու։

Որպեսզի զենքի ուժով հնարավոր լիներ վերջնականապես լուծելու Ղարաբաղի հարցը, նախ պետք էր ինչպես հարկն է կազմակերպել Զանգեզուրի մարտական ուժերը։ Երկրորդ. մեկընդմիշտ լուծել Զանգեզուրի թուրք բնակչության հարցը։ Արդեն բազմիցս ապացուցվել էր Զանգեզուրի հայությանը ոչնչացնելու գործում, որ տեղի թրքությունը

---

[133] Հ. Հ. Կ. Ա., Ս. վ. 8—13։

Թուրքիայի, իսկ այժմ արդեն Ադրբեջանի հուսալի պատվարն է ու դաշնակիցը։

Երրորդ. հարկավոր էր Զանգեզուրում կենտրոնացնել զենքի ու զինամթերքի, հանդերձանքի ու պարենի բավարար պաշարներ, չորրորդ. հաստատել հուսալի կապ, հաղորդակցության միջոցներ Զանգեզուրի և Ղարաբաղի միջև, որպեսզի Ադրբեջանի հետ ընդհարումներ սկսվելու դեպքում հնարավոր լիներ այդ ամենը անխափան տեղափոխել Ղարաբաղ։

Մինչ այդ ամենի իրագործումը անհրաժեշտ էր որոշակի քայլեր ձեռնարկել նաև Ղարաբաղի ինքնապաշտպանությունը կազմակերպելու համար։

«Դրոն ուղարկում է Ղարաբաղ՝ Կ. Աթայեանին, Սասունցի Մուշեղին և ռոտմիստր Տեր-Մարտիրոսյանին, կազմակերպելու ժողովրդի ինքնապաշտպանության գործը տեղական ընկերների հետ միասին, մինչև որ կստեղծվեին քաղաքական նպաստավոր պայմաններ, որից յետոյ վերջնականապէս զէնքի ուժով Ղարաբաղը կմիացվի Հայաստանին»[134]։

Ծանոթանալով Զանգեզուրում տիրող իրավիճակին և խորհրդակցելով «Վարիշների խորհուրդ» մարմնի անդամների ու տեղի ռազմական ուժերի հրամանատարների հետ՝ Դրոն վճռում է առաջին հերթին մաքրել էյզվլար, Շուռնուխ, Մազրա շրջանները թուրք զինված խմբերից, որոնք մշտապես կապի մեջ գտնվելով Ադրբեջանի իշխանությունների հետ՝ պատրաստ էին նրանց առաջին իսկ հրահանգի դեպքում հարձակվել հայկական գյուղերի վրա։

Ղարաբաղում ռազմական գործողություններ ծավալելուց առաջ անհրաժեշտ էր վաղօրոք ապահովել թիկունքի անվտանգությունը։

Վերոհիշյալ շրջանները սեպաձև խրվելով Ղափանի և Գորիսի շրջանների արանքում՝ Զանգեզուրի տարածքը բաժանել էին երկու մասերի։ Հարկավոր էր վերացնել Զանգեզուրի հյուսիսային և հարավային շրջանների կապն ու հաղորդակցության ուղիները արգելակող պատնեշը։

Մինչ հիմնական գործողություններ սկսելը՝ Դրոն անցնում է Ղափան, ճշտում Գ. Նժդեհի հրամանատարությամբ

---

134 Նույն տեղում։

գործող զորախմբերի մարտական առաջադրանքը և ապա վերադառնում Գորիս։

«Գորիսում,— գրում է Յապոնը,— որոշուեց ռազմական գործողութիւն սկսել յունուարի 6-ին՝ նախապէս թուրք գյուղերին հպատակութեան եւ զինաթափութեան հրաւէր ուղարկելով։

Թուրք գյուղերին ուղղուած հրաւէրը ուղարկուեց էյվազլարի գիւղի կոմիսարի միջոցով, որին 3 օրից յետոյ պատասխանեցին մերժումով։

— Ոչ միայն չենք ընդունում Գորիսի իշխանութիւնը,— ասել էին նրանք,— այլ եւ պատրաստւում ենք գրաւելու Ադրբեջանին պատկանող ամբողջ Հայկական Զանգեզուրը...»[135]։

Այսպիսի պատասխան ստանալուց հետո մնում էր ապավինել միայն զենքի ուժին։

Դրոն հրամայում է սկսել ռազմական գործողությունները։ Համաձայն վաղօրոք մշակված ծրագրի, Շուռնուխը, էյվազլարը ու Մազրան իրենց շրջակա գյուղերով հանդերձ թուրք բնակչությունից պիտի մաքրվեին մինչև հունվարի 6-ը։

Դրոն իր զորամասով անցնում է Բարդուլարի ձորերով և շարժվում դեպի էյվազլար։ Որպեսզի թուրքերին զրկի լեռների ամրություններում պաշտպանվելու հնարավորությունից, հրամայում է թնդանոթներից կրակ տեղալ թուրքաբնակ գյուղերի վրա։

«Տեղատարափ կրակոցներէն,— պատմում է այդ կռիվների մասնակից Արտեմ Խանզատյանը (զանգեզուրցի),— թուրք ժողովուրդը անակնկալի է գալիս։ Այնքան անակնկալ է լինում յարձակումը, որ թուրքերը ժամանակ չունենալով որեւէ ապրանք վերցնելու, թողնում են տուն եւ տեղը եւ փախչում պատսպարուելու, գիւղերի շրջաններումը ընկած Ուզուն Մեշու (երկար Անտառ) անտառները»[136]։

Զարգացնելով հարձակումը Դրոյի զինվորները մեկը մյուսի հետևից մաքրում են թուրքական գյուղերը։

---

[135] «Հայրենիք» ամս., 1941 թ., հունիս, էջ 97։

[136] Աւս, «Նժդեհ», Պէյրութ, 1968 թ., էջ 482։

Նույն հաջողությամբ էին ընթանում նաև մյուս ուղղություններում հարձակվող հայկական մարտախմբերի գործողությունները։

Յապոնի և Տաթևացի Վարդանի գլխավորած ջոկատները Տանձավեր գյուղը քարուքանդ անելուց հետո հարձակվում են Շուռնուխի վրա և համառ կռիվներից հետո գրավելով այն՝ շարժվում են Նավլու և միանում նույն ոգևորությամբ մարտընչող Ցապոնացու և Արտեմ Խանզատյանի գլխավորած մարտախմբերին։

Միաժամանակ Ղափանի շրջանից թուրքական հրոսակախմբերին ջարդ ու փշուր անելով դեպի Գորիս է շարժվում Գ. Նժդեհը և Վիժանիս գյուղում հանդիպում Դրոյին։ Հանդիպելով Նժդեհին՝ Դրոն ընդունում է նրա զինվորական զեկույցը և ի նշան շնորհավորանքի համբուրում և տալիս իր հրաման-պատգամը.

«Այսուհետև վառիր, աւերիր, քանդիր, դու ամէն տեսակի իրաւունք ունիս»[137]։

Դրոն Զանգեզուրում Գ. Նժդեհի, Յապոնի և մյուս հրամանատարների և քաջակորով զանգեզուրցիների համագործակցությամբ ընդամենը երկու օրվա ընթացքում հրաշալիորեն է լուծում Զանգեզուրը թուրքերից մաքրելու անգնահատելի գործը։ Զանգեզուրում ծավալված վերջին դեպքերը մեծ իրարանցում են առաջ բերում հարևան հանրապետությունում։

Ադրբեջանական իշխանությունների համար մեծ հարված էր այն հազարավոր թուրքերի կորուստը, որոնց զինական աջակցությամբ հույս ուներ լուծելու Զանգեզուրը Ադրբեջանին բռնակցելու խնդիրը։ Ադրբեջանի կառավարությունը տենդագին պատրաստություն է տեսնում Զանգեզուրում կորցրած արյունակից դաշնակիցների փոխվրեժը լուծել ղարաբաղցիներից։

Ղարաբաղում Հայաստանի հանրապետության ներկայացուցիչ Արսեն Միքայելյանը Դրոյին հետևյալն է գրում.

«Զանգեզուրի ռազմական գործողությունները սոսկալի յուզմունք են առաջ բերում Ադրբէջանի թրքութեան մէջ։ Ան-

---

137 Նույն տեղում, էջ 484։

միջապէս զորքեր են տեղափոխում։ Թրքությունը զինում, կամաւորական խմբեր են կազմում եւ նախապատրաստական աշխատանքի են դիմում՝ յարձակուելու Զանգեզուրի եւ Ղարաբաղի հարցը ընդմիշտ լուծելու համար։ Ի նկատի ունենալով Շուռնուխի գործողությունների հետեւանքով Ղարաբաղում ստեղծուած դրութեան բարդությունը, Ղարաբաղի ներկայացուցիչները խնդրում են Դրոյին, միշտ պատրաստ լինել Ադրբեջանի յարձակման դէպքում օգնության հասնելու։ Մինչ այդ, պահանջում են ուղարկել փամփուշտներ և դրամ»[138]։

Դեպքերը զարգանում և իրար են հաջորդում չափազանց արագ։ Սթեփ իրոք ադրբեջանական զորքերը ներխուժեին Ղարաբաղ, ինչով և ինչպես կարող էր Դրոն օգնել ղարաբաղցիներին։ Ի պատասխան ղարաբաղցիների դիմումի Դրոն հայտնում է հետևյալը.

«...Ինչքան հնարավոր է իր ուժերի սահմաններում կօգնի ձեզ։ Դրոն Ղարաբաղի գործիչներին տալիս է իր ապագայ գործողությունների ծրագիրը — Ղարաբաղին օգնություն հասնելու դէպքում, և առաջարկում է՝ Ադրբեջանի յարձակման դէպքում Ղարաբաղի ինքնապաշտպանության գործողությունների տեղական նախագիծը ուղարկել իրեն։ Դրոն յայտնում է, որ իր տրամադրության տակ եղած դրամի ու ռազմամթերքի պաշար շատ քիչ կա. ուստի Գորիսից մեկնում եմ կարճ ժամանակով Քեշիշքենդ (Վայոց-Ձոր), որտեղից ուղիղ գծով կապվելու եմ Հայաստանի կառավարության հետ՝ արագացնելու փամփուշտի և դրամի առաքումը Ղարաբաղի համար, և վերջնականապէս ստանալու կառավարության հաւանությունը Ղարաբաղի գործողությունների սկսման վերաբերեալ և ծանոթանալու ընդհանուր քաղաքականության հետ»[139]։

Ղարաբաղի ներկայացուցիչներին տված խոստման համաձայն՝ Դրոն մեկնում է Վայոց-Ձոր և այնտեղից փորձում կապվել Երևանի հետ։ Սակայն այդ ուղղությամբ նրա ձեռ-

---

138 Հ. Յ. Դ. Կ. Ա., Ս. Վ. 8—13։

139 Նույն տեղում։

նարկած բոլոր փորձերն անցնում են ապարդյուն։ Կապը Երևանի և Վայոց-Ձորի միջև խափանվել էր։ Մնում էր միակ քայլը։ Նա ստիպված մեկնում է մայրաքաղաք կառավարության հետ վերջնականապես մշակելու ու համաձայնեցնելու Ղարաբաղում ձեռնարկվելիք գործողությունների մանրամասները։ Գնալու նախօրեին Դրոն Ղարաբաղում Հայաստանի լիազոր-ներկայացուցիչ Ա. Միքայելյանին հրահանգում է շարունակել ինքնապաշտպանության կազմակերպման գործը, նախահարձակ չլինել և Ադրբեջանական ռազմական ուժերի հարձակման դեպքում ժողովրդին դաշտավայրերից տեղափոխել լեռնային մասը ու սպասել մինչև ինքը Ղարաբաղ կհասցնի հանրապետության կառավարությունից ստացած հարկավոր զենքն ու զինամթերքը[140]։

Փետրվարի 14-ին Դրոն Վայոց-Ձորից մեկնում է Երևան։ Ալ. Աշխատունին, որը Դրոյի հետ եղել էր Զանգեզուրում, իսկ Երևան մեկնելիս նրա ուղեկիցների թվում էր, գրում է.

«Փետրուարի 19-ին, 5-օրեայ ճամբորդութիւնից յետոյ հասան Երեւան։ Այստեղ ես լաւապէս ճանաչեցի Դրոյին, այդ երկաթէ մարդուն։

Փետրուարի 22-ին Նախարարների խորհրդին ներկայացրինք մեր զեկույցը Զանգեզուրի և Ղարաբաղի քաղաքական ու ռազմական կացութեան մասին և շեշտեցինք, որ անխուսափելիօրէն գարնանը խոշոր դէպքեր տեղի կունենան Ղարաբաղում։ Դրոյի կողմից պահանջ գրուեց՝ զէնքեր և փամփուշտ առաքել Զանգեզուրի և Ղարաբաղի համար։

Դրոն յայտարարեց, որ ինքը գիտի գաղտնի մի պահեստ Քանաքեռում՝ ուր «սև օրուայ համար» պահում է կէս միլիոն մոսինի փամփուշտ։ Դրոյին թոյլատրուեց բացել այդ պահեստը և փամփուշտները փոխադրել Զանգեզուրի և Ղարաբաղի պէտքերի համար։ Դրոն անմիջապէս գործի անցաւ, հայթայթեց փոխադրական միջոցներ և առաջին հերթին 200000 փամփուշտ փոխադրեց Նոր-Բայազէդ, որտեղից հնարաւոր չէր փոխադրությունը շարունակել սայլերով, որովհետև ձիւնի խոր շերտը, որ հասնում էր 1 մետրի և՝ Սէլիմ-Գևա-

---

140 Տե՛ս, «Ալիք» թաց. «Դրոյի յիշատակին», 1956 թ., էջ 87։

դուկի փակված լինելը, փոխադրությունը դէպի Դարալագեազ, դարձնում էին անհնարին»[141]։

Զմռան անանցելի պայմաններում 200000 փամփուշտները Նոր-Բայազետի շրջանի բնակիչները շալակով հասցնում են Դարալագեազ, ապա տեղացիների օգնությամբ Գորիսի ռազմական պահեստները։

Նոր-Բայազետի իշխանության ներկայացուցիչների հետ զենք ու զինամթերքի տեղափոխման անչափ կարևոր ու դժվարին աշխատանքները կազմակերպելուց հետո Դրոն շտապ մեկնում է Իգդիր։

Դարձյալ ասպարեզում հայտնվել էին Սուրմալուի և նրա հարակից շրջանների քրդական հրոսակախմբերը, որոնք միավորվելով՝ ասպատակություններ էին սփռել այդ գավառի հայկական գյուղերում։ Մանր բախումներ էին ծավալվում քրդական զինյալ խմբերի և Սուրմալուի հայ ինքնապաշտպանական ջոկատների միջև։ Դրոն ոչ մեծ զորամասով հասնում է Սուրմալու և տեղի հայ զինված ջոկատների աջակցությամբ ջախջախում քրդական հրոսակախմբերին, ապա արագորեն ուղևորվում Զանգեզուր։

Իսկ այդ ընթացքում Արցախում դեպքերը զարգանում էին սպասվածից ավելի արագ։

Իր սկզբնավորման առաջին իսկ օրերից սկսած Ադրբեջանի կառավարությունը՝ օգտվելով Հայաստանի Հանրապետության դեռևս ոչ այնքան կայուն վիճակից և Թուրքերի աջակցությունից, հաստատակամորեն նպատակադրվել էր բռնությամբ զավթել Արցախը և դրանով մեկընդմիշտ արմատախիլ անել Հայաստանին վերամիավորելու արցախահայության ձգտումները։ Արցախցիները՝ չհանդուրժելով մուսաֆաթականների զավթողական պահանջները, բազմիցս գումարված համաժողովներում արտահայտելով ողջ արցախահայության կամքն ու ցանկությունները՝ մշտապես Հայաստանի Հանրապետությանը վերամիավորելու որոշումներ էին կայացնում։ Հայոց հինավուրց Արցախ աշխարհում բազում անընդմեջ արյունալի բախումներ էին տեղի ունեցել հայերի ու կովկասյան Թուրքերի միջև։

---

141 Նույն տեղում։

1919 թ. նոյեմբերին Զանգեզուրում կրած խայտառակ պարտությունից և հաջորդ տարվա հունվարյան դեպքերից հետո, ադրբեջանական իշխանությունները եռանդով նախապատրաստություններ են տեսնում զենքի ուժով լուծելու Արցախի խնդիրը։ Իր հերթին Արցախը նույնպես պատրաստվում է հերթական անգամ փլուզելու Ադրբեջանի զավթողական ծրագրերը։

Փետրվարի 19-ին Ադրբեջանի կառավարության կողմից Արցախում գեներալ-նահանգապետ նշանակված Սուլթանովը՝ վերջնագիր է ներկայացնում Արցախի Ազգային խորհրդին, որով պահանջում է ընդունել Ադրբեջանի գերիշխանությունը։ Ի պատասխան Սուլթանովի վերջնագրի փետրվարի 22-ին Շուշիում գումարվում է Արցախի 8-րդ համաժողովը, որը միանշանակորեն որոշում է մերժել գեներալ-նահանգապետի պահանջը։ Արցախահայության նման վճռից գազազած՝ Սուլթանովը որոշում է զենքի ուժով ընկճել Արցախի դիմադրությունը։ Նույն տարվա մարտի 26-ին Ադրբեջանական բազմահազարանոց բանակը տարբեր ուղղություններից ներխուժում է Արցախ։

Գերմարդկային ջանքերի գնով արցախցիները դիմադրում և հաղթանակներ էին տանում ազերի կանոնավոր զորագնդերի դեմ։

Առանձնապես դժվարին կացություն է ստեղծվում Ասկերանի ճակատում։ Ապրիլի 4-ին զոհվում է Դրոյի մարտական զինակից, Արցախի ինքնապաշտպանական կռիվներում իրեն հերոսաբար դրսևորած՝ Ասկերանի ճակատի հրամանատար Դալի Ղազարը։

Նույն ճակատի հրամանատարությունն ստանձնած գնդապետ Զ. Մեսյանը՝ ստեղծված ծանր կացությունը շտկելու նպատակով, հաջորդ օրը դիմում է հանդուգն ու վճռական քայլի.

«Ես (Զ. Մեսյանը — Հ. Գ.),— գրում է դեպքերի ականատես, «Ղարաբաղի վարիչների խորհրդի» անդամ Արսեն Միքայելյանը,— իմ մաուզեր ատրճանակիս մէջ ունիմ միայն 8 փամփուշտ։ Կա՞ն ձեր մէջ տղաներ մի քանի փամփուշտներով, որոնք կամենում են մեռնել ինձ հետ։

— Մենք բոլորս պատրաստ ենք,— պատասխանում են։
— Հետեւեցէք ինձ, ուրեմն։

Եվ նրանք այդ կտրիճները, գիշերուայ մթութեան մէջ առաջ են շարժւում եւ հասնում Սգնէքի բարձունքներին վրայ ոչակած զինուորների դիրքերին։ Գաղտագողի կերպով նրանք մօտենում են թշնամուն, թւով մի քանի հարիւր, եւ «ուռաներով», «Դրօն եկել է», «Հայկական զօրքը հասել է» աղաղակներով յարձակւում են նրանց վրայ, ջարդում նրանց եւ խլում բաւականաչափ փաշփուշտներ եւ մէկ գնդացիր։

Գիշերային եւ յուսահատական այդ յարձակումը անակընկալի է բերում թշնամուն, որ նահանջում է դէպի խճուղին եւ դէպի Շուշի»[142]։

Ապրիլի 15-ին Դրոն իր զորամասով հասնում է Արցախ և դուրս վռնդելով արցախցիների կողմից ջարդված ադրբեջանական զորամասերին՝ իր ձեռքն է վերցնում գավառի ողջ իշխանությունը։ Նրա զորամասի կազմում էին իր վաղեմի զենքի ընկերներ Գարեգին Նժդեհը՝ Ղափանի զորախմբով և Բաշգառնեցի Մարտիրոսն ու Կուռո Թարխանյանը։ Զանգեզուր-Արցախ կապն ու հաղորդակցության ուղիների ապահովությունը հանձնարարվում է Յապոնին։

Տվյալ ժամանակահատվածում Դրոյի զորամասի մուտքը Արցախ, խիստ անհրաժեշտ էր։ Դժվար չէր գուշակել, թե ինչպիսի հրեշավոր վայրագություններ կարող էին գործել ադրբեջանական զորքերը, եթե արցախահայությանը սպառնացող վտանգի պահին, թեկուզ և ուշացումով, օգնության չհասնեին հանրապետության զորքերը։

Որպեսզի զենքի ուժով վերջնականապես լուծվեր Արցախը Հայաստանին վերամիավորելու հարցը, վերոհիշյալ Արսեն Միքայելյանի վկայությամբ, Դրոն պիտի կենսագործեր երեք առաջնահերթ նշանակություն ունեցող խնդիրներ.

1. Վերակազմել և ուժեղացնել Արցախի դիմադրական ուժը։

2. Գրավել ամբողջ Արցախը։

3. Արցախը միացնել Հայաստանի Հանրապետությանը և քաղաքի (նկատի ունի Թուրքերի կողմից կործանված Շու-

---

142 «Հայրենիք» ամս., 1923 թ հոկտեմբեր, էջ 123։

շին — Հ. Գ.) և գյուղերի ավերվածությունների, կոտրածների փոխվրեժը լուծել թուրքերից»[143]

Նրա անմիջական նախաձեռնությամբ ստեղծվում է Արցախը ղեկավարող «Վարիչների խորհուրդ», որը հաջորդ օրը հայտարարում է զորահավաք։ Կարճ ժամանակահատվածում Դրոյի հրամանատարությամբ կազմակերպվում է ավելի քան 3000 թվակազմով զորագունդ։ Արցախի տարբեր շրջանների, ինչպես նաև Զանգեզուրի միջև ստեղծվում է հեռախոսային հուսալի կապ։

Դրոն հայտարարվում է Արցախ-Զանգեզուրի գլխավոր նահանգապետ-հրամանատարը։ Նրա մասնակցությամբ արցախահայության ընտրյալ ներկայացուցիչները ապրիլի 28-ին գումարում են 9-րդ համաժողովը և մեկ անգամ ևս վճռականորեն հայտարարում Հայաստանին վերամիավորվելու որոշումը։

Կարծես թե դժվարություններն արդեն հետևում էին մնացել, բայց իրականում ամենասարսափելին դեռևս առջևում էր։

Նույն տարվա ապրիլի 28-ին կարմիր զրահագնացքը՝ առանց որևէ արգելքի մուտք է գործում Բաքու և մուսաֆաթական Ադրբեջանի հանրապետությունը հռչակում խորհրդային Ադրբեջան։ Ջանցած մեկ օր՝ խորհրդային Ադրբեջանի կառավարությունը վերջնագիր է ներկայացնում Հայաստանի կառավարությանը, պահանջելով հայ զինական ուժերը դուրս բերել Արցախից և Զանգեզուրից, հակառակ դեպքում սպառնում պատերազմով։ «Միջազգային իմպերիալիզմի» դեմ պայքարող «համաշխարհային հեղափոխություն» իրականացնող խորհրդային Ռուսաստանը և Թուրքիայի Սդրայեն մեծ ժողովի նախագահ Մուսթաֆա Քեմալը հանուն իրենց քաղաքական շահերի՝ խորհրդայնացնելով զոհաբերեցին Ադրբեջանական անկախ հանրապետությունը։ «Համաշխարհային հեղափոխության» դրոշակակիր խորհրդային Ռուսաստանը՝ առաջնորդվելով արևելքի ժողովրդին «իմպերիալիզմի լծից ազատագրելու» և նրանց խորհրդայնացնելու շինծու լոզունգներով, ձգտում էր իր գերիշխանությունը հաստատել

---

[143] Տե՛ս, նույն տեղում, էջ 123։

արևելքի ժողովուրդների վրա։ Խորհրդային իշխանության «մարդասիրական» նպատակների կենսագործման գլխավոր խոչընդոտը «միջազգային իմպերիալիզմն» էր։ Մերձավոր և միջին արևելքում իր գերիշխանությունը հաստատելու համար Խորհրդային Ռուսաստանին անհրաժեշտ էր դաշնակից ու հենարան։ ՀԱՆՁԻՆ իրեն «կարմիր հեղափոխական» հորջորջող Մուստաֆա Քեմալի, որի պայքարի սլաքը նույնպես ուղղված էր «միջազգային իմպերիալիզմի» դեմ, Ռուսաստանը գտավ հուսալի ու «գաղափարակից» դաշնակցին։ Երկուսի շահերն էլ փոխադարձաբար ներդաշնակում էին։ Խորհրդային Ռուսաստանին «խորհրդայնացման նպատակով» անհրաժեշտ էր անմիջական հաղորդակցության ուղիներ, կապեր ստեղծել արևելքի երկրների և մասնավորապես իր նոր դաշնակցի՝ Թուրքիայի հետ։ Կովկասյան անկախ հանրապետությունները անջրպետում էին Ռուսաստանից Թուրքիային և մյուս երկրներին, իսկ նրանց քաղաքական շահերը պահանջում էին վերացնել այդ անջրպետները։ Ադրբեջանի հարցը լուծվեց խորհրդայնացման ճանապարհով։ Սակայն Հայաստանը և հատկապես Արցախը, Զանգեզուրն ու Նախիջևանը սեպաձև խրվելով արդեն Խորհրդային Ադրբեջանի և Թուրքիայի միջև, փաստորեն գլխավոր խոչընդոտներն էին «համաշխարհային հեղափոխության» իրականացման ճանապարհին։ Անհրաժեշտ էր կտրել այդ սեպը և անմիջական կապ ստեղծելով Խ. Ադրբեջանի և Թուրքիայի միջև՝ ճանապարհ բացել դեպի արևելք։ Խորհրդայնացման ճանապարհով Արցախը, Զանգեզուրը ու Նախիջևանը և իհրաև նաև «իմպերիալիստական Հայաստանը» (այդպես են որակել Հայաստանի Հանրապետությանը Քեմալ փաշան և նույն տարվա սկզբներին Բաքվում կայացած արևելքի ժողովուրդների համագումարը) նվաճելը տվյալ պարագայում դեպի արևելք ճանապարհ հարթելու ամենահարմար մայրուղին էր։ Առաջնորդվելով վերոհիշյալ նկատառումներով մայիսի 1-ին Ադրբեջանի տարածքում գտնվող 11-րդ կարմիր բանակի հրամանատարությունը Օրջոնիկիձեի, Կիրովի ստորագրությամբ Խորհրդային իշխանության անունից՝ պատերազմ հայտարարելու սպառնալիքով նոր վերջնագիր է ներկայացնում Հայաստանի կառավարությանը և առանց պատասխանին

սպասելու կարմիր բանակի զորագնդերը շարժում Արցախ։ Պահանջում են Դրոյից հայ զինական ուժերը դուրս բերել Արցախի տարածքից։ Եթե չընդունվեր կարմիր բանակի պահանջները, ապա հանրապետությունը ստիպված կլիներ պատերազմել ոչ միայն «խորհրդային» մուսաֆաթի, այլ հենց խորհրդային Ռուսաստանի դեմ։ Բացի դրանից խորհրդային իշխանության հետ բանակցությունները վարելու առաքելությամբ Մոսկվա ուղևորվող Լևոն Շանթի պատվիրակությունն արդեն ճանապարհին էր և Հայաստանի կառավարությունը հույս ուներ բանակցություններ վարել մեծ տերության հետ։

Մայիսի 5-ին Դրոյի հետ բանակցելու համար Արցախ են ժամանում Ս. Օրջոնիկիձեի ներկայացուցիչներ Սահակ Տեր Գաբրիելյանն ու Լևանդովսկին և խորհրդային իշխանության անունից պահանջում հայկական զորքերը դուրս բերել Ղարաբաղի տարածքից և անցնել Զանգեզուր։

«Դրոն,— շարունակում է Արսեն Միքայելյանը,— պատասխանում է, որ ինքը զինուորական է, ներս է մտել Ղարաբաղ իր կառավարության հրահանգով եւ այն ժամանակ միայն, երբ Ադրբէջանն սկսել է կոտորել Շուշի քաղաքի պնզէն բնակչությունը եւ աւերել հայկական գիւղերը, կը հեռանայ միայն այն ատեն, երբ համապատասխան հրաման ստանայ Հայաստանի Հանրապետութիւնից»[144]։

Խորհրդային իշխանության ներկայացուցիչները Դրոյին համոզելու նպատակով դիմում են կեղծիքի ու խաբեության.

«Բայց Հայաստանի նախկին կառավարութիւնն այլեւս գոյութիւն չունի, եւ մայիսի 2-ին Հայաստանի մէջ հաստատված է խորհրդային իշխանութիւն (Հայաստանի կառավարության հետ կապի բացակայության պատճառով Դրոն դեռևս տեղեկություն չուներ հանրապետությունում բոլշևիկների մայիսյան խռովությունների մասին — Հ. Գ.),— յայտարարում են նրանք։

— Ես զինուորական եմ, ես կը սպասեմ իմ կառավարության հրահանգին, այդ կըլլայ հին թէ նոր,— լինում է Դրոյի պատասխանը։

---

[144] Նույն տեղում, էջ 125։

Այն ժամանակ Օրջոնիկիձէի ներկայացուցիչներն առաջարկում են Վարիշների խորհրդի իշխանությունը տարածել միայն Վարանդայի եւ Դիզակի վրայ։

Դրօն միեւնոյն պատասխան է տալիս»[145]։

Խորհրդային զորքերը առանց Արցախի օրինական իշխանության՝ «Վարիշներ խորհրդի» և Դրոյի համաձայնության արդեն մինչև մայիսի 20-ը մուտք են գործում Արցախի մի շարք շրջաններ և ամենուրեք հաստատում խորհրդային կարգեր։ Արցախը գրավելու ամենահարմար և «անարյուն», «մարդասիրական» միջոցը տեղի բնակչությանը շլացուցիչ խոստումներով ու կեղծ գաղափարներով խաբելն էր։ Իսկ «խաղաղություն», «հավասարություն», «եղբայրություն» ոգեն կարգախոսներով առաջնորդվող բոլշևիկներին դժվար չէր մոլորեցնել ադրբեջանական զորքերի մշտական սպառնալիքի տակ ապրող և իրենց բազմամյա պայքարով դեռևս բաղձալի նպատակին չհասած արցախցիներին։

Խորհրդային կոմիսարները ճիշտ էին հասկացել ժամանակի նրբությունները։ Արցախի նվաճման լավագույն երաշխիքը նրա բոլշևիկացումն էր ու խորհրդայնացումը։ Բոլշևիկյան ժանտախտը արագորեն տարածվում է Արցախի բնակչության շրջանում։ Հայ բոլշևիկների ջանքերով բազմաթիվ գյուղեր հոժարակամ ընդունում են խորհրդային իշխանությունը։

«Մայիսի 18-ին,— նշում է Արսեն Միքայելյանը,— Դրոյի հրահանգով մի քանի սպաներ անցնում են Վանք՝ Զ. Մեսեանին օգնելու եւ այդ շրջանը ուժեղացնելու, բայց դեռ նաչէն չհասած վերադառնում են, լուր ստանալով, որ նաչէնի շրջանը բոլշևիկացել է։

Մայիսի 21-ին Ջիվանշիրի հայ բոլշևիկները՝ միացած ռուս կարմիր բանակի մի հարիւրեակ ձիաւորների հետ, յարձակւում են Վանք գիւղի վրայ՝ Զ. Մեսեանին ձերբակալելու, բայց չեն կարողանում։

Այդ ժամանակամիջոցում ռուսական արագ զօրամասեր են տեղափոխւում դէպի Շուշի եւ Զանգեզուր։

---

[145] Նույն տեղում, էջ 126։

Եւ այսպիսով, հակառակ Դրոյին Վարիչների խորհրդի թափած աշխատանքներուն եւ կազմակերպած բանակին, Ղարաբաղը դրուում է նոր անակնկալի առջեւ»[146]։

Հանրապետության կառավարության հետ կապի բացակայությունը ավելի է ծանրացնում առանց այդ էլ անորոշ և անելանելի իրավիճակը։ Իսկ առանց կառավարության համաձայնության անձնական նախաձեռնությամբ ու պատասխանատվությամբ խորհրդային զորքերի դեմ պատերազմելը կարող էր ծանրագույն ազդեցություն գործել ոչ միայն Արցախի, այլև ողջ հանրապետության վրա։

Մայիսի 24-ին Արցախում տիրող կացության վերլուծության և հետագա անելիքները ճշտելու նպատակով՝ Դրոն Ջանախշի գյուղում հրավիրում է խորհրդակցություն։

Պատմում է խորհրդակցության մասնակից վերոհիշյալ Ա. Միքայելյանը.

«Ջանախշի գիւղի մէջ, տեղի է ունենում Հայաստանից եկած պաշտոնեաներու՝ Դրօի, Նժդեհի, գնդապետ Միրիմանեանի և Ա. Միքայելեանի (այս տողերի հեղինակը—Հ. Գ.) խորհրդակցութիւնը, որի մէջ պարզւում է.

Ա) Որ Ղարաբաղի ժողովրդի տրամադրութիւնները զգալապէս փոփոխութեան ենթարկուած եւ աստիճանաբար կարող են վերածուել թշնամութեան.

Բ) Որ մայիսի 12-ից սկսեալ Հայաստանի կառավարութենէն հակառակ բազմիցս եղած դիմումների, ոչ մի տեղեկութիւն չի ստացուել, ապա ուրեմն Հայաստանի Հանրապետութիւնը գտնվում օրհասական վտանգի մէջ (հետագայում պարզվում է, որ Արցախում գտնվելու օրերին՝ կապի բացակայության պատճառով, Դրոն որևէ տեղեկություն չի ունեցել նույնիսկ բոլշևիկների կազմակերպած մայիսյան խռովությունների ելույթներից — Հ. Գ.)։

Գ) Որ Նժդեհի Ղափանի զօրամասը չի կարող երկար մնալ Ղարաբաղում, որովհետեւ բոլորն էլ գիւղացիներ են եւ կամաւոր ու կը կամենան վերադառնալ հայրենիք դաշտային աշխատանքներու լծուելու։

Դ) Որ ռուսական բանակի որոշ զօրամասեր, խճուղու

---

146 Նույն տեղում։

վրայով, գրաւում են կարեւոր դիրքեր, որով կտրում են Ղարաբաղի հայկական զօրամասի նահանջի ճամբան»[147]։

Այս բոլոր հանգամանքները նկատի առնելով՝ խորհրդակցության մասնակիցները որոշում են իշխանությունը հանձնել հայ բոլշևիկներին և մայիսի 26-ին անցնում Զանգեզուր։

Արցախից Զանգեզուր ձգվող ճանապարհին հայկական զորագնդին հարկ է լինում հաղթահարել մի չսպասված խոչընդոտ։

Դիսը՝ բանտարկում են գավառի «Վարիչների խորհրդի» մի խնձորեսկ գյուղում կեղծ խոստումներով ու ստերով մոլորեցնելով տեղի բնակիչներին, կազմում են մի քանի խմբեր և դիրքեր գրավելով գյուղի շրջակա բլուրների հետևում՝ նպատակադրվում են անակնկալ հարձակումով զինաթափել ու ձերբակալել Դրոյին, Նժդեհին ու մյուս հրամանատարներին։

Խնձորեսկին մոտենալու պահին հայկական զորագնդի վրա է թափվում հայ բոլշևիկների զինախմբերի մրրկային կրակը։ Դրոն և Նժդեհը՝ ակնթարթորեն կողմնորոշվելով, շրջանցում են բլուրները ու կարճատև հարվածներից հետո փախուստի մատնում Ղարագոզյանի խմբերին։

«Դրոն և Նժդեհը,— գրում է Արտեմ Խանզատյանը,— իրենց ուժերով պաշարում են Խնձորեսկ գիւղը եւ պահանջում ապստամբների ղեկավարներին, սպառնալով գիւղը աւերակի վերածել։

Միւս առաւօտեան, խնձորեսկցիները բերում են Մկրտիչ Ղարագօզեանին, և երկու ուրիշներին, որոնք գնդակահարւեցան»[148]։

Դրոն իր զորամասով անցնում է Դարալագյազ, իսկ Նժդեհը՝ Ղափան։

Արցախը խորհրդայնացման ճանապարհով գրավելուց հետո կարմիր բանակի մի քանի զորագնդեր հայ բոլշևիկների առաջնորդությամբ մտնում են Զանգեզուր և գրավելով Գորիսը՝ բանտարկում են գավառի «Վարիչների խորհրդի» մի շարք անդամների։ Շնհերի մի քանի գյուղացիների հաջող-

---

147 Նույն տեղում, էջ 126—127։

148 Աւօ, «Նժդեհ», Պէյրութ, 1968 թ., էջ 485։

վում է Սիսիանի վրայով հասնել Դարալագեազ և Դրոյին հաղորդել խորհրդային զորքերի կողմից Գորիսի գրավման լուրը։

Օգոստոսի 1-ին Դրոն իր զորամասով արշավում է «դիմավորելու» խորհրդային զորքերին և միաժամանակ հրահանգ է ուղարկում Ղափան՝ Նժդեհին և Սիսիան՝ Պողոս Տեր-Դավթյանին նույնպես շարժվելու Գորիս։

Նույն օրը Դրոյի հրամանով Կուռո Թարխանյանի զորաջոկատը գրոհում է Բազարչայ գյուղում հանգրվանած խորհրդային զորախմբի վրա և խորտակելով կարմիրների դիմադրությունը՝ շարժվում Գորիս։

Սիսիանի շրջանում՝ տեղացիների ուժերի գլուխն անցած Պողոս Տեր-Դավթյանը ջախջախում է այդ վայրերում հայտնված բոլշևիկյան զորամասը և զարգացնելով հարձակումը Գորիսի մոտակայքում, միանում է Դրոյին։

Միաժամանակ Գորիս է հասնում Նժդեհի Ղափանի զորագունդը։ Բոլշևիկյան զորամասերը ամրանում են Գորիսում։ Առանց ժամանակ վատնելու՝ Դրոն հարձակվում է Գորիսում կենտրոնացած խորհրդային զորքերի վրա և տարբեր ուղղություններից գրոհող հայկական զորագնդերի համագործակցությամբ ջախջախում հակառակորդի ուժերը և հետապնդելով՝ դուրս վռնդում Զանգեզուրի տարածքից։ Խուճապահար փախչելով, բոլշևիկները հասցնում են իրագործել իրենց սև գործը։ Գնդակահարում են ձերբակալված բազմաթիվ անվանի զանգեզուրցի գործիչների, որոնց թվում նաև Վահան Խորենուն և Արշակ Ջամալյանին։

Տվյալ ժամանակահատվածում խորհրդային զորքերի մուտքը Զանգեզուր դեռևս ծավալվող գործողությունների սոսկ նախերգանքն էր։

Մի քանի օր անց ջախջախված բոլշևիկներին Զանգեզուրում փոխարինելու են գալիս նոր զորամասեր։ Մարտական գործողությունների հետագա շարունակումը նշանակում էր անխուսափելի պատերազմ Հայաստանի Հանրապետության և խորհրդային Ռուսաստանի միջև։

Իսկ Մոսկվայում գտնվող Լևոն Ծանթի գլխավորած Հայաստանի պատվիրակության և խորհրդային Ռուսաստանի արտաքին գործոց ժողկոմ Չիչերինի միջև ընթացող բանակ-

ցությունների առանց արդյունքի ընդհատվել էին։ Կողմերը համաձայնվում են, որպեսզի բանակցությունները շարունակվեն Անդրկովկասում և Երևանում։

«Յուլ. 20-ին,— գրում է Ս. Վրացյանը,— խալիլ փաշայի ընկերակցությամբ, Լեգրանը հասավ Բաքու և Ազրբէջանի կոմունիստների հետ խորհրդակցելուց յետոյ անցավ Թիֆլիս, ուր, օգոստոսի սկզբին Զանգեզուրում, Նախիջևանում և Ղազախում տեղի ունեցող հայ-բոլշևիկեան կռիւները դադարեցնելու նպատակով գումարեց խորհրդաժողով Հայաստանի ներկայացուցիչներ՝ Ա. Ջամալեանի ու Ա. Բաբալեանի և Լեդրանի միջև և օգոս. 10-ին ստորագրեց հաշտութեան համաձայնագիր ,որով օգոստոսի 10-ին ժամը 12-ից սկսած վերջ էին գտնում պատերազմական գործողութիւնները խորհրդային Ռուսաստանի և Հայաստանի միջև։ Հայաստանի զօրքերը կրաւելու էին Շահթախթ-Խոկ-Ազնաբերդ-Սուլթանբէկ և ապա Քիւրկիից հիւսիս և Բազարչայից արեւելք անցնող գիծը, իսկ Ղազախի շրջանում՝ այն գիծը, որ բռնում էին յուլիս 30-ին։ Խորհրդային Ռուսաստանի զօրքերը պիտի գրաւէին Ղարաբաղ, Զանգեզուր, Նախիջևան շրջանները։ Այս գրառումով չէր նախորոշում այդ գաւառների վերջնական պատկանելիութիւնը. այդ հարցը պիտի որոշէր խորհրդային Ռուսաստանի և Հայաստանի միջև կնքուելիք դաշնագրով»[149]։

Օգոստոսի 10-ին Հայաստանի Հանրապետության և խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչների միջև կնքվում է պատերազմական գործողությունները դադարեցնելու համաձայնագիր։

Դրոն Գորիսից տեղափոխվում է Դարալագյազ, ապա Հայաստանի կառավարության հրահանգով շտապ անցնում Երևան և շատ շուտով գարձյալ հայտնվում կռիվների ռազմաթեմում։

Քեմալական Թուրքիան՝ խորհրդային Ռուսաստանի հետ օգոստոսի 24-ին կնքված պայմանագրով ստանալով խորհրդային իշխանության համաձայնությունը, պատերազմ է սկսում Հայաստանի Հանրապետության դեմ։

---

[149] Ս. Վրացեան, «Հայաստանի Հանրապետութիւն», էջ 457։

Կարմիր բանակի կողմից Արցախի գրավումով ու Զանգեզուրի վրա ձեռնարկած հարձակումներով իրականում արդեն դրվել էր խորհրդային իշխանության կողմից «համաշխարհային հեղափոխության» արգելափակող Հայաստանի Հանրապետության նվաճման հիմնաքարը։ Թուրքական զորքերի հարձակումով հանրապետությունը հայտնվում է Հայաստանի անկախությունը կործանելու և այն բռնազավթելու դիտավորությամբ հյուսիսից ու հարավից տեղացող հարվածների ակցանում։ Բոլշևիկյան Ռուսաստանի և Քեմալական Թուրքիայի փոխհամաձայնությամբ իրականացվող գործողությանը ճանապարհ էին հարթելու Հայաստանում բույն դրած հայ բոլշևիկները, որոնք հայկական զորաբանակի և բնակչության շրջանում ծավալած իրենց քայքայիչ ու կործանարար գործունեությամբ հող նախապատրաստեցին հայոց անկախության կործանմանը։

1920 թ. սեպտեմբերի առաջին օրից սկսած պարբերաբար բախումներ էին տեղի ունենում հայկական սահմանապահ զորքերի և հանրապետության սահմանների տարածքային անձեռնամխելիությունը հաճախակի խախտող թուրքական զորամասերի միջև։ Իսկ սեպտեմբերի 23-ին թուրքական զորաբանակը Քեազիմ Կարաբեքիր փաշայի գլխավորությամբ ներխուժում է Հայաստան։ Պատերազմը սկսվում է։

Հայաստանի կառավարությունը ժողովրդին ոգեշնչելու ու նրա պայքարին վճռականություն ու կազմակերպվածություն հաղորդելու նպատակով ամենուրեք տարածում է հետևյալ մարտակոչը.

Հայաստանի քաղաքացիներին,

«Քաղաքացինե՛ր, Հայաստանը նոր փորձությունների առաջ է կանգնած։ Տաճիկ փաշաները չեն ուզում հանգիստ թողնել մեզ. նրանք ձգտում են քար ու քանդ անել մեր երկիրը, բնաջնջել հայ ժողովուրդը։

«Սեպտեմբերի կէսերին կենտրոնանալով Մերդենեկի և Բարդուսի շրջաններում՝ տաճիկ զորքերը յարձակման դիմեցին։ Դաշտային աշխատանքների պատճառով մեր զինուորների մի մասը իրենց տները ցրած լինելով՝ մեր զորամասերը, յամառ կռիվ յետոյ, ստիպված եղան նահանջել եւ

գրաւել ռազմագիտական նոր գիծ, որով ածխահանքների շրջանը անցաւ թշնամու ձեռքը...»։

«...Քաղաքացինե՛ր, տեղեկացնելով ձեզ այս մասին՝ Հանրապետութեան կառավարութիւնը յայտնում է, որ ինքը ձեռք է առնում ամէն միջոց՝ պետութեան անվտանգութիւնն ապահովելու համար եւ վստահ է, որ նենգ թշնամին շուտով դուրս կը շպրտուի մեր երկրից։ Այն ժողովուրդը, որ կարողացաւ ձեռք բերել իր ազատութիւնը, որ դեռ նոր ճնշեց բոլշևիկեան խռովութիւնները՝ թոյլ չի տայ, որ տաճկական փաշաներին յաջողուի իրագործել իրենց դիւային ծրագրները։ Հայաստանի կառավարութիւնը, իր հետ ունենալով յեղափոխական ժողովրդի կամքն ու վստահութիւնը, կանէ այն, ինչ որ իրենից պահանջում է պատմական վայրկեանը։ Սակայն, ժողովուրդն եւս պէտք է լարէ իր բոլոր ուժերը։ Տաճիկ զօրքերի առաջ մէկ անելիք է մնում միայն մեզ — յաղթել կամ մեռնել։ Մենք պէտք է յաղթենք։

«Քաղաքացինե՛ր, որքան եւ աննպաստ լինեն պայմանները, թողէ՛ք ձեր անձնական գործերը։ Ամէն ոք եւ ամեն ինչ պէ՛տք է յատկացուի ֆրոնտին։ Ո՛չ մի դասալիք չպիտի մնայ Հայաստանում։ Ո՛չ մի երիտասարդ չպիտի նստի տանը։ Ամէ՛ն ինչ զօրքի համար։ Գիւղացի, բանւոր, մտաւորական, պաշտօնեայ, արհեստաւոր, ուսանող, կանայք — բոլորդ պէտք է նպաստէք մեր բանակին, որովհետեւ միա՛յն ամենքիս միահամուռ ջանքերով կը խորտակուի փաշաների գարշելի բռնակալութիւնը, եւ Հայաստանը բոլորովին ազատ կը լինի տաճիկ շովինիստների մղձաւանջից։

«Ոտքի՛, ժողովուրդ։

«Կեցցէ՛ Միացեալ եւ Անկախ Հայաստանը»[150]։

Հայաստանի Հանրապետութեան Կառավարութիւն

Հայ-Թուրքական տասնյակ կիլոմետր ձգվող ռազմաճակատում մարտերը ծավալվում են հիմնականում երկու ուղղությամբ՝ Օլթի-Կարս և Սուրմալու։ Հայկական զորաբանակի հրամանատարությունը՝ ելնելով ռազմաճակատում տիրող իրական կացությունից, ռազմական ուժերը գլխա-

---

150 Նույն տեղում, էջ 468—469։

վորապես կենտրոնացնում է հենց այդ ուղղություններում, ընդամին առավելագույն ուշադրությունը կենտրոնացնում Կարսի ճակատի վրա։

«Այս պայմաններուն մէջ,— նշվում է «Ճակատամարտ» թերթում զետեղված ռազմական ամփոփագրերում,— սպայակոյտը որոշեց Իգդիրի ուղղութեամբ թրքական յարձակողականը նկատել կեղծ, ուժերը կենդրոնացնել Կարսի ուղղութեան վրայ, նահանջել միչեւ Պէկլի Ահմէտ, զօրացնել Կարսի աջ թեւը, իբրեւ հոծ թրքաբնակ վայրեր և թրքական ծանր ճնշումի իբրեւ հաւանական գիծ, կռիւ մղել Նովօ Սէլիմի դաշտին վրայ, ի հարկին կանխելով թրքական ընդհանուր յարձակողականը և ժամանակ շահել ուժերը համախմբելու համար»[151]։

Չնայած այն հանգամանքին, որ հայկական բանակը գլխավոր հրամանատարության Կարսի ճակատն էր ընդունում որպես գլխավոր ուղղություն, այնուամենայնիվ, Սուրմալուն իր ռազմա-ստրատեգիական դիրքով պակաս կարևոր նշանակություն չուներ։ Նախ, Սուրմալուի ռազմաճակատը ավելի մոտ է գտնվում հանրապետության մայրաքաղաքին և Հայաստանի ամենախիտ բնակեցված շրջաններին՝ Արարատյան դաշտավայրին։ Եթե թուրքական զորքերին հաջողվեր խորտակել Սուրմալուի ռազմաճակատի հայկական զորամասերի դիմադրությունը, ապա նրանք կարող էին հաջողությամբ գետանցել Արաքսը և հաշված ժամերի ընթացքում հայտնվել Արարատյան դաշտավայրում ու Երևանում։ Իսկ դեպքերի այդօրինակ զարգացումը անխուսափելիորեն հարցականի տակ կդներ ոչ միայն հանրապետության, այլև ողջ Հայաստանի գոյությունը։

Երկրորդ, Սուրմալուն ի տարբերություն մյուս ուղղության հագեցված չէր այնպիսի ռազմական պաշտպանողականությամբ, որպիսին հանձինս հզոր բերդաքաղաքի, ուներ Կարսի ռազմաճակատը։ Կարսի ռազմաճակատի պաշտպանները կարող էին ապավինել բերդաքաղաքի հարյուրավոր հրանոթների, գնդացիրների հզոր կրակի և մեծաքանակ ռազմամթերքի աջակցությանը։

---

[151] «Ճակատամարտ», 1921 թ., փետրվարի 1։

Դրոն՝ գերաշանցորեն գիտակցելով Սուրմալուի ռազմաճակատի դժվարություններն ու նրա դերը հանրապետության պաշտպանության ու գոյատևման գործում, հայկական բանակի հրամանատարությունից պահանջում է իրեն վստահել այդ ուղղությունում գործող զորքերի հրամանատարությունը։ Նա իր հարուստ մարտական կենսափորձով խորապես ըմբռնել էր ռազմավարության մեջ գերիշխող այն ճշմարտությունը, որ որևէ ճակատամարտում հաղթելու անհրաժեշտ նախադրյալը պայմանավորված է ոչ թե տեղանքի ու զինվածության առավելությամբ, այլ մարտունակ, կարգապահ ու բանիմաց հրամանատարների ու զինվորների անբաժիր գործունեությամբ։

Սուրմալուի ռազմաճակատի հրամանատարությունը ստանձնելիս նա գլխավորապես հաշվի է առնում այդ հանգամանքը և ինչպես վկայում է Կարո Սասունին.

«...կարողացած էր իր շուրջ հաւաքել լավագոյն հայ սպաներ, որոնց կազմած զօրամասերը հայկական բանակի ընտրանին էին։ Զօրքերը եւ ժողովուրդը շատ կը սիրէին Դրօն, որուն շուրջը համախմբուած էին»[152]։

Սուրմալուի ուղղությունում թուրքական կանոնավոր և քրդական ավելի քան 10000-անոց զորագնդերի դեմ կանգնած էին ընդամենը 2000 զինվորներ և 1000 աշխարհազորայիններ։ 3000 մարտունակ և իրենց անկախությանն ու հայրենիքին նվիրված զինվորներն ու նրանց անպարտելի հրամանատարն ավելի քան բավական էին թշնամուն ջախջախելու համար։

Հետաքրքիր է ծանոթանալ Դրոյի զորամասերի հրամանատարների բնութագրերին՝ Վարդգես Ահարոնյանի (Նա պատերազմի օրերին եղել է Սուրմալուի ճակատում — Հ. Գ.) մեկնաբանությամբ.

«..Իրօք այստեղ բոլոր աչքի ընկնող և պատասխանատու դիրքեր գրաւող սպաները երիտասարդներ են։ Ահա ծանրախոհ, քրդական հաւասարակշռուած գնդապետ Խուդաբաշեանը, որ հազիւ 30 տարեկան է։ Ահա նրան հասակակից անվրդով և արիւնասիրտ փոխգնդապետ Հալաբեանը։ Մոայլ, սակա-

---

[152] «Հայրենիք» ամս., 1926 թ., տպբկ., էջ 96։

վախօս Թարխանեանը, որի արտաքինն իսկ ասես մի սղմուած բռունցք լինի միշտ պատրաստ թշնամու գլխին իջեցնելու, ընդամենը 26—27 տարեկան, հաստատակամ և վճռական Թարիվերդեանը, 26 տարեկան, շրջահաեաց, զգոյշ, հոտառու Շահբազեանը, 26 տարեկան և վերջապէս կրակ ու բոց Մամաջանեանը միայն 24 տարեկան»[153]։

Չնայած երիտասարդ տարիքին՝ վերոհիշյալ սպաները բազում կռիվների բոցերում կոփված և զինվորների շրջանում անառարկելի հեղինակություն վայելող հրամանատարներ էին։

«Այդպէս են,— շարունակում է Վ. Ահարոնեանը,— այն զորաբանակի սպաները, որոնցից ամէն մէկի թիկունքում իբրեւ անբաժան ստեր կանգնած ինքը՝ զորաբանակի ընդհանուր հրամանատարը՝ Դրօն։

Ինչպէս իր ձագուկներին թռչել սովորեցնող արծիւ՝ տարածել է նա իր թեւերը բոլորի վրայ, ամեն մէկի համար ունի խրախուսանքի մի խօսք, քաջալերանք ու յորդոր։

Եւ որևէ այն թէկուզ վախկոտ զինուորը կամ սպան, որ Դրօի խոսքով բաց աչքերով, առանց տատանուելու դէպի մահը չի քայլի։ Որը նրան ենթակայ ռազմիկներից կյանքդնի խնայել իր կեանքը այն ժամանակ, երբ ինքը ընդհանուր հրամանատարը չի խնայում իր կեանքը հասարակ զինվորի պէս»[154]։

Մինչ հոկտեմբեր ամսի վճռական գոտեմարտերը՝ Դրոյին հարկ եղավ այդ շրջաններում հաղթահարելու ռազմական առումով կարևոր նշանակություն ունեցող մի քանի արգելքներ։

Թուրքական հրամանատարությունը՝ հիմնական մարտական գործողություններ ծավալելու նախօրեին, որպես ապագա արշավանքի հաջողության գրավական, ձգտում է Սուրմալուի Թուրքա-քրդաբնակ շրջանները և հատկապես Կողբի աղահանքերը վերածել ռազմական ամուր հենակետերի։ Հրաժեշտ էր հակառորդին զրկել ամրապնդվելու և

---

153 «Յառաջ», 1920 թ., նոյեմբերի 17։

154 Նույն տեղում։

ռազմական կայուն հենակետեր ստեղծելու հնարավորության։

Սեպտեմբերի սկզբներին հայկական զորագնդերը անակնկալ հարվածով ջախջախում են Կողբում տեղաբաշխված թուրքական զորախմբերին և դուրս շպրտում նրանց Հայաստանի Հանրապետության սահմաններից։ Չանցած մի քանի օր, թուրք հրամանատարությունը՝ վերախմբավորելով ու համալրելով մարտական ուժերը, դարձյալ հարձակվում է այս անգամ արդեն հայ զինվորների կողմից պաշտպանվող Կողբի վրա։ Մի քանի օր ընթացող կռիվներում հայ զինվորները՝ Դրոյի առաջնորդությամբ պարտության են մատնում թուրքերին և հարկադրում նրանց նահանջել նախկին դիրքերը։

Շնորհիվ այդ հաղթանակների, փլուզվում են թուրք հրամանատարության պատերազմական գլխավոր գործողությունները ծավալելու, ռազմական ամուր հենակետեր ստեղծելու նպատակները։ Իսկ Սուրմալու ուղղությունում հաստատվում է կայուն իրավիճակ, որն էլ Հանրապետության զինվորական հրամանատարությանը հնարավորություն է ընձեռում ի հաշիվ Սուրմալուի ճակատի թուլացման՝ գնդապետ Բաղդասարյանի 8-րդ գունդը տեղափոխել Կարս։

Այդ դեպքերից ճիշտ մեկ տարի առաջ, երբ Դրոն մի փոքրաթիվ ջոկատով գտնվում էր Իգդիրում, թուրք-քրդական 3000-անոց հրոսակախումբը՝ իջնելով Բարդողյան լեռներից, ներխուժում է Իգդիր և հանկարծիր բերում քաղաքի հայ պահակազորին։

Իգդիրում Դրոյի մղած այդ կռիվը կարծես հրաշքի է նմանվում։ Նա՝ բնավ չերկնչելով թշնամու բազմապատիկ գերակշռող ուժերից, Կուռո Թարխանյանի ընկերակցությամբ (ընդամենը 180 զինվորներով) այնպիսի հուժկու հարված է հասցնում թուրք-քուրդերին, որ նրանք գլխիկոր լքում են մարտադաշտը՝ թողնելով հարյուրավոր սպանվածներ ու վիրավորներ[155]։

Հոկտեմբերին առավել ուժգնությամբ է սկսվում ռազմական գլխավոր գործողությունները Կարսի և Սուրմալուի ուղղություններում։ Մինչև հոկտեմբերի կեսերը Կարսի ճակա-

---

155 Նույն տեղում։

տում ռազմական դրությունը կարծես թե նպաստավոր էր հայկական զորքերի համար։ Գեներալ Սիլիկյանի գլխավորությամբ գործող հայկական զորքերը պատրաստվում են հարձակման, որը պիտի սկսվեր հոկտեմբերի 14-ին։ Այդ ուղղությունում ռազմական գործողությունները ղեկավարում էին փորձառու զորապետներ Դանիել Բեկ-Փիրումյանը, Վեքիլյանը, Հովսեփյանը, Մազմանյանը և այլք։ Նույն ճակատում էին նաև Սեպուհի և Սմբատի գլխավորությամբ գործող զորամիավորումները։

Խորհրդային զորքերը՝ հաստատվելով Զանգեզուրում, զրկել էին Գ. Նժդեհի գլխավորած տեղի հայկական ուժերին հայ-թուրքական ռազմաճակատ տեղափոխվելու հնարավորությունից։ Համանման պատկեր է տիրում Լոռի, Շամշադին-Ղազախ շրջանում, ուր դարձյալ հայկական զորամասերին խոչընդոտում էին այդ կողմերում հայտնված բոլշևիկյան ուժերը։ Հայաստանը բռնազավթելու ռազմական գործողությունները վաղօրոք խնամքով մշակված ու հաշվարկված էին։

«Սուրմալուի կռիվների ռազմաճակատը կազմում էր մի եռանկյունի, որի կատարը գտնվում էր Իգդիրում, երկու կողմերը կազմում էին Իգդիր-Մարգարա և Իգդիր-Կարակալա գծերը, իսկ հիմքը՝ Արաքսը, Կարակալայի և Մարգարայի կամուրջները»[156]։

Չնայած այն հանգամանքին, որ Սուրմալուի ուղղությամբ սեպտեմբեր ամսին արդեն գործում էին թուրքական մեծաքանակ ուժեր, սակայն թուրք հրամանատարությունը՝ նպատակադրվելով ավելի արագացնել այդ տեղամասում մարտընչող հայ մարտական ջոկատների ջախջախումը, հոկտեմբերի սկզբներին մարտադաշտ է (Իգդիրի հատվածում) նետում նաև Բայազետի զորախումբը, և նույն ամսի 4-ին առաջապահ ջոկատներով գրավում Արհաջ գյուղը։ Եթե թուրքերը կարողանային այդ հատվածում կենտրոնացնել նախատեսված ռազմական ուժերը, ապա զորքերի քանակական և դիրքային հաշվեկշիռը կարող էին արմատապես փոխել ի օգուտ իրենց։ Հարկավոր էր հակառակորդին թույլ չտալ իր զորքերը կենտրոնացնելու և նախաձեռնությունն իր ձեռքը

---

156 Նույն տեղում, նոյեմբերի 20։

վերցնելու հնարավորություն։ Դրոն՝ խորամտորեն գնահատելով տիրող կացությունը, առանց վարանելու հրամայում է գրավել Արհաջ գյուղը։ Հայ զինվորների գրոհն անկասելի էր։ Թուրքական պարտված զորքերը հետ են շպրտվում մինչև Մասիսի ստորոտը։

Նույն օրը մեր զորքերը գրավում են Պիրշ և Խոզալ բնակավայրերը և միայն հակառակորդի մարտադաշտ հասած զորախմբերի դիմադրությունը ու գիշերային խավարը խոչընդոտում են ղարգացնելու ձեռք բերած հաջողությունը։ Այդ օրվա մարտերի վերաբերյալ հայկական զորաբանակի շտաբը ստանում է հետևյալ հեռագիրը.

«Հոկտեմբերի 4-ի կեսօրվան հակառակորդին հաջողվում է գրավել Պիրլ գյուղը և Խուլպ բնակավայրը։ Մեր զորամասերը հետ են քաշվել մինչև Կարակոլայի կամուրջը։ Մոտավորապես ժամը 15-ին Իգդիրի կողմից հասցված հակահարվածով մեզ հաջողվում է գրավել Պիրլ գյուղը, բայց Կամիշլու գյուղի մոտակայքում Թուրքերի և քրդերի զգալի ուժերի (մոտ 1000 մարդ երկու գործող հրանոթներով) կուտակման և մութն ընկնելու հետևանքով մեր հարձակումը կանգ է առել։

Իգդիրի շրջանում հոկտեմբերի 4-ի երեկոյան խալֆալ և Խոշխաբար գյուղերը գրաված քրդերի հետ ունեցել ենք փոխհրաձգություն։ Հոկտեմբերի 5-ի առավոտյան մեր հետախույզները գրավել են նշված գյուղերը և Արհաջ գյուղը»[157]։

Ի տարբերություն Սուրմալուի, Կարսի ռազմաճակատում ռազմական գործողությունները ընթանում էին բավականին անհաջող։ Հոկտեմբերի 14-ին հայկական զորքերի ձեռնարկած հարձակումը չտվեց սպասվելիք արդյունքը։ Թուրքական զորքերը ոչ միայն կարողացան հետ մղել հայ զորապետների կողմից բազմաթիվ սխալներով ու անփութորեն կազմակերպած հարձակումը, այլև մարտադաշտ նետելով պահեստային ուժեր՝ հոկտեմբերի 20-ին դիմելով հակահարձակման, հետ են մղում մեր զորամասերը և հասնում մինչև Անիի մատույցները։

Պատերազմում հաղթանակի հասնելու համար Թուրք

---

[157] Հ. Հ. Կ. Ա. թղթ. 17/17։

հրամանատարությունը անհրաժեշտաբար պիտի վճռական քայլեր ձեռնարկեր նաև Սուրմալուի ճակատում, ուր դեռևս միայն պարտություններ է ճաշակում։

Հոկտեմբերի կեսերին զգալի ուժեր կենտրոնացնելով Դաշ-Բուրանի և Դալի-Դաշի ուղղությամբ՝ թուրք հրամանատարությունը ծրագրում է կենտրոնացված, խոյահարիչ հարվածով ճեղքել հայկական զորամասերի պաշտպանությունը և զարգացնելով հարձակումը՝ գրավել Մարգարայի կամուրջը և դուրս գալ Երևան-Իգդիր խճուղին։ Մարտական գործողությունների հաջող զարգացման դեպքում թուրքերը հույսեր էին փայփայում կտրել Երևան-Ալեքսանդրապոլ (այնտեղ էր գտնվում ռազմաճակատի հրամանատար գեն. Սիլիկյանի ռազմակայանը — Հ. Գ.) հաղորդակցության ուղիները և աքցանի մեջ վերցնել Կարսի ռազմաճակատն ու բերդաքաղաքը։ Վերոհիշյալ հանգամանքների առկայության շնորհիվ Սուրմալուի ռազմաճակատը ձեռք է բերում արտակարգ կարևոր նշանակություն։

Հանրապետության ղեկավարությունը, բանակի հրամանատարությունն ու ժողովուրդը արտատրոփ և մեծագույն հավատով սպասում էր Իգդիրից սպասվելիք հայկական զորքերի հաղթանակի ավետիսին։ Իսկ ժողովուրդը իր համոզմունքի և վստահության մեջ չէր սխալվում, այնտեղ իր քաջակորով մարտիկներով մարտնչում էր Դրոն։

Արարատյան դաշտի, մայրաքաղաքի բնակչությունը սիրտ-հոժարակամ օգնում և ոգևորում էր իր զավակներին, որոնք արդեն նախորդ մարտերում դրսևորած հերոսականությամբ իրավամբ վաստակել էին հայության սերն ու վստահությունը։ Սուրմալուի ռազմաճակատի թիկունքը գործում էր անխափան։ Այդ օրերին կարծես մայիսյան հերոսամարտերի ոգին էր վերստին արթնացել ռազմաճակատին սատարող Արարատյան դաշտի հայության շրջանում։

Հոկտեմբերի 24-ին թուրքական զորքերի գլխավոր խմբավորումներն ու քրդական հրոսակախմբերը վերսկսում են մարտական գործողությունները և մեծ ուժերով հարձակվում Մարգարայի և Կարակալայի մոտերքում դիրքավորված հայկական զորագնդերի վրա։ Արաքսի երկու կամուրջներն էլ կարևորագույն ռազմական նշանակություն ունեցող հան-

գույցներ էին։ Փաստորեն Մարգարայի և Կարակալայի կամուրջներն այն հիմնական հաղորդակցության միջոցներ էին, որոնք Սուրմալուի ողջ գավառը կապում էր Արարատյան երկրի հետ։ Ահա թե ինչու թուրքերը հայկական ողջ զորաբանակը օղակի մեջ վերցնելու նպատակով ձգտում էին նախ և առաջ գրավել հենց այդ կամուրջները և ամենակատաղի հարվածները տեղում էին ռազմաճակատի այդ հատվածներում պաշտպանվող զորագնդերի վրա։

«Երբ սկսել են կռիվները այդ կամուրջի շուրջը, շտաբում ակամայից շատերին հետաքրքրել է այն հարցը, թէ ո՞վ է պաշտպանում այդ կարևոր կէտը.

— Գնդապետ Լալաեանը (45 տարեկան)։

— Եթէ նա է, կարելի է ապահով լինել։ Եթէ թուրքերն անգամ նրա միսը քրքրեն ատամներով, նա տեղից չի շարժւի»[158]։

Դրոն իր տարերքի մեջ էր։ Անխափան գործում էր կապը ճակատի բոլոր զորամիավորումների և զորահրամանատարի միջև։ Զորագնդերի հրամանատարներին Դրոյի կողմից հաղորդվող հրամանը միակն էր. մեռնել, բայց պաշտպանել Արաքսի գետանցումները և ոչ մի պարագայում թույլ չտալ թշնամուն անցնելու գետը։

Ամբողջ օրը թուրքական զորքերի մեկ գրոհը հաջորդում էր մյուսին։ Ռազմաճակատում կենտրոնացված Լալայանի, Խուդաբաշյանի, Հալաբյանի, Թարխանյանի և այլոց գլխավորած հայկական քառապատիկ փոքրաթիվ ուժերի պաշտպանությունը ժայռի նման անսասան էր։

Հոկտեմբերի 24-ին ձեռնարկած հարձակումները թուրքական հրամանատարությանը որևէ շոշափելի արդյունք չտվեց։ Հաջորդ օրը ճակատամարտը սկսվում է առավել մեծ ուժգնությամբ։ Հոկտեմբերի 25-ին ճակատամարտը զգալիորեն տարբերվում էր նախորդներից։ Այդ օրը թուրքերի կողմից հարձակողական գործողություններին մասնակցում էր զորքերի մեծագույն մասը, մեծ քանակությամբ հրետանի և գնդացիրներ։ Իր զորքերի թվական գերակշռությամբ ոգեվորված թուրք հրամանատարությունը Հայկական զորքերի

---

158 «Յառաջ», 1920 թ., նոյեմբերի 17։

պաշտպանությունը արագորեն խորտակելու դիտավորությամբ հոգեբանական գրոհ է ձեռնարկում հայ զինվորների վրա։

Նվագախմբի և թմբուկների զարկերի ուղեկցությամբ թուրքական զինաջոկատները մարտաշարքերով և խրոխտ քայլերով մոտենում են հայ զինագնդերի դիրքերին։ Սակայն, իզուր էր թուրքական հրամանատարության փորձը հոգեբանական գրոհների սարսափազդու տեսարաններով ահաբեկել Սուրմալուի պաշտպաններին։ Դրոյին և նրա զինվորներին անհնարին էր վախեցնել այդօրինակ գործողություններով։

Հոգեբանական գրոհին հաջորդում է թնդանոթային մարտակոցների փոթորկալի կրակը, որի պաշտպանությամբ թուրք զորամասերը նետվում են Սուրմալուի պաշտպանների վրա։

Նախորդ օրվա հաղթական կռիվները թևավորել ու ոգեշնչել էին հայ զինվորներին ու հրամանատարներին։ Ինչպես միշտ կատարելապես զորահրամանատարության բարձունքում էր Դրոն։

«Կռվի ընթացքում Դրոն ամէն տեղ է։ Չի մնում ոչ մի դիրք, որ նա չայցելի, չի մնում ոչ մի զօրամաս, որի թիկունքում նա գէթ մի քանի րոպէով չերևայ։ Մէկին խրախուսել, միւսին քաջալերել, երկրորդի սխալն ուղղել կամ նոր հրահանգներ տալ ստեղծուած կացութեան հանդէպ, ահա թէ ինչ է անում նա կռվի ընթացքում։ Նրան ենթակայ զօրամասերը միշտ զգում են նրա անմիջական ներկայութիւնը։ Մի հանգամանք, որ չի կարող չանդրադառնալ նրա զօրաբանակի բարձր ռազմական տրամադրութեան վրայ»[159]։

Հոկտեմբերի 25-ի ճակատամարտի օրը սարսափելի իրավիճակ է տիրել ռազմաճակատի ամբողջ տարածքում։ Թուրք հրամանատարությունը՝ հաշվի չառնելով կորուստները, անընդհատ պահեստային ուժեր նետելով մարտադաշտ, ձգտում է ամեն գնով ընկճել Հայ զինվորների դիմադրությունը և դուրս գալ Արաքս։ Մի շարք գյուղեր մի քանի անգամ ձեռքից ձեռք են անցնում։

«Այս,— գրում է Վ. Ահարոնյանը,— վերջին կռիվների ընթացքում եղել են վայրկեաններ, երբ չորս կողմից անդադար յարձակումների ենթարկված մեր զօրամասերից ոմանք

---

159 Նույն տեղում։

ընկած են եղել չափազանց ծանր դրության մէջ։ Կորցրած նահանջի ճամբան, որը գրաւուած է եղել թշնամու կողմից, ճակատից կատաղի յարձակումների ենթարկուած մեր զօրամասերից մէկի պետը հեռախօսով դիմում է Դրոյին (բարեբախտաբար ամբողջ կռիւների ընթացքում ճակատի հեռագրային և հեռախոսային կապը ոչ մի վայրկեան չի ընդհատվել) խնդրելով հրահանգներ ստեղծված ծանր կացութեան վերաբերմամբ։

— Ինչպէս էք հրամայում վարուել,— հարցնում է զօրամասի պետը։

— Հրամայում եմ բոլորիդ մեռնել, ոչ մի քայլ յետ,— հրահանգում է Դրոն։

— Լսում եմ, պ. հրամանատար,— լինում է զօրամասի պետի պատասխանը»[160]։

Դրոյի հրամանը անառարկելիորեն պիտի կատարվեր։ Նրա հատու պատասխանից կրկնակի անգամ զգաստացած զորամասի հրամանատարը վարպետորեն է կազմակերպում մարտը և օգտվելով տեղի հասած ուժերից՝ հուժկու հակահարվածով ջախջախում է թուրքերի օղակող զորաշարքերն ու վերականգնում դրությունը։

Թուրք հրամանատարության կողմից հոկտեմբերի 25-ին ձեռնարկած բազում գրոհները դարձյալ ապարդյուն են անցնում։ Դրոյի զինվորները հրաշալի քննություն են բռնում։ Երկու օր ընթացող լարված ու դժվարին կռիվներում նրանք ոչ մի անգամ տեղի չեն տալիս թշնամու չդադարող գրոհներին։

«Ճակատամարտ» լրագրի թղթակիցը այդ կռիվների վերաբերյալ մայրաքաղաքից խմբագրություն է ուղարկում հետևյալ հաղորդակցությունը.

«Թուրքերը յարձակում կը գործեն Իգդիրի վրայ որ Երեւանէն 45 քիլոմէթր հեռու է։ Այդ կուին թնդանօթի ձայնեքն որ կը լսուին հիմա։ 80 ժամէ ի վեր կատաղի և անընդհատ կռիւ կը մղուի այդ ճակատին վրայ գիշեր ու ցերեկ։ Երկու կողմերն ալ կը կռուին կատաղօրէն։ Գաղափար մը տալու համար ըսեմ թէ այդ շրջաններուն մէջ գիւղեր եղան որոնք քանի ան-

---

160 Նույն տեղում։

գամ թնամին և մեր ձեռքն անցան յաջորդաբար։ Մօտ 4 հազար թրքական կանոնաւոր զօրք և 10 հազար քիւրտ և թուրք խուժան կը մասնակցնին յարձակումին, իրենց դէմ ունենալով հայկական հերոս բանակը, որուն թիւը կը հասնի 4 հազարի...

Թրքական կորուստները շատ մեծ են և կը հասնին հազարի, մինչ մեր զոհերը կլլան 50 հոգի...

Իգդիրի ճակատը կը պաշտպանէ Դրօն»[161]։

Մարտերի արդիւնքը բացարձակապես չէր կարող բավարարել շուտափույթ հաղթանակի ակնկալիքով ապրող թուրք հրամանատարութեանը։ Այդ պատճառով հաջորդ օրը, վերախմբաւորելով ուժերը, դարձեալ դիմում է հարձակողական գործողութիւնների։

Հոկտեմբերի 26-ը ճակատամարտի վճռական օրն էր։

Նախորդ կռիւներում իրենց ծրագրերի փլուզումից հետո, թուրք հրամանատարութիւնը որոշում է ձեռնարկել ընդգրկումներով մարտական գործողութիւններ, որոնց նպատակն էր հաջորդաբար գրաւել Իգդիրը շրջափակող գիւղերը և շղթայի մեջ վերցնել հայկական զորաբանակի հիմնական խմբաւորումը, որը գտնվում էր Իգդիրում։ Այդ նպատակով թուրք կանոնաւոր զորագնդերը քրդական հեծելախմբերի համագործակցութեամբ անցնելով Զնղլի լեռնանցքը, կենտրոնանում են Օրգով և Արհաճ գիւղերի մերձակայքում և ուժդին հարձակումով գրաւում Դաշքուռուն գիւղը, այնուհետև հարձակումը զարգացնում դեպի Իգդիր-Մարգարա խճուղին։ Հաղթահարելով այդ հատուածում մարտնչող հայկական փոքրաթիւ ուժերի դիմադրութիւնը, թուրքերը նույն օրը գրաւում են Ղաջար-Թոխանլու, Կարակոյինլու գիւղերը և հասնում մինչև Դալիկ-Դաշտ։ Դալիկ-Դաշտի գրաւումը մեծ հնարաւորութիւն կընձեռեր թուրքերին հարձակումը զարգացնելու Մարգարայի կամրջի և Իգդիրի ուղղութեամբ և հաջողութեան դեպքում կտրելու տեղի բնակչութեան ու զորքի նահանջի ուղիները։ Ամբողջ օրը հակառակորդի ուժերի դեմ հերոսաբար մարտնչող զորախմբերը՝ այլևս անկարող լինելով դիմադրելու թշնամու մեծաքանակ ուժերի գրոհներին,

---

161 «Ճակատամարտ», 1920 թ., դեկտեմբերի 2։

քայլ առ քայլ նահանջում են։ Կռիվների ամենավճռական պահն էր։ Դրոն հայկական նահանջող զորքերին օգնության է ուղարկում Կուռո Թարխանյանի գլխավորած զորախումբը։

«Կռի երկրորդ օրը, Դրոի հրամանով, ֆանաքեռից, բեռնատար ինքնաշարժերով, օգնության է շտապում Կուռո Թարխանեանը։ Մարգարայում պարզում է, որ խճուղին բռնած է թշնամու կողմից, առաջ գնալու հնարաւորություն չկայ։ Առանց երկար մտածելու, Կուռոն դասաւորում է զինուորներին ինքնաշարժերի վրայ, ինքը նստում է առաջին ինքնաշարժի վարիչի մօտ եւ շորս ինքնաշարժերը իրարից յիսուն քայլ հեռու, արագութեամբ քշել է տալիս խճուղիով, միաժամանակ, գնդացիրներից սաստիկ կրակ բանալով ճանապարհի երկու կողմով։ Թշնամին յանկարծակիի է գալիս եւ սարսափահար պահւում առուներում։ Տալով զինուոր վիրաւոր եւ գնդացրային մասի պետ հերոս Մալիդկին սպանուած՝ Կուռոն ճեղքում է թշնամու շղթան եւ հասնում օրհասական դիմադրություն ցոյց տուող Դալիգդաշին օգնության»[162]։

Կուռո Թարխանյանի զորախմբի օգնությունը ճիշտ ժամանակին էր։ Համախմբելով նահանջող զորաջոկատների մարտաշարքերը՝ Կուռո Թարխանյանը անկոտրում պաշտպանությամբ խորտակում է թուրքերի գրոհները և խափանում այդ ուղղությամբ Իգդիրն ու Մարգարայի կամուրջը գրավելու թուրք հրամանատարության ծրագիրը։

Ճակատամարտի մեկ այլ հատվածում թուրքերը գրավում են Իգդիրից ընդամենը 3—4 կմ հեռավորության վրա գտնվող Սուլթանաբադ գյուղը։ Սուլթանաբադի և Ալիզամար գյուղերի ուղղությամբ մարտնչող 10-րդ գունդը Մամաջանյանի գլխավորությամբ համառ պաշտպանությամբ կանգնեցնում են թուրք զորամասի առաջխաղացումը։ Ռազմաճակատի ամբողջ տարածքում հայկական զորագնդերն անպատմելի խիզախումներով կանգնեցնում են թշնամու հարձակումները։ Թուրքական զորաբանակը հարձակողական նախկին ուժն ու հզորությունը արդեն սպառում է, հանդի-

---

[162] Ս. Վրացեան, «Հայաստանի Հանրապետություն» Թեհրան, 1982 թ.; էջ 478—479։

պելով հայ զինվորների ջախջախիչ պաշտպանությանը։ Սակայն, սոսկ պաշտպանությունը չէր Դրոյի տարերքը, իսկ ռազմաճակատում ստեղծված իրավիճակը թելադրում էր գործել ավելի արագ և վճռական, մանավանդ որ Սուլթանաբադի հակառակ ուղղությամբ թուրքերին հաջողվում է գրավել Ալիզամար գյուղը և ապա ներխուժել Իգդիրի գերեզմանոցը։

Դրոյի հրամանով փոխգնդապետ Մամաջանյանը իր գնդի 1-ին գումարտակի գլուխն անցած արընթաց գրոհով դուրս է շպրտում թուրքերին Սուլթանաբադի և շթուլացող արագությամբ հարձակումը զարգացնելով հակառակ ուղղությամբ՝ ջախջախում է հակառակորդի զորաջոկատներն ու գրավում Ալիզամար, Յաղջի գյուղերը։ Ճակատամարտում ընդհանուր հարձակումը ձեռնարկելու առաջին կայծն է բռնկվում։ Դրոն վճռական հարձակում է գործում թուրքական զորաբանակի գլխավոր խմբավորման վրա։ Խորտակելով հակառակորդի դիմադրությունը, հայ զինագնդերը անձնուրաց գրոհներով ջախջախում են թուրք զորաբանակի մարտաշարքերը, և «...թշնամին անհամար դիակներ թողնելով, դիմեց փախուստի, մինչև Բարթողեան լեռների միւս կողմ»[163]։

Հաղթությունը կատարյալ էր, ճակատամարտի հաղթական վախճանին սրտատրոփ սպասող մայրաքաղաքի և Արարատյան դաշտի ժողովուրդը ցնծության մեջ էր։

Մայրաքաղաքի ու դաշտի գլխին ծառացած մահասարսուռ ուժերը խորտակվում են բախվելով հայ զինվորների և նրանց աննկուն զորահրամանատարի անկոտրում կամքին ու խիզախությանը։ Միանգամայն իրավացի է Կարո Սասունին, նշելով.

«Երեւանեան բանակը յաղթական էր։ Ան ոչ միայն մայրաքաղաքն իր շրջաններով վտանգէ ազատած էր, այլ իր փայլուն հաջողութիւններով՝ այդ ճակատի վրայ յաղթական էր»[164]։

Դրոն մեկ անգամ ևս ապացուցեց, որ ինքն իզուր չէ, որ վաստակել է անպարտելի զորավարի անունը։

---

[163] «Հայրենիք» ամս., 1956 թ., հոկտեմբեր, էջ 23։
[164] «Հայրենիք» ամս., 1926 թ., ապրիլ, էջ 97։

Չնայած նրա անզուգական հրամանատարությամբ Սուրմալուի ռազմաճակատում ձեռք բերած փայլուն հաղթանակին, դժբախտաբար Հայաստանի Հանրապետությունը արդեն պարտվել էր։ Կարսի ռազմաճակատն ի տարբերություն Սուրմալուի՝ ունենալով պաշտպանվելու հզոր միջոցներ, չկարողացավ ինչպես հարկն է դիմագրավել թուրքական զորքերի հարձակումներին։

Կարսի զինվորները հայ բոլշևիկների քարոզչությունից մթագնած իրենց «եղբայր կարմիրներին» արժանիորեն ու եղբայրաբար դիմավորելու համար հոկտեմբերի 30-ին հզոր բերդաքաղաքը հանձնեցին թուրքերին։ Հերոս գնդապետ Մազմանյանը հայ զինվորների բարոյալքված ու խաբված վիճակից շանթահար՝ ինքնասպանություն է գործում։

Ազգային գաղափարներից ու արժանապատվությունից անանկ հայ բոլշևիկները կատարեցին իրենց սև գործը։ Ջանցած մի քանի օր Կարսի բախտին է արժանանում նաև Ալեքսանդրապոլը։ Հայկական զորքերը նահանջում են Ալեքսանդրապոլից հյուսիս-արևելք՝ Ջաջուռ և հարավ-արևելք՝ Ակների կայարանի ուղղությամբ։

Նոյեմբերի 6-ին թուրքական հրամանատարությունը Հայաստանի կառավարությանը առաջարկում է զինադադարի հետևյալ պայմանները.

«Հայաստանին կը պարտադրուէր յանձնել հազարներով ջորիներ, փամփուշտներ, թնդանոթի ռումբեր, հրացաններ, որոշ թվով թնդանոթներ, գնդացիրներ և ռազմական նոր կետերու գրաւումներ»[165]։

Թուրքերի առաջադրած պահանջները չափազանց ծանր էին ու անընդունելի։ Հայաստանի կառավարությունը մերժում է ընդունել թուրքերի կողմից առաջադրված զինադադարի պայմանները։ Կառավարության հրահանգով ռազմաճակատի հրամանատարության կազմում կատարվում է փոփոխություններ։ Հետ է կանչվում ռազմաճակատի հրամանատար գնդապետ Սիլիկյանը։ Ջաջուռի ճակատի հրամանատարությունը հանձնվում է Սեպուհին, իսկ Դրոն շտապում է

---

135 «Ճակատամարտ», 1921 թ., փետրվարի 9։

Ակն-Ալագյազի ճակատն՝ ընդունելու այդ ուղղության զորախմբի հրամանատարությունը։

Նոյեմբերի 14-ին թուրքերը երկու ուղղություններով վերսկսում են հարձակումները։ Դրոն վերջին անգամ իրեն յուրահատուկ եռանդով համախմբելով ճակատի ուժերը, հետ է մղում հակառակորդի հարձակումները։ Սակայն այդ մասնակի հաջողությունը արդեն ոչնչով չէր կարող փոխել ընդհանուր կացությունը։

Ջաջուռում կռիվները շարունակվում են եւ մի քանի օր և չնայած Սեպուհի և մի քանի զորավարների հերոսական գիմադրությանը, հայ զինվորների մեծ մասը լքում է ճակատը և թուրքերին հնարավորություն ընձեռում անցնելու հայ զորաբանակի թիկունքը։ Սեպուհը հազիվ է կարողանում դիմադրել։ Կառավարությունը ստիպված ընդունում է թուրքերի առաջարկած զինադադարի պայմանները։

Ալեքսանդրապոլի անկումից հետո թուրքերի առաջխաղացումը կանգնեցնելու համար Հանրապետության կառավարությունը հարկադրված սկսում է զինադադարի բանակցությունները Կարաբեքիր փաշայի հետ։

Նոյեմբերի 23-ին հրաժարական է տալիս Հանրապետության վարչապետ Համո Օհանջանյանը և կառավարության նոր վարչապետ է ընտրվում Սիմոն Վրացյանը։

Դրոն նորընտիր կառավարության կազմում ստանձնում է զինվորական նախարարի պաշտոնը։

Հայաստանի կառավարության հանձնարարությամբ թուրքական զորաբանակի հետ բանակցություններ վարելու համար Ալեքսանդրապոլ է մեկնում Ալ. Խատիսյանի գլխավորած պատվիրակությունը։

Իսկ դեկտեմբերի 1-ին Խորհրդային Ռուսաստանի լիազոր-ներկայացուցիչ Լեգրանը Հայաստանի վերջին վարչապետ Սիմոն Վրացյանին ներկայացրեց Խորհրդային իշխանության վերջնագիրը. այն է՝ Հանրապետության իշխանությունը հանձնել բոլշևիկներին։ Բանակն արդեն գոյություն չուներ, իսկ Հանրապետության զգալի մասը նվաճված էր. կառավարությանը ուրիշ ոչինչ չէր մնում անելու, բացի իշխանությունը բոլշևիկներին հանձնելուց։

Ալեքսանդրապոլի հայ-թուրք և Երևանի հայ-ռուս բանակցությունների Հայաստանի Հանրապետության խորհրդայնացման մանրամասները հանգամանորեն շարադրված են Ալ. Խատիսյանի «Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը» և Ս. Վրացյանի «Հայաստանի Հանրապետություն» գրքերում։

Այսպիսով կենսագործվեց Հայաստանի Հանրապետությունը խորհրդայնացման ճանապարհով նվաճելու վաղօրոք ծրագրած ու մշակված քաղաքականությունը։

Կարճատև, ընդամենը երկուսուկես տարվա կենսագրություն ունեցավ հայ ժողովրդի արյունով, տառապանքով և բազմամյա պայքարով նվաճած Հայաստանի Հանրապետությունը։ Քեմալական Թուրքիայի զինու զորությամբ և «համաշխարհային հեղափոխության» ու ինտերնացիոնալիզմի սայլին լծված ազգուրաց հայ բոլշևիկների համագործակցությամբ խորհրդային Ռուսաստանը բռնազավթեց Հայաստանի Հանրապետությունը և նրա տարածքը մի քանի ամիս անց՝ 1921 թ. մարտին «եղբայրաբար» և հավասարության սկզբունքով բաժանեց իր ու Թուրքիայի միջև։

Լենինի համաձայնությամբ ստեղծվեց ժամանակավոր խորհրդարանական կառավարություն Դրոյի և Սիլինի (բոլշևիկ) գլխավորությամբ։ Չանցած մի քանի օր, բոլշևիկների խոստացած դեմոկրատիան և դաշնակցական գործիչների անձեռնմխելիությունը պահպանելու խոստումները մոռացվեցին։ Բանտերը լցվեցին հազարավոր դաշնակցական գործիչներով ու մտավորականներով։ Աքսորի դաժան ճանապարհը բռնեցին 1200 զինվորական գործիչներ։ 1921 թ. հունվարի 10-ին կարմիր բանակի հրամանատար Գեկկերի «հրավերով» Դրոն պիտի մեկներ Բաքու։ Շատերն էին հասկանում այդ հրավերի իսկական էությունը և փորձում էին նրան համոզել հրաժարվել Բաքու մեկնելուց։ Սուրմալուի ճակատում մարտնչող Դրոյի գվարդիայի հիմնական միջուկը դեռևս պահպանվել էր և նա ցանկացած պահի կարող էր խույս տալ կարմիրների ճանկերից։ Սակայն ավելորդ բարդությունների տեղիք չտալու նկատառումներով որոշում է ընդունել Գեկկերի «հրավերքը»։ Հունվարի 11-ին Երևանում սոսկալի փոթորիկ էր, մայրաքաղաքի ողջ ժողովուրդը հավաքվել էր

ճանապարհելու անհայտ ուղղությամբ գնացող իր պաշտելի զորավարին։ Բաքվից նրան «պատվավոր» աքսորի են ուղարկում Մոսկվա, ուր երկու տարի մնալուց հետո անցնում է արտասահման և հաստատվում Ռումինիայում։ Շատ է խոսվել այն մասին, թե Դրոն 2-րդ համաշխարհային պատերազմի տարիներին համագործակցել է Գերմանիայի հետ։ Այո, դա իրողություն է։ Գերմանիայի կողմից Եվրոպայի նվաճումով շուրջ կես միլիոն հայեր մնացել էին նվաճված տարածքներում և ոչ ոք չէր կարող երաշխավորել, թե նրանք ինչպիսի վերաբերմունքի կարժանանային։ Գերմանիայի հաղթանակի դեպքում հայության գլխին նորից կախված կլիներ ջարդարար սուրը, մանավանդ, որ 3-րդ ռայխի և մի շարք ապդեցիկ գործիչներ Ռոզենբերգի գլխավորությամբ աշխատում էին հայերին դասել ոչ հնդեվրոպական ժողովուրդների շարքը։ Նրա գլխավոր մտահոգությունն էր. ինչպե՞ս վարվել, որ Եվրոպայի հայոց սիյուռքն ու հայրենիքը շհոշոտվեն պատերազմի հետևանքով։ Հանուն իր ժողովրդի գոյության ապահովման՝ Դրոն աշխատում է շահել Գերմանիայի վստահությունն ու համակրանքը։ Այստեղից էլ նրա համագործակցությունը։ Նրա ջանքերով փրկվեցին հազարավոր հայեր, որոնք տառապում էին համակենտրոնացման ճամբարներում։ Իսկ Ղրիմի և Հյուսիսային Կովկասի հայերը դարձյալ Դրոյի շնորհիվ զերծ մնացին բռնություններից։

Անդրադառնալով Գերմանիայի հետ Դրոյի ունեցած կապերին՝ Ավ. Իսահակյանը գրում է.

«Ես Դրոյին վաղուց եմ ճանաչել։ Մենք մոտ ընկերներ ենք եղած անցեալում։ Նա մեծ հայրենասէր է, խիզախ յեղափոխական, հերոսական գործեր էր կատարել։ Բայց նրա մեծագոյն ծառայությունը Հայաստանին ու հայ ժողովուրդին եղաւ հէնց պատերազմի ընթացքին, երբ նա երեւութապէս գործակցում էր Գերմանացոց։ Կռահելով Նացիստների պարտությունը՝ նա գնացել էր Հյուսիսային Կովկաս գերմանական բանակի հետ, եւ զգուշացրել Հայաստանի ժողովուրդը որեւէ ապստամբական ջարժում չանել բոլշեւիկեան տիրապետության դէմ, որը պիտի լինէր Հայաստանի մահը, ինչպէս որ եղաւ Ղրիմի, Քալմուքների (Կալմիկների) և Չեչենների ինք-

նավար շրջանների, որոնց ժողովուրդները սիրով դիմաւորել էին գերմանական զօրքերը։ Նացիստների նահանջից յետոյ, բոլշեւիկները ո՛չ միայն վերջ տուին այդ երեք ինքնավար շրջաններին, այլ եւ նրանց ժողովուրդներին գլխովին աքսորեցին Սիբիրի խորքերը, իսկ նրանց երկրները լցրին Ռուսներով։ Նոյն դաժան ճակատագիրը վերապահուած էր Հայաստանին, եթէ չլիներ Դրօյի նախազգուշացումը»[166]։

Պատերազմից հետո Դրոն իր տիկնոջ՝ Գայանեի և երկու զաւակների՝ տղայի և դստեր հետ հաստատվում է ԱՄՆ-ի Բոստոն քաղաքում։

Օտար ափերում ապրած տարիներին նա մինչև կյանքի վերջն իր անսպառ եռանդն ու կարողությունը նվիրաբերում է հարազատ կուսակցությանը՝ Հ. Հ. Դաշնակցությանը, որի ծառայությունը սփյուռքի հայապահպանության գործում անգնահատելի է։

...1956 թ. մարտի 8-ին ԱՄՆ-ի Բոստոն քաղաքում սարսափելի փոթորիկ էր։ Այդ օրն «Ա՜խ, մեկ էլ Երկիրն տեսնեի...» բառերը շուրթերին իր մահկանացուն է կնքում «...քաջերուն մէջ շքեղօրէն քաջը և հերոսներուն մէջ կախարդօրէն հերոսը», «Հայկական Ապատամարտի ամէնէն գիւցազնատիպ էջերը զարդարած...»[167] Դրոն՝ սերունդներին կտակելով հետևյալ պատգամը.

«...քանի բռնութեան տակ է մեր հայրենիքը՝ Հայաստանը, քանի մեր հողերը բռնագրաւուած են, Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը ունի իր պայքարը եւ Դաշնակցութեան զաւակները, իբրեւ հայ ժողովուրդի հարազատ զաւակներ, պիտի շարունակեն այդ պայքարը. արիւնով կ՚ըլլի՝, գրիչով կ՚ըլլի՝, պայքարով կ՚ըլլի՝, մինչեւ Հայը հաւաքուի իր բոյնին մէջ. Հայը հային կառավարի, ո՛չ Անգլիացին, ո՛չ Ամերիկացին, ո՛չ Ռուսը, ո՛չ Թուրքը. Հայը լինի իր երկրին տէրը. Հայը լինի իր ազատութեան տէրը...»[168]։

---

166 «Հայրենիք» ամս., 1960 թ., էջ 94։

167 «Դրօն եւ իր գործը», Հալէպ, 1948 թ., էջ 8—9։

168 «Դրօ», Պէյրութ, 1956 թ., էջ։

ՅՈՒՇԵՐ*

I

ՉԱ՛ՐԿ, ԵՐԵՒԱՆ ՋԱՆ[1].

1905 թ. մայիսին ահաբեկուեց Բագուի եւ շրջանի քաղաքապետ Նակաշիձէն։ Բագուի Կենտրոնական Կոմիտէի վճռով, ես հեռացայ Թիֆլիսից. Բագում մնալս համարում էր վտանգաւոր։

Ինձ հետ էր եւ ընկերս՝ Կոօն։ Կենտր. Կոմիտէն սաստիկ դժգոհ էր նրանից, որովհետեւ նա, ահաբեկման վճռական վայրկեանին, նշանակուած տեղում չէր երեւացել։ Նոյնիսկ նրան ուզում էին արտաքսել մեր զինուորական շարքերից, բայց իմ միջնորդութեամբ եւ խնդրանքով՝ զիջող եղան եւ թոյլ տուին, որ ինձ հետ միասին մեկնի Թիֆլիս։

Առաւօտեան ժամը 7-ի մօտերը հասանք Թիֆլիսի կայարանը, որտեղից անմիջապէս գնացինք ներկայանալու Բժ. Յ. Տէր-Դաւթեանին, որ, իբրեւ Հ. Յ. Դ. Բիւրոյի անդամ, որոշելու էր մեր անելիքը։

Դրան զանգի վրա դուրս եկաւ բժշկի մայրը, մի փոքր շւարած ու զարմացած զննեց մեզ ու հարցրեց.

— Ո՞ւմ էք ուզում։

— Բժշկին։

---

* «Վէմ» երկամսեայ մշակութային և պատմութեան հանդէս 1934 (բ տարի), թիւ 3, 6, 1934 թ. (թիւ 3, 6, 6, 1935 (գ տարի) թիւ 2, 8։

1 Այս հատուածով չի սպառում մեր խոստումը Դրօի յուշերի հրատարակութեան մասին։ Ընդհակառակը, մենք վստահ ենք, թէ պիտի կարողանանք «Վէմ»-ի էջերում տալ Դրօի ընդարձակ յուշերն ու տեսութիւնները մեր մեծաւոր անցեալի դէպքերի եւ երեւոյթների մասին։ Ս. Վրացեան։

— Էս ժամին բժի՞շկ կը լինի, յետո՛յ եկէք, կարճ պատասխանեց նա եւ պատրաստւում էր դուռը փակել երեսներիս, բայց մենք այնքան էլ հեշտութեամբ տեղի տուողը չէինք։ Առանց մի խօսքի վերցրինք մեր կապոցները եւ մտանք ներս։

— Մայրի՛կ, մենք նրա հետ գործ ունենք, ասացի ես եւ յանձնեցի Բագուի Կենտր. Կոմիտէի ծածկագիր նամակը բժշկին։

Մայրիկը մեղմացաւ։ Կարգադրեց, որ մեր իրերը դնենք նախասենեակում եւ մտնենք բժշկի ընդունարանը։

Այստեղ սպասեցինք ժամը ութից-ինը։ Անշուշտ մայրիկը չէր կամեցել խանգարել որդու քունը եւ չէր զարթեցրել։ Ո՞վ գիտէ՝ գիշերը ո՞ր ժամին էր վերադարձել տուն կուսակցական ժողովից։

Ժամը ինը կը լինէր, երբ մայրիկը նորից մտաւ ներս եւ մեզ հրաւիրեց սեղանատուն։ Քիչ յետոյ եկաւ եւ բժիշկը։ Այստեղ առաջին անգամ ծանօթացայ մեր սիրելի բժշկի հետ, որի անունը մինչեւ այդ շատ էի լսել։

Նախաճաշից յետոյ, բժիշկը ուղղեց մեզ մի քանի կարճ հարցումներ եւ ուզեց իմանալ, թէ ինչի՞ կարիք ունենք։ Բագուի Կենտր. Կոմիտէն գրել էր նրան, որ մեզ ցոյց տայ բարոյական եւ նիւթական ամէն աջակցութիւն, բայց առանց դրան էլ նա մեզանից ոչինչ չէր խնայի։ Կուօն յայտնեց, թէ ինքը ցանկանում է մնալ Թիֆլիսում, ուր ապրում էր իր մայրը, իսկ ես ուզում էի գնալ Երեւան։ Բժիշկը երկուսիս էլ ուշադրութեամբ լսելուց յետոյ, դարձաւ ինձ.

— Լա՛ւ մտածիր, գուցէ քեզ համար էլ այստեղ մնալը աւելի լաւ է։ Վստահ եղիր, որ պէտք եղած ամէն աջակցութիւն կը ստանաս։

— Ո՛չ, առարկեցի ես, անպատճա՛ռ ուզում եմ գնալ Երեւան։

Ինձ Երեւանը գրաւում էր երկու պատճառով. նախ՝ այնտեղ էլ արդէն սկսել էին հայ-թրքական ընդհարումները. երկրորդ՝ Երեւանում էին իմ երկու ամենամտերիմ ընկերները՝ Դաշնակցական Խէշօն եւ Փառակեցի Մկրտիչը, որոնց ձեռքի տակ ես կարող էի օգտակար լինել Երեւանի շրջանի ինքնապաշտպանութեան գործին։

Բժիշկը ուշադրութեամբ լսեց իմ պատճառաբանութիւնները։

— Լա՛ւ,— ասաց նա եւ անմիջապէս մի տոմս գրեց։— Ա՛ռ այս տոմսը եւ գնա՛ ընկ. Մանասի[2] մօտ, նա ամէն բան կը կարգադրէ։

Յետոյ, մի պահ կանգ առաւ, մտածեց ու նորից դարձաւ ինձ.

— Իսկ ճանապարհածախս ունի՞ս։

Այո՛, ճանապարհածախս Բագուում ստացել էի բաւարար չափով։

Ընկերս գնաց մօր մօտ, իսկ ես բժշկի գրած տոմսը ձեռքիս՝ գնացի փնտռելու ընկ. Մանասին։ Նրան էլ առաջին անգամը պիտի հանդիպէի։ Բժշկի տուած ցուցմունքներով հեշտութեամբ գտայ եւ յանձնեցի տոմսը։ Կարճ հարցուփորձից յետոյ, նա էլ բաւարար համարեց ցանկութիւնս եւ ասաց.

— Կատարելապէս հասկանում եմ քեզ։ Լաւ ես անում, որ ուզում ես գնալ Երեւան։ Իսկ ի՞նչ զէնք ունես մօտդ։

— Մի պարաբելում ատրճանակ,— պատասխանեցի ես։

Մանասն անմիջապէս ինձ կառք նստեցրեց եւ տարաւ Վելիամինովսկայա փողոցի վրա գտնուող մի համեստ ճաշարան։ Ներս մտնելուն պէս իր մօտը կանչեց արտաքինով խիստ պարզ հագնուած մի մարդ եւ ականջին ինչ որ բաներ փսփսաց։ Ճաշարանից վերադարձանք Մանասի բնակարանը, իսկ քիչ անցած այնտեղ եկաւ նաեւ վերոհիշեալ մարդը եւ Մանասին յանձնեց մի փոքրիկ արկղ։ Մանասը բաց արաւ եւ միջից հանեց մի բոլորովին նոր մաուզէր ատրճանակ։ Ատրճանակը յանձնեց ինձ եւ ասաց.

— Սա Թիֆլիսի Կենտրոնական Կոմիտէի կողմից նւէր եմ տալիս քեզ։ Մօտիդ պարաբելումը կը յանձնես Երեւանի զինական մարմնին։

Կարող էք երեւակայել, թէ ի՞նչ ուրախութիւն պատճառեց

---

2 Սարգիս Մանասեան, դաշնակցական յայտնի գործիչ. հայ-թրքական ընդհարումների ժամանակ նրա ձեռին էր կենտրոնացած զէնքի գործը. Հայաստանի Հանրապետութեան օրով ներքին գործոց նախարարի օգնական։ 1920 թուին սպանուեց բոլշեւիկների ձեռքով, Բագու գերուելուց յետոյ։

ինձ Մանասի նէրը, մանաւանդ այդպիսի ջերմ ղդացումնքով տրուած։

Թիֆլիսում երկար չմնացի. անմիջապէս մեկնեցի Երեւան։ Արդէն քաղաքում եւ ամբողջ նահանգում մթնոլորտը լարուած էր։ Ճանապարհները դարձել էին վտանգաւոր։ Թուրքերն ու հայերը իրարու դէմ էին կանգնած, իբրեւ երկու թշնամի բանակներ։ Մանաւանդ, յարաբերութիւնները սրել էին Նախիջեւանի ընդհարումներից յետոյ։

Դաշնակցական խէշօն ինձ ընդունեց արտակարգ ուրախութեամբ ու անմիջապէս ներկայացրեց Գալուստ Ալոյեանին[4] եւ վերջինիս գիտութեամբ ու համաձայնութեամբ ինձ առաւ իր տրամադրութեան տակ՝ նոյն օրն իսկ նշանակելով թուրքական խմբի խմբապետ։ Այդ խումբը բաղկացած էր եօթը հոգուց. ես եղայ ութերորդը։ Մեր մշտական հաւաքատեղին Զոկի ծանօթ կաթնատան յետեւի սենեակն էր, ոստիկանատան կից։

Նախ քան գործի անցնելը ես խնդրեցի երկու օրով արձակուրդ։ Մէկ տարի էր որ դուրս էի եկել ծննդավայրից, ուզում էի տեսնել Իգդիրը, ծնողներիս, ազգականներիս ու բարեկամներիս։ Խէշօն ուրախութեամբ թոյլ տուեց. ես վարձեցի մեր դաշնակցական կառապան Միխոի կառքը եւ մեկնեցի գիշերով։ Ես վտանգւած էի եւ չէի ուզում լուսով մտնել Իգդիր։

Սուրմալուն միակ վայրն էր, ուր հայ-թրքական բարի հարեւանական յարաբերութիւնները խախտուած չէին։ Շրջանը խաղաղ էր եւ ճամբորդութիւնը ապահով։

Առաւօտեան դէմ հասայ մեր տուն եւ ամբողջ օր տնից դուրս չեկայ։ Երեկոյեան մօտս եկաւ Գեորգանը[5] եւ յայտնեց, որ Երեւանում սկսել են հայ-թրքական ընդհարումներ եւ թուրքերը բաւական շատ հայեր են կոտորել։ Էլարը չափազանց ծանր տպաւորութիւն թողեց վրաս։ Ես ինձ զգում էի

---

4 Գալուստ Ալոյեան, կուսակցական անունով Թորոս, հին դաշնակցական գործիչ ու զինագործ։ Սպանուեց շէթանների ձեռքով, 1914 թ. ամառը, Վանից Կովկաս անցնելիս։

5 Իգդիրի դաշնակցական ընկերներից։

յանցաւոր. չէ՞ որ թուցիկ խմբի պետ էի նշանակուած եւ ընդհարման ժամանակ պարտականութիւններ ունէի կատարելիք։

Այլեւս երկար մտածելու ժամանակը չէր։ Հակառակ ծնողներիս թախանձանքին, որ գէթ մի օր էլ մնամ իրանց հետ, նոյն գիշերն իսկ ճանապարհ ընկայ Երեւան։ Գեորգանը հետս դրեց իգդիրցի Գասպարենց Մելիքսեթին, որի հետ մեկնեցինք կառքով, հայկական գիւղերի վրայով։

Դեռ լոյսը չէր բացուել, որ հասանք Երեւան։ Ես անմիջապէս վազեցի Խէշօենց տունը։ Նա ապրում էր Խէշումեանենց բնակարանում, Յարսկի թէ Բեհբութեան փողոցում։ Ներս մտնելով՝ ապշած տեսայ, որ Խէշօն կիսահանած նստած հաց է ուտում։ Ինձ որ տեսաւ, բարձր պոռաց.

— Հը՜- խաթաքեա՛ր[6], եկա՞ր, դէ՛, արի հաց ուտենք...

Խէշօի մայրիկը, որ մեր բոլորիս մայրիկն էր, ասաց.

— Խէշօս աշխարհը շլակել ա, ման ա գալիս. առաւօտուց հաց չի կերել, հէնց նոր եկաւ։

Ես Խէշօին երբեք այդքան ընկճուած ու մտազբաղ չէի տեսել։ Ով նրան ճանաչում էր, գիտէր, որ ինչքան դժուար պայմանների մէջ էլ գտնուէր, միշտ կը պահէր հոգեկան արիութիւնը եւ իր մտազուարթ եւ օրհնեալ կատակներով կուրախացնէր ամենքին։ Այժմ ընկել էր խորունկ տխրութեան մէջ եւ երեսին ժպիտ չէր երեւում։

— Հը՜, ի՞նչ կայ, Խէշօ,— հարցրի ես։

Նա դադարեց ուտել։ Սաստիկ յուզուած էր։ Մարմնի բոլոր ջիղերը լարուած էին։ Աչքերը խոժոռոտ՝ երկու ձեռքի վրա յենուեց եւ թողեց ճաշի սեղանը։

— Էլ ի՞նչ պիտի լինի,— պատասխանեց նա դառնութեամբ,— հալա որ ջարդեցին, մնացածը յետոյ կը պատմեմ։

Ու ամբողջ երկարութեամբ ձգուեց թախտի վրա, երկու ձեռքերը երկարացրեց մարմնի երկու կողմը, ոտքերով հանեց կօշիկներն ու մի կողմ շպրտեց անփութօրէն եւ մայրիկին խնդրեց, որ մի բանով ծածկէ։ Մայրը շատ խնդրեց, որ շորերն էլ հանէ, բայց նա չը լսեց ու այդպէս էլ քնեց։

Ես անցայ հարեւան սենեակը։ Այնտեղ էլ նոյնպէս շորերը հագին, քնած էր Փառակեցի Մկրտիչը։ Խէշօից ես դեռ քաշ-

---

6 Սխալվող (ծանոթագրությունը՝ կազմողի՝ (Ա. Անդրանիկյան)։

ում էի, բայց Մկրտիչի մոտ ազատ էի պահում ինձ։ Ես նրան հրեցի ու կանչեցի.

— Է՜, ղոչի Աղամալով, վե՛ր կաց։ Մի պատմիր տեսնենք ի՞նչ է պատահել։

Մկրտչի պատմութիւնից պարզւեց, որ քաղաքի թուրքերը, յանկարծակիի բերելով՝ յարձակւել են հայերի վրա եւ 20—25 հայեր են սպանել, որ Կենտր. Կոմիտէն զէնքի պակասութեան պատճառով սարսափի մատնւած՝ գլուխը կորցրել է եւ հրահանգել է առ այժմ զգոյշ մնալ, ընդհարումների առիթ չտալ եւ պատրաստւել։ Մանր դրութիւն էր ստեղծւել քաղաքում։ Թուրքերը առաջին յաջողութիւնից երես առած՝ ամէն րոպէ կարող էին նոր յարձակումներ գործել ու նոր ջարդ առաջ բերել։

Ես էլ պառկեցի Մկրտչի կողքին եւ անընդհատ հարցեր էի թափում նրա գլխին, իսկ նա, կէս-քուն, կէս-արթուն, քթի տակից ինչ որ բաներ էր մրթմրթում։ Նրա այդ մրթմրթոցից ոչինչ չհասկացայ։

Առաւօտեան երբ զարթնեցինք, Խէշօն արդէն տանը չէր։ Գնացինք Զոկի կաթնատունը, իմացանք, որ գնացել է ման գալու քաղաքի դիրքերը եւ նոր կարգադրութիւններ անելու։

Ճաշի մօտերը Խէշօն վերադարձաւ կաթնատուն։ Նրա հետ էին եւ իր երկու թիկնապահները՝ Կոլոտ Շահէնը եւ մի էջմիածնեցի տղայ, որի անունը մոռացել եմ։ Անցանք յետեւի սենեակը։ Խէշօն հրամայեց Շահէնին կանգնել դրան առաջ եւ ոչ ոքի ներս չթողնել, իսկ ինքը նստեց սեղանի մօտ, շիբուխը լցրեց մախոռկայով[7] ու սկսեց ծխել։ Յետոյ ոտքի ելաւ ու սկսեց ման գալ՝ փստացնելով շիբուխը եւ ծխի քուլաները դուրս փչելով բերանի երկու կողմերից։ Ես ու Մկրտիչը լուռ հետեւում էինք նրա շարժումներին։ Ի՞նչ էր խռովում նրա հոգին։ Ինչո՞ւ էր այդքան անհանգիստ ու մտազբաղ։

Խէշօն մէկէն ընդհատեց իր զբօսանքը, կանգ առաւ մեր առջեւ եւ սկսեց նկարագրել ստեղծւած դրութիւնը։

— Նախիջեւանն ու Շարուրը շատ ծանր վիճակի են մատնւած, կարող են ջարդւել, Դարալագեազը ենթարկւել է

---

7 Մխախոտի հասարակ տեսակը։

թարաքեամայի[8] անմիջական հարուածներին։ Սուրմալուի մի բուռն հայութիւնն էլ բնաջնջման վտանգի տակ ա։ Երէկւայ ջարդը սիրտ պիտի տայ Երեւանի թրքութեան, իսկ հայերի ոգին պիտի ընկնի։ Կռիւը շատ ա մեծ. իմ գլխի բանը չէ էս գործը։ Բլնգեազ Կենտրոնական Կոմիտէի մէջ էլ էն մարդը չկայ, որ այս չափի զինւորական գործերը ըմբռնի ու վարէ։ Փամփուշտի ու զէնքի տեսակէտից էլ մենք շատ խեղճ ենք, մինչ թրքութիւնը զինւած ա ու զինւում է կառավարութեան օժանդակութեամբ։ Ասում են՝ Դումանը պիտի գայ. ա՜խ, ուր ա մի գար։ Նա շատ նազ անել չի գիտի, քեաֆուր օղլին՝ կնանիքը ծախել կը տայ, աթաբընի եանդրար[9], փափախները ծախել կը տայ ու էս շուն շան որդի հարուստներին կը ստիպէ զէնք առնել։ Եւ, վերջապէս ամէն մէկին իր տեղը կը դնի եւ իր ճամբէն ցոյց կը տայ։

Իր ճառը վերջացնելուց յետոյ, խէշօն շարունակեց փստացնել շիբուխը։ Եւ աւելացրեց.

— Բէնամուս եղանք. Երեւանի մէջ էլ թուրքերը մեզ տին։ Կենտրոնական Կոմիտէն էլ մի եանից դատը-բէդատը քցել ա, թէ՝ ամէն զգուշական միջոց ձեռք առ, որ նոր ընդհարումների առիթ չստեղծի, թէ՝ ընդհարման պատասխանատուն դու ես, թէ առիթներ ստեղծողը ամենախիստ պատժի կենթարկւի։ Չեմ իմանում՝ ի՞նչ անեմ։

Ապա հրամայեց Մկրտչին, որ անմիջական հսկողութեան տակ առնէ եւ ղեկավարէ Շնթաղի դիրքերը, որտեղից կարող էին թրքական կատաղի յարձակումներ տեղի ունենալ։

— Իսկ ես, վերջացրեց նա, անձամբ եղել եմ միւս շրջանները, նշանակել եմ շրջանապետներ եւ տւել հարկաւոր հրահանգները։

Իմ թռուցիկ խմբին էլ, որի անդամների թիւը երկու օրւայ մէջ հասել էր 12-ի, հրամայեց բաժանւել երկու մասի, կէսը կեդրոնացնել Ամիրեանի քարվանսարայում, բազարի դիմացը, որտեղ ջարդւել էին հայերը, իսկ միւս կէսը միշտ պատրաստ պահել կաթնատան յետեւի սենեակում։

---

8 Քոչւոր թուրքեր։

9 Տնաքանդ կանի (ծ. կ.)։

10 Բե (թրք.) ժխտական մասնիկ. (ծ. կ.)։

Ես իմ թուցիկ խմբի անդամների մի մասին դեռ չէի ճանաչում։ Նախ՝ բոլորին հաւաքեցի Թազա եկեղեցու բակը. եօթ հոգուն Քիւրդ Խէշօի գլխաւորութեամբ ուղարկեցի Ամիրեանի քարվանսարան, միւս մասին էլ հրամայեցի սպասել Զակի կաթնատան յետեւի սենեակում։ Ինքս էլ, Խէշօի կարգադրութեամբ, գնացի նրա մօտ։

Այստեղ նորից ու նորից խոսեցինք տեղի ունեցած հայկական ջարդի, նրա թողած ազդեցութեան, ունենալիք հետեւանքների մասին։ Երեւանի ժողովուրդը շատ էր ազդուել դէպքից։ Ամէնքի մէջ տիրում էր յուսալքում։ Երեւանցիք որ գուցէ ամենից լաւ ծանօթ էին Դաշնակցութեան մարտիկների կեանքին ու քաջագործութիւններին, որ ա՜յնքան մեծ յոյսեր էին դրել Դաշնակցութեան վրա, ա՜յժմ շշմել ու շւարել էին։ Չէին հասկանում, թէ ի՞նչպէս պատահեց կոտորածը, թէ ինչո՞ւ լուռ եւ անգործ էր Դաշնակցութիւնը, ինչո՞ւ հարուածին չպատասխանեց հակահարուածով։

Հոգեբանական այս ծանր վիճակը ամենից խորը զգում էինք մենք՝ դաշնակցական մարտիկներս։ Խէշօի վշտալիր արտայայտութիւնը, թէ՝ «նամուս չմնաց, պէ՛տք է այս անարգանքը մաքրենք», ամբողջապէս արտայայտում էր եւ մեր տրամադրութիւնները։

Այո՝ կարելի չէր կուլ տալ հասցուած անպատուութիւնը։

Միւս կողմից՝ պարզ էր, որ առաջին յաջողութիւնից երեսառած թշնամին տեղը հանգիստ չպիտի նստէր։ Արդէն նշանները երեւում էին. թուրքերը հեւ ի հեւ պատրաստւում էին նոր յարձակման համար։ Եւ բաւական է, որ օգտուէին հայերի ընկճուած տրամադրութիւնից եւ արագացնէին հարուածը։ Մի նոր յաջող հարուած եւս, եւ հայերի համար կը ստեղծուէր անտանելի կացութիւն։ Յաղթական թուրքը գլուխը կը բարձրացնէր եւ քաղաքից դուրս, հայ-թրքական ընդհարումների հրդեհը կը տարածէր ամբողջ նահանգում։

Ես տեսնում էի, որ այս մտքերը տանջում էին եւ Խէշօին ու Մկրտչին։ Ինքնապաշտպանութեան գործի ղեկավար Խէշօի եւ նրա օգնական Մկրտչի վրա էր ընկնում կոտորածի եւ ծագելիք բարդութիւնների անմիջական պատասխանատուութիւնը։ Խէշօի մէջ մի կողմից խօսում էր լաւագոյն մարտիկի Բասիքը, միւս կողմից նրան խորապէս յուզում էր ժողովրդի

ապահովութեան հոգսը։ Վերջապէս, նրան անհանգստացնում էր եւ Դումանի գալու լուրը. չէ՞ որ ինքը Դումանի լաւագոյն զինուորներից ու նրան պաշտողներից էր. ի՞նչ երեսով պիտի ներկայանար նրան։

— Հէ՛յ, մէրդ մեռնի, Խէշօ՛, ի՞նչ երեսով պիտի երեւաս Դումանին,— կրկնում էր նա անընդհատ։

Դրութիւնն անտանելի էր ոչ միայն Խէշօի, այլ եւ Երեւանի հայութեան համար։ Կենտրոնական Կոմիտէն կարգադրել էր խոհեմ լինել ու սպասել, բայց չէ՞ որ թշնամին չէր սպասի։ Կռվի մէջ յաղթութիւնը մեծ չափով ապահովւած է նրան, ով իր ձեռքը կառնէ նախաձեռնութիւնը։ Բոլոր երեւոյթները ցոյց էին տալիս, թէ սպասելու անմիտ քաղաքականութիւնը կարող էր լինել կորստաբեր հայերի համար։ Ընդհակառակը, հակահարւածը մեր կողմից, յաջողութեան դէպքում, հիմնովին պիտի փոխէր դրութիւնը եւ հայերին պիտի դնէր աւելի նպաստաւոր վիճակում։ Պատերազմը յայտարարել էր թշնամին. մենք պաշտպանւողի դերում էինք։ Լաւագոյն պաշտպանութիւնը յարձակումն էր։

Այսպես մտածում էինք մենք Մկրտչի հետ։ Երկար ու բազմակողմանի քննելով ստեղծւած կացութիւնը, մենք որոշեցինք առաջարկել Խէշօին մեր ձեռքը առնել նախաձեռնութիւնը։

— Վա՛յ, խաթաքեար քէօփօղլիք,— ասաց նա,— ես էլ ամբողջ օրը դրա մասին եմ մտածում։ Խում թուրքերը մեր գլխին ասլան չդառա՞ն։ Թէնամուս ապրելն էլ մի բան չէ. որտեղ կտրի կապը... ու վերջացրեց մի սարսափելի հայհոյանքով։

Ապա Խէշօն պինդ փակեց սենեակի դուռը, եւ երեքով նստանք խորհրդակցելու դրութեան եւ մեր անելիքների մասին։ Ամենից առաջ ստուգեցինք մեր տրամադրութեան տակ գտնւած զէնքի քանակը. պարզւեց, որ մեր ունեցած մօտ 15 հրացանների թիւը հարիւրից չի անցնում. ունէինք նաեւ յիսուն չափ ատրճանակներ, մեծ մասով մաուզէր։ Շատ չէր այդ, բայց եւ այնպէս գործ կարելի էր տեսնել։

Խէշօն կանչել տւեց մեր պահեստապետ Ջանիբէկեան Հայկին։ Սա թուղթալով ներս ընկաւ եւ բերեց մի ուրախ լուր. հէնց նոյն օրը Աղեքսանդրապոլից ստացել էր 15 մօտին հրացան եւ 4000 փամփուշտ։

— Ի՞նչ մսիններ են, հա՞, բոլորովին նոր, դեռ կաքաւի ձէն չեն լսել,— շաղակրատում էր Հայկը։

— Լա՛ւ, լաւ, խաթաքեար քեռիօղլի,— ընդմիջեց Խէշօն,— էդ մսինները մարդու չես տայ եւ կը պահես պատրաստ։

Մեր խորհրդակցութիւնը վերջացաւ բարձր տրամադրութեան տակ։ Զեռք առնուած ռազմագիտական միջոցները յոյս էին ներշնչում, որ այլեւս Թուրքերը չէին կարող անակնկալի բերել ու կոտորել հայերին։

. . . . . .

Նոր ընդհարումը տեղի ունեցաւ մեզ համար աւելի նպաստաւոր պայմաններում։ Ժամը ցերեկւայ 12-ն էր, երբ կռիւը սկսեց։ Ես իգդիրցի Մելիքսեթի հետ փոստի մօտ էի, որտեղից ծայր տեց հրազէնների տրաքոցն ու սարսափահար փախեփախը։ Զոկի կաթնատունը փոստից հարիւր քայլի վրա էր։ Շտապեցինք այնտեղ։ Թուրքիկ խմբի տղաներն արդէն փողոցումն էին, կաթնատան առաջ եւ հրամանի էին սպասում։

Խէշօն, որ մինչեւ այդ շրջել էր քաղաքի բոլոր կայարաններն ու դիրքերը եւ ժամը 11—12-ին նստած էր «Ֆրանսիա» հիւրանոցում, Կանդուրալեանի[11] պատշգամբում, Աստաֆեան փողոցի վրա, հրացանաձգութեան առաջին իսկ վայրկեանից թռել էր փողոց եւ այժմ մեծ-մեծ քայլերով գնում էր Բուլվարի ուղղութեամբ։ Նրան միշտ, որոշ հեռաւորութեան վրա, հետեւում էր իր թիկնապահ կարճահասակ Շահէնը։ Ես տղաներին կարգադրեցի.

— Տղե՛րք ջան, դէպի Բուլվար։

Իսկ Խէշօն բղաւում էր.

— Հը՞, բաբամ օլասան[12], զարկելով դէպի՛ Մէյդան։

Կռիւը տարածուեց ամէն ուղղութեամբ։ Գլուխները կորցրած, իրենց ունեցածքը թողնելով անտէր, փախչում էին հայ ու թուրք խանութպաններ, փայտավաճառներ, մանրավաճառներ, կառապաններ, ամենքը։ Պայթել էր Դաշնակցութեան մաուզէրը, եւ կռւելու պատրաստակամութեամբ փո-

---

11 Գիւղատնտես Պօղոս Կանդուրալեան, հին դաշնակցական, Երեւանի կենտր. Կոմիտէի անդամ, Հայաստանի Հանրապետութեան օրով Գեղատնտեսական Գոյքերի բաժնի վարիչ էր։

12 Հայրս լինես (ծ. կ.)։

ղոց էին թափել պատանի աշակերտներ, երիտասարդներ, ծերեր, բոլորը սրտապնդած փոխվրէժի գաղափարով։ Սկսած իրարանցման հետ միաժամանակ ծայր տուին դիրքային կռիւներ հայ եւ թուրք թաղերի միջեւ։

Դամբրբուլաղի կողմից թաթարները շարունակ ուժեղ գրոհներ էին գործում հայկական Շնթաղի վրա եւ մերոնց շեշտակի կրակի տակ ընկնելով՝ յետ էին նահանջում։ Մեր մարտիկները մինչ այդ արդէն մաքրել էին Բուլվառը, Մէյդանը, Սուրբ Սարգսի փողոցը եւ օգնութեան էին գնում Շնթաղին։ Երբ ես իմ մարտիկների հետ հասայ Շնթաղ, տեսայ որ Մկրտիչը դիրքից դիրք անցնելով խրախուսում էր կուռղներին եւ հրահանգներ տալիս։ Մեր երեւումը աւելի եւս սրտապնդեց կուռղներին, որոնց կրակի տակ թշնամին հարկադրուեց փակուել տներում։

Այս տաք կռի ժամանակ մեր տղաները գրաւեցին Դամբրբուլաղի թուրք դիրքերի եւ Շնթաղի մեր դիրքերի միջեւ գտնուող հանրատունը, որ բարձրութիւնից իշխում էր շրջապատի վրա։ Այս դիրքի գրաւումով թուրքերի շարժումը դէպի Շնթաղ դարձաւ անկարելի։

Իմ մարտիկների մի մասը թողնելով Մկրտչի տրամադրութեան տակ՝ միւսների հետ վերադարձայ Զոկի կաթնատունը։ Այնտեղ իմացայ, որ Խէշօն անցել է Փանահ խանի տան վերեւը ընկած մեր դիրքերը։ Տղաների հետ շտապեցի նրա մօտ։ Նա տղաներին դասաւորեց թոյլ դիրքերում, անհրաժեշտ հրահանգները տուեց եւ ինձ հետ վերադարձաւ կաթնատուն։ Այնտեղ Խէշօն ասաց, թէ թուրքերին լռեցնելու լաւագոյն միջոցներից մէկն էլ կը լինէր այն, որ մի խումբ տղաներ նորքի սարով բարձրանային Դամբրբուլաղի գլուխը եւ հրացանի կրակի տակ առնէին թշնամուն։ Այս միտքը սրտիս շատ մօտ եկաւ։ Ես խնդրեցի, որ թոյլ տայ ինձ գնալու։ Խէշօն համաձայնեց եւ իմ տրամադրութեան տակ դրեց Թիֆլիսից նոր եկած մօտ տասը սքանչելի մարտիկներ՝ Կոփեցի Կնեազին, Էրզրումցի Արամին, Թիֆլիսեցի Շէկ Տիգրանին եւ այլն։ Սրանցից ոմանք զինուած էին ատրճանակով, մի մասն էլ բոլորովին անզէն էր։ Խէշօի հրահանգը ձեռքիս գնացի ուղիղ մեր պահեստապետի մօտ եւ տղաների համար ստացայ հրացաններ հարիւրական փամփուշտներով ու փամփշտա-

կալներով։ Զինված մարտիկներին միացան եւ Նորքի ուժերը, որոնց մեծ մասը անզէն էր կամ միայն դաշոյն ունէր։ Գիշերուայ ժամը 1-ին պիտի յարձակուէինք։ Նորքցիք լաւ ծանօթ էին ճանապարհներին և մեր բոնելիք դիրքերին։ Մեր շարժելու վայրկեանին հասաւ նաեւ խէշօն եւ մեր շուրջը գտնուած անզէն գիւղացիներին տեսնելով՝ սրախօսեց.

— Հը՜, ի՞նչ ա, պոլկ[13] էք կազմել։

Եւ հրամայեց, որ լոյսը չբացուած վերադառնանք Նորք։

Ընկանք ճանապարհ։ Էլ կարող էք երեւակայել, թէ ինչպէս էի կառավարում այդ խայտաբղէտ խաժամուժը։ Ժամ ու կէսից յետոյ հասանք նշանակուած տեղը եւ բռնեցինք ամուր դիրքեր։ Մեր դրութիւնը հիանալի էր. թիկունքը ապահովում էին լեռները. մենք իշխում էինք Թուրքերի վրա, որոնք, երեւի, չէին ենթադրում, թէ այդ բարձունքներից իրենց գլխին կրակ պիտի թափւի։

Իմ բարձր դիրքից ես դիտում էի վարը տարածուած Թրքական թաղը, որտեղից հրացանի ձայներ էին հասնում։ Այժմ, երեւի, Մկրտիչը քրտնաթոր՝ դիրքից դիրք է վազվզում եւ կարգադրութիւններ է անում, իսկ ես անխռով խորհում էի, թէ ինչպէս սկսեմ։ Մարտիկներից մի տասնեակ ուղարկեցի դէպի առաջ, իսկ մենք 2000—2500 քայլ հեռուից սկսեցինք որոտընդոստ համազարկը։ Մեզ հետ եկած անզէն գիւղացիներն էլ «ուռա՜»-ներով սրտապնդում էին մեզ։ Այդ աղմուկը գիշերային խորհրդաւորութեան մէջ ահաւոր տպաւորութիւն էր թողնում, եւ զարմանալի չէ, որ Դամբրբուլաղի թուրք թաղի բոլոր ճրագները անմիջապես մարեցին, երթեւեկութիւնը փողոցներում դադարեց եւ յարձակումները հայերի վրա վերջ գտան։ Թուրքերի սարսափը մեծ էր, մանաւանդ, այն պատճառով, որ հայկական դիրքերին մօտ գտնուող մի քանի թրքական տներ յօդս ցնդեցին մեր ռումբերից։

Մենք կրակեցինք մօտ 2000 փամփուշտ։ Կասկածում եմ թէ մեր փամփուշտները շատ մարդ գլորեցին. բայց սարսափը մեծ էր։ Յամենայն դէպս, մեր թիկունքային հարուածը վճռական էր եւ շշմեցրեց Թուրքերին։

---

13 Զօրապուլկ

Երբ առաւօտեան վերադարձանք քաղաք, մեր յաղթանակը այլեւս ակներեւ էր. հայերը ցնծութեան մէջ էին։ Երեւանցիք ոյժ առած՝ միաբերան գոռում էին. «Զա՛րկ, Երեւան ջան, զա՛րկ։

Գիշերային այս գրոհը բոլորովին բարձրացրեց քաղաքի հայերի բարոյական կորովը, ոգեպնդեց ու բարձրացրեց նաեւ նահանգի հայութեան տրամադրութիւնը։

Միւս օրը առաւօտեան գնացի տեսնելու Խէշօին։ Նրա դէմքը փայլում էր ուրախութիւնից։ Նա պինդ գրկեց ինձ, տաք-տաք համբուրեց ու ասաց.

— Խաթաքեա՛ր, դու որ մի շաբաթ կռիւ անես, Քանաքեռի ջաբախանան[14] քեզ չի հերքի։

II

ԱՌԱՋԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՍ ԴՈՒՄԱՆԻ ՀԵՏ

Հակառակ Բագուի Կենտրոնական Կոմիտէի կարգադրութեան, ընկերական մի պարտականութիւն կատարելու նպատակով, 1905 թ. յունիսի վերջերին ես Երեւանից վերադարձայ Բագու։

Այդ ժամանակ Մարտիրոսը[15] եւ Ալեքսանդրապոլցի Մուկուչը (Մկօ) բանտարկուած էին Նակաշիձէի առաջին մահափորձի պատճառով, որ անցել էր անյաջող։ Պէտք է տեղի ունենար զինուորական դատ, եւ բանտարկուած ընկերները համոզուած էին, որ դատարանը մահուան պատիժ կամ յաւիտենական տաժանակիր աշխատանքի վճիռ պիտի տայ։ Մարտիրոսը նամակ էր գրել Երեւան եւ խնդրում էր, որ ամէն կերպ աշխատենք, բանտից մինչեւ դատարան տանելը, փախցընել իրենց, իսկ եթէ այդ չյաջողուի, ռումբ նետել եւ զինուոր պահակների հետ միասին իրենց էլ սպանել։

---

14 Քանաքեռի զէնքի պետական պահեստ։

15 Մարտիրոս Զաբուխչեան, յայտնի դաշնակցական մարտիկ. սպանուց պարսկական կռիւներում։

Այս նամակի մասին լուրջ խորհրդակցություն ունեցանք Խէչօն, Մկրտիչն ու ես, եւ Բագու մեկնելս էլ տեղի ունեցաւ նրանց գիտութեամբ եւ համաձայնութեամբ։ Երեքիս կարծիքն էլ այն էր, որ Մարտիրոսի երկրորդ ցանկութիւնը պէտք էր կատարել այն դէպքում միայն, երբ դատարանը մահւան պատժի վճիռ տար, իսկ տաժանակիր աշխատանքի պարագային կարիք չկար դիմելու սպանութեան։

Իմ նորից Բագուում երեւալուց շափազանց դժգոհ էր Կենտր. Կոմիտէն, որի պատասխանատու-անդամ ընկ. Ա. Գիւլխանդանեանը սաստիկ յանդիմանեց ինձ՝ արարքս համարելով անկարգապահութիւն եւ ինքնագլխութիւն։

— Ինչպե՞ս կարելի է այս պայմաններում գործ անել, երբ ամէն մարդ իր ուզածն է առաջ տանում ու հրահանգներին չի ենթարկւում,— գանգատւում էր նա։— Իսկ մեր սիրելի Պապաշան[16] կշտամբում էր.

— Ա՛յ տղա, դու հօ գիժ չե՞ս, ինչո՞ւ եկար, չէ՞ որ ոստիկանները շան նման փնտրում են քեզ։

Ես ի՞նչ կարող էի պատասխանել աւագ ընկերների դառն խօսքերին, մանաւանդ որ որոշւած էր երեքիս վճիռը ոչ ոքի չյայտնել։ Ինձ մնում էր միայն քրտնել ու սպասել, թէ երբ պիտի օձիքս ազատ թողնին։

Հակառակ կրածս նախատինքներին ու յանդիմանութեան, այնուամենայնիւ ես վճռեցի շհեռանալ Բագուից, մինչեւ շկատարեմ մեր երեքի որոշումը։ Եւ նոյն իսկ բանտ էլ գնացի այցելելու Մարտիրոսին եւ Մուկուչին։ Մարտիրոսի քոյրը՝ Սաթենիկը ինձ ներկայացնելով եղբօր տեղ՝ արտօնութիւն էր ստացել, եւ նրա հետ միասին գնացինք բանտ, ուր բաւական երկար խօսեցի Մարտիրոսի հետ, բացատրեցի, որ յուսահատւելու կարիք չկայ, յայտնեցի մեր երեքիս վճիռը եւ հաղորդեցի Խէչօի եւ Մկրտչի ջերմ բարեւները։ Առանձնապէս պնդեցի, որ եթէ դատարանը տաժանակիր աշխատանքի վճիռ արձակէ, շպետք է ռումբի գգնութեան դիմել, նախ՝ որովհետեւ տաժանակիր աշխատանքի տեղից շատ շատերն են փախել եւ ազատւել, ուրեմն, իրենք էլ կարող են

---

16 Լեոն Թադեոսյան— Հ. Հ. Դ. հիմնադիր գործիչ, Բ. Միքայելյանի քրոջ որդին. (Ծ. Կ.)։

ազատել։ Երկրորդ՝ ռուսական յեղափոխական շարժումը օր օրի վրա ծաւալում ու լայն չափերի էր հասնում. ո՞վ գիտէ, թէ վաղը ինչ էր լինելու. արդեօք այսօրուայ հալածողներն ու բանտարկողները իշխանութեան տէր չպիտի՞ դառնային։

Այս այցելութիւնը եւ Երեւանից բերուած որոշումն ու խորհուրդները շատ լաւ ազդեցութիւն արին բանտարկեալների վրա։ Դրանից յետոյ էլ ես դեռ մի-երկու շաբաթ մնացի Բագում, Երբ Երեւանից ստացուեց մի անակնկալ հեռագիր։ Այդ առթիւ մտայ Պապաշայի մօտ բացատրութիւն ուզելու։ Հեռագիրը կրում էր Տէր-Յովհաննիսեան ստորագրութիւնը, որ ինձ անծանօթ էր։ Պապաշան մի լաւ յանդիմանելուց յետոյ, որ դեռ չեմ հեռացել Բագից, յայտնեց, թէ հեռագրողը Նիկոլ-Դումանն է, որ հրահանգում է անմիջապես մեկնել Երեւան։ Պապաշան իր կողմից էլ պնդեց, որ օր առաջ ճանապարհ ընկնեմ։

Ես յաջորդ օրն իսկ մեկնեցի եւ Երեւան հասնելուս պէս շտապեցի ներկայանալ Նիկոլին, որի ժամանակաւոր շտաբը գտնւում էր Յարսկայա փողոցի վրա, երրորդ թէ չորրորդ տունը Աստաֆեանից հաշուած[17]։

Նիկոլը դեռ չէր եկել։ Թէեւ Բագում ես նրան մի քանի անգամ տեսել էի, բայց հետը ծանօթ չէի։ Դուրս եկայ, որ մի քիչ զբօսնեմ, երբ հեռից տեսայ նրա գալը։ Անմիջապէս վերադարձայ եւ կամաց-կամաց գնում էի յետեւից։ Շտաբը մտնելիս նա նկատեց, որ ես էլ բարձրանում եմ սանդուխքներով։ Դարձաւ ու հարցրեց.

— Ի՞նչ կայ. ո՞ւմ եք ուզում։

— Ձեր հեռագրի համաձայն եկել եմ,— պատասխանեցի ես։

Երկու թէ երեք օր անցած նա ինձ նորից կանչեց մօտը։ Կարգադրուած էր, որ խէչօն Սարգիս Օտաբաշեանի եւ Վահան Փափազեանի (Կոմսի) հետ գնայ Նախիջեւանի շրջանը, իսկ ինձ ո՞ւր պիտի ուղարկէր, դեռ չգիտէի։ Նա ապրում էր Սարգիս Օհանջանեանի տանը. այնտեղ էլ ընդունեց ինձ, բայց այս անգամ շատ աւելի սիրալիր ու մտերմական վերաբերմունքով։ Նախ՝ ամենայն լրջութեամբ եւ մանրամասնօրէն

---

17 Մեր հաստատ համոզմամբ ներկայումս Արամի № 9 շենքը. (Ժ. կ.)։

հարց ու փորձ արաւ, թէ ինչպէ՞ս ահաբեկեցի Նակաշիձէին, ապա յայտարարեց.

— Դու պիտի անցնես Ղըրխբուլաղ։ Քեզի կը տամ տասը զինուոր։ Շրջանը ապահով վայրերից մէկն է, մեծ վտանգ չկայ. միակ վտանգը Թարաքեաման է, որ կարող է յարձակում գործել հայ գիւղերի վրա, արգելք լինել դաշտային աշխատանքներին եւ քշել գիւղացիների անասունները։ Քեզ վրա դնում եմ նաեւ մի ուրիշ պարտականութիւն, որ աւելի կարեւոր է. տեղ հասնելուդ պէս իսկոյն պիտի կազմակերպես տեղական մարտական խմբեր, նախապատուութիւն տալով ռուս զինուորական ծառայութեան մէջ գտնուածներին։ Կը կազմես նաեւ մէկ կամ երկու բացառիկ խումբ 15-ական հոգուց եւ կը ցուցակագրես շրջանի բոլոր զէնքերն ու փամփուշտները։

Այսպէս խօսելով՝ սեղանի արկղից հանեց ռուսական շտաբի հրատարակած զինուորական քարտէզը եւ փռելով սեղանի վրա՝ ցոյց տուեց շրջանի բոլո՛ր հայկական ու Թրքական գիւղերը, հանգամանօրէն բացատրեց նրանցից իւրաքանչիւրի զինուորական նշանակութիւնը. յատկապէս երկարօրէն կանգ առաւ քոչուոր Թուրքերի բռնած վայրերի վրա՝ սկսած Բէզաքլուի բարձունքներից մինչեւ Սելիմի լեռնանցքը։ Եւ ի վերջոյ, կարգադրեց.

— Վաղը կանցնես շտաբ, կը ստանաս լիազօրագիրդ եւ Ղըրխբուլախցի մի քաջ տէրտէրի հետ կը մեկնես շրջանդ։ Տէրտէրը մի քանի օր է ինչ այստեղ է եւ իրենց շրջանի համար խմբապետ է խնդրում։

Այս բոլորը ինձ համար շշմեցնող անակնկալ էր։ Ես այլ բան էի մտածում եւ բնաւ տրամադիր չէի Ղըրխբուլախի պէս մի խաղաղ եւ մարտական տեսակէտից անհետաքրքիր շրջան գնալ։ Եւ անհամարձակ դիմեցի Նիկոլին.

— Պարոն Նիկոլ, մի խնդիր ունիմ։

Նա գլուխը արագօրէն Թեքեց իմ կողմը։ Ես շարունակեցի։

— Դուք ինձ խումբ էք տալիս եւ ամբողջ շրջանի ղեկավար էք նշանակում. այդ իմ ուժերից վեր է. ես չեմ կարող արդարացնել ձեր յոյսերը. խնդրում եմ ինձ չուղարկէք Ղըրխբուլաղ, այլ պահէք ձեզ մօտ եւ օգտագործէք քաղաքական կռիւների համար։

— Բագուի՞ց։

— Այո՛։

Նա ներս մտաւ իր սենեակը, ուր նրան սպասում էին Գալուստ Ալոյեանը եւ պահեստապետ Հայկօն։ Նրանց հետ կէս ժամի չափ խօսելուց յետոյ ինձ էլ կանչեց ներս։ Ես մտայ, բարեւեցի եւ կանգ առի սեղանի մօտ։ Նիկոլը քաղաքավարութեամբ պատասխանեց բարեւիս։ Բարեւեց Գալուստն եւ դառնալով Դումանին՝ ասաց.

— Դէ՜հ, Նիկոլ, ես գնացի. էլ ինձ գործ չկայ այստեղ։

Ու դուրս եկաւ։ Նիկոլը հրաւիրեց ինձ նստելու և անմիջապէս անցաւ գործի։

— Քո Բագու գնալու մասին,— ասաց,— Խէշօն մանրամասն զեկուցել է ինձ։ Կուսակցութիւնը պէտք եղած դէպքում գիտէ իր անելիքը։— Եւ սկսեց հարցաքննել.— ի՞նչ կրթութիւն եմ ստացել, զինուորական ծառայութեան մէջ եղե՞լ եմ եւ այլն։

Ես, եթէ չեմ սխալւում, քսան մէկ տարեկան էի։ Յայտնեցի, թէ՝ աւարտել եմ Երեւանի Գիմնազիայի չորրորդ դասարանը, թէ՝ եղել եմ Ախուլգինսկի Գնդի զինավարժական բաժնում եւ Բագուի հայ-թրքական ընդհարումների պատճառով կիսատ ձգել ու փախել եմ Բագու։

— Ծխո՞ւմ էք,— ընդհատեց նա, մի ծխախոտ առաջարկեց եւ ակնարկելով Նակաշիձէի ահաբեկումը՝ շարունակեց.— Կուսակցութիւնը քո ձեռքով մի մեծ գործ է կատարել, այդ չի նշանակում, թէ դու հակառակ նրա Կենտրոնական Կոմիտէի հրահանգի կարող ես, կամ իրաւունք ունիս վերադառնալ այն վայրը, որտեղից քո իսկ ապահովութեան եւ իրեն յայտնի այլ պատճառներով հեռացել է։ Հայ ազատագրական պայքարը շատ մեծ է, քեալագէոզութեան վայրկեաններն անխուսափելիօրէն դեռ կը գան, հարկաւոր է տնտեսել ուժերը եւ սպասել յարմար ժամանակի։ Մանաւանդ դու, որ թէ Գիմնազիայում ես սովորել, թէ զինուորական Դպրոցում, շատ լաւ պէտք է հասկանաս, թէ ինչ բան է կարգապահութիւնը։ Դու մնում ես իմ տրամադրութեան տակ. գնա՛, պէտք եղած դէպքում կը կանչեմ։

Ես լուռ, գլուխս կախ լսում էի։ Մերթ տաք քրտինք էր գալիս վրաս, մերթ պաղ։ Ոյժ չունեէի առարկելու կամ արդարանալու։ Նրա պարզ, բայց կտրուկ եւ ազդող խօսքերը միւում էին գլխումս այլեւս երբեք չմոռացուելու համար։

Այսպէս տեղի ունեցաւ իմ առաջին հանդիպումը Նիկոլ-Դումանի հետ։

Ղըրխբուլաղում մենք շատ քիչ ընդհարումներ ունեցանք։ Մի ամսից յետոյ ես վերադարձայ Երեւան Դումանին զեկուցում տալու համար։ Ինձանից առաջ արդէն եկել էր վերեւ յիշուած քահանան՝ Տէր-Զաքարը, եւ մանրամասն պատմել շրջանի եւ իմ աշխատանքի մասին։ Տէր-Զաքարը ասել էր Նիկոլին՝

— Նիկոլ, առաջ ես խնդրում էի որ նրան մեր շրջանը չուղարկես. իբրեւ շատ ջահելի. հիմա խնդրում եմ, որ պահես մեզ մօտ եւ ուրիշ շրջան չփոխադրես։

Երբ Տէր-Զաքարից յետոյ ես հասայ Երեւան եւ մանրամասն զեկուցում տուի Նիկոլին, առանձնապէս մատնանշելով դաշտային հսկիչ պահակների կատարած արդիւնաւէտ դերը՝ նա գոհ՝ հաւանութիւն տուեց իմ այս գործին եւ ասաց.

— Տեսա՞ք, այդ կէտը իմ հրահանգների մէջ չկար, մի բան էլ դեռ աւել էք արել։ Դուք նորից կերթաք Ղըրխբուլաղ, ուր կը մնաք մինչեւ որ քոչուոր թուրքերը վայր իջնեն լեռներից։ Ապա ես ձեզ կը կանչեմ եւ մի ուրիշ աւելի հետաքրքիր աշխատանք կը տամ։

Եւ առաջին անգամ ճաշի հրաւիրեց իր մօտ։

Նա, դէմքը մի քիչ խոժոռած, սուր հայեացք նետեց վրա՝ եւ արտասանեց.

— Վաղը առաւօտեան ժամը 9-ին եկէք շտաբ. պատրաստ եղէք մեկնելու Ղըրխբուլաղ,— եւ ոսկրոտ ձեռքը պարզելով ինձ, աւելացրեց՝ ազատ էք, կարող էք գնալ։

Ինձ ոչինչ չէր մնում, բայց եթէ համակերպուել։ Հետեւեալ օրը առաւօտեան ժամը 9-ին ես արդէն շտաբումն էի։ Նիկոլը յանձնեց ինձ լիազօրագիրը, կարգադրեց ստանալ խմբի ծախսերի համար հարկաւոր դրամը եւ փամփուշտներ ու հրացաններ։

— Իսկ տղաները կը ստանան Մկրտչից։ Երբ ամէն բան պատրաստ լինի, մեկնելուց առաջ, երեկոյան դէմ անցիր այստեղ ինձ մօտ։ Այսօր ամէն բան պատրաստ պէտք է լինի, որպէսզի վաղը ճանապարհուէք։

Դումանի նշանակած ժամին երեկոյեան մտայ շտաբ։ Նա մանրամասնօրէն պարզեց ինձ յանձնուած շրջանին եւ խմբին

վերաբերող բոլոր կարեւոր խնդիրները եւ առանձնապէս կանգ առաւ մարտիկների զինավարժութեան, կարգապահութեան եւ դէպի տեղական բնակչութիւնը ցոյց տուելիք վերաբերմունքի վրայ։—

— Խստիւ հրահանգում եմ,— ընդգծեց նա,— ո՛չ մի դէպքում չմասնակցել տեղական դատական եւ այլ կարգի գործերին, որքանով որ նրանք կապուած չեն ձեր զինուորների եւ զինուորական պարտականութիւնների հետ։ Իմ ցանկութիւնն է, որ ամէն կերպ խոյս տաք տեղական ժողովրդին նեղութիւն պատճառելուց եւ դժգոհութիւնների առիւ ստեղծելուց, մանաւանդ մատակարարման հարցերով։ Այնտեղ, ուր ժողովուրդը ձեզ յօժար կամքով պարէն չի տրամադրի, գնեցէք. այդ նպատակով ձեզ գումար կը տրամադրեմ։

Այդ ժամանակ ամէն տեղ, սովորաբար, ժողովուրդն էր կերակրում մարտական խմբերին, բայց ես շատ լաւ ըմբռնում էի Դումանի մտահոգութիւնը. մի կողմից նա չէր ուզում որեւէ նեղութիւն պատճառել ժողովրդին, միւս կողմից, իր կարգադրութիւններով ուզում էր իրեն ենթակայ անհատներին ներշնչել Դաշնակցութեան զոհաբերող եւ ժողովրդասէր ոգին։ Նա շատ մեծ կարեւորութիւն էր տալիս մարտիկների բարոյական մաքրութեան եւ գաղափարական անձնազոհութեան։ Նա պահանջում էր, որ Դաշնակցականը իր կեանքով ու գործով օրինակ լինի ժողովրդին։

Բո՛լոր անհրաժեշտ հրահանգները տալուց յետոյ, նա կարգադրեց, որ մի ամիս վերջը վերադառնամ եւ զեկուցում տամ կատարած աշխատանքներիս -եւ ինձ վստահուած շրջանի մասին։

ԳԱՐԱԼԱԳԵԱՁԻ ԼԵՌՆԵՐՈՒՄ

Ընթերցողը յիշում է, երեւի, որ Նիկոլ-Դումանի կողմից ես ուղարկուել էի կազմակերպելու եւ վարելու Ղըրխբուլաղի շրջանի ինքնապաշտպանութեան գործը։ Հետզհետէ այս գործը դրուեց՝ կանոնաւոր հիմքերի վրա եւ իմ ներկայութիւնը այդ շրջանում այլեւս դարձաւ համարեա աւելորդ։ Ես ամէն առիթից օգտւում էի յիշեցնելու Նիկոլին, որ ինձ ազատէ խմբի

ղեկավարությունից եւ աւելի կենդանի ու դրական աշխատանք տայ։

Չպէտք է մոռանալ, թէ ի՞նչ օրեր էին այն օրերը։ 1905 թուականն էր։ Ռուսաստանի առաջին յեղափոխությունը արագօրէն ծաւալւում էր ամէն կողմ։ Ժողովրդական յուզումների ալիքը հուժկու թափով զարնւում էր Կովկասեան լեռներին։ Մտաւորականությունը, բանւորական զանգւածները, երիտասարդությունը անօրինակ ոգեւորության ու եռ ու զեռի մէջ էին։ Այսպիսի մի վայրկեանին գրեթէ անգործ նստել Կոտայքի գիւղերում — ի՞նչ ջիղ պէտք էր դիմանալու համար։ Ես ամբողջ հոգով ձգտում էի դուրս գալ այդ բանտարկեալ վիճակից եւ միանալ յեղափոխական շարժումներին, մասնակցել քաղաքական գործունէության։

Արդէն բաւական մտերմացել էի Դումանի հետ։ Նա արտակարգ ջերմություն եւ սիրալիր վերաբերում էր ցոյց տալիս դէպի ինձ, բայց բոլոր դիմումներիս կտրուկ ու վճռական մերժումով էր պատասխանում։

— Եթէ ես ամէն զինւորի ու խմբապետի քէֆով շարժւեմ եւ նրանց անհատական ցանկութիւններին յարմարւեմ, էլ ինչացո՞ւ է իմ այստեղ նստելն ու հրամաններ տալը,— առարկում էր նա իմ թախանձանքներին։ Եւ ոչնչով կարելի չեղաւ փոխել նրա կամքը։

Մի օր, նման մի խօսակցությունից յետոյ, նա իր սեղանի զզրոցից հանեց Կովկասեան զինւորական շտաբի քսան ֆերատանոց մի քարտէզ եւ նւիրեց ինձ։ Միաժամանակ ցուցմունքներ տւեց քարտէզը կարդալու եւ գործածելու ձեւի մասին։

— Այսուհետև,— ասաց նա,— աւելի պատրաստուած ձեւով պէտք է աշխատես վարել քեզ յանձնւած գործը։ Քեզ պիտի տամ մի նոր, աւելի մարզւած եւ ուժեղ խումբ։ Պէտք է անցնես Նախիջեւան եւ մասնակցես այնտեղի ինքնապաշտպանության գործին։ Քարտէզի վրա հայ գիւղերը նշանակւած են խաչերով. դու հեշտությամբ կը հասկանաս, թէ ո՞ր հայ շրջանը կամ գիւղը ինչ թրքական գիւղերով է շրջապատւած։ Քարտէզը զինւորականի աչքն է, մանաւանդ այն տեղերի համար, ուր նա անձամբ չի եղել եւ ծանօթ չէ աշխարհագրական առանձնայատկություններին։

Իմ ուզածը չէր, ի հարկէ, այս. բայց եւ այնպէս մի փոփոխութիւն էր այլեւս ձանձրալի դարձած դրութեան մէջ։

Որքան յիշում եմ, այս խօսակցութիւնը տեղի ունեցաւ 1905 թ. օգոստոս ամսի վերջերը։ Ինձ յանձնուած նոր խումբը բաղկացած էր 14 հոգուց։ Ամենքն ալ ձիաւոր եւ զինուած բարձրագոյն հրացաններով։ Տղաներից ոմանք էլ մարզուած էին ռումբ նետելու գործում։

Հրահանգները ստանալուց յետոյ տղաներով մեկնեցի Դաւալու գիւղը՝ այստեղից Զնջըրլիի ու Մալիշկայի վրայով Սուլթանբէկ գիւղը անցնելու համար։

Դարալագեազում առաջին անգամ հանդիպեցի Կոտոյի Հաճուն, Զոփուր Արսէնին եւ Առիւծ Աւագին։ Հաճին Տարօնի մեր լաւագոյն հայդուկներից էր, շրջանի ընդհանուր հրամանատարն էր եւ իր հրամանատարութեան տակ ունէր երկու ձիաւոր խումբ Առիւծ Աւագի եւ Զոփուր Արսէնի գլխաւորութեամբ։ Մինչեւ մեր Դարալագեազ գալը Հաճին թուրքերի հետ ունեցել էր մի շարք ընդհարումներ։ Մեր հասնելուց յետոյ էլ կռիւները շարունակուեցին։ Ուզում եմ այս տեղ նկարագրել իմ մասնակցութեամբ տեղի ունեցած մի կռիւ՝ ցոյց տալու համար Առիւծ Աւագի անօրինակ քաջութիւնը եւ հայդուկների մէջ տիրող հոգեբանութիւնը ու միմեանց հանդէպ ունեցած վերաբերումը։

Կոտոյի Հաճին Անդրանիկի զինուորներից էր եւ պաշտում էր նրան։ Առիւծ Աւագը Սերոբ Աղբիւրի զինուորն էր. Սերոբից քաջ եւ մեծ մարդ նրա համար գոյութիւն չունէր։ Հաճին խելօք, շափազանց խորամանկ, խնդիրներին լրջօրէն մօտեցող, հնարտես ու փորձուած խմբապետ էր. Առիւծ Աւագը՝ բնութեան բիրտ ու անտաշ զաւակը. խիստ յախուռն, կրքոտ ու զուսպ եւ միաժամանակ պարզ, մանկան պէս վճիտ հոգով։ Նրա աչքին Հաճին նոյն իսկ «Քաշալ Անդրանիկի»[18] զինուորներից էլ չէր, այլ «ֆոլտաղով»[19] գլուխը պահող ոչինչ մարդ։ Արդ պատճառով, ուղղակի տանջւում էր, որ Հաճին իր հրամանատարն է։

---

18 Այդպես էին կոչում փաշայի զինուորները Անդրանիկին։

19 Խարեութեամբ. (ծ. կ.)։

— Հէյ-հէ՛յ, աշխարհ, քեռ հիմ դնողին ի՞նչ ըսեմ, գանգատում էր նա. Սերոբ փաշի մահէն ետ Քաչալ Անդրանիկ ընոր փոխանորդ ի դառի, էնոր ֆոլտաղշի զինուորն էր, հրամանատար ի դարձի իմ գլխին. վայ ըմըն բաւօլ, էդ յուր հասանք... Քեռ տունն աւրի, աշխա՛րհ...։

Հաճին, ըստ իր սովորութեան, մեզ շատ սիրալիր ու քաղաքավարի ընդունելութիւն ցոյց տուեց։ Իբրեւ տեղական պայմաններին ծանօթ մարդ՝ նա մանրամասնօրէն պարզեց, թէ ո՞ր գիւղով պէտք էր դիմել՝ Նախիջեւանի Նորս եւ Գիւմրի գիւղերը հասնելու համար։

Իմ խմբի մէջ էին Անդրանիկի լաւագոյն զինուորներից Բերդակցի Օսկանը եւ Խլաթցի Գալօն։ Հաճին, իմ ներկայութեամբ, մի կողմ կանչեց Օսկանին եւ խրատներ տալով՝ ասաց.

— Դիւ սար ու չոլի կռիւներ տեսած մարդ իս.— իսկ ինձ էլ չվիրաւորելու համար աւելացրեց.— Դրօն լէ շատ քաջ ի, բայց լեռներու կուի վարժ չի. կուի վախտ Դրօն աչքաթող չընիս. չմոռնաս թէ քաջ Անդրանիկի զինուոր իս էղի...։

Սուրբ Աւագը լսում էր կէս-հեգնանքով ու կէս-արհամարհանքով. Սերոբ փաշի մօտ ի՞նչ էր այդ Քաչալ Անդրանիկը...։

Հաճիի միւս օգնական Զոփուր Արսէնն էլ հետաքրքրական դէմք էր։ Նա Ղաշաղ էր եւ երկար ժամանակ Ղարաբաղի Թուրք աւազակների հետ ասպատակութիւններ էր արել ու զբաղուել թալանով։ Հայ-Թրքական ընդհարումները նրան պոկեցին աւազակութիւնից եւ բերին մեր շարքերը։ Քաջ, յանդուգն, լաւ զէնք բանեցնող տղամարդ էր։ Նրա ասպատակութիւնների մասին ժողովուրդը երգեր էր յորինել։

Մի անգամ Արսէնը իր ղաշաղ Թուրք ընկերներով, Ղարսի շրջանում կազակների խմբի է հանդիպում։ Կազակները շրջապատում են նրանց։ Սկսւում է տաք կռիւ։ Ղաշաղները ամրանում են ժայռոտ բարձունքներից մէկի վրա եւ յամառ դիմադրութիւն ցոյց տալիս։ Կազակների բոլոր յորդորներն ու ջանքերը անցնում են ապարդիւն. Արսէնը մերժում է անձնատուր լինել։ Այդ ժամանակ կազակները դիմում են հայ քահանայի միջնորդութեան. սա եւս խնդրում է, որ վերջ տան կուին եւ յանձնւին։ Արսէնը կտրուկ կերպով մերժում

է եւ կուով ազատում իւեն ռ. ընկերներին։ Այս կուի մասին ժողովուրդը երգում էր.—

Գեալդի Քէշիշ քիլիսադան,
Զիմադի Զոփուր դաղդան[20]։

Մեր Մալիշկայում եղած ժամանակ, Զոփուրը կրնկոխ հետեւում էր ինձ եւ տեղեկութիւններ խնդրում մեր կուսակցութեան, մեր մեծերի ու մեր նպատակների մասին։ Յատկապէս հետաքրքրւում էր, թէ ովքե՞ր են մեր ամենամեծ և ամենախելօք ընկերները, որոնք նստած են Զէյթերիայում եւ որոնցից խորհուրդ առնելու է գնում նոյն իսկ Մանթաշովը։ Ուզում էր իմանալ, թէ արդեօք Անդրանի՞կն էլ նրանց շարքերումն է։ Հաճին, որ ժպիտը քթի տակ, հետեւում էր նրա հարցումներին, այս վերջին հարցի վրա նկատեց.—

— Չէ՛, Անդրանիկ լէ անոց կը լսէ ու կենթարկւի։

Զոփուռ Արսէնը անակնկալի եկաւ ու խորապէս յուզւեց այս վերջին յայտնութիւնից։

— Չէ՛, Անդրանիկ չէ անոնց կը լսէ ու կենթարկւի։

— Հաճին Դաշնակցութեան փէշատաջ (կնքած) թուղթ ունի,— շարունակեց նա,— դու էլ ունես, անշուշտ. ես դեռ որքա՛ն պիտի կռիւ անեմ, ինչքա՛ն գործ պիտի կատարեմ որ արժանանամ էդ թղթին։ Դու պ. Դումանին մօտ ծանօթ ես, գրիր նրան՝ ինչ գործ ուզում է կանիմ, միայն թէ ինձ էլ փէշատաջ թղթից տայ։

Ու յեսոյ խնդրեց, որ ցոյց տամ իմ կնքւած թուղթը։ Նա ուշադրութեամբ դիտեց, խորը հոգոց քաշեց ու նորից ասաց.

— Ե՞րբ պիտի արժանանամ ես էլ էդ թղթին. իմ թուղթը Հաճին ու Մալիշկայի վարժապետն են տւել։

Եւ փաթաթւելով ու համբուրելով՝ կրկին ու կրկին աղաչեց, որ միջնորդեմ ուր հարկն է՝ իրեն ես կնքւած թուղ տալու համար։

— Ինչ որ ուզում ես կանեմ, որ տեսնես, թէ ես թասիքով

---

20 Եկեղեցուց տերտերն եկավ,
Զոփուր սարից դուրս չեկավ. (ծ. կ.)։

հայ եմ ու լաւ դաշնակցական։ Մի Հաճուն հարցրու, նա կասի քեզ, թէ ես ինչ մարդ եմ, ի՞նչ կռիւներ եմ արել թուրքերի հետ։

Եւ Հաճին էլ հաստատեց Զոփուրի քաջութիւնը.

— Խօսք չունեմ, քաջ ու համեստ մարդ է,— ասաց նա։

Հաճին մեզ ճանապարհ դնելիս իբրեւ առաջնորդ տուեց Գումանի հին հայդուկներից Մալիշկայի Սարվազ Խէշօին, որ բառի իսկական առումով իգիթ տղամարդ էր։ Հաճու հրամանն ստանալուն պէս նա թռաւ կապոյտ նժոյգի մէջքին եւ քառասմբակ սլացաւ քարքարոտներով դէպի հանդիպակաց լեռը։ Երբ հասաւ լերան կատարին, յետ նայեց եւ մի առնական շարժումով նշան արաւ թէ ճանապարհը ազատ է եւ կարող ենք շարժուել։ Այնքա՜ն սազում էին իրար՝ նա եւ իր ձին ու շէրքէսկան. կարծես այդ լեռների փոթորիկներից մի՛ասին ծնուած լինէին։

Մալիշկայից մենք գնացինք Սէյլան գիւղը, ուր մնացինք մի օր։ Այնտեղից մեկնեցինք Սուլթանբէկ, որտեղից պիտի անցնէինք Նախիջեւանի լեռնային մասը՝ Նորս գիւղը։

Խումբը շարժւում էր դանդաղ ու զգուշութեամբ, որպէսզի աւստրական զօրամասերի չհանդիպի։ Լուսանալու մօտ էր, երբ հասանք Սուլթանբէկի սահմաններին։ Յանկարծ մեր ականջին հասան հրացանի համազարկի ձայներ։ Սարվազ Խէշօն, որ, իբրեւ տեղացի, հիանալի կերպով ծանօթ էր բոլոր գիւղերին ու լեռներին, ասաց.

— Կռիւը Սուլթանբէկի վրա է երեւում։

Արագացրինք ձիերը եւ երբ մօտեցանք Սուլթանբէկ գիւղին, մեր աչքերի առջեւ պարզուեց հետեւեալ պատկերը. Հիւսիսարեւելեան կողմից բոլոր բարձունքները բռնուած էին թարաքեամա թուրքերով, որոնք իրենց քոչը լեռներից իջեցնելիս վճռել էին, երեւի, Սուլթանբէկի նախիրն էլ քշել-տանել։ Իրենց գրաւած բարձունքներից նրանք կրակի տակ էին առել Սուլթանբէկի գիւղը, իսկ մի խումբն էլ իջել էր ձորը եւ աշխատում էր քշել գիւղի նախիրը։ Սուլթանբէկցիք իրենց ունեցած հատուկտոր զէնքերով յամառ դիմադրութիւն էին ցոյց տալիս, իսկ մի քանի խմբակներ՝ փորձում էին գիւղի տաւարի առաջն առնել եւ թոյլ չտալ, որ թուրքերը քշեն։

Մեր խումբը Մարտիրոս գիւղի 5—6 բնակիչների հետ, շտապով օգնութեան հասաւ այդ խմբակներին եւ կրակ բաց

արաւ տաւարը քշել ուզող թուրքերի վրա։ Բարձունքներում գտնուող թուրքերը իջան գիւղի մօտ եւ սկսեցին այրել մարագները։ Խէշօն, երբ նկատեց մարագների ծուխը, գոչեց բարձրաձայն.

— Վա՜յ, անօրէնները մտան գիւղը։

Մենք արագութեամբ թռանք ձիերը եւ սլացանք դէպի գիւղ. առանց մի րոպէ հաշիւ տալու մեզ, թէ ի՞նչ ենք անում։ Ես ու Խէշօն արշաւում էինք այնքան տաքացած, որ խմբի միւս տղաները մեզանից շատ յետ էին մնացել։ Ճիշտն ասած՝ ես մրցում էի Խէշօի հետ։ Կատարեալ ձիարշաւ էր. ես աշխատում էի, որ նա ինձանից առաջ չանցնի։

Երբ, վերջապէս, խմբի միւս տղաներն էլ հասան, ես կարգադրեցի, որ մօտենան ու դիրքեր բռնեն գիւղի արեւելեան բարձունքներում։ Տղաներն անմիջապէս գրաւեցին ցոյց տրուած դիրքերը եւ իմ հրամանի համաձայն՝ սկսեցին կրակ թափել դիրքերում ամրացած թուրքերի գլխին։ Այդ վայրկեանին, չգիտեմ ո՞ր գիւղից, կայծակի արագութեամբ օգնութեան հասաւ Առիւծ Աւագը՝ հեծած իր գեղեցիկ սպիտակ նժոյգը։ Նրան հետեւում էր իր խումբը։ Մեր հրացաններուն ձայնը լսելուն պէս՝ նա շտապել էր մեզ օգնութեան։ Մեր դիրքերը դիտելով եւ իմ զինուորական հրամանները լսելով՝ նա բղաւեց ամբողջ կոկորդով.

— Տօ՛, ք... մոլի տղէք, էդա պրիցել ի՞նչ է։ Ես տասնեակ տարիներ զինուորութիւն իմ էրի, չըմ խասկցի պրիցել ինչ է, վա՜ռէք. հա վառէք։

Ու դառնալով Քիւրդ Խէշօին, որ նրա խմբի մէջ էր եւ իմ մտերիմ ընկերն էր, հրամայեց.

— Տղա՛յ, Քրդօ՛, քշէ՛ վըր թշնամուն վրէն։

Եւ իր ամեհի ձին՝ քառասմբակ ուղղեց դէպի թուրքերի դիրքերը։ Նրան հետեւեցին խմբի միւս զինուորները։ Փոթորիկ էր, կարծես, որ տարերային թափով առաջ սլացաւ, ճանապարհին իր ամեհի ուժի տակ խորտակելով ամէն բան։

Ես ինձ չափազանց նւաստացած զգացի. ամօթից գետինն էի ուզում մտնել։ Իսկոյն կարգադրեցի, որ ձիերը բերեն։ Հիծանք ու շտապով հետեւեցինք Առիւծ Աւագին։ Մեր խմբից շորս հոգի առաջ էինք ընկել. միւսներն էլ ճիգ էին անում հասնելու։ Երբ մենք շորսով հասանք Առիւծ Աւագին, նրա

խումբը արդէն դիրքերից հանել եւ հալածում էր թարաքամաններին։ Առիւծ Աւագը հալածում էր, շարունակ կրակում ու բարձրագոչ հայհոյանքներով սպառնում փախչող թշնամուն։

Կուի ամենատաք վայրկեանին, Առիւծ Աւագը նկատեց, որ մի քանի թուրքեր ձորի միջով քշում էին նախիրը։ Կանգ առաւ ու գոռաց մեզ.

— Տղէ՛ք, Սերոբ փաշի զինուորի գլխին փափախ չկա՞յ, որ թուրքեր էդա նախիր տանին. խլէ՛ք էդ տաւարը։

Մենք անմիջապէս յարձակուեցինք տաւարը քշող թուրքերի վրա, փախցրինք եւ աւարը խլեցինք նրանց ձեռքից։

Թարաքամաններին հետապնդելիս, Առիւծ Աւագը նկատել է, որ մի թուրք վախից պահուել է փոքրիկ քարի տակ։ Սկսել է կրակել վրան, բայց գնդակները վրիպել են։ Եւ կատաղած ու բորբոքուած սկսել է գոռալ.

— Եա՜հ, էդա քոփակ օղլու լաճ թալամուկ ի։

Ու ձիուց իջնելով՝ վախից ահաբեկուած թուրքի գլուխը ջախջախել է իր հրացանի կոթով։ Հարուածը այնքան սաստիկ է եղել, որ հրացանի կոթը կոտրուել է։

Երբ թարաքամաններին քշեցինք ու հաւաքեցինք մի տեղ, Առիւծ Աւագն էլ եկաւ՝ հետը բերելով սպանուած թուրքերից առնուած մի քանի այնալու հրացաններ, ինչպէս եւ իր ջարդուած կոթով հրացանը։

Բոլոր տղաների հաւքելուց յետոյ, Առիւծ Աւագը նստաւ իր սիրուն ձին եւ խմբի գլուխն անցնելով՝ մեծ հանդիսաւորութեամբ շարժուեց դէպի գիւղ։ Ես էլ իմ խմբի հետ, ամօթխածութեամբ հետեւեցի նրա խմբին՝ միշտ մնալով պատկառելի տարածութեան վրա։

Առիւծ Աւագի տղաներին արգելել էր Անդրանիկի երգերը երգել։

Գիւղում, ձիերը տեղաւորելուց յետոյ, ես շտապեցի Առիւծ Աւագի մօտ։ Ներս որ մտայ՝ առջեւս բացուեց հետեւեալ տեսարանը. Առիւծ Աւագը նստած էր գիւղական օդայի մէջ տեղը փռուած գորգի վրա. նա պատկառազդու ձեւով խմում էր օղին եւ դիտում շրջապատի մարդկանց, որոնք ոտքի վրա փեցած էին՝ պատրաստ նրան ծառայելու։ Ինձ տեսնելուն պէս, սկսեց բարձրաձայն խօսել.

— Մըր ամակ ջուր կըյնի. մըր քաջութիւն կը կորսուի։ Հէհէ՛յ, Սերոբ փաշա, քեռ գերեզմանին մըռնիմ. քեռ զինուորներ քաջութիւն կէնեն, իդա ֆուլտաղ Կոտոյի Հաճին կը շահուի։

Ու դառնալով ինձ՝

— Դրօ՛, էդա կոտրած թվանք կը տեսնա՞ս, էդա թվանք առնիմ՝ Կոտոյի Հաճի շուր էրէվան կը փախի։ Էդա կռիւ դիւ տեսար, քեռ կեաթին ու քեռ նամուսին կը թորկիմ։ Քեռ տեսած գրէ պ. Դումանին. թէ չէ մենք կը կուինք, քաջութիւն կէնինք, էդա քեօփակ օղլի ֆուլտաղ Կոտոյի Հաճին թուղթ կը գրէ ու մըր քաջութիւն իրեն կը վերագրէ։ Վա՛յ-լըմըն աշխարհ, քեռ հիմ դնողին ի՞նչ ըսիմ։

Ես խոստացայ գրել եւ գրեցի Դումանին, ինչ որ տեսել էի։ Բայց Առիւծ Աւագը ուզեց, որ ցոյց տամ գրածս եւ կարգադրեց որ կարդամ։ Ստիպւած եղայ կարդալու. ընդհանուր գծերով նկարագրել էի կռի գլխաւոր տեղերը, Առիւծ Աւագի գործած հերոսութիւնը եւ այլն։ Առիւծ Աւագ դժգոհ մնա՞ց։

— Տ'օ, տղայ, յո՞րի չիս գրէ, թէ շուր ո՞ր սարի քշեցի թուրքեր, յո՞րի չիս գրէ, իմալ թվանքիս զոդզով[21] թուրքի գլուխ ջարդեցի։

Այդ մասերն էլ աւելացրի նամակին, եւ Առիւծ Աւագը բաւարարուած՝ հանգստացաւ։

Հետեւեալ օրը երբ պատրաստւում էինք մեկնելու Նախիջեւանի լեռնային շրջանը, Առիւծ Աւագը ջերմ բարեմաղթութիւններով ճանապարհ դրեց մեզ։

— Տղա՛յ,— ասաց նա բաժանւելիս,— էս լեռներուն մէջ տեղ մը չկայ, որ վտանգ ըլի եւ Առիւծ Աւագ թվանքի ձէն լսէ ու օգնութեան չիսանի։ Գնա՛, կռիւ լէ ունենաս, քշի՛ր վըր թշնամուն, վառէ զըմէն. դոր լէ կռիւ ընես՝ ղուշի թեւով քեզի կը հասնիմ. քեռ կռնակն եմ, քե օգնութեան կիւգամ. լա՛ւ գիտցիր։

---

21 Կոթ. (ծ. կ.)։

Մեր ճամփորդութիւնը Դարալագեազից Նախիջեւանի լեռնային շրջանը անցաւ առանց դէպքի։ Երբ տեղ հասանք, իբրեւ կենտրոնավայրի ընտրեցինք Նորս գիւղը։

Մեր եկած շրջանի վիճակը բաւական տխուր էր. բացառութեամբ Գժաձոր եւ Գիւմրի գիւղերի, միւս բոլոր հայկական գիւղերը թալանուած էին թուրքերի ձեռքով։ Դռներն ու պատուհաններն անգամ տարուած էին։ Բախտաւորութիւն էր գոնէ, որ թուրքերի յարձակման ժամանակ արտերը դեռ հասած չէին։ Թալանից յետոյ, հայ գիւղացիները վերադարձել էին իրենց կիսաւեր ու բոլորովին ամայացած տները եւ հաւաքել արտերի բերքը։ Այդ պատճառով, հացի կողմից ապահովուած էին, բայց տաւար կամ ուրիշ բան՝ ոչինչ չունէին։

Նորսի մեծ տներից մէկը — անդուռ եւ անպատուհան — դարձաւ մեր բանակատեղին եւ շտաբը։ Իրապէս տուն էլ չէր, այլ մի ընդարձակ շարդախ, ուր անց էինք կացնում մեր ժամանակը։ Սեղանի տեղ գործ էինք ածում մի կոտրած փէշխուն[22], անկողնի փոխարէն՝ խոտ ու մեր եաթաղանները։ Գիւղացիք իրենք էլ անկողին չունէին եւ մեզ պէս, խոտի կամ յարդի վրա էին պառկում։ Մեր ամենօրեայ կերակուրը հացն էր։ Մեզ համար էր ասուած՝ «զհաց մեր հանապազօր, տուր մեզ այսօր»։ Ամէն օր հաց։ Երբեմն էլ ունենում էինք դաւուտմա եւ ուրիշ ոչինչ։ Այդ պատճառով չափազանց մեծ էր լինում զինուորների ուրախութիւնը, երբ որեւէ գործով ուղարկւում էին Գժաձոր կամ Գիւմրի, ուր կար ամէն բան։ Տղաները նոյն իսկ հերթ էին պահում եւ երբ պէտք էր լինում ուղարկել, ասում էին.

— Պ. Դրո՛, երէկ այսինչները գնացին, այսօր էլ մեր հերթն է, մենք գնանք։

Եւ ուղղակի երեխաների պէս ուրախանում էին, երբ իրենց էր նշանակում գնալու։

Պէտք է ասեմ այստեղ, որ տղաները, ընդհանուր առմամբ, անկեղծ յարգանքով էին վերաբերում ինձ։ Եալաթցի Գալօն միայն արհամարհանքով էր ընդունել իմ խմբապետ

22 Փոքրիկ սեղան. (Ժ. կ.)։

նշանակելը եւ իր վերաբերումը արտահայտել էր հետեւեալ պատմութեամբ Մոկաց իշխանների կեանքից։

— Տղա՛ք, մըր Մոկաց իշխաններ կը ժողվին ու էրկար ֆիքր կընեն, թէ իրենց հարկ որո՞ւ ձեռքով ղրկեն Վանայ վալիին, որ քրդեր չթալին ճամբին։ Շատ ֆիքր կընեն, քիչ ֆիքր կընեն ու կորոշեն փողեր ժամկոչի աղուէսի[23] վիզէն կապել որ տանէ, սաղ-սալամաթ տեղ հասցնէ։ Հիմա մեր պարոն Գուման՝ մեզ կապեր է իդա աղուէսի վիզ...

Աղուէսը ես էի։

Նորսում սկսեցինք զբաղուել շրջանի ինքնապաշտպանութեան գործով։ Նախ՝ կապ հաստատեցինք հայկական բոլոր գիւղերի միջեւ. ապա՝ վտանգած վայրերում խմբապետներ նշանակեցին, կազմեցին տեղական ինքնապաշտպանութեան խմբեր։ Կազմակերպեց հետախուզութեան գործը, որպէսզի օրը օրին տեղեակ լինէինք թշնամու շարժումների մասին։ Գիւղացիութիւնը մեծ վստահութեամբ ընդ առաջ էր գնում մեր բոլոր առաջարկներին եւ սիրով կատարում էր կարգադրութիւնները։

Մեր վրա էր ընկած եւ շրջանի վարչական-դատաստանական գործը, որովհետեւ ռուս պաշտօնէութիւնը վախից ամբողջապէս հեռացել էր։ Թէեւ կուսակցութեան կենտրոնի կարգադրութեամբ երկրի դատական-վարչական խնդիրների լուծումը վերապահուած էր տեղական կոմիտէներին, բայց նրանց վճիռներից դժգոհները յաճախ մեզ էին դիմում, եւ մենք ստիպուած էինք միջամտել։

Այս աշխատանքների ժամանակ մէկից աւելի անգամներ լուրեր հասան մեզ, թէ թուրքերը պատրաստւում են յարձակուելու Կռոտ Մազրայի վրա, ուր խմբապետ էի նշանակել Կնեազին։ Մի օր էլ իսկապէս տեղեկութիւն եկաւ, թէ Մազրան պաշարուած է թուրքերի կողմից։ Մենք անմիջապէս ձի հեծանք ու շտապեցինք օգնութեան։

Գիւղից հազիւ հազար քայլի չափ հեռացել էինք, երբ շնչասպառ մեր ետեւից հասաւ Նորսի վալադը եւ լեղապատառ սկսեց աղաչել, որ վերադառնանք, որովհետեւ թուրքերն արդէն Նորս էին մտել։

---

23 Աղուէսը ժամկոչն էր։

Նորսը մեզ համար խիստ կարեւոր ռազմագիտական վայր էր. նա միակ հանգուցային կենտրոնն էր, որով կապւում էինք Գժաձորի ու Գիւմրիի եւ վերջիններիս միջոցով՝ Զանգեզուրի հետ։ Նորսը ձեռքից տալ՝ նշանակում էր կտրւել Զանգեզուրից, այդ պատճառով շտապեցինք ձիերի գլուխները դարձնել յետ։

Նորսի գիւղացիները բաւական զէնք էին ստացել Հ. Յ. Դաշնակցութիւնից, դիրքերը գրաւած դիմադրում էին թշնամուն եւ թոյլ չէին տալիս, որ գիւղ մտնէ։ Թուրքերի քանակը շատ մեծ էր, բայց զինւած էին անկանոն զէնքերով, մեծ մասամբ՝ այնալու, ղափաղլու եւ շախմախլու հրացաններով։ Այն էլ, ինչպես յետոյ պարզւեց, փոքր մասն էր զինւած. մեծ մասը անզէն էր եւ եկել էր թալան տանելու։

Մենք, ընդհակառակը, զինւած էինք շատ լաւ եւ անհամբեր կուի առիթ էինք փնտրում, որպէսզի ցոյց տանք ժողովրդին, թէ եկել ենք նրա կեանքն ու գոյքը պաշտպանելու։ Առիւծ Աւագի ցոյց տւած քաջութիւնն ու հերոսական օրինակն էլ մեծ ազդեցութիւն էր թողել ամենքիս վրա։ Վերջապէս, մենք ուղարկւած էինք Հ. Յ. Դաշնակցութեան կողմից, որ, մանաւանդ այդ օրերին, հայ ժողովուրդի գոյութեան միակ յենարանն էր հանդիսանում. մենք պէտք է արդարացնէինք մեր վրա դրւած յոյսերը։ Մեզանից իւրաքանչիւրը համակւած էր վայրկեանի լրջութեան եւ պատասխանատուութեան գիտակցութեամբ։

Հէնց որ հասանք պաշտպանւող գիւղացիներին, մենք էլ մտանք դիրքերը եւ սկսեցինք եռանդով կուել։ Մեր մօտիններից ահաբեկւած՝ թրքական ահագին բազմութիւնը խուճապի մատնւած՝ դիմեց փախուստի։ Մեզ էլ այդ էր պէտք. շտապեցինք օգտւել առիթից եւ բուռն թափով ընկանք նահանջող թշնամու յետեւից։ Թուրքերն առանց կանգ առնելու փախչում էին. մենք հալածեցինք նրանց Նորսից մօտ երեք կիլոմետր հեռու եւ համարեա մտանք թրքական գիւղը։

Քանի մօտենում էինք գիւղին, այնքան թուրքերի դիմադրութիւնը սաստկանում էր եւ կռիւը աւելի տաքանում։ Թուրքերը յանդուգն դարձան մանաւանդ այն ժամանակ, երբ նրանց օգնութեան հասաւ Ղաչաղ Թոփալ Մորթուզի խումբը։ Մենք

զգուշության համար սկսեցինք յետ-յետ գնալ՝ դէպի Նորս. թուրքերը, երեւի, կարծեցին, թէ փախչում ենք եւ Մորթուզի գլխաւորութեամբ դիմեցին աւելի յախուռն յարձակման։ Բերդակցի Օսկօն երկու ընկերներով թռան ձիերից եւ մտան քարերի տակ։ Ես տղաներով աւելի առաջ էի. մենք էլ դարձանք ու դիրք բռնելով նրանց մօտ՝ մեր մոսիններով ուղղեցինք թուրքերին։ Միաժամանակ լուր ուղարկեցինք գիւղ, որ կուռղները օգնության հասնին մեզ եւ շտապով գրաւեն Նորսից Գիւմրի տանող ճանապարհի բարձունքը։

Դիրքային կարճ կռիւից յետոյ, ես հետս առի 4—5 զինուոր, որոնց թում էր եւ Խլաթցի Գալօն, եւ մօտ երկու հարիւր քայլ առաջ անցնելով՝ նոր դիրք բռնեցի թշնամու ճիշտ դիմացը։ Կողքիս պառկած էր Գալօն եւ, հակառակ հրամանիս, անկանոն հրացանաձգութեամբ փամփուշտ էր փչացնում աննպատակ։ Երկու փամփուշտաշար արդէն վերջացրել էր եւ անխնայ կրակում էր, ա՛յն ժամանակ, երբ ամէն մէկ փամփուշտ մեզ համար մեծ գին ունէր։ Ես զայրացած՝ տեղից ցատկեցի — եւ մի երկու լաւ հարուած իջեցրի Գալօի գլխին՝ բռնալով վրան.

— Տօ, յիմար, փամփուշտ փչացնելու ժամանա՞կ ես գտել. վե՛րջ տուր...։

Գալօն իմ հարուածներից սաստիկ կտրել էր շրթունքը։ Այդ դէպքը յետոյ պատմութիւն դարձաւ։ Տղաները տեղի-անտեղի յիշում էին Գալօին ձեռք առնելու համար։

Օգնական ուժերի հասնելուց յետոյ, մենք ընդհանուր գրոհի դիմեցինք, թուրքերին դուրս հանեցինք իրենց դիրքերից և քշեցինք մինչեւ իրենց գիւղը։

Երբ յաղթական վերադարձանք Նորս, պարզուեց, որ կուի թունդ վայրկեանին նորսեցիք գրաւել էին թուրքերի ամբողջ տաւարը եւ քշել-բերել էին իրենց գիւղը։ Գիւղացիներից ամէն մէկը ջոկել-տարել էր իրեն պատկանող անասունները, որ առաջ թալանել էին թուրքերը։ Մնացածը բաժանուել էր շքաւոր գիւղացիներին։ Մի քանի հատ էլ յատկացուել էր մեզ իբրեւ մսացու եւ կթելու համար։ Այնուհետեւ մեր տղաների կաթն ու մածունը ապահովւած էր։

Յաջորդ առաւօտեան կանուխ մի նամակ եկաւ Առինջ գիւղից։ Գրում էին Խէշօն եւ Սարգիս Օղաբաշեանը. յայտնում էին, թէ Քեռու հետ հասել են Առինջ, յոգնած են եւ խնդրում էին գալ իրենց մօտ եւ տեղեկութիւններ տալ շրջանի ինքնապաշտպանութեան մասին։

Ես շատ ուրախացայ։ Կարօտել էի Խէշօին եւ շատ էի ուզում տեսնել նրան։ Իմ բացակայութիւնը Նորից վտանգաւոր չէր, որովհետեւ թուրքերը կերած ծեծից յետոյ մի առ ժամանակ չէին համարձակւի յարձակւելու։ Անհրաժեշտ կարգադրութիւններն արի եւ երեք ընկերներով շտապեցի դէպի Առինջ։ Գիւղացիների մի ստւար բազմութիւն հաւաքւել էր ինձ բարի ճանապարհ մաղթելու եւ շատ ուրախ էր երեւում։ Շատերը մեզ օրհնում ու կատակում էին.

— Աստւած Դաշնակցութեան ոյժ եւ ձեզ էլ կեանք ու արեւ տայ, մի քիչ շունչ առանք ու ապահովւեցինք։ Տօ՛, գիւղից կովերի բռոցն էլ էր կտրւել։ Նորից մեր գիւղը շէնացաւ։

Իմ վարկը շատ բարձրացել էր նաեւ զինւորների աչքին։ Խլաթցի Գալօն այլեւս հեգնական առակներ չէր պատմում։ Ընդհակառակը, նրա համար էլ ես արդէն կարգին խմբապետ էի։ Ինչ խօսք, որ իմ տրամադրութիւնն էլ շատ բարձր էր։

Առինջին մօտենալիս, ես հեռից նկատեցի, որ Խէշօն դուրս էր եկել, կանգնած կտուրի վրա՝ ինձ էր սպասում։ Երբ հասանք, նա ժպտալով մօտեցաւ ինձ ու համբուրելով՝ ասաց.

— Հը՞, խաթաքեար քաֆուրօղլի, դուման ես հանել շրջանում։

Ու գրկած՝ տարաւ ներկայացրեց Քեռուն եւ Սարգիս Օղաբաշեանին, որոնք կանգնած էին մի երկյարկանի տան վերի պատշգամբում։

Սարգսին ես տեսել էի, իսկ Քեռուն հանդիպում էի առաջին անգամ։

Սարգիսը մտերմօրէն բռնեց ձեռքս եւ ասաց.

— Հը՞, մեր տղայ, առաջին մկրտութիւնդ յաջող է, անցել, բեր մի համբուրեմ ճակատդ։ Ու ցոյց տալով Քեռուն՝ շարունակեց.— Սա էլ մեր քեռին է՝ Անդրանիկի օգնականներէն։

Առջևս կանգնած էր մի մարմնեղ, միջակից բարձր, ամուր կազմուածքով, շիկադէմ, արծուաքիթ ու սրաշեայ մի մարդ։ Ձեռք տուի ու սկսեցի հետաքրքրութեամբ զննել նրան։ Նա հարց ու փորձ արաւ։ Ապա սկսեց ընդհանուր խօսակցութիւն, որի գլխաւոր նիւթը ինքնապաշտպանութեան գործն էր։

Մեր խօսակցութեան յաջորդեց ճաշը։ Գիւղացիք ոչխար էին մորթել եւ առատ հաց ու գինի մէջտեղ հանել։

Ճաշից յետոյ, երբ ձիերը նստած՝ պատրաստւում էինք մեկնել Նորս, գիւղացիք մօտեցան մեզ մի բարձած ջորով եւ մէկը ասաց.

— Պարոն խաչատուր, էս էլ գինի է. նէր ենք տալիս Նորսի մեր զինուորներին։

Խէշօն զարմացած գիւղացիների այս առատաձեռնութիւնից՝ քմծիծաղով ասաց Սարգսին.

— Սարգիս, սրա տակը անպատճառ մի բան կայ. տեսնենք թէ ի՞նչ փորացաւ ունին։

Ու դեռ Խէշօն խօսքը չվերջացրած՝ գիւղացին աւելացրեց.

— Պ. Խաչատուր, քեզ էլ մի խնդիր ունենք. լսել ենք՝ մեր Ֆէդայիները տաւար են բերել Նորս. հիւանդի կաթ էլ ա չունենք մեր գիւղում. խնդրում ենք՝ մեզ էլ բաժին հանէք։

Ես կանգնած էի Սարգսի կողքին։ Նա իրեն յատուկ բարձր քրքիջով սկսեց քա՛հ-քահ ծիծաղել, իսկ Քեռին ժպտում էր մեղմօրէն։

Խէշօն էլ շդիմացաւ եւ աղմուկով հահռաց.

— Վա՜յ, ձեզ ինչ ասեմ. կովերի համար Խէշօն պ. Խաչատո՞ւր էլ դարձրիք։ Լաւ, կը տեսնենք, մի բան կանենք։

Ու շարժուեցինք Նորսի ուղղութեամբ՝ մեզ հետ տանելով նւիրուած գինին եւ Խէշօի, Քեռու եւ Սարգսի հետ եկած երկու զինուորներին։

Նորսում Խէշօն ու Սարգիսը մեզ յանձնեցին իրենց լեցուն խուրջինները։ Նրանք բերել էին ծխախոտ, շաքար, դեղորայք եւ ուրիշ անհրաժեշտ իրեր։ Մեզ առանձնապես ուրախացրեց շաքարը, որի պակասից շատ էինք նեղւում։ Ռուսաստանի ներսերը սկսել էին գործադուլներ. երկաթուղին կանգ էր առել, մթերքների փոխադրութիւնն էլ համարեա դադարել էր։ Մեղ մօտ, առաջին հերթին, հրապարակից վերացել էր շա-

քարը. թէյը ստիպուած էինք խմել շամիշով։ Մենք դեռ Դարալագեազի եւ Զանգեզուրի հետ էլ կանոնաւոր կապ չէինք ստեղծել, որ մեր կարիքները այնտեղից հոգայինք. այնպէս որ Խէշօի եւ Սարգսի խուրջինները ճիշտ ժամանակին էին հասնում։

Նորսում առաջին երեկոն նստեցինք աւելի ընկերական զրոյցի ու կատակների։ Յաջորդ օր առաւօտեան սկսեցինք լրջօրէն — քննութեան առնել մեզ վերապահուած բոլոր խնդիրները։ Նախ քան խորհրդակցութիւնը Խէշօն ինձ մտերմօրէն առաջարկեց.

— Երթանք՝ մի քիչ ման գանք։

Ու երբ դուրս էինք եկել, շատ զգուշութեամբ, սկսեց խօսել Լեռնային Նախիջեւանի կարեւորութեան մասին ինքնապաշտպանութեան տեսակէտից. պէտք է միանանք Դարալագեազի և Զանգեզուրի հետ եւ այդ նպատակով հարկադրուած ենք մաքրել մի քանի թշնամի գիւղեր. այս լուրջ գործը գլուխ բերելու համար անհրաժեշտ է այս շրջանը յանձնել մի աւելի փորձուած ու եփուած խմբապետի։ Խէշօն յոյս էր յայտնում, որ ես ուրիշների նման խմբապետ մնալու ցաւով բռնուած չեմ եւ իբրեւ կրթուած խմբապետ՝ կը հասկանամ իր ասածի կարեւորութիւնը։

Ճիշտն ասած, Խէշօի խօսելու ձեւը մի քիչ տարօրինակ թւաց ինձ. ի՞նչ կայլի շարական էր կարդում գլխիս. որ պէտք է՝ պէտք է. էլ ի՞նչ կարիք կայ երկար-բարակ խօսելու։ Ես անմիջապէս կտրեցի նրա խօսքը.

— Էլ ի՞նչ ես երկար ճառում. ես շատ ուրախ եմ եւ մեծ հաճոյքով շրջանը կը յանձնեմ Քեռուն։ Խէշօն անուշ աչքերով նայեց երեսիս, գրկեց ինձ եւ ասաց.

— Ա՜յ, իմ բոլոր բալիկներն այսպէս են. կեցցե՛ս։ Դուամանին էլ այս մասին գրել են. նա էլ համաձայն է։ Քեռին շատ փորձուած, խիզախ, ազնիւ խմբապետ է. ինչպէս ինձ ես սիրում ու յարգում, այնպես էլ նրան վերաբերուիր։

Ես կրկին ու կրկին հաւատացրի, թէ ուրախութեամբ կը յանձնեմ Քեռուն շրջանի հրամանատարութիւնը։ Երբ տուն վերադարձանք, Խէշօն հանդիսաւոր կերպով յայտարարեց Սարգսին.

— Ամէն ինչ կարգադրուած է։

— Արդէն ուրիշ կերպ էլ չէր կարող լինել. ես Դրօին ճանաչում եմ,— պատասխանեց Սարգիսը։

Մեր այս խօսակցութեան ժամանակ գոմից դուրս էին բերել իմ ձին։ Քեռին հիացած դիտում էր նրան, ժպիտը դէմքին։ Խէշօն հարցրեց։

— Քեռի ջան, ո՞նց ձի է։

— Լա՛ւ մալ է,— պատասխանեց Քեռին։

— Քեռի՛, քեզ փէշքէշ,— վրա բերի ես։

— Տիրոջ բունբարէք ըլլայ։

Քիչ յետոյ, ես անցայ տղաների մօտ եւ յայտարարեցի, թէ այսուհետեւ մեր ընդհանուր խմբապետը Քեռին է։ Տղաները անտրտունջ լսեցին յայտարարութիւնս, բացի Խլաթցի Գալօից եւ Կօփեցի Սարօից։

— Մենք մըր խմբապետէն գոհ ենք, յորի՞ ուրիշ խըմբապետ կուտան մըզի,— գանգատւում էին նրանք։

Ես բարկացայ նրանց վրա, պահանջեցի որ լսեն եւ ենթարկւին եղած կարգադրութեան։ Ապա գնացի Քեռու մօտ եւ անձամբ յայտնեցի ուրախութիւնս նրա ընդհանուր հրամանատար նշանակւելու առթիւ։

Քեռին ժպտերես լսեց ինձ եւ ասաց

— Միասին կը վարենք գործը. դուն ալ կը մնաս, քո խումբը կը վարես։

Ես, սակայն, առարկեցի եւ պնդեցի, թէ պէտք է լինեմ նրա հրամանատարութեան տակ։

Ու այնուհետեւ մի ամբողջ տարի մենք մնացինք միասին Լեռնային Նախիջեւանում ու Զանգեզուրում եւ վարեցինք բազմաթիւ կռիւներ, որոնցից երեքի վրա պիտի կանգ առնեմ՝ ցոյց տալու համար, զէթ մասամբ, Քեռիի խոշոր անհատականութիւնը, զարմանալի յանդգնութիւնը, անսահման քաջութիւնը եւ մանաւանդ ղեկավարի հմտութիւնը։

Այդ մասին, սակայն, ուրիշ անգամ։

ՍԻՍԵԱՆ ԳԻՒՂԻ ԿՌԻՒԸ

Անցեալ անգամ խոստացայ պատմել Քեռիի հետ վարած մեր կռիւների մասին։ Բայց նախ քան այդ, մի քանի խօսքով պատմեմ, թէ ի՞նչ կազմակերպութիւն էինք առաջ բերում

մեզ յանձնված շրջաններում, ինքնապաշտպանության համար։

Համաձայն Դումանից ստացած հրահանգի, հայկական բոլոր գիւղերում մենք ստեղծում էինք հետեւակ ու ձիաւոր մնայուն եւ թռուցիկ խմբեր։ Շրջանը, որի գլուխ կանգնած էր ընդհանուր խմբապետը կամ հրամանատարը, գիւղերի դասաւորության համեմատ, բաժանւում էր շրջանակների։ Ամէն մի շրջանակում փորձւած հայդուկներից մէկը նշանակւում էր խմբապետ եւ մէկն էլ՝ նրան օգնական։ Ըստ Դումանի յատուկ կարգադրության, տեղական հետեւակ թռուցիկ խմբերը կազմւում էին ռուսական բանակում ծառայութիւն արած երիտասարդ զինւորներից։ Տեղական սեփականութիւն եղող զէնքերը տրւում էին զինավարժ տղաներին, որոնք մտնում էին տեղական զինեալ ուժերի շարքերը։ Կուսակցական փամփուշտ տրւում էր միայն թռուցիկ խմբերին, որոնք նորը ստանալու համար պարտաւոր էին ներկայացնել կրակւած փամփուշտները։

Տեղական թէ մնայուն եւ թէ թռուցիկ խմբերը, քիչ բացառութեամբ, գործում էին ռուս զինւորական կանոններով։ Այսպէս, ունէինք տասնեակ (ատգելենիէ) իրենց տասնապետներով, քսանեակներ (վզվոդ)՝ 20—30 հոգուց բաղկացած, իրենց քսանապետներով։ Թեթեւ կռիւների ժամանակ առաջին հերթին գործի էին հանւում թռուցիկ ձիաւոր եւ հետեւակ խմբերը, իսկ պահանջւած դէպքում շարժման մեջ էին դնում զինւորական բոլոր ուժերը։ Թշնամուն հարւածը տալուց յետոյ, զինւած ուժերը վերադառնում էին իրենց տեղերը և սպասում նոր հրահանգների։

Զինւորական մեծ շրջաններում, ինչպիսին էր, օրինակ, Սիսեանը, Դաշնակցության Կենտրոնական Կոմիտէն ունէր իր ներկայացուցիչը — շրջիկ, որի պարտականությունն էր կոմիտէների եւ ենթակոմիտէների հետ միասին լուծել տեղական վարչական ու դատական խնդիրները, աջակցել զինւորական մարմիններին, հաւաքել կուսակցական եւ ինքնապաշտպանության յատկացւած տուրքերը, հետեւել, որ անշեղօրէն կատարւեն զինւորական մարմնի կարգադրությունները, յատկապէս ունեւոր գիւղացիների վրա դրւած զէնք դնելու պարտաւորությունը։ Զէնքը այն օրերին շատ թանգ էր. մի

մօտին հրացան 2—300 ռուբլի արժէր, փամփուշտի հատը՝ 80—40 կոպէկ։ Գիւղի ամէն ունեւոր բնակիչ պարտաւոր էր գնել որոշած քանակով եւ տրամադրել ինքնապաշտպանութեան ընդհանուր գործին։

Այս ձեւի կազմակերպութիւն էինք առաջ բերում Լեռնային Նախիջեւանի գիւղերում, երբ մի օր էլ հրաման եկաւ Դումանից, որ անմիջապէս մեկնենք Զանգեզուր։ Մեզ փոխարինող ուրիշ ուժեր հասան, իսկ ես ու Քեռին մեր խմբերով անցանք Զանգեզուր եւ կենտրոնացանք Սիսեանի շրջանում, ուր ձեռնարկեցինք նոյն ձեւի կազմակերպութեան ստեղծման։ Մեր խմբերի մէջ մտել էին նոր տղաներ։ Ունէինք երեսունի չափ ձիաւորներ։ Ես Քեռիի օգնականն էի։ Նա ինձ տվել էր գործելու կատարեալ ազատութիւն։ Ինձ էր յանձնել շրջանի տեղական ուժերի կազմակերպումը, մի սահմանափակումով սակայն.

— Դու ձիաւորները թո՛ղ. անոնք ունին իրենց խմբապետները։

Եւ ես ձիաւորներին թողած, ամբողջապէս կլանուեցի տեղական մարտական ուժերի կազմակերպման գործով։

Հետաքրքրական էր լսել մեր աշքառու հայդուկների կարծիքը Դումանի կարգադրութիւնների մասին։ Օրինակ, Բերդակցի Օսկանը, Կոփեցի Կնեազը, Մոկացի Խէշօն (որ մեր խմբի աշուղն էր՝ ծաղրածուն), Խլաթցի Գալօն անսահման արհամարհանքով էին նայում ռազմական ծառայութիւնը անցած զինուորների վրա եւ յաճախ կէս-լուրջ, կէս-կատակ զանգատւում էին.

— Տօ՛, պարոն Դերո, էդա մըր պարոն Դուման ի՞նչ ի մոգոնի. սալդա՞թ պտի կազմակերպես, զօռով շարք մտցնես— կռի՞ւ պտի քշես. էնոր էրած կռիւ ի՞նչ կեղնի։ Դաշնակցութեան զինուոր իր խէր, մէր մոռցած մարդ ի. ազգի սիրուն մէկ ոտ հոս, մէկ ոտ հոն, գիշեր-ցերեկ սար ու ձոր մնացած՝ ինոր բան ուրիշ ի. էդա զինուորներ իրենց օլուխ-շոջուխի կշտին՝ էտոնք ի՞նչ պտի կռին։ Տո, վալլահ, մեր պարոն Դումանի բաներ օյին ի, օյին...

Տղաները այսպէս յաճախ քննադատում էին ու հեգնում՝ դրանով, մի տեսակ, բաւարարելով իրենց հայդուկի վիրաւորուած ինքնասիրութիւնը։ Անխառն հաճոյք էր լսել մեր այս

լեռնական, պարզ ու անգրագէտ մարտիկների անսեթեւեթ խօսքերով արտայայտուած յուզումն ու զարմանքը։ Ես ժպտում էի քթիս տակ եւ սպասում էի այն օրուան, երբ գործի մէջ երեւան պիտի գար Դումանի «օյին»-ի ոյժը։ Եւ այդ օրը շուշացաւ։

Գիւղերում ինքնապաշտպանութիւնը կազմակերպելու նպատակով 10—15 օրով ես դուրս եկայ շրջանը։ Երբ վերադարձայ Բռնակոթ եւ մտայ Քեռու շտաբը, աչքիս պատկերացաւ հետեւեալ տեսարանը — ընդարձակ սենեակում երկու կարի մեքենայ դրուած մի կողմ, մի շուտ կարելու մեքենայ էլ մի ուրիշ կողմ, տեղացի մի քանի հագուստ ու շուտ կարող արհեստաւորներ մեծ եռանդով աշխատում էին։ Պատերից կախուած էին հասարակ կտորից կարուած հագուստներ եւ աժաններց կտաւից սպիտակեղէններ, որ Քեռին պատրաստել էր տուել զինուորների համար։ Պատերից խնամքով կախուած էին նաև Ֆիերի ղոլաններ[28], թարքի թաղիքներ։ Այդ ահագին սլաշարը պատրաստուել էր վերջին 10—15 օրուայ ընթացքում։

Մեր զինուորներից շատերը ունէին դիագանալ թանգնոց կտորից շալւարներ եւ կաբարդին[24] մորթէ փափախներ։ Քեռին շարունակ դժգոհութիւն էր յայտնում եւ դիտել էր տալիս, թէ ժողովուրդը դրամ չունի մեզ դիագանալ շալւարներ ու կաբարդին փափախներ հագցնելու համար։ Եւ այդ պատճառով աժան կտորից հագուստներ ու սպիտակեղէն էր պատրաստել։ Մեր զինուորները տրտնջում էին երբեմն նոյն իսկ բողոք բարձրացնում, թէ միւս խմբապետները իրենց տղաներին լաւ կտորից հագուստ էին տալիս, իսկ Քեռին զրկում, միւս խմբապետների պէս չի նայում իր զինուորներին։ Բայց Քեռին անյողդողդ էր. ազգի ամէն կոպէկ նա հաշուով էր ծախսում։ Եւ շնորհիւ այսպիսի վերաբերումի, կուսակցական դրամարկղից ստացած 2000 ռուբլուց մի տարուայ ընթացքում ծախսել էր հազիւ 500 ռուբլի։ Դումանը խմբապետների ժողովում բացառիկ գովասանքով ու ջերմ գնահատանքով էր խոսել Քեռու խնայողութեան մասին ու նրա ներկայացրած հաշիւները իբրեւ օրինակ ցոյց տուել միւս խմբապետներին։

---

23 Պարաններ (Ծ. Կ.)։

24 Խիտ գործված նուրբ Լէրպաոի տեսակ։ (Ծ. Կ.)։

Իմ Բռնակոթ գալու օրն իսկ Քեռին կարգադրեց, որ զինուոր առնեմ եւ անցնեմ Թազա գիւղ, որ հանդիսանում էր շրջանի գիւղերի սիրտը եւ մի տեսակ հանգոյց էր դէպի Մազրա տանող ճանապարհի։ Ես չէի ուզում նոյն օրը մեկնել, բայց Քեռին պնդեց իր կարգադրութեան վրա։ Նա կարծես բնազդով զգում էր, թէ մի բան է պատահելու։

— Այսօր եւ եթ պէտք է երթաս,— ասաց նա վճռական կերպով,— ես այդ գիւղէն քիչ մը կը վախնամ։ Զիաւորներ ալ առ հետդ, որը որ կուզես։

Ես հետս առի իմ մշտական զինուորներից Իգդիրցի Քիւրդ Խէշօին, Բերդակցի Օսկանին, Խլաթցի Գալօին, մեր մշտազարթ Մոկացի Խէշօին եւ մի քանի ուրիշներին, ընդամենը տասը հոգի։ Քեռին տղաներին բաժանեց իր արհեստանոցում պատրաստած սպիտակեղէնից մի-մի գոյգ, քննեց եւ իր ձեռքով շտկեց ձիերի սարքը ու բարի երթ մաղթեց։ Իմ ձիու ոտը պայտառը մեխով էր գցել. Քեռին մի լաւ թակեց պայտառին եւ իր ձին տուեց ինձ։ Ու մենք ճանապարհ ընկանք։

Թազա գիւղում ժողովուրդը մեծ ուրախութեամբ ընդունեց մեզ։ Մեզ համար յատուկ տեղ էր պատրաստուած, դարբնի մեծ տանը, որի կողքին ձիերի համար էլ կար մի ընդարձակ գոմ։

Թազա գիւղի հրացան ունեցող կուռղների թիւը տասնից չէր անցնում։ Նրանց խմբապետը, Բողդան անունով, ռուս բանակում ծառայած մի ենթասպայ էր։ Ես նրան կարգադրեցի, որ վտանգաւոր կէտերում մի-մի հրացանաւոր դնի, իսկ սրանց կողքին էլ՝ երկուական անզէն տղաներ, որպէս զի վտանգի դէպքում կապ պահեն հրացանաւորների եւ գիւղացիների միջեւ։ Ապա գնացինք ուտելու գիւղացիների պատրաստած առատ ճաշը։ Գիւղացիք չափազանց ուրախ էին մեր գալու առթիւ եւ ոչինչ չէին խնայում մեզ հիւրասիրելու համար։

Հացկերոյթից յետոյ, ուրախ ու զուարթ, վերադարձանք մեր բնակարանը քնելու, բայց քունը չէր գալիս մեր աչքերին։ Ամենքի տրամադրութիւնը շատ բարձր էր։ Մանաւանդ, արտակարգ կերպով ուրախ էր մեր խմբի ծաղրածուն՝ Մոկացի Խէշօն։ Սեղը բռնած իբրեւ սազ՝ նա նուագում ու ծաղրական

երգեր էր երգում զինակից ընկերների մասին, յաճախ, ենթարկելով այս վերջինների հայհոյանքին ու ծեծին։

Հոհոռոցն ու աղմուկ լեցած էր սենեակը, երբ ներս մտաւ Բողդանը եւ ինձ յանձնեց Քեռուց մի նամակ։ Քեռին նորից ու նորից զգուշացնում էր, որ արթուն հսկեմ եւ բոլոր վտանգուած կէտերը պահակներ դնեմ։ Ինքն էլ խոստանում էր առաւօտեան գալ Թազա գիւղ։ Յայտնում էր նաեւ, որ Թուրքական Սիսեան գիւղում թշնամի ուժեր են հաւաքւում. ըստ արժանահաւատ տեղեկութիւնների այնտեղ էր եկել իր տասը ընկերներով նաեւ յայտնի Ղաշաղ Խանլարը։ Անհրաժեշտ էր, որ ես անմիջապէս հրահանգ ուղարկէի Պէնուա եւ Ախլաթեան գիւղերի թուրքիկ խմբերին, որ պատրաստ լինեն։ Քեռին ուղարկել էր նաեւ նոր մարտիկներից բաղկացած օգնական ոյժ։

Բողդանից յետոյ ներս մտաւ եւ Բռնակոթի քահանայի տղան՝ Յովհաննէսը (Վահան խորէնու մեծ եղբայրը), որին Քեռին 15 տղաներով ուղարկել էր Թազա գիւղ՝ հսկելու համար, որ պինտորները նեղութիւն չտան գիւղացիներին, եւ կուի դէպքում օգնելու մեզ։ Եթէ չեմ սխալւում, նա կոմիտէի անդամ էր։

Երբ ես վերջացրի անհրաժեշտ կարգադրութիւնները, մեր անպիտան խէշօն սկսեց ծաղրական շեշտով երգել.

— Բարով եկար, դո՛ւ, Բռնակոթի տէրտէրի տղայ. դու եկել ես գլուխ տալու մոկաց իշխան քաջ խէշօին։

Ու դառնալով Քիւրդ խէշօին.—

— Խոգիդ խորի, քրդո՛. բա՛ց քեռ խուրջին, պատէ զհիւր։

Քիւրդ խէշօն անմիջապէս տեղից վեր թռաւ, բաց արաւ խուրջինը, հանեց շիշը ու մի բաժակ օղի լեցնելով՝ հրամցրեց հիւրին։ Յետոյ, երկրորդ բաժակը լեցրեց ու երկարացրեց Մոկացի խէշօին։ Երբ սա ձեռքը մեկնեց դէպի բաժակը, Քիւրդ խէշօն մի ումպով կուլ տուեց օղին, շիշի բերանը պինդ գոցեց ու դրեց խուրջինը։ Պայթեց ընդհանուր ծիծաղ բոլոր տղաների կողմից, բայց, մանաւանդ, բարձր հրհռում էր Օսկանը։ Մոկացին առնեց ու լռեց։

Լռեց, բայց չմարսեց ստացած վիրաւորանքը։ Մի քանի օր յետոյ նա իր վրեժը լուծեց Օսկանից։ Այս վերջինը նահապետական բարքի տէր, կանանց խնդիրներում չափից աւելի խստապահանջ ու բարոյական մարդ էր։ Մոկացի խէշօն հագնում է տեղական կնոջ շորեր եւ փողոցում հանդիպելով Օսկանին՝ փաթաթւում է նրա վզով։ Խեղճ Օսկանը շշմում է, մի րոպէ կորցնում է գլուխը. ո՞վ՝ է այս «անբարոյական» կինը, որ փողոցում, արար աշխարհի առջեւ յանդգնում է խայտառակել հայդուկ Օսկանին։ Ու երբ քիչ յետոյ, ուշքի է գալիս եւ հասկանում է խէշօի խաղը, սարսափելի կատաղած, դաշոյնը ձեռքին՝ ընկնում է նրա յետեւից։ Մեր Մոկացի հերոսը հազիւ ազատւում է նրա զայրոյթից։

Բերդակցի Օսկանն էլ, սակայն, առիթ է գտնում վրեժ առնելու Մոկացի հերոսից։ Մի կուում հարկաւոր է լինում գրաւելու գիւղի մէջ գտնւած ջրաղացը, որի ճանապարհին արդէն 3—4 հոգի սպանւել էին։ Օսկանը, Քիւրդ խէշօի հետ, հրամայում է Մոկացի խեշօին անմիջապէս գրաւել ջրաղացը, բայց սա տեղից չէ շարժւում։ Այն ժամանակ Օսկանը սպառնում է նրան հրացանազարկ անել. Մոկացին կէս-կատակ, կէս-լալկան ձայնով աղաչում է.

— Տո՛, տղայ, մէկ խատ Մոկացի իշխան ունիք ձեր մէջ, էն լէ կուզիք էսա էրկի՞ր թողիք. դուք ֆիտայիներ մէջ մըջքի կը՝կուիք, ձիկ ձգեր իք գեղցոց մէջ ու կըսիք՝ գնա՛ զջաղաց վերցու։ Տո՛, էդ իմա՞լ խիղճ ի ձեր խիղճ։

Օսկանն ու Քիւրդը մեղմանում են եւ թողնում են հանգիստ «Մոկացի իշխանին»...

Մեր Թազա գիւղ հասնելու յաջորդ առաւօտ ես ընդհանուր ժողով էի նշանակել եկեղեցում. պատրաստւել էի ճառ ասելու։ Երբ քահանան եկեղեցական արարողութիւնը վերջացրեց, չեմ յիշում սկսել էի ճառս թէ ոչ, յանկարծ, դուրսը լսեցին հրացանների դրաքոցներ։ Ինչպէս յետոյ պարզւեց, անպիտան գիշերապահները, մտածելով թէ գիւղում զինւած ոյժ շատ կայ եւ բան չի պատահի, առաւօտեան դէմ դիրքերը թողել ու վերադարձել էին իրենց տները, թշնամին դրանից օգտւելով՝ յարձակւել էր գիւղի վրա։

Հրացանների որոտին հետեւեց հաւար եւ իրարանցում։ Զանազան կողմերից ձայներ էին լսւում, թէ Սիսեանի թուր-

քերը արդէն գիւղն են մտել, թէ թշնամին սպառնում է թա-
լանի տալ գիւղը։

Այդ օրերին սովորութիւն էր եկեղեցի էլ զինուած գնալ.
զինուած եկել էին ճառս լսելու և Բռնակոթից։ Մեր տղաներից
եկեղեցում էին գտնւում միայն Գարեգինն ու Մոկացի Խէշօն։
Մենք պատրաստեցինք շտապով գրաւելու դիրքերը։ «Տղե՛րք,
հետեւեցէք ինձ»,— հրամայեցի ես բռնակոթցիներին, եւ ամենքս
դուրս թռանք եկեղեցուց։ Մեր միւս տղաներն էլ տկլոր ձիերը
նստած, կայծակի արագութեամբ բարձրանում էին դէպի
թուրքերի բռնած դիրքերը։ Մեզ միացաւ եւ տէրտէրի տղան՝
Յովհաննէսը իր մարդկանցով։

Մենք աճապարեցինք բռնել Սիսեանից դէպի Թազա գիւղ
տարածող բարձունքները, որպէսզի արգելք լինենք թշնամու
ներխուժումին, սակայն դեռ տեղ չհասած տեսանք, որ թուր-
քերն արդէն գրաւել էին այդ բարձունքները։ Վայրկեանը
ճգնաժամային էր։ Գիւղը իրական վտանգի տակ էր։ Ամէն
կողմից լսւում էին անհանգիստ աղաղակներ։ Մոկացի Խէ-
շօն ի զէ՛ն էր հրաւիրում ժողովրդին եւ ինձ սիրտ տալու
համար անվերջ կրկնում էր.

— Դերո ջան, վալլահ տղեկներ յըմէն ելան դիրքեր։

Մեր տղաներից ոմանք նոյն իսկ ժամանակ չէին ունեցել
սանձելու ձիերը, հեծել էին առանց թամբի ու նոխտաներով
եւ այդպէս արշաւում էին թշնամու դէմ։ Երբ նրանք մօտեցան
թուրքերի դիրքերին, յանկարծ, ձիերից մէկը զարնւեց։ Բռ-
նակոթցիների իմ կազմած վզվոդը, երկու շղթայ կազմած,
զինւորական կարգով ու կանոնաւոր համազարկերով բարձրա-
նում էր բլուրն ի վեր թուրքերին դիրքերից քշելու նպատակով։
Ես ու հետիս մարտիկներն էլ դիրքեր գրաւեցինք ու սկսեցինք
կռւել։ Այդ վայրկեանին խմբապետ Բողդանը ձիով արագու-
թեամբ մօտեցաւ մեզ եւ պատմեց, թէ թուրքերը խոշոր ուժեր
են կենտրոնացրել մեր 6—7 ձիաւոր տղաների դէմ եւ աջ
կողմից առաջանալով՝ սպառնում են անցնել նրանց թիկուն-
քը։ Ձիերից մէկ-երկուսը խփւել են, իսկ տղաներից լուր
չունի թէ սպանւել են թէ ողջ են։ Պահանջւում էր արագ
օգնութիւն։ Առանց ժամանակ կորցնելու, Բողդանի, Մոկացի
Խէշօի եւ տեղական մի քանի հրացանաւորների հետ ես շտա-
պեցի վտանգւած հայդուկների օգնութեան։

Երբ տեղ հասանք, մեր աչքերին պարզուեց հետեւեալ պատկերը. թուրքերը իրենց գրաւած բլուրի աջ կողմի ձորակի մօտից հետզհետէ առաջանալով՝ աշխատում էին անցնել մեր տղաների յետեւը։ Մի քիչ եւս, եւ մերոնք պիտի կտրուէին թիկունքից։ Մենք անմիջապէս վրա տւինք ու շեշտակի կրակի տակ առինք թուրքերին, որոնք, անակնկալի եկած, սկսեցին խուճապով յետ քաշուել։ Մենք երեք հոգով, տաքացած, առանց մեզ հաշիւ տալու թէ ինչ ենք անում, անցանք առաջ։ Մէկ էլ, յանկարծ, այդ թոհ ու բոհի մէջ, մեր ականջին հասան ռումբերի պայթիւնի որոտներ։ «Երեւի մեր տղաները խառնուել են թուրքերին»,— մտածեցի ես ու մի բնազդական վախ համակեց ինձ։ Երկու ռումբ էլ մեր կողմից Գարեգինը նետեց։ Բայց թշնամին տեղի չէր տալիս եւ գնդակների տեղատարափով յուսահատօրէն դիմադրում էր մեր գրոհին. մենք էլ յամառօրէն առաջ էինք շարժւում։

Իսկապէս, երկու կողմի համար էլ կռիւը օրհասական էր։ Մենք նահանջի տեղ չունէինք. թուրքերն էլ հասկանում էին, որ եթէ տեղի տան, ոչ միայն իրենց ամբողջ ձեռնարկը կը վիժէր, այլ եւ անձնապէս էլ կը վտանգուէին։ Մի գերագոյն ճիգ եւս մեր կողմից, եւ մենք հասանք բլրի գագաթը, դէմ առ դէմ մեզ վրա արշաւող թրքական նոր ուժերի։ Շտապով ամրացանք, ու սկսուեց մի կատաղի դիրքային կռիւ։ Մեզ թշնամուց բաժանող տարածութիւնը հազիւ 80—100 քայլ էր։ Իմ ձախ կողմը կռւում էր Քիւրդ Խէշօն իր ընկերներով. աջ կողմս բռնակոթցի եւ տեղական ուժերն էին։ Թշնամու գնդակների տարափը այնքան սաստիկ էր, որ գլուխ բարձրացնել հնարաւոր չէր, եւ ես չէի իմանում, թէ ինչ դրութեան մէջ էին իմ աջի ու ձախի ուժերը։ Իմ մօտի տղաներից Բողդանը վիրաւորուեց ձեռքից։ Մի թեթեւ վէրք էլ ես ստացայ աջ ոտքիցս։ Յետոյ պարզուեց, որ ես դուրս էի եկել թուրք ղազախ խանլարի խմբի դէմ, որ բաղկացած էր յայտնի կռւող աւազակներից։

Բողդանին ուղարկեցի գիւղ եւ պատւիրեցի, որ անմիջապէս մեզ օգնութեան գան 10 բռնակոթցիներ։ Բողդանը գիւղը մտնելիս՝ հանդիպում է Քեռուն, որը իր խոստման համաձայն 10 ձիաւորներով օգնութեան էր եկել Թազա գիւղ։ Բողդանը նրան պատմում է մեր վիճակը, յայտնում է իր վիրաւորուելը,

աւելացնում է, թէ ես էլ նա վիրաւորուած, եւ թէ շտապ օգնութիւն է հարկաւոր։ Քեռին կարծում է թէ ես սպանուած եմ, և Բողդանը թագցնում է տղաների մէջ լքում առաջ շրջելու համար։ Ուստի, առանց երկար մտածելու, թռչում է ձին եւ քառասմբակ արշաւում դէպի մեր դիրքերը։

Ճգնաժամային վայրկեան էր մեզ համար։ Մենք մնացել էինք շորս հոգով եւ համարեա շրջապատուելու վրա էինք։ Իբրեւ վերջին գերագոյն ճիգ, ես Մոկացի Խէշոին էլ ուղարկեցի օգնական ուժեր կանչելու համար, բայց ոչ ոք չէր երեւում։ Մեր փամփուշտն էլ վերջանալու վրա էր։ Թշնամին արդէն ցընծութեան մէջ էր եւ աւելի վստահ ու յանդուգն կերպով էր կրակում։ Մեր դիակների վրայով թուրքերը տէր պիտի դառնային Թազա գիւղին, ռազմագիտական տեսակէտից այդ շատ կարեւոր վայրին։

Մէկ էլ — ի՞նչ տեսնեմ։ Գարեգինը իր քսի ու քրտինք դարձած ձիու վրա, թշնամու գնդակների կարկուտի տակ, մեր դիրքերը հասաւ։ Ձին անմիջապէս խփեց. Գարեգինը մի ակնթարթում դիրք մտաւ մեր կողքին։

Նոյն վայրկեանին, կատաղի փոթորիկի պէս սրարշաւ, հասաւ նաեւ Քեռին։ Ես սարսափած գոռացի.

— Քեռի՛, թուրքերը մօտ են, շուտ իջիր ձիուց, կը խփեն։

Դեռ խօսքս չէի վերջացրել, երբ նրա տակի ձին գնդակահար գետին գլորուեց։ Անայլայլ, կարծես ոչինչ չէր պատահել, մտրակն ու պարաբելլում ատրճանակը ձեռքին, Քեռին առաջ խոյացաւ թուրքերի վրա։ Տատանուելու ժամանակ չէր. մենք էլ հետեւեցինք նրան։ Յետեւից օգնութեան հասան եւ բռնակոթցիք։ Այժմ արդէն նեղելու հերթը թշնամունն էր. մեր դիրքերի առջեւ գտնուող բոլոր թուրքերը կոտորուեցին։ Ով կարողացաւ ազատուել՝ փախաւ։ Մեր յաղթութիւնը եղաւ կատարեալ։

Երբ արդէն թուրքերը դիրքերից քշուած էին, վրդ հասան Ախլաթեան ու Պննուս գիւղերի ուժերը։ Ինչ մեղքս պահեմ, ես Քեռու հրահանգը չէի գործադրել եւ պննուսցիներին ու ախլաթեանցիներին լուր չէի տուել, բայց նրանք հրացանների որոտը լսելով, ինքնաբերաբար, շտապել էին հասնել օգնութեան։

Այս բոլոր ուժերը համախմբուած ու շղթայ կազմած՝ մենք

քշեցինք Սիսեան թուրք գիւղի վրայ։ Քեռին ձին հեծած անվերջ «ուռա՜» գանչելով՝ գնում էր շղթայի առջեւից։ Նա հրահանգել էր հիմքից այրել Սիսեանը, որ ոչինչ չմնայ այդ խըշնամու համար կարեւոր ռազմական նշանակութիւն ունեցող գիւղից։ Մենք էլ Քեռու «ուռա»-ներին «ուռա»-ներով պատասխանելով՝ մտանք Սիսեանը եւ ինչ որ կարելի էր այրել ու ոչնչացնել՝ ոչնչացրինք, գիմադրողներին էլ ջարդ ու փշուր արինք։ Կատարեցին եւ շրջակայ գիւղերից եկած բաւական մեծ թուով թուրքեր, որոնք հաւաքել էին Սիսեան՝ Թազա հայ գիւղի թալանին մասնակցելու համար։ Սիսեանից մնացին միայն հրկիզուած տների կոյտեր...

Երբ Սիսեանը արդէն գրաւուած էր, Քեռին նոր միայն ուշադրութիւն դարձրեց իմ վիրաւորուած լինելու վրա եւ պատւիրեց, որ անմիջապէս թողնեմ ու վերադառնամ Թազա գիւղ։

— Քեռի ջան, վէրքս թեթեւ է, քանի դու Սիսեանում ես, ես չեմ հեռանայ մօտիցդ,— առարկեցի ես։

Ու մենք միասին լրացրինք «պատերազմական գործողութիւնը»։ Փառաւոր ճակատամարտ էինք շահել։ Սիսեանի այրելը սարսափելի տպաւորութիւն գործեց շրջանի թրքութեան վրա, որի ողնաշարը վերջնականապէս կոտրուում էր։ Սիսեանը, իր մեծութեամբ ու խաղացած ազդեցիկ դերով, շրջանի թրքութեան սիրտն էր։

Այս կուում մենք ունեցանք երեք սպանուած և 3—4 վիրաւորներ։ Սպանուեցին նաեւ 4—5 ձիեր։ Քեռու Ջէյրանը ազատուեց շնորհիւ այն բանի, որ Բռնակոթում Քեռին ինձ էր տրամադրել։ Քեռու տակ սպանուեց մի ուրիշ ձի։

Թազա գիւղում մեզ փառաւոր ընդունելութիւն ցոյց տուին եւ մեր յաղթութեան լուրը տարածուեց ամէն կողմ՝ բարձրացնելով հայ ժողովրդի մարտական տրամադրութիւնը եւ միաժամանակ՝ մեր հմբաւը։

Այս կուից յետոյ էր, որ Մոկացի խէշօն առիթ գտնելով՝ մեզայի եկաւ, թէ ինքը ինձ սխալ էր ճանաչել եւ տղաների առջեւ իմ կարողութիւնները ծաղրելու համար մոկաց իշխաններին առակն էր պատմել։

Այս կուում էր նաեւ, որ հայդուկների աչքին բարձրացաւ Դումանի զինուորական կազմակերպութեան ձեւը, որ այնքան հեգնանքի առարկայ էր եղել մինչեւ այդ։

Հետաքրքրական էր խլաթցի Գալօի գնահատութիւնը բրոնակոթցի զինուորների եւ տեղական միւս ուժերի վարած կռիւների մասին։ Այդ գնահատութեան մէջ խտացած է մեր հայդուկների ընդհանուր նզրակացութիւնը։

— Տօ՛, վալլահ, տղեկներ,— իրեն յատուկ ոճով ասում էր Գալօն,— մեր պարոն Դուման էնղտար անխելք պա՛ն չի կարգադրի. էնի էրեւան նատում՝ իմացիր ի, թէ էստեղի զինուորներ իմալ պտի կուցու։ Տղեկնե՛ր, էսոնք մըզ պէս կռիւ չեն ըներ. մընք էրկու հոգի հոս, էրկու հոգի հոն դիրք կը բռնենք, ու ֆիտայու գիւլլէն վը՛ժժ կը թափի թշնամու գլխուն։ Էսոնք թելի պէս կը շարուին. էնոնց էն թելաւոր շավուշ շուէն էն շան լեզուով բան մը կը բոռէ, յըմէն տղեկներ ֆը՛րթ-ֆը՛րթ-ֆը՛րթ թանքներ կը կրակեն...

Տղէ՛ք ջան, չկարծէք թէ ես լէ ֆիդայու անուն ձգի. վալլա՛հ, ջաղցի առուի փէլ բռնած՝ էնոնց միշտ յառաջ, միշտ յառաջ կուուցի... Մեր Դերօն լէ, Գեռեբու գլուխ ելանք, ռուսավար կը բոռէր, զինուորներ լէ կրակ կը թափէին վըր թըշնամուն։ Վալլա՛հ, թէ դուզն կուզիք ըսիմ, էդա տեղական զինուորներ դուման խանած էին գիւղի մէջ ու դիրքերու քով...

ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐՆ ԻՆՉՊԷՍ ԴՐԺԵՑԻՆ ԻՐԵՆՑ ԽՈՍՏՈՒՄՆԵՐԸ*

...Նախ առաջին տրամադրութեան մէջ նկատելի մէկ կէտ կայ, որուն համաձայն Հայաստանը խորհրդային հանրապետութիւն կը համարուի միայն Դեկտ. 2-ին։

Համաձայնագրի երկրորդ կէտին մէջ, բոլշեւիկները կ՚ընդունին Հայաստանի հողային ամբողջականութիւնը։

Բայց հետագային անոնք չյարգեցին համաձայնութեան այս տրամադրութիւնը եւ Թուրքին պատերազմական աւար զիջեցան Սուրմալուն. Նախիջեւանն ու Շարուրը բաժնեցին Հայաստանէն. իսկ Կարսի նահանգը ԱՄԲՈՂՋԱՊԷՍ յանձնեցին իրենց Թուրք դաշնակիցներուն։

Համաձայնագրի երրորդ կէտի մէջ. բոլշեւիկները կը խոստանան պատասխանատուութեան չենթարկել Հայկական բանակի հրամանատարութիւնը այն գործերու համար. որոնք կատարուած են բանակի շարքերուն մէջ մինչեւ Հայաստանի խորհրդային իշխանութեան յայտարարումը։ Բոլշեւիկները չյարգեցին նաեւ իրենց այս խոստումը։ Հալածանքը սկսաւ հայկական բանակի հրամանատարութեան դէմ։ Յունուարին Մոսկուայի կառավարութիւնը պահանջեց Դրօյի հեռացումը Հայաստանէն։ Դրօ որոշեց երթալ՝ հակառակ անոր որ իր ձեռքին տակ գտնուող հայկական բանակի թիւը շատ աւելի մեծ էր քան եկող սովետական բանակը։ Կուսակցութեան որոշումով եւ իր համաձայնութեամբ Դրօ բռնեց աքսորի ճամբան։ Եթէ այդպէս չըներ, Հայաստան պիտի իյնար քաղաքացիական սպանիչ կռիւներու գիրկը եւ, առանց անոր ալ արիւնաքամ հայութիւնը պիտի ենթարկուէր նոր զրկանքներու։ Դրօյի հեռացումը ճնշող տպաւորութիւն թողուց ժողովուրդին վրայ. որուն հակազդեցութիւնը ժողովրդական լուռ ցոյցի մը ձեւը առաւ։

Աքսորեան փողոցը լեցուած խիտ բազմութիւնը ցաւով ճանապարհ դրաւ Դրօն, որուն հեռացման մէջ հայ ժողովուրդը կը տեսնէր իր վերջին յոյսերուն անհետացումը։ Դրօ Մոսկուայի մէջ արգելափակուեցաւ, իրաւունք չունենալով առանց

---

* Դրօյի այս հոդվածը տպագրվել է «Արեւելքում» (1948 փետր .18) Տ. Զարեհ ծածկանունով։

կառավարութեան գիտութեան 60 քիլոմէթրէն անդին երթալ եւ 84 ժամէն աւելի բացակայիլ։

Գրոյի հեռացումէն վերջ Հայաստանի ամբողջ սպայութիւնը, 1500 հոգի, զօր. Նազարբէգեանի, Հախվէրդեանի, Սիլիկեանի գլխաւորութեամբ գնդացիրներով շրջապատուած ձիւն ձմեռին, ոտքով քշուեցան Ռուսաստանի խորերը, Բիազան։ Ծերունի զօր. Նազարբէգեան չդիմանալով այս ուղեւորութեան, կէս մը անդամալոյծ Հայաստանէն մինչեւ Պաքու երթալէ վերջ, սովիէթ կառավարութեան որոշումով բանտարկուեցաւ Պաքուի բանտը, զօր. Հախվէրտովի եւ զօր. Գամամազովի հետ։ Մնացեալ սպայութիւնը, աքսորուեցաւ Բիազան։

Ծանր վիճակ մը նոյնպէս պարտադրուեցաւ Հայաստան մնացողներուն։

Երեւանի հրապարակին վրայ, օր ցերեկով զօր. Բ. Փիւրումեան անձնասպան եղաւ, աւելի լաւ համարելով մեռնիլ քան սովիէթ իշխանութեան անարգանքին ենթարկուիլ։

Ի՛նչ կը ներկայացնէր իրաւամբ հայ սպայութիւնը այն օրերուն։ Այս բնորոշումը կատարելու համար պէտք է քիչ մը ետ երթալ. քրքրել պատմութեան էջերը։

1917-ին երբ ռուսական բանակը, բոլշեւիզմի լուծին տակ որոշեց ամբողջ ճակատը լքել ու հեռացաւ, հայկական բանակը մնաց Վէհիպ փաշայի բանակին դէմ դիմաց։ 300 հազարոց ռուսական բանակի տեղը պիտի բռնէր հայկական բանակը։ Հայ ղեկավարութիւնը բանակ կազմակերպելէ զատ, պաշտօն ունէր նաեւ պաշտպանելու հայութեան զանգուածները թուրքերու կողմէ զինուած եւ հրահրուած թաթարներու դէմ։ Պրէսթ-Լիթովսքի դաշնագրով սովետները ահագին հոլեր զիջած էին իրենց բարեկամ Թուրքիոյ։

Այն օրերուն է որ Հ. Յ. Դաշնակցութիւնը վճռեց բոլոր հայկական զինեալ ուժերը կեդրոնացնել եւ ամէն ինչ տալ, ամեն ինչ գործադրել որ մեր երկրորդ հատվածը չմատնուի, ինչ կացութեան որ մատնուած էին արեւելեան նահանգներու մեր եղբայրները։ Նազարբէգեանի վիճակուեցաւ հայկական բանակը կազմակերպելու պաշտօնը։

Դժնդակ պայմաններու տակ կազմուեցաւ հայկական բանակը, այն օրերուն երբ Երեւանի նահանգին մէջ կը տիրէին

հացի պակասութիւն, սով, հիւանդութիւն եւ այն։ Հայ սպայութեան մեծագոյն մասը հայ գիւղացիի զաւակներ էին։

Ահա այս սպայութիւնն էր որ քշուեցաւ առանց յանցանքի, աքսորուեցաւ Հայաստանէն։ Ու հայ ժողովուրդը չկրցաւ ինքնիրեն հաշիւ տալ այս ապօրէն կարգադրութեան համար։

Սպայութեան աքսորէն վերջ սկսան բոլշեւիկեան ամենէն սարսափազդու եւ սանձարձակ հալածանքները ամբողջ հայ ղեկավարութեան եւ մտաւորականութեան դէմ։ Բանտերը լեցուեցան հազարաւոր բանտարկեալներով։ Բոլշեւիկները երկրի զանազան կողմերը սկսան անասելի հարստահարութեանց։ Բոլշեւիկները նոյնիսկ Հայաստանի ցորենն ու արմտիքը Ազրբէյջան արտահանեցին։

Այս խժդժութեան առջեւ, հայ ժողովուրդը սուգ ու շիւանի օրեր ապրեցաւ։ Հայ ժողովուրդի ռուսասէր տարրը իր աչքով տեսաւ ու վկայեց թէ սովետական իշխանութիւնը ոչնչով կը տարբերի սուլթանական բռնակալութենէն։ Բոլշեւիկները դրժեցին իրենց բոլոր խոստումները։ Հայաստան ահ ու սարսափելի երկիր դարձաւ։

Հետեւանքը անխուսափելի էր, հայ ժողովուրդը չէր կրնար տանիլ այսքան անարգանք ու վատութիւն։ Ժողովրդական բունկում մը ճակատագրական կը դառնար։

ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ

«ՄԵՐ ԱՆՎԵՀԵՐ ԴՐՕՆ»

Միքայել Վարդանեան, իր «Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն» արժեքաւոր գործի Ա. հատորին մէջ հետեւեալ ձեւով կը ներկայացնէ Նակաշիձէի ահաբեկումը.—

Մայիսի 11ին, ցերեկուան ժամը 3ի սահմանին, երբ գեներալ-նահանգապետը՝ Նակաշիձէ՝ կառքով կը սլանար քաղաքի կեդրոնական պողոտայով, ռումբ մը նետուեցաւ անոր վրայ եւ ահաւոր դղրդիւնի մէջ Նակաշիձէի ջախջախուած ու այլանդակուած դիակը փռուեցաւ գետին...։

Հակառակ իր բոլոր զգուշութիւններուն, Ոճրագործը չկրցաւ խուսափիլ հայոց Նեմեզիդայի արդար վրէժխնդրութենէն։

Դժուար է նկարագրել այն խուճապային սարսափը, որ յառաջացաւ Բագուի մէջ։ Պայթումի տեսարանն արդէն սոսկում կ՚ազդէր։ Նակաշիձէի արիւնաթաթախ դիակն ընկած էր պողոտայի մէջտեղը, կառքը երկու կտոր եղած էր. թուրք կառապանն ալ ծանրապէս վիրաւորուած էր եւ շուտով մեռաւ։ Ռումբի հարուածէն մահացան նաեւ Նակաշիձէի ծառան ու մի թուրք մրգավաճառ, որ բազմած էր այն անկիւնին մէջ, ուրկէ Դաշնակցութեան խորհրդաւոր ձեռքը նետեր էր դժոխային գործիքը։

Սարսափը այնքան մեծ էր բազմամարդ փողոցին մէջ, որ ամբողջ տասը րոպէ ոչ ոք կը համարձակէր մօտենալ սպաննուած իշխանաւորին։

---

* *Ըստ կարելւոյն մեկտեղել ենք ժամանակին Սփյուռքում տպագրված Դրոյին վերաբերող առավել ուշարժան վկայությունները, ինչպես նաև «Անմահ Դրօյի հիշատակին» «Ալիքի» Բացառիկը (4 մայիսի, 1956, թիվ 87)։ (Ծ. Կ.)։*

«Իմ ուսուցիչը», Նիկոլ Դումաեն

Սեւքարեցի Սամո, խեչո, Դրո, Արմեն Գարո, Քիւրտ խեչո, Մարտիրոս, (1907)

Դրո, Մարտիրոս Զարուխչեան

Դրոյի հայացքը... մշտապես Արարատին սևեռված...

Դրօ, Մատթէոս, Քիւրտ խեշօ, (1905)



«... քաջերուն մէջ չքեղօրէն քաջը և հերոսներուն մէջ կախարդօրէն հերոսը՝ Դրօն»

Նստածները՝ Օնէ. (Յովհաննես Մելքոնեան), Եպօն (Յովհաննես Պարոնեան, Մարտիրոս Աբրահամեան

Կանգնածները՝ Յովհաննես Քուրանեան, Չեմելեակ, Դալի Ղազար

Ռիժա Տիգրան Դրօ, Սիմոն Վրացեան

«... Դրոյի մեծագոյն ծառայութիւնը Հայաստանին ու հայ ժողովրդին եղաւ հէնց Բ պատերազմի ընթացքին, երբ նա երեւութապէս գործակցում էր գերմանացոց հետ...»
(1943)

Նիկոլ Դուման. «Այս արիւնոտ պայքարի մէջ մի նոր գիտ արի: Այդ գիտը Դրաստամատն է: Սա մեծ ապագա պիտի ունենայ, եթէ արժանավայել միջավայրի մէջ մնայ...»

«... Ա՜խ, մեկ էլ երկիրը տեսնեի...» (1956)
Դրոյի վերջին խոսքերից

Ահաբեկիչը, ՄԵՐ ԱՆՆՄԱՆ ԴՐՕՆ, վայրկենաբար անհետացաւ, եւ ոստիկանութեան բոլոր ճիգերը՝ գտնելու թանկագին որսը՝ ապարդիւն անցան։

Սփոփանքի եւ ուրախութեան հառաչանք մը թռաւ ազաւոր հայութեան կուրծքէն։ Հարուածը իր զօրաւոր արձագանքն ունեցաւ մինչեւ հեռաւոր Պետերբուրգ, ուրկէ թագաւորկայսրը իր հանդիսաւոր ու ջերմ ցաւակցութիւնը կը յղէր սպանուածի ընտանիքին եւ կը նշանակէր անոր յաջորդը,— դարձեալ հայատեաց վրաց իշխան մը՝ զօրավար Ամիլախվարի։ Բագուի թրքութիւնը եւ ռուս ու այլ սեւ-հարիւրեակները կազմակերպեցին հսկայ, շտեսնուած յուղարկաւորութիւն, հարիւր հազար մարդ, մեծ մասամբ թուրքերը, շրջապատեցին դիակառքը...։

Ռմբային հարուածի տպաւորութիւնը ահագին էր ողջ Կովկասի մէջ։ Դաշնակցութեան հմայքը, որ մեծ էր արդէն եկեղեցական գոյքերու համար մղուած կռիւներէն ու ահաբեկումներէն ի վեր, խիստ բարձրացաւ Կովկասեան ժողովուրդներու աչքին։ Հայ մարտական Կազմակերպութեան անունը կը հոլովէին բոլոր շրջաններում, ոմանք հիացումով ու պատկառանքով (ռուս յեղափոխականներ եւ ազատականներ), ուրիշներ՝ ատելութեամբ ու ատամներու կրճտոցով (սեւ-հարիւրականներ, վրացի թթու ազգայնականներ եւ մանաւանդ թաթար հայատեաց պարագլուխներ)։ Իր շեշտակի հարուածով եւ յարուցած դղրդիւնով, այդ ահաբեկումը, զոր կարելի է համեմատել Պլեւէի եւ մեծ իշխան Սերգէյի դէմ կատարուած մեծաշառաչ ահաբեկումներուն հետ, պիտի մնայ Հ. Յ. Դաշնակցութեան փառաւոր գործերէն մէկը։

Հետապնդուեցին, ի հարկէ, մեր ահաբեկիչներուն կողմէ նաեւ երկրորդական կարգի ոճրագործ պաշտօնեաները,— ռուս, թուրք, վրացի,— որոնք զիներ ու խրախուսեր էին ջարդարարները Բագուի հայերուն դէմ։ Զարնուեցան Մահմէտբէկով, Միքելաձէ, Շախտախտինսկի (առաջինը վիրաւորուեցաւ, միւս երկուքը սպաննուեցան)։

Ուրիշ քանի մը պաշտօնեաներ ալ վաղաժամ ձգեցին Բագուն ու փախան։

ՄԻՔ. ՎԱՐԱՆԴԵԱՆ

ԲԱՇ ԱՊԱՐԱՆԻ ՀԵՐՈՍԸ

Ս.Վրացեան, իր «Հայաստանի Հանրապետութիւն» արժեքաւոր գործին մէջ, կը գրէ մեր մեծ ընկերոջ՝ Դրոյի մասին (էջ 120).

«1918 Մայիս 23ին, թշնամին խոշոր ուժերով յարձակման դիմեց նաեւ Բաշ-Ապարանի ճակատում։ Սկսուեցին արիւնահեղ կռիւներ։ Դրոյին յաջողուեց կանգնեցնել նրա յառաջխաղացումը՝ զգալի կորուստ պատճառելով նրան։

«Ստանալով օժանդակ ուժեր, թիւրքերը նորից անցան յարձակման՝ հանդիպելով մերոնց յամառ դիմադրութեան։ Կռիւները տեւեցին մի քանի օր։ Այստեղ էլ մեր զօրքերը երեւան բերան արտակարգ տոկունութիւն ու քաջութիւն։ Դրօյի հմուտ-զեկավարութեան տակ նրանք յետ շպրտեցին թշնամու բոլոր գրոհները եւ Մայիսի 28ին մի խիզախ հակագրոհով փախուստի մատնեցին թշնամուն։

«Այդ ճակատամարտում հերոսական մահով ընկաւ հայ լաւագոյն հայդուկներից մէկը՝ ձիաւոր խումբի հրամանատար Զեմլեակը»։

ԴՐՕՆ ԻՐՐԵԻ ՌԱԶՄԻԿ ԵՒ ԻՐՐԵԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԷՄՔ

Յեղափոխական Դաշնակցութիւնը կորսնցուց իր մարտական սերունդին ամէնէն հուժկու դէմքերէն մէկը։

Երեք տառերու մէջ խտացած անունն իսկ, Դրօ, առանց որեւէ ածականի, կ՚ամփոփէ փառաւոր անցեալ մը։ Ինչպէս երբ կ՚ըսենք Սերոբ, Գէորգ Չաւուշ, Անդրանիկ, Մուրատ, Սեպուհ, Արամ, Իշխան, Ռուբէն կամ Նիկոլ։

Այսպէ՞ս է մեր պատմութիւնը։

Անհամար մեծ ու փոքր դէմքեր, բազմավաստակ «անձինք նուիրեալք», մեր ազատագրական պայքարին զանազան գլուխները կը բանան կրճատ այլ խօսուն անուններով։ Կը կազմեն խորհրդանշաններ՝ քաջութեան, հայրենասիրութեան, անձնուիրութեան եւ հաւատարմութեան։

Այս հոյակապ դէմքերը ջախջախիչ մեծամասնութեամբ կրակը նետուած են շատ կանուխէն։ Եւ ինքնաբերաբար։

Անոնք իրենց առաջին դասերը կ՚առնէին ոչ թէ դպրոցէն, այլ կեանքէն։ Հայաստանի լեռներէն, դաշտերէն ու գետերէն, կամ եռուն քաղաքներու ժխորէն։

Եւ մէկուն օրինակը, կամ անոր հետ կապուած դէպք մը կը դառնար ազդանշան, կենդանի պատգամ՝ միւսին համար։

Դրօն է որ կը պատմէ, Կովկասի մէջ կազմակերպուած դիմադրական պայքարին առթիւ.

— «Պատանիներ էինք։ Յեղափոխական ներշնչման գլխաւոր աղբիւրներից մէկն էր այդ օրերուն Անդրանիկի հերոսական կռիւը։ Երբ Անդրանիկը մի քանի հարիւր կտրիճներով կուրծք էր տալիս տաճկական բանակներին, յանուն հայ ժողովրդի պատուին ու ազատութեան, մենք նոյնպէս կուրծք կրտանք ցարական կառավարութեան եւ մեր արիւնը կը թափենք յանուն հայ ժողովրդի իրաւունքներուն»։

Այս ազդանշանը կը տարածուի բերնէ բերան, կազմակերպելու համար ինքնապաշտպանութեան պայքարը՝ Կովկասի մէջ, Երեւանէն մինչեւ Բաղու։

Ի բնէ կտրիճ եւ սրատես, Դրօ անմիջապէս ուշադրութիւն կը գրաւէ իր յանդգնութեամբ։

Շատ չանցած, 1905 Մայիսի 11ին, ամբողջ Կովկասը կը սարսի, երբ քանամեայ պատանին հրաշագործ ռումբը կ՚արձակէ, փոշիացնելով Բաղուի հրէշը, նահանգապետ Նակաշիձէն, բուն կազմակերպիչը հայ-թաթարական ընդհարումներու։

Ասպարէզը բաց էր արդէն, լեռ ու ձոր կտրելու համար ազատագրութեան ճամբուն վրայ, մինչեւ կամաւորական շարժումը, Վանի գրաւումը եւ Բաշ Ապարանի հերոսամարտը։

Զինուորական Ակադեմիա մտած չէր Դրօ, բայց երբ խօսէր ռազմական հարցերու մասին, ունկնդիրը կը զարմանար իր բնածին ուշիմութեան եւ եփուն տեսակէտներուն վրայ։ «Աշք» ունէր նոյնպէս, երբ ռազմականին հետ քաղաքական խնդիր մըն ալ կը յոգուէր։

Մշտնջենական շարժում էր, եւ խանդավառութեան, աշխուժացման կայծեր կը ցանէր իր ճամբուն վրայ։ Ոչ միայն երիտասարդութեան շրջանին, այլեւ սա վերջին տարիներուն,

եղբ տարիքի բեռը եւ ծանրակշիռ հոգսերը կը ճնշէին իր վրայ։

Ռազմիկի ոգին այնքան արմատացած էր իր մէջ, որ երբ անողոք հիւանդութիւն մը պարբերաբար տագնապներ կը պատճառէր, կը տոկար նոյն սկեպտիկ ժպիտով։

Տարի մը Փարիզ կը գտնուէր (1933) եւ պատահեցաւ որ բանախօսելու հրաւիրուի, տօնական առիթով մը։

Ո՞րքան դառնութիւն կը ծորէր իր նախաբանէն.

— Ի՞նչ օրերու հասեր ենք որ զինուորն ալ ճառ խօսելու կը ստիպուի...։

* * *

Որքան արի եւ յանդուգն՝ մարտական ճակատի վրայ, մեր սիրելի Դրօն նոյնքան արթուն էր եւ տոկուն՝ քաղաքական խնդիրներ եռապնդած ատեն։

Ռազմիկը հարկադրուեցաւ դիւանագէտի դեր կատարել դեռ Երեւանէն։ Եւ, աւելի քան երեսուն տարիէ ի վեր այդ ապերախտ աշխատանքին լծուած էր արտասահմանի մէջ, հակառակ իր խառնուածքին։

Որպէս կ՚ըմբռնէր թէ տարրական պայման է ներկայ ըլլալ ամէն տեղ։ Եթէ ոչ բարիքներ ապահովելու, գոնէ շարիքներ խափանելու համար։

Դաշնակցութիւնը ամէն բանէ առաջ գործի կուսակցութիւն է։ Ուրեմն, իր աչքն ու ականջը սուր պիտի պահէ, որեւէ անցուդարձի հանդէպ։

Կը պատահին դէպքեր որոնք սերտ կապ ունին Հայկական Դատին կամ ցիրուցան բազմութեանց ապահովութեան հետ։

Կը ներկայանան պարագաներ ուր բարեկամն անգամ կրնայ դաւել, եթէ իր դիմացը չգտնէ ընդդիմադիր եւ շարժուն ուժ մը՝ իբրեւ արթուն պահակ։

Ոչ միայն Հայաստանի, այլ եւ արտասահմանի մէջ շրջապատուած ենք այլազան դրացիներով որոնք անընդհատ կը գործեն, նուաճումներ կատարելու համար, ի վնաս անճարին եւ բացակային։

Երէկ՝ մարտական բազուկն էր որ կարգի կը հրաւիրէր զանոնք։ Այսօր՝ քաղաքական միտքը պիտի գործէ, ելքեր գտնելու համար։

Այս բոլոր պարագաներուն մէջ, երբ Դրօն էր Դաշնակցութեան ներկայացուցիչը, տեսակէտները կը պարզէր նոյն շառաչուն ուժգնութեամբ, ինչպէս գնդակ մը արձակած ատեն։

Ոչ միայն դրացիներուն, այլ եւ անոնց հովանաւորներուն հետ խօսելու եղանակ մը ունէր որ մտածել կուտար։ Ամէն պարագայի մէջ համարում կը ներշնչէր։

Երկրորդ Աշխարհամարտէն ետք, փոքրոգի մարդիկ, գոյնըզգոյն դիմակաւորներ փորձեցին մուր քսել իր ճատկին, մերձեցման փորձի մը առթիւ որ ամէն բանէ առաջ կը բխէր զուտ ազգային մտահոգութիւններէ։

Օրուան հարցն էր,— ի՞նչպէս ընել որ Եւրոպայի հայ գաղութները եւ մեր անճար հայրենիքը ոտքի տակ չերթան, նախայարձակին սանձակոտոր արշաւանքին առջեւ։

Դրօ իր ամբողջ անցեալն ու հմայքը դրած էր նժարին մէջ, այդ եղերական օրերուն։ Ոչ թէ անամէջ պատրանքներ սնուցանելով, այլ նախատեսելով բացակայութեան ահաւոր վտանգները։

Անշուշտ իրեն համար տառապանք էր այդ պարտականութիւնը։

Եւ սակայն կատարեց նոյն պայծառամտութեամբ, ճակատաբաց ու վճռական։ Միշտ յիշեցնելով, արիաբար, թէ իր ներկայացուցած ժողովուրդը ոչ փորձանիւթ է, ոչ ալ ամբոխ։

Վերջին տարիներու ընթացքին, երբ Արեւմուտքը շեշտակի դիրք բռնած էր յանուն ազատութեան եւ ինքնորոշման իրաւունքի, Դրօ նոյն հետեւողականութեամբ կը ետապնդէր հայկական պահանջները։

Գիտենալով հանդերձ որ պարագաները բոլորովին աննըպաստ են մեզի համար, կարելին կը փորձէր, որպէսզի բարեկամն ու թշնամին, դրացիներն ու աշխարհակալները չխախտեն կատարուած նուաճումները։

Ի ծնէ եւ ի բնէ առաջնորդն էր, թէ պատերազմի եւ թէ խաղաղութեան ատեն։

Իր մահով իսկապէս անփոխարինելի դէմք մըն է որ կ'անհետանայ հայկական հորիզոնէն։

ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

ԴՐՕՆ ՍԱՐԻՊԱՄԻՇԻ ՄԷՋ

Ընկ. Սիմոն Վրացեան, վերջերս հրատարակած իր մեծարժէք գրքին՝ «Կեանքի Ուղիներով» հատորին մէջ, խօսելով Սարիղամիշի 1918ի դէպքերուն շուրջ, կը գրէ մեր մեծ քնկերոջ՝ Դրօյի մասին.—

Օրուայ հրատապ պահանջն էր կանգնեցնել թշնամու յառաջխաղացումը։ Դրա համար, առաջին հերթին, պէտք էր ուժեղացնել ճակատի զօրամասերը օգնական ուժերով։ Սարիղամիշում պահեստի մասերը գրեթէ սպառուած էին. մնացածները վստահութիւն չէին ներշնչում։ Զօր. Արէշեանի դիմումները Ալեքսանդրապոլ՝ զօր. Նազարբէգեանին ո՛չ մի արդիւնք չէին տալիս։ Սկսեցինք ուղիղ հեռագրաթելով որմբակոծել Հայոց Ազգային Խորհուրդը Թիֆլիսում։ Հետեւանքը եղաւ նույնը։

Սարիղամիշում եւ առհասարակ ճակատի մերձաւոր թիկունքում ուր կարիք կար մտաւորական ղեկավար ուժերի, որոնցմով լեցուն էր Թիֆլիսը։ Մեր դիմումները Հայոց Ազգային Խորհրդին այս գծով էլ արձագանգ չէին գտնում։

Ռազմաճակատից պահանջում էին կտրուկ միջոցներով վերջ տալ դասալքութեան։ Բանակի կարգապահական ոգին կոտրողները մնում էին անպատիժ։ Անհրաժեշտ էր զինուորական դատարան կազմել պատժելու համար դաւաճաններին ու դասալիքներին։ Զօր. Արէշեանը յարմար ուժեր չէր գտնում դատական կազմի համար եւ ի զուր բախում էր ընդհանուր հրամանատարութեան եւ Ազգ. Խորհրդի դռները։ Մեր թախանձագին խնդրանքներին պատասխանելով՝ Թիֆլիսից յորդորում էին սեփական ուժերով բաւականանալ։ Փորձեցինք «սեփական ուժերով» կազմել զինուորական ատեան, բան դուրս չեկաւ։ Երկու Վահանները վճռական կերպով մերժեցին զինուորական դատարանի կազմի մէջ մտնել. նրանց խիղճը թոյլ չէր տալիս մահուան դատավճիռ արձակել։ Երբ ղեկավարները իրաւունք էին համարում «խղճով» առաջնորդուել, բնական էր, որ ստորադասներն էլ նոյնպէս ապաւինէին խղճին։ Օրեր տեւող խօսակցութիւններից ու վէճերից յետոյ,

կարելի չեղաւ զինուորական ատեան կազմել, եւ դասալիքները անպատիժ վխտում էին թիկունքում։

Մի օր էլ ըմբոստացաւ եւ մերժեց ճակատ երթալ Սարըղամիշում գտնուող 101րդ ձիաւոր հարիւրեակը։ Արէշեանի բոլոր ջանքերը կարգի բերելու նրանց՝ անցան անօգուտ։ Մարդիկ ուզում էին հետեւել դասալիք՝ ռազմաճակատից հեռացած ռուս զօրամասերին։

Զօր. Արէշեան՝ սիրտը բռնած՝ շարշարւում էր ցաւից ու անկարողութիւնից, շարշարելով նաեւ մեզ։ Նստած մոայլ՝ ելք էինք որոնում անել եւ անտանելի կացութիւնից։ Եթէ այս կացութիւնը շարունակուէր, կարճ ժամանակամիջոցում ռազմաճակատը փուլ կը գար, եւ թշնամին անարգել կը յառաջանար՝ դէպի Կարս եւ Ալեքսանդրապոլ։

Մէկ էլ — հրա՛շք։ Վագներեան հերոսի պէս ներս մտաւ Դրօն։ Ո՞րտեղից եւ ի՞նչ օրհասական վայրկեանի։ Կարծես լոյս բերեց հետը։ Նոյնիսկ Արէշեանի դէմքը պայծառացաւ։ Դրօն բանակի կոմիսար էր։

Բախտաւոր աստղի տակ ծնուած մարդիկ կան, որոնց համար անկարելի բան գոյութիւն չունի։ Հող բռնեն՝ ոսկի կը դառնայ։ Յաջողութիւնը անբաժան ընկերն է նրանց։

Դրօն յայտնեց, թէ եկել է Երեւանից զէնք ու ռազմամթերք հայթայթելու Արարատեան դաշտի զօրամասերի համար։ Կարսից ստացել եւ ուղարկել է որոշ քանակութեամբ փամփուշտ եւ հրացաններ ու գնդացիրներ։ Հիմա ուզում է Սարըղամիշի պահեստներից զէնք ու փամփուշտ ուղարկել Երեւան։

Բոլոր պահեստները, իբրեւ պարէտի, իմ տրամադրութեան տակ էին։ Ես, ի հարկէ, առաջարկեցի ինչ որ հնարաւոր է փոխադրել։ Արէշեանը անմիջապէս հաւանութիւն տուեց։

— Տարէք ինչ որ ուզում էք եւ ինչքան որ ուզում էք։ Միայն թէ, սիրելի պարոն Դրօ, մնացէք մի քանի օր օգնելու մեզ։

Դրօն շտապում էր վերադառնալ Երեւանի նահանգը, ուր արիւնահեղ քաղաքացիական կռիւներ էին տեղի ունենում եւ ուր ինքը շրջանի հրամանատար էր։ Միայն ստիպողական հաբկադրանքի տակ անձամբ եկել էր զէնք ու ռազմամթերք

տանելու։ Բայց զօր. Արէշեանի եւ մեր խնդրանքը այնքան բուռն էր, որ ստիպուած եղաւ տեղի տալ։ Իր զինուորական բացառիկ բնազդով նա արագօրէն ըմբռնել էր կացութեան ահաւոր լրջութիւնը եւ անմիջական դարմանումի անհրաժեշտութիւնը։

Առաջին հերթին անհրաժեշտ էր վերջ տալ 101րդ հարիւրեակի ըմբոստութեան, որ բարոյալքում ու կազմալուծում էր բանակը։ Մարդիկ զինուած նստել էին զօրանոցում եւ մերժում էին ենթարկուել հրամանատարութեան՝ ցուցական կերպով։

Իբրեւ բանակի կոմիսար, Դրօն արագ կերպով պատրաստեց վստահելի զինուորական ոյժ եւ հրամայեց, որ ըմբոստները դուրս գան զօրանոցից։ Հարիւրեակը դուրս եկաւ եւ շարուեց հրացանները ձեռներին։ Դրօն մի ճառով դիմեց նրանց հայրենասիրութեան՝ յորդորելով, որ մեկնին ռազմաճակատ հայրենիքի պաշտպանութեան համար։ Աջ ու ձախից լսուեցին տրտունջներ, մերժումի բացագանչութիւններ։ Դրօն մի պահ լուռ դիտեց եւ յանկարծ, վագրի ոստիւնով ատրճանակը ուղղեց հարիւրեակին ու գոչեց.

— Հանդա՛ր։

Անակնկալի եկած զինուորները արագ կատարեցին հրամանը։

— Տասը քայլ առա՛ջ,— պոռաց Դրօն։

Առանց վարանումի զինուորները առաջ անցան տասը քայլ։

— Հրացանները դնել գետին,— հրամայեց Դրօն։

Մի պահ տատանումից յետոյ, ամէնքը հրացանները վար դրին։ Քիչ անդին կեցած էր Դրօի պատրաստած վաշտը՝ գնդացիրներով զինուած։ Զինուորները տեսնում էին այդ։

— Սուրերը դնել գետին,— նորից հրամայեց Դրօն։

Զինուորները սուրերն էլ դրին վար։

— Տասը քայլ յե՛տ, գոչեց Դրօն։

Հարիւրեակը մէկ մարդու պէս քաշուեց յետ, նախկին տեղը։

Դրօի կարգադրութեամբ եկան, արագ կերպով հաւաքեցին ու տարին հրացաններն ու սուրերը։ Ապա Դրօն պահանջեց, որ

անմիջապէս յանձնեն ըմբոստութեան պարագլուխներին։ Առանց դժուարութեան յանձնեցին երեք հոգի։

Հարիւրեակը զղջում ու հնազանդութիւն յայտնեց։ Լուրը կայծակի արագութեամբ հասաւ ռազմաճակատի զօրամասերին եւ ցնցող տպաւորութիւն գործեց նրանց վրայ։

Այնուհետեւ արագ կերպով կազմուեց պատերազմական ատեան, դատելու համար խռովարարների երեք պարագլուխներին։

Ս. ՎՐԱՑԵԱՆ

ՅԱՂԹԱՆԱԿԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՆԸ՝ ԴՐՕՅԻՆ ԵՒ ՆՐԱ ԳՆԴԻՆ

Հայ ժողովրդի մեծ զաւակ Դրօյի յիշատակին

Կսկիծի, խոր վշտի այս օրերուն անկարելի կը թւի հաշտուել այն ջանթահարող կորուստի հետ, որ ունեցան պայքարի դիրքերում կանգնած ազատատենչ հայութիւնը և նրա առաջատար կազմակերպութիւնը, երբ մահը խլեց նրա շարքերից դիւցազնական մարտիկ ահաբեկչին՝ Դրաստամատ Կանայեանին։ Հանրածանօթ անւամբ Դրօյին։

Նոր հայութեան այս արծւի զաւակը հարազատ ծնունդը եղաւ Հ. Յ. Դաշնակցութեան։

Արի զինուորագրեալը նրա մարտական և գաղափարական երկունքների, նրա արիարանց գործերին և խօսքերին։ Մեր կուսակցութեան յեղափոխական քուրայից անցած սերնդեան կարկառուն դէմքերից վերջինը եղաւ, կոփուած Նիկոլ-Դուման *շունչով, զրահուած* Բաքէն Սիւնիի, Սերոբ-Հրայրի, Անդրանիկ-Գէորգ Զաւուշի, Վանայ Իշխանի *և շատ այլոց բոցաշունչ կրակով, բազէի խոյանքներով։*

Հայկական ազատամարտն մարմնաւորող ընտրեալների սերունդի մէջ արժանաւոր ընտրեալն եղաւ Դրօն։ Ու իբրեւ այդպիսին բաժանուեց մեզանից առյաւէտ, գործի դրօշը յաջորդներին թողնելով։

Նրա մահը գուժող բօթը ցնցիչ էր։ Յատկապէս նրանց, որոնք ճանչցան Դրօյին նրա մարտական սխրանքների բուռն ծաղկման շրջանին, 1914-ից մինչև 1920 թւականները, երբ ժողովրդի գոյութեան վարած զինապայքարի ծիրը իր մէջ ընդգրկում է Սուրմալուն *ու* Վասպուրական աշխարհը, Արարատեան դաշտը *ու* Բաշապարանը, Վայոց Ձորն, Զանգեզուր

ու Զարաբաղը, փառապսակ ունենալով Հայաստանի ժողովրդավար հանրապետության փաստարկությունը։

Վանի Արամն ու Դրօն, Նազարբէգեանն ու Սիլիկեանը կը մնան հաւասարազօր գարբինները Հայաստանի անկախության։

Որպէս վերապրող ականատեսի բոլոր թւածներիս, մտքիս ալաքը մէկ պահ կյամենայ։ Յետ կը նայեմ մեր հերոսամարտերու անցած ուղին, մեր պարտութիւնների ու յաղթանակների երէկւայ ուղին, երբ մենք մեր հարազատ հողերի վրայ էինք դեռ։

Այս ճամբին, լուսապայծառ մի օր կուրւագծի յիշողութեանս մէջ, երբ սրանից քառասուն եւ մէկ տարիներ առաջ Վասպուրականի գարնանային շամանդաղուած երկնքի տակ Դրօն իր ճերմակ ձիու վրայ զինավառ, իւր գլխաւորած կամաւորական գնդի հետ առաջինը եղաւ, որ մուտք գործեց ազատագրուած հերոսական Վանը։ Առաջնեկն եղաւ, որ ողջունեց մեր մարտիկների պարզած յաղթանակի դրօշը Վանայ բերդի կատարին։

Այդ պատմական օրը 1915 թւականի Մայիսի 7-ն էր։

Ի՜նչ դիւթական օր։ Որպի՜սի հմայիչ, խորհուրդներով լի պահ Վասպուրականի ժողովրդական ընդվզումի տարեգրութեան մէջ, համահայկական խորքով։

30-օրեայ գոյամարտի անհաւասար խիզախումներից, ոգորումներից յետոյ, արիւնոտ պայքարի քննութեամբ յաղթանակը նւաճած մի սերունդ՝ այն օրը իր ազատ թեւերուն մէջ ընդունեց Արարատեան գնդի մաս կազմող մէկ հազարեակին և նրա առաջնորդ հրամանատար Դրօյին։

Վան քաղաքամիջի Զինուորական Վարիչ կազմը այդ օր իւր 150-ի հասնող ժողովրդական զէնքերով զինուած մարտիկներով միասին կեդրոնացած էին, հազարաւոր երկսեռ քաղաքացիների հետ, պատմական քաղաքի հիւսիսային կողմի դաշտագետնի վրայ, Սանուց գետափին, ընդառաջելու Դրօյին և իւր գնդին։

Կէսօրւայ մօտ էր։

Հետո՜ն, հիւսիսակողմի բլուրների բարձունքներին նշմարեցին գնդի առաջապահների ձիաւորները, որոնց ետևից շարժ-

ում էին, հետևակների խմբերը։ Արևի շողերի տակ փայլ-կըտում էին նրանց հրացանների սվինները։

Բոլորս սրտատրոփ վայրկեաններով զգլխիչ ապրումներով արբեցած էինք։ Ուշք և ուրուշ կտրած, սևեռաբիբ գամված նայում էինք հետզհետէ մօտեցող հարազատներին, ազատարար հայ կամաւոր արենակից սիրելիներին։

Ու հասաւ պահը ցանկալին...

Պահերից ամենից աննկարագրելին, ամենից պատմականը։

Ահա գնդի հրամանատար քաջարի Դրօն, իր երկու թիկնապահների հետ (մէկը Գանձակեցի Դալի Ղազարը՝ մեզ քաջածանօթ տարիներ առաջ) սրարշաւ, փոշու ամպերը յետև թողած, հասաւ մեզի՝ գոչելով յաղթ ձայնով.

— Ողջո՜յն հերոսներին, ապրի՛ք տղաներ, երջանիկ ենք որ դիմաւորում էք մեզ իբրև յաղթողների, փառք ձեր զէնքերին... պատիւ ձեր զինապայքարին։

Մենք, մեր զգայնութեան մէջ ընդարմացած, չէինք հասկանում կատարուածը։ Չէինք ըմբռնում պատմութեան մէջ վերապահած այդ րոպէների տարողութիւնը։

Մենք մեզ տեսանք շրջապատուած կամաւորական վաշտերի քառակուսի շրջանակի մէջ։ Իսկ Դրօն ձիուց վայր ցատկելով ողջագուրեց մեզ, միշտ կրկնելով.

«Շնորհաւորում ենք Ձեր ժողովրդական փայլուն յաղթանակը, ձեր զէնքի փառքը, շատ ապրիք...»։

Ապա հրամայեց գնդի առաջին հարիւրեակին օդի մէջ կրակել համազարկերով հրացանային հինգական փամփուշտներ, ուռաներով հանդերձ։

Տողերս գրողին այդ օրը բախտ վիճակուեց յանուն քաղաքի ժողովրդեան և մեր շարքային զինուորների բարի գալուստի խօսքերով փոխադարձել, վեր հանելով երկու հատուածների զէնքի եղբայրութիւնը, պատմական պահի խորհուրդը, պատմական Շամիրամակերտի տակ։

Մեր մարտիկները, որոնք զինուած էին տասհարուածեան մաուզեր ատրճանակներով, օդի մէջ պարպեցին 10-ական գնդակներ՝ գնդացրային արագահարուածութեամբ։

Այս ժամանակ ահա, շարժեցին մեր երկու դրօշները, որ

նշանակ եղաւ, որպէսզի բերդի բարձունքներից որոտան մեր գրաւած թնդանօթները՝ 50 հրանօթային արձակումներով։

Հայկական զէնքի փառատօնով, թնդանօթային որոտներով, հայ հողի վրայ մենք ընդունեցինք Դրօյին և իր գնդին։

Այդ թափօրով, զէնքի եղբայրութեան շքերթով Վասպուրականցիներս՝ դիմաւորեցինք կամաւորական գնդին... փառք այն օրերուն յաղթապանծ...

* * *

Իսկ Այսօր, այս յուշ տողերը թող ծառայեն որպէս մի ՍԳԱՊՍԱԿ ամայի Վասպուրականի և նրա տարագրուած զաւակների կողմից հեռաւոր Ամերիկայի երկնքի տակ հանգչող քաջամարտիկ ԴՐՕՅԻ յիշատակին։

Յաւէ՛րժ փառք նրա Անւան և Գործին։

Պատիւ Դրօներ ծնող Մեր ժողովրդին։

Թեհրան

Հ. ԿՈՍՈՅԵԱՆ

ԴՐՕՅԻ ԱՆՄԵՌ ՅԻՇԱՏԱԿԻՆ

«Դրօն երբեք պարտել չգիտէ»

1917 թիւն էր, առաջին համաշխարհային ահաւոր պատերազմը մօտենում էր իր վախճանին։ Ռուսական հսկայ կայսրութիւնը՝ չդիմանալով պատերազմի ստեղծած անասելի տագնապներին, փլուզեց մի հսկայ խարխուլ շէնքի նման և ճանապարհ բաց արեց ռուս մեծ, աննախընթաց յեղափոխութեան։ Կայսերական իշխանութեան անակնկալ փլուզումի հետ՝ քաօսի վերածուեց նաև ռուսական զինուորական ճակատների բովանդակ կեանքը։ Ռուս զինուորութիւնը յոգնած, տանջուած ու յուսահատ, որոշեց լքել բոլոր ճակատները և տուն վերադառնալը դարձաւ նրա համար սրբազան կարգախօս։

Այդ զինուորական քաօսը մեր ժողովրդին դնում էր կենաց ու մահուան առջև։ Պէտք էր փոխարինել կովկասեան ճակատից տուն վերադարձող մօտ երկու միլիոն ռուս զօրքերին։

Հարևանի, մեր դարաւոր թշնամու ջարդած զօրաբանակների ու ոճրագործ պետութեան առջև ռուսական զօրքի անկանոն, ամբոխային նահանջով, շքեղ, անասելիօրէն յուսահատ հեռանկարներ էին գծագրում։ Արևմտեան Հայաստանի ընդարձակ ճակատը միանգամից դառնում էր անպաշտպան ու մնում բաց՝ թշնամու արշաւանքների առջև։

Ով այդ օրերում գտնւում էր մեր նեիրական երկրում՝ նա միայն կարող է զգալ ու պատկերացնել այն անասելի մղձաւանջը և ահաւոր սարսուռը, որ իշխող դարձան հայ հոգիներում։ Արևմտեան Հայաստանի բաց ճակատների դէմ կանգնած, ատամները սրած՝ ուժը մեր դարաւոր, անողոք ու գազան թշնամին էր, որ չպիտի ուշանար վերագրաւելու գրաւած Արևմտեան Հայաստանը և արշաւելու, բնաջնջելու նաև Արևելեան Հայաստանի հայութիւնը։

Կենաց և մահու այս ահաւոր հեռանկարը՝ զինեց, հին պապենական արիութեամբ ասպարեց հայ հոգիները՝ պատանուց մինչև ծեր ու ամենքը վրիժառութեան, ազատութեան ու հայրենի փառքի անդոհներով արբեցած՝ դիմեցին հայրենի ճակատները՝ անագորոյն թշնամուն հարուածելու։

Ահա այս մահասարսուռ օրերին էր, որ հայ մամուլի մէջ հրատարակւեց Հայոց Ազգային Խորհրդի ու նրա նախագահի՝ Թուխ Արամազդի, Աւ. Ահարոնեանի պատմական կոչը, որով՝ հայ ժողովրդի այն օրերի բարձրագոյն մարմինը անասելի վտանգի ահազանգն էր հնչեցնում և հայրենասիրութեան, զոհաբերութեան յորդորը կարդում մեր ժողովրդի բոլոր, բոլոր խաւերին ու դասակարգերին։ Ահա այդ մահասարսուռ օրերին Ահարոնեանը իր պատմական կոչը վերջացնում էր հետևեալ ոգեկոչումով. «Ո՛վ արի, Ո՛վ նախնեաց մեր անզուգական հերոսների քաջութեամբ զինւած մարտիկներ, դէպի ճակատ՝ մեր նոր հերոսամարտի, ուր ձեզ հրամայողը, մարտի սկբազան դաշտում ձեզ առաջնորդողը ԴՊՕՆ է, մեր ամենքիս պաշտելի հերոսը, որ երբեք պարտել չգիտէ»։

Թշնամին, գազան բանակները Երզնկայից մինչև Արփաչայ, Էրզրումից ու Վանից մինչև Մարգարայի կամուրջը Արաքսի վրայ, քայլ առ քայլ ճակատելով հայ հերոսական, փոքրաթիւ բանակների հետ՝ հասել էին Հայոց աշխարհի սրտին, վերջին կայանին՝ Արարատեան դաշտին, շրջապատել էին

նրան բոլոր կողմերից, կտրել մեր երկրի այդ վերջին կայանի բոլոր կապերը արտաքին աշխարհի հետ։ Գրաւուած հողամասերի ամբողջ գաղթականութիւնը լցուել էր Արարատեան դաշտը և Ղարաքիլիսայի շրջանը. թւում էր թէ անարգ թշնամու երկաթէ օղակի մէջ պիտի խեղդուէին հայութեան փրկուած վերջին բեկորներն ու Արարատեան դաշտի հայութիւնը։

Սակայն, հակառակ համատարած լքումի, յուսահատութեան, մի անգամ ևս կատարուեց Հայոց սրբազան պատմութեան մի նո՛ր, անասելի հրաշքը։ Դրօն, Հայոց աշխարհի պաշտելի հերոսը, իր շուրջը համախմբեց իր հին ու փորձուած մարտիկներին՝ Բաշգեառնեցի արի, անզուգական Մարտիրոսին, քաջերից քաջ Զեմլեակին և ուրիշ շատերին, այս անզուգական արիներին ու իրենց խոնարհ հերոսներին և անցաւ հայ հերոսամարտի ամենավտանգաւոր ճակատը, Բաշապարան, որտեղից լրբացած թշնամին Արագածի փէշերը պղծելով իջնել էր ուզում Արարատեան աշխարհի սիրտը և գրաւել Էջմիածինն ու Երևանը։ Դրօյի Բաշապարանի ճակատում երևալը, նրա հզօր, արի կանչը նոր ոգեկոչումի, նոր խանդավառութեան ու հերոսանալու անսպառ աղբիւր դարձան, ու երբ նրա արի, վճռական ռազմակոչերը հասան սպանների, հայդուկների, մարտիկների ականջին ու սրտերին և սկսեց առաջին ճակատագրական գրոհը անարգ, լրբացած թշնամու բանակների դէմ՝ Դրօն ճակատի առաջին շարքերում էր, թշնամու գնդակների տարափի տակ, դիրքից դիրք էր անցնում, խանդավառում էր անզուգական կտրիճներին, օգնութեան հասնում իր պահեստի ուժերով բոլոր այն զօրամասերին, որոնք թշնամու գերակշիռ ուժերից նեղւում էին։ Անարգ թշնամին իր երկարատև յառաջխաղացման ընթացքին՝ առաջին անգամն էր, որ իր դէմ անպարտելի վճռականութեամբ ու հերոսութեամբ ծառացած տեսաւ հայ զինուորին, մարտիկներին։ Երեք օր տևող ահաւոր այդ մենամարտերը, շատ անգամ գիրկընդխառն գօտեմարտերը վերջացան շփացած թշնամու կատարեալ պարտութեամբ, ջարդով, թշնամին կոր ի գլուխ թողեց Արագածի սրբազան լանջերը, փախաւ մինչև Ալեքսանդրապոլ։ «Դրօն երբէք պարտուել չգիտէ». մի անգամ ևս Բաշապարանի հերոսամարտում պայքարող հայութեան սրտի, մտքի մէջ ոսկէ տառերով գրուեց թուխ Արամազդի այս

նիրական պատգամը։ Ու պաշտելի հերոսը, Դրօն դարձաւ հայութեան յաղթանակի, արիութեան նիրական խորհրդանիշը ա՛յն մռայլ օրերին։

Քանի՞, քանի հերոսական դրուագներ, սակայն, մինչև Բաշապարանի հերոսամարտը, նրա անւան շուրջը հիւսել էին անմահութեան դափնիներ։

Ահա ձեզ առաջին համաշխարհային պատերազմի հերոսական դրուագներից։ Հայ կամաւորական գնդերը կազմակերպւած են։ Գ. կամաւորական գնդի հրամանատար է նշանակւած պաշտելի Դրօն։

Առաջին ընդհարումն է, որ տեղի է ունենում։ Թուրք կանոնաւոր զօրամասերը միասնաբար յարձակման են անցել, ձգտում են գրաւել Դրօյի գնդի և ռուսական զօրամասերի աջ ու ձախ թևերի բարձունքները և ապա անցնել նրանց թիկունքը և գերել նրանց։ Ռուսական բարձր հրամանատարութիւնը Դրօյին հրահանգել է գրաւել յիշեալ բարձունքները և յետ շպրտել թշնամու յարատև ու յամառ գրոհները։ Անզուգական Դրօն՝ իրեն յատուկ հեռատեսութեամբ, արագութեամբ բաժանում է իր զօրամասերը երեք խմբի, երկու խմբերին հրամայում է բռնել իրենց ճակատի աջ ու ձախ բարձունքները, իսկ մի մասը պահում է որպէս պահեստի ուժ։ Իր զօրամասերը կայծակի արագութեամբ սլանում և բռնում են ճակատի աջ ու ձախ բարձունքները, թշնամին երբ վերագասու է լինում իրողութեան՝ աւելի յախուռն, աւելի կատաղի գրոհների է դիմում. սկսւում է հայ կամաւոր արիների ու թշնամի՝ թուրք, քուրդ գերակշիռ զօրամասերի առաջին, ահեղ գօտեմարտը։ Դրօն՝ իր արի զօրամասերին դէպի բարձունքները ճանապարհ դնելիս՝ զօրամասերի երկու պետերին էլ կտրուկ հրահանգներ է տալիս՝ «Ոչ մի գնով, բարձունքները չզիջել թշնամուն»։ Ռազմական բախումները դառնում են տևական, թշնամի կողմերը զիջումի ոչ մի տրամադրութիւն չեն ցուցադրում։ Դրօն պահեստի ուժերի մօտ է, խիստ անհանգիստ, վայրկեան առ վայրկեան հետևում է իր զօրամասերի՝ երկու բարձունքների վրայ տարւող վճռական պայքարին, զգում է, որ անարգ թշնամու ուժերը անհամեմատ մեծ են ու գրոհներն էլ յանդուգն ու յամառ. մի րոպէ վարանքի է մատնւում ու մտածում, թէ գուցէ իր արիները թշնամու գե-

բազանց ուժերից նեղված՝ նահանջեն և աջ ու ձախ թևերի խիստ վտանգաւոր բարձունքները տան թշնամուն։ Ու անմիջապէս որոշում է իր նժոյգը հեծած սլանալ դէպի բարձունքները և խրախոյս կարդալ իր քաջերին, որ մահուան գնով պահեն դիրքերը։ Թշնամու գնդակները կարկուտի տարափի նման թափում են թէ պահեստի ուժի, թէ բարձունքներում մարտնչող մեր հերոսների վրայ։ Պաշտելի Դրօն՝ երբ հրամայում է իր ձին բերել, Բաշգեառնեցի Մարտիրոսը, իր խորապէս սիրած զինակիցը, խնդրում է.

— Դրօ ջան, գնդակների այս տարափի տակ ո՞ւր ես գնում, անպայման կխփուես և գունդը կմնայ առանց ղեկավարի. թո՛յլ տուր, աղաչում եմ, որ ես գնամ։

— Տօ՛, ի՞նչ ես յիմար յիմար խօսում, մի՞թէ իմ արիւնը քոնից կարմի՞ր է։

— Ու առանց այլևս ինձ լսելու — շարունակում է Մարտիրոսը,— իրեն նետեց իր սքանչելի նժոյգի վրայ ու սլացաւ դէպի աջ թևի բարձունքը՝ թշնամու գնդակների տարափի տակ։ Արմէն Գարօն ու ես վարանքով հետևում էինք նրա արի խոյանքին ու կարծես երկուսիս մէջ էլ այն ահաւոր վախը կար՝ թէ հիմա կխփուի։

Դրօն սակայն անվտանգ հասնում է աջ թևի բարձունքին, իր ներկայութիւնը արտակարգօրէն խրախուսում է իր արի զինակիցներին, նորից հրահանգում է ամէն գնով պահել բարձունքը և նոյն կայծակի արագութեամբ, իր նժոյգի քառասմբակ վազքով, թշնամու գնդակների տարափի տակ վերադառնում է պահեստի ուժերի մօտ, որտեղից պատրաստւում է ձիով սլանալ նաև ձախ թևի բարձունքը։ Այս անգամ էլ Արմէն Գարօն ու Մարտիրոսը նորից ու նորից խնդրում են, որ թողնի իր ճակատագրական որոշումը և մէկ ուրիշին՝ կամ թէկուզ Մարտիրոսին ուղարկի ձախ բարձունքը։ Սակայն մեր արին ընդդիմանում է ու նժոյգը պահանջում՝ մեկնելու։ Արմէն Գարօն, որի հանդէպ արտակարգ սէր ու յարգանք ունէր Դրօն, երկրորդ անգամ փորձում է համոզել.— Դրօ ջան, գիտեմ, որ հերոսներու ճակատագիրը նման չէ մեր՝ հասարակ մահկանացուներու ճակատագրին։ Հերոսները մարդկային խորը հոգու փոթորիկներն են, որ պայքարի դուրս կուգան անգամ գնդակներու տարափին, փոթո-

բիկներուն դէմ, այդպէս էր նաև մեր աննման Գարիբալդին՝ Անդրանիկը, որ իր կեանքը անարգ թշնամու գնդակներու սլացքի տակ անցկացուց ու անգամ մը նոյնիսկ այդ գընդակներէն վէրք չստացաւ. գիտեմ, դուն ալ նոյն խմորէն ես. բայց եթէ քեզ չես խնայեր, զօրագունդիդ ու մեզ խնայէ, որ քո ներշնչումներու ու հերոսութեան կարիքն ունինք, մանաւանդ մեծ ու նուիրական գործի սկզբին ենք դեռ— Դրօն այս անգամ էլ մնում է իր վճռի վրայ անյողդողդ ու նոր սլացքով թշնամու գնդակների անընդհատուող շառաչի տակ՝ հասնում է ձախ թևի բարձունքին. նոյն ոգևորութիւնն ու խանդավառութիւնը նաև այնտեղ ստեղծում, հարկաւոր հրահանգները տալիս ու պատւիրում, որ որևէ գնով բարձունքը չլքեն ու յանձնեն թշնամու. և նոյն ճանապարհով՝ թշնամու գնդակների կարկուտի տակ փորձում է վերադառնալ պահեստի ուժի կայանը, սակայն դեռ գիւղին չհասած զարնւում է անագորոյն թշնամու գնդակով և ձիուց տապալւում ցած։ Վրայ են հասնում Արմէն Գարօն, պահեստի ուժերը. Դրօյի դրութիւնը ծանր է, բժշկական կայանը հեռու, փոխադրական միջոցներ չկար, Արմէն Գարօյի կարգադրութեամբ Բաշգեառնեցի Մարտիրոսին ու իր վաշտին է յանձնւում Դրօյի փոխադրութիւնը մինչև բժշկական կայան։ Զինակիցները պատրաստում են մի կրիչ (նասիլկա) և 18 ժամւայ տառապանքով ձեռքերով Դրօյին փոխադրում են բժշկական առաջին կայանը, ուր բժշկական քննութիւնը պարզում է, որ գնդակը անցել է մինչև թոքը և մնացել, որ անխուսափելի գործողութեան պէտք կայ, որի համար էլ Դրօյին փոխադրում են Թիֆլիս։ Ռուս կայսրը այցելում է վիրաւորների հիւանդանոցը, տեղմում է մեր հերոսի ձեռքը, շնորհակալութիւն յայտնում և նրան պարգևատրում է զինուորական բարձրագոյն նշանով՝ Գէորգեան խաչով։

Ահա նաև մի ուրիշ հերոսական դրւագ՝ նոյն առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում տեղի ունեցած.

Դրօն առողջանում, վերադառնում է իր շատ սիրելի Գ. Կամավորական գունդը. մինչ այդ ռուս բանակները մեր կամաւորական հինգ գնդերի աննախընթաց աջակցութեամբ շարդել էին և կոր ի գլուխ յետ քշել տաճկական զօրաբանակներն ու քրդական աշիրաթապետների բազմատեսակ կա-

մաւոր խմբակցութիւնները։ Դրօն էլ իր գնդով ու երկհարիւրեակ կազակներով, իբրև յարձակւող բանակի յառաջամառ՝ հասել է Բերկրի, որի գետը գարնանային ձիւնահալքից վարարել, դարձել է անանցանելի։ Գետի միւս կողմը, բարձունքների վրայ կուտակւել են փորձում թշնամու կանոնաւոր զօրամասերն ու քրդական անկանոն խմբերը, պետք է շտապով անցնել վարարած, անանցանելի դարձած Բերկրիսուն, որպէսզի վերին հրամանատարութեան՝ այդ բարձունքները գրաւելու հրահանգը գործադրւի։ Դրօն հրաման է տալիս երկհարիւրեակ ձիաւոր կոզակներին ու իր գնդի հեծելազօրաց պետին՝ քաջերի մէջ քաջ Զեմլեակին, անցնել գետը և բռնել գետի միւս կողմի բարձունքները։ Կազակների ու կամաւորական գնդի ձիաւոր հարիւրեակները դիմում են դէպի գետ. ափին հասնելով՝ ձիերը յետին ոտների վրայ ծառս են լինում ու հրաժարւում մտնել կատաղի գետի յորձանուտների մէջ. բոլոր սաստերը, բոլոր մտրակներն ու խթանոցներն անզօր են լինում ձիերի յամառութիւնը կոտրելու։ Հրապարակ է գալիս Դրօն, նստում է իր անզուգական նժոյգը՝ Դառչօն, քշում գետափ, ասպատակում ձին, հանում սանձը ձիու բերանից ու կտրում գետի յորձանքները. սկզբում գետը բաւական տեղ քշում է Դառչօյին ու իր հերոս տիրոջը, բայց հուժկու կենդանին հաւաքում է, լարում իր գերագոյն ուժերը և սկսում լողալ հոսանքն ի վեր։ Հեծելազօրքի ձիերը Դառչօյի անվարան ալացքից խրախուսւած, մտնում են ջուրը և նրանցից շատերի կորստով՝ զօրամասը Դրօյի յետևից հասնում է միւս ափը. Դրօն զինւորական երթը պատրաստում, գրաւում է մատնանշւած բարձունքները և փրկում ռուս և կամաւորական բանակները թշնամու օղակից։ Վերին հրամանատարութիւնը այս խիզախ, յանդուգն ելոյթի համար նկատողութիւն է անում Դրօյին «թէ հրամանատարը իրաւունք չունի, թէկուզ նման խիզախ ելոյթներով, վտանգելու իր ու իր հրամանի տակ գտնւող զօրագնդի կեանքը», սակայն այդ դիտողութեան հետ նրան տալիս է զինւորական բարձրագոյն նշանը՝ երկրորդ անգամ։

Խիզախութիւնն ու յաղթանակը, բախտն ու յաջողութիւնը իր գործի, իր նւիրումների, իր ստեղծագործ տաղանդի ստորագելիները եղան՝ իր բեղուն, հերոսական կեանքի ամբողջ

ընթացքին։ Եւ ուր որ գնաց՝ երբեք պարտութիւն չտեսաւ, յաղթութիւնը դարձաւ նրա կեանքի ու գործի նիւթական խորհրդանիշը, որով և իր շուրջը ստեղծեց չտեսնուած խանդավառութիւն ու պաշտամունք մեր ժողովրդի բոլոր խաւերի մէջ անխտիր։

Ինքը բնութիւնից ծնուած անհանգիստ մի տարերք, այդ յարաշարժ, ստեղծագործող տարերքի հիմնասիւնը արտակարգ խիզախութիւնն ու հերոսական խոյանքներն էին։ Այս երկու աշքառու յատկանիշները սակայն, աւելի ազդու, առինքնող էին դառնում մանաւանդ նրա անսահմանօրէն քաղցր բնաւորութեամբ։ Ճանաչում էր մարդկանց հեշտութեամբ, գիտէր անմիջապէս թափանցել անձերի հոգիների խորքը։ Զարմանալի նրբութեամբ յարաբերել գիտէր մեր ժողովրդի բոլոր խաւերի, դասերի ու դասակարգերի հետ, որոնցից հաւասարապէս սիրուած էր. մանաւանդ երբեք չէր մոռանում իր զինակիցներին՝ սպայ, հայդուկ, թէ հասարակ զինուոր, որոնց հովանաւորում, նիւթական-բարոյական մեծ օժանդակութիւն էր ցոյց տալիս ու իր շուրջը հաւաք պահում՝ նոյն իսկ խաղաղ օրերին։

Մեր անկախութեան նուիրական օրերի հայ բանակը, ինչպէս յայտնի է, կազմուած էր երկու աշքառու տարրերից. նրա կորիզը հին հայ յեղափոխական, աշքառու մարտիկներն ու նրանց ղեկավարներն էին, որոնք մի քանի տասնամեակների հերոսական կռիւներով անուն ու փառք էին ստեղծել մեր հերոսապաշտ ժողովրդի մէջ. միւս մասը կազմուած էր ռուսական զինուորական կրթութիւն ստացած հայ-ռուս սպաներից ու զինուորներից։ Հասկանալի պատճառներով այս երկու զինուորական տարրերի միջև ներքին դժգոհութիւն կար. օտար էին իրար այս երկու աշքառու հատուածները՝ իրենց անցեալով, կրթութեամբ, նիստ ու կացով ու նաև գաղափարաբանութեամբ ու զոհաբերութեան աստիճանով։ Միակ հեղինակութիւնը, որ ակնթարթօրէն մեղմել էր կարողանում տարաձայնութիւնները ու իրար մօտ բերում այդ հակադիր հատուածները — Դրօն էր, որ հաւասարապէս պաշտամունքի էր արժանացած երկու հատուածների թէ ղեկավարութեան, թէ մարտիկների կողմից ու առանձնապէս կանոնաւոր բանակների բոլոր աշքառու հերոս սպաների կողմից։ Եւ որ բանակ-

ների գլուխ էլ որ անցաւ՝ իր յարաբերելու արտակարգ ջերմութեամբ՝ անքակտելիօրէն իր հետ կապեց ու յարգանք, պաշտամունք պարտադրեց զօրամասերի ռուս-հայ սպայութեան և զինուորներին։

Երբ իր կեանքի հասունութեան շրջանը թևակոխեց՝ իր բնութագրի վերոյիշեալ հզօր տարերքը բնականօրէն նրան տարան դէպի Դաշնակցութեան նւիրական յարկը։ Այդ նւիրական յարկը արդէն մօտ երկու տասնեակ տարիների հերոսութեան, նւիրումի ու բարձր հայրենասիրութեան մի սքանչելի պատմութիւն էր ստեղծել հայոց աշխարհում և այդու գերել մեր ըովանդակ երիտասարդութեան միտքն ու հոգին։ Դրօն անմասն չէր այդ հոյակապ խոյանքներից. ընդհակառակը՝ այդ սքանչելի խոյանքները տարրերայնօրէն խլրտում էին նրա լայն, խորը, խիզախ հոգում և սպասում այն մարդակերտ հսկային՝ Դաշնակցութեան, որ հայ կեանքը փոխեց, որ հայ աշխարհը ցնցեց, որ բռնակալ հայակեր Սուլթանների, Ցարերի ստեղծած բաժանման հաստաբետ պարիսպները քանդեց և մէկ հայութիւն եւ մէկ Հայաստան պաշտելի գաղափարներով մեր ժողովուրդը խանդավառեց ու միութիւն ստեղծեց նրա բոլոր հատուածների միջև։ Դրօն արդէն Դաշնակցութեան բովանդակ սրբութիւններով լեցուն՝ դարձաւ նրա յեղափոխական, ռազմական ու պետական ամենայանդուգն ծրագիրները գործադրող հսկաներից մէկը և դեռ քսան տարին չլրացած, Դաշնակցութեան վրիժառու ռումբերով Բաքւի և Ալէքսանդրապոլի սալայատակների վրայ փշրեց գանգերը երկու հայակեր հրէշների՝ Նակաշիձէի և Ալիխանովի։ Ու որևէ ահաբեկման ժամանակ ռուս ցարերի որսորդական շները, հակառակ իրենց ամենազօր միջոցների Դրօյին որսալ չկարողացան՝ իր արտակարգ խիզախութեան, սառնասրտութեան, հնարամտութեան ու ճարպկութեան շնորհիւ։ Ու այնուհետև հայ գոյամարտի բոլոր ճակատներում միշտ հանդէս եկաւ որպէս ղեկավար, որպէս գերագոյն զոհաբերութեան առաջնորդ։

Դաշնակցութեան դէմ ստեղծուած հալածանքների ամենասոսկալի շրջանն է, 1906—10 թուականները. ռուս ցարը ու հայակեր կառավարութիւնը որոշել են բնաջնջել Դաշնակցութիւնը, իրենց հայակեր, գարշելի Լժինի գլխաւորութեամբ

նրան դատի են տալիս։ Բանտերը լցված են դաշնակցականներով։ Դաշնակցության ընտրանին՝ զինուորական, յեղափոխական թէ գրագէտ, արդէն կալանքի տակ են առնված։ Լժինի շները փնտռում են նաև Դրօյին, բայց նա ճանաչում է այդ շներին. նա հեշտութեամբ նրանց ծուղակն ընկնողը չէ, նա ճարպկութեամբ, գաղտնի անցում է ռուս-տաճկական սահմանը և ուրիշ անուան տակ միաժամանակ ապրում Ալաշկերտի հայաբնակ գիւղերի շրջանում։ Սկսւում է համաշխարհային առաջին պատերազմը, ռուս հայակեր կառաւարութիւնը բոլորովին փոխում է իր վերաբերմունքը Դաշնակցութեան հանդէպ. ներում է շնորհում և զարշելի Լժինի կողմից դատապարտուած ու աքսորուած բոլոր դաշնակցականներին, թոյլատրւում է հայրենիք վերադառնալ նաև Դրօյին ու նրա նմաններին։

Դրօյի յիսնամեայ հերոսական կեանքը կարելի է բաժանել վեց շրջանների։

1. Ահաբեկումների շրջան,
2. Հայ-թիւրքական ընդ. շրջան,
3. Առաջին համաշխարհային պատ. շրջան,
4. Հայաստանի անկախութեան շրջան,
5. Հայաստանի խորհրդայնացման շրջան,
6. Համաշխարհային երկրորդ պատերազմի ընթացքում սփիւռքում ունեցած գործունէութեան շրջան։

Այս վեց երկարատև շրջանների ընթացքում էլ Դրօն թէ կուսակցական յարկի տակ, թէ հասարակական, քաղաքական, թէ ռազմական յեղափոխական մարզերում, ամենապատասխանատու աշխատանքների մէջ անցկացրեց իր բեղուն կեանքը և այս բոլոր աշխատանքները կատարեց արտակարգ հմտութեամբ ու զոհաբերումով։

Իսկ եթէ աւելացնենք, որ մեր պաշտելի Դրօն իր արտակարգ ռազմական սուր միտքը, մտաւոր պաշարը, փորձն ու իրատեսութիւնը խորացրել, բեղմնաւորել էր միայն կեանքի դպրոցում, որովհետև նա անգամ լրիւ միջնակարգ դպրոցը չէր աւարտել ու զինուորական դպրոցն էլ լքել էր կէս ճանապարհին, այն ժամանակ նրա իրական, հրաշքանման կեանքը ապրող սերունդների աչքում աւելի խորն ու տարրական

արժէքաւորման կենթարկի ու աւելի հզօր պաշտամունքի առարկայ կը դառնայ։

Դրօն իր հերոսական գործերով անմահ է։

Իսկ անմահները ոչ միայն տեսականօրէն շարունակում են իշխել եկող սերունդների մտքին ու հոգուն, այլև ղեկավարում, առաջնորդում են նրանց։

ԵՐ. ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ

ԵՐԿՈՒ ՏԱՐԻ ԴՐՕՅԻ ՄՕՏ[1]

Դրօյին առաջին անգամ հանդիպելու բախտն ունեցայ 1912 թւի Մայիսին։ Այդ պատահեց հետևեալ ձևով։

Մի խումբ երիտասարդ դաշնակցականներիս մեծ փափագն էր ունենալ մեր հրացանը։ Թէև պատկան մարմինը հայթայթել էր անհրաժեշտ զէնքերը մեզ՝ զինավարժներիս համար, բայց փափագում էինք ունենալ մեր սեփական զէնքը։

Զինավարժ խմբի անդամներս, մեր պաշտած կուսակցութիւնը՝ Դաշնակցութիւնը պատկերացնում էինք իբրև մի մեծ գերդաստան, իսկ Վանի կազմակերպութիւնը այդ գերդաստանի բազմաթիւ ընտանիքներից մէկը։ Կազմակերպութեան զէնքերը համարում էինք մեր սեփականութիւնը, բայց ուզում էինք մեր անձնական համեստ միջոցներով, բերաններից կտրելով, զէնք գնել և այդպիսով, մեր ոյժերի ներածի չափ, աւելացնել զինապահեստը։

Մեր այդ մուրազին հասնելու համար է, որ ութ Ոզմեցի ընկերներ, որոշեցինք անցնել Կովկաս։

1911 թւի աշնանն էր, երբ հասանք Երեւան։

Անմիջապէս ներկայացանք պատկան Մարմնի ներկայացուցչին և մատուցեցինք մեր շրջանի Մարմնի տուած յանձնարարականը։ Հինգ-վեց ամիս մնացինք Երևանում, Մարմնի օգնութեամբ գնեցինք մեր փափագած «իրեր»ը և փոխադրեցինք Իգդիր։

---

1 Մանոր. խմբ.— Սա մի փոքրիկ հատուած է խմբապետ Ալյանի (Ստեփանեան, Ոզմեցի) հետաքրքրական եւ խրատական կերպով պատմուած անտիպ յուշերից։

Իգդիր հասնելուն պէս, մեր առաջին գործն եղաւ ներկայանալ ուր որ պէտք էր։ Մի քանի օր Իգդիրում մնալուց յետոյ, լեռնային ճանապարհով մեկնեցինք Բայազէդ, մեզ հետ տանելով թէ մեր անձնական զէնքերը և թէ կազմակերպութեան համար տրամադրուած զէնքերից 22 հրացան։

Մեզ հրահանգուած էր՝ սահմանն անցնելուց և Բայազէդի դաշտը մտնելուց յետոյ, կանգ առնել Արծափ գիւղից քիչ հեռու, լեռան լանջին գտնուող Ծաղկաւանք անունով մատուռի մօտ և սուրհանդակի միջոցով Սուրէնին հասցնել նրան ուղղուած նամակը, որպէսզի ձիեր ուղարկի մեզ, յանձնուած «ապրանքները Բայազէդ փոխադրելու համար։

Այդպէս էլ արինք։

Կէս գիշեր էր, երբ մտանք Բայազէդ։ Քաղաքի ծայրամասում գտնուող մի տան մէջ տեղաւորեցինք «բեռները»ը և առաւօտեան ներկայացանք Սուրէնին։

Սուրէնը նոյնինքն Դրօն էր, որ յատուկ գործով հաստատուել էր Բայազէդում, ծպտուած՝ իբրև նաւթի ու շաքարի առևտրական, Սուրէն ծածկանունով։

Սուրէնն ամբողջ երեք օր մեզ պահեց իր մօտ, անհրաժեշտ ցուցմունքները տուեց և մեր տարած զէնքերը զետեղելով շաքարի հակերի մէջ, իմ եօթ ընկերների հետ ճամբու դրեց Վան, ինձ պահելով իր մօտ։

— Ախր ես էլ եմ ուզում գնալ ընկերներիս հետ. միասին եկանք, միասին էլ կուզենք վերադառնալ, պարոն Սուրէն,— ասացի ես յուզուած, թէև, չեմ թաքցնում, ինձ շատ երջանիկ էի զգում, որ մի այդպիսի յեղափոխական ուզում էր իր մօտ պահել ինձ։

— Քի՛չ խոսի՛ր, ասում եմ մնայ՝ պիտի՛ մնաս։ Վերջացաւ։

Եւ մնացի։ Մի կողմից ցաւում էի, որ բաժանուեցի իմ եօթ ընկերներից, սակայն միւս կողմից անչափ ուրախ էի, որ այսուհետև Պարոն Սուրէնի մօտ եմ կուսակցական աշխատանք կատարելու։

Ինչ քա՜ղցր ու անմոռանալի օրեր էին, Աստուած իմ։ Նրանք միայն լիովին կը հասկանան ինձ, ովքեր բախտ են ունեցել այդ մեծ մարդու մօտ լինել։

Երիտասարդ Սուրէնը առևտրական էր, հիմնել էր առևտրա-

կան տուն՝ կենտրոնական խանութ և խանութներ շրջանում, սակայն, իրականության մէջ, Սուրէնը մի յեղափոխական վանահայր էր, իր հաստատությունն էլ յեղափոխական մի վանք։

Ծանոթացայ մի շարք ընկերների հետ, որոնց համար Սուրէնը գործ էր ապահովել, ի հարկէ, ի վնաս իր առևտրական տան։

Վահան Մինախորեանը Սուրէնի կենտրոնական խանութի կառավարիչն էր, Մեսրովբ Աւետիսեանը (Մաքուեցի, հետագային Մեսրովբ քահանայ) և Յովհաննէս Պարոնեանը (Եապոն) Դիադինի խանութի, Իգդիրցի Ալէքը՝ Քոռուն և Մոսունի։ Սուրէնը ներկայացուցչություններ ունէր նաև միւս վայրերում։

Բայազէդի այդ շրջանի ընկերներից, դժբախտաբար միայն երկու հոգի են ողջ մնացել՝ Քաշալ Ղազարը և այս յուշը պատմողս...

Սուրէնը ոչ թէ առևտուր էր անում շահելու համար, այլ կուսակցական աշխատանքը հեշտացնելն էր իր նպատակը։

Անչափ հիւրասէր էր Սուրէնը։ Թող մեզ ների ասել, որ տարօրինակության էր հասնում նրա հիւրասիրությունը։ Սուրէնի ձեռքն ընկնող հիւրին պրծում չկար, չէր կարող հեշտությամբ ազատել, եթէ ի հարկէ գործի բերումով անհրաժեշտ չլինէր իր մեկնումը։ Անհնար էր, որ Սուրէնի սեղանակիցների թիւը տաս հոգուց պակաս լինէր։ Այդ լայնասիրտ երիտասարդը կարծէք մեծ պահանջ էր զգում, որ ամէն անգամ իր սեղանի շուրջը բոլորեն նւազագոյնը տաս հոգի։

— Պարոն Սուրէն, ախր իմ անելիքն ի՞նչ է,— լեզուի եկայ ես, չեմ յիշում շաբաթը լրացել էր, թէ ոչ։

— Գեադա, ձէնդ կտրիր, գործի՛ ժամանակը որ գայ, գործ կը տամ քեզ։ Պիտի մնաս։ Հալա հանգստացիր։

«Հանգստիս» տասներորդ օրը լրացել էր, երբ Սուրէնն ինձ ուղարկեց Իգդիր, ասելով.

— Դէ գնա, հերիք է, հանգստացար, զէնքերն արդէն պատրաստ են Իգդիրից Բայազէդ և ապա Վան փոխադրելու համար։

1912 թ. Մայիս — 1914 թ. Մայիս, Սուրէնի մօտ մնացի, Իգդիր—Բայազէդ գծով դէպի Վան կուսակցական զէնք ու ռազմամթերք փոխադրելու գործի մէջ։

Այդ ընթացքում այնքան էի մտերմացել նրա ընտանիքի հետ, որ ամէն անգամ Իգդիր հանդիպելիս, Դրոյի հայրը՝ Կարօն ասում էր.

— Այ տղայ, ախր էն մեր տղան ինձ ի՞նչի մի երկու տող չի գրում։

Դրոյի քրոջ ամուսինը՝ Հայրապետ Լալայեանը հարցնում էր.

— Անվերջ ապրանք է ուզում, էդքան ապրանք սպառո՞ւմ է։

Այբողջ երկու տարի մնացի Դրոյի մօտ, նրա գուրգուրանքին արժանացայ, աշխատեցի նրա կարգադրութեամբ։

1914 թի Մայիսին, դաւաճանութեան հետևանքով, ժանդարմները կտրեցին մեր գիծը, որ մեզ ձերբակալեն։ Իգդիրից շուրջ 4 քիլոմեթրի վրայ գտնուող խալֆալու գիւղում պահել ուի մեր «բեռը», իսկ ինքս ուրիշ ճամբով վերադարձայ Իգդիր։

Իգդիր հասնելուն պէս տեղեկացայ, որ խուզարկել են այն տունը, ուր բնակւում էի և ոստիկանութիւնն ինձ է փնտռում։

Այդ րոպէից յետոյ, կուսակցական պատկան Մարմինը հրահանգեց ինձ գնալ Երևան, այնտեղից էլ Բագու, երբ վրայ հասաւ 1914 թի պատերազմը։

Այլևս Դրոյին չկարողացայ հանդիպել մինչև 1915 թի Յունիսը, երբ հայկական կամաւորական բոլոր գնդերը, Վանից դէպի Բիթլիս էին գնում։ Կարճկանի շրջանում, Զևենի կռիւներին, ռուսական հրամանատար զօր. Նիկոլաևը կարգադրում է, որ հայ կամաւորական գնդերի հրամանատարները գնան ճակատ և տեղի վրայ մշակելով յարձակման ծրագիրը, միւս օրն իսկ գրոհի դիմեն։

Այնտեղ էին բոլոր հրամանատարները՝ Վարդան, Խէչո, Քեռի, Համազասպ, Անդրանիկ և Դրո։

Իբրև Անդրանիկի զինուոր, նրան ընկերակցողների մէջ էր նաև այս փոքր յուշը պատմողը։

Երբ Դրոն նկատեց ինձ, մէկ պահ դադարեց խօսակցութեան մասնակցելուց, մօտեցաւ և համբուրեց, ասելով.

— Քեզ մեռած էի կարծում։

Նրա ակնարկը վերաբերում էր Իգդիրի մոտակայ հալֆալու գիւղի մօտ տեղի ունեցած դէպքին։

Հայ կամաւորական գնդերի հրամանատարները վիճում էին, համաձայնութեան չէին գալիս։

— Հայ ենք, չե՞նք կարող զիջել և համաձայնել,— բարձրաձայն ասում էր Դրօն։

Եւ ցրեցին առանց համաձայնելու։ Յաջորդ առաւօտեան, ամեն մէկն իր գիտցած ձեւով սկսեց յարձակումը, որ ծանր նստեց, բայց այնուամենայնիւ, մեր կամաւորական ոյժերը յաղթեցին, պատռեցին շղթան և խալիլ բէյը նահանջեց։

Երեք օր յետոյ, Դատուանի մօտ, մի կուում սպանուեց հեծելազօր գնդի հրամանատարը՝ Դաշնակցական խէշօն... Թող ներւի մեզ մի փոքրիկ շեղում կատարել և ասել.— Դաշնակցական խէշօյի մասին կարծիք կազմելու համար պէտք է կարդալ շա՜տ սիրելի՛ Պարոն Ս. Վրացեանի սքանչելի յօդուածը՝ «Խէշօյի գերեզմանը Իշխանի կողքին», տպուած 1955 թւին, «Յուսաբեր»ում Մայիսի սկզբների թւերի մէջ (Ծանօթ. խմբ.— Տե՛ս «Ալիք, 1955 թ., № 107 և 108, Մայիս 22-ի և 23-ի թւերը)։

Այլևս չկարողացայ հանդիպել Դրօյին, մինչև 1918 թիւը, վանից՝ նահանջին, երբ արևմտահայ բանակի մի մասն անցաւ Պարսկաստան, իսկ միւսը՝ Կովկաս։

Երկրորդ մասի մէջ, զօրամասի հետ Իգդիր հասանք 1918 թւի Մարտ 25-ին, Տիգրան Բազդասարեանի հետ (հետագային գնդապետ. ափսո՜ս, նա ևս այժմ հանգուցեալ, իր մահկանացուն կնքեց 1955 թւի Յուլիս 20-ին, Թեհրանում...)։

Նոյն օրը, առաջին հանդիպումս եղաւ Դրօյի հետ։

— Էսօր միայն էստեղ կը մնաք։ Վաղը պիտի մեկնէք Դաշ-Բուռունի ճակատը, որը դատարկ է։

Տասնևհինգ օր յետոյ, Դաշ-Բուռունից անցանք Դաւալու, այնտեղից էլ Ղամարլու, նախ փոխադրելով Դաւալուի ժողովուրդը, որից շատ շանցած, տեղի ունեցաւ Բաշ-Ապարանի ահեղ ճակատամարտը, իսկապէս մեծ զոյամարտը, աննման հրամանատար Դրօյի ղեկավարութեամբ։

Հրահանգ ստացանք՝ որ զօրամասի մի շարք միաւորներն անցնեն Սարդարապատ, իսկ միւսները կենտրոնացած մնան Ղամարլու, դէպի Գայլաբերան տանող գ՝ուսմ։

Ղարաքիլիսէի, Սարդարապատի և Բաշ-Ապարանի պատմական ճակատամարտերից յետոյ, զինադադար կնքուեց և տաճիկները պահանջեցին որ արևմտահայ բանակը չմնայ ճակատում։

Այդ օրերին, Անդրանիկը Դիլիջանի վրայով մեկնեց դէպի Նախիջևան և նամակ գրեց, որ մենք էլ շարժուենք նոյն ուղղութեամբ և նրան միանանք Նախիջևանում։

Լուր էր տարածուած, որ իբր թէ արևմտեան բանակի մեր զօրամասն ևս գնում է Անդրանիկի ետևից, մինչդեռ այդ ծանր օրերին, այդպիսի մտադրութիւն չկար։

1918 թւի Յունիսի կէսերին էր, որ Դրօն իր մեքենան ուղարկեց Ղամարլու, Երևան կանչելով Նեստիս։

Ճանապարհուեցի իսկոյն և եթ։ Երևան հասնելով, փողոցում հանդիպեցի Դրօյին. զգալով, որ մի շատ կարևոր գործի համար էր այդպէս շտապ Երևան կանչել ինձ, բարևից անմիջապէս յետոյ հարցրի.

— Ի՞նչի համար էք կանչել ինձ Պարոն Դրօ։

— Ձեր զօրամասը վաղը պիտի մեկնի Դիլիջան, որի ճակատը բաց է,— պատասխանեց իրեն միայն յատուկ վրճռական տոնով, կարճ ու կտրուկ։

— Հրամայէիք՝ կը ճանապարհուէինք անմիջապէս։ Ժամանակ չե՞նք կորցնում։

— Ո՛չ։ Պէտք կար քեզ կանչելու։ Գնանք։

Հետևեցի իրեն։ Գնաց Արամի մօտ, Նեստիս էլ իր հետ տանելով։

— Խնդիրը կարգադրել եմ, մտահոգուելու բան չկայ,— դարձաւ Դրօն Արամին։

Ինչպէս երևում է, կասկած կար, որ արևմտահայ բանակի մեր զօրամասը կը գնայ Անդրանիկի ետևից։ Մտածում էին, որ Նեստոս՝ որպէս Անդրանիկի զինուոր, մի գուցէ հետևեմ նրան։

Երկու ժամ յետոյ վերադարձայ Ղամարլու և յաջորդ օրը շարժուեցինք դէպի Դիլիջան՝ Երևան-Քանաքեռ գծով։

Տաճկական զօրքը չկար Դիլիջանում։ Սահմանապահութիւնը շարունակեցի երեք ամիս։

Այնտեղ մնացի մինչև 1918 թւի աշունը, երբ կառավարութիւնը Թիֆլիսից փոխադրուեց Երևան, Դիլիջանի վրայով։

Դրանից յետոյ, երբ արդէն կնքւել էր առաջին համաշխարհային պատերազմի ընդհանուր զինադադարը, Դրօն Դիլիջան ժամանեց, իր հետ բերելով 6-րդ գունդը, որը փոխարինեց մեր զօրամասին, իսկ մեր զօրամասը փոխադրեց Երևան։

1919 թի գարնանը, Անդրանիկը վերադարձաւ Զանգեզուրից և ուղղակի գնաց Էջմիածին, մի տարաձայնութեան հետևանքով չուզեց Երևան մտնել։

Այդ օրերին Դրօն ժամանեց Էջմիածին և նաստիս Իգդիրից Էջմիածին կանչեց հեռախօսով։ Ճանապարհեցի անմիջապէս։ Երկու օր մնացի Էջմիածնում, Դրօյի մօտ։

— Անդրանիկն եկել-նստել է Էջմիածին, չի համաձայնում գալ Երևան։ Որպէս իր զինուոր, գուցէ կարողանաս համոզել։

Շատ էի կապուած Անդրանիկի հետ, նա սիրում էր այս յուշը պատմողին, այդ գիտէր Դրօն և դրա համար էր կանչել։

Անդրանիկը վշտացած էր նաև նաստիցս, թէ ինչո՞ւ արևմտահայ բանակի մեր զօրամասն էլ չհետևեց իրեն, չշարժեց դէպի Նախիջևան, այնտեղ իրեն միանալու համար։

Ժողովրդի լեզուով ասած, սիրտն առայ։ Անդրանիկը ոչ միայն մոռացաւ այդ, այլև համոզեց՝ որ ճի՛շտ էր այն ժամանակ մեր բռնած ընթացքը։

Անդրանիկն ուզո՛ւմ էր Երևան գնալ, բայց իր շրջապատում եղած վատ մարդիկ չթողեցին, պղտորում էին նրա միտքը։

— Չի լինում համոզել։ Օրւայ մէջ մի քանի անգամ փոխում է իր միտքը։ Վերադարձիր տեղդ,— կարգադրեց հրամանատարս՝ Դրօն։

Վերադարձայ։ 48 ժամ յետոյ, կէս գիշերին, արթնացրին ինձ, յայտնելով, որ Անդրանիկի կողմից չորս զինուորներ են եկել, ուզում են տեսնել հետս։

Ընդունեցի, հետաքրքրուեցի նրանց առաքելութեամբ։ Ցանձնեցին երեք նամակ, որից մէկն ուղղուած էր նաստիս, 2-րդը Խրաքշահցի խմբապետ Մուրադին, իսկ 3-րդը՝ եզիդիների պետ՝ Ջահանգիր Բէգին։

Նաստիս գրուած նամակի բովանդակութիւնը հետևեալ էր.— Իմ զինուոր Ասլան, անմիջապէս, զօրամասով շարժիր դէպի Էջմիածին։ Գնում ենք Երևանի վրայ։

Ենթադրելով, որ միւս երկու նամակներն ևս նոյն բովանդակութիւնը պիտի կրեն, չյանձնեցի տէրերին։ Հանգստացրի նամակաբերներին, որոնք նախկին զինուորներից էին և պահեցի մինչև առաւօտ։

Առաւօտեան հանդիպեցի Դրօյին համհարզ գլխապետ (կապիտան) Մուրադեանին, յայտնեցի ստացած նամակի բովանդակութիւնը, իսկ միւս 2 նամակները յանձնեցի նրան, Դրօյին ուղարկելու համար։

Մի քանի ժամ անցած լուր ստացանք, որ Անդրանիկը շարժւել է դէպի Երևան, սակայն կէս ճամբին նրան դիմաւորել է Երևանի թեմական առաջնորդ՝ Գերապատիւ Տէր Խորէն Արքեպիսկոպոս Մուրադբէգեանը (հետագային Խորէն Ա. Կաթողիկոս, այդ աննման հոգևորականին խեղդամահ արին բոլշևիկները) և բարեբախտաբար յաջողել է համոզել՝ որ վերադառնայ էջմիածին։

Դէպքից շուրջ մէկ շաբաթ յետոյ էր, որ Դրօն Իգդիրից ժամանեց՝ զօրամասերին քննական այցելութիւն տալու նպատակով։ Հետաքրքրւեց ստացած ծանօթ նամակով, որը յանձնեցի հրամանատարիս։

Այնուհետև մեր զօրամասը փոխադրւեց նախ Կողբ և ապա Ղամարլու։ Շուրջ մի ամիս էր, որ այնտեղ էինք, երբ Դրօն Ղամարլու այցելեց 1919 թւի Յունիս 2-ին գնդ. Ապրեսեանի ու մեր զօրամասերին (գնդեր) և անհրաժեշտ ցուցմունքները տալով, կարգադրեց՝ Յունիս 4-ին, շարժւել դէպի Բոյուք-Վեդի-Ջիմանքանդ։

Դրօյի հրամանն ու կարգադրութիւնը տառացիօրէն կատարեցինք՝ նրա նշանակած ժամին։ Նոյն օրը վիրաւորւեցի։ Գնդ. Ապրեսեանի զօրամասը նահանջելով հասնում է Ղամարլու թէ չէ, կռւի մասին լուր է տալիս Երևան։

Դրօն Ղամարլու է հասնում վաղ առաւօտեան։ Կէսօրւայ մօտ կառք ուղարկել տւեց և նւաստիս տարան Ղամարլու։

Կռւի մանրամասնութեանց շուրջ հարցումներ անելով, հրահանգեց անմիջապէս փոխադրել ինձ Երևան՝ հիւանդանոց։

Մէկ շաբաթ հիւանդանոցում մնալուց յետոյ, վերադարձայ մեր զօրամասը։

Շիրազլուի մօտ հանդիպեցի Դրօյին։ Տեսնելով ինձ կապա-

լիս, մի ձեռնափայտի յենված, Դրօն ծպտաց և իր կրակոտ աչքերը մի պահ վրաս կենտրոնացնելով, ասաց ծիծաղելով.

— Այ «խալխի նոքեար» Ասլան, գիտես, որ խալխն ասում է, թէ «շունը կաղալով չի սատկում»։ Գնայ զօրամասիդ գլուխ, ուրիշ մարդ չեմ նշանակում։

Թերևս մի ուրիշ հրամանատարի քաղցր ու փաղաքշական խօսքն այնքան չքաջալերէր ինձ, որքան Դրօյի այդ սրախոսութիւնը, ժողովրդական անխոցելի առածով համեմուած, որին յաջորդեց իր լիաթոք ծիծաղը։

Այդպէս էր աննման Դրօն։ Ոչ թէ նման դէպքերում, այլև ամենածանր պահերին իսկ զարթախօս, կատակող, բայց միշտ վճռական։

Ամբողջ մէկ ամիս տևեց Բոյուք Վեդիի կռիւը, որից յետոյ դադարեց և մեր զօրամասը նորէն փոխադրուեց Իգդիր, որտեղ մնացինք մինչև 1920 թւի գարունը և ապա փոխադրուեցինք Էջմիածին։

Մայիսեան ապստամբութեան ժամանակ (1920 թիւ Մայիս 1), հրահանգ ստացայ գնալ Մարգարայի կամուրջը։ Իգդիրի շրջանի զօրամասի միաւորներում բոլշևիկեան խմորում կար։ Զօրամասի հրամանատար գնդ. Խուդաբաշեանը զանազան յանձնարարութիւններով մեզ մօտ էր ուղարկում բոլշևիկացած տարրերին, որոնց վար էինք դնում անմիջապէս։

Մինչև Հայաստանի խորհրդայնացումը, մնացի Դրօյի հրամանի տակ, վայելելով իր վստահութիւնը՝ իբրև գնդի պետ, գնդապետի օգնական, առանձին գումարտակի պետ, ինչ որ Դրօն կարգադրում էր։

1920 թւի Դեկտեմբերի սկզբներին շրջանից վերադարձայ Երևան, սակայն չհանդիպեցի Դրօյին։ Քիչ յետոյ Դրօն մի ընկերոջ միջոցով յայտնում էր. «Հետապնդում է, թող հեռանայ, որպէսզի չձերբակալի»։

Հրաման ընդունեցի նաև այդ. այո՛, հրաման էր, թէև անուղղակի, զգուշացման ձևով։

Աշխատել եմ նաև Անդրանիկի, Սեպուհի և միւս հրամանատարների ձեռքի տակ, նրանց հետ, սակայն իմ համեստ կարծիքով, ամենից արժեքաւոր հրամանատարը Դրօն էր՝ թէ անձնական քաջութեամբ և թէ զինուորական հմտութեամբ։

Վերին աստիճանի ընկերական, համեստ, գործունեայ,

ամենից դժուարին պայմաններում իսկ գործ ստեղծող, հետևողական։

Մի բացառիկ ոյժ էր՝ թէ իբրև կազմակերպիչ և թէ իբրև ղեկավար։

Գործի մէջ խստապահանջ էր, կտրուկ հրամանատար, ընկեր չէր ճանաչում, իսկ պաշտօնական շրջանից դուրս՝ նոյն ջերմ ընկերականութիւնը։

Այնուհետև այլևս բախտ չունեցայ տեսնելու այդ մեծ մարդուն...

Վերջին երկու տարուայ մէջ իրենից ստացայ մի քանի երկտողներ՝ բարևագիր, քաջալերանքի ջերմ խօսքեր... «Յոյս ունեմ, որ իմ տեսածի նման կը մնաս, աշխատանք եղած դէպքում նորէն առաջ կը գաս»,— գրում էր այդ նամակներից մէկում։

Եւ մէկ էլ իր մահուան լուրն առի...

Երկիւղած խոնարհւում եմ անջինջ ու լուսեղ յիշատակիդ առաջ, իմ ազիզ Դրօ, աննման Հրամանատար...

Գրի առաւ՝ Ա. Գ. Մ.

Ապրիլ 17, 1956 թիւ
Թեհրան

ԱՍԼԱՆ ՍՏԵՓԱՆԵԱՆ

ՄԻ ԴՐԻԱԳ ԴՐՕՅԻ ԿԵԱՆՔԻՑ

(Նրա մահուան fառասնօրեակի առթիւ)

Առաջին անգամ Դրօյին Հանդիպեցի Ժընևում, 1908 թւի գարնան վերջերին, մի կիրակի օր։ Դաշնակցական ուսանողներս կիրակի օրերն անց էինք կացնում «Դրօշակ»ի խմբագրատանը։ Այդպիսի մի օր էր, առաւօտեան, որ Դրօն ռուսերի արագութեամբ ներս մտաւ խմբագրատուն և ծանօթ-անծանօթ ընկերների գիրկն ընկաւ։

Մեզանից շատերն առաջին անգամն էին տեսնում Դրօյին։ Ռոստոմը տեղեակ էր Դրօյի գալու մասին, մեզ չէր ասել և ժպտադէմ հետևում էր Դրօյի շարժ ու ձևերին (Դրօն անչափ շարժուն էր ու անհանգիստ)։

Տաս րոպէ չանցած, Ռոստոմը, Դրօն ու ես անցանք խմբագրատան պարտէզը, որտեղ որոշեցինք յաջորդ օրն իսկ փորձել Քր. Միքայէլեանի նոր ձևով պատրաստած ռումբը, որը կատարելագործել էինք՝ Ռոստոմն ու տողերիս գրողը, բայց դեռ փորձեր չէինք արել։

Գնացինք Ժընևի արուարձաններից դուրս գտնուող մի դաշտ։

Ինձ զարմացրեց Դրօյի ռումբ նետելու ձևը՝ 30 քայլի վրայ, դիպուկ նշանառութիւնը։

Զեռնառումբը գոյութիւն ունէր վաղուց, բայց առաջին անգամ գործածուեց Ռուս-Ճապոնական պատերազմի վերջին շրջանում։

Սկսողը ճապոնացիք էին, մենք քիչ կիրառեցինք կուի այդ ձևը։ Ռումբը նետողները զինուորներն էին և երիտասարդ սպաները։ Վերից վար էինք նետում, երկու կողմերս էլ՝ ճապոնացիք և մենք՝ ռուսական բանակի միաւորները։

Դրօն վարից վեր էր նետում և շատ յաջող։

Մի երկու օրից յետոյ, մենք երեքով նորից անցանք նոյն տեղը։ Վեց ռումբ տարանք հետներս։ Այս անգամ ռումբերը լեցուն էին փոքր քանակութեամբ սև վառօդով։ Նպատակներս էր փորձել՝ կը պայթե՞ն ռումբերը, թէ ոչ։ Երեքը Դրօն նետեց, երկուսը ես, իսկ 6-րդը Ռոստոմը։ Վեցն էլ պայթեցին։ Մենք, բաւարարուած, վերադարձանք տուն։

Մի կիրակի էլ մեր կուսակցական ուսանողների հետ գնացինք փորձի նոյն տեղը։

Մեզ հետ էին նաև Գալփան («Դրօշակ»ի 4 խմբագիրներից մէկը) և Անտոն Գոշը, (Քրիստափորի մօտիկ աշխատակիցներից), շատ յարգուած և շատ հեգնող և սրամիտ մի ծերուկ։ Ապրում էր «Դրօշակ»ի խմբագրատանը և իր խստամբերութեամբ ու իւրայատուկ կեցուածքով դաստիարակում էր մեզ։ Ճամբին մենք աւելի նրանով զբաղուեցինք քան՝ Ռոստոմով ու Դրոյով։ Սիծաղից թուլացել էինք ուսանողութեան վերաբերմամբ նրա արած արտայայտութիւններից (բոլորը բացասական)։

Ուրախ էր, որ բացակայում էր «գրպանահատ»ը, պարսկաստանցի միակ դաշնակցական ուսանողը։ Այդ ժամանակներում Ժընևում մօտ 15 պարսկաստանցի ուսանողներ կային, բոլորն էլ սոցիալ-դեմոկրատ, կամ անկուսակցական։

Բոլոր ուսանողներին էլ ցույց տվինք ռումբ նետելու ձևը։ Երբ հերթը հասավ Անտոն-Գոշին, նա այնպես մի բացականչություն արեց, որ ինչպէս ասում են «մեռանք ծիծաղից»։

Դրանով էլ վերջացան մեր փորձերը։ Մի քանի օր յետոյ իմացանք, որ Ժընևի ոստիկանությունը տեղեակ է մեր փորձերին և իհարկէ՝ անհանգիստ էր։ Խաչատուր Մալումեանը (Ակնունի) փարատեց այդ կասկածները։

Դրօյին հիւանդանոց փոխադրեցին գործողության համար, տառապում էր մի ինչ-որ հիւանդությամբ։ Գործողությունը յաջող էր անցել։ Մենք անհանգիստ սպասում էինք նրա վերադարձին։ 7—8 օր մնալով հիւանդանոցում, մի կիրակի, Դրօն թափով ներս մտավ խմբագրատուն, նայեց աջ ու ձախ և զտեմարտի բունեց հետս։ Այս ու այն կողմից զգուշացրին Դրօյին, որ վերջ տայ զտեմարտին, վախենում էինք, որ օպերացիայի տեղը կպայթի։

Մասնակցեց ուսանողների բոլոր հաւաքույթներին ու ժողովներին և մի օր, առանց մնաք բարև ասելու՝ անյայտացավ Ժընևից։

Երկրորդ անգամ Դրօյին հանդիպեցի Թիֆլիսում, մի հիւանդանոցում, որտեղ նա պառկած էր Կաւրէ-Շամէի ճակատամարտում ծանր վիրաւորելու պատճառով։

Այցելության գնացինք մեծ եղբօրս (2-րդ պետական Դումայի անդամ) և Ջումշուդի (հետագայում. Ջումշուդ-խան, պարսկական բանակում) հետ միասին։ Գրկախառնվեցինք հեռը, իսկ Ջումշուդը համբուրեց ձեռքը։ Դրօն վիրաւորված ձեռքը յետ քաշեց (չէր սիրում ցուցամոլությունը)։

Խնդրեց ինձ, որ հերքեմ Թիֆլիսի հայկական շրջաններում պատող լուրը՝ իբր թէ Նիկոլայ 2-րդը սեղմել է նրա ձեռքը և հարցրել, թէ «Ո՞րտեղ է սովորել զինուորական արհեստը» և որին նա իբր թէ պատասխանել է. «Հ. Յ. Դաշնակցության շկոլայում»։

Ինձ շատ խնդրեց, որ հերքեմ այդ շինծու լուրը։ Նիկոլայ 2-րդը հիւանդների ու վիրաւորների ձեռքը չէր սեղմում, նոյնիսկ եթէ նրանք բարձր խաւերին պատկանելիս լինէին։ Հնարաւոր էլ չէր հազարաւոր վիրաւորների ձեռքը սեղմելը, բայց միշտ մխիթարական խօսք էր գտնում ամէն վիրաւորի համար, անցնելով մէկ մի հիւանդին։

Երբէք նա հիւանդանոցներում չէր նստում հանգստանալու համար, թէ նոյնիսկ այդ այցելութիւնները ժամեր տևէին։

Ցարին Դրոյին ներկայացնող Ալ. Խատիսեանն էր եղել (Թիֆլզի քաղաքագլուխ, հետագային Հայաստանի վարչապետ)։

Բաժանուեցինք, խոստացայ Դրոյին՝ նորից այցելել իրեն։ Էլ չկարողացայ այցելել։

Ամբողջ Կովկասում և մանաւանդ Թիֆլիսում, ծայր էր տուել վախը։ Իրարանցումը աննկարագրելի էր էնվեր փաշայի արշաւանքի պատճառով։ Նա Սարիղամիշի ու Արդահանի ճակատներում յարձակողականի էր անցել և ամէն տեղ էլ յաջողութիւն ունէր։ Պետերբուրգի զինուորական մարմիններն այն կարծիքին էին, որ Թուրքիան կը խուսափի պատերազմի մէջ մտնել իրենց դարաւոր բարեկամների՝ Անգլիայի, Ֆրանսիայի և նրանց դաշնակից Ռուսիայի դէմ։ Զո՜հ՝ իրենց այդ մտածելակերպի։ Նրանք Կովկասի երեք կատաղի զօրաբանակներին արևմտեան ճակատն էին շպրտել, կովկասեան ճակատում թողնելով նրանցից մի քանի բեկորներ, 19-րդ զօրաբաժինը, Կարսի բերդի գարնիզոնը (բերդապահ զօրամասը) և կովկասեան մի քանի հրացանաձիգ գումարտակներ, թէև ուժեղացրած պահեստի ոյժերով, բայց համեմատած տաճկական զօրքի քանակին, շատ թոյլ։ Ի՜հարկէ, տաճիկները գիտէին թէ ինչ է մնացել կովկասեան ճակատում (նրանց լրտեսական գործը կատարեալ էր Կովկասում ապրող թուրքերի և նոյնիսկ վրացիների միջոցաւ)։

Կովկասեան ճակատի պատասխանատու բարձրաստիճան զինուորականները, որոնք Թիֆլիս էին գտնուում, Վարանցով Դաշկովի (Կովկասի փոխարքայ) հետ միասին, կորցրել էին գլուխները, սառնարիւնութիւնը և համարեա թէ փախուստի ճանապարհը բռնել իրենց հերթին։ Շշուկներն անպակաս էին, թէ նոյն իսկ փոխարքան կապում է իր ճամպրուկները։

Իսկ դրա դիմաց՝ հայերը Թիֆլիսում շտապ-շտապ հաւաքում էին զանազան տեղերից այնտեղ եկած հայ կամաւորներին, նրանց կարգի բերում և խմբապետ Վարդանի (Մեհրաբեան) հրամանատարութեան տակ ճակատ (Սարդարապատ) ուղարկում։

Կովկասեան գլխաւոր սպայակոյտի պետ զօր. Շատիլովի կարգադրութեամբ ու հրամանով, ես նշանակւել էի զինուորական հրահանգիչ՝ (ինստրուկտոր) և Վարդանի շտապ կազմած խմբի հետ միասին ճանապարհւեցի ճակատ։

Դրօյին էլ երկրորդ անգամ չկարողացայ այցելութեան գնալ։

Բարեբախտաբար, տաճկական ոյժերը ջարդւել էին, փախուստի ճամբան բռնել և մենք ճակատ հասնելու տեղ, ճակատի հրամանատարութեան կարգադրութեամբ, մնացինք Ալեքսանդրապոլում և ամբողջ 2 ամիս մնացինք այնտեղ։

Կամաւորների մեծամասնութիւնը նոյնիսկ զէնք բռնել չգիտէր։ Մարտին կովկասեան դաշտային շտաբի նոր դիսլոկացիայի (պլան, հրաման) բերումով հայ կամաւորական բոլոր խմբերը՝ 2-րդ, 3-րդ, 4-րդ և Վարդանի 5-րդ խմբերը պիտի կենտրոնանային Երևանում։ Զինուորական նոր դասաւորումներ էին կատարւում ամենուրեք. արևմտեան, ինչպէս և կովկասեան ճակատներում։ Այդ պատճառով, մեր կամաւորները՝ 2-րդ, 3-րդ, 4-րդ և Վարդանի 5-րդ նորակազմ կամաւորական խմբերը անցան Երեւան։ Անդրանիկի կամաւորական առաջին խումբը Պարսկաստանում էր։ Նրան ձեռք չտւին, այդտեղ էլ թողեցին, զօր. Նազարբէգեանի հրամանատարութեան տակ։

Դրօն առողջացած, նոյնպէս եկել էր Երևան և ընդունել իր խումբը։

Կովկասեան գլխաւոր շտաբի հրամանով, ես շարունակ շփման մեջ էի կովկասեան երրորդ զորաբանակի (corps darmee) շտաբի հետ, որին ենթակայ էինք այնուհետև։ Հետաքրքրւում էինք մեր նոր անելիքի մասին։

Ապրիլի սկզբներին, յանկարծ անսպասելիօրէն լուր ստացանք Վանի ապստամբութեան մասին։ Գնացի շտաբը, ստուգելու համար այդ լուրը։ Այնտեղ արդէն պատրաստ տեսայ հրամանը՝ մեր կամաւորական խմբերը շտապ մեկնելու էին Վանի ճակատը։

Մեզ թոյլատրել էին որոշ ինքնավարութիւն ունենալ ներքին կեանքում, ըստ մեր հայեցողութեան դասաւորել մեր խմբերը։ Հաւաքեցինք, ժողովներ շարունակ, անհամաձայնութիւններ — այդ բոլորը ձանձրոյթ էին պատճառում, մա-

նաւանդ ինձ։ Մեր խմբապետները շարունակ հարցեր էին տալիս ինձ ու չէին բաւարարւում իմ պատասխաններով։

Վերջապէս, Դրօյի առաջարկով ու ծրագրով՝ երեք խումբ կազմեցինք։ Վարդանի 5-րդ խումբը բաժանեցինք Դրօյի 2-րդ և Համազասպի 3-րդ խմբերի մէջ։ Վարդանին նշանակեցինք (նորեն Դրօյի առաջարկով) երեք խմբերի ընդհանուր հրամանատար, շարժեցինք էջմիածնի վրայով դէպի Իգդիր, ճանապարհին ստանալով Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնութիւնը։

Իգդիրում մնացինք ամբողջ 3 օր, լրացնելու համար մեր զինուոր՝ կովկասեան 3-րդ զօրաբանակի պահեստներից։

Իգդիր հասնելու 4-րդ օրը ճամբայ ընկանք Վան։ Ռոստոմը մեզ հետ եկաւ մինչև Արարատի ստորոտը, յաջողութիւն մաղթեց մեզ ու վերադարձաւ Իգդիր, իսկ մենք դէպի Ղզըլ — Դիզա, մեր արշաւի առաջին նպատակակէտը, որտեղ հասանք նոյն օրը երեկոյեան, անչափ յոգնած։

Այնտեղ էր զօր. Նիկոլայևը, մեր նոր հրամանատարը, իր մի ձիաւոր (ոչ լրիւ) գնդով, մէկական դաշտային ու լեռնային մարտկոցներով և մի հետևակ գումարտակով։

Մեզ ընդունեց հայրաբար, բարևեց, մերոնք դեռ լաւ վարժուած չէին ռուսական զինուորական բարևին, բայց և այնպէս պատասխանեցին — հազար բարևով, ռուսերէն իմացողներն էլ ռուսերէնով։

— Նու, նու, ես շատ գոհ եմ ձեր կեցուածքից ու տղամարդութիւնից, տեղեկութիւն ունեմ ձեր քաջագործութիւնների մասին — ու դառնալով ինձ,— կապիտա՛ն, թարգմանեցէ՛ք։

Օրը տաք, արևոտ, կատարելապէս հրաշալի, յանկարծ փոխուեց։ Ցրտեց ու սկսեց քուլա-քուլա ձիւն գալ, ձիւնի հետ քամի. վախ կար, որ չկարողանանք մեր արշաւանքը շարունակել։

Զօրավարը մեզ յայտնեց մի ուրախ և մի տխուր լուր՝ միաժամանակ։ Առաջինը՝ հայ զօրավար Նազարբէգովը (Նազարբէգեան) Անդրանիկի հետ միասին, մեծ յաղթութիւն էր տարել Դիլմանի ճակատամարտում և երկրորդ տխուր լուրը՝ Վանը մեն-մենակ ինքնապաշտպանութեան օրհասական կռիւ է մղում տաճիկ ոյժերի դէմ — ու խնդրեց, որ շտապենք (խընդրանքը հրաման է զինուորական կեանքում)։

Զինն ու սաստիկ քամին շարունակեցին ամբողջ գիշերը։

Վաղ առաւօտեան շարունակեցինք մեր արշաւանքը։ Համազասպի ու Վարդանի խմբերը միացած զօրավարի ոյժերին, Թափառիսի բարձունքով յառաջացան դէպի Աբաղայի դաշտը, Դրօյի ու Քեռու խմբերը ուրիշ ճանապարհով՝ դէպի նոյն դաշտը։

Զինի շերտը անանցանելի էր, տեղ-տեղ խորութիւնը անսպասելի, 2—3 մետրի էր հասնում որոշ տեղերում, որը մեր ձիերի կուրծքով էինք ճեղքում և կտրում այդ անկարելի ճանապարհը (կածան)։

Զօրավարը չսիրեց Վարդանին։ Իսկոյն հասկացայ, որ մեր և մանաւանդ Վարդանի վերաբերմամբ այդ բացասական տեղեկութիւնները նրան տուողը Վարդանի շտաբի պետ՝ կապիտան Օսէփեանցն է եղել, օձաբարոյ մի մարդ, որ հետագայում էլ բացասական դեր խաղաց հայ կամաւորական խմբերի կեանքում, համարձակւեց էջմիածնում Դրօյին մենամարտի հրաւիրել մի ինչ որ հարցի առթիւ, բայց երբ Դրօն նրա հրաւէրն ընդունեց, իրեն մերձիմահ հիւանդ յայտարարեց և մի ծակ մտաւ։ Չեմ յիշում, թէ ինչով վերջացաւ նրանց այդ մենամարտը, այնքանն իմացայ միայն, որ Դրօյին պատահելիս, նա շարունակ հիւանդ էր ձևացնում իրեն։

Քրդական խառնիճաղանջ ոյժերի կրակի տակ, շարժւեցինք դէպի Բերկրի-Ղալա։ Մենք 3 սպանուած ունեցանք, կոզակները Բերկրի հասան կէսօրւայ մօտ։ Կարճ ճամբով մեզանից առաջ, այնտեղ էին հասել Դրօն և Քեռին իրենց խմբերով, առանց կորստի։ Դրօն նորից կարճ ճանապարհով անմիջապէս շարժւել էր դէպի Վան։ Քեռին նոր էր շարժւել, երբ մենք ուշացած հասանք Բերկրի-Ղալա (քրդերի հետ կռիւ բռնւելու պատճառով)։

Այնտեղ պատահեցինք Առիւծ Աւագին (ազգանունը լաւ չեմ յիշում), որից իմացանք, որ Վանը ազատագրուած է, ցնծութեան մէջ է, տաճիկ ոյժերը փախուստ են տուել։ Թարգմանեցի զօրավարին։

— Նու, փա՜ռք Աստուծոյ, կապիտան, այժմ էլ շտապելու կարիք չկայ, գնանք այդ առթիւ մի բաժակ օղի խմենք։ Մօտս Գեորգիևսկի շքանշան չկայ, յիշեցրէք ինձ Վանում, որ այդ սուրհանդակին վարձատրեմ Գեորգիևսկի շքանշանով։

Զօրավարը տխուր տեսքով, իրականին մէջ անշափ ուրախ ու զւարճախօս էր։ Նրա ամէն մի բառից շրջապատը ծիծաղի էր բռնւում, ես էլ նրանց հետ միասին։

Մի շիշ օղի խմեցինք, ապա մի երկրորդը։ Նրա թիկնապահը բերեց երրորդ շիշը։

— Բաւական է, մնացածը կը խմենք Վանում,— դարձաւ նա իր թիկնապահին, պատրաստւեցէք, որ շարժւենք։ Մոռացայ ձեր ֆրանցուզին էլ (Վարդանին), մի բաժակ օղի առաջարկեմ, թող ինձ ների։ Շարժւեցինք։

Մօտեցայ Վարդանին, Համազասպին, որոնք Առիւծ Աւագի հետ մի ինչ որ բանի համար վիճում էին բարձր ձայնով։ Իմացայ թէ ինչումն էր բանը։ Առիւծ Աւագի տւած տեղեկութիւնները, որ լճի ափին դեռ տաճկական ոյժեր կան և պէտք է լճի ափը մաքրելով շարժւենք դէպի Վան, Վարդանն ու Համազասպը համաձայն չէին նրա հետ։ Այդ էր վէճի առարկան։ Առանց նրանց համաձայնութիւնը խնդրելու, վազեցի զօրավարի մօտ։ Խնդրեցի, որ հրաման արձակի։ Լճի ափը մաքրելով, շարժւեցինք դէպի Վան։ Խնդրեցի նոյնպէս, որ լեռնային կէս մարտկոց (4 լեռնային թնդանօթներ), տրամադրի մեզ այդ նպատակի համար։ Զօրավարն 2 մարտկոց ունէր հետը. մէկը դաշտային, միւսը՝ լեռնային։ Մերժեց, «չեմ կարող» ասելով։

— Ես դանդաղ կը շարժւեմ Դրօյի ու Քեռիի գնացած ճանապարհով, ձեզ տրամադրում եմ մի զվէնօ (13 հեծեալ կազակ), ինձ հետ կապ պահելու համար, անհրաժեշտ դէպքում միայն օգնութեան կը գամ։ Դէ՛հ, շարժւեցէք, հրամայում եմ, և ինքը ձին նստելով, ճանապարհւեց դէպի Վան։

Վարդանն ու Համազասպը չէին կարողանում զսպել իրենց զայրոյթը, խռովեցին հետս, իմանալով, որ այդ ուղղութեամբ շարժւելը ես եմ պահանջել զօրավարից։

Մինչ այդ, ես խմբապետների հետ չէի ընդհարւել (հետագայում շատ անգամ և շատ սուր), բայց հրամանը հրաման էր, շարժւեցինք տրւած հրամանի ուղղութեամբ, Առիւծ Աւագն ուրախ-ուրախ քայլեց հետս, շարունակ կպած ինձ։

Շարունակ քայլեցի ոտքով, Առիւծ Աւագի հետ, նրանից անհրաժեշտ տեղեկութիւններ քաղելով։

Առաջին հերթին մօտեցանք Ամկու բերդին (Ամուն), որի

գագաթին մեծ ամբոխ էր երևում։ Արևի տակ պսպղում էին նրանց զէնքերը։

Երեք պատիրակներ ուղարկեցի դրօշակներով, Լևոն Արամեանի գլխաւորութեամբ։ Տեսանք, որ բերդից մի քանի հոգի ցած իջան։

Մեր երեք պատիրակները տաճիկ երեք պատիրակների հետ մօտեցան ինձ, հանդարտ (սմիրնօ) դիրք ընդունեցին ու բարեւեցին։ Երեքն էլ ենթասպաներ էին։

Երկու ժամ ժամանակ տի տաճիկ պատիրակներին, որ անձնատուր լինեն։ Նրանք գունատ, բայց ուշադրութեամբ լսեցին ինձ ու հեռացան։

Բանակցութիւնը վարում էի ռուսերէն լեզուով։ Թարգմանս Լևոն Արամեանն էր։ Տեսանք ինչպէս բարձրացան բերդի գլուխը և, ի զարմանս մեր, ամբոխը շտապ ցած իջաւ։ Մօտ 350 տղամարդ և 100 կին անձնատուր եղան։

Առանց երկար կանգ առնելու, շարունակեցինք մեր ճանապարհը։

Մտանք հայկական Ալիւր գիւղը։ Ամենուրէք դիակներ, օդը անշնչելի, մորթոտուած կին, երեխայ, անգլուխ մարդկանց դիակներ... Առիւծներ, անգղներ ու ագռաւներ, որոնք կռինչով բարձրանում ու նորից ցած էին իջնում դիակների վրայ...

Երկու պատերազմների եմ մասնակցել, ահաւոր տեսարանների եմ ականատես եղել, բայց նմանը չէի տեսել։

Համազասպն իր ձիաւորներով մեզանից շուտ էր մտել գիւղը և խօսում էր տաճիկ սպայի հագուստ կրող մի երիտասարդի հետ։ Մօտեցայ, անչափ գեղեցիկ էր սպան, շատ մաքուր հագնուած, կարծես թէ պարերեկոյի համար էր այդքան մաքուր և ճաշակով հագնուել։ Մի ձեռքից սպիտակ ձեռնոցը հանած, շարունակ շտկում էր իր մի աչքին դրած մոնոկլը (միաչքանի ակնոց)։ Համազասպը սպային ներկայացրեց։

Անսխալ և առանց ակցենտի ֆրանսերէն էր խօսում։ Ցայտնեց, թէ ինչ միսիայով էր այդտեղ մեն-մենակ մնացել։ Խօսում էր հանգիստ, ժպտալով, փորձում էր նոյնիսկ սրախօսութեան ձև տալ մեր զրոյցին։

Զուշացաւ յայտնել ինձ, որ բախտաւոր է ֆրանսիախօս մի ռուս սպայի հետ բարեկամանալու առթիւ։

Մի շատ անհրաժեշտ հարցի առթիւ տեղեկութիւններ տուեց. ձայնը ցածրացնելով և ուղղելով մօնօկլը, ինձ ասաց, թէ ինչ տաճկական ուժեր են գտնւում լճի ափին և որտեղ։

Յանկարծ մազերը թափթփուած մի կին, վայ, վայ անելով, Յիսուս-Քրիստոս ասելով, վազելով, գետին ընկնելով և նորից բարձրանալով մօտեցաւ մեզ։ Գեղեցիկ սպան, որ ժպտում էր շարունակ, ակնոցն ուղղելով՝ ծիծաղեց այդ տեսարանի վրայ։

Հայուհի էր, բայց նկատելով գեղեցիկ «ջենտլմեն»ին, ճչաց ու յետ փախաւ։ Տղերքը կանգնեցրին նրան ու յետ բերին։ Նա չէր կարողանում խօսել, մատով ցոյց տուեց պատահաբար կանգուն մնացած մի տուն, որի շուրջ փլատակներ էին միայն։

Ես լուռ նայում էի գեղեցիկ սպայի երեսին, որը յանկարծ գունատուեց։ Համազասպը մի քանի զինուորների հետ միասին վազեց դէպի այդ տունը։ Մի քանի րոպէ անցած, գլուխը բռնած, այլայլուած դուրս պրծաւ այնտեղից և դողալով յառաջացաւ մեր կողմը։ Այդ միջոցին ես հետաքրքրւում էի տաճիկի միսիայով, այնտեղ մնալով, հարցեր էի տալիս նրան ու պատասխան ստանում։

Այդ կնոջ մատնացոյց արած բնակարանում Համազասպը գտել էր 12—13 աղջիկներ լացի ու դողի մէջ... Մօնօկլ կրող տաճիկ սպայի հարեմն էր այդ...

Այստեղ-այնտեղ, տներում, մեր զինուորները 7—8 տաճիկ զինուորներ էին բռնել։ Նոյնչափ քրդեր ու չերքեզներ, բոլորը լաւ զինուած, բայց նրանք չէին կրակել մերոնց վրայ։ Տաճիկ սպան էր հրամայել, որ չկրակեն մեզ վրայ։

Առիւծ Աւագի առաջնորդութեամբ շարժուեցինք դէպի Զէյվայ, ուր թրքական ոյժերի հանդիպեցինք։ Իրիկնադէմին էր, երբ հասանք այնտեղ. շրջապատեցինք գիւղն ու մնացինք դիրքերում՝ մինչև առաւօտ։ Աննման, գեղեցիկ, տաք գիշեր էր, երկինքը պարզ, աստղերը փայլում էին անշնչացած, ամայի դարձած հայոց աշխարհի վրայ։

Առաւօտեան շուտ սկսեցինք յարձակողականը։ Մայիսի 5-ն էր, համազարկ տինք ու առաջ շարժուեցինք։ Դեռ համարեա մութ էր։ Կապ պահող կողակներից 3 հոգի ուղարկեցի զօրավարի մօտ, նրան համոզելու՝ որ գէթ 1—2 թնդանօթ

տրամադրի։ Պատասխանը մոտ 8 ժամից յետոյ ստացայ, այն էլ բացասական։ Արդէն լաւ լոյս էր։ Զօրավարը խօսք էր տուել, որ օգնութեան կը գայ միայն այն ժամանակ, երբ մենք մեծ դժուարութիւնների մէջ կընկնենք։

Մօտ մի գումարտակ տաճիկ ոյժեր կային այնտեղ, թէև ոչ լրիւ, ըստ Ալիւրում «մեր բարեկամ» տաճիկ սպայի տուած տեղեկութիւնների, մնացածը լեզգիներ էին։ Հարիւրից աւելի տուն կար Զէյվայում։

Մինչև կէսօր չկարողացանք թշնամուն հանել իր դիրքերից, բայց ժամը 3-ի մօտ դիրքերից փախչողներ երևացին, վիրաւորնե՞ր էին, թէ սարսափից փախուստ տուող զինուորներ,— դժուար էր որոշել։

Ժամը 5-ի մօտ դիրքերը թողնողների թիւն աճեց։

Զօրավարին մի գրութիւն յղեցի, խնդրելով որ օգնութեան գայ միայն 2 թնդանօթով։

Ժամը 7-ին դիրքերը սևացան փախստականներով։ Կրնկակոխ հետապնդեցինք նրանց ու գիւղը մտանք, որտեղ մօտ մէկ ժամ տներում պատսպարուածների հետ կռուելուց յետոյ, մեր յաղթանակը լրացրինք։

Արևը մայր էր մտնում, երբ թշնամի վերջին գնդակի ձայնը անցաւ մեր գլխի վրայից։ Վիրաւոր չգտանք, նրանց կանանցից տեղեկացանք, որ իրենք էին կոտորել իրենց վիրաւորներին (նորից և նորից պատերազմի դաժան օրէնք)։ Մօտ 500 կին ու երեխայ յանձնեցին մեզ, որոնց հետ նոյն գիշերը ճանապարհեցինք Վան։

Միւս օրն առաւօտեան ճանապարհ ընկանք Վան, մեզ հետ տանելով Զէյվայի կռում ընկած մեր նահատակների դիակները (27 հոգի) և մօտ 90 վիրաւոր։ Վիրաւորուել էին նաև 2 կոզակներ։

Մեզ ընդառաջ էին եկել Արամ փաշան՝ մի մեծ բազմութեան հետ։

Վան մնացինք միայն 2 օր։ Դրօն ու Քեռին այնտեղ չէին։ Մեր Վան մտնելու օրը նրանք իրենց խմբերով, Զօր. Նիկոլաևի կարգադրութեամբ ու հրամանով անցել էին Ռատան։ Երկու օր մնալով Վանում, մենք հետևեցինք նրանց՝ նոյն ուղղութեամբ։

Ոստան հասանք հենց նոյն օրը իրականադէմին։ Դրօն այնտեղ չէր։

Նա անցել էր Շատախ, իսկ մենք շարժուեցինք երկու, Համազասպի ու Քեռիի խմբերով դէպի Ախթամար, Սուրբ Յակոբ ու Սորփի ուղղութեամբ։

Դրօյին միայն 4 ամիս յետոյ պատահեցի, Նորէն Երևանում։

Իրերի բերմամբ, մենք զանազան ճակատներում կուեցինք։ Վասպուրականում էլ իրար չպատահեցինք։

Դրօն սիրում էր երգը, ինքը չէր երգում։ Ես նրան ոչ երգելիս եմ տեսել, ոչ էլ շշուացնելիս։ Տարօրինակ էր այն, որ նա գերադասում էր Թուրքերէն երգուած երգերը, մեղեդիները, մեր Ղարաբաղի «Սեդահներ»ը, «Զարգահներ»ը և կարճ երգուած Սեօլլա Բիրգեօրում»ը և մանաւանդ «Ախշամ օլդի վայ հէյ»ը։ Երբ որ այս վերջին մեղեդին երգէին նրա մօտ, անպատճառ կը խնդրէր, կը պահանջէր որ կրկնեն։ Մանաւանդ երբ թառ նւագող կար։

Մի դրւագ նորից Դրօյի մասին, նրա անմահ մահուան առթիւ և դրանով էլ վերջ կը տամ իմ յուշերին, հայ մեծ ռազմիկի, աննման մարտիկի, յաւիտենականութիւնն անցած, մեզ անհունօրէն տխրութեան և յուսահատութեան մատնած Դրօյի մասին, քանի որ դժուար է թւում ինձ, որ կարողանանք նրան փոխարինել մօտ ապագայում, մի ուրիշ նոր Դրօյով։

Դրօյին «Մեղադրում» են, որ նա եղաւ «Մաուզերիզմի» հիմնադիրը։

Այդ մի բանը, որ Դրօն էր «Մաուզերիզմի» հիմնադիրը, ճիշտ է, կատարելապէս ճիշտ։ Ես էլ եմ Դրօյի ընկերն ու երկրպագուն, յայտարարում ու հաստատում եմ, որ Դրօն էր, որ կովկասահայութեան, խոր մրափի մէջ ընկած շրջանում, «Մաուզերիզմ»ը հիմնադրեց։ Ահա թէ ինչպէս եղաւ այդ, ինչո՞ւ Դրօն «Մաուզերիստ» դարձաւ։

Ձեզ բոլորիդ էլ՝ զէնք չսիրող, զէնքի արժեքը ժխտողներիդ յայտնի է, որ մեր դժբախտութիւնը, մեր կորուստները, մեր ամենաարժէքաւոր մասսայի — հայ գիւղացիութեան վախկոտութեան կամ այլ պատճառների շպիտի վերագրել, այլ գերբազանցօրէն ներքին այն պատճառներին, որոնք են՝ զէնք չսիրելը, զէնքի արժէքը ժխտելը։

Մենք դժբախտացանք, թանկագին, անփոխարինելի կորուստներ ունեցանք։

Գոյության կռիվը հիմնված է միայն զէնքի վրայ, այլ ոչ թէ մորալի, շիտակության, մարդասիրության, արդարության սկզբունքների վրայ։

Ինքը Արարիչ—Աստվածն իր բոլոր ստեղծածներին և՛ աստուններին և՛ անաստուններին դինել է ինքնապաշտպանության զէնքով։

Ցոյց տէք, որ Արարչի մի որևէ ստեղծագործութիւն զրկված լինի ինքնապաշտպանության զէնքից կամ հնարաւորությունից և այն ժամանակ միայն դատապարտեցէք մեզ, մեր արտայայտած կարծիքի համար, որ գերազանցօրէն Դրօյինն է միևնոյն ժամանակ։

Ուրեմն, բոլոր ժողովուրդներն ու Արարչի ստեղծածներն ինքնապաշտպանության համար զինված են, գոյության կռվի մէջ։

Եթէ մեր միջից, մեր ժողովրդի ծոցից յանկարծ, անսպասելիօրէն, ծնունդ է առնում մի այլ օրէնքի, այլ ապրումների տէր մարդ, առանց կանգ առնելու, առանց «երկարբարակ» մտածելու, առանց խղճի խայթ զգալու, շտապում ենք նորածինի համար նոր տիտղոսներ, նոր ընդունելի ու անընդունելի կոչումներ ու որակումներ տալ, և եթէ սիրտ հովացնող մի դարձուածք չենք գտնում, գոնէ «Մաուզերիստ» բացագանչությունով մեզ, անպէտքներիս մխիթարում ենք։

Ուրեմն՝ Ֆրանսիան որովհետև զինված է լեբէլ հրացանով — լեբէլիստի, կամ լեբէլիզմով։ Գերմանիան մաուզերիստ, որովհետև զինված է մաուզեր հրացանով։ Աստրօ — Հունգարիան Մանլիխերիստ և Ռուսաստանը Մօսինով, այսինքն, մօսինիստ, մօսինիզմով։

Եւ երբ Հայաստանն ու Դրօն համաձայնեցին իրենց համար էլ մի զէնք գտնել գոյության կռվի համար և մաուզեր ատրճանակն ընդունեցին առաջին հերթին, անիրաւ, զէնք չսիրող, զէնքի արժէքը ժխտող հայն ուրիշ բան չգտաւ և մխիթարեց իրեն մեզ համար նոր տիտղոս գտնելով՝ «Մաուզերիստներ»։

Ոճրագործ տարրը անպակաս է բոլոր ժողովուրդների մէջ, լինեն քաղաքակիրթ, հետամնաց թէ վայրենի, որոնք ի չարն

են գործ դնում, կամ գործ ածում իրենց ինքնապաշտպանության համար հնարած կամ ձեռք բերած զէնքը։

Քաղաքակիրթ Անգլիան, առաջին համաշխարհային պատերազմին, միայն Ֆրանսիայում գտնուող իր ոյժերից 144 սպայ և զինուոր դատապարտեց մահուան՝ զէնքը տեղին չգործածելու համար։

Ձեզ՝ ընթերցող, չեմ ուզում յոգնեցնել այս տողերով, այս պատմութիւններով։ Պարտք եմ զգում միայն ասել, թէ գոյութեան կռիւ համար, պետական պատասխանատու մարդիկ, ի՞նչ միջոցների չեն դիմում, ապրեցնելու համար իրենց ժողովուրդը։

Գոյութեան կռիւ համար, Արարիչ Աստուածը, վայրի այծին, կխտարին, անտիլոպին ու նրանց տարբեր ցեղի պատկանողներին երկար ու արագընթաց ոտներ է տուել՝ թշնամուց ազատուելու համար, փղին՝ ծանր, պողպատէ ոտներ՝ կռիվկրտելու համար իր թշնամիներին, օձին՝ թոյն, կովին, ոչխարին, այծին արուճ անելու հնարաւորութիւն, որ կերածը մարսեն մի այլ տեղ։

Անմեղ աղաւնուն, ծիծեռնակին արագընթաց թռիչք կատարելու համար առանձնայատուկ, առանձին ձև ունեցող թևեր։

Մեղուին, ճանճին, մրջունին իսկ, առանձին առանձին ինքնապաշտպանության զէնք՝ թոյներ, խայթեր ու կծոտուկ զէնք։

Աննշան բոյսերին, եթէ նրանք գտնուում են ցուրտ վայրերում իւղոտ, ցրտից պաշտպանող կազմուածք, տաք տեղի բոյսերին՝ լայնատարած տերևներ, որ շուաք անելով, իրենց կենդանութիւն անելով, իրենց կենդանութիւն տուող գեռնի խոնաւութիւնը կարելին չափ երկար պահեն։

Քարերին իսկ, որոնք սառնամանիք տեղեր են գտնուում, ծածկում է մամուռով, իրենց կեանքը երկարացնելու համար։

Մարդուն էլ խելք է տուել արարչագործութիւնը, որ մտածի իր գոյութեան համար, սև օրուայ համար՝ համաճարակներից, ցրտից ու տաքից ապահովուելու համար և մանաւանդ իրեն նմաններից՝ գազանաբարոյ մարդ-արարածից անկախ, ազատ ապրելու համար։ Քանի որ մարդը ամենակարողն է,

ամենագիտունը — համարձակում է նոյնիսկ իրեն փնտռտուքների մէջ, մրցել հենց իրեն ստեղծող, իրեն պատկերի նման Արարիչ-Աստուծոյ հետ և Աստուած զգոյշ է նրա վերաբերմամբ։

Եւ փնտռտուքների ճանապարհին մարդը գտաւ մինչև աթոմիք ոյժին, ջրածնային ոյժին և տուն քանդող, տուն փոշիացնող քոբալթի գիւտին և դեռ նորից փնտռտուքների մէջ է, ով է իմանում, վաղը ինչ պիտի գտնի։

Բայց այդ բոլորը գտնելուց յետոյ, նա նորից փնտռտուքների մէջ է, իր գոյութիւնը պաշտպանելու համար, նոր և նոր զէնքեր է հնարում նոր միջոցներ խորհում։

Եւ այս իրողութիւնները չտեսնողներն ու տեսնել չուզողները՝ Դրօյին ու նրա գաղափարակիցներին անւանել են մաուզերիստ։

Դրօն անմահ է և անմահ էլ մնում է մեր սրտերում, մեր պատմութեան մէջ։

Եւ իրօք խելագար, խոհեմութիւնից ու զգացմունքներից զուրկ, դահճապետներ փառաբանող ու պաշտող, նրանցից միայն փրկութիւն հայցող ու սպասող «հայ» հատուածին, չի յաջողուի հանել մեր սրտից յաւիտենականութեան անցած, անմահ Դրօյին ու Դրօյականներին։

1905 թ. Մայիսի վերջերին կովկասահայութիւնը մի Դրոյեադա ապրեց, մի ժամանակաշրջան, որի օրհնեալ անունը — Դրոյեադա կնքեց։

Այդ Դրոյեադան շարունակեց ու ապրեց նաև այն շրջանում, երբ հայ հայրենիքի դռները փակեցին մեր առաջ, բայց դրոյեադան մնաց ու մնաց։

Մնաց մինչև այսօր էլ, կը մնայ նաև վաղը, նոյնիսկ մինչև աշխարհի վախճանը, և այդ վախճանից յետոյ էլ։

Յարգա՜նք, բիւր յարգա՜նք քո յիշատակին։

Անմահ Դրո, հայ մօրից, հայ հողից, Մասիսի ստորոտներում ծնուած, Մայր Արաքսի սուրբ ջրերում մկրտուած Դրո. հայի դարդերով ծանրաբեռնուած, ծնուած օրից դէ մինչև մահդ անմահ՝ մեզանից յաւէտ ու անհետ հեռացած Դրո։

Գեղ. ԵԳՈՐ ՏԷՐ-ԱՒԵՏԻՔԵԱՆ

ԴՐՕՆ ԶԱՆԳԵԶՈՒՐՈՒՄ

1919 թ. Ցունիս ամսից Ղարաբաղի ներկայացուցիչներն անընդհատ դիմում էին Երևան Հ. Հ. կառավարության՝ խընդրելով պաշտպանել Ղարաբաղը, Ազերբէյջանի նւաճողական քաղաքականության դէմ։

Ի վերջոյ ազգ. հաս. տրամադրությունների ճնշման հետեվանքով և գաղտնօրէն, Հ. Հ. կառավարությունն Զանգեզուրի միջոցով սկսեց օգնել Ղարաբաղին,— թէ դրամով և թէ զինանպիտական ճամբով։

Հ. Հ. կառավարությունը Դրօյին նշանակում է զինորական հրամանատար Զանգեզուրի բովանդակ ոյժերի, որին ենթարկվում էին նաև զինորական և քաղաքացիական իշխանությունները։

Դրօն մի պատժիչ զօրամասով 1919 թվի վերջերին ուղևորվում է Զանգեզուր. նա, անուղղակի ճանապարհով պիտի օգնէր Ղարաբաղի ժողովրդին։ Իր հերթին Ազերբէյջանի կառավարությունը արտակարգ միջոցառումներով ուժեղացնում է իր ռազմական ոյժերը Ղարաբաղում։

Դրօն իր սպայակոյտով գտնվում էր Գորիսում և հետևում Ղարաբաղում զարգացող քաղաքական դէպքերին...

Հ. Յ. Դ. Բիւրոյի կողմից նշանակված «արտակարգ գործերով ղեկավար Արսէն Միքայէլեանը կապ է հաստատում Դրօյի հետ և պարբերաբար, սուրհանդակների միջոցով, տեղեկություններ է հաղորդում նրան։ Դրօն գիտէր, որ պատրաստ չէ գործօն կերպով Ղարաբաղում ռազմական գործողությունների գիմելու որովհետև ո՛չ համապատասխան կազմակերպություն կար ոչ էլ զէնք ու ռազմամթերք։

Դրօն իր նամակների մէջ Ա. Միքայէլեանին գրում և խստիվ հրահանգում է, ո՛չ մի դէպքում նախայարձակ չլինել, զգուշությամբ կազմակերպել տեղական ոյժերը և սպասել, իսկ եթէ Ազերբէյջանի ուժերը յարձակման անցնեն դաշտավայրում գտնվող ժողովրդին տեղափոխել լեռնային մասը և զբաղվել միայն և միայն ժողովրդի ինքնապաշտպանությամբ, մինչև որ ինքը գնայ Երևան, կառավարությունից զէնք և ռազմամթերք ստանայ ու փոխադրի Ղարաբաղ։

Փետրվար 14-ին, 1920 թ., Դրօն և Զ.-ն մեկնեցին Երևան։

Փետրուար 19-ին, 5-օրեայ ճամփորդութիւնից յետոյ հասանք Երևան։ Այստեղ ես լաւապէս ճանաչեցի Դրօյին, այդ երկաթէ մարդուն։

Փետրուարի 22-ին Նախարարների խորհրդին ներկայացրինք մեր զեկոյցը Զանգեզուրի և Ղարաբաղի քաղաքական ու ռազմական կացութեան մասին և շնչուեցինք, որ անխուսափելիօրէն գարնանը խոշոր դէպքեր տեղի կունենան Ղարաբաղում։ Դրօյի կողմից պահանջ դրեց՝ զէնքեր և փամփուշտ առաքել Զանգեզուրի և Ղարաբաղի համար։

Դրօն յայտարարեց, որ ինքը գիտի գաղտնի մի պահեստ Քաւ:աքեռում՝ ուր «սև օրւայ համար» պահւում է կէս միլիոն Մոսինի փամփուշտ։ Դրօյին թոյլատրուեց բացել այդ պահեստը և փամփուշտները փոխադրել Զանգեզուրի և Ղարաբաղի ռազմական պէտքերի համար։ Դրօն անմիջապէս գործի անցաւ, հայթայթեց փոխադրական միջոցներ և առաջին հերթին 200,000 փամփուշտ փոխադրեց Նոր-Բայազէդ, որտեղից հնարաւոր չէր փոխադրութիւնը շարունակել սայլերով, որովհետև ձիւնի խոր շերտը, որ հասնում էր 1 մետրի և Սէլիմ-Գեադուկի փակւած լինելը, փոխադրութիւնը դէպի Դարալագեազ, դարձնում էին անհնարին։

Դրօյի կարգադրութեամբ, ինչպէս և Նոր-Բայազէդի իշխանութեան որոշմամբ յայտարարուեց պարտադիր աշխատանք։ Իւրաքանչիւր քաղաքացի պարտաւոր էր մէկ թիթեղեայ արկղ փամփուշտ շալակով տանել Սէլիմ-Գեադուկ լեռը և յանձնել Քարագլուխ գիւղի պահեստը՝ ստանալով համապատասխան ստացական։ Այսպիսով, 200,000 փամփուշտ փոխադրուեց Դարալագեազ, որտեղից Զանգեզուր գնացող կարաւանը աննախընթաց դժուարութիւններով, փամփուշտները փոխադրեց Գորիսի պահեստը։

Սուլմալուում քրդերի հետ տեղի ունեցած կռիւների պատճառով՝ Դրօն Զանգեզուր հասաւ հազիւ Ապրիլի 10-ին, ուր իմացաւ, Շուշի քաղաքի հայոց հետ պատահած աղէտի մասին։

Հասնելով Զանգեզուր, Դրօն ձեռնարկեց նրա ինքնապաշտպանութիւնը կազմակերպելու գործին, Առաջին հերթին իր զօրամասով շարժւեց դէպի Ջուլ մեծ գիւղը, որտեղ հաւաքւել էին մեծ թւով թաթարական զինւած ուժեր, որոնք զբաղ-

ւած էին Հայ գիւղերի թալանով ու սպանութիւններով։ Դրօն որոշեց ոչնչացնել Նախիջևանցի թաթարների համար ռազմարշաւական մեծ յենակ ծառայող այդ կէտը։ Մի քանի օրուայ ուժեղ դիմադրութիւնից յետոյ, թաթար ոյժերը պարտուեցին ու փախան դէպի Նախիջևան, Դրօյի զօրամասերը փախչողներին հետապնդեցին մինչև Նախիջևանի մօտերքը։

Դրօն ուզում էր գրաւել նաև Նախիջևանը, սակայն Երևանից ո՛չ մի պատասխան չստացաւ այդ առաջարկի մասին։

Նախիջևանի ղեկավար խաները նախազգալով քաղաքի անկումն և նրա հետևանքով իրենց համար ստեղծուելիք ծանր ողբերգական վիճակը, մի պատգամաւորութիւն ուղարկեցին Երևան գնդապետ Քերբալի խանի գլխաւորութեամբ Հ. Հ. կառավարութեան հետ բանակցելու՝ Հայաստանի իշխանութեան ենթարկուելու մասին։ Ի վերջոյ Հայաստանի ղին. նախարարից մի հրաման յղուեց ըստ որում, Դրօյի զօրամասը ուր որ գտնուում է, այնտեղ էլ պիտի կանգ առնի։ Դադարեցուեցին ռազմական գործողութիւնները։

Ալ. ԱՇԽԱՏՈՒՆԻ

ԿՈԼՈԼԱԿ

(Անմահ Դրօյի յիշատակին)

Հայ Ց. Դաշնակցութեան շարքերը՝ հին սերունդից նօսրանում են։ Դեռ երէկ էր, երբ հողին յանձնեցինք ընկ. Հ. Տէր-տէրեանին, և խմբապետ հայդուկ Մուշեղին։ Իսկ այսօր, չկայ այլևս անմահ, աննման Դրօն։ Անողոք հիւանդութիւնն նրան էլ զգետնեց։

Ճիշտ է, հայ ժողովուրդն ընդունակ է եղել Դրօներ ծնելու, բայց, այս մէկի տեղը՝ երկար ժամանակ բաց պիտի մնայ։ Նա ծնուել էր հազար երկունքով, լուսաշող արևի տակ։ Մասիսի ստորոտին, իսկ անշնչացաւ հեռաւոր Ամերիկայում։

Յանդուգն էր, թիկնեղ, և ազդեցիկ հայեացքով, բայց փըխրուն սրտի տէր։ Գործի ժամանակ խիստ էր, պահանջկոտ, բայց ընկերական յարաբերութիւնների մէջ՝ մտերիմ։

Նա ծնել էր հայդուկ, առաջնորդ և ղեկավար լինելու համար, այդ բխում էր իր ներքին էությունից նա «խաղաղ» մարդ չէր, այլ գործի։ Իր ահաբեկումները, յատկապէս հայատեաց և հայակեր նակաշիձէների վրայ, իր ժողովրդականությունը շատ բարձրացրին։

Այնտեղ, ուր հայի կեանքը սպառնալիքի տակ էր, այնտեղ էր Դրօն՝ իր խիզախ կորովի յանդգնությեամբ, առաջին նետուողը, կազմակերպողը։

Այդպէս էր նա հայ թրքական ընդհարումների ժամանակ. այդպէս էր նա մեծ պատերազմին՝ կամաւորական բանակի մէջ և այդպէս էր նա երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ, երբ նրա շնորհիւ՝ Գերմանիայի սպառնալիքի տակ գտնուող հարիւր հազարաւոր հայերի կեանքը փրկուեց։

Եւ այդ օրերին, գտնվեցին հայ անունը արժանօրէն կրող անձինք, որոնք ոգի ի բռի կեղծ նկարներ հրատարակելով, ուզեցին արատաւորել մեծ հայի պայծառ դէմքը։

Մեծ դէմք, մեծ հայ, կորովի և տաղանդաւոր առաջնորդ՝ Դրօն իր ազգային պարտքը կատարեց և պատմությունը կը գնահատի նրան ըստ արժանւոյն։ Նա բնաւորությեամբ անհանգիստ էր մէկ տեղ նստել չէր կարող. կարօտ էր գործի, ծարաւի էր կենդանի գործի։

* * *

1947 թիւն էր։ Պատահմամբ ընկերոջս հետ գտնուում էինք Կահիրէ, այնտեղ էր նաև Դրօն։ Նա ցանկացաւ մեզ հետ տեսնուել և մի օր երբ բոլորը հանգստանում էին, նա երկուսիս կանչեց իր մօտ, պառկած էր, մեզ ընդունեց ժպիտը դէմքին, առաջին անգամն էի նրան տեսնում, անձնապէս ծանօթ չէի։

— Հը, դէ պատմէք տեսնեմ, ինչ կայ Ձեզ մօտ։ Եւ մենք ինչ որ գիտէինք պատմեցինք նրան։

Նրան հանգիստ էր պէտք, ուստի 15 րոպէից դուրս եկանք նրա սենեակից՝ թողնելով նրան մենակ իր խոկումների հետ։ Պիտի ասեմ, որ մի խնդրի կապակցությեամբ նա դժգոհ էր ինձնից։ Այդ իմ հոգու վրայ շատ վատ էր ազդում։

Սակայն երբ նրան ուի անհրաժեշտ բացատրությունները, նրա դէմքը բացուեց, գժգոհությունն անցաւ, աւելի մօտեցաւ

ինձ, շատ խօսքեր ասաց, խրատներ տուեց և հայրական գորովանքով ականջներս քաշելով ասաց.

— Գնա՛ և մեղքդ քաւիր, անելիք շատ ունենք։ Դաշնակցութիւնը այդպես է, գիտէ պատժել և յարգել ընկերներին։

Իմ այն հարցին թէ ինչո՞ւ չի գալիս Իրան, նա պատասխանեց.

— Այդ էլ կը լինի, կը գամ Թեհրան, կուտեմ ձեր յայտնի կոլոլակը (քուֆթա) և յետոյ կը շենք դէպի մեր հայրենիքը։

Սիրելի ընկ. Դրօ, դու չկաս այսօր, բայց դեռևս ականջիս հնչում է քո կախարդական խօսքերը՝

«Կոլոլակ կուտենք և կը շենք դէպի մեր հայրենիքը»։

Երանի այն ընկերներին, որոնք քեզնից իրենց վերջին կարօտն առան։

Սիրելի Դրօ, հեռից հեռու հոգեպէս քո շիրմին այցի ենք գալիս և շրթունքներս հպում քեզ ծածկող հողակոյտին կրկին երդուելով, որ քո լուսաշող ճամբով պիտի քայլենք մինչև վերջ։

Մի գեղեցիկ օր քո աճիւններդ, որոնք սրբացել են մեզ համար, կը տանենք մայր հայրենիք յանձնելու հողին՝ Մասիսի հովանու տակ քո յաւիտենական հանգիստը ապահովելու համար։

ԱՍՏՂՈՒՆԻ

ՆՆՋԵՑ ԴՐՕՆ, ԲԱՅՑ ՅԱՒԻՏ ԱՆՄԱՀ Է ԴՐՕՆ

Անագորոյն մահն եկաւ ու ամենից քաջարի, ամբողջ հայութեան համար այլևս դիւցազնացած զօր. Դրօյին առաւ ու տարաւ. սակայն Դրօն այն անմահներից է, որ իր անձնէր ու բեղուն գործերով միշտ կենդանի պիտի մնայ հայութեան սրտում սերնդէ-սերունդ։

Դրօյի շքեղ ու պայծառ անունը հայոց արիւնոտ պատմութեան ծալքերում ոսկէ տառերով պիտի գրի. նրա գործը լուսաշող ճառագայթներով պիտի առաջնորդի ապագայ սերնդին դէպի լաւն ու գեղեցիկը։

Դրօն հայոց Արարատեան բնաշխարհի ճակատի (Սիւրմալու) գաւառի ծնունդն է. այն գաւառի, որտեղից եկած ու ան-

ցած են զուլումի զոհերը, «խայ»երն ու որդեկորոյս մայրերը, «փշուր ըմ խացի» կարօտ, մերկ ու բոկոտն, թալանված ու բզկտված հայորդիները։

Դրօն դեռևս իր մանուկ օրերից շատ ու շատ անգամ տեսաւ ու լսեց զուլումի աշխարհից փախստական, ազատութեան ճամբայ որոնող արիունլայ հայ գաղթականների հեծեծանքները։

Այդ պայմաններում կազմակերպեց Դրօյի վրիժառու կամքն ու կորովը. նրանց հառաչանքներից ծլեց ու զօրացաւ Դրօյի անվախ սիրտը։ Այդ իսկ պատճառով նրա՝ ըմբոստ ու բողոքող ոգու համար նեղ էր, անտանելի դպրոցական կեանքը։ Դրօն օր առաջ շտապում է պայքարի դաշտն իջնել։ Հազիւ գիմնազիոնի 4-րդ դասարանը հասած, նեռւում է դէպի փշալից ճամբարներ. պատանի օրերից անդամագրւում է Հ. Յ. Դաշնակցութեան և դառնում ուխտեալ, վրիժառու, հաւատարիմ, քաջ ու հմուտ զինուոր։

Դրօն մտնում է զինուորական դպրոց, սակայն նա ևս կիսատ թողնելով, մեկնում է Կովկաս, ծառայելու իր ժողովրդին։

Դրօն Հ. Յ. Դաշնակցութեան կարգադրութեամբ 1903—1905 թւերի եկեղեցական կալւածների գրաւման և հայ-թաթարական կռիւների օրերին, ուրիշ նոյնքան քաջ ու պաշտելի ընկերների հետ ու նրանց գործակցութեամբ, կատարեց մի շարք կառավարական պարտօնեաների և յեղափոխութեան թշնամիների ահաբեկումները։ Այդ շրջանին էր, որ ահաբեկեցին Գանձակի փոխ նահանգապետ Անդրէևը, Իգդիրի գաւառապետ Բոգոսլաւսկին, Կարսի ժանդարմական թարգման Գրողտովը, Շուշիի ոստիկանապետ Սախալովը և հարկային տեսուչ Շչերբակովը, Գուրիայի ջարդարար զօր. Ալիխանովը և որ գլխաւորն է Բագուի նահանգապետ իշխան Նակաշիձէն՝ Բագուի հայոց ջարդերի գլխաւոր պատասխանատուն, որի ահաբեկումով Դրօն դարձաւ՝ հայ ժողովրդի պաշտելի քաջերից մէկը։ Եւ այսպէս ուրիշ շատ ահաբեկումների մէջ, Դրօն իր քաջարի և հմուտ մասնակցութիւնը բերեց որպէս առաջին կարգի փորձ ու խիզախ ահաբեկիչ։

Եկեղեցական կալւածների գրաւման, և հայ-թաթարական կռիւների տարիներին, հայ ժողովրդի արդար իրաւունքները և

նրա՝ ֆիզիքական գոյությունը պաշտպանողների շարքում, որպէս հարուածող բռունցք, Նիկոլ Դուման, Դաշնակցական խէշոնների, Սաքոնների, Մուրադների և այլ անման քաջերի հետ Դրօն կանգնած էր առաջին դիրքերում։

Սհա նման հերոսական գործերի հետևանքով էր, որ ցարական կառավարությունը, Լժինի դատավարության օրերին, շատ հետապնդեց ահաբեկիչ Դրօյին, որևէ ստոյգ մահուան դատապարտեալ տեռորիստ, սակայն Դրօն արհամարհեց ոստիկանության սպառնալիքները և նրաց սինների արանքից թռիչք գործեց ու անցաւ Արևմտեան Հայաստան, այնտեղ Սուրէն ծածկանունով հայ ժողովրդին ծառայելու նպատակով։

Առաջին մեծ պատերազմն սկսած է. Արևմտեան Հայաստանից աղեկտուր հառաչանքներ են լսւում։ Նրանց օգնության փութալու նպատակով Արևելեան Հայաստանում, ցարական կառավարության գիտությամբ, հայկ. առանձին կամաւորական գումարտակներ են կազմուած։ Աչքի ընկնող, բոլորից սիրուած, հմուտ ղեկավար ու քաջարի կուռող Դրօն 2-րդ բանակի ընդհանուր հրամանատարն է։ Դրօն էր, որ իր բանակով, առաջինն օգնության հասաւ հերոս վանեցիներին ու հայակեր Ջէլդէթ փաշային փախուստի մատնեց։

1917 թի Հոկտեմբերից ռուս զինուորը Կովկասեան ճակատը թողած շտապեց տուն. իսկ տաճկական բանակը արշաւեց դէպի Կովկաս։ Կովկասի հայությունը բնաջնջելու վտանգի տակ էր։ Անհրաժեշտ է այստեղ նշել, որ երբ Կովկասեան լայնածաւալ ճակատը ռուսական աւելի քան 200 հազարանոց բանակից լքեց, Օսմանեան հսկայ բանակն իր դիմաց միայն հայ ժողովրդին գտաւ։ Բնական է հայկական նորակազմ ու փոքրաթիւ բանակը չպիտի կարողանար ու շատ դժուար էր, միայն լայն ու մեծ ճակատում ուժեղ թշնամու առաջխաղացքը կանգնեցնել։

Այս ահաւոր վտանգը իր ժամանակին և ամենից շուտ զգաց Դրօն և առաջարկեց, առ որ անկ էր, օր առաջ Արևմտեան Հայաստանի ժողովուրդն ու հայկական զօրամասերը յետ քաշել մինչև 1914 թի սահմանը և այնտեղ հարուածող բռունցք կազմել, թշնամու յարձակումին դէմ դնելու համար։ Զօրավար

Նազարբէկեանն ու այլ ռուսական դպրոցի զօրավարներ այս առաջարկին դէմ գնացին, թէև յետոյ զղջացին ու դէպքերն էլ ցոյց տուին, որ Դրօն աւելի հեռատես էր։ Այս անհեռատեսութեան զոհ գնացի և Կարսի բերդը։

Ինչպէս գիտենք տաճկական բանակը Կարսն անցաւ ու եկաւ դէմ առաւ Արարատեան դաշտին և ճակատեց Սարդարաբադի, Աբարանի և Ղարաքիլիսայի դէմ։ Այսպիսով ճակատը շատ փոքրացաւ, Դրօյի պահանջից էլ շատ աւելի և հայկական փոքրաթիւ բանակն ինքն իր մէջ խտացաւ, ամրացաւ և դարձաւ անխորտակելի պատնէշ և տեղին հարուածող բռունցք, որով և թշնամուն ծունկի բերեց Արարատեան ճակատամարտում։

Դրօն Աբարանի ճակատի ընդհանուր հրամանատարն է. ամբողջ բանակը առանձին սիրով ու յարգանքով է կապուած խիզախ, յանդուգն ու հմուտ ռազմագէտ՝ Դրօյի հետ։

Թշնամին մեծ ուժերով Ալեքսանդրապօլից յարձակւում է Աբարանի ճակատի վրայ, այն նպատակով, որ այնտեղից խուժի Արարատեան դաշտը և հայկական աջ ու ձախ թևերի, այսինքն Սարդարաբադի և Ղարաքիլիսայի դիմադրական թափը թուլացնի։

Մայիսի 23-ից սկսուած են ահեղ ճակատամարտերը։ Աբարանի ճակատի հրամանատար Դրօն իր աննման ռազմախաղերով, ոչ միայն թշնամու ահեղ ուժերի յարձակումն է կանգնեցնում, այլև չափազանց մեծ թւով զոհեր է խլում թշնամուց։ Սակայն թշնամին յամառ է և ճիգ է գործ դնում անպայման Աբարաններից Արարատեան դաշտը թափանցել։ Նոյնքան ու աւելի յամառ է Դրօյի ղեկավարած հայկական բանակը։ Դրօն ամէն տեղ է, խրախուսում և ռազմական ոգի է ներշնչում զինուորներին։ Աբարանի ճակատի մասին խօսում եմ որպէս ականատեսի։

Այլևս մահուան կամ ազատութեան վերջին գուպարն է. թշնամին կատաղած, մեծ ուժերով նետւում է դէպի Աբարան.— լուր է ստացւում որ Ալէքսօլից տաճկական նոր զօրամասեր իրենց ուժերին օգնութեան են շտապում։

Դրօն աշալուրջ է. թշնամուն անակնկալի պիտի բերել։ Մայիս 26-ի երեկոյեան շտապ կարգադրութիւն է անում և

խիստ հրաման տալիս։ Մայիս 27-ի լուսաբացին ամբողջ Աբարանի հայկական զորամասը ուժգին հարուածով պիտի թուշի դէպի թշնամին-դէպի Ալեքպօլ։

Իրօք, Մայիս 27-ի վաղ առաւօտից, Արագածի հիւսիսային լանջերից մինչև սպիտակ-լեռնաշղթայի հարաւային փէշերում փռուած Շիրակի դաշտը՝ երկու հակառակորդ բանակները իրար են խառնուած. զէնքերի գոռ թնդիւնից ու շաչիւնից լեռ ու ձոր թնդում են։ Դրօյի կարգադրութեամբ հայոց այրուձին մի քանի կողմերից այլևս թշնամու թիկունքումն է։ Դրօն գլխաւոր բանակն առած Նորաշէն-Արխիվալի գիւղերից առանց նւազ ինչ ընկրկելու արշաւում է դէպի Ալէք-պօլ։ Հայկական բանակի հարուածը ուժգին է ու վճռական։

Ջօրամասից-զօրամաս լսւում է Դրոյի խիստ հրամանները, հայոց քաջե՛ր, յառաջ ու միշտ յառաջ։ Եւ իրօք հայկական բանակը անսահման ոգևորութեամբ, անսալով իր քաջարի հրամանատար Դրօյին՝ մահն արհամարհած նետւում է դէպ յառաջ, դէպի Հայոց Գիւմրին։

Թշնամին հայոց վճռական զարկից շփոթուած խուճապի է մատնում և սկսւում է խառնի խուռն նահանջել։ 27-ի երեկոյեան Դրօյի ղեկավարած հայկական բանակի յաղթութիւնը կատարեալ է. թշնամին շարաշար պարտուած է ու ճակատը լքած։ Մահը՝ հայոց բանակի վճռականութեան առաջ մեռաւ և 500 տարուայ կորսուած ազատութիւնը վերածնեց։

Սարդարապատ, Աբարան ու Ղարաքիլիսա ճակատամարտներում հայկական ամբողջ բանակը յաղթական է, թշնամին ծունկի է եկել, բռնութեան տակ հեծող հայ ժողովուրդն անսահման ցնծութեան մէջ է. 1918 թի Մայիս 28ի յաղթութեամբ վերածնւում է Հայաստանի ազատ, անկախ հանրապետութիւնը։ Ահա թէ ինչու այսօր ու ընդմիշտ հայ ժողովուրդը սերնդէ սերունդ հպարտութեամբ պիտի գոչէ.— Դրոները բերին 500 տարուայ կորսուած ազատութիւնը։ Թէև ֆիզիքապէս մեռան Դրօն ու Դրօները բայց հայոց սրտի մէջ ընդմիշտ կենդանի են ու կապրեն Դրօները։ Դրօյի բազմաթիւ հերոսական գործերից պիտի նշւի և հայ վրացական պատերազմը։ 1918 թի Դեկտեմբերին էր, երբ հայկական բանակը, նորից քաջարի Դրօյի ղեկավարութեամբ յաղթելով վրա-

ցական անհամեմատ աւելի պարենաւորուած, զինուած ու թուով էլ հայկականից երկու անգամ աւելի բանակին, մօտեցաւ Թիֆլիսի դռներին։ Ու Թիֆլիսն ազատուեց շնորհիւ դաշնակիցների միջամտութեան։

Յարգանք քեզ ընդմիշտ անմահ ու պաշտելի Քաջարի Դրո։

Ց. ԱՒ. ՔՀ. ՀԱՀԵԱՆ

ԱՆՎԵՀԵՐ ՌԱԶՄԻԿԸ

Հայ ժողովրդի ամէնաբնտիր զաւակներէն մէկն ալ գերեզման իջաւ։

Խիզախ, յանդուգն, անվեհեր ու անձնուէր հայդուկը՝ Դրօն՝ ոչ ևս է։

Դրո՛... Սուն ու անհանդարտ ռազմիկ մը, որ հայրենիքի ճակատագրական բոլոր վայրկեաններուն ժայռի պէս կեցած էր։ Մեր ազատագրական պատմութեան մէջ միշտ պիտի հանդիպինք իր անբաւիր անուան։ Այս մտաւորական հայդուկը իր զէնքէն անբաժան մնաց։ Օր մը ռազմի դաշտին մէջ, օր մը ցարական հայատեաց գործակալներու պատուհասման գործին մէջ, օր մը պետական մարդու կամ բանագնացի դերին մէջ։ Ամէնուրեք, ո՛ւր որ իր ներկայութիւնը անհրաժեշտ էր։ Հայրենի երկրին մէջ իր անունը կարձագանգեն Հին Պայազիտ, Բագու, Դիատին, Ալաշկերտ, Վան, Շատախ, Տարօն, Սարիղամիշ, Բաշ-Ապարան, Ղարաքաղ, Զանգեզուր, Դարալագեազ, Պէյիւք-Վէտի և այլն։ Հայաստանի Հանրապետութեան անկումէն ետք՝ խորհրդային դժոխք, աքսոր և փախուստ։ Գաղթաշխարհի մէջ դարձեալ պատասխանատու դիրքերու վրայ, յանուն հայ մնացորդացի փրկութեան։ Դուլ ու դադար չունէր, հակառակ իր խախտուած առողջութեան։

Դրօն, որքան ընկերական ու պարզ, սրտաբաց ու կենսուրախ, նոյնքան վճռական էր և անընկճելի գործի ժամանակ։ Կովկասեան բոլոր ժողովուրդներուն մէջ անգամ առասպելական դէմք մըն էր դարձած, պողպատէ բազուկ մը հայ ժողովրդի ցասման խորհրդանիշը։

Ահա քանի մը դրագներ յոյզի ու յոյսի, խանդավառութեան ու յուսաբեկութեան օրերէն, իր անջնջելի անուան հետ կապուած։

* * *

Արարատեան գունդը, Խանասորի Վարդանի հրամանատարութեամբ, 15 Ապրիլ 1915ին, Քանաքեռէն և Երևանէն, անօրինակ ցնծութեան մէջ, ճամբայ ելաւ դէպի Վան։ Իրեն կընկերանային Երկրորդ գունդի հրամանատարներ Դրօ, Արմէն Գարօ, Խէշօ, Երրորդ գունդէն Համազասպ, Եգոր և Վ. Վալադեան, Չորրորդ գունդէն Քեռի, Ջալլադ, Ուսուլ Խէշօ և ուրիշներ։ Հասան Էջմիածին։ Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ Գէորգ Ե. պիտի օրհնէր մեր քաջամարտիկները, որպէսզի իրենց սուրը հատու և բազուկները հուժկու ըլլային։ Ի՜նչ ծաղկեփունջեր ու ովսաննաներ, ի՜նչ յուզիչ տեսարաններ ու կեցցէներ... Մերուկները կարտասուէին, երիտասարդները կը խայտային։

Արարատեան գունդը գիշերը անցուց Էջմիածին։ Երգ ու պար, ցնծութիւն։

Առաւօտեան, Գէորգեան Ճեմարանի հարաւային բակի մէջ կատարուեցաւ դրօշներու օրհնութիւնը։ Այրուձի և հետևակ, զէն ի ձեռին, պատուի էին կեցած, երբ Վեհափառը, շրջապատուած եպիսկոպոսներով և վարդապետներով, յամրաքայլ մօտեցաւ պատուոյ սեղանին, ուր դրօշակիրներն էին կանգնած։ Արարողութիւնը սկսաւ խուռներամ բազմութեան ներկայութեամբ, խորհրդաւոր լռութեան մէջ։ Վեհափառը օրհնեց դրօշակները և հրամանատարներուն ուժ ու կարողութիւն մաղթեց։ Ճեմարանի ուսուցիչներէն Մեսրոպ վրդ. Մաքսուտեան, հռետորական սքանչելի թռիչքով, բարի ճանապարհ մաղթեց Արարատեան գունդին։ Կարծես պատմութիւնը կը կրկնէր, Աւարայրի նոր դաշտ մը կը բացուէր ուրիշ Վարդանի մը առաջնորդութեամբ։ Ո՞վ կրնար համբերել... Մեր արիւնը կեռար։ Մանաւանդ որ սահմանէն անդին, մեր հարազատներու և արիւնակիցներու խողխողման շարագուշակ լուրերը շրջան կ՚ընէին բերնէ բերան։

Կամաւորները շարժեցան դէպի Իգդիր։ Հեռէն, Արարատեան դաշտի մշուշի մէջէն, իրենց երգերը կարձագանգէին մեր ականջներուն մէջ... Անկարելի էր հանգիստ նստիլ և դաս պատրաստել։ Երեք ընկերներ, Հայկակ Քաջունի, Փանոս Գրիգորեան և ես, որոշեցինք ձգել ճեմարանը, կամաւոր գրիլ և «փրկել ազգը»։ Ցուզեցինք վշտացնել մեր այդ օրերու բարի տեսուչը՝ հանրածանօթ գիտնական Ստեփան Մալխասեանը, և առանց թոյլտուութեան փախուստ տուինք։ Տարակոյս չունէինք, որ ընդհանուր հրամանատարը մեզ սիրով պիտի ընդունէր...

Քալելով հասանք Իգդիր և ներկայացանք Վարդանին։

— Հը՛, ճեմարանցինե՛ր, ի՞նչ էք անում այստեղ։

— Պ. Վարդա՛ն, եկեր ենք խնդրելու, որ մեզ ալ կամաւոր արձանագրէք, մենք ալ կուզենք զոհիլ մեր ազգին համար...

Հայրական ակնարկ մը նետեց մեր վրայ և հանդարտ ու անխռով, սկսաւ խրատական մը կարդալ մեր գլխուն այն իմաստով, որ մենք տակաւին «անչափահաս» ենք, «բանակը» մեր տեղը չէ և թէ ուրիշ մարզերու մէջ հետագային շատ աւելի օգտակար պիտի ըլլանք, և այլն, և այլն։ Եւ յորդորեց վերադառնալ էջմիածին։

Գլխիկոր դուրս եկանք և գացինք ներկայացանք Դրօյին։ Ատրճանակը կողքին, փափախը ետ հրած, մօրուքը ցցած, արգոսեան աչքերով կանգնեցաւ մեր առջև։ Դեռ մենք բերան չբացած և խնդրանք չներկայացուցած, սկսաւ մեզ «ռմբակոծել»։

— Ի՞նչ գործ ունիք հոս, մենք բաւական չե՞նք։ Շո՛ւտ, վերադարձէք ճեմարան, աչքիս չերևիք այլևս...

Դրօն պաղ ջուր լեցուց մեր գլխին։ Մենք ինչե՛ր կերևակայէինք... Կը կարծէինք, թէ մեզ «սիրով» պիտի ընդունին և քաջալերեն, թէ մեր օրինակը վարակիչ պիտի ըլլար մեր միւս ընկերներուն համար և ահա՛ կը մատնուէինք յուսախաբութեան։ Եթէ վերադառնայինք, ի՞նչպէս պիտի հեգնէին մեզ մեր ընկերները։

Որոշեցինք յամառօրէն շարունակել մեր դիմումները և

ներկայացանք Վալադ Վալադեանին։ Ան ալ «զորս դու պատ-
ուիրեցիր» լաց մեզ և ցոյց տուաւ էջմիածնի ճամբան։

Քեռիէն ամէնքը կը վախնային իր խստամբեր բնաւորու-
թեան պատճառով։ Բայց չներկայացանք իրեն և գացինք
գտանք Համազասպը։

Մեր դատը այս անգամ «պերճախօս» ձեւով պաշտպանե-
ցինք և կրցանք մեղմել իր ընդիմութիւնը։

— Լա՛ւ, բալանե՛րս, եկէ՛ք, բայց ձի չեմ կրնար տալ։
Մինչև Վան պիտի քալէք։ Ձեզի մէկ-մէկ հրացան ալ կուտամ
քանի մը փամփուշտով, մինչև որ վարժուիք։

Մեր ուխտը կատարուած էր։

* * *

1918 Մարտին, Կարինէն նահանջելով հասած էինք Սա-
րիղամիշ։ Ճակատի ընդհ. հրամանատարն էր զօր Արէշեան,
թոյլ և անշիտ մէկը։ Դասալիքները օրէ օր կը շատնային։ Հա-
կառակ Մուրատի և Սեպուհի կորովի միջամտութեան, անկա-
րելի էր զօրամասերու ռազմական ոգին բարձրացնել և կարգ
կանոն մտցնել։ Կանոնաւոր բանակը կը դառնար անկանոն,
անկանոնը կը դառնար կանոնաւոր։ Օր մը, շուրջ տասը տաս-
նըհինգ հոգի բերին մեր զօրանոցը։ Յանկարծ, Մուրատ և Սե-
պուհ ատրճանակները քաշած գուրս խոյացան։ Սիրտս սկսաւ
տրոփել։ Չըլլա՞յ թէ սպանեն։ Դասալիքներ էին։ Սեպուհ
սկսաւ կրակել ճիշդ իրենց երկու ոտքերուն մէջտեղը, գետնին։
Դեպի-դեղին կտրած էին ամէնքն ալ։ Մահացու էր սարսափը։
Շարք-շարք կանգնեցուցին և հրամայեցին անմիջապէս միա-
նալ իրենց զօրամասերուն։ Ռուս զօրամասերու «դէպի տուն»
նշանաբանը պարարտ գետին էր գտած։ Գերբնական ճիգեր
էին պէտք կասեցնելու համար դէպի տուն նահանջը։ Այդ
տագնապալից օրերուն, Ազգային Խորհուրդին կողմէ ճակատ
էին եկած ընկերներ Ս. Վրացեան և Վ. Նաւասարդեան։ Ապա-
հովութեան Խորհուրդին կողմէ ալ՝ ընկ. Վ. Փափազեան։ Ուրկէ՞
ուր յանկարծ Դրօն մէջտեղ ելաւ իբրև զինուորական կոմիսար։
Իրօք, Դրօն անմիջապէս գործի անցաւ։ Արտակարգ ատեան
մը կազմեցաւ Դրօյի մասնակցութեամբ և երեք խուսվյալ դա-

սարքներ մահան դատապարտեցան։ Դրոյի անունը բերնէ բերան շրջան կընէր և սարսափ կազդէր։

Հետագային, ճակատագրական դէպքեր տեղի պիտի ունենային Սարդարապատի, Ղարաքիլիսէի և Բաշ-Ապարանի մէջ, և Դրոն դարձեալ բախտորոշ դեր պիտի կատարէր։

* * *

Անցան տարիներ, և ի՜նչ տարիներ... Գաղթ, սով, արիւնարցունք։ Եւ ահա՝ Հայաստանի Հանրապետութիւն։ Աւա՜ղ, ոչ երկարատև։ Ինկանք դարձեալ տարագրութեան փոշիներուն մէջ, Հողմացրիւ։

1925 Յունուարին, Փարիզի մէջ տեղի ունեցաւ Հ. Յ. Դ. Ժ. Ընդ. ժողովը։ Ռումինիայէն պատգամաւոր էր եկած նաև Դրոն։ Յաճախ կերթայի քովը։

Մեր պատգամաւորներէն խնդրած էինք հրապարակային զեկուցումներ տալ իրենց շրջանի հայկական «մնացորդաց»ի մասին։ Կարգը եկած էր Դրոյին։ Դեռ «Յառաջ»ը գոյութիւն չունէր, հարկադրուած էինք մասնաւոր յայտարարութիւններ տպագրել։ Գրած էինք, թէ կը խօսի «Զորավար Դրո»... Հազիւ յայտարարութիւնները տպագրած՝ կուզէինք ցրել, չեմ գիտեր ինչ առիթով մօտը գացի և, ի միջի այլոց, ցոյց տուի յայտարարութիւնը։

Արդար զայրոյթով գոռաց երեսիս։

— Գի՞ժ էք դուք, ի՜նչ էք, զորավարս ո՞րն է։ Շո՜ւտ, ջնջեցէք այդ բառը, այլապէս չեմ գար խօսելու։ Ես Դրո եմ և ո՛չ զօրավար։

Իմ բոլոր բացատրութիւններս զուր անցան։ Եւ յայտարարութեան մէջ ջնջեցինք զօրավարը։

Համեստ էր մեր աննման Դրոն, Եւ ո՛վ աւելի իրաւունք ունէր կրելու զինուորական այդ բարձրագոյն աստիճանը, քան ինքը, Բաշ-Ապարանի անվեհեր ռազմիկը։

ՎԱՀԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ

Հ. Յ. Դաշնակցութիւնը մի խորհրդաւոր կազմակերպութեան կերպարանք է ստացած, որովհետև շնորհիւ իր արտասովոր գործունէութեանը, նա դարձած է մի անձնաւորուած, անհատականացած (իբրև միաւոր) նկարագիր։

Մեր՝ ներկայ սերնդի ամենամեծ սխալներից մեկն այն է, որ ամբողջ եօթը տասնեակ տարիներ անօրինակ ինքնամոռացութեամբ, անհաւասար խիզախութեամբ, սովորական տրամաբանութեան չենթարկուող հաւատքի լաւատեսութեամբ, ընկրկելու, յուսահատելու բացարձակապէս անտրամադիր կամքով մեր ցեղի ազատագրութեան, ո՛չ, վերապրելու արիւնոտ ծառայութեանը լծուած այս կուսակցութեան էութիւնը, գործին ու ընթացքին ուղղութիւն տուող ոգին հասկանալու լուրջ փորձեր չկատարեց։ Դա միանգամայն մի համազգային տկարութիւն է։

Անկախ այն բանից, թէ հեռից դիտողներն ի՞նչ եզրակացութիւններ են հանում Դաշնակցութեան այս կամ այն գործից կամ տրամադրութիւնից, մէկ բան արևի պէս պարզ է — այն, որ նա (Հ. Յ. Դ.) անբաժանելիօրէն միս և արիւն է դարձած ողջ հայութեան կեանքին ու խոշոր չափով ընթացք տալ և շարունակում է դեռ տալ նրա առօրեային, անգամ ընդհանուր պատմութեանը, լինի դա քաղաքական, հասարակական, մշակութային թէ կրօնական մարզում։

Սա մի անհարկի կամ անպատեհ արտայայտութիւն չէ իմ կողմից՝ մեր կուսակցութեան անհատականութեանը վերաբերմամբ։ Տեղը չէ մանրամասնութիւնների մէջ մտնելու։ Սուրբը մեր նորագոյն հերոսական շրջանի ամենաարժանաւոր և որոշ բաներում՝ բախտաւորագոյն զաւակներից Դրօն է։

Անկախ իր անհատական—մարդկային արժանիքից, Դրօ Կանայեանը՝ կուսակցօրէն նկարագրային անհատականութեան հասած Հ. Յ. Դաշնակցութեան լաւագոյն ստեղծագործութիւններից մէկն էր, և հէնց դրա համար էլ արժանի է շատ լուրջ ուշադրութեան—յատկապէս մեր՝ սկեպտիկացած, կրքից ցաւալի չափով կուրացած օրերին։

Դրօյի մասին մտածելիս, ասէք բնազդօրէն, միտքս է գալիս Հոմերական Ոդիսևսը։ Իր բնածին ընդունակութիւնը, ար-

կածալի կեանքին հանդէպ ունեցած իր անտարբերութիւնը, փոփոխուող պայմաններն արագօրէն ըմբռնելու և ըստ այնմ իր դիրքը որոշելու իր կարողութիւնը, հասարակաց գաղափարականի համար զոհողութեան առաջ կանգ չառնելու իր վճռականութիւնը, հաւաքական աշխատանքի համար՝ կազմակերպուած քաղաքականութեան հանդէպ ցուցաբերած իր հնազանդութիւնը, մարդկանց ճանաչելու և համապատասխան կերպով նրանց գործի լծելու իր շնորհքը, աստիճանաւորին և ստորադասին, իրենց տեղում, վստահութիւն և հնազանդութիւն պարտադրելու իր հմայքը, և, վերջապէս, ճակատագրական վայրկեանին ուղիղ կերպով մահուան լարուած բիբերի ուղիղ կենտրոնին յառելու իր անայլայլ կեցուածքը, Դրօ Կանայեանին դարձնում են մեր նորագոյն դիւցազնական շրջանի իրապէս վիպական դէմքերից մէկը և դեռ երկար նա կը շարունակէ գնահատուել և սիրուել որպէս այդպիսին. սիրել նրա համար, որ նրա յայտնաբերած առաքինութիւնները ասպետական են և հէնց այդ պատճառով էլ բուռն կերպով աղերս են անում ասպետութեան մէջ մարդկային փրկութիւնն ու յառաջադիմութիւնը փնտռող երիտասարդ սրտերին, մտքերին և երեւակայութեան։

Ես Դրօյին տեսայ ընկերական շրջանակում, ուր նա իր հոգու բուլանդակ թափով ջան էր անում և ջան լսում, առաջ բերելով անխառն, սրտագեղ ոգևորութիւն։ Ես նրան տեսայ Կողբի ճակատի վրայ (նախքան հայ-տաճկական պատերազմը, 1920 թ.), ուր իր անակնկալ երևումը, կիսամերկ ու կիսաքաղց մեր զօրքի մէջ, առաջ բերաւ պաշտամունքի տանող խանդավառութիւն։ Ես նրան տեսայ իր հայրենիքի յարկի տակ, շրջապատուած բարձրագոյն կրթութիւն ստացած և ռազմական փառք վաստակած սպաներով, որոնք ո՛չ միայն սիրում էին նրան, որպէս մարդու, այլև սրտանց, այո՛, անվերապահօրէն արժէք էին տալիս նրա ռազմական կարողութիւններին։ Ես նրան տեսայ Հայաստանի Խորհրդարանի Դաշնակցական Ֆրակցիայի նիստում, ուր նա, Լեռնահայաստանից վերադարձածին, զեկուցում էր իր տեսածների և կատարածների մասին։ Եւ ի՞նչ—այդ ընտրած մտաւորականներն ու քաղաքական գործիչները ունկնդրում էին նրան պատկառան

և գնահատում նրա կշռված, համադրված մտքերը որպէս արժէք։

Հայ-տաճկական պատերազմի (8 Սեպտ. — 18 Նոյ. 1920 թ.) օրերին մօտ լինելով մեր ճակատին (Կարսի) և պանդխտութեան բազմամեայ կարօտը դեռ սրտումս, ես ուշիուշով հետևում էի մեր ճակատների հրամանատարների ռազմավարական ընթացքին։ Մեր բարձր սպայութեան մէկ կարևոր մասը չէր սիրում ժողովրդական խաւերից դուրս եկած, ռազմական արժանիքի հասած, բայց խմբապետ անունով ճանաչուած դասակարգին։ Մենք շատ մեծ վնաս կրեցինք այդ թիւրիմացութիւնից։ Հակառակ այդ ամէնի, սակայն, երբ հարցը վերաբերում էր խմբապետ Դրօյին, անգամ մեր ամենաբարձր սպայութիւնը, զգուշութեամբ էր նրա անունը բերան առնում։ Եւ հէնց այդ թարմ ու յստակ տրամադրութեան տակ, սրանից երեք տասնեակ տարիներ առաջ աշխատասիրած իմ անտիպ «Հայ-տաճկական-պատերազմ» անուն կրող հատորին մէջ արձանագրեցի. «եթէ այդ ճակատագրական օրերին (Հոկտեմբեր, 1920 թ.) Դրօն Կարսում լինէր, թերևս մեր ճակատագիրը մի տարբեր բան դուրս գար»։

* * *

Դեռ շատ է մօտ մեր հերոսական անցեալը, դեռ շատ են սուր մեր տրիբունական կրքերը, դեռ խիստ շատ են մեզ շրջապատող սպառնալից փորձութիւնները՝ առարկայական ակնոցով վերագնահատութեան նիւթ դարձնելու համար մեր երէկի կեանքը, որի մէջ մէկ անգամ էլ, լուսաշող կերպով, վերապրեցին մեր ցեղային առաքինութիւնները, մեր անթեղած կարողութիւնները, մեր անկախ ապրելու արժանիքները։ Շատ ենք մօտ այն օրերին և մեծ մասով դեռ մասը նրանց՝ վայել կերպով ներկայացնելու համար այն, ինչ որ մեր աշխարհն անգամ քիչ տեսաւ՝ իբրև խորք ու իբրև բովանդակութիւն։ Բայց անկասկած է, որ կգայ օրը նաև, երբ մեր պատմութիւնը կը գրի իր պատուաւոր պատանդանին վրայ։ Մինչ այդ սակայն, շմոռանանք միշտ յիշել, որ իմ՝ վերը յիշած

անձնաւորուած, անհատականութեան նկարագիրն ստացած Դաշնակցութեան շարքերից դուրս եկան բազմաթիւ անձնուրացներ, որոնց ինքնամոռացութիւնը բաւական եղաւ, որ իրենք երևան բերէին ասպետական առաքինութիւններ, ցեղային սքանչելի յատկութիւններ, ռազմական ընդունակութիւններ և որ աւելին է՝ Աքիլէսեան դարուն յատուկ ինքնաժխտումով ամբողջապէս խորասուզէին իրենց ցեղի ցաւերի ու երազների մէջ եւ մոմի պէս վառէին անտրտունջ։

Դրօ Կանայեանը Դաշնակցական կուռ շարքերում պահեց իր անհատականութիւնը, ապրեց կուսակցական լոյալութիւնը, երևան բերաւ ռազմական բարձր կարողութիւն և այդ ամէնով՝ արժանացաւ մեր անմահների Պանթէոնին։

ՎԱՀԷ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄԵՐ ՕՐԵՐԻ ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՒԻԹԸ

Երկլեռաշարժով ու փոթորկով աշխարհ եկաւ եւ ձիւնամրրիկով հեռացաւ աշխարհից պայծառ ու անջնջելի հետք թողնելով հայոց երկնակամարում — Դրօն — հայ դիւցազնավէպի հերոսը, նոր ժամանակների Սասունցի Դաւիթը։

Դրօն ոչ ևս է... Մահը միակ բանն էր, որ չէր հաշտուել ու ներել Դրօյին, որ համակ կեանք էր շարժում։ Ասում են՝ «մեռել է», մեզ համար նա ողջ է, ապրում ու շնչում է մեզ հետ, մեր մէջ։ Հայոց պատմութեան համար նա անմահ է։

Մեծութիւններն ու գեղեցկութիւնները տեսնելու, հասկանալու եւ լիովին գնահատելու համար ժամանակ է պէտք եւ որոշ տարածութիւն։ Չէնք կարող տեսնել եւ գնահատել Մասիսի վեհութիւնը նրա ստորոտից։ Հեռացէք նրանից եւ դիտեցէք Քանաքեռի բարձունքից։ Կարո՞ղ եք չարբենալ նրա վեհափառ գեղեցկութեամբ։

Դրօ մարդը դեռ շատ մօտ է, մեր մէջ, մեզ հետ է, մեզ պէս՝ մարդկային երեւոյթով։ Ժամանակ պէտք է անցնի, որպէսզի լիովին տեսանելի լինի ու գնահատուի, որպէս ազգային հերոս՝ իր բազուկի եւ իմացական զօրութեամբ, իբրեւ պատմութիւն կերտող անհատ։

Մարտիկ ծնեց եւ անվախ բազուկով պատուհասեց հրէշաժին նաէաշիձէններին ու Ալիխանովներին, բանակներ վարեց արիւնոտ մարտի դաշտերում, եւ պատմութիւնը նրան արձանագրեց մեծանուն ահաբեկիչների ու հայդուկների շարքին։

Հայդուկն ու ահաբեկիչը, սակայն, դուրս եկաւ մարտիկի նեղ սահմաններից եւ որպէս պետական մարդ էլ, ազգային եւ պետական ուժեղ գիտակցութեամբ ու պայմանների խորաթափանց ըմբռնումով, դարձաւ քաղաքական եզակի մի դէմք։

Իր կեանքի վերջին շրջանում Դրօն արդէն իրաւ առաջնորդ էր իր ժողովրդի եւ իր կուսակցութեան՝ Դամբէտեան իմաստով — «Ես առաջնորդում եմ իմ ժողովորդը, որովհետեւ ես նրա յետեւից եմ գնում»։

Իրական առաջնորդները նրանք չեն, որոնք յոխորտ աղմուկով ամբոխի առջեւից են վազում, իրական առաջնորդը, որպէս հովիւ քաջ, ժողովրդի յետեւից է քայլում՝ միշտ ականջը ժողովրդին ուղղած, ունկնդիր նրա սրտի բաբախումներին եւ մտքի ելեւէջներին՝ ո՛չ իր անձնական փառքի, այլ ժողովրդի բարօրութեան համար։

Դրօն երբեք փառք չփնտռեց — միշտ փառքը վազեց նրա յետեւից։ Երբեք յաջողութիւն չը մուրաց, յաջողութիւնը ընկերացաւ նրան ողջ կեանքում։ Բախտաւոր աստղի տակ էր ծնել Դրօն, եւ հայ ժողովուրդը բախտաւոր է, որ նրա նման զաւակ ունեցաւ։

Պատմութիւնը ժամանակի փոշում կը թաղէ հորիզոնի վրայ փայլփլող շատ անուններ, բայց Դրօյի լուսապայծառ անունը յաւէտ կապրի հայ ժողովրդի հոգում։

Փոթորիկով աշխարհ եկաւ եւ ձիւնամրրիկով հեռացաւ աշխարհից, բայց յաշխարհի էր եւ, կարող ենք ասել, աշխարհ ծանեաւ զնա — հայ նոր դիւցազնավէպի հերոսը, մեր օրերի Սասունցի Դաւիթը — ԴՐՕՆ...

Թեհրան

Ս. ՎՐԱՅԵԱՆ

«Զա՛րկ, երեսուն ջա՛ն...»

(Իր Յուշերից «Վէմ»

Որքա՜ն տարբեր բոլոր անուններից. թէև պարզ, սովորական հայ մարդու անուն։

ԴՐՕ... Առանձի՜ն, մե՜ծ, ամբողջական. ամբողջ մի պատմութիւն։ Անիրաւուած մի փոքր ազգի կեսդարեան արիւնոտ պայքարների խորհրդանշան. պատմութիւն կերտող գագաթներից մէկը. պատմութիւնը իր արիւնով դրողներից մէկը ու մի՛շտ թշնամու դիակների վկայագրութեամբ։

Նեմեզի՜ս... Որքա՜ն իրական ու որքա՜ն ընդհուպ, հարուածը ժամանակին հասցնող։

Նեմեզի՜ս... Օրհնեալ ձեռք։

Զա՛րկ, Դրօ ջա՛ն,

Նակաշիձէ՝ մէկ։

Ալիխանով՝ երկու։

Յետոյ՝ երեք, չորս... Զա՛րկ, Դրօ ջան...

* * *

Նոյն օրերին զարնում է Երևանը, Զանգեզուրը... Եզբայրասպան կռիւ են գցել Հարևանների մէջ... ու տգէտ-գազանաբարոյ Հարևանը կրակը ձեռին ընկել է հայ շէնքերն ու քաղաքները, Զա՛րկ, Երևան ջա՛ն...

* * *

Համաշխարհային առաջին սպանդն է սկսւում... Հայոց պատմութեան ահաւոր պահը... արևմտեան Հայաստանը հոգեվարքի մէջ... Կեանքի ու մահուան օրհասական պայքար վանում... Ու Սպիտակ Ձիաւորը փոթորկի պէս հասնում է Վան. գալիս է ճի՛շտ ժամանակին... Զա՛րկ, Վա՛ն, Վասպուրական ջա՛ն...

Իսկ յետոյ, աւելի ուշ, բովանդակ հայութեան լինել ու մնալու ճակատագրական պահը... Արևը հորիզոնից թեքելու

վրայ է... Պիտի մթնի հայոց աշխարհը... Բորենու տաք շունչը այնքա՜ն մօտ... և սակայն... Չա՜րկ Սարդարաբատ ու... Չա՜րկ Բաշ Աբարան... Չա՜րկ հայ ժողովուրդ...

...Մեր Սուրը լեռան ու քառագագաթ Արագածի երկնակամարում տեսա՞ք բոցերի ու արեան միջից բարձրացող ՄԱՅԻՍ 28ը... Տեսա՞ք հսկաների դէմքերը... ԴՐՕՅԻՆ տեսա՞ք։ Տեսա՞ք իր շալակին Մայիս 28-ի վէմ քարերի խոշորագոյններից մէկը, որ Բաշ Աբարանից Երևան էր տանում...

Օ՜ ԴՐՕ... Ո՞ր գուպարին, ազատագրական պայքարի ո՞ր էջին, հայ ժողովրդի նեղ օրերի ո՞ր ժամին ներկայ չեղար դու քո բոլորանւեր զոհաբերութեամբ։ Օրհնեալ լինի ծնունդդ ու անունդ և փառաւոր անջնջելի յիշատակդ ո՛վ քաջերի մէջ առաջիններից՝ անզուգական ԴՐՕ։

Թեհրան

ԵՐ. ՏԵՏՔԵՍԵԱՆ

ՓՈԽԱՆ ԾԱՂԿԵՊՍԱԿԻ

1914-ին, Առաջին Աշխարհամարտի հետ, Հայոց Աշխարհում կարծես ծագեց Մեծ Երազի լուսացնցուղ այգաբացը։

Մթնոլորտը յագեցել էր ապերասան արբեցումով և արշալուսող Ապագայի բոցավառ յոյսով։ Հայ յեղափոխական համաստեղութեան հսկաները, որոնք լծուել էին խաղաղ ստեղծագործ աշխատանքի, թռղնում էին մաճն ու բրիչը, դաբրինի մուրճը, բահն ու մկրատը պարտէզի, գրիչն ու տետրակը և հապշտապ փութկոտութեամբ վազում էին դէպի մարտադաշտ, որպէս թէ պատերազմի որոտը ռազմահրաւէրի զօղանջն էր։ Աշխարհի չորս ծագերից եկել և Արևմտահայաստանի սահմանի վրայ խմբուել էին արիւնահեղ կռուի մոլեռանդ ուխտաւորները, լուսապսակ ախոյեանները ազատագրական փառապանծ կռիւների։ Կամաւոր էին եկել նաև շարանը հազիւ շափահաս դպրոցականների, որոնց գրասեղանի վրայ դեռ մելանը թաց էր։

Անդրանիկ, Քեռի, Համազասպ, Աւօ, Դաշնակցական Եէրշօ, Իշխան, Վարդան, Սմբատ... կախարդական հոյլը հայ հայդուկային աստեղատան, փառաշուք քուրմերը հայ Յեղա-

փոխութեան տաճարի, իրենց առաքելութեան հմայքով մագնիսել էին արիւնոտ բախումների մէջ թրծուած համայն երիտասարդութիւնը։

Անընմբեր ոգևորութիւնը եռում էր սաստիկ թափով։ Շուտով կազմեցին կամաւորական չորս գունդեր մարտական կարկառուն համբաւների գլխաւորութեամբ։

Այդ լուսաշող դէմքերի մէջ հնչում էր զօրեղ՝ անունը մի երեսնամեայ երիտասարդի, որի արժէքը քչերին էր միայն ծանօթ։

Դա Դրօն էր։

Հանդիպեցի այն ժամանակ անտեղեակների, որոնք ապշանքի և շւարանքի էին մատնւել, որ այս դեռատի և «անփորձ» մարտիկին էր վստահւած ու յանձնւած՝ կամաւորական Բ. գունդի հրամանատարութիւնը, իր ձեռքի տակ ունենալով Արմէն Գարօյի նման հին յեղափոխական մի տիտան և Դաշնակցական խէշոյի նման ճարտար ու յանդուգն մի խմբապետ։

Կային ընկերներ, որ լսել էին իր փայլուն հռչակը, իբրև խիզախ, ճապուկ, արագոտն և հնարագէտ ահաբեկիչ, որի դիպուկ և մահացու հարւածից ազատում չէր ունեցել յեղափոխական դատավճռի ենթարկւած ոչ մի մեղապարտ։

Քսան տարեկանին իսկ, իրեն վերապահւած «գործը» կատարել էր անթերի և անսպասելի ճշտութեամբ։ Հետագայ յատուկ ձեռնարկներում, Դրօն ցուցաբերել էր կազմակերպելու արտակարգ կարողութիւն, դժւարին և անկարելի ժեստեր իրագործելու բացառիկ հմտութիւն և գործողներին վարելու տիրական հեղինակութիւն։ Եւ այս ամենը՝ հոգեզրաւ վեհանձնութեամբ, անմեղների հանդէպ բարեգութ բծախնդրութեամբ և բարոյական բարձր սկզբունքների պաշտպանութեան համար՝ դաժան խստութեամբ։

Քչերը՝ իր զինակիցները և մարտական շարժումի ղեկավարները միայն իմանում էին, որ Դրօն՝ այս վարպետ, յանդուգն ու ձեռներէց ահաբեկիչը, օժտւած էր ռազմավարի ընդոծին ձիրքով։ 1905—6-ի Հայ—Թաթարական կռիւներին, նախ իբրեւ սոսկ զինւոր, բայց շուտով իբրև խմբապետ, Դրօն առարկան դպրաւ զինւորական հանճարեղ ղեկավարներին՝ Նիկոլ Դումանի բարձր գնահատանքին։ Դրօն կարկառուն

մարտիկի և ներհուն ռազմագէտի անուն շահեց։ Նիկոլ Դումանը Դրօյի մէջ նշմարեց ու գտաւ նրբազգաց հոտառութեամբ հետախոյզը, ռազմախաղերի բանիբուն գիտարարը, թշնամու դիտաւորութիւնները նախատեսելու ընդունակ հայդուկը և ճակատամարտերի գաղտնիքին ու իմաստին դիւրաւ թափանցող տաղանդը։ Սրանց վրայ աւելացրէ՛ք իր պայծառ իմացականութիւնը, իրադարձութիւնները յստակ տեսնելու և դատելու իւրայատուկ քանքարը, և հասկանալի պիտի լինի այն բարձր համարումը, որին իրաւամբ արժանի էր Դրօն։

Ականատես եմ եղել Սորբից մինչև Դատոան ու Գրգուռ կամաւորական չորս գունդերի, Անդրանիկի, Դրոյի, Քեռիի և Համազասպի մղած ճակատամարտերին։ Ես տեսայ և խոր յուզումով տեսայ, թէ ի՞նչպէս Սորբի յաղթանակից անմիջապէս յետոյ, Անդրանիկը բաղեղի պէս փաթաթեց Դրոյին, համբուրեց նրան ու իր վաղեմի ընկերոջ, աննման հայդուկին՝ Քեռիին ուղղելով խօսքը, ասաց.

— Ասլան է Տերօն, Ասլան։

Անդրանիկը Տերօ էր արտասանում՝ Դրօյի անունը։ Բայց այդ հնչիւնին մէջ մէկտեղուած էին հիացում, խանդաղատանք, բերկրանք և հպարտանք։ Չկար ռազմական մի խնդիր, մի դժուար հանելուկ, որի լուծման համար Անդրանիկը չորոնէր Դրօյի կարծիքը։ Քեռիի հանդէպ Անդրանիկը պատկառանք և հիացում ունէր որպէս քաջարի հայդուկ, հմուտ ռազմավար և հանդարտ ու պաղարիւն դատող մարդ։ Զիաւորների խըմբապետ Աւօյի հանդէպ տածում էր անհուն սէր և խոր յարգանք, իբրև անսահմանօրէն յանդուգն և խիզախ հայդուկ և մաքրամաքուր հոգի։ Միմիայն Դրօյին էր նկատում միակ հրամանատարը, որի հետ խորհրդակցութեան նստելը իրեն համար հոգեկան անյետաձգելի պահանջ էր։ Անդրանիկը իր հրամանատարների ժողովը բաց չէր անում առանց Դրօյի ներկայութեան։

Ա. Աշխարհամարտին կամաւորական Բ. գնդի մէջ, իր շուրջն էր բոլորել հայ — թրքական կռիւներին՝ կրակով մկըրտուած երիտասարդ մարտիկների ընտիր փաղանգը։ Ոգեպինդ և աշխոյժ, անհամբեր և անհանդարտ վաշտերը յաղթապանծ անցնում են սահմանը, անկորուստ յառաջխաղացում են կատարում և իրենց արագ ու շեշտակի հարուածներով ջՀմեց-

նում թշնամուն։ Անզուսպ մոլեգնությունով սպասում էին վճռական այն պահին, երբ մի մահաբեր դղրդիչ գրոհով խորտակեն թշնամուն և մէկ ոստումով իջնեն Աբաղայի դաշտը՝ Վանի բաց դուռը։

Հասնում է այդ բախտորոշ և վճռական րոպէն Կաուրշմայի առջև։ Դրօյի ճարպիկ ռազմախաղը, մերոն ջախջախում են թշնամու յառաջապահ շարքերը և ստիպում նրան նահանջել՝ շտապ ու դասալիք։

Կամաւորների շարքերի մէջ եռ ու զեռ ու բոցավառ ցընծութիւն է։ Բայց կարճատև է լինում դա։ Սև լուրը հովի թևերով հասնում է զինուորներին, թէ հրամանատարը՝ Դրօն, ճակատամարտի ամենատաք պահին, կրծքից վիրաւորուել է, սակայն այս եղելությունը թաքցրել է։ Թշնամու գնդակը փորել է ձախ կուրծքը և թաղուել է թոքի մէջ։ Դրօն միայն այն ժամանակ խելամուտ է եղել իր լուրջ վիճակին, երբ ջղաձգական հազի հետ, մի բուռ արիւն է թքել։

Դրօյին անմիջապէս փոխադրում են Թիֆլիս։ Սպաներին յատկացուած զինուորական մասնաւոր հիւանդանոցում դարմանուում է մօտ երկու ամիս։

Այդ օրերին, Ռուսաստանի վերջին վեհապետը՝ ցար Նիկոլայը այցի է գալիս Կովկաս։ Գալիս է իր օրհնաբեր անձի ներկայությամբ կռուող և շարշաբուզ զինուորի բարոյական կորովը բարձրացնելու, իր գովական խօսքով խրախուսելու վարանողներին, որ աւելի առատօրէն արիւն զոհեն, ի փառս հայրենիքի և արքունիքի, և միաժամանակ գալիս է վարձատրելու արիների և քաջագործների հերոսությունը, նրանց պարգևատրելով Ս. Գէորգի խաչով։

Ցարը այցելում է հիւանդանոցի բոլոր վիրաւորներին։ Թերթերը բարձրաձայն աղաղակով յայտնում են, որ բարեհամբոյր գահակալը մեծահոգի առատաձեռնությամբ ժպիտ և սիրալիր խօսքեր է բաշխում։ Նա յատկապէս կանգ է առնում անարի առջև մի քանիսի, որոնք ակնառու են գառել իրենց սխրագործություններով։ Նա ջերմօրէն սեղմում է հերոսների ձեռքը, ներբողներ է շռայլում նրանց կատարած գործերի համար և հայրենիքի երախտիքը մատուցում։ Եւ որքան շոյած էր ռուս մարդու ինքնասիրությունը, որ մեծ կայսրության մեծ միապետը զիջում էր և հաճում՝ այց տալ իրենց։

Ցարը մօտենում է նաև Դրօյի սնարին։ Նա ուշադիր և հիացական հայեացքով լսում է իր համհարզի բերնով հայ կամաւորական Բ. գունդի հրամանատարի ոգիսականը։ Լսում է սեւեռուն և խանդավառւում զգլխիշ այդ պատմութիւնով։ Հաւանաբար ցարը ինքն իրեն հարց է տալիս.— Այս մարտական փառապանծ սխրագործութիւնների հերոսը արդեօք ո՞ւմն է պարտական իր բանիբուն ռազմագէտի տաղանդը։

— Հրամանատա՛ր, բերկրանքով ոնկնդրեցի քո մեծագործութիւնների նկարագրութիւնը։ Շատ ապրիս. սակայն քո զինուորական ուսուցումը ո՞ր դպրոցում ես ստացել, հարցնում է ցարը ժպտաշուրթն և զոռոզ ինքնագոհութեամբ.

— Վեհափա՛ռ,— պատասխանում է Դրօն բառերը յստակ և մէկիկ մէկիկ արտասանելով.— Հայ Յեղափոխական Դաշնակցութեան դպրոցում։

Երևակայեցէք բռնակալի դէմքը այդ բոպէին։

Բ

Լեգրանի համաձայնագիրը հազիւ երեք օրւայ կեանք ունեցաւ։ Հէնց որ Ռուսկոմը Հայաստան ժամանեց, յայտանաւութիւնները, այլ և վատօրէն և անարգօրէն թքեց իր ստորարեց համաձայնագիրը ապազօր և հրապարակով ուրացաւ իր ներկայացուցչի ստորագրութիւնը և գրժեց իր բոլոր խոստումները։ Բոլշևիկի համար խոստումը բուրժուական նախապաշարում է, դրամատիրական շղթայ, որ անցնում են թշւառ պրոլետարիատի վզին։ Իսկ ստորագրութիւնը ուրանալ, դա առաքինութիւնների գերագոյնն է, եթէ այդ պիտի ծառայէ որոշ մի նպատակի։

Բոլշևիկեան Յեղկոմը՝ Յեղափոխական Կոմիտէն՝ ոչ միայն ջարգեց իր պատւիրակութեան պետի հանդիսաւոր յանձնառութիւնները, այլ և վատօրէն և անարգօրէն թքեց իր ստորագրած պայմանագրի վրայ։

Սկսեց անլուր հալածանքներ, հանրային գործիչների, մտաւորականների և պետական դէմքերի ձերբակալութիւնները և հայ զինուորականների աքսորը։

Անբեկելի և անվերաքննելի որոշում էր կայացրել Յեղկոմը՝ բոլոր հայ զինուորականներին անխտիր հեռացնել Հա-

յաստանից և տարագրել նրանց ռուսական հեռաւոր տափաստանները։ Գուցէ արդարացում կարելի լինի տարագել քաղաքական անձնաւորութիւնների նկատմամբ ձեռնարկուած խիստ միջոցների համար, իբրև քաղաքական շարժառիթներից մղուած նախազգուշութիւն, սակայն դոյզն իսկ պատճառ չկար սպայութիւնը զանգուածօրէն ենթարկելու դաժան, անխիղճ ու վայրագ այդ պատուհասին։ Հայրենի երկրից խաբէութեամբ տեղահանել պարկեշտ, պարտաճանաչ ու հայրենաւէր ռազմիկներին, զօրականներին, որոնք Հայաստանի ամէն մի թիզ հողը պաշտպանել են իրենց կուրծքով, քրտինքով ու արիւնով, և աքսորել նրանց օտար մի երկրի խուլ ու անյայտ խորշերը, տմարդի արարքից աւելի, նենգօրէն նիւթուած մի դիւային սադրանք էր։ Աքսորը, այս բարբարիկ դաւը, ոչ միայն միտում էր հայ սպայութիւնը զրկել իր հայրենիքից, այլ և մանաւանդ մայր հողը պարպել իր հարազատ զաւակներից, արթուն և բոլորանուէր պահակներից, անվեհեր ու անձնուրաց պահապաններից։

Այդ հրէշային ծրագիրը գործադրուեց նաև Դրօյի՝ հայ ժողովրդի պաշտելի հերոսի, Բաշ-Աբարանի դիւցազնական ախոյեանի նկատմամբ։ Ցեղկոմը կտրուկ և վերջնական ազդարարութիւն էր յղել Դրօյին պատրաստ լինել և անմիջապէս մեկնել։

Այս վրդովիչ լուրը շուտով տարածուեց ամէնուր։ Երևանի և շրջակայքի հայութեան մէջ առաջ եկաւ իրարանցում և շփոթութիւն։ Ժողովուրդը խորապէս մտատանջ էր, թէ ի՞նչ պիտի լինի իրենց պաշտելի հերոսի ճակատագիրը։ Հազար ու մի շարաշուք գուշակութիւններ խուժում էին խռոված ուղեղների մէջ։ Ոչ ոք ուզում էր հաշտուել այն խիստ, անողոք ու դժնէ կարգադրութեան դէմ, որին Դրօն անարդար կերպով ենթարկուած էր։ Ժողովուրդը ատամները կրճտելով, զսպում էր իր խրաւացի ցասումը, որովհետև երկիւղ էր կրում որ, յախուռն ու անխոհեմ մի արարք կարող էր վտանգել Դրօյի կեանքը։

Ձերբակալութիւններից զերծ մնալու և խոյս տալու նպատակով, մեծաթիւ մտաւորականներ, զանազան կուսակցական գործիչներ, աշքառու և ականաւոր մարդիկ և պատասխանատու դէմքեր պահուել էին թագստոցների մէջ, մինչև բոլշևիկեան

այսահար մոլուցքը իր թափը կորցնէր։ Դրօյի աքսորի վճիռն ու հրամանը ցնցել էր նրանց։

Աքսորի նախօրեակին կարկառուն դէմքերը մէկիկ-մէկիկ գողունի մտնում էին Դրօյի բնակարանը՝ ստեղծուած նոր կացութեան մասին խորհրդակցելու։ Դրօն բոլորին յանձնարարում էր պահել պաղարիւնը, համակերպել եղելութեան։ Իր մտերիմ ընկերներից մէկը՝ Վ. Ն. հիացումով նկարագրում էր Դրօյի հոգեկան բարձր կորովը։ Մինչ Դրօյի բարեկամները մտահոգութեամբ և շարագուշակ գալիքով տագնապում են, նա լիովին պահում է ոչ միայն իր հաւասարակշռութիւնը, այլև եռուն կենսուրախութիւնն ու լաւատեսութիւնը։

Այս գիծը Դրօյի նկարագրի և խառնուածքի ամենից ցայտուն և զօրեղ նիշն էր։ Դրօն պարտութիւնից ընկճուողն ու փուլ եկողը չէր։ Պատուիրեր ձախողանք էր նկատում. արդիւնք կա՛մ թերացումի, սայթաքումի և կամ թիւր դատողութեան։ Մինչև պարտութիւնը արթուն էր, զգոյշ, հաստատակամ և բոլորանուէր։ Գործի համար միշտ մտածող, շրջահայեաց, կշռադատող և անվախ էր։ Խստապահանջ էր և անզիջող՝ պարտականութեան հանդէպ։ Սակայն ձախորդութեան դէպքում, երբ պարտութիւնը մինչևիսկ հետևանքն է իր նախազգուշութիւնների և հրահանգների անտեսումին ուրիշների կողմից, մեղքը ուրիշի վրայ չէր բևեռեցնում։ Կը ճշտէր սխալները, կը մանրամասնէր ձախողանքի բոլոր մեքենականութիւնը, նրանից դաս առնելու դիտումով։ Բայց երբեք չէր խորտակւում պարտութիւնից, որովհետև ա՜յնքան հզօր էր իր յաղթելու կամքը, որի խոր գիտակցութիւնը ունէր. ա՜յնքան աներեր էր իր հաւատքը հայ ժողովրդի մեծութեան և յաւերժութեան վրայ, որ ոչ մի դժբախտութիւն չէր կարող իր լաւատեսութիւնն ու կենսուրախութիւնը սարսել։ Փոխանակ հայ ժողովրդի տառապանքը ողբալու, խորաթափանց իմացութեամբ ըմբռնում էր տառապանքի աղբիւրը, էութիւնը և ներիմացումով գտնում էր դարմանը։

Եւ բնաւ զարմանալի չէր, որ Դրօն աքսորի նախօրեին իսկ, աւելի եռանդուն, զւարթախոհ և կորովի էր, քանի իր այցելուները։ «Եղածն ի՞նչ է, որ խուճապի էք մատնուել, պիտի ասէր Դրօին բոլոր վլվլուկ հանողներին. փոփոխութի՜ւն. փո-

փոխություն է տեղի ունեցել. փոփոխությունը կայունություն չի նշանակում. նա էլ պիտի ունենայ իր փոփոխությունը»։

Դրօն լաւ էր իմանում որ աքսորը իրեն համար պարտութիւն էր։ Հանդուրժում էր դրան առայժմ, բայց իսկի չէր կարող համակերպել։ Նա իր ուղեղում տևաբար որոճում էր այդ պարտությունը յաղթանակի վերածելու մասին։ Նա յայտնում է իր մտածումները Վ. Ն.ին։ Իր հաստատ համոզումը փոխանցում է իր ընկերոջ, թէ երկուսով կարող են հրաշքներ գործել հայ դատի համար։

— Արի՛, դու էլ միացիր իմ աքսորին։

Եւ պարզում է իր ծրագիրը։

Երբ խօսակցությունը աւարտում է, Վ. Ն.-ը, օգտուելով գիշերուայ մութից, ուզում է մեկնել բայց Դրօն նրան չի թողնում։

— Տնաշէ՛ն, ասում է Դրօն, ընկերդ էգուց աքսոր է գնում. ո՞վ է իմանում, գուցէ մէկ էլ չտեսնես նրան. առանձին պիտի թողնես ու մեկնե՞ս։ Նստի՛ր, մի՛ գնա։

Երկար խօսքից ու զրոյցից յետոյ, Վ. Ն. համաձայնում է ոչ միայն չմեկնել, այլև մինչև իսկ միասին գիշերել։

Կէս գիշերուայ խոր ու անշշուկ լռությունը պատռում է ինքնաշարժների աղմուկով։ Թնակաբանի փողոցում անիւները կանգ են առնում և ասպարէզ տալիս մարդկանց ժխորին։ Մի քանի րոպէ անց դուռը թակում են։ Վ. Ն. ուշադիր նայում է Դրօյին, որի դէմքի վրայ ուրուագծւում է զոհունակութեան մի թեթև ժպիտ։ Նա խորհրդածում է այն անառվոր և տարօրինակ երևոյթի առջև. կա՛մ այն է, որ Դրօն չի քմբռնում վերահաս վտանգի լրջությունը, ի լուր և ի տես Չեկայի ներքուժումի, և կամ նորահնար մի ելք է գտել։

Դուռը բացւում է և ներս են մտնում ուրախ զւարթ կատակներով Ցեղկոմի անդամները, Չեկայի բարակներ, բանակի ռուս զօրավարներ և բարձրաստիճան սպաներ։ Դրօն հարևան սենեակը բաց է անում և իր խայտաբղէտ հիւրերին ներս է հրամցնում։ Սրահի մէջտեղում սարքւած է երկար մի սեղան, ընթրիքի համար պատրաստւած։ Կոչունք է, մտերմական խրախճանք և գինարբուք։ Դրօն ոչինչ չի խնայել, որ կեր ու խումը լինի ճոխ, ըմպելին գերընտիր և ուտելիքը՝ համադամ։

Դրօն ունևոր և լայն միջոցների տէր ընտանիքի զաւակ էր։ Հայոց նահապետական առաքինի աւանդութիւնները՝ տանը արիւնն ու աւիշն էին։ Հարուստ կամ չքաւոր, արհեստաւոր կամ շինական, բոլորն էլ նախամեծար հիւրն էին Կանայեաններին։ Դրօն պատմում էր, թէ չի անցել մի կիրակի կամ տօն օր, ուր հօր տանը հիւրամեծարանք տեղի չունենայ, ու բոլորին էլ անխտիր նոյն քաղցրահամ խորտիկները, խմորեղէնը, քաղցրեղէնն ու մրգերը։ Դրօն սրբութեամբ և բծախնդրութեամբ պահել էր այդ չքնաղ բարեմասնութիւնը։ Նա սրտանց հաճոյք էր զգում, երբ իր տան մէջ սեղանակից էր ունենում։ Հոգեկան պահանջ էր դա, ամենօրեայ աղօթք էր և սրտաբուխ, նուիրական պարտականութիւնը։ Հիւրասիրել՝ աղօթել էր Դրօյի համար։

Կերուխումի տենդավառ պահին, Ասքանազ Մռաւեանը, որ հետագային, հիասթափ եղած բոլշևիկեան անկարելի շեղումներից և անմարդկային վայրագութիւններից, իր կեանքին վերջ տուաւ անձնասպանութեամբ, ոտքի է կանգնում և ռուսերէն մի կենաց առաջարկում Դրօյի համար։

— Դրո՛, մենք լաւապէս գիտենք գնահատել քո արժանիքները որպէս զինուորական, կարգապահ անձնաւորութիւն, ներհուն ռազմագէտ և ժողովրդասէր մարդ։ Քեզ չենք նկատում սովորական խմբապետ, ապա թէ ոչ՝ մենք կը վարուէինք քեզ հետ այլ կերպ։ Եթէ մենք այսօր սիրայօժար տունդ եկանք քո հացն ու գինին ճաշակելու, դա նշանակում է, որ մենք քեզ համարում ենք բացառիկ յատկութիւնների տէր և թանկագին կարողութիւններով օժտուած մէկը։ Վաղը դու պիտի մեկնես համաշխարհային Մեծ Յեղափոխութեան օրրանը։ Բարի ճանապարհ եմ մաղթում քեզ. բայց պարտք եմ զգում նախազգուշացնել քեզ. այն երկիրը, ուր ոտք պիտի դնես, մի հրեղէն, բոցավառ գետին է, որ կարող է քեզ այրել և մրրկել։

Բոլորը լուռ են. լուռ է նաև Դրօն, որ անբաժան ժպիտը դէմքին, կարծես ուզում է հասկացնել, թէ «ըմբռնում եմ թէ ասածիդ իմաստը և թէ չասածիդ գաղտնիքը։ Հայ ժողովուրդը թէ՛ ինձ է ծնել և թէ քեզ։ Քո սիրտը թէ՛ օտարի լեզուով է խօսում և թէ՛ օտարի բերնով։ Իմ սիրտը հայ ժողովրդի սիրտն է,

ուր օտարը չի կարողացել նստել։ Դո՛ւ, խղճուկ վարձկան, ձայնդ բարձր է հնչում միայն քու ականջին»։

Հասկանո՞ւմ են, կռահո՞ւմ են կոչականները՝ Դրոյի հոգում եռացող մտորումները։ Թւում է թէ այո՛։

Մի քանի րոպէ յետոյ, ծանր լռութիւնը խզում է Սաշա Բէգզատեանը. նա՝ որ հետագային իր գլուխը վրայ տւաւ և անհետ ու անանուն կորաւ ընդմիշտ։

Բէկզատեանը յայտարարում է.

— Ուղիղ է Մռաւեանը։ Ռուս հողը համակ կրակ է. սակայն մի մոռանալ, որ Դրօն ինքը՝ համակ կրակ է։ Կրակը կրակով չի այրւի։

Գ

Դրօն Մոսկւա հասաւ մեծ պատիւներով և արժանացաւ արտասովոր ընդունելութեան։ Ճամբորդեց գնացքի մէջ իրեն յատկացուած առանձին ու մասնաւոր բաժնեակով։ Բոլշևիկ կուսակցութեան վաղեմի, փորձառու և գաղափարապաշտ պարագլուխները, որոնք լաւապէս տեղեակ և իրազեկ էին Հ. Յ. Դաշնակցութեան անցեալին, մարտական և ահաբեկչական գործերին ու գործունէութեան, ճանաչում էին Դրօյին և կամ իմանում էին, թէ ինչ արժէք և արժանիք է ներկայացնում նա։ Նրանց ճիգն ու ջանքն էր մեծարանքներով սիրաշահել Դրօյին՝ օգտւելու համար նրա տաղանդից, կարողութիւնից և բացառիկ ձիրքերից։

Բոլոր գլխաւոր կայարաններում, ուր Դրօյի գնացքը կանգ էր առնում, տեղացի հայութիւնը հոծ ու խուռն բազմութեամբ խուժում էր դէպի կառաշարը, դիմաւորելու մեծանուն հերոսին։ Ականատեսները վկայում են, որ ցուցաբերած հիւրընկալութիւնը, ընծայւած մեծարանքը և հրճւանքի խօլական բացագանչութիւնները կատարւեցին այնպես ջերմութեամբ, անկեղծութեամբ և յորդ սրտազեղումով դիմաւորողների կողմից, որ Դրօյի աքսորը ստացաւ շքեղ ու հանդիսաւոր երթի բնոյթ ու կերպարանք։

Հակառակ այն իրողութեան, որ Դրօն էր վարիչը հայ-վրացական սահմանային վէճի առիթով յառաջացած զինաբախումի, որ վրացական բանակին ցնցիչ հակահարւածներ տւեց,

սակայն վրացի բոլշևիկները սիրալիր վերաբերում յայտնաբերեցին նրա հանդէպ։ Նրանք չէին մոռացել, որ Դրօն այն անվրէպ բազուկն էր, որ վրացիների վրէժը լուծեց։ Ալիխանովը՝ Վրաստանի գիւղացիութիւնը կեղեքող և զուլումի ենթարկող ճիւաղն էր, որի դէմ անէծք և լուտանք էին տեղացնում վրացիք, սակայն որին անզօր էին արժանի պատիժը տալու։ Դրօյի ձեռքով կատարուած ահաբեկումը երախտիքով, գոհունակութեամբ և շնորհապարտութեան զգացումով լցրեց վրացիների հոգին։

Մի օր, Ստալինը, որ արդէն տէր էր դառել Պոլիտբիւրոյի, և Ջերժինսկին՝ Չեկայի ընդհանուր պետը, տեսակցութեան են հրաւիրում Դրօյին։ Սրտդողած և մեղադրանքի տեղատարափով, նրանք յայտնում են Դրօյին, թէ Դաշնակցութիւնը, անգլիական իմպերիալիստների փողով վարձել է երկու ռուսների, որոնք սպանել են Ջեմալ փաշային Թիֆլիսում՝ Չեկայի պաշտօնատան առջև։ Դրօն անտեղեակ էր այս ահաբեկումին։

— Անգլիական փողո՞վ... ո՞վ, Դաշնակցութի՞ւնը,— հարց է տալիս Դրօն, տարակոյսով և խայթիչ հեգնանքով։

Դրօն դաշնակցական էր իր ուղն ու ծուծով։ Նա թրծուած էր Դաշնակցութեան վեհ աւանդութիւններով և բարոյական մաքուր սկզբունքներով։ Անկարելի էր, որ Հ. Յ. Դաշնակցութիւնը օտարից փող ստանար իր նպատակները իրագործելու համար։ Օտարից փող ստանալ նշանակում է գերի դառնալ։ Օտարը ձրի փող բաշխողը չէ։ Նա մի գրոշ իսկ չի զոհի, եթէ տուածի դէմ մի քանի պատիկը ապահոված չլինի։ Դաշնակցութիւնը, թէկուզ ամենալաւ նպատակի համար, եթէ փող ընդունի օտարից, պիտի խորտակուի այդ օտարի նպաստի ու երախտիքի տակ, որովհետև պիտի կորցնի ընդմիշտ գործելու իր ազատութիւնն ու անկախութիւնը և խաղալիք դառնայ նրա քմայքին ու կամայական պահանջներին։ Դաշնակցութիւնը երբ փողի կարիք ունենայ, կը դիմի իր ամենահարուստ ակունքին՝ հայ ժողովուրդին, որ 65 տարի անընդհատ իր սիրտն է տուել այս կազմակերպութեան։

Դաշնակցութեան հիմքը, իր բարոյական հմայքը, իր զօրութեան բանալին զոհաբերութեան և նուիրումի ոգին է։ Դաշնակցականը մի՛միայն պիտի տայ, առանց փոխարինութեան և առանց առնելու ակնկալութեան։ Ուր առնելու մտածում

կայ, ուր հատկացումի և վարձատրութեան դիտում կայ, այնտեղ զոհաբերութեան ոգին բացակայ է իսպառ։ Եթէ դաշնակցականը վարակւի դրամի և շահի, նիւթապէս օգտուելու մտայնութեամբ, շահամոլութիւնը տիրական ախտ կը դառնայ, կապականի նրա հոգին սատանայի նենգ ու վարնոց հնարքներով, իսկ Դաշնակցութիւնը կը մեռնի։ Դաշնակցութիւնը հարուստ է, որովհետև անարծաթ է։ Դաշնակցութիւնը անսասան է, որովհետև իր էութիւնը զոհաբերութիւնն է։

Դրօն, Դաշնակցութեան բարոյական առաքինութիւնների խստասիրտ աւանդապահը, իրաւամբ չէր հաւատում Ստալինի և Ջերժինսկու պատմութեան։

— Ջեմ իմանում ո՞վ է սպանել Ջեմալ փաշային,— յարում է Դրօն անկեղծութեամբ և պարկեշտօրէն։

— Դաշնակցութիւնը երբ մահապատժի է դատապարտում որևէ դաւաճանի, հարւածը տալիս է առանց դրամի և առանց միջնորդի։ Նրա բազուկը այնքան ուժեղ է, որ մահապարտին տապալելու համար ուրիշի օգնութեան երբեք պէտք չէ ունենալ։ Ասում էք, թէ Չեկայի կենտրոնի առջև սպանել են Ջեմալին։ Ամբողջ Ռուսիայում չէք գտնի մի անձ, մի կազմակերպութիւն, որ յանդգնութիւնը ունենայ այսպիսի վտանգաւոր և արկածալից ձեռնարկ ստանձնելու։ Միայն մէկ ուժ գոյութիւն ունի, որ կարող է այս գործը յաջող և անվտանգ գլուխ հանել։ Դա Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնն է։ Մեղք է, որ այդ երկու ուժերին բանտարկել էք։ Նրանք ապահովաբար անմեղ են, և անգիտակ անցուդարձին։ Թիֆլիսում ձեր Չեկան ապիկար է դուրս եկել և չի կարողացել ահաբեկիչների հետքը գտնել։ Շշմած ու ամօթահար, նա իր անզօր զայրոյթը թափել է այս երկու անմեղների վրայ։ Եւ ծածկելու համար իր ապիկարութիւնն ու խազքութիւնը, յերիւրել է անգոյն և կեղծ ապացոյցների ու փաստերի մի թղթածրար։ Ես կարող եմ այդ կեղծիքը քօղազերծ անել։

Դ

Ստալինն ու Ջերժինսկին ուշադիր և անքթիթ ունկնդրում են Դրօյի ինքնավստահ, համարձակ և անսեթևեթ բացատրութիւնները։

— Այս խնդիրը մէկ լուծում ունի, առաջարկում է Դրօն։ Արտօնեցէք ինձ մեկնել Թիֆլիս։ Կը տեսակցեմ այն դաշնակցականների հետ, որ բանտում արգելափակուած են։ Երեվան կը հանեմ ճշմարտութիւնը և ձեզ կը ներկայացնեմ գործի ծալքերը։ Կը գործադրեմ այս դաժան ու ծանրակշիռ առաքելութիւնը հետևեալ պայմանով,— իմ տեսութիւնը կալանաւոր ընկերներիս հետ պէտք է լինի գլուխ գլխի, առանձին և ազատօրէն։ Ձեր մարդկանցից ոչ ոք պէտք է ներկայ կամ միջամուխ լինի մեր խօսակցութեան։ Ոչ միայն ազատ պէտք է արձակէք տասնեակներով անմեղներին, որոնց զանգւածօրէն ձերբակալել և բանտ էք նետել, այլև խօսք պիտի տաք ահաբեկչի կամ ահաբեկիչների կեանքը խնայել։

Խոստումը ստանալուց յետոյ Դրօն գնացքով մեկնում է Թիֆլիս, պաշտպանութեանը տակ Չեկայի գաղտնի մի ոստիկանի։

Բագու չհասած, Դրօն գաղտագողի իջնում է գնացքից ու հետիոտն հասնում Բագու։ Իր ճամբրուկը թողնում է գնացքի մէջ, որպէսզի ուղեկիցը չկասկածի, թէ փախուստ է տալ։ Ցարաբերութեան մէջ է մտնում երկու յայտնի ընկերների հետ, նրանցից քաղում՝ հարկ եղած տեղեկութիւնները ահաբեկումի առնչութեամբ և հետևեալ օրը մեկնում է Թիֆլիս։

Թիֆլիսում նրան ընդունում է Վրաստանի Կոմկուսի առաջին դէմքը՝ Լավրեսի Բերիան։ Մոսկւան նախօրօք հաղորդում էր այնտեղ Դրօյի ժամանումի ցարժառիթը։

Անհաճ, անտեղի և պատահական խուզընդոտներից Դրօյի մուտքը զերծ պահելու զգուշաւորութեամբ, Բերիան մինչև բանտ ընկերանում է նրան։ Բանտի դարբասից ներս մտնելիս, դաշնակցական բանտարկեալները անակնկալի են գալիս։ Բերիան նկատում է այդ և դառնալով Դրօյին, դառն հեգնութեամբ ասում է.

— Ընկերներդ, որ ինձ հետ տեսան քեզ, պիտի մտածեն, թէ արդէն դու էլ ծախուած ես բոլշևիկներին։

— Ո՛չ, պատասխանում է պատրաստախօս Դրօն իւրայատուկ տրամտութեամբ,— ընկերներս ինձ հետ տեսան քեզ, կեանքդ ապահովագրուած է։

Ահաբեկիչները Դրօյին պատմում են ամբողջ ճշմարտութիւնը առանց գաղտնիքը ծածկելու և առանց վերապահու-

թեան։ Եւ իր հաւաքած վաւերական և մեկին տեսալներով քողազերծ է անում Թիֆլիսի Չեկայի յերիւրած զրպարտութիւնները, դարբնած շինծու պատմութիւնը և նիւթած դաւը։

Աննշա՞ն բան էր դէմ յանդիման կանգնել Չեկայի նենգամիտ, յիշաչար և դաժան դահիճներին։ Յանդգնութիւն չէ՞ ձեռնոց նետել պատմութեան ամենից արիւնառուշտ կազմակերպութեան և նրա խարդախութիւնները մերկացնել։ Ո՛չ, Դրօյի համար անհրաժեշտ չէր ճիգ թափել յանդուգն լինելու համար։ Դա՝ իր բնաւորութեան ինքնաբուխ զեղումն էր։ Ուրիշ կերպ չէր կարող վարուել։ Սուտի, կեղծիքի, խաբէութեան չէր հանդուրժում։ Այս էր իր քաջութեան, խիզախութեան աղբիւրը։ Ամբոստ էր անարդարութեան դէմ, պարկեշտ էր իր կարծիքների մէջ և անխնայ՝ հացկատակների ու փարիսեցիների հանդէպ։

* * *

Անպուգական էր Դրօն իբրև հայ։ Տարագիր էր, բնակւում էր օտար երկրում, բայց ապրում էր Հայաստանում, իր մայր երկրում։ Հայաստանն իր բնութեամբ, իր լեռներով ու գետերով, իր լոյսերով, գոյներով և ստուերներով, որպէս կենդանի և յարաշարժ ոգիներ ապրում էին իր արեան գնդիկների և մարմնի հիւսկէնների մէջ։ Մաճի տակ քրքրուող հողի դղրդիւնը, մուրճի տակ հեծող երկաթի ճռինչը, յուշիկ թաւալող ջուրերի մրմունջը և ծիծղուն և հասուն մրգերի խայտանքը, Գայրենի հողի մունջ բնութիւնը համօրէն, իբրև հզօր ու անդուլ մի մեղեդի, թրթռում էին իր հոգու մէջ։ Նա նոյնացել էր Հայաստանի հետ։ Դրօն և Հայաստանը Մեծ Երազի իրականացման զօրութիւնն ու կարելիութիւնները ծծում էին նոյն ակունքից, նոյն յաւիրժական ուժից, որ կոչւում է Ոգի։ Եթէ փորձենք տրամաբանական տարազների վերածել, եթէ ջանանք իմացականութեան տեսալները վերլուծելով գտնել այդ ոգին, չենք կարող ըմբռնել, ընդհակառակն, կը կորչենք անվախճան խարխափանքի բաւիղի մէջ։ Ցեղի հոգին միայն ապրելով կարելի է հասկանալ։

— Մի անգամ, խօսքն ինձ ուղղելով, գեղջանքով հարց տուեց։

— Ի՞նչ է քո արժէքը, ի՞նչ է քո արժանիքը։

Ես էլ նրան խորհուրդ տալու, իր հեղինակը կորելու դիտումով, պատասխանեցի.

— Եթէ մինչև իսկ ոչինչ արժեմ, քո վրայ գէթ մէկ առաւելութիւն ունեմ. ֆրանսերէն և անգլերէն եմ իմանում։

Չպատասխանեց, լուռ մնաց։ Բայց ինքն իրեն կրկնում էր մի յանկերգ «ֆրանսերէն և անգլերէն է իմանում»։ Ուզում էր ասել, «ի՞նչ մեծ արժանիք է անգլերէն և ֆրանսերէն գիտենալը»։ Հաւանաբար մտովի ասում էր. «Մարդիկ եմ ճանաչում, որ տասը լեզու գիտեն. տասը համալսարանի վկայական ունեն, տասը կաճառից տիտղոս են ստացել, այնուամենայնիւ մնացել են անբան անասուն»։

Ուղիղ էր Դրօն։ Կարելի է մտային զարգացման գագաթին հասնել, կարելի է քաղաքաքրթական բարձրագոյն գիտերը, ստեղծագործութիւնները օգտագործելու չափ ճաարտար լինել, բայց մնալ նախնամիտ վայրենի։ Որովհետև մարդ էակը մարդ անողը ոչ թէ գիտութիւնն է, ուսումն է, քաղաքակրթութեան բարիքներն են, այլ հոգեկան այն արժէքները, զգալու և կենսագործելու այն թափը, հաւատքով ապրելու այն արարչական կարողութիւնը, որ որակում ենք աստուածային։

Դրօյի մէջ այդ գոյութիւն ունէր իբրև յարատև ապրում։ Նա յարաշարժ ու անհանդարտ մարդ էր։ Կորովն իր մէջ եռում էր և եփում էր նրան։ Նրա ճիգը, նրա աշխատանքը դուրս էր պարտականութեան, ձևականութեան սահմաններից։ Ներքին մղումով էր նա գործում և նրա ճիգը ստեղծագործութիւն էր, յօրինում, բանաստեղծութիւն։

Դրա համար էր, որ բանակոիւ, վիճաբանութիւն, կուսակցական պայքարում արձակուած պարսաւանքները մի նշանախեց իսկ չէին ազդում իր վրայ։ Խորապէս գիտակից էր իր կարողութիւններին և փառատենչութիւնը ունէր այդ կարողութիւնները արժանաւոր ու բաղմարդիւն կերպով ի սպաս դնելու հայութեան և Հայաստանի համար։

Ե

Մի երիտասարդ դաշնակցական, որ հմայւել էր հայ հերոսների փառքով, հարց տուաւ Դրօյին.

— Ի՞նչպէս կարելի է երբեք վախ չունենալ, մշտապէս անվախ լինել։

Դրօն իր խորաթափանց հայեացքը սևեռեց երիտասարդի աչքերի մէջ, ուր կարդաց անկեղծութիւն և հոգեկան վերացում։

— Բալիկս, ասաց Դրօն, հայրական քնքուշ հոգածութիւնով, մարդ էակը ստեղծուել է վախի զգացումով։ Արարչութիւնն այդ բնազդով օժտել է նրան՝ ինքնապաշտպանութեան համար։ Դա բարիք է։ Բայց չարիք է դառնում այդ, երբ փախուստ է տալիս նրանից։ Որքան փախչես, այնքան պինդ կը կպչի քեզ։ Համարձակ նայի՛ր նրա աչքերի մէջ. երբ ճանաչես նրան, նա զինաթափ կը լինի։

Ինձ զարմացրեց Դրօյի այս ինքնատիպ բացատրութիւնը, որ հոգեբանական վերլուծումներով չէ, որ գտել էր, այլ փորձառութեամբ, մանաւանդ ներիմացումով։

Հերոսը նա չէ, որ իր կեանքը վտանգելով, արտակարգ ու հրաշապատում գործեր է կատարում, ինչպէս աւազակները, յեղուզակները և գանգրստրները։ Հերոսը նա չէ, որ ներքին անզուսպ մղումով, դէպի մահ է սլանում, ինքնոչնչացումի քայլ է առնում, անձնասպան է լինում, ինչպէս անմխիթար սիրահարը, անբուժելի յուսահատը և խելագարը։ Սրանք վախկոտներ են, որոնց համար կեանքը շարչարանք է, տառապանք և անտանելի բեռ։ Սրանք անարի, եզկելի վատեր են, որոնք, սարսափած կեանքի դաժան փուլերից, անզօր են զգում դիմագրաւելու վտանգը և փախուստի այս ուղին են ընտրում։ Սրանք ինքնամոլներ են, որոնց անյագուրդ եսը պարտութեան է մատնուած, կեանքի խոշընդոտները անյաղթելի գտնելով։

Հերոսը՝ անվեհեր մարտիկն է։ Նա պայքարում է կեանքի թիւրի և ծուռի դէմ։ Նա կռւում է յաւիտենական արժէքների համար. ազատութեան, անկախութեան, ճշմարտութեան, արդարութեան համար։ Այդ նպատակին հասնելու համար, նա ոչ մի զոհողութեան առջև կանգ չի առնում։ Հերոսի եսը տիրական չէ. նա սոսկ ծառայ է։ Հերոսը ամէն օր իր եսից մի քան է մեռցնում, որպէսզի վեհ սկզբունքները իշխեն ամենուրեք և միշտ։

Դրօն հերոս էր։

Նա շէնշող, լաւատես և կենսուրախ էր։ Զախողանք և դժբախտութիւն չէին կարող խորտակել նրան, չէին կարող խաթարել իր սիրտը, որովհետև անսպառ կերպով ունէր մա-

քառելու և յաղթելու։ Կեանքը մի ելևէջ է. նա ունի իր մութ և պայծառ երեսները, տխուր և զուարթ կողմերը։

«Ձախորդ օրերը ձմրան նման կը գան ու կերթան,
Վհատելու չէ, վերջ կունենան, կը գան ու կերթան»։

Հերոսական, յաւերժական հայութեան փիլիսոփայութիւնն է սա կեանքի մասին, որ Դրօյինն էր միաժամանակ։ Պէտք է պայքարել, անդուլ պայքարել, իսկ պայքարը յաջողութեամբ պսակելու համար, պէտք է զոհել, միշտ զոհել, և զոհել ամէն բան իր անձից, անգամ իր կեանքը։

Մահ իմացեալ անմահութիւն է։

Հերոսի համար կեանքը՝ առկայութիւն և մահը նրա բացակայութիւնը չէ։ Կեանքն ու մահը իրարյաջորդ տևողութիւն են։ Մարդն իր կեանքով ու մահով բնութեան յայտնութիւնն է։ Բնութեան, որ բեղմնաւորող, ստեղծարար արգանդ է, արարիչ ոգիների եռուն աշխատանոցը։ Հերոսը մշտապէս այդ ոգիների հետ է ապրում և զգում է իրեն բնութեան մի անքակտելի մասնիկը։ Կեանքն ու մահը հերոսի մէջ, նրա էութեան խորքում լուծել են, իբրև դաշնաւոր և ներդաշնակ միութիւն։

«Հող էիր և ի հող դարձիր»։ Հերոսը իր մահով չի անհետանում, այլ վերադառնում է բնութեան։ Դրանից է բխում իր անմահութիւնը։

* * *

Աննման Դրո՛, անշունչ մարմինդ, նիւթեղէն անօթը քո Ոգու, յանձնեցինք հողին, իսկ գողից սլացաւ միանալու հայոց հոյակապ ու փառաշուք պանթէոնի պաշտելի հսկաներին։

Քո սիրտն ու քո թոքից հանուած թշնամու գնդակը պիտի պահենք իբրև յուշք և յիշեցում գալոց հայ սերունդներին։

Քո սիրտը խորհրդանշանն է այն բոլոր առաքինութիւնների, որ դու ժառանգել ես յաւերժական հայութիւնից։

Քո թոքում թաղուած գնդակը խորհրդանիշն է Հայ Դատին, անիրալուած քո ժողովրդի իրաւունքներին, որին կեանքդ

նիրհեցիր և որի մարտական յարուցումն դրոշը ամրակուռ բազուկովդ միշտ բարձր բռնեցիր։

Վշտակոծ ենք, բայց ողբ չենք արձակում։ Արցունք էլ չենք թափում, որովհետև արցունքը ընկրկումի, տկարութեան նշան է, ինչպէս դու սովոր էիր մեզ ասել։ Չենք ողբում, որովհետև հաւատացած ենք, որ մեր ժողովուրդը, որ քեզ է ծնել, կարող է Դրօներ նորէն ծնել։

Այսօր, քո աճիւնի առջև կանգնած, գլուխներս բարձր, նորոգում ենք մեր ուխտը։ Ուխտում ենք բարձր բռնել այն պաշտելի դրօշակը, որ մեզ փոխանցեցիր, և ընթանալ այն նուիրական ճանապարհով, որ դու ցոյց տուիր։

Դու անմահացար, որովհետև հայ ժողովուրդն անմահ է։

ԲԺ. ԵՐ. ԽԱՌԱՆԱՍԵԱՆ

ՍԱՐԸՂԱՄԻՇՈՒՄ 1918-ԻՆ

(Հատուած)

Սարըղամիշը գտանք քառասային վիճակի մէջ։ Քաղաքը դատարկուել էր։ Բնակիչները թողած տուն ու տեղ՝ հեռացել էին։ Մնացել էին կասկածելի մարդիկ, որոնք գիշեր ու ցերեկ թալանով էին զբաղուած։ Զինուորական պահեստները մնացել էին անպաշտպան. անհաշիւ հարստութիւն էր ամբարուած — զէնք ու ռազմամթերք, զինուորական և քաղաքացիական հագուստ, երկրագործական գործիքներ և մեքենաներ, խճուղիների և կամուրջների շինութեան մեքենաներ, անապատ դեղօրայք, ալիւր, շաքար — տասնեակ միլիոնների արժէքով հարստութիւն։ Ռուս բանակը լքել ու հեռացել էր խուժանացած։ Տէր չէր մնացել։ Զօր. Արէշեանը հազիւ կարողանում էր իր զինուորական անմիջական պարտականութիւններին հասնել։ Ռուս բանակի փայլուն զինուորականի համբաւ ունէր, բայց այժմ խեղճացել, ջղայնացել, թրջուած հաւ էր դարձել. բոլորովին անհամապատասխան էր իրեն վիճակուած դերին։ Սրտի հիւանդութիւն էլ ունէր — ոմանք ասում էին՝ հիւանդութիւն էր ձևացնում — և ծանր վայրկեաններին կորցնում էր գլուխը։ Նրան օգնելու կոչուած, ճակատի հրամանատարը՝ գնդ. Բէյ-

Մամիկոնեանը նոյնպէս ցաւագար ու վախկոտ մէկն էր։ Հակառակ իր արտաքին պատկառելի տեսքին և երևութական լրջութեան՝ իրապէս շրջուն խուճապ էր և ո՛չ մէկ վստահութիւն չէր ներշնչում իրեն ենթակայ զինուորներին ու սպաներին։

Յիշողութեանս մէջ ո՛չ մէկ լուսաւոր գիծ չի մնացել և Արէշեան-Բէյ-Մամիկոնեան շրջապատից։ Ո՞րտեղից էին հաւաքւած այս միջակութիւնները և ի՞նչ կարող էին անել ձեի բերելու Սարըղամիշի անձև քաոսը, որ օրէցօր աւելի էր ծանրանում, մանաւանդ, գաղթականական հոսանքի պատճառով։ Ամէն օր Սարըղամիշ էին թափւում փախստականներ պատերազմի վայրերից, որոնց անհրաժեշտ էր տեղաւորել, կերակրել և երկաթուղիով ուղարկել դէպի հիւսիս։

Աշխատանքը բաժանեցինք մեր միջև հետևեալ ձեւով.— Վահան Փափազեանը ստանձնեց գաղթականական գործը։ Վահան Նաւասարդեանը դարձաւ զօր. Արէշեանի խորհրդական. մի տեսակ շտաբի պետ։ Ինձ բաժին ընկաւ Սարըղամիշի պարէտի պաշտօնը — զինուորական կոմենդանտ։ Եւ երեքով անցանք գործի։

Ռազմաճակատից շարունակ մռայլ լուրեր էին ստացւում. թշնամին աւելի և աւելի յանդուգն յարձակումներ էր գործում։ Մեր ուժերը բաւական չէին և արագ կերպով տկարանում էին՝ հիւանդութեանց, դասալքութիւնների, կարգապահութեան խանգարման և, մանաւանդ հրամանատարական հեղինակութեան բացակայութեան հետևանքով։ Անդրանիկը իր զօրամասերով հեռացել էր կուի դաշտից, իբրև կարգախօս թողնելով իր ետևը. «Թրքահայութիւնը կոտորեց, թո՛ղ ռուսահայութիւնն էլ կոտորի»։ Այդպես չէր ասւած իր խօսքը, բայց ամբոխը այդ իմաստով հասկացաւ։

Օրւայ հրատապ պահանջն է՛ր կանգնեցնել թշնամու յառաջխաղացումը։ Դրա համար, առաջին հերթին, պէտք էր ուժեղացնել ճակատի զօրամասերը օգնական ուժերով։ Սարըղամիշում պահեստի մասերը գրեթէ սպառւած էին. մնացածները ո՛չ մէկ վստահութիւն չէին ներշնչում։ Զօր Արէշեանի դիմումները Ալեքսանդրապոլ զօր. Նազարբէգեանին ո՛չ մի արդիւնք չէին տալիս։ Սկսեցինք ուղիղ հեռագրաթելով ոմբակոծել Հայոց Ազգային Խորհուրդը Թիֆլիսում։ Հետևանքը եղաւ նոյնը։

Սարըղամիշում և, առհասարակ, ճակատի մերձաւոր թիկունքում սուր կարիք կար մտաւորական ղեկավար ուժերի, որոնցով լեցուն էր Թիֆլիսը։ Մեր դիմումները Հայոց Ազգային Խորհրդային այս գծով էլ արձագանք չէր գտնում։

Ռազմաճակատից պահանջում էին կտրուկ միջոցներով վերջ տալ դասալքութեան։ Բանակի կարգապահական ոգին կատրողները մնում էին անպատիժ։ Անհրաժեշտ էր զինուորական դատարան կազմել պատժելու համար դաւաճաններին ու դասալիքներին։ Զօր. Արէշեանը յարմար ուժեր չէր գտնում դատական կազմի համար և իզուր բախում էր ընդհանուր հրամանատարութեան և Ազգ. Խորհրդի դռները։ Մեր թախանձանքի խնդրանքներին էլ պատասխանելով՝ Թիֆլիսից յորդորում էին սեփական ուժերով բաւականանալ։ Փորձեցինք «սեփական ուժերով» կազմել զինուորական ատեան։ Բան դուրս չեկաւ։ Երկու Վահանները վճռական կերպով մերժեցին զինուորական դատարանի կազմի մէջ մտնել. նրանց խիղճը թոյլ չէր տալիս մահուան դատավճիռ արձակել։ Երբ ղեկավարները իրաւունք էին համարում «խղճով» առաջնորդուել, բնական էր, որ ստորադասներն էլ նոյնպէս ապաւինէին խղճին։ Օրեր տևող խօսակցութիւններից ու վէճերից յետոյ, կարելի չեղաւ զինուորական ատեան կազմել, և դասալիքները անպատիժ վխտում էին թիկունքում։

Մի օր էլ ըմբոստացաւ և մերժեց ճակատ երթալ Սարըղամիշում գտնուող 101-րդ ձիաւոր հարիւրեակը. Արէշեանի բոլոր ջանքերը կարգի բերելու՝ անցան անօգուտ։ Մարդիկ ուզում էին հետևել դասալիք՝ ռազմաճակատից հեռացած ռուս զօրամասերին։

Զօր. Արէշեանը սիրտը բռնած՝ շարշարում էր ցաւից ու անկարողութիւնից՝ շարշարելով նաև մեզ։ Նստած մռայլ՝ ելք էինք որոնում անել և անտանելի կացութիւնից։ Եթէ այս դրութիւնը շարունակուէր, կարճ ժամանակամիջոցում ռազմաճակատը փուլ կը գար, և թշնամին անարգել կը յառաջանար դէպի Կարս և Ալեքսանդրապոլ։

Մէկ էլ — հրա՛շք։ Վազներեան հերոսի պէս՝ ներս մտաւ Դրօն։ Ո՞րտեղից որտեղ և ի՞նչ օրհասական վայրկեանի։ Կարծես լոյս բերեց հետը։ Նոյնիսկ Արէշեանի դէմքը պայծառացաւ։ Դրօն բանակի կոմիսար էր։

Բախտաւոր աստղի տակ ծնուած մարդիկ կան, որոնց համար անկարելի բան գոյութիւն չունի։ Հող առնեն՝ ոսկի կը դառնայ։ Յաջողութիւնը անբաժան ընկերն է նրանց։

Դրօն յայտնեց, թէ եկել է Երևանից զէնք ու ռազմամթերք հայթայթելու Արարատեան դաշտի զօրամասերի համար։ Կարսից ստացել և ուղարկել է որոշ քանակութեամբ փամփուշտ և հրացաններ ու գնդացիրներ։ Հիմա ուզում է Սարըղամիշի պահեստներից զէնք ու փամփուշտ ուղարկել Երևան։

Բոլոր պահեստները, իբրև պարէտի, իմ տրամադրութեան տակ էին։ Ես, իհարկէ, առաջարկեցի ինչ որ հնարաւոր է փոխադրել։ Արէշեանը անմիջապէս հաւանութիւն տուեց.

— Տարէք ինչ որ ուզում էք և ինչքան որ ուզում էք։ Միայն թէ, սիրելի պարոն Դրօ, մնացէք մի քանի օր օգնելու մեզ։

Դրօն շտապում էր վերադառնալ Երևանի նահանգը, ուր արիւնահեղ քաղաքացիական կռիւներ էին տեղի ունենում և ուր ինքը շրջանի հրամանատար էր։ Միայն ստիպողական հարկադրանքի տակ անձամբ եկել էր զէնք ու ռազմամթերք տանելու։ Բայց զօր Արէշեանի և մեր խնդրանքը այնքան բուռն էր, որ ստիպուած եղաւ տեղի տալ։ Իր զինուորական բացառիկ բնազդով նա արագ կերպով ըմբռնել էր կացութեան ահաւոր լրջութիւնը և անմիջական դարմանումի անհրաժեշտութիւնը։

Առաջին հերթին անհրաժեշտ էր վերջ տալ 101րդ հրաբեկեակի ըմբոստութեան, որ քարոզչելով ու կազմակերպուած էր բանակը։ Մարդիկ զինուած՝ նստել էին զօրանոցում և մերժում էին ենթարկուել հրամանատարութեան՝ ցուցական կերպով։

Իբրև բանակի կոմիսար, Դրօն արագ կերպով պատրաստեց վստահելի զինուորական ոյժ և հրամայեց, որ ըմբոստները դուրս գան զօրանոցից։ Հարիւրեակը դուրս եկաւ և շարուեց հրացաններ ձեռքներին։ Դրօն մի կարճ ճառով դիմեց նրանց հայրենասիրութեան՝ յորդորելով, որ մեկնին ռազմաճակատ հայրենիքի պաշտպանութեան համար։ Աջ ու ձախից լսեցին տրտունջներ, մերժումի բացագանչութիւններ։ Դրօն մի պահ լուռ դիտեց և, յանկարծ, վագրի ոստիւնով ատրճանակը ուղղեց հարիւրեակին ու գոչեց.

— Հանդա՛ր։

Անակնկալի եկած զինուորները արագ կատարեցին հրամանը։

— Տասը քայլ առա՛ջ, պոռաց Դրօն։

Առանց վարանումի զինուորները առաջ անցան տասը քայլ։

— Հրացանները դնել գետին, հրամայեց Դրօն։

Մի պահ տատանումից յետոյ, ամենքը հրացանները վար դրին։ Քիչ անդին կեցած էր Դրօյի պատրաստած վաշտը՝ գընդացիրներով զինուած։ Զինուորները տեսնում էին այդ։

— Սուրերը դնել գետին, նորից հրամայեց Դրօն։

Զինուորները սուրերն էլ դրին վար։

— Տասը քայլ յե՛տ, գոչեց Դրօն։

Հարիւրեակը մէկ մարդու պէս քաշուեց յետ, նախկին տեղը։

Դրօյի կարգադրութեամբ եկան, արագ կերպով հաւաքեցին ու տարին հրացաններն ու սուրերը։ Ապա Դրօն պահանջեց, որ անմիջապէս յանձնեմ ըմբոստութեան պարագլուխներին։ Առանց դժուարութեան յանձնեցին երեք հոգի։

Հարիւրեակը զղջում ու հնազանդութիւն յայտնեց։ Լուրը կայծակի արագութեամբ հասաւ ռազմաճակատի զօրամասերին և ցնցող տպաւորութիւն գործեց նրա վրայ։

Այնուհետև արագ կերպով կազմեց պատերազմական ատեան, դատելու համար խռովարարների երեք պարագլուխներին։

Առանց ձգձգումի զօր. Արէշեանը հրաման արձակեց.— կազմում էր զինուորական դատարան, նախագահ՝ Ս. Վրացեան, անդամ՝ Դրօ, դատախազ՝ սպայ... ափսո՛ս, մոռացել եմ անունը, քարտուղար՝ տեղակալ Պետիա Բէգզադեան։ Դատարանին յանձնւում էին վերև յիշուած երեք ըմբոստները։

Դատը տեղի ունեցաւ զօրանոցներից մէկում։ Սփինաւոր պահակների հսկողութեան տակ ներկայացան երեք ամբաստանեալները։ Երկուսը գորշ և աննշան տեսքով մարդիկ էին, նախկին բանւորներ, որոնք անմիջապէս խոստովանեցին իրենց յանցանքը և ամբողջ պատասխանատուութիւնը ձգեցին երրորդի վրայ. նա էր գրգռիչ ճառեր ասել և ըմբոստութեան դրդել զինուորներին. իրենք հետևել էին նրան, անմեղ զոհեր էին... Գործից, սակայն, չէր հետևում, որ նրանք անմեղ զոհեր եղած լինէին։

Երրորդը՝ նախկին անտառապահ, քառասունի մօտ, վ'թխարի հասակով, երկար, սուր ոլորած բեխերով, խոշոր և թափանցող աչքերով, պատկառելի արտաքինով, լեզւանի մի տղամարդ էր։ Իսկական հերոս իր տեսքով։

Քննութիւնից — հրամանատարական տեղեկատուութիւնից և վկաների ցուցմունքներից պարզւեց, որ երեքն էլ հաւասարապէս յանցաւոր էին. ամէն առիթով դժգոհութիւն էին սերմանում շուրջը, չէին ենթարկւում կարգապահութեան, խուսափում էին պարտականութիւնից, ընկերակիցների մէջ գրգռիչ քարոզչութիւն էին անում, դրդում էին թողնել դիրքերը և հեռանել ռազմաճակատից հեռացած ռուս զօրամասերին։ Ակնյայտնի կերպով ձգտում էին կազմալուծել բանակը, որպէսզի շուտով կարողանան տուն վերադառնալ...

Պատկերը ցնցող էր։ Մի կողմից հրամանատարութեան անճարակութիւնը, միւս կողմից՝ ծայր աստիճան բարոյալքում։ Այս երեքը բացառութիւն չէին. բոլշևիզմը պղծել էր բանակի հոգին. հայրենիքի գաղափարը արագ կերպով ցընդում էր մարդկանց մտքերից՝ տեղ տալով անասունի նախկին բնազդին։

Դատախազը երեքի համար էլ պահանջեց մահապատիժ։ Այսօրւայ հոգեբանութեամբ ոմանք թերևս մեղադրեն դատախազին. ինչու ա՛յս երեքը պէտք է մեռցէին, երբ իրենց նման ուրիշներ և աւելի մեծ յանցաւորներ, աւելի բարձր դիրքերում, պտըտում էին անպատիժ — «Զաշկա Զայ»ի և թիկունքային զանազան հիմնարկութիւնների հերոսներ։ Ի՞նչպէս հաշտւել նման անարդարութեան հետ։ Հապա «մարդկային խիղճը» կամ «սոցիալիստական գիտակցութի՞նը»։ Հապա՝ «մի՛ սպաններ»ը։ Հապա՝ մեր դաւանանքը մահապատժի դէմ...

Դիւրին է շարատաւորել պատմուճանները՝ նստած կանաչ սեղանի շուրջ։ Տէր Մարգարեանի շքեղ դահլիճում, Գոլովինսկիի վրայ։ Դժւար չէ «մաքուր» պահել խիղճը և սուրբի կերպարանքով ներկայանալ ամբոխին ուրիշների վրայ ձգելով «աղտոտ» գործերը։ Սեփական պատմուճանի և սեփական խղճի մասին հոգացող ազնիւ մարդը պարտաւոր է մտածել և ուրիշի պատմուճանի ու խղճի մաքրութեան մասին...

Բայց նման նուրբ խորհրդածություններով զբաղելու ժամանակ չկար. մեր առջևը կանգնած էին երեք ապացուցած ծանր յանցաւորներ, որոնց համար դատախազը մահւան պատիժ էր պահանջում։ Եւ ամէնքի հայեացքը ուղղւած էր մեր կողմը. անպարտ արձակել պիտի նշանակէր քաջալերել դատաւորութիւնը հիմնապէս քայքայելով ռազմաճակատը։ Դատարանը միաձանութեամբ որոշեց գնդակահարել երեքին էլ, անմիջապէս, առանց վերաքննութեան իրաւունք տալու...

Երկուսը լսեցին դատավճիռը լուռ, համարեա անտարբեր, բայց անտառապահի վրայ շշմեցնող տպաւորութիւն թողեց։ Նա մի պահ կարծես չըմբռնեց կարդացւածի իմաստը, ապա ցնցւեց, սուր ճիչ արձակեց, սկսեց պոռալ... Անհասկանալի խօսքեր էր արտասանում։ Լալիս։ Եղկելի էր երևոյթը. այդքան մեծ մարմնի մէջ այդպիսի՜ փոքր հոգի...

Մի քանի ժամ ժամանակ տրւեց ձևականութիւնները լրացնելու և ամբաստանւածների պատրաստութեան համար. կարող էին նամակ գրել իրենց ազգականներին։ Երեկոյեան դէմ գործադրւեց մահավճիռը։

Զօրանոցներից քիչ անդին, վարը, փոքրիկ հարթավայրի վրայ կանգնած էր հրացանաւոր մի ջոկատ։ Փոքրիկ սեղանի շուրջ կեցած էին դատարանի անդամները՝ նախագահ, Դրօ, դատախազ՝ Պետիա Բէգզադեանը — Հազիւ 20 տարեկան — աղաչեց, որ իրեն ազատեն մահապատժի գործադրութեան ներկայ գտնւելու պարտականութիւնից։ Անդին, բարձունքի վրայ խռնւած էին դիտողները, որոնց մէջ, անշուշտ, «մաքուր խղճով» մարդիկ էլ...

Արևը մտնում էր մայրամուտին։ Յո՜ւրտ։ Սարըղամիշը ծածկւած էր ձեան հաստ շերտով, որ սըրսռթում էր կօշիկների տակ։

Սփինաւոր զինուորներով շրջապատւած երեք դատապարտեալները յամր քայլերով մօտեցան ու կանգ առին հրապարակի մէջտեղ՝ գլուխները կախ։

Սարըղամիշը կարծես դադարել էր շնչելուց. քա՜ր լռութիւն էր տիրում։

Մի ակնթարթ, և նախագահը կարդում է դատավճիռը... Գերմարդկային մի աղաղակ, ապա, կարծես, վիրաւոր գազանի

ոնոց՝ անտառապահը տապալում է գետին ու գլուխը կտրած հաի պէս թպրտում, անիմաստ բացագանչութիւններով ճանկըռտում է սառած հողը... Պահակները հանում են ատրճանակներ։ Միւս երկուսը կանգնած են անտարբեր, կարծես իրենց չվերաբերէր մահավճիռը...

Ու մի վայրկեանի մէջ կապում են աչքերն ու ձեռքերը, կանգնեցնում շարքով... Մէկ, երկու, երեք — որոտում են հրացանները... Հեռախօսը շտապում է հաղորդել առաջաւոր դիրքերը։

— Երեք հայրենիքի դաւաճան խռովարարներ մահուան են դատապարտուած զինուորական ատեանի կողմից։ Մահավճիռը գործադրուած է...

Նոյն երեկոյեան, ուղիղ հեռագրաթելը հաղորդում է Թիֆլիս։

— Զինուորական ատեանը Սարըղամիշում գնդակահարութեան դատապարտեց երեք շարամիտ դասալիքներ։ Մահապատիժը գործադրուած է անմիջապէս։

Վաղը առաւօտեան, Տէր Մարգարեանի դահլիճում, Գոլովինսկիի վրայ, կանաչ սեղանի շուրջ, անուշ թէյ խմելիս, Հայոց Ազգային Խորհրդի անդամները, գլուխները օրօրելով պիտի կարդան հեռագիրը...

Եւ օրեր վերջը, Շորագեալի գիւղերից մէկում, լացով ու վայնասունով պիտի կարդացի այն նամակը, որ «Հայրենիքի դաւաճան, դասալիք» անտառապահը, մահից առաջ, գրել էր իր կնոջ ու զաւակներին։

Ա՛հ, այդ նամակը... Մինչև այսօր էլ, երբ գիշերը քունը փախչում է աչքերիցս, անտառապահի վիթխարի հասակը ցցւում է առջևս և մեծ, թափանցող աչքերը ծակում են սիրտը։ Եւ տեսողութեանս պատկերանում է արցունքով թրջուած թղթի կտորը, որի վրայ մահապարտը իր կոպիտ ձեռքով շարել էր սրտի այնպիսի քնքոյշ զեղումներ, այնպիսի սրտաառուչ խօսքեր...

Նամակը ուղղուած էր կնոջը և երեք մատաղ զաւակներին, որոնք անհամբեր սպասում էին հօր վերադարձին։ Սկսում էր աղաչանքով, որ ներեն իրեն, ինքը Աստծոյ առաջ իրեն զգում էր մեղաւոր։ Իր կամքից անկախ էր գործել յանցանքը։

Վախի ազդեցութեան տակ։ Չէր ուզել մեռնել թշնամու գընդակից, բայց ահա քիչ վերջը, պիտի մեռնէր, իբրև դաւաճան, հայի գնդակից...

Ներողութիւն, հազար ներողութիւն։ Աստուած այսպէս է կամեցել և Աստուած կը ներէ իրեն։ Ինքն այդ համոզունով էլ կը մեռնի։ Եւ հետը կը տանէ սրտի անհուն սէրը կնոջ և զաւակների հանդէպ... Ապա՝ թախանձագին յորդոր կնոջ, որ պատուով պահէ զաւակներին. թող նրանք յարգեն յիշատակը ապաբախտ հօր, որ այնքան սիրում է նրանց։ Եւ փաղաքշական անպաճոյճ խօսքեր, կարօտ ու գուրգուրանք զաւակներին, ամէն մէկին առանձին-առանձին... Եւ անէծքի կամ թշնամանքի ո՛չ մէկ խօսք իշխանութեան կամ դատաւորների հասցէին։ Միայն արցունք և անհուն սէր հարազատներին...

Թղթատարին յանձնելուց առաջ կարդացի մէկ, մի քանի անգամ։ Եւ ինչ որ մի ձեռք ամուր սեղմում էր սիրտս։ Սիրտս ճմլւում է և այսօր, երբ անքուն գիշերին պատկերանում է աչքերիս անտառապահի մահւան սարսափից սառած հայեացքը... Եւ երևակայում եմ անտառապահի կնոջ և զաւակների վիշտը հօր նամակը կարդալիս իրենց որբացած խրճիթում...

Դատավարութիւնից յետոյ Դրօն մեկնեց ճակատ, վարելու համար կռիւները թշնամու դէմ։ Ճակատը Խոնդէրէի ձորում էր, Սարըղամիշի մօտերը։ Թնդանօթների որոտը հասնում էր մեր ականջներին...

Քիչ վերջը Թիֆլիս մեկնեց Վահան Փափազեանը։ Սարըղամիշից հեռացան և բժշկա-առողջապահական ու խնամատարական խմբերը։ Սուր անհամաձայնութեան հետևանքով զօր. Արէշեանի հետ, ռազմաճակատից հեռացան նաև Մուրադն ու Սեպուհը իրենց մարտիկներով։ Մենք մնացինք մենակ, համարեա կտրուած դրսի աշխարհից. Դրօն՝ Խոնդէրէի առաջաւոր դիրքերում, որտեղից թնդանօթների որոտը աւելի և աւելի սպառնական՝ մօտենում էր մեզ. Վահան Նաւասարդեանը՝ դայեակի դերում զօր. Արէշեանի մօտ և ես՝ «զինուորական կոմենդանտ» ամայացած Սարըղամիշի...

ԴՐՕՅԻ ՄՕՏ

1926-ին ես հիւր էի Դրօյի մօտ, Փլոէշտիում, Ռումանիա։ Գնացել էի մօտը մի քիչ հանգստանալու, «հոգեշահ» խօսակցութեան համար։

Դուք գիտէ՞ք, ինչ է նշանակում հիւր լինել Դրօյի մօտ։ Եթէ չգիտէք, ասեմ։

Նախ՝ կայարանից մինչև տուն, ամբողջ ճանապարհին, ինքնաշարժի մէջ, աղմուկ և իրարանցում. ի՞նչպէս ճամբորդեցիր, հանգի՞ստ էիր, ի՞նչ կայ-չկայ։ Ու ոստոստուն խօսքեր մէկ նիւթից միւսը. կարօտի և սիրոյ զգացումներ ընկերների հանդէպ...

Ապա, տուն հասնելուդ, հոգուդ մատաղ, երկար ճամբայ ես կտրել, պէտք է բաղնիք առնես։ Տունը ամբողջ ոտքի կը հանէ, որպէսզի բաղնիքը պատրաստ լինի։ Ու սեփական ձեռքերով քեզ ջուրը կը կոխէ ու վերջը ամբողջ աշխարհի առջև խայտառակ կանէ, թէ այնքան աղտոտ ես եղել, որ ջրի խողովակները փչացել են...։

Ապա՝ նախաճաշ. «մի պատառ հաց» պիտի ուտես և չի հանգստանայ, մինչև որ հաւի, կովի, ցամաքի ու ծովի բոլոր արտադրութիւնները ստամոքսդ չուղարկես։

Ապա՝ ճաշ։ Ապա՝ ընթրիք։ Փլոէշտիի ամբողջ շուկան կը փոխադրէ տուն։ Ամբողջ քաղաքը հիւր կը հրաւիրի, սպասաւորներին վազէվազ՝ հագի կը հանի, որպէսզի քեզ «մի պատառ հաց» կերցնէ։

Ու անվերջ իրարանցում, գուրգուրանք, ընկերական ջերմութիւն։ Խօսք ու զրոյց մինչև երեկոյ, երեկոյից մինչև առաւօտ։

Այցելութիւններ ընդունել և այցելութիւններ գնալ։

Գնացել ես մօտը մի քանի օրով հանգստանալու և հիւրասիրութիւնից աւելի յոգնած կը վերադառնաս տեղդ։ Ու չես նկատի, թէ ինչպէս անցաւ ժամանակը...

Մի խօսքով՝ ես հիւր էի Դրօյի մօտ, Փլոէշտիում։ Գնացել էի մօտը մի քիչ հանգստանալու և թարմանալու։ Ու չզգացի թէ ինչպէս անցաւ ժամանակը։ Ու երբ վերադարձի օրը հասաւ, դեռ մեր խօսելիքների կէսը չէր սպառած։ Մինչև կայարան էլ, ինքնաշարժի մէջ, դեռ շարունակւեց մեր «խորհրդակցու-

թիւնը»։ Գնացքը քթիս տակից պիտի փախչէր, եթէ մի վայրկեան էլ դանդաղէի և չնեռուէի առաջին իսկ վագոնի մէջ։

Եւ երբ արդէն Բուքրէշից բաւական հեռացել էինք, սոսկումով լսեցի տոմսակս քննող պաշտօնեայի յայտարարութիւնը։

— Պարոն դուք սխալ գնաց էք նստել։

Ս. ՎՐԱՑԵԱՆ

ՆԻՐՈՒՄԸ

1905—906 տարիները...

Դեռ չէր ցամքած Սասունի և Տարօնի նահատակ ժողովրդի և յեղափոխական մարտիկների արիւնը. դեռ չէր դադրած մորմոքը Թիւրքահայու կրծքին վրայ բացուած վէրքին. մանաւանդ ցաւագնօրէն թարմ էր դեռ Կովկասէն Սասունին օգնութիւն փութացող խումբերու բնաջնջման կսկիծը, բնաջնջում՝ ռուս և թիւրք զօրքերու կողմէ միաժամանակ...։ Այդ շրջանին էր, որ ցարական Ռուսաստանը, շնական պատրաստակամութեամբ ընդառաջ կեթթար հարևան Թուրքիոյ բոլոր պահանջներուն։ Տնտեսական և ռազմական մեծ ակնկալութիւններ ունէր Ռուսաստանը ի հաշիւ Թուրքիոյ. Գերմանիայէն կուզէր խլել անոր գերակայութիւնը և համեղ պատառները...

Ռուսաստան ունէր նաև ներքին պահանջներ անհաշտ աչքով նայելու Կովկասի հայութեան վրայ։ Հայութիւնը, յանձին Դաշնակցութեան, որդեգրած էր պայքարի ուղին նաև ռուսական բռնապետութեան դէմ։

Կովկասեան հայութիւնը իր ձեռքը առած էր երկրին բովանդակ արդիւնաբերութիւնը և վաճառականութիւնը. ստեղծուած էր մշակութային հարուստ կեանք,— հայ դպրոցներ, հրատարակչական, բարեգործական և նման քաղաքակրթիչ հաստատութիւններ։ Անհանդուրժելի էին այս ամէնը, երբ մանաւանդ այդ շրջանին, հայ տարրը դաշնակից կը դառնար Ռուսաստանի յեղափոխական կուսակցութիւններուն։

Մտածեց և յղացաւ անմիջապէս ազգամիջեան կռիւներ յարուցանելու դիւային գաղափարը,— հայ-թաթարական երկարամեայ պատերազմը եղաւ անոր արդիւնքը։

Թուրք-թաթար բէգերը և աղաները յարմար տարրեր էին այդ ձեռնարկին համար։ Եւ ռուս իշխանութեան քթին տակ, կոզակներու բարոյական — երբեմն նաև ուղղակի — օժանդակութեամբ, թաթար խուժանը յանկարծակիի բերաւ և խուժեց հայ քաղաքներ ու գիւղեր։ Ահաւոր էին գազանացած թաթարներում շահատակութիւնները,— ջարդ, թալան, հրդեհ և աւերում։ Կատարուած բարբարոսութիւնը հասաւ հոն, որ իրենց դուռներուն ետին պահուրտած, ուռկաններով հայեր կորսային և ներս կը քաշէին մորթելու համար...։

Բագուն հայերու արդիւնաբերական ձեռակերտն էր. Գանձակը, Թիֆլիսը, Ղարաբաղը և Երևանեան նահանգը հոծ հայութեամբ բնակուած էին. հարուածները գլխաւորապէս այդ կէտերուն էին ուղղուած։ Հարիւրաւոր հայ գիւղեր օրհասական ճգնաժամ ապրեցան։

Սարսափելի անակնկալ մըն էր ռուս-թաթարական այս հարուածը։

Բայց հայութիւնը արագ ուշաբերեցաւ։ Հ. Յ. Դաշնակցութիւնը շուտով ըմբռնեց վայրկեանի ահաւորութիւնը, Անմիջապէս ինքնապաշտպանութեան և ապա յարձակողական խումբեր ստեղծեց, կազմակերպեց և ղեկավարութիւնն իր ձեռքն առաւ։ Հայ ժողովուրդը կեցաւ Դաշնակցութեան կողքին և լծուեցաւ կեանքի ու մահուան պայքարի։

Արտակարգ գերմարդկային ճիգերով զինուեցաւ մեր ժողովուրդը. կազմուեցան դիմադրական ճակատներ, պատժիչ խումբեր և զօրակոչի ենթարկուած մեծէն մինչև փոքր, ինչպէս և բոլոր փորձառու հին մարտիկները։

Տարօն աշխարհի և Սասունի «հուրէ ու սուրէ» անցած հրաշք մարտիկները Վասպուրականէն և միւս նահանգներէն Կովկաս գտնուող հին հայդուկները ստանձնեցին շրջաններու ղեկաւարութիւնը։ Ծուռլեռ, եռանդ, ինքնուրացում։ Այնուհետև շշմեցուցիչ սարսափելի հարուածներ տուեցան թուրք և թաթար խուժաններուն։

Հարուածը այնքան ծանր էր և ահաւոր, որ թաթար խանները ու պեները հաշտութեան ձիթենիներով կը փորձէին մօտենալ և կոկորդիլոսեան զղջումով «շէյթան»ին (ռուսերուն) կը վերագրէին ստեղծուած դժոխքը...։

Երևանեան լայնատարած նահանգի ինքնապաշտպանութեան ընդհ. հրամանատարը Նիկոլ-Դումանն էր, մէկը մեր մարտական մեծագոյն ղեկավարներէն։

Անխնայ էր ան ծայրայեղօրէն՝ թշնամիին նկատմամբ. հրամանները՝ դաժան, զորս կարձակէր առանց մկան մը իսկ շարժելու իր դէմքին վրայ. «այս բարբարոսներուն միայն սարսափով կարելի է խելքի բերել», կըսէր յաճախ, խստօրէն արգիլած էր ձեռք դպցնել կանանց և երեխաներու։ Բայց երբ դաւադրօրէն հայ մը սպաննէր, մէկի տեղ 3—5 թուրքեր պիտի իյնային։

Ծանր ճգնաժամեր ունեցան մասնաւորաբար Ղարաբաղը, Բագուն։ Հին-Նախիջևանը և Շարուրը։ Զգալի էր պակասը փորձառու և կորովի ղեկավարներու։

1906-ի սկիզբները, կռիւները զիրար անխնայ յաջոտելու աստիճանին էին հասած։

Նիկոլ-Դուման, լաւած մեքենայի մը պէս, գիշեր-ցերեկ հրամանատարական ղեկին գլուխն էր։ Անախորժ կամ վտանգաւոր որևէ տեղեկութիւն կամ սպառնական վիճակ չէր խախտեր անոր հանդարտ, պաղարիւն վճռականութիւնը, այդպիսի պարագաներու՝ մեղէն կելլէր, կը քալէր անկիւնէ-անկիւն և յանկարծ՝ բութամատն ու ցուցամատը միացուցած՝ հատու և որոշ կուտար իր հրամանները,— ոչ մէկ առարկութիւն. պէտք էր անպատճառ կատարել այդ հրամանները։

Օր մը Զանգեզուրէն սուրհանդակ մը կը հաղորդէր իրեն, թէ թուրքերը նեղը դրած էին չեմ յիշեր ո՛ր շրջանը։ Մեր ուժերը բաւարար էին հոն, բայց կը պակսէին գործօն և կորովի ղեկավարները։

Դուման, իր սեղանին վրայ, ռազմական քարտէսին քով (որուն վրայ կարմիր-կապոյտ անհամար կէտեր էր գծած) ունէր տրամադրելի ղեկավար ուժերու ցուցակը։

* * *

Ճիշտ այդ օրը, գաւառական քաղաքի մը մէջ, օգտուելով իր արձակուրդէն պիտի ամուսնանար երիտասարդ, յանդուգն և Դումանի կողմէ սիրուած մարտական նոր ղեկավարներէն մէկը։

Գաւառական այդ քաղաքը մեծ խրախճանքի մէջ էր։ Խմբապետը տեղի յայտնի ընտանիքէ էր և սիրուած ողջ երիտասարդութենէն։

Պսակը պիտի կատարուէր իրիկունը։ Եկեղեցին լուսաւորուած, տեղացիները տօնական հագուստներով խռնուած էին եկեղեցիի մուտքին մօտ։

Ահա՛ և փեսան եկեղեցի կը մտնէ իր զինակից ընկերներով շրջապատուած։

Կուգայ նաև հարսը հարսնևորներով։ Արարողութիւնը կը վերջանայ. հարսն ու փեսան դանդաղ կը յառաջանան դէպի ելքը. այդ վայրկեանին մարդ մը արագ քայլով կը մօտենայ փեսային և թուղթի կտոր մը կը յանձնէ անոր։

Հեռագիր մըն էր (գրուած պայմանական լեզուով). Նիկոլ-Դումանը կը հրամայէր՝ անմիջապէս մեկնիլ Զանգեզուր...։

Խմբապետ փեսան, վայրկենան մը շշմած, կարձանանայ. շուրջինները իրար կանցնին, բայց շփոթութիւնը ակնթարթ մը միայն կը տևէ։ Խմբապետը՝ անվրդով և դանդաղ՝ կը շարունակէ իր երթը հարսին քովէն, բայց երբ տուն կը հասնին և ընտանիքի հարազատները կը բոլորուին նորապսակներու շուրջը, նոր փեսան կը մօտենայ իր հօրը և կըսէ.

— Հայրի՛կ, հրաման է եկեր Դումանէն, պիտի երթամ անմիջապէս... կինս քեզի կը յանձնիմ, պիտի պահես ինչպէս քո զաւակը...

Հայրը, աւանդապահ, ծանրագլուխ իշխանաւոր, կը շփոթի, կարծես շըմբռնելով իմաստը տղայի խօսքերուն, ապա կը մրմնջէ.

— Ադաթ չէ՛, բալէս... մեղք է... վա՛ղը կերթաս։

— Չէ՛, հայրի՛կ ջան, չի՛ ըլլի, հրամանը հրաման է, կռիւ է... և դառնալով իր զինակից ընկերներուն.

— Դէ՛, տղերք ջան, ձիերը թամբէք։

Ապա արագ կը մօտենայ հօրը և մօրը, ջերմօրէն կը համ-

բուրէ անոնց դողդոջ ձեռքերը, կը շոյէ հարսին գլուխը և դուրս կուգայ...։

Պսակէն ուղիղ դէպի մահ կերթայ անխռով։ Այսպէս էր սերունդը այն ատեն։

— Այդ փեսաճ մեր անմոռանալի ընկերն էր՝ Դրօն։

ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ
(ԿՈՄՍ)

ՄԵՄ ՔԷՆԸ

(Հատուած «Աւարայրի ոգեշնչումը» յօդուածաշարէի համաձուն գլխից)

1918 թ. Մայիսի 21ին, Ջաջուռի՝ զօր. Նազարբէգեանի գլխաւոր շտաբից տեղեկացուեց. «Առաւօտեան շատ կանուխ, Թուրքերն առանց նախազգուշութեան, հակառակ զինադադարին, անցան Ախուրեան և ռմբակոծեցին քաղաքը. որոշուել է նահանջել Ղարաքիլիսա։ Անկասկած, Թուրքերը միւս կողմից պիտի շարժուին դէպի Երևան»։

Դէպի Նոր-Բայազէտ փոխշեղու ձայները բազմացան ուշադրոյս ամբոխի մէջ. մասնաւորապէս ունեւոր դասը ու հայկական թշուառ խանութպանութիւնը ճաց տենդահար խուճապով։

(Ազգային (Երևանի) խորհրդի նիստերը յուզումնալի էին, կրքոտ։ Առաջարկ կար Նոր-Բայազէտ խոյս տալու)։

Ահա այդ վայրկեանին ոտքի է կանգնում Արամը իր պարթև հասակով, զահմոտ կերպարանքով, թաւ յօնքերը սև կայծակների պէս գալարուն, շրթունք ու ակռաները իրար սրղմած, ուժգնօրէն հարուածում է սեղանին, թէ «Երևանը չե՞նք պատարկի, և պէ՞տք է կուենք, դիմադրենք թշնամուն, մինչև մեր վերջին կաթիլ արիւնը, մինչև վերջին գնդակը»։

Բռունցքի իր հուժկու հարուածը, իր ահեղ ձայնն ու իր վճռական խօսքերը Ազգային խորհրդի անդառնալի վճիռն է։

(Քաղաքի բոլոր ճամբարներին պահակներ են դրուած։ Թշնամին դէպի Երևան է խուժում Բաշ-Աբարանի և Սարդարապատի վրայով։)

Զօր. Սիլիկեանն առանց վայրկեան կորցնելու՝ իր փոքրաթիւ բանակը շարժման մէջ է դնում։ Արդէն առաջացած տարիքով, համակ մազ ու միրուքով այդ փոքրիկ, ջլուտ, բայց դիւրաշարժ և հմուտ զինուորականը կուի ձայ՛ին դառնում է, բոց ու կրակ, իր նպատակը ինքնապաշտպանութիւնը չէ, այլ յաղթանակը. հակառակ արտաքոյ կարգի դժուարին, եթէ ոչ անյոյս պայմաններին, թշնամու ոյժերը շարաշար խորտակելու իր հաւատը վարակիչ ու սրտապարար է ամէն տեղ, ուր յայտնւում է այդ ալեհեր, անվեհեր ու կորովի ծերունին։ Այդ հաւատի խոշոր սիւնն է Արամը, որ կազմակերպում է թիկունքը մի խստութեամբ ու արագութեամբ, որ հասնում է մոլեգնութեան։ Ամէն կողմ եռուզեռ է, ամէն ոք, մեծ ու փոքր, ծեր թէ տղայ, կին թէ մարդ, թիկունքում շարժման մէջ են բանակին օգնելու, ով ինչով կարող է։

Ազգային խորհրդի հետ միակամ, զօր. Սիլիկեանը Սարդարաբադը յանձնում է զօր. Փիրումեանին և Բաշ-Աբարանը Դրօյին։

Այս հնչուն, կոշտ, գրեթէ նախնական յորջորջումը—ԴՐՕ—որ մետաղեայ արկղի վրայ՝ բռունցքի ուժգին հարուած ասես, յաճախակի արտասանւեց և համաժողովրդական դարձաւ այս պատերազմի ընթացքին, որպէս մեր կամաւորական գնդերից մէկի խիզախ, աներկիւղ գլխաւոր։

Հապա նրանից առա՞ջ...

Ամրան տաք օրերին, Իգդիրի փոշոտ փողոցներով, տարիներ առաջ, ամէն երեկոյ, առանց թամբի և իսպառ մերկ և անսանձ ձիու վրայ՝ մի վեց-եօթ տարեկան ջլուտ ու նիհար մանուկ էր սլանում, նոյնպէս մերկ՝ ինչպէս իր երիվարը։

Փոքրիկ Դրօն էր... Դրաստամատը, իսկական անունով։

Օրւայ այդ պահին, իր հօր՝ քաջածանօթ Մարտիրոս Կակոյի ձին ջրելու և զովացնելու համար Իգդիրի մեծ առուն էր առաջնորդում, ինքն էլ լոզանում կենդանու հետ, նրա թիկունքին ցատկելով, մերկ սրունքներով նրա կողերին պլլած և ձեռքերով բաշին կախուած, սիրում էր արշաւել փողոցներով գէպի շուկայ. շոր կողմից բարձրացած ծիծաղին ու կատակին պատասխանում էր վրանքաց թշնամանքներով և շաքուեակում իր անօրինակ արշաւը, որսկան բազէի պէս՝ ամեհի երիվարի թիկունքին թառած։

Փոքրիկ Դրօն չէր սիրում, որ խաղն ու զարճութիւնն իսկ, անլուրջ սրախօսութեան ու ծիծաղի նիւթ դառնար։ Այդպէս էլ մնաց միշտ. ամենէն վտանգաւոր, ամենէն յանդուգն ձեռնարկներն իր գերագոյն հաճոյքներն եղան։ Ուսման օրերին Երևանի գիմնազիոնը շատ շուտ լքեց, հեռացաւ, վասնզի դասարանի պատերը ճնշում էին և կարգապահութիւնն անտանելի էր իր յախուռն, ազատասէր խառնուածքին։

Հազիւ երիտասարդ, կատարեց իր ծննդավայրի ամենէն աղմկալի, ամենէն գեղեցիկ ամուսնութիւնը, սիրահարուեց իր հօր մահացու հակառակորդ ազատատոհմի՝ Աւագեանների աղջկայ՝ գեղանի Նւարդի վրայ. սէրը փոխադարձ էր ու երկու կողմի չկամութեան, գեղջուկ դաժան բռնութեան մէջ, մի նոր Ռոմէօ և Ջուլիէտայի դրամա հիւսեց, մինչև որ երկու թայֆաների յամառութիւնը փշրուեց և Իգդիրի այս ամենէն կտրիճ ու խենթուկ տղայի և ամենէն գեղեցիկ աղջկայ սէրը յաղթանակեց։

Եւ այնուհետև, ինչպէս և նրանից առաջ էր, նա Հ. Յ. Դաշնակցութեան ռազմիկ խմբերի էն անձնուրաց, առասպելական անվեհերութեան և ճարպիկութեան հասնող քաջարի վարիչն էր, որի անունից դողում էին ցարական մեծ ու փոքր պաշտօնեաները, վասնզի իր հարուածները միշտ շեշտակի էին, անխաբ ու արդար։ Եւ իր ամէն մի այդպիսի հարուածից յետոյ, քանի՜-քանի՜ հայ մայրեր կրկնեցին... «Օրհնեալ լինի քո բազուկը և քո ծնունդը»։

Իր զարմանալի և միշտ մահասարսուռ արկածներով հարուստ կեանքը տակաւին չէ պատմուած — թո՛ղ այդ կատարեն մեր հետագայ սերունդները. և որքան շուտ՝ այնքան լաւ, վասնզի անհատական հերոսութիւնների թողած իր օրինակները միշտ կը մնան բարձր ներշնչումների աղբիւր այնքան ժամանակ, որ մեր բախտի անիւը իր ճամփան չի գտնել։

Դրօն մեն-մենակ վարանոտ ու անջիղ բազմութիւնների համար մի հզօր ու բեղուն դաստիարակութիւն է։

Հազիւ միջահասակ, կուռ ու թիկնեղ կազմուածքով, առնական գեղեցիկ գլուխը հաստատօրէն նստած կարճ պարանոցին, շատ մեղմ, գրեթէ նուրբ դիմագծերով այդ երիտասարդը ամբողջապէս իր զոյգ աչքերի մէջ է. նրանք խորունկ են, խմացական և ուժեղ. իր հայեացքի դիւթիչ զօրութիւն ունի

անգամ իր հանդարտության մէջ և երբ մռայլուում էր, յօնքերը կիտում և նուրբ շրթունքները ջղայնօրէն կծկում, այդ փոքրիկ մարդը դառնում է մի ահաւոր ու սասանեցնող հսկայ։

Իր ցասումի տարերային պոռթկումը միշտ վտանգաւոր է, վասնզի երբէք առանց հետևանքի չի անցնի։

Մասնաւոր կամ մտերմական յարաբերութիւնների մէջ և նամանաւանդ ընկերական շրջանում անուշ, քաղցրախօս, կատակասէր. նա խստասիրտ է և անողորմ ստանձնած գործի պարտականութեան ճամբին։ Անզիջող ու անվարան, յամառ և հետևողական, նա դադար չի առնի մինչև շիրագործի թէկուզ և ամենավտանգաւոր, և մահառիթ ձեռնարկը։ Ոչ մի արգելք կարող է նրան իր գծած ուղուց շեղել։

Եւ որչափ համեստ, ինքնամփոփ։

Ոչ ոք գիտէ իր ծածուկ և յայտնի խիզախութիւնների մանրամասները։ Ընկերների համար հազար ու մի զարմալի զրոյցներ ու պատմութիւններ ունի, բայց իր հերոսական կեանքի ու գործունէութեան, այնքան անգամ հաստատ մահը թևակոխ իր արիութեան մասին ոչ մի խօսք. մի՛ հարցնէք, կը ձանձրանայ և լուռ կը մնայ։

Իր հեզ, քաղցր և ընկերասէր բնաւորութեամբ յիշեցնում է անզուգական Նիկոլ Դումանին, որի աջ բազուկն եղաւ միշտ յեղափոխական գործունէութեան մէջ և որ նրան սիրեց միշտ, որպէս իր կորիւնը։

Մեր կամաւորական կռիւների օրերից, կարծեմ 1916-ից, ծանրապէս վիրաւորուած ճակատում, հազիւ ճողոպրած է մահից և մինչև այսօր գնդակը իր կրծքումն է թաղուած։ Եւ անիծուած արճիճի ծանրութիւնը թոքերի մէջ, յաճախ արիւն թքելով, Դրօն ամբողջ պատերազմը տևողութեանը կռիւների մէջ է և երբէք չի պարտուել։

Թէ ինչպէս գաղտնի, անհատական ու դաւադրական գործունէութիւնից դուրս եկած նա դարձաւ ռազմագէտ, աննման հրամանատար, դա իր գաղտնիքն է. փաստն այն է, որ մեր ամենածանր օրերին արևմտեան Հայաստանում կուելուց յետոյ, նրա գունդը 1918-ի գարնանը պայքարում էր Արարատեան աշխարհում։ Բարդողեան լեռնաշղթայի և Մասիսի փէշերի իւրաքանչիւր բլուր ու ժայռ նրա հերոսութիւնների լուռ վկաներն են։

Ահա զօրավարը, հայ ժողովրդի ծոցից ելած աննման մարտիկը, որին վիճակւած էր այնքան վճռական դեր կատարել 1918 թւի Մայիսի վերջերի կռիւներում, Սարդարաբադի յաղթանակի մէջ։

* * *

Եւ այսպէս, Մայիսի 21-ին կփւն սկսւած է Սարդարաբադում և Բաշ-Աբարանում։ Վերջինիս պաշտպանութիւնը ամենէն վտանգաւորն է. այդտեղի ձախողանքը պիտի անդրադառնայ ոչ միայն Սարդարաբադի, այլև Ղարաքիլիսայի բախտին, ուր նոյնպէս սկսւած է մեծ ճակատամարտը։

Դրօն է Բաշ-Աբարանում, անյաղթելի Դրօն։

Եւ մինչ Դրօն կռւում է յաղթականօրէն, յանկարծ լուր է հասնում Երևանում, թէ Սարդարաբադի բանակը նահանջում է։ Ի զուր զօր. Սիլիկեանը բացատրում է, համոզում, թէ բնաւ վտանգ չկայ, որ եղածը պարզ ռազմագիտական խաղ է (մանեւովր) թշնամուն բաց դաշտը քաշելու և վճռական ճակատամարտը տալու համար։ Ի զուր Ազգային Խորհրդի պատշգամբից Արամը ճգնում է հանգստացնել յուզւած, ալեկոծ ամբոխին։

Սպառնալիքով ու հայհոյանքով, կատարեալ ժողովրդական ապստամբութիւն։ Արամի կեանքն իսկ վտանգւած է, ինչպէս և Ազգային Խորհրդի անդամների։ Եւ յանկարծ պատշգամբից լսւում է Արամի որոտաձայն հրամանը.

«Կրակեցէք ահա այս երկու սրիկաների վրայ»։

Վարում կանգնած պահակները կրակում են խռովարար երկու գլխաւորներ վրայ, և ըմբոստացած խուժանը ցրիւ է գալիս, մինչ միւս կողմից բարձրանում են «Մեր Հայրենիք»ի գոռ հնչիւնները, «Կեցցէ՛ Արամը, կեցցէ՛ Ազգային Խորհուրդը» աղաղակները։

Որպես մեր հին հերոսական օրերի մի հզօր արձագանգ, բարձրացաւ հրամանատար զօր. Սիլիկեանի կոչը՝ հայ ժողովրդին։

Այս սրտաշարժ կոչը և Արամի հուժկու կամքը ապարդիւն չանցան. ճակատը թարմ ուժերով անընդհատ ամրացաւ։

Այո, Դրօն սեղմել է թշնամուն և հալածում է անխնայօրէն. բայց Սարդարաբա՞դը, Սարդարաբա՞դը...

Եւ այն գիշեր Հայոց Աշխարհի երկու հսկաները, Մասիս և Արագած, մէկը մռայլ ու ահարկու, միւսը՝ պառաւ կաթոգին մայր, նայում էին իրենց ոտքերի տակ յեղյեղուկ անցքերին։ Դարերից ի վեր առաջին անգամն էր իրենց զաւակների այս մրրկշաշունչ ընդվզումը թշնամիների դէմ։ Հին քէնը թանձրացել էր, Այրարատեան դաշտը թնդում էր ահեղ բախումներից, Արաքսը փրփրուն նժոյգի պէս ծառս եղած ալիքներով կատաղօրէն իր կուրծքն էր ծեծում ու հաւար կանչում. Մասիսի այրերից սանձակոտոր հողմերը դուրս էին պրծել ու սուրում էին դաշտերի վրայ մտրակելով խաւարը, ոռնում էին ու ճչում սրտապատառ. Արագածի կատարին մի ամպ էր խտանում, և աստղերը երկնքում մեղմիւ շշնջում էին իրար Հայոց Աշխարհի հէքիաթն անծայր։ Եւ վարում՝ կռիւ էր անողորմ ու արիւնահեղ, երկու բանակները իրար պլլած որպէս երկու վրիժածարաւ վիշապներ։

Մայիս 26-ի երեկոյեան հասաւ վերջապէս այնքան տենդով սպասւած լուրը։ Ազգային խորհրդի պատգամի առջև հազարաւոր ամբոխը հեւում էր անհանգստութիւնից ու անհամբերութիւնից։ Յաղթութեան ձայներ էին շշնջում իրար։ Հաւատա՞լ... յոյսի ու երջանկութեան դողոցք ամէն կողմ։ Արամը երևաց պատշգամբում շրջապատւած գործակիցներով. հայեացքները դարձան նրան։ Հեռագիր կայ ձեռքին, յուզմունքից գունատ է, բայց ժպիտ կայ երեսին։ Այդ մռայլ մարդը ուրախ է իր ձեռքի խորհրդաւոր թերթիկով, որպէս մանուկը իր բռնած թռչնիկով։ Քար լռութիւն։ Բազմութիւնն ասես շնչելուց իսկ դադարել էր, ամբողջ այդ գորշ, եռուն զանգւածը դարձել էր մի հատ աչք և լսողութիւն։ Մովսէսը Սինա լեռից աւելի մեծ պատգամ չէր բերել Իսրայէլին...

«Ժողովո՛ւրդ Հայոց, լսեցէք մեր քաջարի հրամանատար զօր. Սիլիկեանի հեռագիրը».—

«Հինգ օրերից ի վեր տևող ճակատամարտը վերջացաւ թշնամու կատարեալ պարտութեամբ»։

ԱԽԵՏԻՍ ԱՀԱՐՈՆԵԱՆ

ՄԱՄՈՒԼԸ ԴՐՈՅԻ ՄԱՍԻՆ

«ԿԱԽԱՐԴՈՐԷՆ ՔԱՋ»-Ը...

1956 Մարտ 8-ին, երեկոյեան ժամը 8.45-ին, հեռաւոր Ամերիկայի մէջ, փակւած վերջին էջը յիսուն և աւելի տարիներում գործած պատմութեան, որուն առաջին էջին վրայ գրւած էր կարճ անուն մը—ԴՐՕ։

Դեռ մինչև երէկ կեանք էր. հիմա դարձաւ պատմութիւն։

Դեռ մինչև երէկ գործ էր. հիմա դարձաւ ոգի։

Մահուընէն քառորդ ժամ առաջ մահկանացու մարդ էր. մահուընէն քառորդ ժամ ետք դարձաւ, եղաւ խորհրդանիշ մը։

Աշխարհէն հեռացաւ՝ մտնելու համար այն Ոսկեմատեանին մէջ, որ կը կոչւի Հայոց Նորագոյն Պատմութիւն։

Սերոբ, Գէորգ Զաւուշ, Քեռի, Խէշօ, Մուրատ, Անդրանիկ, Սեպուհ, Դրօ և ա՜յնքան ուրիշներ,— զինւորեալնե՛ր հայրենիքի հողին և հայրենի ժողովուրդին,— ասոնք բոլորը իրենց ձեռքով գրեցին Հայկական Դիւցազներգութիւնը վերջին 60-ամեակի ընթացքին։

Վաղը, Մարտ 18, յիսուն տարեան անգիր պատմութիւն մը կը յանձնւի հողին, հեռաւոր Ամերիկայի մէջ։

Շրջան մը կը փակւի իրմով, ուրիշ շրջան մը կը բացւի դարձեալ իրմով։

Ըսենք տակաւին.— Այս Մէկը մարմինով մեռաւ դուրսը, բայց հոգիով մնաց ներսը։ Մարմինը թաղւեցաւ հիւրընկալ այս օտարի հողի մէջ, բայց սիրտը մնաց հայրենի երկրին մէջ։

Հայ էր. քառասուն հազար եղբօր սիրով կը սիրէր իր ժողովուրդը։

Հայ էր. «այս նիւթին վրայ պատրաստ էր մրցել սրա նրա հետ, մինչև թարթիչներն այլևս չշարժեն», ինչպէս որ կըսէր Շեքսպիր՝ Համլետի բերնով։

Հայ էր։ Ո՛չ այն հայերէն, որոնց ներկայութեան կարելի է վատաբանել հայութիւնը, այլ այն հայերէն, որոնց մօտ ոչ ոք կը համարձակի աննպաստ բառ արտասանել հայութեան դէմ։

Յովհ. Թումանեան առիթով մը կը գրէր Ալեքսանդր Խատիսեանի մասին. «Այնքան հայ էր, միակը ամբողջ հայութեան մէջ, որ ես իսկ նրա ներկայութեանը վախենում էի վատ խօսք ասել հայ ժողովուրդի հասցէին»։

Եթէ «այսքան» հայ էր Ալեքսանդր Խատիսեանը, առաւել հայ էր Դրօ Կանայեանը, որուն ո՛չ թէ ներկայութեան, այլ բացակայութեան իսկ կարելի չէր «վատ խօսք ասել հայ ժողովուրդի հասցէին»։

Հայ էր և Մամիկոնեան, թերևս վերջին շառաւիղներէն Մամգուններու առասպելական տոհմին, որ «արութեան գործեր» արձանագրեց Հայոց Պատմութեան մէջ։

Դրօ Կանայեա՞ն. ո՛չ, Դրօ Մամիկոնեան,— խիզախ, յանդուգն, ձեռքը միշտ սուրին վրայ, ամէն վայրկեան պատրաստ մեռնելու «վասն հայութեանց»։

Ո՛չ միայն ասպետական շունչ էր, այլ և բաբախուն սիրտ։

«Շատերէն մէկը» չէր, այլ «շատերուն մէջ Մէկն» էր։

Մեծ էր՝ երբ ողջ էր. կարծես աւելի՛ մեծցաւ՝ երբ ողջ չէ այլեւս։

Իր բազուկը խնայել չէր գիտեր թշնամիին, բայց կը դառնար գուրգուրոտ ձեռք՝ հարազատին ու բարեկամին համար։

Քանի՛ անգամ բարձրացած էր իր անվեհեր բազուկը՝ անխնայ պատուհասելու համար հայատեաց, հայաջինջ ու հայադաւ իշխանաւորները, պարզ ոստիկան ըլլային թէ իշխան կամ փոխարքայ։

Իր կեանքը, մրրկայոյզ ու ալեծուփ, անվերջ նիրում եղաւ, անվախճան զոհաբերութիւն իր ժողովուրդին և հայրենիքին համար։

Համեստ էր, խոնարհ, գրեթէ միշտ բացակայ, երբ իր մասին խօսէր։

Կը դառնար սակայն խօսուն, առատաբան, գրեթէ ճարտասան, երբ խօսք ըլլար ուրիշներու մասին։

Քաղցր էր առօրեայ կեանքի մէջ, մեղր ու կարագով ծեփուած շաքարահացի պէս քաղցր էր, բայց խստասիրտ ու դաժան՝ անոնց հանդէպ, որոնք կրնային, որոնք կուզէին ո՛չ թէ «վատ գործել» իր ժողովուրդին համար, այլ «վատ խօսել» անոր հասցէին։

Համակ ժպիտ էր հարազատներուն հետ։ «Կը մարի՞մ կոր», կըսէր կատակով կամ անմեղ հեգնանքով, երբ ունկնդիր ըլլար,— ակամա՛յ ունկնդիր,— քաղցր զգացումի մը արտայայտութեան իր անունին, հմայքին, համբաւին կամ անցեալին մասին։ Եւ խօսքը կը դարձնէր ուրիշ կողմ։

Իր աշխարհը հայրենիքն էր, երկիրը, իր զինակիցները։ Անխառն հաճոյքով, անսահման հիացումով կը խօսէր մանաւանդ իր «մեծ ուսուցիչ»ին՝ Նիկոլ-Դումանի մասին։

Նիկոլ-Դումանը կուռք մըն էր իրեն համար, ինչպէս որ ինք կուռք մըն է հիմա մեզի և այլոց համար։

Ռազմիկ էր։ Իր նկարագրին, իր խառնուածքին, նախասիրութիւններուն, կարողութիւններուն, տաղանդին, թերևս նոյնիսկ հանճարին տիրական գիծը տուած կըլլանք այս երկու բառերը անդամ մը ևս կրկնելով.— «Ռազմիկ էր»։

Պիտի չմոռանինք ըսելու, թէ այդ «գիծը» կրնար մարաջախտի գաւազան մը շահեցնել իրեն, եթէ ապրած ու գործած ըլլար ուրիշ ժողովուրդներու մէջ և ուրիշ ժողովուրդներու համար։ Բայց նախընտրեց «զինուորն ըլլալ իր ժողովուրդին, քան «մարաջախտ» ուրիշներու համար։

Կը հաւատանք սակայն, թէ մեր խօսքը ո՛չ կաւելցնէ, ո՛չ կը նուազեցնէ հերոսին փառքը։ Որովհետև փառքը, որուն հասաւ ան իր ողջութեան, որուն կը հասնի ահաւասիկ նաև իր մահէն ետք, աւելի է, քան մարաջախտի գաւազանը, աւելի՝ քան տրուած կամ սուտուած շքանշանները։

Մեզի համար, իր ընկերներուն և բարեկամներուն համար, զինք սիրողներուն և չսիրողներուն համար, Հայոց Աշխարհին և Հայոց ժողովուրդին համար, Դրօն՝ հիմա բացակայ, բայց միշտ ներկայ, յիսուն տարեան պատմութիւն մըն է, յիսուն տարեան դիւցազներգութիւն մը։ յիսուն տարեան յաղթերգութիւն մը։

Ինչ որ հողեղէն էր իր մէջ, պիտի երթայ միանալու հողին։ Ինչ որ ոգեղէն էր իր մէջ, պիտի մնայ և պիտի երկարաձգի իրմէ անդին, ժամանակին և տարածութեան մէջ։

Ան յաղթեց ժամանակին և տարածութեան։

Եւ այս է փառքը, մեծ, իրական, անկորընչելի փառքը։

Հիմա որ փակուած է դագաղը, և փակուելու վրայ է նաև հողակոյտը, մեզի կը թուի, թէ իր հին զինակիցները, որոնք միասին կուռցան, բայց միասին չմեռան, պիտի ըսեն իրեն.

Պե՞տք է, որ դո՛ւն մեռնէիր, մանաւանդ դո՛ւն, երբ մենք ողջ ենք դեռ...»։

«ՅՈՒՍԱԲԵՐ»

ՅԻՇԱՏԱԿԻՆ ԱՌՋԵՒ

Մեր ողբեցեալ մեծանուն ընկերոջ՝ Դրոյի մարմինը «Հայրենիք»ի Սրահը փոխադրուեցաւ, ուր մնաց Շաբաթ և Կիրակի, պատեհութիւն տալու համար հայ ժողովուրդին, որ գայ ու իր վերջին յարգանքը ընծայէ։

Եկաւ ժողովուրդը, արցունքն աչքերուն, կսկիծը սրտին, խոնարհելու համար հայութեան դիւցազն զաւակին առջև, որ պիտի չմոռցուի։ Կարելի չէ բացատրել այն յուզումը, որ կը համակէր հայ բազմութիւնները, որոնք, յանձին Դրոյի, հայ ժողովուրդի հինաւուրց ոգին և քաջութեան ու զոհաբերութեան պաշտելի առաքինութիւնները կը պանծացնէին։

Ահաւոր է մահուան գաղափարը և անընդունելի վերջնական ոչնչացման զգացումը։ Մարդկային միտքը չը կրնար հաշտուիլ երբեք այս ահռելի վարկածին հետ։

Ի՜նչպէս հաւատալ, որ Դրօն, մէկը մեր ժողովուրդի դիւցաղուններէն, որ հայուն թշնամիները գետին փռած է, արիւնատենչ վիշապները «քաղած» է, ինչպէս առասպելական Վահագնը, մէկը՝ որ բանակներ շարժման մէջ դրած և յաղթանակներ շահած է, հայութեան անունը պանծացնելով, մէկ էրէն միւսը անէութեան մէջ իյնայ, Մե՜ծ Ոչինչին ամենակուլ գոգը։

Ուրեմն ամէն բան վերջացա՞ծ է. ուրեմն փոշի՞ կը դառնայ մեծ ու շքեղ այն մարդը, որ հայութեան նոր ժամանակներու

փառքը հանդիսացաւ և հայոց պատմութեան շքեղագոյն էջերէն մէկ քանին գրեց իր քաջութեամբ ու արիւնով։

Ի՞նչպէս հաշտիլ այս ահաւոր ու ցուրտ իրականութեան հետ։

Մահը անխուսափելի է, որուն շուչին առջև կը խամրին կեանքի գեղեցկագոյն ծաղիկները, մարդկային դիւցազնական դէմքերը, ստեղծագործ հանճարները, աննւաճելի խառնուածքները, անբեկանելի կամքերը։

Ի՞նչպէս հաւատալ...

Վէճ չկայ սակայն այս մասին, ո՛չ ալ դարման. ո՛չ ալ խուսափումի որևէ միջոց։

Ցաղթական է մահը, անողոք, անճողոպրելի՝ իր շնական քրքիջով, իր մահասփիւռ խորշակներով, մարդկային ամենէն շքեղ և դիւցազնական արարքներուն հանդէպ։ Խաւար է կեանքը ամենէն փաղփուն լոյսերուն հանդէպ։

Դառն, կծու իրականութիւն մը, որուն երկաթէ մագիլներուն տակն են բոլոր արարածները, կեանքի բոլոր արտայայտութիւնները և հետևաբար, արարչագործութեան գեղեցկագոյն ստեղծագործութիւնը՝ մարդը, իր հանճարով, իր երազներով և գերմարդկային թռող իր նւաճումներով։

Ճիշդ՝ այս ամէնը, անվիճելի ու վերջնական։

Սակայն այս բոլորը մէկ երեսն են միայն խորհրդաւոր իրականութեան, կեանքի ու մահուան միջև տեղի ունեցող մեծ գօտեմարտին։

Ամենազօր է Մահը, անընկճելի և անպարտելի. սակայն կեանքը իր կարգին պակաս չէ իր զօրութեան, գոյութեան, նաև իր գաղափարական յաղթանակներուն մէջ։

Դրօները յաղթական ու դիւցազնական, կը մեռնին, բայց չեն կորսուիր։ Փոշի կը դառնան բայց չեն անհետիր իբրև բուրմունք. կապրին՝ իբրև յուշք ու յիշատակ, իբրև անշէջ կրակ, իբրև անդրշիրիմեան յաւերժական Առաջնորդ։

Մահը, մեծ Անծանօթը, իր զօրութիւնը և իր ճիրանները կրնայ տարածել մարդոց միայն մարմիններուն վրայ. նիւթեղէն գոյութեան, վրայ, սակայն անզօր է ան կեանքին հանդէպ, շօշափելի, փխրուն և առժամանակ գոյացութեան որ կը ծաղկի միշտ ու կը ծլարձակի և յաւիտենական է։ Նոր Դրօներ

կը յառնեն, նոր դիւցազուններ կընձիւղին հին արմատնե-
րուն, անկորնչելի կոճղերուն վրայէն։

Մահն անզօր է անշօշափելի արժէքներուն հանդէպ, որոնք
չեն հպատակիր Մահուան իշխանութեան։

Դրօյի դագաղին առջև՝ մարդիկ արցունքն աչքերուն մէջ,
կրնան հառաչել, թէ «մեռա՜ւ Դրօն». սակայն կրնան բացա-
գանչել նաև «կեցցե՜ն նոր Դրօները», որոնց պիտի գան, Դրո-
յի ոգիէն ծաղկելով, անոր գաղափարներէն յափշտակուած,
անոր յիշատակին կեանքին ու գործին կրակներէն տաքցած։

Մարդը և անոր շքեղագոյն տիպարները աննւաճ կը մնան
իրենց ոգիովն ու գաղափարներով։ Կը մնան անմահ, յաւի-
տենական։

Չեն մոռացուիր և չեն մեռնիր։

Հրացանի այն գնդակը, որ աւելի քան քառասուն տարի-
ներ առաջ խոցեց ռազմադաշտին վրայ մեր աննման հերո-
սին կուրծքը, չկրցաւ մեռցնել զայն։ Քառասուն տարի մնաց
ան իր թոքերուն մէջ, և նոր, իր մահէն ետքը միայն հանուե-
ցաւ։ Գնդակը, կապարի կտոր մը, այսօր մետաղի բեկոր մը
չէ այլևս. նիւթական աւանդ մըն է, պատմական մասունք մը,
անմահ վկայութիւն մը՝ վախճանաւոր Դրօյի անվախճան
գոյութեան. անոր անվեհեր քաջութեան։ Պիտի յիշի ան դարէ
դար. հայկական թանգարաններուն մէջ պիտի ապրի, ապրեց-
նելով Դրօյի յուշքը, որքան ատեն որ ապրի հայ ժողովուրդը։

Գնդակին հետ պիտի ապրի Դրօյի փառքը, որ հայունը
պիտի ըլլայ. յանդուգն խոյանքն ու զոհաբերութեան թափը,
որոնցմով ապրած է մեր ժողովուրդը։

Յաւիտենական փա՜ռք հայ հերոսներուն և պատի՜ւ հե-
րոսածին հայութեան։

«ՀԱՅՐԵՆԻՔ»

ԴՐՕ

Այս անունով ծանօթ է ան, Դրաստամատ Կանայեանը, եւ
հայ ժողովուրդի յիշողութեան, ինչպէս Հայոց Պատմութեան
մէջ՝ այս անունով պիտի մնայ, կայծակի մը ուժովն ու փայ-
լովը։

Դժուար է, անկարելի նոյնիսկ հաւատալ, թէ Դրօն, հայ հերոսներու պանծալի փաղագին ամէնէն շքեղ ու վերջին անդամներէն մէկը՝ մեզի հետ չէ այլեւս։

Այս կեանքէն հեռու է, շա՜տ հեռու, յաւերժօրէն...

Անողոք մահուան շունչը հասած է նաեւ Անոր, որ կը թուէր անմահ ու անխոցելի։ Մահուան դէմ ճակատած էր, մէկէ աւելի անգամներ։

Այնքա՜ն ուժ, այնքան դիւցազնութիւն, գաղափարական ու գործնական այնքան յանդգնութիւն՝ մէկ մարդու մէջ, դժուար է գտնել պատմութեան մէջ։

Եւ հազուադէպօրէն այնքան բարութիւն ու գուրգուրագին սիրտ՝ արիւնէն ու արկածներէն չվախցող այս արտասովոր մարդուն մէջ։

Նախախնամութիւնը շատ քիչ անգամ ստեղծած է նման դէմքեր, ուր մարդկայինն ու աստուածայինը միաձոյլ՝ ներդաշնակուած էին իրարու հետ։

Դրօ, իր լայն ու ամուր ճակատով, կլոր ու համակրելի դէմքով եւ բարի այլ խորաթափանց աչքերով ու անուշ նայուածքով, բացառիկ ստեղծագործութիւն մըն էր. գերազանցօրէն հայկական տիպար մը, ժողովրդական բարքերով ու կենցաղով, այլ հոգեկան ազնուականութեամբ։

Ուժի, զօրութեան եւ անսպառ հաւատքի բիւրեղացած խտացումն էր ան, որ յարգանքի զգացում կ՚արթնացնէր իր շուրջը, առանց պարտադրութեան արուեստական ճիգերու։

Երիտասարդ տարիքէն, կէս ձգած դպրոցական կեանքը, նետուեցաւ ան Հայկական Յեղափոխութեան կրակէ ալիքներուն մէջ, եւ, անընդհատ, գործեց ու պայքարեցաւ, զարմանք ու հիացում ստեղծելով իր շուրջը։

Լքելով բարեկեցիկ ընտանիքի մը շնորհած կեանքը, նուիրուեցաւ ան իր ժողովուրդին ծառայութեան, անոր Ազատութիւնը պահանջելով, արիւնի ճամբաներուն վրայ։

Խառնուածքով գաղափարական եւ հոգիով զգայուն ու վսեմ, Դրօ Հայկ. Յեղափոխութեան բոցերուն մէջ թրծուեցաւ, իր կազմակերպութեան՝ Հ. Յ. Դաշնակցութեան գաղափարական դրօշին տակ։

Առանձին չէր ան իր նուիրումին ու ծառայութեան մէջ. իր հետ կային դիւցազնածնունդ ուրիշ դէմքեր, սակայն, ան

գիտցաւ առանձին պատմութիւն մը ստեղծել, իրե՛ն յատուկ միայն, իր քաջութեամբ, յանդուգն արարքներով, զինուորական բացառիկ ընդունակութիւններով։

Դրօշի կեանքը, ինքնին առանձին ու շքեղ դիւցազներգութիւն մը եղաւ, հրեղէն վէպ մը, վիպագրութիւն մը, դասական պատգներով եւ անօրինակ խոյանքներով։

Իր երիտասարդութեան, յեղափոխականի իր առաջին օրերուն, հալածեց ան հայ ժողովուրդի դաւաճանները եւ անոր թշնամիները. հայ կեանքի հրձիգները, որոնցմէ երկուքը, հայակեր Նակաշիձէն, Բագուի զինուորական հրամանատարը, եւ զօրավար Ալիխանով, Ալեքսանդրապոլի նահանգապետը, գետին փռեց, օր ցերեկով, որովհետեւ թաթարական հորդաները գրգռած էին անոնք հայ ժողովուրդին դէմ, արիւնի մէջ խեղդել փորձելով զայն։

Հայ-թաթարական կռիւներուն ընթացքին, արի ու հարուածող բազուկներէն մէկն եղաւ ան Հ. Յ. Դաշնակցութեան, որ հայ ժողովուրդի պատմական ինքնապաշտպանութիւնը կազմակերպեց, ղեկավարութեամբ հերոսատիպ ուրիշ դէմքի մը, անմոռանալի Նիկոլ Դումանի։

Աւելի ուշ, իբրեւ հրամանատար կամաւորական Բ. Գունդին (1914—16), եւ, յետոյ, երկու տարի ետք, Հայաստանի Անկախութեան ստեղծման անհաւասար կռիւներուն ընթացքին, իբրեւ հրամանատար Բաշ Աբարանի ճակատին, մնաց անընկճելի եւ յաղթանակէ յաղթանակ առաջնորդեց իր բանակը։

Անվեհեր դրօշակներէն եղաւ ան Հայկական Ազատամարտին եւ հաւատաւոր դարբիններէն՝ Հայկ. Անկախութեան։

Վահագնատիպ այս հերոսը պարտութիւն չտեսաւ երբեք, ոչ իսկ ձախողանք՝ իր գրոհներուն մէջ, որովհետեւ իրմով իր բանակները կը կերպարանափոխուէին դիւցազնական գաղափարներու։

Համաշխարհային Երկրորդ պատերազմին, իր գերագոյն մտահոգութիւնը եղաւ հայրենիքի հայութեան պաշտպանութիւնը, բախելով անհուն դժուարութիւններու։ Առաքելութիւն մը՝ զոր տարաւ պատուով, գնահատուելով հայ ու օտար բարձրագոյն շրջանակներէ։

Խաղաղութեան օրերուն, չմնաց խաղաղ, շարունակեց իր

նուիրական գործը, հետապնդելով Հայկական Դատը, իր պայծառատեսութեամբ ու զոհաբերութեան ոգիով, յարգանք պարտադրելով բոլորին։

* * *

Իր ներկայութիւնը Սփիւռքի մէջ, Միջին Արեւելքէն Եւրոպա ու Ամերիկա, վառ կը պահէր բազմութիւններու մէջ հայրենիքի սէրն ու կարօտը եւ հպարտութեան զգացումներով կը լեցնէր հայկական զանգուածները։

Հայրենիքէն բեկոր մըն էր իր գոյութիւնը, հայրենի լեռներէն հզօր արձագանք մը, բազմահազար մեր մարտիկներէն շքեղ աւանդ մը։

Այսօր, իր մահով, սուգ են բոլորը, տարագիր հայութենէն մինչեւ հայրենիքի մէջ ապրող հայութիւնը, սգաւոր՝ հայրենի լեռներն ու դաշտերը, որոնք իր խոյանքներուն արձագանգը կը պահեն դեռ եւ իր սպիտակ երիվարին վազքերուն դոփիւնը։

Առօրեայ կեանքի մէջ համեստ, ընկերական ու քաղցրաբարոյ այս դէմքը, գործի ընթացքին վճռական միշտ, շարունակեց պայքարը, որ իրը չէր միայն, այլ իր ժողովուրդինը։ Խրատեց ու խրախուսեց հայկական բոլոր կազմակերպութիւնները, հայութեան բոլոր ջանքերը՝ մնալու եւ տոկալու։ Իրմով ոգեւորուեցաւ ազատատենչ հայութիւնը, եւ, յատկապէս հայ երիտասարդութիւնը, որոցմէ առաջինին՝ փառքը դարձաւ, երկրորդին՝ դիւցազնական մտատիպարը։

Իր երկարատեւ եւ տաժանագին հիւանդութեան օրերուն, պահեց ան հերոսական իր կեցուածքը։ արհամարհելով մահը եւ քաջութեամբ դիմագրաւելով ճակատագիրը, այն միակն, այն խոր կսկիծով՝ որ մահը կը գտնէր զինք ոչ թէ ռազմաճակատներու վրայ, այլ հիւանդանոցներու մէջ...

Վրիպած, աննուաճելի այդ Երազին առջեւ, արցունքը կը կախուէր իր անուշ աչքերէն, որոնք փակուեցան ընդմիշտ, իրենց հետ փակելով նաեւ հայոց պատմութեան ամէնէն փառաւոր էջերէն մէկը։

Զգա՞ց արդեօք, ունեցա՞ւ անկարելի պատրանքը, վերջին պահուն, ճակատամարտի մը մէջ իյնալու հպարտութեան, իր սպիտակ ձիուն վրայ նստած։

Ո՞վ կրնայ գիտնալ հերոսի մը հոգեվարքին վերջին ողբերգութիւնը։

Կորանցուցինք աննման Դրօն։

Հեռացաւ այս աշխարհէն, մտնելու համար հայոց պատմութեան էջերուն մէջ. բնակելու համար հայ ժողովուրդի

Ուժի, զօրութեան եւ անսպառ հաւատքի բիւրեղացած սրտին, հոգիին մէջ։

Ցարգա՜նք ու համբոյր իր մեծ ու յաւիտենական յիշատակին։

Իր քաղցր ու անմոռանալի պատկերին, որ կ՚ընկղմի յաւերժութեան մութ ալիքներուն մէջ։

Փա՜ռք իրեն, իր սգաւոր ընտանիքին, իր դիւցազնակերտ Կազմակերպութեան եւ իր դժբախտ ժողովուրդին։

«ՀԱՅՐՆՆԻՔ»

ՔԱՋՆ ԴՐՕ ԱՋՔԵՐԸ ՓԱԿԵՑ ՊՈՍԹԸՆԻ ՄԷՋ

Ո՞րքան յաճախադէպ դարձան գուժկան լուրերը։ Խոնարհներու հետ, կաղնիներ են որ կը տապալին, իրենց ետին ձգելով սուգ և ամայութիւն։

Անհուն կսկիծով կը գուժենք վերջինը, անփոխարինելի կորուստը առիւծասիրտն ԴՐՕՅԻ Պոսթընի մէջ, տաժանելի հիւանդութենէ մը ետք։

Շաբաթ օրուան թերթը տպագրութեան յանձնուած էր, երբ ստացանք հետեւեալ երկու հեռագիրները.—

Գահիրէ, 9 Մարտ.— Ընկեր Դրօ մեռաւ Մարտի 8ին, իրիկուան ժամը 8.45ին, Պոսթընի մէջ։

Պոսթըն, 9 Մարտ.— Ընկեր Դրօ մեռաւ նիգշաբթի, 8 Մարտ, ժամը 8.45ին։

Անակնկալ մը չէր այս դառն հարուածը։ Բժիշկները քանի մը շաբաթ ի վեր ամէն յոյս կտրած էին և անխուսափելի կը համարէր վախճանը։ Ամէն անգամ որ ցրիշը երևար հեռագիր մը ձեռքը, դող մը կը համակէր մեզ։

Քանի մը տարի առաջ վիրաբուժական գործողութեան մը ենթարկուեցաւ Փարիզ, մեծ յաջողութեամբ, Ամերիկայի մէջ

ալ ամէն վտանգ անհետացած կը համարէին։ Վերջերս կը նեղէր պարբերական տագնապներէ և Դեկտ. վեցին Պէյրութէն Պոսթըն գնաց, բժշկական քննութեան մը ենթարկուելու համար։

Նախապէս լուրերը յուսատու էին և բժիշկները լաւատես կերևային։ Դժբախտաբար, փետրուարի առաջին օրէն իսկ շարաղէտ հիւանդութիւն (խլիրդ) սաստկացաւ, օրէ օր ծանրացնելով իր կացութիւնը։

Հակառակ իր յուսահատական վիճակին, Դրօ նոյն քաջութեամբ կը տոկար, յոյս և կորով ներշնչելով իր շրջապատին, Արդէն հիւանդանոց փոխադրուած էր, և ընկերները կարգով կը հսկէին իր սնարին վերև, մինչ գիտութիւնը ամէն միջոց կը փորձէր, վախճանը յետաձգելու համար։

Այդ անհնարին տագնապին մէջ իսկ, երբ այլևս անդարմանելի կը համարուէր, Դրօ ընկերներուն դառնալով կըսէ.— «Պէտք է հպարտ ըլլալ, որ Դաշնակցութեան նման կազմակերպութեան մը անդամներ ենք»։

* * *

Անոգոք հարուածին ազդեցութեան տակ, գրիչն անգամ դժուար կը սահի թուղթին վրայ, քանի մը բառով պատկերացնելու համար կորուստին խորութիւնը և կորուսեալին կեանքն ու գործը։

Ա.ռ այժմ քանի մը համառօտ տեղեկութիւններ.—

Դրօ, իր բուն անունով Դրաստամատ Կանայեան, ծնած է 1884 Մայիսի 31-ին, Իգդիր, Արարատի ստորոտը։ Աւետիս Ահարոնեանի հայրենակիցն էր և Կակոյենց ծանօթ ընտանիքի զաւակ։ Աշակերտած է Երևանի ռուսական գիմնազիոնը։ Խորապէս ազդուած է իբրև յեղափոխականի ու զինուորականի՝ Նիկոլ Դումանէն, զայն միշտ որակելով «Իմ ուսուցիչը»։

Էջմիածնի կալուածներու գրաւման շրջանին տեղի ունեցած համաժողովրդական բողոքի ատեն, մահափորձի կենթարկուի Իգդիրի հայատեաց գաւառապետը, որու հետևանքով Դրօ կանցնի Բագու։ Երբ կը սկսին 1905ի հայ-թաթարական կռիւները, նաւթային մեծ կեդրոնին մէջ, Դաշնակցութիւնը կորոշէ մահափորձի ենթարկել նահանգապետ Նակաշիձէն։

Այդ պարտականությունը պատիւով կատարեց Դրօն։ Անցեալ տարի, գարնան, մտերիմ ընկերներու սեղմ շրջանակի մը մէջ, ան կը յիշեցնէր այդ յիսնամեակը ու կը պատմէր, թէ ինչպէս կատարած էր այդ ահաբեկումը։

Աւելի ետք, ցարական հալածանքներէն խուսափելու համար, Օամ. Սահմանադրութեան շրջանին Դրօն Պայազիտ հաստատուեցաւ «Սուրէն» անունով։

Առաջին համաշխարհային պատերազմը երբ պայթեցաւ, վերադարձաւ Կովկաս, կամաւորական շարժման գլուխը անցաւ և առաջիններէն եղաւ որ մտաւ Վասպուրական ու ազատեց բազմահազար ժողովուրդ։ Նախ քան Վասպուրական մուտքը, Դրօն ծանրապէս վիրաւոր կը գտնուէր Թիֆլիսի հիւանդանոցը ուր ցար Նիքոլան անձամբ այցելեց և Ս. Գէորգի պատուանշանը տուաւ։

Ռուս յեղափոխութեան շրջանին մեծ դեր կատարեց Երեւանի և Թիֆլիսի մէջ։

Մայիս 28ի նախօրէին Սարտարապատէն Ղարաքիլիսէ երկարող պաշտպանութեան գիծին կեդրոնը, Բաշ Աբարանի լեռնային շրջանին մէջ, Դրօն հերոսական պաշտպանութիւն մը կազմակերպեց, ազատելով Հայաստանի ժողովուրդը բնաջնջման վտանգէն։

Հայաստանի Հանրապետութեան շրջանին, Դրօ չուզեց նախարար դառնալ, բայց մնաց միշտ հայ զինուորին ու զինուորականներուն կողմէ ամէնէն աւելի յարգուած ու սիրուած անձնաւորութիւնը և փնտռուած գործակիցը զօրավարներ Նազարբէկեանի, Սիլիկեանի և Հախվերտեանի։ Հայաստանի ներքին խաղաղութիւնը ամրապնդելու և օտար գրգռիչ տարրերէ ազատելու համար լուրջ աշխատանքներ կատարեց լուռ ու մունջ։ Մասնաւորաբար մշտապէս ապահովեց Երևանի ու Զանգեզուրի շրջանի հաղորդակցութիւնը, հիմնովին վերցնելով արգելքները։

Հայաստանի խորհրդայնացման նախօրէին ստանձնած էր Զանգեզուրի պաշտպանութիւնը և կը պատրաստուէր Ղարաբաղ մտնել, երբ քեմալական բանակը Հայաստան արշաւեց բոլշևիկներու օգնութեամբ։

Այդ օրերուն Դրօն ստանձնեց Սուրմալուի (Իգդիր) շրջանին պաշտպանութիւնը և կատաղի կռիւներ տեղի ունեցան,

առանց թիզ մը նահանջելու։ Կարսի անկումը հարկադրեց որ Դրօն քաշուի Սուրմալուէն։

Զինուորական պարտութիւններու հետևանքով, Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնը քաշուեցաւ իշխանութենէն և նոր կառավարութեան մէջ զինուորական նախարարութիւնը ստանձնեց Դրօն որ Լրկրանի հետ կնքեց 1920 Դեկտ. 2-ի ծանօթ համաձայնութիւնը։ Խաղաղ պայմաններու մէջ, շնորհիւ Դրօյի ուշիմութեան ու անձնական հեղինակութեան, իշխանութիւնը փոխանցուեցաւ կարմիրներուն։

Հակառակ այդ ուղղամիտ վերաբերմունքին, բոլշևիկները առաջին անգամ Դրօն իր խումբ մը սպաներուն հետ աքսորեցին Ռուսաստան։ Յետոյ սկսան զանգուածային ձերբակալութիւններ ու հալածանք Հայաստանի մէջ։

Երկու տարի ետք, Թիֆլիս, Չեկայի շէնքին մօտերը, Դաշնակցական ահաբեկիչներ պատժեցին ճէմալ փաշան։ Այս դէպքին հետևանքով ձերբակալուեցան մօտ երկու հարիւր Դաշնակցականներ։ Դրօն այս դէպքի առթիւ հրապարակ եկաւ իբրև միջնորդ։ Թոյլ տուեցաւ իրեն երթալ Թիֆլիս և իբրև հարկադրական տուրք յայտարարութիւն մը ստորագրելով գոհացում տուաւ խորհրդային բռնակալներուն և բանտերէն ազատեց իր զինակից ընկերները։

Այս ձեռնարկին համար ալ իրեն թոյլ տուեցաւ հեռանալ Խ. Միութենէն։ Դրօ հաստատուեցաւ Պուքրէշ և երկար տարիներ զբաղեցաւ անձնական գործով, իրեն համար տնտեսութիւն մը ստեղծեց, միշտ օգնութեան հասնելով բազմաթիւ տարագիր մտաւորականներու, գործիչներու և հայդուկներու։

«ՅԱՌԱՋ»

ՍՈՒԳԻՆ ԱՌՔԵԻ

Մեզմէ առ յաւէտ բաժնուողներու գործն ու վաստա՛կն է որ կը փառաւորենք, ու անոնց հետ կորսուող հոգեկան և բարոյական արժէնիքներն են որ կողբանք։

Ռուբէն Տէր Մինասեանները, Լևոն Շանթերը, Նիկոլ Աղբալեանները, Գնդապետ Բաղդասարեանները և Դրօները՝ մեր

այդ փառաբանանքին պէտք չունին. կրնանք ըսել և ընդգծել նոյնիսկ, որ անոնց անձը վեր կը մնայ մարդկային մեր այդ տուրքէն։ Սակայն, մարդկային մտքերու և հոգիի ազնւագոյն արտայայտութիւնները պէտք է ցայտուն դարձին, ոգեկան այդ արժանիքներու ճամբով թրծելո՛ւ, ներշնչելո՛ւ համար յետնորդ սերունդները, ու մա՛նաւանդ պատմութեան առջև՝ վկայութեան մեր բաժինը վերածելու համար «արժանաւորներուն ընծայուած պատիւ» մը։

Պաշտամունքի հաւասար սէր և համակրանք կը վայելէին Դրօները, որովհետև անձնուրացներու փաղագին կը պատկանէին, ուր իրենց կեանքը կապրէին մե՛ր հաշուոյն։ «Անձ»եր չէին՝ այլ «մենք»եր։ Կը սպառէին իրենց՝ ժողովուրդի՛ն համար, ու իրենց առօրեայ այդ մաշումին մէջ կը վերանորոգուէին իրենց ժողովուրդո՛վ։

Մեր ողբացեալ ընկերը առաքելատիպ դէմքերէն մէկն էր այն կազմակերպութեան, որ ծանօթ է Հ. Յ. Դաշնակցութիւն անունով, և որուն գաղափարական և ոգեկան կառոյցով խորհրդանշող բոլոր բարոյական և հոգեկան արժանիքները կը մարմնաւորէր իր անձին մէջ,— վաղ պատանութեան տարիներէն մինչև ծերութիւն։ Ասոր համար էր, որ, ամէն բանէ առաջ, իր անհատականութեան մէջ կողջունէինք ո՛չ թէ մէկը, ո՛չ թէ մարդ մը,— այլ, շրջա՛ն մը, մեր պատմութեան մէկ է՛ջը, կարելի է ըսել՝ ամէնէն փառահեղ էջե՛րը։ Ասոր համար էր, նաև, որ տարիքի ծանօթութիւնը կը կորսնցնէինք իր ներկայութեան, ու մեր դէմ կը գտնէինք խանդավառ երիտասարդ մը, յաւիտենապէս նորոգելու, թարմանալու, բազմապատկելու պատրաստ մարմնեղէն անօթ մը։

Հիմա որ չկայ իր շօշափելի ներկայութիւնը, անգամ մը ևս կը հաւատանք մահուան վատութեա՛ն, ու, նո՛յնքան, մահուան տկարութեա՛ն։ Ջունինք զինք, երբ ամէն ատենէ աւելի պէտք ունէինք իրեն,— սակայն՝ որքան ալ չունենանք իր ներկայութիւնը, ունինք իր գործին պատմական շքեղութիւնը և իր գաղափարական էութեան աննիւթ երկարաձգումը մեր մէջ։ Մեռնողները ապրեցնել՝ մե՛ր ձեռքն է որոշ չափով,— անշուշտ եթէ կրցած ենք անհետ կորսուողներու հոգիէն ու մտքէն բաժին մը ստանալ, երբ անոնք բաշխա՛ծ են իրենց պատուածութիւնը մեզի. իրենց կեանքով ու գործով իսկ փաս-

տած են՝ թէ աւելի՛ են քան մարդիկ, իրենց տրուած ժամանակը ապրող մահկանացուներ։

Այդ անմահներէն մէկն էր մեր ընկերը, ազգային հերոս մը և մարդ մը՝ միաժամանակ։ Մանուկ հոգիով, մանկանալու մեծութիւնը իր վերաբերումն, խօսքին, ձայնին ու շարժումին մէջ անդիմադրելի հաղորդականութեան մը վերածող մարդը. մանաւանդ՝ խոնարհներուն համար նուիրելու, անոնց ցաւն ու վիշտը բաժանելու, անսակարկ ծառայելու յօժարակամ մարդը.— «ամէնուն զինքը տուող, ամէնուն բաժանուող և սակայն նշխարքին պէս անբաժան մնացող «Լոյսին նման. «Մեծութեան և զոհագործումի համար փայլող» Լոյսին նման զոհելու համար ղրկուած առաքեալին նման. ինքն իրեն չպատկանող առաջնորդին պէս։

Եւ այդպէ՛ս ապրեցաւ մեր ընկեր Դրօն։ Պատանութեան տարիներէն մինչև իր մահը, երբեք ինքն իրեն համար չապրեցաւ. ինքզինք տուաւ հայրենիքին, ժողովուրդին, զինուորին ու քաղաքացիին, մեր հաւաքական գոյութեան։ Չպատկանեցա՛ւ իրեններուն,— իր ընտանիքին։ Պատկանեցաւ մեր ամբողջի՛ն։ Անսահմա՛ն հարստութեան հնարաւորութիւններ ունէր. սակայն, ինչ որ ունեցաւ, բաժանեց միշտ. տուաւ՝ առանց որևէ ակնկալութեան, ու երջանիկ եղաւ միշտ այն գաղափարով, որ երբ իրենները կունենան, երբ իր ժողովուրդի զաւակները կը սփոփին, երբ իր շուրջ ցաւն ու կարիքը կը մեղմանան, ինքն իր օրերը կրնայ անցընել անփոխարինելի հոգեկան գոհունակութեամբ։

1903—1953, ամբողջ յիսուն տարի, ճակատեցաւ նիւթական և աննիւթական բոլոր այն չարիքներուն դէմ, որոնք մեր ժողովուրդը իր գոյութեան խարիսխներէն ցնցելու հակամիտութիւնը ցոյց կուտային։ Եղաւ պատուհասիչ բազուկ և ներշնչեալ մարտիկ, կռի կախարդ մը, քաջերուն մէջ ամէնէն քաջերէն, խռովիչ ըլլալու չափ աննեղող՝ Հայուն բոլոր տեսակի գահիճներուն դէմ։ Ժամանակակից մեր պատմութիւնը չափազանցութիւն մը գործած պիտի չըլլայ, եթէ 451-ի Վարդանին հետ զուգահեռ մը ստեղծէ 1918-ի Դրօյին միջև։ Աւարայրն ու Արարատեան դաշտը, գոյութեան երկու պատերազմներու մէջ, 451-ին և 1918-ին, ճանչցան Հայութեան հաւատ-

քի և Հայրենիքի երկու լուսաճակատ մարտիկներ։ Բաշ-Աբարանի յաղթական զաւակը, այն նո՛յն ոգիով և այն նո՛յն անկարելի կռիւը մղելու վճռականութեամբ կախարդած էր իր զինուորեալները, որքան Վարդանը։

1903-ի բախտորոշ և խռովայոյզ օրերուն, երբ ցարական իշխանութիւնը եկեղեցական կալուածներու գրաւումին կը ձեռնարկէր, և 1905ին, երբ Հայ թաթարական կռիւները մեզ մեր բոլոր նիւթական և սրբազան իրաւունքներուն մէջ խեղդելու կը ձգտէին, Դրօշի շանթահարիչ բազուկն էր՝ որ անգամ մը ևս մեր ցեղին առուգութիւնն ու ապրելու կամքը մը պատգամէր... Մենք չենք որ պիտի գրենք պատմութիւնը. սակայն կրնանք վստահ ըլլալ, որ անցողիկ պղտորութիւններու սա շրջանէն ետք, օր մը, Հայոց Պատմութիւնը հպարտութեամբ պիտի քանդակէ անոր անունը՝ անմահներու Պանթէոնին մէջ։

Ոգեկոչումները, սուգն ու վշտի զանազան արտայայտութիւնները իմաստ ունենալէ կը դադրին, եթէ անհետացող դէմքերու կեանքն ու գործը ուղեցոյց չդառնան եկեղեցիներուն։— Ա՛յս գիտակցութեամբ կողբանք մեր մեծ ընկերոջ անդառնալի կորուստը։

«ԱՐԵՒԵԼՔ»

ՄԵԿՆՈՂՆԵՐԸ ԵՎ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ

Դրօշներու անդարձ մեկնումը՝ անգամ մը ևս մեզ կը կեցնէ յաւիտենական հարցականին առջև.— Ո՞վ պիտի լեցնէ անհետացողներու շիջումով գոյացած պարապը։

Այս հարցումը տարէ տարի եղերաշեշտ կը դառնայ կարծես։ Մեզմէ ամէն մէկը կը թւի հաւատացած ըլլալ, թէ եկեղեցիները պիտի չկարենան ըլլալ մեկնողներու պէս, տարբեր խօսքով, այնքա՛ն ջատագովուած նիւթրումի և զոհաբերութեան զգացումը պիտի չշարունակի նորերուն մէջ և ասիկա, ո՛չ թէ անոր համար՝ որ Հայութիւնը կը պարպուի այդ առաքինութիւններէն, այլ որովհետև կեանքի մեր նոր պայմանները անձնասէր ու նեղ հանրանէր կը դարձնեն մեզ։

Անշուշտ որոշ ճշմարտութիւն մը կայ այս տրտում եզրակացութեան մէջ։ Մասնաւորաբար Դրօներու պարագային, մենք աւելի անխա՛բօրէն կրնանք հաստատել, որ հոգիի ու ազգայինի աշխարհահայեացքի այդ կառուցւածքով մարդիկ սակաւ կը հասնին արտաշխարհի մէջ։ Եւ ինչո՞ւ առարկայական չըլլալ մեր դատումներուն մէջ, աւելացնելու համար՝ որ անբնական ոչինչ կայ այս երևոյթին մէջ։ Անոնք հայրենի հողը ունեցան իրենց ոտքերուն տակ, ու մեր լեռներու օդով լեցուցին իրենց թոքերը. հայութիւն շնչեցին, հայութեամբ թրծուեցան և հայութեան պաշտամունքը իրենց երիտասարդական տարիներու մեծագոյն սէրը եղաւ։ Հիմա տարբե՛ր պայմաններու մէջ հասակ կառնեն մեր սերունդները, և որքան ալ հիներու և երէց սերունդի օրինակը կենդանի ըլլայ նորերու մտքին ու աչքերուն առջև, ակնկալելի չէ՝ որ նո՛յն և հաւասար՛ նուիրումով մեր դատին ծառայելու պատրաստ մարդիկ գտնենք մեր շուրջ բոլորը։

Ասիկա ընդհանուր ճշմարտութիւն մըն է, և մենք ցնորքներու չենք ուզեր յանձնուիլ, հաւատալու համար՝ թէ եկուորները կրնան մեկնողներու տիպարով ու չափանիշով մարդիկ դառնալ, մեր ներկայ ու ապագայ հաւաքական կեանքին մէջ։

Այսուհանդերձ, ճիշտ չէ այս արդար հաստատումը վերածել ամբողջական յոռետեսութեան մեկնակէտի մը, և նահանջական հոգեբանութեամբ եզրակացնել՝ թէ մեկնողներուն հետ կամայանայ նաև հանրային մեր կեանքը։

Չենք հաւատար ասոր։ Ընդհակառակն, կուզենք շեշտել մեր խորունկ համոզումը, որ նոր սերունդին մէջ ևս նո՛յնքան խորունկ հայրենասիրութեան մը հոգեյատակ կայ,— և եթէ միջավայր ու մթնոլորտ ստեղծի անոնց հոգի, ազգի և ազգային սրբութեանց պաշտամունքը վերածելու հաւատքի և գիտութեան, մենք կունենանք ա՛յլապէս վստահելի և ամբողջէն գիտակից երիտասարդութիւն մը,— վաղեան մեր յոյսն ու ապահովութիւնը միաժամանակ։ Անշուշտ դիւրին չէ նոր սերունդները խանդավառել անյայտացող ու երազական կարգախօսներով, գոց սովրած կամ կաղապարատիպ բանաձեւերով։ Բայց, որքան ատեն կայ Դաշնակցութեան գաղափարական դպրոցը, կրնանք ակնկալել՝ որ հայութիւնը ունենայ

Դրօներու, Ռուբէններու, Բաղդասարեաններու և Աղբալեաններու նուիրումով և խորունկ գիտակցութեամբ այս ժողովուրդին ծառայելու պատրաստ նոր արժէքներ։ Մեր դժբախտութիւնը կամ դժուարութիւնը կը սկսի հոն՛, ուրկէ օտարամուտ ու խորթ բարքեր կամ մե՛ր իսկ ծոցին մէջ սնուցուած ու մեր հոգիին հակադիր քաղաքական համոզումները կը թունաւորեն մեր զանգուածներու միտքը ու զանոնք պատրաստ գետին կը դարձնեն խաթարիչ վարդապետութիւններու։ Մեր ներքին մթնոլորտի ապականութիւնը կը սկսի հո՛ն, ուր մեր պատմութենէն և հայրերէն մեզի փոխանցուած ցեղային ստորգելիները կը դժգունէին՝ դարավերջիկ համոզումներու և կեանքի հանգանակներու անդրադարձումով,— կրաւորականութիւն, անհաւատութիւն, վեհերոտութիւն, ստորադասութեան զգացում և տրկամտութիւն։ Ա՛յս դառն իրողութեան մէջ պէտք է փնտռել ցաւը, որ կը գալարէ մեզ և ամուլ կը դարձնէ հասնող սերունդներու մէկ մասը։ Եկեղեցին և Հայրենիքը ամէնէն մեծ նուիրականութիւններն էին մեզի համար, որքան ատեն որ մենք այդ երկու իրականութիւնները կըմբռնէինք իրենց անխարդախ ըմբռնումին մէջ։ Այսօր, առաջինը թէ երկրո՛րդը պատուակ դարձած են՝ քան նպատակ, ու անոնց անունով մեր բազմութիւններուն ներկայացող կարգ մը ոյժեր՛ կը շահագործեն մեր միամտութիւնը ու մաքուր հաւատքը։

Կրնենք այս հաստատումները, ու կը բաղձանք՝ որ մեր ժողովուրդի բացարձակ մեծամասնութեան և որակին մէջ անայլայլ այս զոյգ նուիրականութիւնները պահեն իրենց ազգային և հոգևոր նշանակութիւնը անաղարտ։ Ջենք .հաւատար յոռետեսութիւններուն, որոնք լսելի կըլլան յաճախ, մեր երիտասարդութիւնը կրթուտ ու անհաւատ տեսնելու հակամիտութեամբ մը։ Անոնք որ շփում ունին 15—30 տարու մեր տղոց ու աղջիկներու հոծ զանգուածներուն հետ, չեն կրնար չհաստատել՝ թէ նոր սերունդը թանկագին և անփոխարինելի արժանիքներ ունի,— հոգեկա՛ն արժանիքներ, զոր զարգացնել և գործի վերածել անկարելիութիւն մը չէ, հակառակ մեր օրերու քաղաքակրթութեան փորձիչ զառիթափերուն։ Կընդունինք, թէ հայ ապրիլ անկարելիութիւն մըն է, տառապանք է և երբեմն տաժանք։ Եւ սակայն, հայ երիտասարդութիւնը գիտէ՛ այդ տառապանքը, երջանկութեան վերածել, եթէ կիր-

քի մը կարենանք փոխակերպել հայրենիքի ու ազգի իսկական ըմբռնումը։

Դրոներու անդարձ մեկնումը նոր խթան ու մեկնակէտ թող ըլլայ՝ գօտեպնդելո՛ւ այս հաւատքին մէջ, ու աւելի քան երբեք փարած մնալու անոնց գաղափարական դրօշին։

ՀԱՍՏԱԲՈՒՆ ԿԱՂՆԻՆ ՏԱՊԱԼԵՑԱՒ

Գուժկան հեռագիր մը՝ երկէկ առաւան դէմ, Պոսթընէն, հինգշաբթի, 8 Մարտ թւականով (ժամը 8ին քաշուած).— ԴՐՈՆ ՄԵՌԱՒ։

Հակառակ այն իրողութեան, որ վերջին քանի մը օրերու ընթացքին, մտերիմներու շրջանակին մէջ մահագուշակ լուրեր շրջան կընէին մեր անփոխարինելի ընկերոջ առողջական վիճակի ծանրացման մասին, այնու ամենայնիւ, անսպասելի էր այսքան շշմեցուցիչ հարուած մը, մէկ անգամէն, մէկ օրէն միւսը։ Գուժկան հեռագիրը կուգար միանգամ ընդմիշտ փարատելու ամէն լաւատես ենթադրութիւն, բարելաւման մը հաւանականութեան մասին։ Անողոք և անբուժելի նկատուած հիւանդութիւնը, որ բաւական երկար ժամանակէ ի վեր կը տանջէր՝ իր կեանքի ընթացքին մարմնական ու հոգեկան բազմատեսակ տառապանքներու արիաբար կուրծք տուած աննըման հայդուկը, կըզգեստէր զինքը, անվերականգնելի կերպով։ Վիթխարի կաղնին էր որ կը տապալէր մեծաշառաչ փլուզումով մը և արձագանքը, արագօրէն կը տարածուէր Սփիւռքի ամէն կողմը, խոր սուգով համակելով բովանդակ հայ ժողովուրդը՝ ընդհանրապէս, և իր սիրելի ընկերներու և բարեկամներու բազմութիւնը՝ մասնաւորապէս։

Սև լուրի շշմեցուցիչ տպաւորութեան տակ, անկարելի է մեզի համար լայնօրէն անդրադառնալ կեանքին ու բազմաբեղուն գործունէութեան մասին անձնաւորութեան մը, որ տիրական դեր ունեցաւ Հայոց ժամանակակից պատմութեան վերջին յիսնամեակի ընթացքին, յեղափոխական, ռազմական, քաղաքական և ազգային բոլոր մարզերու մէջ։ Սիւնակներ, էջեր, գիրքեր կարելի պիտի ըլլայ լեցնել, արժանապէս ներ-

կայացնելու համար անփոխարինելի յեղափոխականը, մարտիկն ու քաղաքական գործիչը, որ Դրօն եղաւ իր ամբողջ կեանքի ընթացքին և հայ կեանքի այնքան դաժանօրէն ճակատագրական երկարամեայ շրջանին։

«ԱԶԴԱԿ»

ՆԵՐՇՆՉՈՒՄԻ ԱՂԲԻՒՐ

(Անվեհեր Դրօյի յիշատակին)

Դիւցազնական շրջանի ամէնէն կարկառուն ներկայացուցիչներէն մէկը եւս բաժնուեցաւ մեզմէ։ Հեռաւոր Պոսթընի մէջ, հայրենի լեռներէն ու դաշտերէն հորիզոններ անդին, հայ ազատագրութեան նուիրեալներէն մէկը եւս փակեց իր աչքերը՝ շքեղ կեանքի ու գործի տապանակ մը ձգելով յետնորդ սերունդներուն։

Իր կեանքի ամբողջ տեւողութեան, Դրօ եղաւ ներշնչումի աղբիւր մը, թէ իր քաջարի մարտիկներուն, որոնք սրբազան գործին համար, գնդակներու սուլոցին մէջ, կռուի դաշտ նետուեցան շքեղօրէն կերտելու համար մայիսեան արեւշող առաւօտը, եւ թէ այն բոլոր դաշնակցական հայորդիներուն, որոնք այս ժողովուրդին ծառայելու նուիրական ուխտը կատարեցին։

Դրօ, անվեհեր ռազմիկը, որուն համար գուցէ չգտնուի ուրիշ աւելի վսեմ որակում քան «քաջ» մակդիրը, որ այնքան արժանաւորապէս կը խորհրդանշէ իր յեղափոխականի եւ մարտիկի առաքինութիւնները, ապրեցաւ ու գործեց մեր նորագոյն պատմութեան ամէնէն դժնդակ ու նոյն ատեն հրաշքի օրերուն, երբ հայութիւնը կենաց մահու կռիւ կը մղէր դարաւոր թշնամիներուն դէմ, Դրօ, իր անհամար քաջերուն հետ, որոնք ինկան նահատակութեան ճամբուն վրայ, կամ իրենց զօրավարին պէս, իրենց վերջնական հանգիստը գտան անհարազատ երկինքներու տակ, տարիներ շարունակ կուրծք ցցեց Հայաստանի թշնամիներու դէմ եւ կատարեց արութեան գործեր, որոնք իրենց խիզախութեամբ առասպելական դիւցազուններու հոյլին մէջ արժանի տեղ մը կուտան Այրարատեան դաշտի զաւկին։

Դրօ մէկն եղաւ այն քիչերէն, որոնց կեանքն ու գործը կատարեալ ներդաշնակութիւն մը եղան։ Պատանին, որ 21 տարեկանին ռումբով ահաբեկած էր Բագուի հայատեաց քաղաքապետ Նակաշիձէն, մարտունակութեան եւ հայուն վրիժառու բազուկին խորհրդանիշը հանդիսացաւ մինչեւ իր կեանքին վերջին օրերը, նաեւ իր հրաբորբ ճառերով, որոնք անտաշ անկեղծութեան բնոյթն ունէին եւ ուժի ու անօրինակ կորովի վկայութիւններն էին։

Ու այսօր, իր մահէն ետք, որուն բօթը սուգի մատնեց բովանդակ հայութիւնը, սկսած Արաքսի ափերէն մինչեւ հեռաւոր Ամերիկաները, կաղնիի մը հանգոյն, ահաւոր դղրդիւնով մը, կարծէք մեռած չէ։

Ներկայութիւններ կան, ուժի, կորովի, կենսունակութեան եւ խանդավառութեան, որոնք կը շարունակեն մնալ մահէն ալ անդին։ Ու մարդուն, մարդոց բախտաւորներուն անմահութիւնը այդ յաւիտենական ներկայութեան մէջն է։ Դրօն այդ բախտաւորներէն մէկն է։ Միշտ ներկայ իր հնչեղ ձայնով, իր դիւցազնական պոռթկումներով եւ յաճախ բիրտ անկեղծութեամբ։

Ներկայ էր Դրօն հայ ժողովուրդի սրտին մէջ, որ այսպէս ալ պիտի մնայ յաւիտեան, որովհետեւ եղաւ այդ ժողովուրդին ամէնէն հիմնական ցանկութիւններուն խորհրդանիշը։ Տարիներով պայքարեցաւ ու կռուեցաւ իր հայրենիքի ազատութեան եւ անկախութեան համար, միշտ պատնէշին վրայ, իր անձին պերճախօս օրինակով ոգեւորելու համար թէ՛ իր զինուորները եւ թէ բազմութիւնները։

Բոլոր սերունդներուն համար, անիկա պիտի մնայ տիտանեան դէմք մը, եկած Հայոց Պատմութեան դիւցազնական օրերէն, ընկճուած ու նուաճուած ժողովուրդի մը կեանքը յեղաշրջելու եւ անոր շղթայուած հայրենիքը իր փառքին ու մեծութեան վերադարձնելու համար։

Դրօյէն պիտի մնայ՝ ինչ որ ան ստեղծած էր իր փոթորկոտ կեանքի մարտնչումներով, ու պիտի շարունակէ ներշնչել գալիք բոլոր սերունդները, ինչպէս ներշնչուած էին իր ռազմի ընկերները եւ բազմութիւնները, երբ տապալած չէր տակաւին վիթխարի կաղնին։

«ԱԶԴԱԿ»

ԸՆԿ. ԴՐՕ ՈՉ ԵԻՍ Է

Երէկ, Ուրբաթ իրիկուն, խմբագրութեանս հասած հեռագիր մը կը գուժէր մահը հայ ժողովուրդի ԱՆՁՈՒԳԱԿԱՆ և ՔԱՋ զաւակին, մեծանուն յեղափոխականին և Հ. Յ. Դաշնակցութեան ուխտեալ զինուորին՝ ընկեր Դրօյին (Դրաստամատ Կանայեան), որ իր աչքերը յաւիտենապէս փակած է, 8 Մարտ, հինգշաբթի առաւօտ ժամը 8,45ին, հեռաւոր Ամերիկայի մէջ, ուր գացած էր վերջերս Միջին Արևելքէն, անողոք հիւանդութենէն մը դարմանուելու յոյսով։

Գոյժին առաջին ազդեցութեան տակ, գրիչը կը դողայ մեր մատներու արանքին, երբ կը գրենք այս տողերը։

Կսկիծ կը կրծէ մեր սիրտը և սուգը կը պատէ մեր ամբողջ էութիւնը, երբ կը մտածենք մանաւանդ՝ որ ամբողջ կէս դար հայ ժողովուրդի ազատագրական պայքարներու առաջին գծերուն վրայ «ներկայ» արտասանած այս մարտիկն ալ իր վերջին քունը մը գտնէ օտար հողերու տակ, հեռու իր պաշտած հայրենիքէն, որուն հողն ու քարը թիզ առ թիզ չափեց տասնեակ տարիներով, իբր հայդուկ, իբր թշնամիի ահաբեկիչ, իբր անվախ հրամանատար ու նաև պետական դէմք։

Սգաւոր է այսօր ազատատենչ Հայութիւնը։ Սգաւոր է մանաւանդ Դաշնակցութեան ընտանիքը, որուն յարկին տակ սնաւ, մեծցաւ և գործեց այս **փոթորիկ-մարդը**, անցնելով ահեղ և տարերային փոթորիկներէ, որոնք ալեկոծութեան մատնեցին հայ կեանքը, վերջին վաթսունհինգամեակին։

Իր կեանքին ու գործին մասին, լայնօրէն պիտի անդրադառնանք յառաջիկային, մինչ այդ, խոր յուզումով մը խոնարհինք իր դագաղին առջև և կուխտենք շարունակել այն սրբազան պայքարը, որուն Դրօ նվիրեց իր ամբողջ կեանքը։

«ԱԶԱՏ ՕՐ»

ՁՕՐԱՒԱՐ ԴՐՕ ՈՉ ԵԻՍ Է

Հիւսիսային Ամերիկայի մէջ, անողոք հիւանդութեան մը հետևանքով, Հինգշաբթի՝ Մարտի 8-ին, մահկանացուն կընքեց զօրավար Դրօ։

Մնած է Իգդիր, ուսումը ստացած է Երևանի Գիմնազիոնին մէջ, ապա յաճախած է զինուորական վարժարան։ Պատանի տարիքէն մտած է Դաշնակցութեան շարքերը։ Եղած է մարտական խումբի անդամ և յայտնի ահաբեկիչ։ Առաջին անգամ ահաբեկած է Գուլիցինը, որ հայ եկեղեցւոյ կալուածներու գրաւման միջոցին օգնած էր ցարական կառավարութեան։

1905-ին ահաբեկեց Բագուի հակահայ նահանգապետ Նակաշիձէն։ Նոյն տարին ահաբեկեց նաև զօր. Ալիխանովը։ Քեռիի հրամանատարութեան տակ մասնակցեցաւ հայ թաթարական ազգամիջեան կռիւներուն՝ Զանգեզուրի մէջ։

1914-ին դարձաւ կամաւորական Բ. գունդի հրամանատար։ 1917-ին վարեց Արամ Մանուկեանի հետ Հայաստանի ինքնապաշտպանութեան գործը և նշանակուեցաւ Արարատեան շրջանի զինուորական հրամանատար։

1918-ին, իբրև Երևանի շրջանի զինուորական հրամանատար, վարեց Բաշ Աբարանի յաղթական ճակատամարտը։ 1920-ին հայ թրքական պատերազմին ստանձնեց Սուրմալուի ճակատին հրամանատարութիւնը։

1921-ին համայնավարներու կողմէ աքսորուեցաւ Մոսկուա, ուր 4 տարի մնալէ ետք անցաւ Եւրոպա և հաստատուեցաւ Ռումինիա։

Երկրորդ աշխարհամարտէն ետք հաստատուեցաւ Լիբանան, ուր կուսակցական եռուն գործունէութիւն ցուցաբերեց։

Մեր խոր. ցաւակցութիւնները՝ հանգուցեալ զօրավարի ընտանիքին և իր կուսակցութեան։

«ԱՅԳ»

(ԱՆԿԱԽ ՕՐԱԹԵՐԹ)

ՀԵՐՈՍԻՆ ՄԱՀԸ

Իսկ Դրօն, Իգդիրցի այդ խմբապետը
Որ եղել է հերոս, անվախ տեռորիստ...
ԵՂԻՇԷ ՉԱՐԵՆՑ

Վերջին կէս դարու Հայոց Պատմութեան կերտիչներէն, որ իր ծանր ու կարծր անձին ճնշումով դրոշմեց մէկէ աւելի էջեր, ու երբեմն միակը լեցուց ամբողջ ժամանակաշրջանի,

մը պարապը։ Խիզախութիւնը իր տարերքը եղաւ, և նիւրումը կազմեց իր անհանդարտ ներաշխարհը ոճաւորող միակ անխախտ զգացումը։ Փոթորիկը սիրեց, փոթորիկը փնտռեց, որովհետև իր էութեամբ իսկ մարմնացեալ փոթորիկ մըն էր արդէն, ու խտացեալ ուժականութիւն մը։

Եթէ ապրէր Քրիստոսի դարուն, Յիսուսը խաչող զինուորներուն մէջ չգտնուէր հաւանօրէն, բայց ապահովաբար խաչեալին արիւնն իսկ դժուար յաջողէր խախտել զինք, հեթանոսական իր հաւատքէն։ Մեր դարուն մէջ՝ իր հաւատքը Հայութիւնն էր, հայ հայրենիքը, իր ամէնէն նախնական ու նոյն ատեն գերագոյն առումին մէջ։

Պատմութիւն չէր գիտեր, հայ մշակոյթի աւազանէն չէր անցած իր հոգին մկրտութիւնը, բայց կրնար արի՛ւն թափել, փրկելու համար հայ մշակոյթի կոթող մը, յիշատակարան մը, թանկագին մատեան մը։ Կրօնասիրութեամբը չէր փայլեր, բայց կրնար դժո՛ղքը վար բերել, պաշտպանելու համար հայ եկեղեցին, իր ոգեղէն կերպարանքէն մինչև նիւթական կալուածներուն յետին փշրանքը։ Հայութիւնը, հայկականութեան ապրումը մնայուն վիճակ մըն էր իր մէջ, արդէն իսկ ուժեղ իր խառնուածքը տևաբար եռուն պահող ու խոյանքի պատրաստ ընող։

Լոկ քաջութեան արարքներով և պարագայական առիթներու մէջ չէր որ կազմեցաւ ճշմարտապէս հերոսական իր դիմագիծը, այլ ինքն իսկ յաճախ ստեղծեց դէպքերը, իշխելով անոնց վրայ և իր կարճ անունին մեծ շուքը տարածելով ամենուրեք, շրջապատին մէջ և հեռուները, ոչ նւազ արժանաւոր շատ մը դերակատարներ ստեղի մէջ ձգելու աստիճան։ Ինչ որ էր Անդրանիկ արևմտահայ ժողովուրդին սրտերուն մէջ, նոյնը եղաւ Դրօ՝ Կովկասի համար։ Երկուքն ալ ծնունդ ազգային անկրկնելի պահի մը, արիւնով ու փառքով ծանր շրջանի մը, ուր ապրող և մեռնող բոլոր լուսաւոր դէմքերուն, Մուրատներուն, Քեռիներուն, Սեպուհներուն և Մուշեղներուն ոգին առաւել փայլով մը իրենց վրայ ճառագայթեց երկուքին ալ արժանիքներուն անվիճելի ձգողութեամբը անշուշտ, բայց և երկուքին ալ յատուկ բախտաւորութեան մը շնորհիւ, վերածելու համար զիրենք այլաբանական դէմքերու և անուննի-

ռու, գաղափարական խորհրդանիշներու, բոլորէն աւելի հնչեղ անուններով, ու բոլորին տիրապետող սաւառնումով։

Իբրև մարդ՝ բարեմոյն հրեշտակ մը չէր անշուշտ, բայց և շատ հեռու էր տեսանելի դաժանութեան և վայրագ բռընկումներուն տիպարը ըլլալէ։ Օր մը առաջ իր զայրոյթին և կրքոտ որակումներուն ենթարկւած մէկը, զարմանալի չէր որ օր մը վերջ արժանանար ժպիտի և հաշտարար գուրգուրանքի շարժումի մը։ Գիտէր ատել ծայրագոյն կատաղութեամբ, բայց անվթար էր իր մէջ սիրոյ զգայարանքը, այլ մանաւանդ սիրելու հմայքը, Վագրի կեցւածքը և մռնչիւնը իր ոճն էր, բայց այս պարագային ոճը ամբողջովին և անպայման մարդը չէր։

Մեծատունի զաւակ, փարթամ կեանքը կը սիրէր։ Հայդուկի շարքաշ ասպարէզը թրծած էր մարմինը և հոգին, բայց չէր յաջողեր խամրեցնել շքեղութեան իր բնածին ճաշակները։ Ընդհակառակը, այդ հակումները աւելի շեշտւած էին, հակադրութեան օրէնքով։ Կրնար քա՛ր մը բարձ ընել ու շոր գետինը անկողին՝ երբ լեռն էր, բաց պալատականի կենցաղն էր որ կը խօսէր սրտին երբ քաղաք իջնէր։ Ջոր հացով ապրելը զրկանք մը չէր համարեր իր անձին համար, բայց խորապէս դժբախտ էր, եթէ ամէն օր հիւր չունենար և կոչունքի սեղանը առաւելագոյն ճոխութիւնը չպահէր։

Ցուցամոլ չէր, բայց երևիլը կը սիրէր։ Պերճանքի հետամուտ չէր, սակայն իր պարզութիւնը գիտէր խնամել։ Մարդ մըն էր, որ կը յաջողէր միշտ իրմով լեցնել միջավայրը, ու երկրորդական անկիւններու սահմանւած պահել ուրիշները։ Իրմէ ոչ նւազ արժանաւոր և մտացի անհատներ յաճախ գտնւեցան իր շուրջ և իրեն հետ, բայց տիրակալը միշտ ինք մնաց, իր անհուն հեղնակութեամբը և կշիռով, երբեմն նոյնիսկ շալկելով պատասխանատուութիւններ, որոնք իրը չէին միշտ, բայց աւելի կը յարմարէին իր յաղթ ուռերուն, և որոնց տակ բուն տէրերը կրնային կքիլ։

Ռազմիկ էր ծնունդով, հետևաբար անմիջական, պարզ ու շիտակ նկարագիր մը, բայց դիւանագիտական ոլորուն ու դաւադիր ճամբարները անծանօթ չէին իրեն, և ինք բոլորովին խորթ չէր անոնց։ Ունէր սուր հոտառութիւն մը և թափանցող իրատես աչքեր, բառին յատուկ և փոխաբերական առումնե-

րով։ Վերջին տասնամեակներու գաղութահայ կեանքի խեղճուկ պայմանները, բաւարար ասպարէզ մը չէին անշուշտ արձակ տարածութիւններու վարժ և թռիչքի ծարաւ իր հոգիին համար, մանաւանդ հերոսութեան և խոյանքի պատեհութիւններ շատ քիչ կային, բայց իր փայլուն աստղը մէկէ աւելի անգամներ կրկին շողաց, ոչ անպայման դիւցազնական արարներու վրայ, բայց էապէս հայրենասիրական արարքներու և գերզանցօրէն ազգօգուտ ձեռնարկներու մէջ։

Կարգ մը մարդոց համար շատ դիւրին եղաւ վճռել, թէ Հայրենադաւութեան համազօր գործ մըն էր գերման սպայի տարազ կրել և դէպի Կովկաս արշաւող գերման բանակներուն հետ առաջ քալել։ Բայց նոյն մարդոց համար՝ քիչ մը աւելի դժուար պիտի ըլլայ բացատրել, թէ ի՞նչպէս եղաւ, որ ամբողջ պատերազմի տևողութեան, գերման կրունկներուն տակ հեծող գրաւեալ Եւրոպայի մէջ, հարիւր հազարաւոր հայութիւնը խաղաղ ապրեցաւ։ Ամբոխավարական դարձուածքներով և զգացումներու շարաշահութեամբ, կարելի է անշուշտ դաւաճան հռչակել մէկը, որ օտար բանակի մը հետ իր հայրենիքին դէմ կարշաւէ, բայց մեր եղերական ճակատագիրը և ահաւոր պայմանները հաշի առնող որևէ լուրջ մարդ, չի կրնար անգիտանալ, թէ պողպատի և վառօդի հեղեղի մը մէջէն թաւալող չորս միլիոննոց բանակի մը թիկունքին, քանի մը հարիւր հայ երիտասարդներու ներկայութիւնը, հայդուկի մը գլխաւորութեամբ, ո՛չ կրնար արշաւող գերման բանակը թիզ մը աւելի առաջ մղել, և ոչ ալ բոպէ մը կասեցնել անոր տարերային ընթացքը։ Բայց երբ տեսանք, թէ յաջորդական ճախողանքներէն հետզհետէ ջղային, և օրէ օր աւելի վայրագ գերմանական մոլուցքը ինչպէս կը կոտորէ հրեան, բոլոնիացին, սերբը, յո՛յնը՝ բայց մէկ հատիկ հայու մը քիթը չարիւնիր, ապագայ պատմաբանին վճիռին սպասելու պէտք չունինք այլևս, որ կը բաւէ որ իմաստականութեան հետ դաշինք չունենանք, որպէսզի ընդունինք, թէ այս մարդը ա՛յդ գնով միայն կրնար փրկել, ու փրկե՛ց, Եւրոպայի հայութիւնը։

Քաղաքականութիւնը իր բնոյթովն իսկ ապերախտ և պըղտոր բան մըն է արդէն, ու քիչ անգամ փառք պսակ ունի նոյնիսկ անոնց համար, որ յաջողած են իրենց առաքելութեան մէջ։ Ու տեսանք նաև մեր աչքերով, թէ Ֆրանսայի պէս մեծ

ժողովուրդ մը անգամ, իր ցեղին պարծանքներէն համարուող մարաջախտ Փեթէնը ինչպէ՞ս դատապարտեց, Համաշխարհային Առաջին Պատերազմի իր մեծ հերոսը, ազգային պարծանքը, Երկրորդ Պատերազմին դաւաճա՛նը հռչակելով, բայց գեռ տասը տարին չբոլորած, այսօր ազգովին կը խոնարհի անոր շիրիմին առջև ու անբասիր զինուորականին փառքը կը մնայ անաղարտ։

Այո՛, պղտոր է քաղաքականութիւնը, և հերոսներն անգամ չեն կրնար անվնաս առաջանալ անոր լպրծուն ճամբաներէն։ Եւ կրկնապէս պղտոր ու դժբախտ է հայ կեանքի ներկայ շրջանը, ուր յստակութիւնը կը պակսի և ողջմտութիւնը հրապարակաւ կը դատապարտուի։ Բայց կայ, բարեբախտաբար, գերագոյն դատաւորը, անկաշառ և անկաշառելի ժամանակ որ մը հասնի ուշ կամ կանուխ արդարութեան իր կշիռքով։

Դաժանօրէն անողոք բարքեր ունի մեր ժամանակը։ Ծայրայեղական ու այլամերժ գաղափարաբանութիւնները, խախտած են բոլոր չափանիշները, բարոյական ըմբռնումներու ամբողջ կառոյցը։ Այլապէս, ազգային հերոսի մը մահը ազգովին սգալու տարրական առաքինութիւնը պիտի չպակսէր մեզի։ Կարգ մը հայ թերթեր Դրօյի մահը ծանուցեին իրենց վերջին էջին վերջին սիւնակին վերջնագոյն անկիւնէն, ընդամէնը քանի մը տողով։ Գէշ բան մը չգրեցին — երախտապա՛րտ ենք...— ու անպայման պզտիկութիւն մը չէ գուցէ հակառակորդի մը մահը անտեսելը։ Բայց մեծնալու առիթ մը կար այդտեղ, որմէ չուզեցին օգտուիլ, ափսո՛ս։ Որքա՛ն հեռու ենք այն օրերէն, երբ պահպանողական «Բիւզանդիոն»ները յարգանքով կը խոնարհէին Զաւարեաններու դագաղին առջև, ու կարձանագրէին ամէնէն ջերմ գնահատանքը անոնց գործին և նիւթումին համար, շմոռանալով նաև իրենց տարակարծութիւնները անոնց ուղիին և գաղափարներուն հանդէպ։

Դաժան ու անողո՛ք ժամանակ մը, արդարև, երբ հայ ժողովուրդի քաջութեան դրօշակիր հերոսները, հայ հաւատքին խորհրդանիշ կաթողիկոսնե՛րը անգամ չեն յաջողիր կիրքերը մեղմել ու սիրտերը կակուղցնել, իրենց մահով, իրենց կեանքով։

* * *

Շատեր, իրենց կեանքին երկրորդ կէսը կանցնեն առաջին կէսին վրայ զղջալով, կամ հիւծելով, նահանջելով, լրջանալով և պզտիկնալով։ Իր մէջ, թռիչքին թափը զօրեղ մնաց միշտ, ու եօթանասունին՝ եթէ միակ ցաւ մը ունէր, քսան տարեկանի խոյանքներուն պակսող պայմաններն էին։ Ասպարէզին սահմանափակութիւնը, բայց երբէք կորովն ու ոգին, զարնելու և զարնուելու ծարաւը, թոքերուն մէջ պահուած գընդակը թշնամիին շկարենալ վերադարձնելու դառնութիւնը։

Շատ բան պիտի ըսի և գրի իր մասին, արդար և անարդար շատ դատումներ պիտի ըլլան իր անունին ու գործին շուրջ, բայց ինք այլևս պիտի շլսէ, որովհետև, թօթափած այլևս մարդկային մարմինը, մեզի՛ թողած մեր կիրքերն ու հաշիւները, հայոց պատմութեան դժուար ճամբարներէն վերջին խոյանքով մը իր սպիտակ ձիուն վրայ, մտած է, շիտա՛կ, Արքայութիւն...

«ՆԱՀԻՐԻ»

ԴՐՕՅԻ ՄԱՀԸ

Արտասահմանի հայ թերթերը գուժեցին Դրաստամատ Կանայեանի մահը, որ տեղի ունեցեր է Մ. Նահանգներու մէջ, 8 Մարտին։

Վերջին յիսուն տարիներու հայոց կեանքին մէջ՝ Դրաստամատ Կանայեան կը գրաւէ իր յարգելի տեղը, իբրև զինուորական և քաղաքական դէմք։ Այդ զոյգ հանգամանքներով ան գործեց ի սէր հայ ազգին ազատութեան։ Պատմիչները պիտի քննեն անշուշտ, և գծեն անոր հարազատ պատկերը։

Դրաստամատ Կանայեանը, որ ծանօթ էր առհասարակ Դրօ անունով, ծնած էր 1884-ին, Իգդիր, ուսած էր Երևան, ստացած էր զինուորական կրթութիւն։ Իր մարտական գործունէութեան առաջին օրերուն իսկ ահաբեկած էր Նակաշիձէն (Բագուի նահանգապետը), հայատեաց զօրավար Ալիխանովը։ Փրկած էր կորուստէ՝ Զանգեզուրի հայ բնակչութիւնը, կուելով թաթարներու դէմ, Քեռիի կողքին։ Հայթայ-

թած էր զէնք՝ մարտնչող ուժերուն, Հին Բայազիտէն, ուր կապրէր իբրև նաւթի վաճառական, Ս. Գէորգի խաչով պատուած Նիկոլայ Բ. Ցարին կողմէ, համաշխարհային առաջին պատերազմին ընթացքին իր ցոյց տուած քաջութեան համար։

Եղած էր Փետրուարեան Յեղափոխութեան վարիչներէն մին։ Նշանակուած էր Արարատեան շրջանի կոմիսար։ Վարած էր կռիւները՝ վրացիներու դէմ։ Ընտրուած էր հրամանատար՝ Երևանի շրջանին։ Յաղթութեամբ պսակած էր Բաշ-Աբարանի ճակատամարտը։ Կռուած էր թուրքերուն դէմ՝ Սուրմալուի մէջ։ Եղած էր զինուորական նախարար։ Հ. Տէրտէրեանի հետ ստորագրած էր Լգրանի մատուցած հայ-ռուս դաշնագիրը։ Աքսորուած էր բոլշևիկներուն կողմէ Մոսկուա։ 1935-էն ի վեր կապրէր արտասահման, Հայ Դատին լուծման ակնդէտ սերունդի մը հիացումին առարկայ։

«ՄԱՍԻՍ»

(ՕՐԳԱՆ ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՅՈՑ)

ԴՐՕՅԻ ՄԱՀԸ

Պոսթընէն «Յուսաբերի հասած հեռագրէ մը ցաւով կը տեղեկանանք մահը ծանօթ յեղափոխական և ազգային գործիչ Դրօյի (Դրաստամատ Կանայեան), որ տեղի ունեցեր է հինգշաբթի օր, 8 Մարտ, երեկոյեան ժամը 8.45-ին։

Մեր ցաւակցութիւնները կը յայտնենք իր շաղափարի ընկերներուն։

«ԱՐԱՔՍ»

«ՁՕՐԱՎԱՐ ԴՐՕ ՈՉ ԵՒՍ Է»

(Թարգմանեաց է ֆրանսերենից)

Դաշնակցութիւնը սուգի մէջ է. երկու հեռագիրներ, մէկը Բոստոնից, միւսը Գահիրէից, մեզ տեղեկացնում են սարսափելի և տխուր լուրը.— Ընկեր Դրօն վախճանուել է հինգշաբթի, 8 Մարտ, ժամը 8.45-ին Բոստոնում։

Մի հեռագրի մի քանի չոր բառերը մի հարուածով կարո՞ղ են սպանել, մեր մանկութեան երազների հերոսին։

Նա մեզ ներկայանում էր, միջին դարերի առասպելական ասպետների ցեղից, միշտ ներկայ, միշտ պայքարի գագաթնակէտին, նա խորհրդանշում էր հայ ժողովրդի ընդդիմութիւնը, քաջութիւնը և հերոսութիւնը։

Մենք գիտէինք, որ նա հիւանդ է, մենք գիտէինք, որ նա ոչ մի յոյս չունի, սակայն մեր մանկութեան երազները մեզ կրկնում էին «նա անմահ է, նա անմահ է»...

Ես լսում եմ տակաւին նրա մեղմ և հաստատուն ձայնը, երբ անկողնում, հիւանդ, ջերմութեան մէջ, հայեացքն հեռուն ուղղած ասում էր.—

«Գաղափարներն են, սկզբունքներն են, ձգտումներն են, որ ապրում են և շարժում մեր գործերը, մնացածը՝ ունայնութիւն է միայն»։

Իր ամբողջ կեանքը օրինակ և արտացոլումն եղաւ այս նախադասութեան։

Դրօ, դու հանգչիր հանգիստ, քո անշեղելի կամքը, քո առասպելական քաջութիւնը, քո ճարպկութիւնը և քո հայրենասիրութիւնը մեզ համար, մնում են միշտ կենդանի։

Դու կենդանի ես ու կը մնաս մեզ համար այն փարոսը, որ տանում է դէպի Ազատ և Անկախ Հայաստան։

Ո՛չ Դրօ, դու մեռած չես մեզ համար։

«ՀԱՅԱՍՏԱՆ»

ԴՐՕ

Մեր անմահ ու անհաւասարելի Դրօներն են,
որ գծեցին
Ու կերտեցին հայ ժողովրդի պատմական նոր
ուղին։

ՎԱՉԵԱՆՑ

Եւ գոյժը ծովեր ու ցամաքներ կտրելով, հասաւ մեզ։
Ընկեր Դրօ ոչ եւս է»...

Բիւրաւոր սրտեր կծկուեցին վշտից, որովհետև տապալուեց կաղնին։

Հողմաշունչ ու խօլական փոթորիկը չէր, որ զգետնեց հրակային, այլ շնչին, դաւադիր մի մանրէ թերևս, որ գաղտնօրէն կրծեց այդ շքեղ կեանքը։

Եւ լուռ, ինքնաբերաբար, առանց պատէրի մարդիկ «պատուի» կանգնեցին, մեծ հայի, հազուագիւտ մարդու և անվեհեր յեղափոխականի դագաղի առջև, վշտահար գլուխները հակած վար։

Եւ հայոց «զօրավարի» դին, օտարութեան մէջ, սրբազան իղձերը սրտում՝ իջաւ գերեզման, առանց «պատուոյ համազարկերի»...

Դրօն ոչ ևս է։

Թերթերը լոյս տեսան սև շրջանակներով, յետաձգեցին հանդէս-ներկայացումները, առկախեցին հաւաքոյթներն ու ձեռնարկները...

Չէ՞ որ սուգ է համատարած։

Աշխարհի չորս ծագերից. բազում լեզուներով թռան ցաւակցութիւնները՝ թռան օդով, ջրով ու ցամաքով, ողբալու համար հայութեան կորուստը և մասնակցելու Դաշնակցութեան մեծ սուգին։

Հայ ժողովուրդը կորցրել էր իր «քուխ» տղին։

Դաշնակցութիւնը՝ իր հերոսներից մէկին, մեծ ճերոսներից։

Իսկ Կովկասը՝ իր ազատութեան անվեհեր ախոյեանին։

* * *

Իր կեա՞նքը...

Մի ամբողջ պատմութիւն, հայոց պատմութեան վերջին, փոթորկոտ յիսնամեակը։

Հերոսական դրուագների երկա՞ր շարան, որոնցից իւրաքանչիւրը մեն մենակ բաւական է, իրաւ հերոսի համբաւ տալու որևէ մահկանացուի, քանդակելու համար նրա անունը Հայոց պատմութեան ոսկեղէն էջերում։

Հազիւ երիտասարդ, նետւում է յեղափոխութեան քուրայի մէջ և գառնում մարտիկ։

Ցարը դաւ է նիւթել Կովկասի հայութեան դէմ և թաթար ամբոխը մոլեգնած, հրդեհում է գիւղերն ու քաղաքները։

Գործի՛, հրամայում է Դաշնակցությունը. գործի՛, կրկնում է Ընդհանուր հրամանատարը և Դրօն նետուում է կրակների մէջ՝ իր ամուսնության գիշերն իսկ։

Զա՛րկ Երևան ջան, զա՛րկ Զանգեզուր... Եւ հողմի պէս խենթ, դիրքից-դիրք միշտ յաղթական, սլանում է նա, պաշտպանելու համար հայ գիւղացու թէ քաղաքացու կեանքն ու պատիւը։

Իր ազգի պատիւը...

Այնուհետև... «Նակաշիձէն պէտք է պատժւի», հրամայում է Դաշնակցությունը և հայակուլ հրէշը փուում է գետին՝ Դրօյի ռումբից բզկտուած...

Քոյր Վրաստանը արիւն է լալիս և Գուրայի շար ոգին՝ գեներալ Ալիխանովը՝ ահաբեկում է Դրօյի ձեռքով։ Եւ քանի՞ Ալիխանովներ ու Նակաշիձէներ, բռնակալության մեծ թէ փոքր մարդակերներ պատուհասում են նրա ձեռքով կամ մասնակցությամբ, օրը ցերեկով, հրապարակներում, յաճախ ոստիկանության աչքի առաջ, ի խնդիր արդարության և վրէժի։

Ընդում է բովանդակ Ռուսաստանը, հրճւում յեղափոխական Ռուսիան և մէկը սարսափով ու ատելությամբ, միւսը՝ սիրով ու հպարտությամբ կրկնում անվերջ՝

Դրօ...

Այնուհետև գաղտնի գործ, վտանգներ, հետապնդում ու խուսափումներ, կամաւոր աքսոր, ծպտուած կեանք «Նաւթի վաճառական» զէնքի փոխադրություն և 1914...

Դրօն նետուում է բոցերի մէջ. կամաւորական գնդի հրամանատար է և հազիւ 30 տարեկան, իր մարտիկների գլուխն անցած՝ խոյընթաց սլանում է սահմանից այն կողմ, փրկելու համար ազգակիցներին իսպառ բնաջնջումից և ապա դարձնելու մեծ երազը՝ ազատ Հայաստանի։

Ցառա՛ջ տղաներ...

Դրօն բերնից արիւն է ժայթքում, թշնամու գնդակը քերել է սիրտը ու թաղել թոքի մէջ, բայց կարո՞ղ ես պահել հիւանդանոցում, համոզել որ մնայ տանը՝ կազդուրի։

Ու հազիւ ապաքինած վէրքը կրծքին, նորից առաջին գծերում, իր սիրելի «տղաներիս» հետ մասին, ճեղքում է տա-

ռածությունը տենդագին թափով ու մտնում Վան, Շատախ, փրկելու համար Վասպուրականի վերապրող հայությունը։

Ցեղոյ...

Վերահաս աղէտներ, դաւեր, կռիւներ, ոգորումներ, Սարդարապատ, Բաշ-Աբարան, Ղարաքիլիսէ, անկախ Հայաստան, Զանգեզուր, Երևան, նորից դաւեր, անհնարին հերոսական պայքարներ, Դեկտեմբեր 2, Մոսկւա և վերջապէս արտասահման...

Մի ամբողջ ոդիսական...

Եւ ահա Բ. աշխարհամարտը։

Հիթլերի բանակները յաղթական երթով շափում են բովանդակ Եւրոպան ու իրենց ծանր գլանի տակ ճզմում ամեն ինչ, ազգերն ու պետութիւնները։

Բազմաթիւ ժողովուրդներ յայտարարուած են «օրէնքից դուրս» և հրէա արիւնն իր յաւելեալ տուրքն է տալիս նացիստական նեղմտութեան։

Ճիշտ է գերագոյն ճիգերով հաստատուած է հայ ժողովրդի արիական ծագումը, սակայն նա համարուում է անվստահելի, քաղաքական տեսակէտից և հետևաբար անբաղձալի՝ ըստ էութեան։

Վտանգուած է Եւրոպայի հայութիւնը, վտանգուած նոյն իսկ Կովկասի և Հայաստանի հայութիւնը, իսկ ռուսական բանակները նահանջում են «ծրագրուած կարգով» և այդ նահանջին վերջ չկայ։ Արդէն որոտում են Մեսերշմիդներից նետուած ռումբերը Թիֆլիսի շրջակայքում և վտանգը դամոկլեան սուրի պէս կախուում է հայութեան գլխին...

«Լինե՞լ, թէ չլինել, այս է խնդիրը».

Լինե՛լ վճռում է Դրօն։

Պէտք է փրկել ինչ որ հնարաւոր է, պէտք է փրկել հայութիւնը որևէ գնով։ Միթէ՞ այդպես չի՞ եղել ինք՝ իր ամբողջ կեանքի ընթացքում, մի՞թէ իր պարտականութիւնը չի այդ։

Դէպքերի բերումով կտրուած է ընկերներից և տառապում է հոգեպէս, ի՞նչ անել...

Եւ Դրօն նորից նետուում է «Գործի» գերագոյն վճռականութեամբ, իր մտքի ու սրտի անսուտ թելադրանքով։

Ու նորից «ձիու» վրայ, մի խումբ նոր «քեալաշների հետ», յոյսով ու երկիւղով լի հայացքն ուղղած դէպի հայրենիք,

քայլում է նա, որպէսզի վճռական վայրկեանին այնտեղ լինի, «իր» ժողովրդի կողքին, ինչպէս միշտ։

Ճիշտ է, հետագային իր մտահոգութիւնները շարդարացան, դէպքերը զարգացան բոլորովին այլ ուղղութեամբ, սակայն Դրօն փրկեց հազարաւոր կեանքեր, յատկապէս հայ կեանքեր, վիրաւորներ, հիւանդներ, գերիներ, անկարներ, որոնք վերապրում են այսօր Դրօյի շնորհիւ։

Այնուհետև գորշ, սպասումներով ու կարօտներով լեցուն տարագրի կեանք, երբ չհնչեց նրա ահեղ մարտագոչը, շորոտաց հրամանն ու սաստը, բայց թրթռաց իր հոգին՝ շուրջը խլրտացող նորելուկ հայ «բալա»ներին ի տես։ Իր գուրգուրոտ խօսքով վառ պահեց վաղուայ լաւ օրերի կայծը երիտասարդ հոգիներում և հուժկու խօսքով պաշտպան կանգնեց հայ դատին։

* * *

Դրօն մտքի տիտան չէր և ոչ էլ գրչի վարպետ, ազատութեան զինուոր էր և արդարութեան պաշտպան։ Հոգու ու սրտի հսկայ, որ կարող էր ընդգրկել ողջ աշխարհը և արդար ատելութեան հրաբուխ, անզուսպ ու տարերային ժայթքումներով վտանգաւոր ու զարհուրելի։

Սիրում էր կեանքը և արհամարհում մահը։

Կեանքի իմաստը՝ ծառայելն է իդեալին և առանց իդեալի՝ անիմաստ, ճղճիմ է կեանքը։

Հայութիւնն էր իր միակ իդեալը, նրա ազատութիւնն ու երջանկութիւնը, իսկ իդեալի համար «ամեն ինչ, կամ ոչի՛նչ»։

Եւ նա տուեց ամեն ինչ իր իդեալի համար, ինչ որ հնարաւոր է մարդկայնօրէն։

Ուր բռնութիւն կար ու վտանգ, հալածանք կար կամ մահ, այնտեղ էր Դրօն։

Հայոց աշխարհն իր տունն էր, լեռներն իր մահիճը և ժողովուրդն իր ընտանիքը։

Իր ունեցածը ազգինն էր և ազգի ունեցածը իրենը, ինչպէս որ իր կեանքը ազգինն էր։

Մեր օրերի Վարդան զօրավարն էր նա, կամ Սասունցի Դաւիթը։ Ժամանակը կը պայծառացնի մթնոլորտը և ժողո-

վուրդը կանմահացնի նրան բոլոր դարերի դիւցազանց շարքին։

Այդպէս է ժողովուրդը, արդար ու իմաստուն, վերին արդարադատը բոլոր ժամանակների։

Դրօները ծնւում են հայութեան ծոցում, մեծանում Դաշնակցութեան յարկի տակ և անմահանում հայոց պատմութեան ոսկեղէն էջերում։

Փառք նրա պայծառ յիշատակին։

«ԱԼԻՔ»

ԴՐՕՅԻ ՄԱՀԻԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐԸ ԵՎ ԹԱՂՈՒՄԸ

1954 թւի ամռան, Դրօն Բէյրութից Ամերիկա եկաւ իր ընտանիքի մօտ, խախտուած առողջութիւնը վերականգնելու համար։

Յայտնի մասնագէտների մանրակրկիտ քննութիւնից պարզւեց, որ մեր անզուգական հերոսի միզափամփուշտի մէջ քաղցկեղի ճիւղաւորումներ կան։ Հռչակաւոր մասնագէտ բժիշկները գիտական վերջին միջոցներով ձեռնարկում են բժշտութեան։ Վեց ամսւայ ընթացքում կատարելապէս բժշկւելուց յետոյ, ընկ. Դրօն բժիշկների թոյլտւութեամբ վերադառնում է Բէյրութ, մէկ տարուց յետոյ վերադառնալու պայմանով։

1955 թւի ամառը Բէյրութում թոքերի բորբոքում ստանալով հիւանդանում և բժշկւում է. դեռ կատարեալ շապաքինած, նոյն թւի Դեկտեմբերին գալիս է Ամերիկա և բժշկութիւնը շարունակում մեր ընկերներից՝ բժիշկ Թուզջեանի մօտ։ Յունուար ամսին զգում է ուսերի ոսկորների ցաւ, ենթադրում է, որ ռևմատիզմ է։ Այդ ժամանակ արդէն գնացել էր իր մասնագէտ բժիշկների մօտ և քննութեան ենթարկւել։ Այդ քննութիւնը պարզում է որ քաղցկեղը կատարելապէս բուժել է։ Սակայն ուսոսկրների ցաւը քանի գնում է զգալի է դառնում։ Ընկերների խորհրդով և ուղեկցութեամբ Դրօն գնում է Բոստոնի Լէյի Քլինիկայում քննութեան ենթարկւելու։

Մի քանի հռչակաւոր բժիշկների մօտ քննւելուց յետոյ, ուղարկում են Բոստոնի Տիքնս հիւանդանոցը բժշկութեան համար։ Այդ հիւանդանոցում շորս մասնագէտներ քննելով

հիւանդին և օրը երկու անգամ խորհրդակցութեան նստելով, թոյլ են տալիս տուն վերադառնալ և իրենց տուած դեղորայքով ու ցուցմունքներով բժշկութիւնը տանը շարունակել, իր հարկէ երկու օրը մի անգամ իրենց մօտ գնալու պայմանով։ Բայց ուսերի ցաւը քանի գնում սաստկանում է, որի հետևանքով բժիշկները անհրաժեշտ են համարում ուսի ոսկրները բանալ հետազօտելու համար։ Աջ ուսը գործողութեան ենթարկելով, մի կտոր ոսկոր և ոսկրային հիւթ են հանում քննութեան ենթարկելու համար, իսկ իրեն երկու օրից յետոյ կրկին տուն են ուղարկում։ Քննութիւնը պարզում է որ ուսի ոսկրների վրայ տարածուած են վատ տեսակի՝ արագ աճող քաղցկեղի ճիւղեր, որոնց ծայրերը հասել են ողնաշարի մի քանի ողներին։ Գործողութիւնից յետոյ, բժիշկների համար պարզուում է հիւանդութիւնը, ըստ այնմ էլ տանը շարունակում են բժշկութիւնը։ Հիւանդութիւնը գաղտնի են պահում Դրօյից, միայն յայտնում են տիկ. Գայանէին և հիւանդին տէր կանգնած Կենտ. Կոմիտէի անդամներին։

Երկու շաբաթ, երբեմն թոյլ, երբեմն խիստ ցաւերի մէջ տառապում էր մեր աննման հերոսը։ Հիւրերի ներկայութեամբ, երբեմն տխրադէմ նստած, կատակներ էր անում, շրջում էր սենեակի մէջ, անկողնու վրայ պառկում, անքուն ու անհանգիստ անցկացնում իր օրերը։ Մի գիշեր խիստ արիւնահոսութիւն է ունենում, ուստի գիշերուայ ժամը 3-ին փոխադրում են հիւանդանոց, ուր մնում է մինչև իր մահը։

Հիւանդանոցում տեղի է ունենում նոր արիւնահոսութիւն և պէմքը դեղնում է, բժիշկները հարկադրուած են լինում նոր գործողութիւն կատարել. նկատում է որ հաստ աղիքի մէջ ուլտէր հիւանդութեան վէրքեր կան, պարզուում է որ արիւնահոսութիւնը դրանից է։ Լեարդը անկանոն է և լեղին չի աշխատում։ Այդպիսով հիւանդութիւնները մէկը միւսի վրայ բարդւելով Մարտի 8-ին, երեկոյեան ժամը 8 45-ին, յաւիտենապէս փակում է իր աչքերը մեր անզուգական հերոս Դրօն։ Մահուանից երեք ժամ առաջ զրկւում է խօսելու կարողութիւնից։

Ինչպէս վերն ասացի, հիւանդին տէր կանգնեց Ամերիկայի Հ. Յ. Դ. Կենտրոնական Կոմիտէն և հնարաւորն արաւ, փրկելու համար մեր հերոսի կեանքը։

Հիւանդանոցում Դրօյի սնարի մօտ, ցերեկները հսկում էին տիկին Գայանէն և իր երկու զաւակները, ամուսնացած Օլգան և Մարտիկը, իսկ գիշերը մինչև լոյս հերթապահութեամբ ընկերները, որից շատ գոհ էր մնում Դրօն։ Քանի որ հիւանդանոցը ուխտատեղի էր դարձել, ուստի հիւանդանոցի վարչութիւնը ստիպւած եղաւ խիստ արգիլել այցելուների երթևեկը, բացի Կ. Կ. երկու անդամներից և երկու կարգապահ ընկերներից։ Մահւանից երկու օր առաջ ինձ յաջողւեց տեսակցութեան գնալ, ձեռքս բռնեց և թօթւելով ասաց «ղուրբանդ ըլնեմ Վահան, կը բարևես ընկերներին, ամենքին, ամենքին». պարտք եմ համարում այդ բարևը հասցնել հեռաւոր Իրանի ընկերներին։ Մահւանից յետոյ առաջարկ եղաւ հրկիզել դիակը և մոխիրը տուփի մէջ պահել Հ. Յ. Դ. թանգարանում, սակայն տիկին Գայանէն չհամաձայնւեց և թոյլ տւեց միայն թոքի միջից հանել այն գնդակը, որ 1914 թւից մնացել էր այնտեղ։

Յարգելի տիկնոջ ցանկութիւնը կատարւեց. թոքի միջից հանւեց արճիճի գնդակը, որ այժմ դրւած է փոքրիկ սրւակի մէջ, թանգարանում պահելու համար։

Կենտ. Կոմիտէն ընդառաջելով Նիւ-Եորքում եղած տարբերգիր կառավարութիւնների ներկայացուցիչների դիմումներին, որոշեց երկու օր դադարը ի ցոյց դնել «Հայրենիքի» սրահում, ապա ութ օրից յետոյ թաղումը կատարել Նիւ-Եորքում։ Սակայն նեղ շրջանակում տեղի ունեցած խորհրդակցական մի ժողովում, որոշւեց խնդրել Կ. Կ.-ին, թաղումը կատարել Բոստոնում, աչքի առաջ ունենալով մի շարք առաւելութիւններ. Կ. Կ.-ն ընդառաջեց և թաղումը կատարւեց Բոստոնում։

Բոստոնի նահանգում, օրէնքով խստիւ արգիլւած է կիրակի օրերը որևէ թաղում կատարել. Կենտ. Կոմիտէի ձեռք առած միջոցների շնորհիւ որպէս բացառութիւն, հնարաւոր եղաւ թոյլատւութիւն ստանալ, Դրօյի թաղումը Մարտի 18-ին՝ կիրակի օրը կատարելու։

Քէյմբրիճի նշանաւոր փողոցի վրայ գտնւում է Մաունթ Օպըրն նշանաւոր գերեզմանատունը, որ հարիւրաւոր տարիների պատմութիւն ունի, ուր թաղւել ու թաղւում են նշանաւոր մարդիկ. Կենտ. Կոմիտէին յաջողւեց Դրօյի դին ամփոփել

այդ նշանաւոր գերեզմանատան մէջ, նշանաւոր բլուրի ծոցում։

Համաձայն Կենտ. Կոմիտէի յայտարարութեան, Մարտի 10-ին և 11-ին, Դրօշի մարմինը գեղեցիկ դագաղի մէջ դրեց ի ցոյց հասարակութեան, «Հայրենիք»-ի ընդարձակ սրահում։ Սրահի բեմի մօտ ծածանւում էին ամերիկեան աստղանիշ և հայկական եռագոյն դրօշակները։ Ցածում դրուած էին բազմաթիւ ծաղկէպսակներ, որոնց մէջ թաղուած էր դագաղը, առանց կափարիչի, դէմքը եռագոյն դրօշակով ծածկուած։ Երկու օրուայ ընթացքում հազարաւոր ուխտաւորներ արցունք թափելով եկան ու գնացին։ Հնարաւո՞ր է մոռանալ հասակաւոր Սահակին որ, մղոններ հեռու մի վայրից եկած, կրթնելով ձեռքի փայտի վրայ, ուրիշների օգնութեամբ դողդողալով բարձրացաւ սրահը և ապա դողդողալով ու արցունք թափելով մօտեցաւ դագաղին, բազկատարած աղօթեց ու մրմնջալով, արցունք թափելով յետ դարձաւ, յուզելով ամենքին։

Երկու օրից յետոյ դագաղը դրեց սառցարանում, իսկ որոշուած օրը Մարտի 18-ին, ժամի 3-ին, Բոստոնի Ս. Թրինիթի (Երրորդութեան) անգլիական եպիսկոպոսական մեծ եկեղեցում, ուր և կատարուեց եկեղեցական արարողութիւնը։

Պատուոյ ծոպակիրներն էին Հ. Յ. Դ. Կենտ. Կոմիտէի անդամները, իսկ սգակիրները՝ թևքերին սև կապած, հայրենիքի վարչ. անդամները, վետերան ընկերներ և շրջանի կոմիտէների ներկայացուցիչներ, որոնք առաջնորդում էին դագաղը։ Եկեղեցական արարողութիւնը կատարուեց գլխաւորութեամբ Նիւ-Յորքի հովիւ Տէր Արսէն աւ. քհ. Սիմոնեանի՝ մասնակցութեամբ հինգ քահանաների։ Եկեղեցին լցուած էր շրջաններից եկած հազարաւոր ընկերներով և բարեկամներով, ներկայ էր նաև Վենետիկի Մխիթարեանների աբբահայր արհի. Ուլուհաճեանը։ Արարողութիւնից յետոյ, «ի վերին Երուսաղէմը» շատ յուզիչ երգեց տիկին Նաւասարդեանը, ամենքի աչքերից արցունք խլելով։

Այդ եկեղեցում առաջին անգամ Բոստոնի և շրջանի հազարաւոր հայութիւնը ժամանակին դիմաւորել և ընդունել է

Հայաստանի Հանրապետության առաջին վարչապետ Քաջազնունուն, յուզմունքի և երջանկության արցունքներ թափելով. իսկ այսօր նոյն հայությունը, հանրապետության անվեհեր հերոսի՝ Դրոյի մահուան կապակցությամբ սգոյ արցունքներ էր թափում։

Եկեղեցում խօսեցին արժ. Տէր Սիմէոնեան հայրը, Հ. Յ. Դ. Բիւրոյի կողմից ընկ. Կ. Թանտրճեանը, Հ. Յ. Դ. Ամեր. Կենտր. Կոմիտ. կողմից ընկ. Մ. Օզանեանը, Ամերիկ. Կոմիտէների կողմից Վ. Ահարոնեանը և Ուկրաինայի ժող. պատգամաւորների ներկայացուցիչ դոքտ. Ս. Վիտվիցկի։

Արարողությունից յետոյ, շքերթը նոյն կարգով եկեղեցուց դուրս եկաւ և հարիւրաւոր մեքենաների առաջնորդությամբ ուղղուեց Մանուէ Օպլերն գերեզմանատունը, ուր հանգուցեալի դին յանձնուեց հողին։ Գերեզմանատանը խօսեց Բէգլար Նաւասարդեանը, որը դագաղի վրայ ցանեց Հայաստանի մի բուռն հող, յետոյ բազմությունը խորը յուզմով երգեց «Մեր հայրենիք»ը։

Թաղումից յետոյ «Հայրենիք»ի սրահում, Կենտր. Կոմիտէի կողմից հոգեճաշ տուեց, որին մասնակցում էին 500-ից աւելի ընկեր-ընկերուհիներ։ Ճաշից յետոյ Կենտր. Կոմիտէի նախագահ դոքտ. Տաղլեանը խօսք տուեց ընկ. Գ. Մխիթարեանին, Վ. Աֆրիկեանին, Յ. Տէր Յովհաննիսեանին, Եղ. Սահակեանին, Տ. Դէվէջեանին, Զարեհ Զարգունուն, դոքտ. Դարբինեանին (Տիթրոյթից), դոքտ. Թուզճեանին, դոքտ. Բաղդասարեանին, Ա. Կիրակոսեանին (Պրովիտենս) Վ. Թովմասեանին (Լոս Անջելոս)։ Նախագահը փակելով ճաշկերոյթը, իր շնորհակալությունը յայտնեց ընկ. Հ. Բաղրամեանին և ընկ. Կ. Լաշինեանին, իրենց թափած աշխատանքների համար և ճաշկերոյթը պատրաստող յարգելի տիկիններին։

Թաղման ամբողջ արարողությունը նկարահանուեց։

ՎԱՀԱՆ ԱՅՐԻԿԵԱՆ

Բոստոն, 1956

ՆԱԿԱՇԻՋԷԻ ԱՀԱԲԵԿՄԱՆ ԱՌԹԻՒ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՋԴԵՐ

Հ. Յ. Դ. ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

Ա

Հ. Յ. Դաշնակցութեան Կովկասեան Բ. Կ. Կոմիտեի որոշմամբ՝ Բագւի Նահանգապետ իշխան Նակաշիձէ, Փետրուարեան եղեռնի գլխաւոր հեղինակը, Մայիսի 11/24-ին ենթարկուեց տեռորի՝ ռումբի միջոցով։ Նահանգապետը սպանուեց տեղն ու տեղը։

«ԴՐՕՇԱԿ»

1905 Յունիս

Բ

Ռումբը խօսեց։

Գազազած հայ ժողովրդի վրէժի որոտաձայն խօսքն էր այն։

Հրէշը, որ քամեց մեր սրտի արիւնը, ողորմելի դիակ է հիմա։ Փետրուար 6—9-ին նահատակուած մեր սիրելիների հոգիները թող հանգիստ առնեն այժմ։

Ռումբը գաւեր շատ ունի դեռ եւ վա՜յ նրանց, որոնք կը կամենան այսուհետեւ յօշոտել հայ ժողովուրդը։

Կորչի բռնակալութիւնը,

Կեցցէ՜ Կովկասեան ժողովուրդների եղբայրութիւնը,

Կեցցէ՜ ազատ Դաշնակցական կառավարութիւնը։

11 Մայիս 1905

Գ

Քաղաքացիներ,

Չորեքշաբթի, Մայիս 11-ին, ցերեկւայ ժամը 3-ին, քաղաքի կենտրոնում, Պարապետի վրայ Բագւի Նահանգապետ իշխան Նակաշիձէն մահւան պատժի ենթարկուեց։

Հ. Յ. Դաշնակցութիւնը նրան դատապարտել է մահուան իբրեւ Փետրուարի 6—9-ի արիւնոտ օրերի գաղտնի կազմակերպիչը եւ հիմնադիր։ Այս վճիռն իր ժամանակին հաղորդուած էր դատապարտուածին։ Սոյն վճիռը արձակուած էր նաեւ Բագուում գործող միւս յեղափոխական կազմակերպութիւնների կողմից՝ առանց ազգութեան եւ կուսակցական խտրութեան։ Վճիռը ի կատար ածուեց Դաշնակցութեան կողմից, որ այս պարագայում առաւելագոյն իրաւունքն է հասարակական վրէժխնդրութեան։

Իշխան Նակաշիձէի կրած պատիժը թող չշփոթեցնի ոչ ոքին։ Դա մի արդար յատուցումն է մի զազիր ոճրի — կանգնեցնել հարեւանը հարեւանի դէմ եւ կազմակերպել մասսայական կոտորած՝ խաղաղ ժողովուրդը ահաբեկելու նպատակով։ Իշխան Նակաշիձէն մարդասպան էր եւ դաւաճան։ Նա մատնեց իր պաշտպանութեան յանձնուած քաղաքը հրոսակների եւ աւարառուների եւ դրեց մարդասպանների ձեռքը մահացու զէնքեր, եւ այդ զէնքերը թաթախեց հարիւրաւոր անմեղների արիւնով։ Մահապարտ Նակաշիձէն պարտաւոր էր կնքել եղեռնալի կեանքը անարգ մահով։ Այդ էր պահանջում հասարակական վրդովուած խիղճը եւ Հ. Յ. Դաշնակցութիւնը դրա արտահայտիչը հանդիսացաւ։

Հրաւիրում ենք ձե՛զ, քաղաքացինե՛ր, խաղաղութեան եւ անդորրութեան։

Մի կորցնէք ձեր սառնասրտութիւնը։ Իշխան Նակաշիձէն պատժուեց իբրեւ եղեռնագործ, որի ճակատին արդէն դրոշմուած էր հասարակաց անարգանքը եւ որ դատապարտուած էր հասարակական դատարանով։

Պարապետի վրայ պայթած ռումբը թո՛ղ չներշնչի ձեզ երկիւղ վաղուայ համար։ Այդ ռումբը ուղղուած էր մի սրիկայի դէմ՝ որ սերմանում էր ազգաբնակութեան մէջ ատելութիւն եւ երկպառակութիւն, որ ձեր եւ մեր թշնամին էր, որ կոտորեց ձեր որդկերանց, հայրերին, մայրերին, եղբայրներին եւ քոյրերին։

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան
Բագուի Կենտր. Կոմիտէ

12 Մայիս 1905

ԴՐՕՆ ԵՒ ԻՐ ԳՈՐԾԸ*

ԱՆԴՐԱԴԱՐՁ

* «ՑՈՒՍԱՔԵՐ» ՀԱԼԷՊ, ՄԱՅԻՍ 1948, ՏՊԱՐԱՆ ՆԱԻՐԻ

Գրքոյկի մը մէջ ամփոփելով *Յուսաբերի* խմբագրականներու ներկայ շարքը, որ սպառիչ կերպով կը լուսաբանէ համաշխարհային Բ. Պատերազմի տեսողութեան հայ ժողովուրդի մէկ կարեւոր հատուածին վիճակուած ճակատագիրը, կը կարծենք հայ մարդուն տուած ըլլալ թանկագին յուշատետր մը, որ ոչ միայն կը բացատրէ իր մօտիկ անցեալը, այլեւ յստակ կերպով կը մատնանշէ ապագայ ուղեգիծը:

ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՖԻԶԻՔԱԿԱՆ ԳՈՅՈՒԹԻՆԸ ԱՄԷՆ ԲԱՆԷ ՎԵ՛Ր — ահա՛ այն իմաստուն կարգախօսը՝ որ մէջտեղ ելաւ Դաշնակցութիւնը վերջին պատերազմի նախօրեակին, ու հաւատարիմ մնաց անոր ամէն տեղ, բոլոր պայմաններուն մէջ, առժամաբար անտեսելու գնով իր քաղաքական ձգտումները, եւ, նոյնիսկ, ընկերային վարդապետութիւնը: Կէս դարու արիւնոտ փորձառութիւն մը, Հայ ժողովուրդին վիճակուած բախտը, իբրեւ քանակ ի սպառ կոտորուելու եւ անդարձօրէն պատմութեան անցնելու մղձաւանջը բերին Դաշնակցութիւնը այս «պահպանողական», այս «յեղափոխական» տեսակէտին: Ու անցնող փոթորիկը ցոյց տուաւ, թէ որքան իրատեսութիւն եւ ողջախոհութիւն կար Դաշնակցութեան որդեգրած քաղաքականութեան մէջ, ու նաեւ, որքա՜ն հայրենասիրութիւն:

Արդ, Դաշնակցութեան փողահարած այս կարգախօսը ոչ մէկ տեղ այնքան հաւատարմօրէն կիրարկուեցաւ, ու ոչ մէկ ատեն այնքան բարեբախտ արդիւնքի յանգեցաւ, քան պատերազմի ընթացքին Գերմանիոյ գրաւած վայրերուն մէջ: Ամբողջ վեց տարի արիւնը հոսեցաւ Եւրոպայի մէջ, քառասի վերածելով այդ երկրամասը, Ֆրանսայէն մինչեւ Հիւսիսային Կովկաս: Միլիոնաւոր կեանքեր փճացան, պետութիւններ եւ ազգեր բնաջնջուեցան, ու համատարած աղէտէն անվնաս

դուրս եկաւ ամէնէն տկարն ու խոցելին՝ ցիրուցան ու անպաշտպան Հայութիւնը, որ ոչ միայն ֆիզիքապէս անվթար մնաց սպանդէն ետք, այլեւ շատ մը վայրերու մէջ բարձրացաւ դիրքով ու ճարտարութեամբ:

Հրաշքի համազօր այս անհաւատալի յաջողութիւնը հայ ժողովուրդը կը պարտի մարդու մը եւ իր ընկերներուն: Կը պարտի Դաշնակցութեան անձնական մէկ զաւակին՝ Դրօյին եւ իր գործակիցներուն: Հայ կեանքի ցեցերը, տարիներ շարունակ, ի զո՜ւր փորձեցին ապարտել մեր մեծ ընկերոջ ճակատը: Սուտի եւ քսութեան առասպելներով ի զո՜ւր ճգնեցան «շողացող աստղին վարագոյր քաշել»:

Օգտուելով մութ ու խառնակ ժամանակէն, դիւրին էր անշուշտ զրպարտութեան սիւնակներ շարել անունին տակ մարդու մը, որուն ամբողջ կեանք ու հերոսութիւն եղած էր միա՛յն ու միայն հայրենիքին համար. դիւրին էր «դատանան» որակել ողջ իր էութիւնը պատանի տարիքէն հայութեան նուիրաբերած մարդ մը, բայց քիչ մը դժուար էր՝ ա՛յժմ եւ յապտեա՛նս՝ պատասխանել հեռեւեալ հարցումին — ի՞նչ պիտի ըլլար ճակատագիրը գերման կրունկներու տակ ինկող հայութեան, եթէ չըլլար Դաշնակցութեան արթուն պահակը՝ Դրօն:

Ութ դատանանութեան փաստաթուղթ իրենց թերթերէն գերման սպայի համազգեստներ ճօճող բախտախնդիրները, եթէ կրնան, թող պահ մը իրենց անձնուն ուղեղներէն ճարեն պատասխանը այս միա՛կ հարցումին.— Ի՞նչ պիտի ըլլար Եւրոպայի հայութիւնը՝ առանց «Դրօյի դատանանութեան»...

Վաղուց վերջացած է պատերազմը: Երէկի թշնամիները բարեկամ են այսօր ու բարեկամները թշնամիներ: Վիժած խաղաղութիւն մը իր կարգին թուխս նստած է արդէն, ով. գիտէ ի՛նչ հրէշային երկունքի մը համար: Մէկ օրէն միւսը, երկրագունտը կրնայ դարձեալ մտնել քաոսի մը մէջ: Ու ճարէն խունապահար ու շուար հայ մարդը կրնայ գտնուիլ միեւնոյն հարցումին առջեւ.— ի՞նչ ընել, ո՞ւր երթալ, որո՞ւն կառչիլ:

Այս գրքոյկը կու տայ պատասխանը բոլոր հարցումներուն: Կը թելադրէ անշեղ հետեւիլ Դրօներու կուսակցութեան ցոյց տուած ճամբուն: Որովհետեւ, աշխարհի մէջ չկայ ապրելի պայծառ հայելի քան Դրօներու աչքերը, որոնց մէջ միայն

հայ ժողովուրդը կրնայ տեսնել իր հարազատ պատկերը։ Իր վշտին համար պահուած արցունքը։ Իր յաղթանակին համար անհրաժեշտ վճռականութիւնը։ Իր շքեղ անցեալին արժանի հերոսութիւնը։ Իր մոայլ օրերուն համար անհրաժեշտ յոյսի շողը։

Ամբողջ կէս դար՝ Դաշնակցութիւնը արիւն քամեց իր երակներէն ու հայ ժողովուրդին ցոյց տուաւ զոհողութեան ու պայքարի ճամբաներ։ Քարոզեց՝ մեռնի՛լ գիտնալ հայրենիքին համար։ Ու սուրեցուց հայ ժողովուրդին՝ զոհողութիւններուն գերագոյնն ու արքայանը — մեռնի՛լ հայրենիքին համար։ Քսան տարեկան Դրօներ ունէր Դաշնակցութիւնը, որոնք վրէժխնդիր ռումբերով կը դղրդացնէին բովանդակ Կովկասը ու մեռնիլ գիտցող ու մեռցնել գիտցող մարդո՛ւ կը վերածէին սարկատիպ հայը։ Նոյն Դրօն է անհաւասիկ, միեւնոյն Դաշնակցութիւնը, որ կը պատգամէ այսօր՝ թէ մեռնիլը սովելի եմ, հարկ է նաեւ ապրի՛լ սովիլ հայրենիքին համար, սպասելով լաւագոյն օրերու...

Թող ամէն հայ մասունքի պէս բարձին տակ պահէ այս գրքոյկը որպէս յուշատետր անցեալին եւ ուղեցոյց գալիքին, որպէսզի վաղը, երբ նոր մրրիկներ ալեն երկրագունտը եւ հին ու նոր Դրօներ ցցուին վտանգին դէմ իրենց կուրծքը վահան դարձնելով անտէր հայութեան առջեւ, անանուն սատակներ չփորձուին այլեւս «դաւանանի» շապիկ հագցնել միանգամ իրենց արեան յետին կաթիլը հա՛յ ու հայրենապաշտ հերոսներուն...

Կա՞յ աւելի մեծ փառք, կա՞յ պատմութեան թողուելիք աւելի մեծ երախտիք՝ քան վարպետի ձեռքով ծրագրուած ու գործադրուած այս «դաւանանութիւնը», քառորդ միլիոն հայ կեանքերու փրկութեամբ։

Ապրի՛ն հայութեան խիզախ կորիւնները, որոնք այսպէ՛ս «դաւանանելով» կը ծառայեն իրենց հայրենիքին...

Ապրի՛ իրենց ծնունդ տուող Կազմակերպութիւնը՝ Հայ յեղափոխական Դաշնակցութիւնը։

Ապրի՛ բոլոր հերոսներու եւ հերոսական կուսակցութիւններու Մայրը՝ Հայ Ժողովուրդը։

Հ. Ց. Դ. ՍՈՒՐԻՈՑ
Կ. ԿՈՄԻՏԷ

Երկրորդ մեծ պատերազմին հայ կեանքի մէջ ամէնէն աւելի աղմուկ ստեղծուեցաւ մեր ընկերներէն Դրօյի անուան շուրջ։

Երբեմնապէս հակադաշնակցական մամուլը իր անկման մէջ հասաւ մինչեւ անբարոյութեան վերջին ծայրակէտը՝ ամէ՛ն սուտ յօրինելով և անխղճաբար ամէ՛ն տիղմ թափելով հայ ժողովուրդի ամէնէն ազնուական զաւակներէն մէկուն՝ ընկ. Դրօյի հասցէին։

Երբ այս յարձակումներն ու սուտերը կու գային բոլշեւիկներո՛ւ կողմէ՝ մենք չէինք զարմանար, որովհետեւ Մոսկուան գիտէ — գիտենք նաեւ մենք — թէ ինչո՛ւ կը հալածէ Դաշնակցութիւնը, ինչո՛ւ կը հալածէ դաշնակցական Դրօն։

Սակայն մենք, ծանօթ ըլլալով հանդերձ մեր ոչ-բոլշեւիկ հակառակորդներու բարոյականին, այնուամենայնիւ, կը զարմանայինք, երբ նոյն սուտերն ու յարձակումները նոյնութեամբ կը կրկնէին նաեւ անոնք.

— Մի՞թէ այսքա՜ն սորացումի ընդունակ է հայ մարդը,— տագնապով ու խորին դառնութեամբ կ'ըսէինք մենք մեզի։

Նիւ Եորքի համայնավար պաշտօնաթերթը՝ «Լրաբեր»՝ իր 1944 Յուլիս 6ի թիւին մէջ, ամբողջ էջի լայնքին, ազդի մը ձեւով, իբրեւ առաջին էջի առաջին տող, խոշորկեկ գիրերով, կը յայտարարէր.

— «ԴՐՕՆ, ԴԱՇՆԱԿՆԵՐԸ ՀԱՅ ԱԶԳԻ ԴԱՒԱՃԱՆ։

«ԷՋՄԻԱԾԻՆ Կ'ԸՍԷ.— ՎԱՍԱԿ ԴՐՕՆ ԻՐ ԴԱՇՆԱԿ ՀՐՈՍԱԿՆԵՐՈՎ ԿԸ ԾԱՌԱՅԷ ՀԻԹԼԵՐԵԱՆ ԲԱՆԱԿԻՆ»։

«Լրաբեր»ի ելոյթէն երեք օր վերջ, Պոսթընի ռամկավար պաշտօնաթերթը՝ «Պայքար»՝ իր 1944 Յուլիս 9ի թիւին մէջ, «էջմիածին» պարբերականի 1944 Յունուարի թիւէն արտատպելով Սուրէն ծ. վարդապետի գրութիւնը — «Ուղեւորութիւններ Հիւսիսային Կովկասում» — և այս առթիւ ընկ. Դրօյի դէմ խմբագրական մըն ալ թխելով, թերթի առաջին էջին վրայ, ազգի մը ձեւով ու խոշորկեկ գիշերով, կ'աւետէր.

— «ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ԴՐՕ ՀԻՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍ Կ'ԵՐԹԱՅ ՆԱՑԻՍՏՆԵՐՈՒՆ ՀԵՏ, ԿԸ ԹԱՂԷ ԱՆՈՆՑ ՀԵՏ, ԿԸ ՓԱԽՉԻ ԱՆՈՆՑ ՀԵՏ»։

Եւ որովհետեւ այսքան ցնծալի լուր մը հաղորդած էր «էջմիածին», ուստի Հիւս. Ամերիկայի «Ազգային Խորհուրդը», ուր համախմբուած էին բոլշեւիկները, ռամկավարներն ու հնչակեանները, Նիւ Եորքէն հեռագիր մը կը քաշէր Մոսկուա՝ «Իզվեստիա»յի, խստօրէն դատապարտելով Դրօյի դաւաճանութիւնը և առ այդ՝ ի քաջալերութիւն Մայր Աթոռի կղերականներու՝ 1000 տոլար տրամադրելով «էջմիածին»ի... Եւ «Լրաբեր»ներու ու «Պայքար»ներու այս պիղծ արարքները կ'արձագանգէին գաղութէ գաղութ՝ լայնօրէն տեղ գտնելով բոլոր հակադաշնակցական — բոլշեւիկ, ռամկավար և հնչակեան — թերթերու մէջ։

Առանց ամենափոքր խղճահարութեան, առանց ցաւի և ամօթի կը քաշքշուէր մարդ մը, որ իր պայծառ ու շքեղ անունով զարդարած է Հայկական Ազատամարտի ամէնէն գիւցազնատիպ էջերը...

Դաւաճան կը հռչակուէր մարդ մը, որուն հայրենապաշտ բազուկի ահեղ հարուածներուն տակ արիւնլուայ գետին փռուած են մեծազօր ու վաւերական դաւաճանները հայ ժողովուրդի...

Թալանճի, Վասակ կ'որակուէր իրա՛ւ անձնուրաց մը — քաջերուն մէջ շքնղօրէն քաջը և հերոսներուն մէջ կախարդօրէն հերոսը — որուն բովանդակ մրրկայոյզ կեանքը անհաշիւ, անկաշառ և անվերջ նուիրում մը եղաւ իր ժողովուրդին և հայրենիքին...

Ի՞նչպէս հրապարակ եկաւ Դրօյի անունը։

Թերթի ժլատ սիւնակները, տարաբախտաբար, հնարաւորութիւն չեն ընծայեր մեզ այս հարցի սպառիչ պատասխանը տալու։

Մենք ստիպուած ենք գոհանալ քանի մը սեղմ լուսաբանութիւններով։

Երկրորդ մեծ պատերազմին, նախածրագրուած «հանդիսաւորութեամբ» մը, Դրօյի անունը երեք անգամ հրապարակ դրուեցաւ։

Առաջին անգամ այդ անունը մամուլի նիւթ եղաւ 1943ի Յունուարին, երբ բանաստեղծ Ա. Իսահակեան Երեւանէն արտասահմանեան թերթերու ուղղեց «Արկածախնդիրներ» խորագրով իր ծանօթ յօդուածը։

Երկրորդ անգամ Դրօյի անուան շուրջ աղմուկ ստեղծուեցաւ գաղթահայ մամուլին մէջ 1944ին, երբ Երեւանէն ստացուեցաւ «Էջմիածին» պարբերականի 1944 Յունուարի թիւը, ուր ամն Սուրէն ծ. վարդապետ զետեղած էր իր ծանօթ թղթակցութիւնը՝ «Ուղեւորութիւններ Հիւսիսային Կովկասում»։

Եւ, վերջապէս երրորդ անգամ կատաղի արշաւ մը շղթայազերծուեցաւ Դրօյի անուան շուրջ 1945 ամրան, երբ Ազգային Եկեղեցական Համաժողովէն արտասահմանեան պատուիրակները վերադարձան իրենց տեղերը։

Պատահականութեան արդիւնք չեն այս թուականները։ Աւելի ուշ՝ մեր կեանքի խուզարկու գրիչը, աւելի խաղաղ պայմաններու մէջ, ի վիճակի պիտի ըլլայ ստոյգ և անվիճելի տուեալներով պարզելու, թէ ինչո՞ւ յատկապէս ա՛յս թուականներուն, 1943 Յունուար, 1944 Յունուար, և 1945 Յուլիս — ՄՈՍԿՈՒԱՆ Երեւանի և Էջմիածնի միջոցով արտասահմանեան իր քարոզչական մեքենան լարեց ընկ. Դրօյի դէմ։

Այսօր և առ այժմ — քանի մը խօսք միայն։

1942 Յուլիսի կէսերուն գերման բանակը իր գլխաւոր ուժերը ուղղեց դէպի Սթալինկրատ։ Օրհասական կռիւները պատմական քաղաքի պատերուն տակ շարունակուեցան մինչեւ 1942 Նոյ. 19, երբ սկսաւ ռուսական հակայարձակումը. բուն յաղթանակը եկաւ 1943 Փեբրուար 2ին՝ գերման ընտրելագոյն բանակը, աւելի քան 300.000 սուին, խսպառ փոշիացնելով Սթալինկրատի հարթադաշտերուն վրայ։

Սակայն յաղթանակը եկաւ, ինչպէս ըսինք, 1943 Փետր. 2ին: Մինչեւ այդ թուականը, մանաւանդ Դեկտեմբեր-Յունուարին, բնաւ յայտնի չէր մարտերէն ահեղագոյնի բախտակշիռ ելքը։ Կռիւը կրնար վերջանալ նաեւ գերմա՛ն յաղթանակով։ Այս յոռի ենթադրութեամբ ահա, 1942ի Դեկտեմբերին Չեկան կը թխէ «Արկածախնդիրներ» խորագրով իր յօդուածը, զայն ստորագրել կու տայ Խաչատուրեանի և շտապ կը յղէ արտասահմանեան բոլո՛ր թերթերուն (որոնց կարգին նաեւ «Յուսաբեր»ի)։

Յօդուածը Դաշնակցութեան դէմ ուղղուած չէ՛, այլ ուղղուած է սոսկ անոր ծոցին մէջ տեղ գտած «արկածախնդիր»ներու...

Յօդուածով Դաշնակցութիւնը դատախազ կը կարգուի իր «արկածախնդիր զաւակներու նկատմամբ, որոնք դաւաճանած են դաշնակցութեան անցեալին և դաւանանքին»,

Բանաստեղծը, արտասահմանէն Հայաստան դառնալէ ի վեր առաջին անգամ ըլլալով, այդ գրութեան մէջ հանդէս կու գայ իբրեւ դաշնակցական, և իր կուսակցութեան կը խօսի անոր վարկին նախանձախնդիր դաշնակցականի՛ ոգիով։

Ահա այն Հայաստանը, որ Երեւանէն բանաստեղծը կը ներկայացնէ իր կուսակցութեան.

պարոէ՞ անոնց վտանգաւոր քայլերը, անոնց ազգակործան գործունէութիւնը, կը պայքարի՞ անոնց դէմ, կը մերկացնէ՞ զանոնք զանգուածներու առջեւ» (քաղուածքները տեսնե՛լ «Ժողովուրդի Ձայն», Պէյրութ, 1943 Յունուար 27-28ի թիւերը)։

Պարզ էր, թե ո՛վ է յօդուածին բուն հեղինակը և ի՛նչ է գրութեան հետապնդած բուն նպատակը։

Սթալինկրատի մոայլ վախճանը նկատի առնելով՝ Չեկան քաղարկած ճիգ մը կ՚ընէր Դաշնակցութիւնը ողոքելու և պայն Դրօշի և իր ընկերներու դէմ հանելու։

Աւելին. այդ նոյն օրերուն Չեկան, որուն խանձող շունչին տակ թշնամած ու դալկացած էր Հայ քնարը, իրեն օգնութեան կը կանչէ հրեղէն զաւակը Հ. Յ. Դաշնակցութեան՝ գիւցազնաշունչ Սիամանթօն...

Առաւօտ մը Երեւանի մէջ լոյս կը տեսնէ «Ս. Հայաստան»ը, որու բովանդակ էջը, ամբողջ լայնքին, հսկայ գիրերով, բռնած է դաշնակցական անմահ երգի բոցեղէն մարտահրաւէրը — «ՁԱ՛ՐԿ ԿՈՎԿԱՍ»...

Եւ ո՞վ գիտէ, ո՞վ կրնայ ըսել, թէ ինչպէ՞ս թունդ ելաւ տագնապահար Հայրենիքի վառուած հոգին, երբ ան լսեց իր անմեռ, իր հարազատ զաւկի կրակոտ խօսքը...

Այսպէս է Բոլշեւիզմը, այսքան անարի և այսքան վատ...

Երբ Սթալինկրատի գոյամարտը վերջացաւ ռուսական զէնքի փառաւոր յաղթանակով՝ այդ յայթանակի հետ միասին լռեց նաեւ Սիամանթոն...

Նոյն յաղթանակին հետ միասին մեռաւ նաեւ Իսահակեանի գրութիւնը...

Բոլշեւիկները այլեւս անյարմար նկատեցին այս վերջին գրութեան անդրադառնալ, կարծես իրենք չըլլային անոր հեղինակները։

Այդ գրութիւնը — նկատենք անցողակի — Հայաստանէն գալով՝ Հայաստանի թերթերուն մէջ երբեք չերեւցաւ։

Այսպէս լուռ անցաւ տարին մինչեւ **1944 Յունուար, երբ** մէկէն «էջմիածին» պարբերականը, իր անդրանիկ թիւը հրապարակելով, անոր մէջ հրատարակութեան տուաւ Սուրէն Ծ. վարդապետի ծանօթ գարշելի գրութիւնը՝ «Ուղեւորութիւններ Հիւսիսային Կովկասում» խորագրի տակ։

Անցողակի յիշատակենք, որ նաեւ այս յօդուածի մասին Հայաստանի խորհրդային թերթերու մէջ ոչ իսկ Մէկ ՏՈՂ երեւցաւ։

«Ուղեւորութիւնները»ը, նմանութեամբ «Արկածախնդիրներ»ու, Չեկայի կողմէ պատրաստուած գրութիւն մըն էր, բացառաբար արտասահմանի համար։

Երբ «էջմիածին»ը հասաւ մեզի, գաղթաշխարհի հակադաշնակցական բոլո՛ր թերթերը, գլխաւորութեամբ բոլշեւիկներու, առանց որեւէ կասկածի և կամ վերստուգման ենթարկելու անծանօթ կղերականի մը անարժէք գրութեանը մէջ, ամբողջութեամբ իւրացուցին զայն և բուռն ու ատելավառ պայքար բացին թէ՛ Դաշնակցութեան և թէ՛ ընկ. Դրօյի դէմ։

Սուրէն վրդ.ի բերնով խօսողը կարծես մարգարէ մը ըլլար, որ եկած էր իր հօտին — համայնավար և համայնավարամիտ — ճշմարտութիւններ պատգամելու...

Սակայն երկար չտեւեց այս կեղծ մարգարէի սին փառքը։

Պայքարը մէկէն դադարեցաւ, և դադարեցաւ խորհրդաւոր պայմաններու տակ։

Ձեւապէս Մայր աթոռը բացած ըլլալով պայքարը (իր պարբերականի էջերէն)՝ ձեւապէս Մայր Աթոռն ալ զայն փակեց, երբ իր պատուիրակները — պրոֆ. Աշոտ Աբրահամեան և Անուշաւան Տէր Գրիգորեան — 1944ի գարնան արտասահման անցան՝ կաթողիկոսական ընտրութեանց համար մերձարեւելեան գաղութներու մէջ՝ Իրանէն մինչեւ Եգիպտոս՝ նախապատրաստական աշխատանքներ տանելու համար։

Դրօշի խնդրին նուիրուած «Մեր պատասխանը» խորագրով խմբագրականին մէջ «Յուսաբեր»ի 1945 Օգոստոս 9ի թիւով կը գրէինք.

«Երբ այս տողայամիտ եւ գրգռիչ գրութեանը առթիւ հարցում ուղղեցինք Երեւանի կարեւոր անձի մը՝ մեզի ըսուեցաւ.

«— ԻՐԱՒԱՑԻ ԷՔ. ՊԷՏՔ ՉԷ, ՈՐ ԱՅԴ ԳՐՈՒԹԻՆԸ ՏՊՈՒԷՐ. ՊԻՏԻ ԱՌԱՋԱՐԿԷԻ ՉՊԱՏԱՍԽԱՆԵԼ ԱՅԴ ԳՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱՐՑԸ ՓԱԿՈՒԱԾ ՆԿԱՏԵԼ. ԹԻՒՐՄԱՑՈՒԹԵԱՆ ԱՐԴԻՒՆՔ Է ԱՆՈՐ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ. ՆՄԱՆ ՑՕԴՈՒԱԾ ԱՅԼԵՒՍ ՉԻ ՏՊՈՒԻՐ»։

Ինչպէս ըսինք, պատահական անձ մը չէր այս խօսքերը մեզի ըսողը, այլ լիազօր մը, որ իրաւունք և արտոնութիւն ունէր այս կարգի յայտարարութիւններ ընելու։

Մեր նոյն խմբագրականին մէջ, շարունակելով մեր խօսքը, կը գրէինք։

«Այս յայտարարութիւնը որոշ հաւաք ներշնչեց մեզ հենց այն պատճառով, որ Դրօշի դէմ յօդուածը հրատարակուած էր ոչ թէ «Ս. Հայաստան»ի մէջ (որ կառավարական եւ կուսակցական պաշտօնաթերթ մը է), այլ «Էջմիածին»ի մէջ (որուն կրօնական հանգամանքը անարժէք կը դարձնէր իր կուսակցական-քաղաքական ելոյթը)։

«Համաձայն մեզ տրուած խորհրդի՝ մենք շպատասխանեցինք, եւ Երեւանն ալ լռեց։ Ու լռեց ամբողջ քառ տարի մը։ Երեւանի այս վերջին լռութիւնը տեւեց սա Յունիս 1945, Մինչեւ Էջմիածնի Ազգային Եկեղեցական Ժողովը»։

Արդ, ինչո՞ւ Երեւանը «Դաշնակցութիւն-Դրօ» երկուօրեակի դէմ պայքարը վերսկսաւ 1944ի Յունուարին և արագօրէն ալ զայն փակեց և մնաց լուռ մինչեւ 1944 Յունիս։

Եթէ վերկման շուրջ կրնան տարբեր կարծիքներ գոյութիւն ունենալ, ԴԱԴԱՐԵՑՄԱՆ շուրջ, բոլոր պայմաններու տակ, տարակարծութիւններ պէտք չէ որ ըլլան։

Դադարեցումը որոշապէս ու պարզօրէն կապուած է կաթողիկոսական ընտրութիւններուն։

Մոսկուան իրեն վերապահուած պատճառներով կ'ուզէր նաեւ «հայրենուրաց» ու «հայրենադաւ» Դաշնակցութեան մասնակցութիւնը ապահովել 1945ի կաթողիկոսական ընտրութիւններուն։

Իսկ եթէ անհնար է այս, կ'ուզէր ապահովել Դաշնակցութեան գոնէ բարեկամական կեցուածքը ընտրութիւններու հարցին մէջ։

Նոյնը եղաւ Մոսկուայի վերաբերումը կաթողիկոսական ընտրութեան նաեւ առաջին Համագումարին, 1941 ապրիլ, երբ քանի մը օրուան մէջ Լիբանանի դաշնակցական պատուիրակի՝ ընկ. Գ. Իփէքեանի վիզէն եկաւ Մոսկուայէն։

Արդ, 1944-1945 թուականներու կաթողիկոսական ընտրութեան այս նախապատրաստական շրջանին կարելի չէր մէջտեղ ժամանակ «կարկանդակը ե՛ւ ուտել, ե՛ւ պահել», ինչպէս որ հինը կ'ըսէ։

Կարելի չէր ե՛ւ Դաշնակցութեան օժանդակութիւնը ունենալ ընտրութեան հարցին մէջ, ե՛ւ Դաշնակցութեան դէմ հայհոյելը։

Այս ենթադրութիւններով խորհրդային վարչակարգի իշխանութիւնը լռեց մինչեւ 1945 Յունիս, երբ կարելի դարձաւ Էջմիածնի մէջ գումարած Ազգ. Եկեղեցական Ժողովին կոչել կաթողիկոսական տեղակալ Գէորգ Չէօրէքճեանը հռչակել Ամենայն Հայոց Կաթողիկոս։

Հոս իսկ, Էջմիածնի մէջ, Համաժողովի փակման օրը, 1945 Յունիս 25ին, բացառաբար Սթալինի ուղղուած ուշագրաւ հեռագրով մը — այս հեռագիրը ոամկավար թերթերը չտուին — հայկական ճակատի վրայ բացուեցաւ այն պայքարը Անգլիոյ և Ամերիկայի դէմ, որ այսօր ծաւալած ու թունաւորած է ամբողջ աշխարհը։

Վստահ, որ այս պայքարի մէջ կարելի չէ Դաշնակցութեան համեմատութիւնը ունենալ, Երեւանը Էջմիածինէն արտասահման ճամբեց գաղութահայութեան բոլոր պատուիրակները՝

զանոնք ամէնքը Դաշնակցութեան դէմ զինելով և անոնց ամէնուն ձեռքը ինչ որ լուսանկարներ տալով, ուր Դրօն կը տեսնուի գերման մէկ-երկու զինուորականներու հետ...

Պատուիրակները վերադարձան, նոյն լուսանկարները անթիւ անգամներ, զանազան չափերու վրայ, զետեղեցին հակադաշնակցական բոլոր թերթերու մէջ՝ ահաւոր, խուժդուժ ու անպատկառ ոռնոց մը բարձրացնելով թէ՛ Դրօյի և թէ Դաշնակցութեան դէմ։

Անցողակի դարձեալ շեշտենք հոս, որ նաեւ այս պիղծ պայքարին երկրի խորհրդային մամուլը չանդրադարձաւ ոչ իսկ ՄԷԿ ԲԱՌՈՎ։

Համբաւաւոր լուսանկարներէն ոչ իսկ ՄԷԿ ՀԱՏԸ երեւցաւ խորհրդային թերթերու մէջ։

Չեկայի նաեւ այս ցածրորակ հոգեւոր կերը սահմանուած էր բացառաբար արտասահմանեան հօտի համար։

Այս վերջին պայքարը այդ օրերէն գրեթէ նոյնութեամբ կը շարունակուի մինչեւ այսօր։

Ընթերցողը նկատեց անշուշտ, որ խորքին մէջ պայքարը Դրօյի դէմ չէր, այլ դաշնակցութեան, ըլլա՛յ այն ժամանակ՝ երբ Չեկան Դաշնակցութեան դատապարտանքը կը հայցէր «արկածախնդիր»ներու դէմ, ըլլա՛յ այն ժամանակ՝ երբ Չեկան բուն «արկածախնդիր»ը Դաշնակցութեան մէջ կը տեսնէր։

Ընկ. Դրօն համազգային կշիռով Դաշնակցութեան առաջնորդներէն ըլլալով՝ Բոլշեւիզմը իր պայքարը Դաշնակցութեան դէմ տարաւ առաւելաբար ընկ. Դրօյի գիծով, միաժամանակ նաեւ այս անբասիր հայրենասէրը մրոտելու համար։

Ընթերցողը տեսաւ նաեւ, որ Բոլշեւիզմը յաւիտենական սէրեր և ատելութիւններ չունի, ո՛չ իսկ Դրօյի և Դաշնակցութեան հանդէպ, այլ ունի յաւիտենական շահեր։

Երբ իր շահերը կը պահանջեն, Բոլշեւիզմը քողարկուած «դատապարտանք»ի ձեւին տակ մինչեւ իսկ կը ճնի՛ Դաշնակցութեան առջեւ՝ անոր յեղափոխական անցեալը ոգեկոչելով, ինչպէս որ ըրաւ 1942ի դեկտեմբերեան մոայլ և յուսահատ օրերուն, «Արկածախնդիրներ» ծանօթ յօդուածին մեջ։

Երբ իր շահերը կը պահանջեն, թունաւոր պայքարը կը վերսկսի՝ մէկէն և անակնկալաբար ձայնը կտրելու պայմանով, ինչպէս որ ըրաւ 1944-1945 թուականներուն։

Եւ երբ իր շահերը կը պահանջեն, տիպար վատ մը դառնայ թէ՛ Դրօյի և թէ Դաշնակցութեան նկատմամբ, ինչպէս որ եղաւ 1945 Յունիսէն այս կողմ, մինչեւ այսօր։

Այսքան ոչի՛նչ, այսքան անարժէք է Բոլշեւիզմի խօսքը գաղափարներու, տեսակետներու և հաւատքի լոյսին տակ։

Բայց մի՞թէ նոյնը չէ Բոլշեւիզմը մի՛շտ, ամէ՛ն տեղ և բոլորի՛ նկատմամբ։

1941 Մայիս 19ին, երբ տակաւին իր ուժի մէջ էր 1939 օգոստոս 23ի ռուսգերման բարեկամութեան ուխտը, երբ Հիթլէր և Սթալին սրտակից եղբայրներ էին տակաւին և երբ այնքան անհաւանական կը թուէր 1941 Յունիս 22ին շղթայազերծուած ռուսգերման զինաբախումը, Նիւ Եորքի համայնավար պաշտօնաթերթը՝ «Լրաբեր»՝ դժուարացնելու համար Միացեալ Նահանգներու օժանդակութեան գործը Մեծն Բրիտանիոյ, Ապրիլեան ջարդերու առիթով կը նկատէր.

«Ամերիկահայե՛ր, յիշեցէք այն ընդվզեցուցիչ եւ շարագուշակ փաստը, թէ ի՛նչպէս առաջին մեծ պատերազմին անգլիական կայսերապաշտութիւնը Հայերը իր «փոքր դաշնակից»ը կ'անուանէր, մինչ թէ՛ այդ նոյն պատերազմի ընթացքին եւ թէ այդ պատերազմէն ետքը ան կը գործէր այնպէս, որպէսզի իրագործուի Հայերու խպտոտ բնաջնջումը...»:

Աւելի ուշ նոյն «Լրաբեր» իր 1944 Մարտի 9ի խմբագրականով կը գրէր.

«Առաջին համաշխարհային պատերազմի ատեն հայերու զանգուածային բռնագաղթը եւ բնաջնջումը ծրագրուած էր Պերլինի մէջ եւ գործադրուեցաւ գերման զինուորականներու անմիջական ղեկավարութեամբը»:

Երբ Սթալին եղբայրացած էր Հիթլէրի՝ մեզ բնաջնջողը, ոչ համայնավար «Լրաբեր»ի, ԱՆԳԼԻԱՆ էր, մինչ ետքէն, երբ Հիթլէր գաւաճանեց եղբայրութեան ուխտին և յարձակեցաւ Սթալինի վրայ, մեզ բնաջնջողը, ըստ նոյն «Լրաբեր»ին, եղաւ-դարձաւ ԳԵՐՄԱՆԻԱՆ...

Վաղը կրկին ԱՆԳԼԻԱ՛Ն պիտի դառնայ, երբ անգլեւռուս տարակարծութիւններն ու ատելութիւնները աւելի խորանան...

«Մենք շատ լաւ գիտենք,— կը գրէր Ալ. Միասնիկեան, «Եռամեայ Խ. Հայաստանի առօրեայ խնդիրները» խորագրին տակ,— որ արտասահմանում պատրաստուած մարտական

կուսակցութեան շարաբաստիկ գինակիրները պատրաստ են կոչելու, ո՛չ, Հայկական Հարց կայ, Թրքահայաստանի խնդիրը մնում է:

«Տաճկահայաստանի խնդի՞ր,— լուծուած է... Մեզ համար գոյութիւն չունի ե՛ւ սահմանների հարց»:

Արձագանգելով Միասնիկեանի այս յայտարարութեան, ուրիշ ականաւոր բոլշեւիկ մը՝ Ա. Կարինեան՝ կը գոչէր,

«Հայաստանի խորհրդայնացումով Հայկական Հարցը մի անգամ եւ ընդմիշտ լուծուած է»:

Աւելի առաջ, 1918 Նոյ. 29ի ծանօթ «Դեկլարացիա»յի հեղինակները — Ս. Կասեան, Աւ. Նուրիջանեան, Ալ. Բէգզադեան, Ս. Դովլաթեան, Ա. Մռաւեան և Ս. Տէր Գաբրիէլեան — իրենց ստորագրութեանը տակ սրտագին ողջոյն մը ուղղելով Թուրքիոյ՝ կը յայտարարէին.

«Հաւատում ենք, որ իմպերիալիստական լծից ազատագրուող ժողովրդական Տաճկաստանը մեզ եւս իր հետ Սեւրի գաշնագրի հակառակորդ համարելով՝ մեզ եղբայրական ձեռք է մեկնելու...»:

Ստորագրութիւնները այս ամբոխը ունենալով իր առջեւ՝ Քրեմլը Թուրքիոյ հետ կնքած իր զոյգ գաշնագրերու մէջ — Մոսկուայի (1921 Մարտ 16) և Կարսի (1921 Հոկտ. 13) — ուրանալով կ'ուրանար Հայկական Հարցը՝ ԲՈՎԱՆԴԱԿ ԹՈՒՐՔԱՀԱՅԱՍՏԱՆԸ ԹՐՔԱԿԱՆ ՀՈՂ ՆԿԱՏԵԼՈՎ...

Այս հերոսական գործերու հեղինակները այսօր մե՛զ կը հոչակեն «Թուրքիայի հողային ամբողջականութեան անձեռնմխելիութեան սկզբունքի կողմնակից» («Լրաբեր», 1948 Հունուար 22), երբ ստոյգ է, որ նաեւ վաղը այս նոյն ազգադաւները նոյնքան դիւրութեամբ հայկական հողերը պարգեւ պիտի տան ե՛ւ Թուրքին, ե՛ւ վրացիին, ե՛ւ թաթարին...

Եւ ինչո՞ւ վաղը...

Երէկ, *իր 1944 ՓԵՏՐ. 24ի խմբագրականին մէջ, «ՆՈՐ ԴԱՒԱՃԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ» խորագրին տակ, համայնավար «Լրաբեր» մեր հասցէին կը գրէր.*

«Դաշնակները մինչեւ այսօր ալ կը ծառայեն Հիթլերի պատերազմական նպատակներուն. ԱՅՍՕՐ ԱՆՈՆՔ ՆՈՐ ԴԱՒԱԴՐՈՒԹԻՒՆ ՄԸ ԿԸ ՍԱՐՔԵՆ, ՈՐՈՒՆ ԱՆՈՒՆԸ ԴՐԱՄ ԵՆ «ԹՐՔԱՀԱՅ ԳԱՒԱՌՆԵՐՈՒ ԿՑՈՒՄ ՍՈՎԵՏ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ»:

Այս տողերուն հեղինակը՝ նոյն «Լրաբեր»ը, իր 1948 Մարտ 13ի խմբագրականին մէջ, դարձեալ մեր հասցէին, կը գրէր.

«Դաշնակցութեան կուսակցապետները անգուսպ կառաղութեամբ կը կոուին թրքահայ հոդերու ազատագրումին դէմ»:

Ա՛յս է Բոլշեւիզմը, և այսպէս մի՛շտ, այսպէս ամէ՛ն տեղ և ամէնքի՛ նկատմամբ։

Իր բոլոր ամբաստանութիւնները նաեւ ընկ. Դրօյի դէմ նոյն կշիռը, նոյն ազատութի՛ւնը և պարկեշտութի՛ւնը ունին։

Ահա թէ ինչո՛ւ որքան աւելի Բոլշեւիզմը իր բոլոր թմբկահարներով միասին կը շարախօսեն ընկ. Դրօյի հասցէին. այնքան աւելի ոչ միայն իր կուսակցութեան, այլ և համայն հայ ժողովուրդի մէջ կը ծաւալին յարգանք ու սէր Դրօյի անձին շուրջ։

Սակայն ընկ. Դրօն — ըսէ՛ և կրկնէ՛ — հակադաշնակցական վոհմակի յուրացած խժալուր վայնասունին մէջ զո՛հն է իր կուսակցութեան։

Այս անպարկեշտ և սանձարձակ արշաւին մէջ Դրօն սոսկ պատուակ է, բայց երբեք պատճառ։

Բուն պայքարը Դաշնակցութեան դէմ է՝ զայն արատաւորելու և զայն զգետնելու համար։

1944 Դեկտ. 28ի գիշերը Ռումանիոյ մայրաքաղաքին մէջ, Պուքրէշ, անակնկալաբար զանգուածային խուզարկութիւններ տեղի կ'ունենան և կը ձերբակալուին շուրջ 1200 ռումանաբնակ լէգէոնականներ։

Նոյն գիշերը, գործակցութեամբ ռումէն և խորհրդային զինուորական իշխանութեանց, կը ձերբակալուին նաեւ բազմաթիւ անմեղ հայեր, կա՛մ իբրեւ դաշնակցական և կամ իբրեւ Դաշնակցութեան համակիր անձեր։

Ահա քանի մը անուններ համոզելու համար, թէ որքան անմեղ էին այդ մարդիկը, Ռուբէն Իսրայէլեան (առեւտրական), Գէորգ Ղազարեան (դաշնակցական, շուրջ 75ամեայ ուսուցիչ), Գուրգէն Սարգսեան (ուսուցիչ), Խաչատուր Եղանեան (ուսուցիչ, դաշնակցական), Յարութիւն Աբրահամեան («Հայ Մամուլի նախկին խմբագիր), Վահան Կէմիճեան (փաստաբան), Գէորգ Քէստանեան (առեւտրական), Վարդան Առաքելեան (դաշնակցական, նախկին ուսուցիչ, առեւտրական), Սերոբէ Սուրեան (սուրճի առեւտրական) եւայլն։

Այս մարդիկ չմեկնեցան երկրէն, գիտակցորէն մնացին Ռումանիա, որովհետեւ ոչ մէկ յանցանք գործած էին ո՛չ Կարմիր Բանակի և ոչ ալ Խորհրդային իշխանութեանց դէմ։

Հակառակ այս բացայայտ իրողութեան, անոնք ամէնքն ալ մէկէն և անակնկալաբար ձերբակալուեցան և ետքէն ալ քշուեցան դէպի Ռուսիոյ խորերը...

Ռումանիոյ բովանդակ հայութիւնը յուզումի մէջ իր այս անխիղճ և տմարդի ձերբակալութեան առիթով։

1945 Յունուար 14ին լոյս կը տեսնէր Պուքրէշի համայնավար պաշտօնաթերթը՝ «Պահակ»՝ ամբողջութեամբ նուիրուած ձերբակալութեանց։

«Դաշնակցական կամ ճամակիր անձեր՝ զարմանք ու ցաւ կը յայտնեն ձերբակալութիւններու առիթով»,— կը յայտարարէր «Պահակ»։

«Հայաստանեան շրջանակները՝ փաստացի դատողութեանց ու հայ պետական ըմբռնումի վրայ կանգնած՝ կ'արտայայտէին իրենց հաւատքը սովետական իշխանութեանց միջոցառումներու ճշդութեան եւ արդարամտութեան վրայ» — կը յայտարարէր նոյն բոլշեւիկ պարբերաթերթը։

Այս «արդարամտութեան» թէ՛ ապացոյցը տալու և թէ ցնցուած ռումանահայութիւնը լուսաբանելո՛ւ և խաղաղեցնելո՛ւ համար, նոյն «Պահակ» իր նոյն թիւով կը գրէր։

«Ո՛րն է հայ պետութեան տեսակետը» (ձերբակալութեանց մասին.— «Յուս.»)։

«Ահա պաշտօնական կարծիքը մեր Ընդհանուր Հայրենիքի, Սովետական Միութեան բարձրաստիճան պաշտօնատար Մոլոթովի.

«ՈՐՈ՞Ի ՀԱՄԱՐ ԱՅԺՄ ՊԱՐԶ ՉԷ, ԹԷ ՈՎ ՈՐ ԴԵՌ ԻՆՔԶԻՆՔԸ ԴԱՇՆԱԿ Կ'ԱՆՈՒԱՆԷ, ՉԻ ԿՐՆԱՐ ՈԵՒԷ ԱՅԼ ԴԵՐ ԽԱՂԱԼ, ԲԱՑԻ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹՇՆԱՄԻՒ ԴԵՐԷՆ, ԱՅՆ ՍՈՎԵՏ. ՀԱՅԱՍՏԱՆԻ, ՈՐ ՈՏՔ Է ԴՐԵՐ ՊԱՆԾԱԼԻ ԱՋԳԱՅՆ ՎԵՐԱԾՆՈՒՆԴԻ ՈՒՂԻՒՆ ՎՐԱՅ»։

Ուրեմն խօսքը բացառաբար Դրօյի մասին չէր, այլ ԱՄԷ՛Ն դաշնակցականի, որու մէջ համայնավար կուսակցութեան Պոլիտբիւրոյի անդամը՝ «բարձրաստիճան պաշտօնատար» Մոլոթով՝ Հայաստանի ԹՇՆԱՄԻ կը տեսնէր...

«Ձեն հասկնար կամ չհասկնալ կը ձեւացնեն,— *կը գրէր «Պահակ» անո՛նց հասցէին, որոնք* «զարմանք ու ցաւ յայտնած են *ձերբակալութեանց առիթով,*— թէ ինչո՞ւ պախարակելի, ազգակործան ու հայրենադաւ գործեր կատարեցին դաշնակները, ՄԱՆԱՒԱՆԴ ՎԵՐՋԻՆ 24 ՏԱՐԻՆԵՐՈՒ ԸՆԹԱՑՔԻՆ *(ընդգծումը՝ մեզմէ.— «Յուս.»)*, արտասահմանի մէջ:

«Ի՞նչ ըրին դաշնակները:

Ըրին այն բոլորը, ինչ որ մարդկօրէն չէիք կրնար երեւակայել, որ կրնան ընել աշխարհի մեծագոյն չարագործները: ՄԱՏՆՈՒԹԻՒՆ, ԵՂԲԱՅՐԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ եւ... ՀԱՅՐԵՆԱԴԱՒՈՒԹԻՒՆ. ահա՛ թէ ի՞նչ ըրին»:

Ուրեմն խօսքը Դրօյի *ունեցած գործակցութեան մասին չէ՛ր* — պատերազմի *շրջանին* նացի *Գերմանիոյ հետ* — *այլ խօսքը* Դաշնակցութեան *ընդհանուր գործունէութեան մասին էր, թէ՛ մինչեւ 1920ը ու ՄԱՆԱՒԱՆԴ 1920էն այս կողմ,* «վերջին 24 տարիներու ընթացքին», *գործունէութիւն մը, որ լի է ՄԱՏՆՈՒԹԵԱՆ, ԵՂԲԱՅՐԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ և ՀԱՅՐԵՆԱԴԱՒՈՒԹԵԱՆ* մարդկօրէն անեւակայելի չարագործութիւններով...

«Կրկին անգամ յստակ դարձաւ մեզի,— *կը գրէինք մեր 1945 Օգոստ. 9ի խմբագրականին մէջ,*— որ մեր դէմ ձեռնարկուող նոր արշաւի մէջ Դրօյի խնդիրը որոշապէս ՊԱՏԸՐԻԱԿ է, բայց երբեք ՊԱՏՃԱՌ»:

Այո՛, ստոյգ է, օրուան չափ պարզ ու պայծառ, որ բուն պայքարը Դաշնակցութե՛ան *դէմ էր։*

Սակայն ինչո՞ւ Դրօյի՛ *անուան շուրջ և ինչո՞ւ* Դրօյի՛ *կապակցութեամբ։*

Պարզ էր և այս։

Դրօն վոժդ *չէր (Սթալինի նման) և ոչ ալ* Ֆիւրեր *(Հիթլէրի նման) — Դաշնակցութիւնը գլխագիր Ղեկավար կամ Առաջնորդ չունի (ինչպէս որ պիտի ըսէր Ռոստոմ), սակայն Դրօն իր կուսակցութեան անվիճելի առաջնորդներէն էր՝ պայծառ, շքեղ ու կախարդիչ անունով։ Իրա՛ւ դաշնակցական մը, որու անձին հանդէպ շարքերը լեցուած են անսահման ու խանդավառ հաւատքով։*

Դաշնակցութի՛ւնը սպաննելու համար, դաշնակցական շարքե՛րը խորտակելու համար՝ մրոտել, վարկաբեկել ու ոչընչացնել պէտք է — բարոյապէս ու ֆիզիքապէս — Դաշնակցու-

թեան այս պայծառ դէմքերն ու վարիչները և անոնց մէջ առաջին հերթին իր ժողովուրդի և իր կուսակցութեան անմահ զաւակը՝ Դրօն։

Բայց ի՞նչ էին մեր դատախազներուն մեղադրանքները։

Հանրային գործը նիւթ չէ, այլ ոգի առաւելաբար։ Եւ այդ իսկ պատճառով հանրային գործի մէջ կարեւորը այն չէ միայն, թէ ի՛նչ գաղափարներ կը քարոզուին, այլ և այն, թէ այդ գաղափարները ո՛վ կը քարոզէ և ի՛նչ նպատակներով։

Առանց ստոյգ գիտնալու այս վերջին պարագաները, անկարելի պիտի ըլլար թափանցել քարոզչութեան արժէքին, անոր բուն նպատակներուն։

Օրինակ, Բոլշեւիզմը մեզ կ'ամբաստանէ երկու ծայրագոյն մեղքերով,— հայրենակցութեամբ և հայրենադաւութեամբ։

Կը յայտարարէ, որ մենք, հայրենասէր չըլլալով, դիւրութեամբ ուրացած ենք մեր հայրենիքը, և, ուրանալով զայն, դիւրութեամբ դաւած ենք անոր դէմ և գործակցած անոր թշնամիներուն՝ նացիստներուն։

Արդեօք անկե՞ղծ է Բոլշեւիզմը իր այս ամբաստանութեանց մէջ։

Արդեօք կը հաւատա՞յ ան իր ըսածին, երբ այնքան կրքոտ բառերով ճիգ կ'ընէ իր խօսքին մէջ համոզել նաև ուրիշները։

Եթէ իroք Բոլշեւիզմը անքաւելի ոճիր կը նկատէ հայրենուրացութիւնը և հայրենադաւութիւնը, այդ պարագային կարելի չէ շհաւատալ իր խօսքին անկեղծութեանը։ Իր ամբաստանութեանը մէջ ան այդ պարագային կրնայ սխալիլ, սակայն չի կրնար կեղծել։ Սխալվելով իսկ, սխալ տեսնելով մեր գաղափարական դէմքն ու մեր կատարած գործը, իր բուն նպատակը կ'ըլլայի ջատագովե՛լ հայրենասիրութիւնը իբրեւ վսեմ, անմեռ և շքեղ գաղափար։

Իսկ եթէ Բոլշեւիզմին անհաղորդ են հայրենասիրութեան և հայրենադաւութեան գաղափարները, եթէ Բոլշեւիզմը՝ իբրեւ վարդապետութիւն՝ կրնայ ե՛ւ հայրենիք ունենալ, ե՛ւ անոր դէմ դաւել՝ այն պարագային պէտք չէ՛ հաւատալ իր խօսքին, պէտք չէ՛ հաւատալ անկեղծութեանը իր ամբաստանութեանց, այլ, ընդհակառակն, այդ պարագային զանոնք պէտք է առնել

ափի մէջ, ինչպէս նիցշէ կը խրատէր, շօշափել, պրպտել ու հոտոտել, գիտնալու համար, թէ ինչո՛ւ և ի՛նչ նպատակով կ՚ըսէ։

Համայնավար վարդապետութեան հիմնադիրը՝ Լենին՝ որ անխախտական հռչակուած է խորհրդային Աշխարհին մէջ, տակաւին 1915 Յուլիսին, առաջին մեծ պատերազմի ամենատաք օրերուն, Զուիցերիայէն կը գրէր.

«Ով դէմ է պետական դաւաճանութեան, ով դէմ է Ռուսիոյ քայքայումին... ան կեցած է քաղաքական եւ ոչ պրոլետարական տեսակէտի վրայ. *ԱՌԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ԴԱՒԱՃԱՆՈՒԹԻՆ ԳՈՐԾԱԾ ՉԼԼԱԼՈՒ՝* բանուորը չի կրնար ո՛չ դասակարգային հարուած հասցնել իր կառավարութեան եւ ոչ ալ իրական ձեռք կարկառել մեզի դէմ կռուող օտար երկրի մը իր բանուոր եղբօր» («Սոցիալ-Դեմոկրատ». 1915, No. 43)։

Ինչպէս յայտնի է, Լենին, քրէական օրենգրքի կողմէ պահանջուած «ամուր յիշողութեան և պայծառ գիտակցութեան մէջ», պետական այս ԴԱՒԱՃԱՆՈՒԹԻՆԸ գործեց, և, միջնորդութեամբը ծանօթ Փարվուսի և կոմս Պրոքֆորտ-Ռանթցաուի, կրցաւ թշնամի երկրի մը՝ Գերմանիոյ վրայէն 1917ին վերադառնալ հայրենիք՝ պատերազմի ամենատագնապոտ օրերուն սեփական կառավարութեան «դասակարգային» մահացու հարուած մը իջեցնելու համար։

Այն միակ տարբերութեամբ, որ Փարվուսի և կոմս Պրոքտորֆ-Ռանթցաուի այս միջնորդութեամբ Լենին իր ձեռքը երկարեց ոչ թէ թշնամի գերման երկրի իր «բանուոր եղբօր», այլ Քանցլեր Պեթման-Հոլվեկի և գերման բանակի սպայակոյտի պետ զօր. Լուտէնտորֆի...

Եւ գերման կառավարութիւնն ու Հրամանատարութիւնը սիրայօժար անցք տուին Լենինի դէպի Ռուսիա՝ վստահ գիտնալով, որ հոն կ՚երթայ սեփական կառավարութեան մահացու հարուած մը հասցնելու համար։

Միամիտներ պիտի կարծեն, որ Լենին այս դաւաճանութեան գնաց ցարականութի՛ւնը խորտակելու համար, մոռնալով, որ նոյն Լենին իր գործակիցները այս նոյն պարտուողական-դաւաճանական գործակցութիւնը գերման կառավա-

րութեան հետ շարունակեցին նաեւ Փետրուարեան Յեղափոխութեան օրերուն, երբ ցարական գահը խորտակուած էր արդէն և երբ երկրի իշխանութեան տէրը աշխատաւորութիւնը դարձած էր.

«Այնպիսի ազատութիւն, որպիսին մենք ունինք,— կը յայտարարէր Սթալին 1917ի Օգոստոսին, տակաւին Հոկտեմբերը չեկած, իր կուսակցութեան 6րդ Համագումարին մէջ,— չկայ եւ ո՛չ տեղ. պրոլետարիատը ոչ մէկ տեղ ունեցած է եւ ունի այսքան լայն կազմակերպութիւններ» («Ն. Ժուռնալ», գիրք XVII, Նիւ Եորք, 1947, էջ 151)։

Այս խոստովանութիւնը արգելք չեղաւ սակայն, որպէսզի «մահացու հարուած»ի քաղաքականութիւնը շարունակուի նաեւ ազա՛տ հայրենիքի նկատմամբ, միշտ գործակցութեամբ թշնամի ուժերու։

Նոյնը եղաւ նաեւ Պրեսթ-Լիթովսքի մէջ, ուր բոլշեւիկ վարիչները, առաջին առթիւ Հայ Դատը վաճառքի հանելով, անջատ հաշտութիւն կնքեցին Գերմանիոյ հետ, 1918 Մարտ 4/17ին, և այսպէս դաշնակից ընդհանուր ճակատը խորտակեցին։

Եւ այս գաղտնի սիրաբանութիւնները անոնք շարունակեցին իրենց իշխանութեան ամբողջ շրջանին մանաւանդ նացի Գերմանիոյ հետ, մինչեւ 1939 Օգոստ. 23, երբ Սթալին, իր, Ռիպենտրոպի, Մոլոթովի և կոմս Շուլէնպուրկի լուսանկարներով «Պրաւդա»ի և «Իզվեստիա»յի էջերը զարդերով, նացիբոլշեւիկ բարեկամութեան ուխտը կը ստորագրէր Հիթլէրեան Գերմանիոյ հետ։

Այս բոլորին մէջ Բոլշեւիզմի համար ոչի՛նչ կայ արտառոց և դատապարտելի, որովհետեւ Բոլշեւիզմին անհարազատ է հայրենիքի գաղափարը, որովհետեւ ան չ՚ընդունիր, չի ճանչնար զայն։

1922ին Ռուսիոյ ամէնէն մռայլ օրերուն, դաւադրութեամբ Քրեմլի աթոռին տիրացած Լենին՝ անխռով կը յայտարարէր.

«ՄԵՆՔ ԿԸ ՎԿԱՅԵՆՔ, ՈՐ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԸՆԿԵՐՎԱՐՈՒԹԵԱՆ ՇԱՀԵՐԸ ԲԱՐՁՐ ԵՆ ՄԵՐ ԱԶԳԱՅԻՆ ՇԱՀԵՐԷՆ, ԲԱՐՁՐ ԵՆ ՊԵՏՈՒԹԵԱՆ ՇԱՀԵՐԷՆ» («Ն. Ժուռնալ», գիրք XVII, էջ 153)։

Նոյնն է Բոլշեւիզմը նաեւ այսօր։

Իր իշխանութեան մէջ «ընկերվարութիւն» տեսնելով՝ Բոլշեւիզմը այդ իշխանութեան շահերը վեր կը դասէ Ազգի և Հայրենիքի, բոլո՛ր ազգերու և բոլո՛ր հայրենիքներու բոլո՛ր շահերէն։

Այսօր, երբ ան շարունակ «հայրենասիրութենէ» կը ճառէ, այդ «հայրենասիրութիւն»ը տարբեր բան չէ, քան «անզգամի վերջին ապաստանը», ինչպէս որ պիտի ըսէր հանճարեղ Լ. Թոլսթոյ։

Ո՛չ, լենինեան և սթալինեան գաղափարներն ու գործերը քարոզող ու կատարող մարդիկ ԱՆԿԵՂԾ ՉԵ՛Ն, երբ մեզ հայրենուրացութեամբ և հայրենադաւութեամբ կ՚ամբաստանեն։

Զիրենք շահագրգռողը երբե՛ք Հայրենիք չէ, երբե՛ք Ազգը չէ, որովհետեւ իրենք մերժելով կը մերժեն այդ գաղափարները և դաւաճանութիւնը անոնց դէմ «պրոլետարական» պարտականութիւն կը նկատեն։

Մովսեսի աթոռին բազմած դպիրներ և փարիսեցիներ են այս մարդիկ, որոնք «ասեն և ոչ առնեն», կը քարոզեն գաղափարներ՝ հիմնովին տարբեր գործեր կատարելու համար։

Ահաւորագոյնը Բոլշեւիզմի բերած բոլոր չարիքներուն մէջ այն է, որ Բոլշեւիզմը նպատակին տանող բոլո՛ր միջոցները սուրբ կը հռչակէ։

Ոչի՛նչ պախարակելի, ոչի՛նչ դատապարտելի Սուտի, կեղծիքի և խաբեբայութեանց այն բոլոր ջահերու մէջ, որ բոլշեւիկեան նպատակին տանող ճամբաները կը լուսաւորին...

«Իրերու արմա՛տը նայէ»,— կը խրատէր իմաստուն Կոզման։

Իսկ համայնավար ամբաստանութեանց «արմատ»ը պրպտելով՝ ուշիմ հայը պիտի տեսնէ, որ Մոսկուան դաժանաբար Դաշնակցութիւնը կը հալածէ ո՛չ անոր համար, որ հայրենուրաց է Դաշնակցութիւնը, այլ անոր համար՝ որ հայրենուրաց չէ՛։

Մոսկուան Դաշնակցութեան ոչնչացման վառ երազը կը հետապնդէ, մանաւանդ 1920էն այս կողմ, վերջին 28 տարիներու շրջանին, ո՛չ այն պատճառով՝ որ Դաշնակցութեան մէջ հայրենադաւը կը տեսնէ, այլ այն պատճառով՝ որ անոր մէջ հայրենադաւը չի՛ տեսներ։

Մոսկուան անողոքօրէն հալածած է, կը հալածէ ու պիտի շարունակէ հալածել Դաշնակցութիւնը այն միակ պատճառով՝ որ անոր մէջ տեսած է ու կը տեսնէ Հայ ժողովուրդին, Հայ Հայրենիքին անդաւաճանօրէն նուիրուած մոլեռանդ ու անկաշառ հայրենապաշտն ու ժողովրդասէրը։

Տեսած է այն ուժը, որուն համար Հայրենիքէն ու ժողովուրդէն վեր, անոնցմէ թանկ ու անոնցմէ նուիրական ոչի՛նչ կայ այս աշխարհին վրայ։

Բոլո՛ր դաւանանքները, ընկերավար ու ոչ-ընկերավար, բոլոր կարգերը, համայնավար ու ոչ-համայնավար, կու գան ու կ'երթան, մինչ Հայ Հայրենիքն ու Հայոց Ազգը կը մնան ու պիտի մնան ընդմիշտ և առյաւէտ, իբրեւ անմեռ ու մշտակեաց արժէքներ։

Ահա թէ ինչո՛ւ ազգուրաց և հայրենուրաց Բոլշեւիզմը ատելով կ'ատէ և հալածելով կը հալածէ Հ. Յ. Դաշնակցութիւնը։

Այս նոյն — ու միակ — պատճառով ան փրփրած կը յեղյեղէ շարունակ նաեւ ընկ. Դրօյի անունը։

Ի՞նչ փառքեր ան պիտի չթափէր Դաշնակցութեան այս անզուգական վագրին առջեւ, եթէ երբեք կարենար զայն ՀԱՅՐԵՆՈՒՐԱՑ ու ՀԱՅՐԵՆԱԴԱՒ դարձնել...

Այս ակամայ շեղումը ըրինք լոկ ըսելու համար, որ այն, ինչ որ պիտի գրենք Դրօյի և իր անուան կապուած գործի մասին, երբեք նպատակ չունի ո՛չ Դրօն և ո՛չ ալ այդ գործը բոլշեւիկներու առջեւ «արդարացնելու»։

Պատերազմի ամբողջ շրջանին մենք կտրուած էինք մեր ընկերոջմէն. այդ ամբողջ շրջանին լուր չունէինք — անշուշտ վաւերական աղբիւրէ — ո՛չ իրմէ և ոչ ալ իր մասին։

Այսօր, երբ անհուն երջանկութիւնը ունինք մեր ընկերը ողջ-առողջ վերստին մեր մէջ և մեզ հետ ունենալու, պարտքը կը զգանք, զինք լսած ըլլալով, գէթ սեղմ տողերու մէջ տալ մեր ընթերցողներուն պատկերը այն կացութեան, որ պատերազմի շրջանին ստեղծուեցաւ մեր ժողովուրդին համար, ըլլա՛յ Գերմանիոյ, ըլլա՛յ Գերմանիոյ իշխանութեանց ենթակայ երկիրներու մէջ։

* * *

1940 Յունիս 22ին Գերմանիա իր իշխանութեան տակ առած էր Ֆրանսան։

1941 Մայիս 28ին, Կրետէն գրաւելով, Գերմանիա իր տիրակալութիւնը հաստատած կ'ըլլար, Իտալիոյ հետ միասին, գրեթէ բովանդակ Եւրոպայի վրայ։

1941 Յունիս 22ին անակնկալաբար Խ. Միութեան վրայ յարձակելով, Գերմանիա արագօրէն յառաջացաւ պէպի Ռուսիոյ խորերը ու հասաւ գրեթէ Մոսկուայի դուռներուն։

Յաջորդ տարին նոյնքան արագութեամբ Գերմանիա իջաւ դէպի հարաւ. եղաւ պահ մը, երբ գերման բանակները Վլադիկաւկազի (այժմ Օրջոնիկիձէ) փէշերէն կը սպառնային Պաքուի և Թիֆլիսի։

«Այս հսկայածաւալ տարածութիւններու վրայ,— կ'ըսէր մեզի Ընկ. Դրօ,— գերման իշխանութեանց տակ կ'ապրէին աւելի քան 500,000 հայեր, որոնցմէ շուրջ 200,000ը՝ միայն Եւրոպայի մէջ»։

Արդ, այս հայ բազմութիւններու ճակատագրով զբաղուիլ պէ՞տք էր թէ ոչ։

Եւ եթէ պէտք էր, այս պարտականութեան մէջ Դաշնակցութիւնը մասնակցութեան իր բաժինը պէ՞տք էր ունենար, թէ՞, ընդհակառակն, Պիղատոսի նման ան իր ձեռքերը կրնար լուալ և քաշուիլ մէկդի։

Եւ եթէ Դաշնակցութիւնը իր ժողովուրդի այս ցրիւ ու տագնապահար մնացորդային ճակատագրով պէ՞տք էր զբաղուէր, ապա ընկ. Դրօ, որ վարիչ և պատասխանատու դէմքերէն է Հ. Յ. Դաշնակցութեան, մասնակցութեան իր բաժինը պէ՞տք էր բերէր թէ ոչ։

Երկրորդ աշխարհաւեր պատերազմը այս հարցերու առջեւ դրած էր մեր Կազմակերպութիւնն ու մեր ընկերները այն միւս հատուածին մէջ — ենթակայ գերման իշխանութեանց — որ պատերազմի գրեթէ բովանդակ շրջանին մեզմէ կտրուած մնաց։

Դժուարութեանց խորապէս թափանցելու համար նկատել պէտք է, որ մեր Մարմիններն ու ընկերները ՏԵՂԵԱ՛Կ էին Իրենց Կուսակցութեան բռնած դիրքին պատերազմի մէջ։

Անոնք ԳԻՏԷԻ՛Ն, որ Դաշնակցութիւնը իր որդեգրած քաղաքականութեամբ Մեծ Ժողովրդավարութեանց հետ է։

Գիտէին այս մասին ոչ միայն Եւրոպայի մեր ՄԱՐՄԻՆՆԵՐԸ, այլ և գիտէին ԳԵՐՄԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ։

Այս ծանր պայմաններու տակ է ահա, որ մեր ընկերները, իրենց կարողութեան և հմտութեան առաւելագոյնը փորձելով, պիտի ջանային, ինչպէս առածը կ'ըսէ, և՛ գերման «գայլը կուշտ պահել», և՛ հայ «գառը ողջ փրկել»։

Առանց պատերազմին մասնակցած ըլլալու — կուսակցաբար և կազմակերպչօրէն — անոնք պիտի աշխատէին, պարզ գործակցութեամբ գերման զինուորական իշխանութեանց հետ, հնարաւորութեան սահմաններու մէջ մեր ժողովուրդին սպառնացող վտանգները մեղմել։

Ի՞նչ խնդիրներ կային պատերազմի առաջին շրջանին, մինչեւ 1941 Յունիս 22, երբ Գերմանիա տակաւին յարձակած չէր Խ. Միութեան վրայ.

1. — Գրաւեալ վայրերու մէջ հակահայ հալածանքներու դէմ անմիջօրէն միջոցներ ձեռք առնել:

2. — Ֆրանսահայ գերիները ազատել:

3. — Անհրաժեշտ աշխատանքները տանիլ՝ միշտ վառ պահելու համար Հայ Դատը:

4. — Հայաստանի դրկից ժողովուրդներու ներկայացուցիչներու հետ շփումներ ունենալ՝ պատերազմի վախճանին իրաւախոհութեամբ հարթելու համար անոնց հետ ունեցած մեր սահմանային վէճերը:

Գերմանեւուս պատերազմի բռնկումով՝ մեր ժողովուրդի վիճակը շատ աւելի ծանրացաւ։

Կէտ մը հոս կ'ուզենք առանձնակի յիշատակել՝ նախ քան այս շրջանին անցնիլը։

Նացի Գերմանիան որդեգրած էր ցեղային վարդապետութեան սկզբունքը. գերման ազգը ճիւսիսային և արիական հռչակելով՝ ան վայրագ և արիւնալի պայքար մը բացած էր ոչ-արիական ժողովուրդներու, մասնաւորաբար սեմական ծագում ունեցող հրէութեան դէմ։

Պայքար բացած էր նաեւ մեր դէմ։

Նացի Գերմանիոյ ցեղային տեսաբանները հրէութեան,

չիներու և մոնղոլներու կարգը դասած էին, մասնաւորաբար ռուսահպատակ ազգերու մէջ, նաեւ Հայութիւնը:

Ատոլֆ Ռոզընպերկ՝ ցեղային վարդապետութեան մեծահմուտ տեսաբանը՝ իր ծանօթ գործի մէջ — որ ճշմարիտ Աւետարանի հանգամանքը առած էր գերման աշխարհին մէջ — կը գրէր.

«Տոսթոեւսկիի fով գրեթէ կարելի է ձեռքով շօշափել իր արքազան կամքը, որ կը գտնուէր մշտական պայքարի մէջ կործանման զօրութեանց հետ: Մինչ ան տակաւին կը դրուատէ ռուս մարդը՝ իբրեւ ուղեցոյց եւրոպական ապագային, Ռուսիան, սակայն, յանձնուած կը տեսնէ արդէն դեւերուն։ Ան արդէն գիտէ, ո՛վ յաղթող պիտի հանդիսանայ ուժերու խաղին մէջ,— «պաշտօնաթափ փաստաբաններ եւ ժպիրն հրեաներ»։ Քերենսկիյ եւ Տրոցկիյ մարգարէացուած են: 1917ին «ռուս մարդ»ը, վերջապէս, փրկուեցաւ *(ակնարկը՝ Հոկտեմբերեան յաղթական դաւադրութեան.— «Յ.»)*։ Ան բաժնուեցաւ երկու մասի: Հիւսիսային ռուսական արիւնը լքեց պայքարը, մինչ արեւելեան-մոնղոլականը ուժգնօրէն թռիչք առաւ՝ շինացիներ եւ անապատային ժողովուրդներ *(վերախմբումի)* կոչելով հրեաներ եւ ՀԱՅԵՐ *(ընդգծումը՝ մեզմէ.— «Յ.»)* ապրեցան ղեկավարութեան մէջ, եւ դալմուխ-թաթար Լենինը տէր դարձաւ իշխանութեան» A. ROSENBERG — «DER Mythus des 20 Jahrhunderts», 1939, *Մինիխ, էջ 213—214)*։

Նացի տեսաբանի խոտացած տողերուն մէջ տեղ գտած է այն խոր ատելութիւնը, որ նախապէս կար դէպի մեր ժողովուրդը Հիթլէրեան Գերմանիոյ մէջ։

Այս ատելութեան մէկ այլ արձագանգը կը լսուէր Կէորինկի այն գաղտնի հրամանագրին մէջ — ուղղուած գերման բանակին — որ բռնուեցաւ ռուսական ճակատին վրայ։

Կովկասում,— *ըսուած էր այդ հրամանագրի մէջ,*— մեր շահերի համար օգտագործել հակասութիւնները, որ կան բնիկների՝ վրացիների, հայերի, թուրքերի եւ ռուսների միջեւ։ ՀԱՇՈՒԻ ԱՌՆԵԼ ՀԱՅԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՊԷՍ ԱՆԲԱՐԵԱՑԱԿԱՄՈՒԹԻՆԸ ՄԵՐ ՆԿԱՏՄԱՄԲ, *(«Սովետ. Հայաստան», 1942 Ապր. 29)*։

Այն փաստը, որ Մոլոթով բոլոր պետութեանց ուղղած իր 1942ի ապրիլեան յուշագրի մէջ — գերման բռնութեանց առի-

թով — այս հրահանգը կը յիշատակէր, ինքնին ապացոյց էր փաստաթուղթի վաւերականութեան։

Ստելութեան և թշնամանքի այս մթնոլորտին մէջ է ահա, թէ ցեղասպաններու և թէ իշխանութեանց, որ կ'ապրէր մեր ժողովուրդը, ըլլա՛յ Գերմանիոյ, ըլլա՛յ անոր ենթակայ երկիրներու մէջ։

Գերման և ռուս պատերազմի հետեւանքով մեր ժողովուրդի վիճակը, ինչպէս ընկ. Դրօ կը վկայէ, շատ աւելի ծանրացաւ։

Նոր թափով մը կրկին վերսկսան ծանօթ մեղադրանքներն ու զրպարտութիւնները հայ ժողովուրդի դէմ։

1. — Հայերը սեմական ծագում ունին։

2. — Հայերը անգլիասէր են եւ ի նպաստ Դաշնակիցներու ամէն տեղ քարոզչութիւն կ'ընեն։

3. — Հայերը անգլիացիներու միջոցով՝ կամաւորական գունդեր կը կազմեն Առանցքի պետութեանց դէմ։

Այս մեղադրանքներն ու զրպարտութիւնները զուր շանցան. ասոնց հետեւանքով ստեղծուեցաւ հետեւեալ կացութիւնը, վկայութեամբ միշտ ընկ. Դրօյին.

ա.— Մինչ կովկասեան այլ ազգերու գերիներու հանդէպ թայլատու վերաբերում ունէին նացիները, հայ գերիներու հանդէպ անոնք դարձած էին դաժան եւ անգութ։ Մեր գերիները ամենավատթար պայմաններու մէջ կը լծէին բռնի աշխատութեանց։

բ. — Տրագրած էին Ֆրանսայէ եւ Պալքաններէ հայերը փոխադրել Գերմանիա եւ հոն լծել բռնի աշխատանքներու։

Այս նոյն շրջանին տենգաքինօրէն կ'աշխատէին նաեւ Թուրքերը. անոնք կը պատրաստուէին առանցքին միանալ։ Նուրի փաշա և Շամիլ, կովկասեան այլ ազգերու պատուիրակութեանց հետ՝ վրացի, ազերի և լեռնականներ, փոխադարձ համաձայնութեամբ եկած էին Պերլին, հոս, Գերմաններու պահանջով, անոնք կազմած էին Ազգային խորհուրդներ, որոնք ձեւով մը իրենց երկիրներու ապագայ դահլիճները կը ներկայացնէին։ Այս խորհուրդները ոչ միայն ցեղակից գերիներու հոգատարութիւնն էին ստանձնած, այլ և ձեռնարկած էին ազգային բանակներու կազմութեան։

Հայութիւնը ենթակայ էր մեկուսակցման վտանգի:

Այս վտանգը փարատելու համար՝ կ'որոշուի շրնդդիմանալ գերման պահանջին եւ թոյլ տալ նաեւ Հայկական Ազգային խորհուրդ կազմելու, որու անդամները կը նշանակուէին իրենց իսկ՝ գերմաններու կողմէ:

Դաշնակցութիւնը ոեւէ մաս չունի այս գործին մէջ. Ազգային խորհուրդները բառին բուն առումով ոչ թէ ազգային եւ կուսակցական, այլ գերման կառավարութա՛ն մարմիններ էին:

Գերման պահանջներուն մէջ կար ուելի էականը,— *կը յայտարարէր ընկ. Դրօ,*— այն է՝ կազմել ազգային կամաւորական գունդեր. մենք կրցանք դէմ կենալ այդ պահանջին, բայց հանդուրժեցինք — ակամայ եւ հարկադրաբար — որ գերմանները իրենք գերուած կարմիր բանակայիններէ կամաւորական գունդեր կազմեն: Հանդուրժեցինք, բայց չքաջալերեցինք: Ուելին: Անպաշտօն ձեւերով խորհուրդ տուինք գերիներուն՝ խուսափիլ կամաւորագրուելէ: Մեր այս ջանքերու շնորհիւ կարելի դարձաւ կամաւորագրումէ զերծ պահել հայ գերիները եւրոպական բոլոր երկիրներու մէջ, բացառութեամբ Գերմանիոյ: Այսպէս կազմուեցաւ բանակ մը, բաղկացած բացառաբար գերմանարնակ ութը ինը հազար հոգիներէ, որոնցմէ իւրաքանչիւրը իր թեւին եռագոյն դրօշի նշան մը կը կրէր: Այս բանակին հրամանատարական կազմը զուտ գերմանական էր: ԲԱՆԱԿԻՆ ՄԷՋ,— չափազանց կարեւոր է նաեւ այս պարագան,— ԴՈՒՐՍԻ, ԳԱՂՈՒԹՆԵՐՈՒ ՀԱՅՈՒԹԵՆԷՆ ՉԿԱՐ Ո՛Չ ԻՍԿ ՄԷԿ ՍՊԱՅ ԿԱՄ ՉԻՆՈՒՈՐ: Կարելի եղած էր նաեւ այս դժուարին գործը գլուխ հանել:

«Ինչպէս ըսինք, բանակին հրամանատարութիւնը ամբողջովին գերմաններու ձեռքը կը գտնուէր: Անոնք չէին հանդուրժեր ոչ մէկ միջամտութիւն ո՛չ մէկու կողմէ, անգամ Ազգ. խորհուրդներու, պարագայ մը, որ մղեց այս վերջինները իրենց հրաժարականները ներկայացնելու. հրաժարողներու մէջ առաջինը Հայ Ազգային խորհուրդն էր»:

Այս բանակին համար է անա, որ զօր. Հիլմիխի կողմէ ընկ. Դրօյի կ'առաջարկուի ընդհ. ֆենիշի (inspecteur) պաշտօնը, սակայն ընկ. Դրօ կը յաջողի իրեն եղած այս առաջարկը մերժել, առաւելաբար այն առարկութեամբ, որ բանա-

կին մաս կազմող գունդերը ազգային միաւորներ չեն, այլ գերմանական:

Ռուսիոյ գրաւեալ վայրերուն մէջ, մանաւանդ Ուքրաինոյ, ուր խտիր չէին դներ հայի և հրեայի միջև, խոր ատելութիւն կար մեր ժողովուրդի հանդէպ։ Գերմանները բռնի կը ժողվէին գրաւեալ վայրերու երիտասարդութիւնը, կին թէ տղամարդ, և կը քշէին զանազան տեղեր ծանր աշխատութեանց։ Հայութիւնը այս վերահաս վտանգէն փրկելու համար կը յաջողուի, շափազանց դժուարին ճիգերով, գերման իշխանութեանց ընդունիլ տալ, որպէսզի հայերէ 180 հոգիանոց fատr մը կազմուի՝ օժանդակելու համար գրաւեալ վայրերու վարչական կազմակերպութեան։

Այս 180 հոգին կը տեղաւորուին գրաւեալ հողերու հայաբնակ կեդրոններու մէջ և կը ձեռնարկեն հետեւեալ աշխատանքներուն.

1. — Կը վերաբանան դպրոցները:
2. — Կը բանան եկեղեցիները:
3. — Կը կազմակերպեն գաղութները:
4. — Կը հիմնեն արհեստանոցներ:
5. — Եւ, վերջապէս, արգելք կ'ըլլան հայերու բռնի տեղահանութեանց, բռնի կեդրոնացումներու եւ հայահալած քաղաքականութեան:

Գերման զինուորական իշխանութիւնները,— *կը յայտարարէ ընկ. Դրօ,*— կ'օժանդակէին մեզի: Եւ որպէսզի մենք կարողանայինք անարգել մուտք ունենալ ամէն տեղ ու ճանչցուիլ իշխանութեանց կողմէ, մենք որոշ համազգեստ կը կրէինք, որ ցոյց կու տար մեր պաշտօնն ու առաքելութիւնը:

«Մենք ոչ միայն համայնքները կը կազմակերպէինք եւ կը պաշտպանէինք, այլ եւ արգելք կ'ըլլայինք վրէժխնդրական որեւէ ախթի գործադրումին համայնավարութեամբ ամբաստանուած որեւէ մեկու նկատմամբ:

«Հակառակ այն անուրանալի իրողութեան, որ ժողովուրդի մէջ խոր եւ ընդհանուր ատելութիւն կար համայնավարներու եւ կոմերիտներու հանդէպ՝ մենք պաշտպանած ենք զանոնք բոլորը եւ անոնցմէ ե՛ւ ոչ մէկը յանձնած ենք գերմաններու ձեռքը: Ամէն կերպ չանցած ենք, որպէսզի հայութիւնը իր միասնականութիւնը պահէ»։

Այս բոլոր աշխատանքները տանելով հանդերձ, պատերազմի ամբողջ ընթացքին, ո՛չ ընկ. Դրօ և ոչ ալ իր գործակիցները.

1. — Ո՛Չ ՄԷԿ ՏԵՂ Ո՛Չ ՄԷԿ ՃԱՌ ԽՕՍԱԾ ԵՒ ԿԱՄ ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ ԸՐԱԾ ԵՆ։

2. — Ո՛Չ ՄԷԿ ԳՐԱՒՈՐ ԿՈՉ ՈՒՂՂԱԾ ԵՆ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ։

3. — ԱՄԷՆ ՏԵՂ ԴԱԴՐԵՑՈՒԱԾ ԵՆ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ԹԵՐԹԵՐՈՒ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ ԵՒ, ՀԱԿԱՌԱԿ ԳԵՐՄԱՆՆԵՐՈՒ ԵՒ ԱՅԼ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆՑ ԱՌԱՋԱՐԿՆԵՐՈՒՆ ԵՒ ՊՆԴՈՒՄՆԵՐՈՒՆ, ԱՐԳԵԼՔ ԵՂԱԾ ԵՆ ԱՅԴ ԹԵՐԹԵՐՈՒ ՎԵՐԵՐԵՒՈՒՄԻՆ։

Օրինակ, Յ. Ճ. Սիրունի, իր թերթը փակելով, ամբողջութեամբ նուիրեցաւ Ռումանիա բերուած աւելի քան 1100 հայ գերիներու խնամքի եւ հոգատարութեան գործին. առաւելաբար իր եւ իր ընկերներու ջանքերովն է, որ ռումանահայութիւնը այս գործին բերաւ նիւթական իր լայն աջակցութիւնը։

Անցողակի յիշատակենք հոս, որ «Հայաստան» անունով պարբերականի մը այն երկու թիւերը, որ լոյս ընծայեց Պերլինի Ազգ. Խորհուրդը, կապ չունին Դաշնակցութեան հետ. այդ զոյգ թիւերը սեփականութիւնն են Ազգ. Խորհուրդի, որ կարգուած էր, ինչպէս ըսինք, գերման իշխանութեանց կողմէ։

4. — ՏԱՂՍՏԱՆԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆԻՆ ԼՈՒՐ ՂՐԿՈՒԱԾ Է ՀԱՅԵՐՈՒՆ, ՈՐՊԷՍԶԻ ԱՆՈՆՔ ՀԵՌՈՒ ՄՆԱՆ ԱՅՍ ՇԱՐԺՈՒՄԷՆ։

5. — ԱՐԳԵԼՔ ԵՂԱԾ ԵՆ ԱՆԿԱՐԳԵԼՆԵՐՈՎ ՀԱՅԵՐՈՒ ԱՌԱՔՈՒՄԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ, ՄԻԱԿ ԵՐԿԻՐԸ ԱՄԲՈՂՋ ԿՈՎԿԱՍԻ ՄԷՋ, ՈՒՐ ԱՆԿԱՐԳԵԼՈՐԴ ԻՋԱԾ ՉԷ։

6. — ՀԻՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ԳՐԱՒՄԱՆ ՇՐՋԱՆԻՆ, ԵՐԲ ԳԵՐՄԱՆՆԵՐԸ ԱՌԱՋԱՐԿԱԾ ԵՆ ԸՆԿ ԴՐՕՅԻ՝ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԵԱՆ ԿՈՉ ՈՒՂՂԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ, ԸՆԿ. ԴՐՕ ՄԵՐԺԱԾ Է ԱՅՍ ԱՌԱՋԱՐԿԸ։

7. — ՅԱՏՈՒԿ ՄԱՐԴ ՂՐԿՈՒԱԾ Է ՀԱՅԱՍՏԱՆ, ՀՐԱՀԱՆԳԵԼՈՎ ՀԵՌՈՒ ՄՆԱԼ ԱՊՍՏԱՄԲԱԿԱՆ ՈԵՒԷ ՋԵՌՆԱՐԿԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆՑ ԴԷՄ։

8. — Ո՛Չ ԸՆԿ. ԴՐՕ ԵՎ ՈՉ ԱԼ ԻՐ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐԸ ՈՉ ՄԻԱՅՆ ՈԵՒԷ ԿՌՈՒԻ ՄԱՍՆԱԿՑԱԾ ՉԵՆ, ԱՅԼ ԵՒ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՈԵՒԷ ԽՈՍՏՈՒՄ ՏՈՒԱԾ ՉԵՆ, ԵՒ ՈՉ ԻՍԿ ՄԷԿ ԳՆԴԱԿ ԱՐՉԱԿԱԾ ԵՆ։

9. — Ամբողջ պատերազմի ընթացքին ընկ. Դրօ միայն մէկ ու կէս ամիս եղած է գրաւեալ վայրերու մէջ:

10. — Ընկ. Դրօ Ազգ. խորհուրդի անդամ եղած չէ, սակայն նշանակուածներու խորհուրդ տուած է համակերպիլ եւ հանդուրժել այս գիշումին՝ յանուն մեր ժողովուրդի Ֆիզիքական գոյութեան:

11. — Ռումանիոյ մէջ որոշած էին Նանսէնեան անձնաթուղթ ունեցողները մեկուսացնել եւ կեդրոնացնել ճամբարներու մէջ: Շնորհիւ ընկ. Դրօյի միջամտութեան, զօր. Անտենեսկու չնչեց այս որոշումը եւ ռումանահայութիւնը շարունակեց իր ապահով կեանքը:

12. — Հիմնովին սուտ է այն տարածայնութիւնը, թէ ընկ. Դրօ ռուս եպիսկոպոսի մը ձեռամբ Պեատիկորսկի մէջ հայ տիրացու մը քահանայ ձեռնադրուած է. ընկ. Դրօ ոչ մէկ գործ ունեցած է հոգեւորականներու հետ:

13. — ԵՐԲ ԳԵՐՄԱՆ ԲԱՆԱԿԻ ՆԱՀԱՆՋԸ ՍԿՍԱԾ Է, ԸՆԿ. ԴՐՕ ԽՈՐՀՈՒՐԴ ՏՈՒԱԾ ԵՒ ՅՈՐԴՈՐԱԾ Է, ՈՐՊԷՍԶԻ ՀԱՅՈՒԹԻՆԸ ՉԼՔԷ ԻՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԸ ԵՒ ՉՆԱՀԱՆՋԷ ԳԵՐՄԱՆ ԲԱՆԱԿԻՆ ՀԵՏ:

14. — Երբ զօր. Վլասով բանակ կազմակերպած է կռուելու համար ռուսերու դէմ՝ առաջարկած է կովկասեան ազգերուն, ինչպէս եւ հայերուն, զինապէս մասնակցիլ պատերազմին, սակայն ընկ. Դրօ մերժած է այս առաջարկը այն յայտարարութեամբ, որ իր միակ մտահոգութիւնը՝ հայ ժողովուրդի Ֆիզիքական գոյութիւնը եղած է:

15. — Ընկ. Դրօ միշտ կապ պահած է կովկասեան ազգերու ներկայացուցիչներու հետ՝ ապրիլ վէճերէ խուսափելու եւ հայութեան շուրջ ստեղծուած փրովոքասիոններու մթնոլորտը փարատելու համար:

16. — Ազգ. խորհուրդներու կազմալուծումէն յետոյ, գերմանները կը ստեղծեն յարաբերութիւններ մշակող Կապի Մարմին մը, որուն մասնակցած չէ ոչ մէկ դաշնակցական:

Ինչպէս յայտնի է, յաճախապէս, մանաւանդ խորհրդային զրոյցները, շիլ նպատակներով կը պղտորեն մթնոլորտը Շթութկարտ համախմբուած հայութեան շուրջ:

Այս հայութիւնը բաղկացած է, ընկ. Դրօ ըսաւ մեզի.

1. — Ռուսիոյ եւ Եւրոպայի զանազան վայրերէն բռնի աշխատանքներու համար Գերմանիա բերուած հայերէ:

2. — Ամսուավայրերէ փրկուածներէ:

3. — Զանազան վայրերէ հոն ապաստանած հայերէ:

Հայ ժողովուրդին կը մնայ Շթութկարտէն հանել իր այս տարագիր զաւակները և ապահով վայրերու մէջ պարկեշտ աշխատանքի պայմաններ ստեղծել անոնց համար։

Սեղմ տողերու մէջ տուինք պատկերը այն կեանքի, որ հայութեան մէկ հսկայ հատուածը, երկրորդ համաշխարհային պատերազմի ամբողջ տեւողութեան, ապրած է գերման իշխանութեանց տակ, այդ իշխանութեանց հետ միասին ապրելով նաև գերման հսկայածաւալ կայսրութեան ճարճատումը, անոր անօրինակ տագնապներն ու գալարումները եւ այդ կայսրութեան աննախընթաց և ահեղագոյն կործանումը։

Տուինք — անշուշտ ընդհանուր գիծերով — պատկերը նաև այն գործերուն, որ ծանրագոյն պայմաններու տակ, այդ շրջանին, կատարուած են գերման ահեղազօր ու ծաւալուն կայսրութեան մէջ, անոր թէ՛ վերելքը և թէ անկման օրերուն։

Իբրև արդիւնք այս իշխանութեանց վկայագրենք հոս, այսօր երբ սարսափով լի վեցամեայ անօրինակ սպանդը վերջացած և անցած է պատմութեան, հետեւեալ անվիճելի իրողութիւնները,—

ա.— ԳՐԵԹԷ ԲԱՑԱՌԱԲԱՐ ՄԵՐ ՑԻՇԱՏԱԿԱՍ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՆՑ ՇՆՈՐՀԻՒ՝ ԿԱՐԵԼԻ ԴԱՐՁԱԻ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԳԵՀԵՆՆԵՐԷՆ ԱՆԿՈՐՈՒՍՏ ՓՐԿԵԼ ՄԵՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ։

բ.— ԱՅՍ ՄԵԾ ԵՒ ԱՆՈՒՐԱՆԱԼԻ ՎԱՍՏԱԿԸ ԿԱՐԵԼԻ ԵՂԱՒ ԶԵՌՔ ԲԵՐԵԼ ՈՉ ԹԷ ՆԱՑԻ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆՑ ՊԱՀԱՆՋՆԵՐՈՒՆ ԸՆԴԱՌԱՋԵԼՈՎ, ԱՅԼ ԽՈՀԵՄԱԲԱՐ, ՅԱՃԱԽ ՄԵԾ ՎՏԱՆԳՆԵՐՈՒ ԳՆՈՎ ԻՍԿ, ԱՅԴ ՊԱՀԱՆՋՆԵՐՈՒՆ ԸՆԴԴԻՄԱՆԱԼՈՎ։

գ.— ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՄԲՈՂՋ ՇՐՋԱՆԻՆ, ԱՇԽԱՏԱԿՑՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԻՄ ԾԱՌԱՅԱԾ Է, ՆԱՑԻ ՋԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆՑ ՀԵՏ, ՈՉ ԹԷ ՋԻՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԿՌԻՒԸ ԴԱՇՆԱԿԻՑ ԱՅՍ ԿԱՄ ԱՅՆ ՊԵՏՈՒԹԵԱՆ ԴԷՄ, ԱՅԼ ՄԻԱՅՆ ԵՒ ԲԱՑԱՌԱԲԱՐ ՄԵՐ ԱՆՊԱՇՏՊԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ՖԻԶԻՔԱԿԱՆ ՓՐԿՈՒԹԵԱՆ ՄԵԾ ՈՒ ԾԱՆՐԱԳՈՅՆ ՀՈԳԸ։

դ.— ԱՌ ԱՅԴ, ԱՄԷՆԷՆ ԱՌԱՋ, ԳԻՏԱԿԱՆ ՄԵԾ ՃԻԳ ՍՊԱՌԵԼՈՎ ԵՒ ԱՀԱԳԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ ԿԱՏԱՐԵԼՈՎ, ԿԱՐԵԼԻ

ԵՂԱԾ է ԱՊԱՑՈՒՑԱՆԵԼ, ՈՐ ՀԱՅՈՒԹԻՒՆԸ ԱՐԻԱԿԱՆ ԾՆԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԺՈՂՈՎՈՒՐԴ ՄԸՆ է։

Ե.— ՀՆԱՐԱՒՈՐ ԲՈԼՈՐ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԳՈՐԾԱԴՐԵԼՈՎ՝ ԿԱՐԵԼԻ ԴԱՐՁԱԾ է ՀԱՅՈՒԹԻՒՆԸ ՀԵՌՈՒ ՊԱՀԵԼ ՏԱՂՍՏԱՆԻ ՇՐՋԱՆԻՆ ՄԷՋ ԾԱՒԱԼԱԾ ԽՌՈՎՈՒԹԻՒՆՆԵՐԷՆ, ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀԵՌՈՒ ՊԱՀԵԼ ԱՊՍՏԱՄԲԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԷ, ԱՐԳԵԼՔ ԸԼԼԱԼ ԱՆԿԱՐԳԵԼԱՒՈՐԴՆԵՐՈՒ ԱՌԱՔՈՒՄԻՆ ԴԷՊԻ ՀԱՅԱՍ-ՏԱՆ ԵՒ ՏԵՂԱՀԱՆՈՒԹԵԱՆՑ ԾՐԱԳԻՐՆԵՐԸ ԽԱՓԱՆԵԼՈՎ՝ ՀԱ-ՅՈՒԹԻՒՆԸ ԿԱՊՈՒԱԾ ՊԱՀԵԼ ԻՐ ԲՆԱԿԱԾ ՎԱՅՐԵՐՈՒՆ։

գ.— ԵՒ, ՎԵՐՋԱՊԷՍ, ԽՆԱՄՔ, ՀՈԳԱՏԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ ՎԱՅԵԼԱԾ ԵՆ ԳՐԱՒԵԱԼ ԳՕՏԻՆԵՐՈՒ ՄԷՋ ՄՆԱՑԱԾ ԵՆ ՆԱԵՒ ԱՅՆ ԲՈԼՈՐ ՀԱՅԵՐԸ, ՈՐՈՆՔ ԻՐԵՆՑ ԴԱ-ՒԱՆԱՆՔՈՎ ՀԱՄԱՅՆԱՎԱՐՆԵՐ ԷԻՆ։

Ընդհանուր առումով այս է գործը այն մարդոց — իսկ ասոնց մէջ առաջին հերթին ընկ. Դրօյի — որ երկրորդ մեծ պատերազմին Եւրոպայի մէջ գտնուելով՝ ոչ թէ «խոհեմաբար» մէկդի քաշուեցան, այլ կրկի՛ն ու վերստի՛ն նետուեցան կրակներու մէջ՝ իրենց ժողովուրդին ծառայելու համար։

Այս ծառայութիւնը, թող ներուի մեզ գէթ անցողակի նաեւ այս պարագան շեշտել, արժեց, մասնաւորաբար ընկ. Դրօյի, իր անհատական փայլուն գործի և իր ապահով տնտեսութեան ամբողջական քայքայումը։

Սակայն այս ծառայութիւնը բերաւ վարձատրանք մը, որ կարելի չէ փոխարինել որեւէ գանձով ու փառքով, բերաւ գրեթէ անկորուստ փրկութիւն միւս հատուածի ամբողջ հայութեան։

Աւելի մեծ վարձատրանք — մարդկօրէն անհնար է ակընկալել։

* * *

Երկու խօսք եւս և մենք կը փակենք մեր ըսելիքը։

Երկու անգամ մենք առիթ ունեցած ենք անդրադառնալու ընկ. Դրօյի անուան կապուած խնդիրներուն. առաջին անգամ ասկէ հինգ տարի առաջ, երբ մեր ընկերը անզուգական Համոն՝ իր ընդարձակ, եօթը սիւնակնոց «Բաց նամակ»ը կը գետեղէր «Յուսաբեր»ի 1943 Ապրիլի 24ի թիւին մէջ, ուղ-

ղուած բանաստեղծ Ա. Իսահակեանի, իբրեւ պատասխան «Արկածախնդիրներ» խորագրով անոր յօդուածին, իսկ երկրորդ անգամ ասկէ շուրջ երեք տարի առաջ, «Յուսաբեր»ի 1945 Օգոստ. 9ի և 10ի թիւերուն մէջ, երբ մենք, «Մեր Պատասխանը» խորագրով զոյգ խմբագրականներու մէջ, կը փորձէինք գէթ համեստ պատնէշ մը ցցել այն փրովոքասիոններու առջեւ, որ այնքան մեծ առատութեամբ Երեւանէն բերած էին իրենց հետ Ազգ. Եկեղ. Համաժողովի պատուիրակները։

Թող ներուի մեզ գէթ քանի մը տող յիշատակել հոս այդ գրութիւններէն, ցոյց տալու համար, թէ մենք, կտրուած ըլլալով հանդերձ մեր ընկերներէն, հոգիով որքան ճիշդ կը տեսէինք թէ՛ անոնց գաղափարական պատկերը և թէ գաղափարական խորքը անոնց կատարած գործերու։

Հինգ տարի առաջ, այն անստոյգ և խաւարամած օրերուն, յաւէտ անմոռանալի Համոն, իր խօսքն ուղղելով Երեւանի պատգամախօսին՝ բանաստեղծ Ա. Իսահակեանի՝ կը գրէր։

«Տարաբախտաբար, քո գրութեան մէջ կայ միայն ամբաստանութիւն, փաստեր չկան սակայն, չկայ ոչ իսկ մէկ փաստ՝ իբրեւ բացատրութիւն։

«Կարելի չէ ենթադրել, թէ դու փաստեր ունէիր, բայց չհրապարակեցիր՝ խղճալով Դաշնակցութեան։

«Ո՛չ, այդպէս չէ. եթէ խիղճը խօսած լինէր մէջդ, կամ ոչինչ չէիր հրապարակի (քանի որ փաստեր չունէիր) և կամ կը հրապարակէիր՝ փաստերն ու դէպքերը յիշատակելով։

«Չես արել այս վերջինը, որովհետեւ այդ փաստերը բացակայել են քեզ։ Ամբաստանութիւնդ մէկ կրկնութիւնն է այն զրպարտութեանց, որ 1920ից ի վեր քո իշխանաւորների կողմից յեղյեղւում են Դաշնակցութեան հասցէին։

«Ասեմ, թէ ինչո՞ւ չես կարողացել որեւէ փաստ յիշատակել։

«Նախ՝ ընկերներիս մասին։

«Դու վկայում ես.— Ա. Խատիսեան, Դրօ Կանայեան և Ա. Աբեղեան, առանց ամաչելու, առանց խղճի խայթի Հէտէրի արիւնոտ կառքին լծուելով՝ նրա աղեսալի բռնակալութիւնը կը փառաբանեն»։

«Ի՞նչ այս յայտարարութիւնից մնում է եզրակացնել, որ իմ ընկերները լուրեամբ չէ՛ որ փառաբանանք են կատարում, այլ կատարում են բարձրաձայն:

«Արդ, բացի քեզանից ո՛չ ոք, ո՛չ մէկ տեղ և ոչ մէկ անգամ, պատերազմի բովանդակ տեւողութեան, շուրջ չորս տարի, այս ընկերների բերանից լսած չէ ոչ իսկ մէկ բառ։

«Նրանք լուռ են, լուռ են բոլորը և լուռ են տարիներից ի վեր։

«Երկրորդ՝ լուռ է նաեւ Հ. Յ. Դաշնակցութեան Եւրոպայի մամուլը. և լուռ է ոչ այն պատճառով, որ հրատարակում է, բայց չի փառաբանում Հիտլերին, այլ որ ընդհանրապես չի հրատարակում: Ներելի է ենթադրել, որ ամբաստանութիւնդ յիշատակած անձերի հասցէին եթէ արդարացի լինէր, խափանուած չէին լինի այն օրգանները, որ տարիներից ի վեր հրատարակում էին Եւրոպայի ոստաններում։ Այդ օրգանները կը մնային՝ քո յիշատակած փառաբանանքը հիւսելու համար։ Չեն մնացել, որովհետև ո՛չ փառաբանանք կայ և ոչ փառաբանող։

«Երրորդ՝ չկայ այս ընկերների ստորագրութիւնը կրող նաեւ որեւէ փաստաթուղթ — ազդ, հրաւէր, յայտարարութիւն, կոչ, թռուցիկ, յօդուած և այլն — ուղղուած հանրութեան։ Չորս տարիներից ի վեր այս ընկերները լուռ են ոչ միայն բերանով, այլ լուռ են նաեւ գրչով։

«Չորրորդ՝ որեւէ յայտարարութիւն չկայ նաեւ այս ընկերների անունից, այսինքն չկայ մէկ խօսք — գրաւոր կամ բերանացի — որ արած լինէր ուրիշ անծանոթ մէկը մեր ընկերներից, այս խօսքը վերագրելով քեզ ծանօթ անուններին։ Նման դէպք պատահած չէ այս չորս տարիների ընթացքին ոչ իսկ մէկ անգամ»։

Ինչպէս կը տեսնէք, հինգ տարի առաջ անմոռանալի Համոն տառը-տառին կ՝ըսէր, այն, ինչ որ այսօր կը կրկնէ ընկ. Դրօն։

Իսկ ասկէ երեք տարի առաջ, երբ Պերլինն ու Հռոմը դաշնակից իշխանութեանց տակ կը գտնուէին արդէն, պատասխանելով ընկ. Դրօյի և իր գործակիցներու շուրջ ծաւալած փրովոքասիոններուն, մեր 1945 Օգոստ. 10ի խմբագրականին մէջ կը գրէինք.

«Երէկ, երբ Հոմը եւ Պերլինը անմատչելի ամրոցներ էին դաշնակից բանակներու համար, մեր հակառակորդները կրնային մոլորանքի մատնել միամիտ ընթերցողը:

«Այսօր սակայն, երբ Ֆաշիզմի եւ նացիզմի այդ զոյգ ամրոցները իրենց *գաղտնի դիւաններով* դաշնակից բանակներու եւ իշխանութեանց հսկողութեան տակ են, այլեւս դժուար է մոլորանքի մատնել մինչեւ իսկ միամիտ ընթերցողները:

«Տարիներով զործակցա՞ծ ենք Ֆաշիզմին եւ նացիզմին.

«Տարիներով եղա՞ծ ենք սերտ յարաբերութեանց մէջ այս երկու ուժերուն հետ:

«Մասնաւորաբար ասոնց հետ ծրագիրներ մշակած եւ զործեր կատարա՞ծ ենք:

«Գեղեցի՛կ. եթէ այդպէս է, ո՞ւր են փաստերը. չէ՞ որ Ֆաշիզմի եւ նացիզմի գաղտնի դիւանները ձեր տրամադրութեան տակ են. ինչո՞ւ զանոնք չէք հրապարակեր եւ հանրութեան սեփականութիւն չէք դարձներ:

«ՉԷՔ ԸՆԵՐ ՈՒ ՊԻՏԻ ՉԸՆԷՔ, ԱՆԳԱՄ ՄԸՆ ԱԼ ԿԸ ԿՐԿՆԵՆՔ, ՈՐՈՎՀԵՏԵՒ ՆՄԱՆ ՓԱՍՏԵՐ ՉՈՒՆԵՔ ԵՒ ՉԷՔ ԿՐՆԱՐ ՈՒՆԵՆԱԼ»։

Տարիներ կ'անցնին ու այս «փաստաթուղթ»երը մէջտեղ չեն գար, որովհետեւ փաստաթուղթերու դէզեր կը քրքրեն օրնիբուն, կը պրպտեն ու կ'որոնեն, սակայն մեր «արդարամիտ» դատախազները այդ դէզերուն մէջէն ոչինչ չեն գտներ։

Այս չի խանգարեր, սակայն, որ ընկ. Դրօյի, իր գործակիցներու, ինչպէս և համայն Դաշնակցութեան շուրջ ծաւալած փրովոքասիոնները շաճին, չբազմանան և չկրկնուին նոյն թափով և յամառութեամբ, ինչպէս առաջ։

Որովհետեւ անքաւելի է «գառան» յանցանքը «գայլ»ին առջեւ. որովհետեւ մեծագոյն յանցանքը Դաշնակցութեան անոր մէջ կը կրնայ, որ Մոսկուան զինք կ'ուզէ լափել, կ'ուզէ տրորել և փոշիացնել...

«ՈՎ ՈՐ ԴԵՌ ԻՆՔԶԻՆՔ ԴԱՇՆԱԿ Կ'ԱՆՈՒԱՆԷ,— կը պատգամէր Վ. Մոլոթով,— ՉԻ ԿՐՆԱՐ ՈՐԵՒԷ ԱՅԼ ԴԵՐ ԽԱՂԱԼ, ԲԱՑԻ ՍՈՎԵՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ (կարդա՛՝ Սովետ Միութեան.— «Յ.») ԹՇՆԱՄԻ ԴԵՐԷՆ»։

Ահա հոս է թէ՛ ընկ. Դրօյի, թէ՛ իր գործակիցներու և թէ համայն Դաշնակցութեան միակ և մեծագոյն յանցանքը։

«Թշնամի՛» է Դաշնակցութիւնը Ազգին՝ և Հայրենիքին, որովհետեւ Դաշնակցութիւնը Բոլշեւիզմի ասիատիպ «ընկերավարութեան» շահերը չի՛ դասեր Հայ Ժողովուրդի շահերէն՝ ինչպէս որ Լենին կը վարդապետէր, և դաւը Հայրենիքին դէմ «պրոլետարական» առաքինութիւն չի՛ նկատեր՝ ինչպէս որ Լենին կ՚ուսուցանէր.

«Թշնամի՛» է, որովհետեւ ԱԶԳՈՒՐԱՑ և ՀԱՅՐԵՆԱԴԱՒ Բոլշեւիզմին Դաշնակցութիւնը կը հակադրէ իր ԺՈՂՈՎՐԴԱՊԱՇՏ և ՀԱՅՐԵՆԱՄՈԼ խօսքը և գործը։

Ա. Իսահակեանի ուղղած իր «Բաց նամակ»ը ընկ. Համո կ՚եզրափակէր հետեւեալ տողերով.

«Ձերկարեմ խօսքս, ահա մի քանիսը իմ ունեցած փաստերից, միայն գլխաւորները յիշատակելով։

«Կարելի չէ հերքել այս փաստերից ե՛ւ ոչ մէկը. ուրանալ կարելի է՝ ճշմարտութիւնն ու պարկեշտութիւնը խաչելով, սակայն հերքել — երբե՛ք։

«Իսկ ի՞նչ կայ քո ծանր ամբաստանագրի մէջ իբրեւ փաստ, իբրեւ դէպք և իրողութիւն։

«Ոչի՛նչ. կայ սէր դէպի Պղատոնը, դէպի քո նոր իշխանաւորը, սակայն չկայ յարգանք դէպի ճշմարտութիւնը, դէպի այն Սրբութիւնը, որին երկրպագել ես քո բովանդակ դաշնակցական կեանքի ընթացքին։

«Այս ներելի չէ քեզ։

«Ո՛չ թէ աջակցել, այլ ոգի ի բուին պայքարել պէտք է անպարկեշտ գրիչների ու բերանների դէմ, որոնք չար նպատակներով թոյն ու որոմ են ցանում մէկ անպաշտպան, մէկ անմեղ ժողովրդի և նրան հաւատարմաբար ծառայած մէկ առաքինի կուսակցութեան շուրջ։

«Ներելի չէ չարերի և զրպարտիչների այս կառքին լծուել մանաւանդ այսօր, երբ գիտես, թէ ի՛նչպէս բոլոր վատոգի ձկնորսները քաղաքական բոլոր ջրերը պղտորելով՝ նպատակ ունեն քո ժողովուրդի կեանքը վտանգել և մոխիրի վրայ նստեցնել նրա վերջին մնացորդները»։

Թող ներուի մեր մեզ անզուգական ընկերոջ այս տողերով փակել մեր խմբագրականներու այս շարքը։

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՆՕԹԵՐ*

Դրաստամատ Կանայեան, որ մեր ազատագրական շարժման եւ Հայաստանի Անկախ Հանրապետութեան մէջ իր պատուաւոր տեղն է գրաւած ԴՐՕ անունով, ծնած է Արարատեան դաշտի Սուրմալու գաւառի Իգդիր աւանին մէջ, 1884 թուին։

Բարեկեցիկ ընտանիքի զաւակ, ընկեր Դրօն ուղարկուած է Երեւան, կրթութիւն ստանալու ռուսական գիմնազիայի մէջ։ Գիմնազիայի լրիւ դասընթացը շաւարտած, 1904ին ընկեր Դրօ մտած է զինուորական ծառայութեան մէջ, պատրաստուելու համար իբրեւ ռուս բանակի սպայ։ Սակայն հայ ժողովուրդի ալեծուփ կեանքը թոյլ չէ տուած Դրօյին լրացնելու իր զինուորական կրթութիւնը։ 1905 Փետրուար ամսու սկիզբը, Բագուի զինուորական նահանգապետ Նակաշիձէն թաթարներու ձեռքով կազմակերպեց հայերու կոտորածը Բագուի մէջ։ Երբ այդ կոտորածի լուրը կը հասնի Հիւսիսային Կովկասի Պեատիգորսկ քաղաքը, ուր զինուորական ծառայութեան մէջ էր ընկեր Դրօ, քանի մը օրով արձակուրդ կը ստանայ եւ կը մեկնի բանակէն, այլեւս երբեք չվերադառնալու համար։ Ընկ. Դրօ կ'երթայ Բագու։ Նակաշիձէի կազմակերպած հայասպան ոճիրը չէր կրնար անպատիժ մնալ։ Եւ Բագուի կոտորածէն երկու ամիս չանցած, 1905 Մայիսին, Նակաշիձէն կ'իյնայ հայերու վրիժառու բազկի հարուածէն։ Այդ բազուկը 20 տարեկան Դրօն էր։

---

* «Դրօ», Փարիզ, 1956 թ.։

Բացուն եղաւ վտանգի ահազանգը, որ ստիպեց կազմակերպել հայկական ինքնապաշտպանութիւնը։ Հայ-թաթարական բախումները ստացան կանոնաւոր պատերազմի կերպարանք։ 1905ին եւ 1906ին ընկեր Դրօ մասնակցած է հայկական ինքնապաշտպանութեան կռիւներուն՝ Նիկոլ-Դումանի եւ Սեբաստացի Մուրատի հրամանին տակ։

Հայ-թաթարական կռիւներու ընթացքին, զօրավար Ալիխանով-Աւարսկին աւերած էր հայկական գիւղեր Հին Նախիջեւանի շրջանին մէջ։ Իսկ ատկէ առաջ, 1905ի ռուսական յեղափոխական շարժման ժամանակ, այդ զօրավարը անխնայ կոտորած եւ աւերած էր Վրաստանի Գորի կոչուած լեռնային շրջանը։ Երկու դրացի ժողովուրդներու արեան համար պատասխանատու էր զօր. Ալիխանով-Աւարսկին։ Վրացիներու կողմէ զայն պատժելու փորձը ձախողած էր։ Այդ մահափորձէն ետք ցարական կառաւարութիւնը Ալիխանով-Աւարսկին նշանակած էր Ալեքսանդրապոլի (Գիւմրի) շրջանի զինուորական նահանգապետ։ 1907ին Ալիխանով-Աւարսկին պատժող ձեռքը դարձեալ եղաւ ընկեր Դրօյի անվրէպ հարուածող բազուկը։

1908ի վերջը ցարական կառավարութիւնը ձեռնարկեց դաշնակցականներու ծանօթ զանգուածային ձերբակալութեան։ Ամէնէն կատաղի կերպով հետապնդուածներէն մէկը Դրօն էր։ Թուրքիա սահմանադրութիւն հռչակած էր եւ Դրօ անցաւ Թրքահայաստան եւ հաստատուեցաւ Հին Բայազէտ, որ մօտաւորապէս 30—40 մղոն միայն հեռու էր Դրօյի հայրենի Իգդիր աւանէն։

Համաշխարհային առաջին պատերազմը արդէն սկսած էր, թէեւ Թուրքիան կռուի մէջ չէր մտած, բայց բոլոր նշաններէն կ՚երեւար, որ Թուրքիոյ մասնակցութիւնը պատերազմին՝ ժամանակի խնդիր էր միայն։ Կովկասի ռուսական բանակի սպայակոյտը պատրաստութիւններ կը տեսնէր յանկարծակիի չգալու թրքական յարձակման պարագային։ Սպայակոյտը հայ կամաւորական գնդերու պատրաստութեան ծրագիր ալ ունէր։ Եւ ահա զինուորական իշխանութեան պնդումին վրայ, Դրօն Բայազէտէն կը կանչուի եւ Իգդիրի մէջ կը կազմակերպէ Հայ Կամաւորական Երկրորդ Գունդը։ Ռուս-թրքական պատե-

բազմի սկսելուն պէս Դրօյի գունդը կ՝անցնի սահմանը եւ կ՝արշաւէ Արաղա-Բերկրի-Վան ուղղութեամբ։ Բայց առաջին իսկ մեծ կռիւին, ծանր կերպով կը վիրաւորուի մեր ընկերը։ Գրեթէ մահամերձ վիճակի մէջ ռազմակաշտէն նախ Իգդիր, ապա Թիֆլիս կը փոխադրուի, ուր, շնորհիւ բժշկական խնամքի, երկու ամիսէն ոտքի կ՝ելլէ։ Ոզնայարի մօտերը մտած գնդակը մնաց Դրօյի մարմնին մէջ։

1915 Մարտին Դրօ կրկին իր գնդին գլուխն անցած, Քեռիի եւ Համազասպի գունդերուն հետ, իբրեւ յառաջապահ ռուսական բանակի, կ՝արշաւէ դէպի Վան։ Թրքական պաշարումէն ազատած Վան մտնող առաջին գունդը եղած էր Դրօյի գունդը։

Այնուհետեւ մեր միւս չորս կամաւորական գունդերուն հետ մասնակցած է բազմաթիւ կռիւներու, մինչեւ 1916ի աշունը, երբ Կովկասեան ճակատի հրամանատար հայտնեաց մեծ իշխան Նիկոլայ Նիկոլայեւիչ ցրուեց հայ կամաւորական գունդերը։

1918ին, երբ բոլշեւիկներու դրդումով ռուս բանակը լքեց ռուս-թրքական ճակատը, հայկական նորակազմ ուժերու մէկ մասին գլուխն անցած՝ Դրօ պաշտպանեց Արարատեան դաշտի ճակատը։ Այդ ճակատին վրայ թուրքերը երբեք չկրցան յաջողութիւն ունենալ։ 1918ի մայիսեան ճակատագրական կռիւներու ժամանակ ընկեր Դրօ վարեց Բաշ-Արարատի յաղթական ճակատամարտը։

Նոյն տարուան Դեկտեմբեր ամսուն, Վրաստանի կառավարութեան թշնամական վերաբերումը Հայաստանի հանդէպ պատճառ եղաւ, որ Վրաստանի եւ Հայաստանի միջեւ պատերազմ սկսի։ Իբրեւ Դիլիջան-Լոռի զօրամասի հրամանատար, Դրօ ղեկավարած է հայկական ուժերը հայ-վրացական պատերազմին մէջ։

Հայկական բանակը Դրօյի հրամանին տակ դուրս քշեց վրացական զօրքերը Հայկական Լոռիէն։ Դեկտեմբեր 13էն սկսած, անընդհատ կռիւներու մէջ պարտուած վրացական զօրքերը նահանջեցին Թիֆլիսէն ոչ հեռու գտնուող Սադախլու երկաթուղային կայարանը, ուր հասան Դեկտ. 31ին։ Վրճռական ճակատամարտը, որ տեղի պիտի ունենար այդտեղ, տեղի չունեցաւ, որովհետեւ անգլեւֆրանսական զինուորա-

կան ներկայացուցիչներու միջամտութեամբ զինադադար կնքուեցաւ եւ վերջ գտաւ հայ-վրացական ցաւալի բախումը։

Հանրապետութեան վերջին շրջանին Դրօ վարեց Հայաստանի ռազմական նախարարի պաշտօնը։ Պաշտօնին բերումով իր վրայ էր դրուած Հայաստանի մայրաքաղաքի պաշտպանութեան հոգը։

1920ին, երբ տեղի ունեցաւ սովետութիւրք միացեալ յարձակումը Հայաստանի վրայ, դարձեալ ընկեր Դրօյի վիճակուեցաւ պաշտպանել Արարատեան դաշտի ճակատը թուրքերուն դէմ։ Եւ դարձեալ, ինչպէս 1918ին, թուրքերը ոչ մէկ մատնաչափ հող կրցան գրաւել գինու զօրութեամբ։ Ամէն տեղ այդ ճակատին վրայ թշնամին հանդիպեցաւ Դրօյի ղեկավարած արի զօրամասերուն, որոնք երբեք չընկրկեցան։ Այդ ճակատին վրայ թուրքերու հողային գրաւումները տեղի ունեցան զինադադարի պայմաններով միայն։

Հայ եւ ռուս բոլշեւիկները, ռուսական Կարմիր Բանակի օգնութեամբ, տիրացան իշխանութեան։ Հայաստանի կառավարութիւնը եւ Մոսկուա ստորագրեցին համաձայնագիր։ Խորհրդային նորակազմ կառավարութեան մէջ մտան ընկեր Դրօ եւ Համբարձում Տէրտէրեան, որոնց իշխանութիւնը հազիւ շաբաթ մը տեւեց։

Երբ Բոլշեւիկները Երեւանի մէջ հաստատուեցան, ընկեր Դրօն տարին Մոսկուա, իբրեւ տեսակ մը աքսորական։ Երկու տարիի չափ Դրօն մնաց Մոսկուա, այն յոյսով, որ բոլշեւիկները թուրքերէն ետ պիտի առնեն Կարսն ու Սուրմալուն, զորս թուրքերը գրաւած էին բոլշեւիկներու օժանդակութեամբ։ Համոզուելով սակայն, որ բոլշեւիկները ոչինչ պիտի ընեն Հայաստանէն խլուած հողերը ետ ստանալու համար, Դրօ գտաւ միջոցը խորհրդային իշխանութենէն անցագիր ստանալու եւ անցնելու Ռումանիա։

Համաշխարհային Երկրորդ պատերազմի ընթացքին գերման բանակին կողմէ գրաւուած երկիրներուն մէջ հայութեան պաշտպանութիւնը եղաւ Դրօյի մեծ ծառայութիւններէն մէկը հայ ժողովուրդին։

Իր կեանքի վերջին տարիները ընկեր Դրօ անցուց Մերձաւոր Արեւելքի հայկական գաղութներուն մէջ։ 1946էն սկսած, շրջս անգամ եկաւ Միացեալ Նահանգներ։

1905էն ի վեր Դրօշի կինը՝ ընկերուհի Գայիանէն եւ զաւակը՝ Մարտիկ հաստատուած են Պոսթընում։ Մեր անզուգական ընկերը իր կեանքի վերջին ամիսները անցուց իր ընտանիքին մօտ։

ԴՐՕՇԻ ՅՈՒՂԱՐԿԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Կիրակի, 18 Մարտ, կէսօրէ ետք, տեղի ունեցան ողբացեալ Դրօշի յուղարկաւորութիւնն ու թաղումը, մեծ շուքով եւ ի ներկայութեան հոծ բազմութիւններու։

Պոսթընի մեծագոյն եկեղեցիներէն՝ Թրինիթի Ջըրշին ներսն ու դուրսը լեցուած էր հազարաւոր յուղարկաւորներով, որոնք եկած էին իրենց վերջին յարգանքը յայտնելու մեծանուն հերոսին։ Հարիւրաւոր ընկերներ եւ հայրենակիցներ եկած էին Մեծագոյն Պոսթընի եւ շրջակայ քաղաքներէն եւ հեռաւոր այլ վայրերէ, ինչպէս՝ Նիւ Եորքէն, Ֆիլատելֆիայէն, Տիթրոյիթէն, Փոնթիաքէն, Շիքակոյէն, Ուաշինկթընէն եւ այլն։

Ընդարձակ եւ շքեղ եկեղեցին լեցուած էր սգաւորներով, մինչեւ վերնատունը։

Ժամը 1,30ին, մեր սիրեցեալ ընկերոջ դագաղը, Եռագոյնով ծածկուած, թափօրով առաջնորդուեցաւ եկեղեցի։ Թափօրին առջեւէն կ'երթային քահանայ հայրերը, դպիրներու հետ, որոնց կը հետեւէին Հ. Յ. Դ. Ամերիկայի Կ. Կոմիտէին անդամները, դագաղը շրջապատելով, յետոյ հանգուցեալին սգաւոր պարագաները, Այրի Տիկին Գայիանէ Կանայեան, զաւակը՝ Մարտիկ, եւ իր աղջիկն ու փեսան՝ Տոքթ. եւ Տիկին Պ. Բրուտեան, եւ վերջապէս ծոպակիրներ, քանի մը շարք, երեք առ երեք հետեւելով դագաղին։

Ամէնէն ետք՝ ժողովրդական զանգվածները։

Յուղարկաւորութեան արարողութիւնները սկսան ճիշտ ժամանակին, լուսազարդուած եկեղեցւոյ մէջ, նախագահութեամբ Արժ. Տ. Արսէն Աւ. ՔՀյ. Սիմէոնեանցի եւ մասնակցութեամբ հինգ քահանաներու։

Դասին մէջ, իբրեւ սգակիր կեցած էր Վենետիկի Միաբա-

նութեան Աբրահայր՝ Գերապայծառ Ս. Վ. Ալուհոճեան, որ յատկապէս եկած էր Տիրոյիթէն։

Արարողութիւնները, ներդաշնակ ու տպաւորիչ, ներկայ աւելի քան 2500ի բազմութիւնը համակեցին խոր սուգով եւ կսկիծով։

Արարողութեանց վերջաւորութեան, Արժ. Տ. Սիմէոնեանց ՔՀ. պատշաճ դամբանական մը խօսեցաւ, յուզումով, Յետոյ, Կ. Կոմիտէի ատենապետ ընկ. Տոքթ. Տաղլեան հետզհետէ բեմ հրաւիրեց՝ Հ. Յ. Դ. Կ. Բիւրոյի ներկայացուցիչը՝ ընկ. Կոպեռնիկ Թանարճեանը, Հ. Յ. Դ. Ամերիկայի Կ. Կոմիտէի ներկայացուցիչ՝ ընկ. Վարուժան Օզանեանը եւ Ամերիկայի Կոմիտէներուն կողմէ ընկ. Վ. Ահարոնեան, որոնք սրտառուչ խօսքերով ներկայացուցին հանգուցեալին մեծագործութիւնները։ Խօսք առին նոյնպէս Անկախ Ուքրանիոյ նախագահը՝ Պ. Վիտ Վիսքիյ, որ յատկապէս եկած էր Նիւ Եորքէն, եւ իր ժողովուրդին ցաւակցութիւնները յայտնեց։

Արարողութիւններէն ետք, դագաղը տարուեցաւ Մաունթ Օպրբն գերեզմանատունը, Ֆէյմպրիճ, ուր հաւաքուած էր նաեւ ստուար բազմութիւն մը, հակառակ անպատեհ կլիմային։

Թաղման կարգը կատարուեցաւ, համատարած սուգի եւ արցունքի մէջ, եւ ընկերոջ դագաղը գերեզման դրուեցաւ, Ծոագոյնի եւ Հայաստանէն ափ մը հողի հետ միասին։ Հողածումբին առջեւ խօսեցաւ միայն ընկ. Բեգլար Նաւասարդեան, յուզումով, Եգիպտոսի «Յուսաբեր»ին կողմէ. նկատի ունենալով ցուրտը, ուրիշ ընկերներ՝ վերապահեցին իրենց խօսքը, Սրահին համար։ Վերջին պահուն երգուեցաւ «Մեր Հայրենիք»ը, Ներկաներուն կողմէ, խոր յուզումով։

Թաղումէն ետք, հոգեճաշ տրուեցաւ, «Հայրենիք»ի սրահին մէջ, Հ. Օ. Միութեան Միջվարչականի տիկիններուն կողմէ։ Սրահը լեցուած էր բերնէ բերան։ Ներկաները ճաշեցին, սեղաններու շուրջ լոլորած, որմէ ետք, ընկ. Տաղլեան խօսք տուաւ մէկէ աւելի ընկերներու։ Այսպէս՝ խօսք առին ընկ. Զարեհ Զարգուն, Հ. Օ. Մ. Կ. Վարչութեան կողմէ, ընկ. Վ. Դարպասեան Հ. Ե. Դ. Կ. Վարչութեան կողմէ, ընկ. Գ. Մխիթարեան «Հայրենիք»ի Խմբագրութեան եւ Գահիրէի «Յուսաբեր» Մշակութային Ընկերութեան կողմէ, ընկ. Յակոբ.

Տէր Յովհաննէսեան Գահիրէի Հ. Կ. խաչին կողմէ եւ վերջապէս ընկերներ՝ Արշաւիր Շիրակեան, Եդ. Սահակեան, Տոքթ. Դարբինեան (Տիթրոյթ), Վ. Աֆրիկեան, Տոքթ. Պաղտասարեան (Նիւ Եորք), Վաղարշակ Թովմասեան (Լոս Անճէլըս), Ար. Կիրակոսեան եւ Տիգ. Տէվոյեանց (Նիւ Եորք), որոնք վեր առին ընկերոջ կեանքն ու գործը եւ պանծացուցին։ Ընկ. Նաւասարդեան կարդաց ցանկը բոլոր այն Կոմիտէներուն եւ Մարմիններուն, հայ ու օտար, որոնք ցաւակցական հեռագիրներ տուած էին եւ ծաղկեպսակ ղրկած։

Այս տպաւորիչ եւ յուզումնալից հաւաքոյթէն ետք, ներկաները իրենց ցաւակցութիւնը յայտնեցին հանգուցեալին սգաւոր ընտանիքին։

Հաւաքոյթը փակուեցաւ Տ. Արսէն ՔՀյ. Սիմէոնեանցի աղօթքով եւ «Հայր Մերով», որ երգուեցաւ ներկաներուն կողմէ։ Ընկ. Տաղլեան շնորհակալութիւն յայտնեց Հ. Օ. Մ. տիկիններուն, իրենց պատրաստած ճաշին եւ սպասարկութեան համար, կարգադիր Յանձնախումբին՝ որ ամբողջ շաբաթ մը աշխատած էր եւ հսկած յուղարկաւորութեան կարգադրութեանց վրայ, ինչպէս նաեւ ներկաներուն, որոնք հակառակ ձիւնին ու աննպաստ կլիմային, հեռաւոր քաղաքներէ եկած էին։

Դրօշի յուզարկաւորութիւնը եղաւ համազգային վշտի արտայայտութիւն մը եւ սիրոյ ու խոր յարգանքի արժանավայել եւ անմոռանալի ցոյց մը, որ իր նախընթացը չէ ունեցած։

ԹՇՆԱՄՈՒ ԳՆԴԱԿԸ ՀԱՆՒԱԾ

ԴՐՕՑԻ ԹՈՓԻ ՄԻՋԻՑ

Մեր ողբացեալ ընկերոջ՝ Դրօյի մահից յետոյ, վիրաբուժական գործողութեամբ հանուած է թշնամու գնդակը, որ 41 տարուց ի վեր մնում էր նրա ձախ թոքի մէջ: Հանուած է Շատեւ սիրտը:

Թէ՝ գնդակը եւ թե սիրտը պահւում են Պոսթընի մէջ, յատաջիկայ Դաշնակցութեան թանգարանը ուղարկելու համար:

ԴՐՕՅԻ ՊԱՏԳԱՄՆԵՐԻՑ

Քանի որ բոնութեան տակ է մեր հայրենիքը՝ Հայաստանը, քանի որ մեր հողերը բռնագրաւուած են, Հ. Յ. Դաշնակցութիւնը ունի իր պայքարը եւ Դաշնակցութեան զաւակները, իբրեւ հայ ժողովրդի հարազատ զաւակներ, պիտի շարունակեն այդ պայքարը — արիւնով կ'լինի, գրիչով կ'լինի, պայքարով կ'լինի, միեւնոյն Հայը հաւաքուի իր բոյնին մէջ, Հայը հային կառավարի, ո՛չ անգլիացին, ո՛չ ամերիկացի, ո՛չ ռուսը, ո՛չ թուրքը, Հայը լինի իր երկրին տէրը, Հայը լինի իր ազատութեան տէրը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Համլետ Գևորգյան «Դրոն» . . . . .
Յուշեր . . . . . .
Բոլշևիկներն ինչպէս դրժեցին իրենց խոստումները

Հավելված
Վկայություններ . . . . . .
Մամուլը Դրոյի մասին . . . . .
Դրոն եւ իր գործը . . . . . .
Կենսագրական նօթեր . . . . . .
Դրոյի յուղարկաւորութիւնը . . . . .

ԴՐՈ

Կենսագրական
Հուշեր
Վկայություններ

Հանձնված է շարվածքի՝ 2.05.91 թ.։ Ստորագրված է տպագրության՝ 24.06.91 թ.։ Ֆորմատ՝ 84×108 1/32։ Թուղթ՝ տպագր. № 1։ Տառատեսակ՝ «Գրքի սովորական»։ Տպագրություն՝ բարձր։
Տպաքանակ՝ 30 000։ Պատվեր՝ 519։ Գինը՝ պայմանագրային։
«Ազատ խոսք» հրատարակչություն, Երևան-9, Մաշտոցի 58։
Հայաստանի Հանրապետության Նախարարների խորհրդին առընթեր մամուլի կոմիտեի Հակոբ Մեղապարտի անվան պոլիգրաֆկոմբինատ, Երևան-9, Տերյան 81։